

ՀԱՆՐԱՃԱՆԱԶ ՀԵՂԻՆԱԿ  
ԾՈՆ ՊԸՎԻՐ

# Մօտենալ Աստուծոյ

Մտերմութեան համար



Սիրելի բարեկամ,

Աստուածաշունչը լեցուն է բազմաթիւ սքանչելի խոստումներով, որոնք բոլորն ալ ճշմարիտ են եւ բոլորը մեր կեանքերը փոխելու կարողականութիւնը ունին, սակայն ամենահիանալի խոստումներէն մէկը այն է, որ Աստուած կը փափաքի մտերմօրէն ճանչնալ քեզ:

Յակոբոսի գիրքին մէջ մենք կը գտնենք ամենահիանալի հրաւերը, որ երբեւէ ղրկուած է, «Աստուծոյ մօտեցէ՛ք ու անհկա ձեզի պիտի մօտենայ» (4.8): Պահ մը կանգ առ եւ հետևեալին մասին մտածէ՛ տիեզերքի, երկրին, եւ անոր բոլոր բնակիչներուն Ստեղծիչը կը խնդրէ քու ներկայութիւնդ: Ոչ միայն քու ներկայութիւնդ, այլ Ան կը փափաքի մտերիմ յարաբերութիւն մշակել քեզի հետ, քանի որ Աստուածաշունչը կ'ըսէ, որ Ան այն Աստուածն է, որ քեզի հետ մտերիմ յարաբերութիւն ունենալու բուն փափաք ունի:

Տիեզերքի Ստեղծիչէն եկող այս հիանալի եւ աներեր հրաւերը պարզապէս Ձինք հեռուէն խօսքերով եւ ծէսերով պաշտելու համար չէ, այլ Անոր հետ այնպիսի իմաստալից եւ մտերիմ յարաբերութեան մը մէջ մտնելու, որ դուն ճանչնաս Անոր սիրտը եւ Ան՝ քուկը:

Բարեկամ, կը քաջալերեմ քեզ, որ ընդունիս այդ հրաւերը, եւ սկսիս հիանալի եւ խանդավառիչ ճամբորդութիւն մը, մօտեցիր Հօր եւ մօտեցիր Աստուծոյ սիրտին:

Եղբայրդ Քրիստոսով՝



MessengerX

Ճոն  
JohnBevere@gmail.com



ՀԱՆՐԱՃԱՆԱԶ ՀԵՂԻՆԱԿ  
ԾՈՆ ՊԸՎԻՐ

# Մօտենալ Կատուծոյ

Մտերմութեան համար

***Drawing Near***, Western Armenian, by John P. Bevere

© 2022 Messenger International

MessengerInternational.org

Originally published in English as Drawing Near

ISBN 978-1-599-51009-5

Additional resources in Western Armenian are available for free download and video streaming at

**MessengerX.com** and on the **MessengerX** app

To contact the author: JohnBevere@gmail.com

This book is a gift from Messenger International and is NOT FOR SALE

***Սօթենալ Աստուծոյ***, արեւմտահայերէն, հեղինակ՝ Ճոն Փ. Պրվիթ

© 2022 Messenger International

MessengerInternational.org

Բնագիրը հրատարակուած է անգլերէնով, «Drawing Near» վերնագիրով

ISBN 978-1-599-51009-5

Յաւելեալ աղբիւրներ արեւմտահայերէնով

կրնաք անվճար ներբեռնել եւ վիտէօ հաղորդումով դիտել

հետեւեալ կայքէջէն եւ աշխատածրագիրէն՝ **MessengerX.com** եւ

**MessengerX**

Հեղինակին հետ կապուելու համար գրել հետեւեալ

հասցէին՝ JohnBevere@gmail.com

Այս գիրքը «Մեսենճըր Ինթըրնաշընըլ»-ին կողմէ նուէր է եւ ԾԱԽՌՈՒ ՉԷ



App Store-ը Apple Inc.-ի ապրանքանիշն է, որ արձանագրուած է ԱՄՆ-ի եւ այլ երկիրներու մէջ:

Google Play-ը եւ Google Play-ի պատկերանիշը Google LLC- ի ապրանքանիշերն են:

# ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹԻՒՆ



Նախաբան . . . . .	V
Գլուխ 1. Բոլոր ժամանակներու Մեծագոյն Հրաւերը . . . . .	1
Գլուխ 2. Աստուծոյ Հետամտութիւնը . . . . .	13
Գլուխ 3. Պաշտպանէ՛ Քու Քաղցր . . . . .	31
Գլուխ 4. Բուռն Փափաք՝ Իր Ներկայութեան . . . . .	51
Գլուխ 5. Վարագոյրին Ետին . . . . .	69
Գլուխ 6. Աստուծոյ Բարեկամները . . . . .	89
Գլուխ 7. Ինչ Բան Արգելք է Ճշմարիտ Մտերմութեան . . . . .	115
Գլուխ 8. Ճշմարիտ Պաշտամունք . . . . .	145
Գլուխ 9. Աստուած Որո՞ւ Հետ կը Բնակի . . . . .	163
Գլուխ 10. Սուրբ Հոգիին Հետ Մտերմութիւն . . . . .	179
Գլուխ 11. Հօր Խոստումը . . . . .	205
Գլուխ 12. Մտերմութեան Լեզուն . . . . .	235
Գլուխ 13. Վստահութեամբ Լեցուն Հաւատք . . . . .	265
Գլուխ 14. Մօտենալ . . . . .	291
Յաւելուած Ա . . . . .	305
Յաւելուած Բ . . . . .	311



# ՆԱԽԱԲԱՆ



**1991** թուականին Աստուած շատ յստակ խօսք մը խօսեցաւ իմ սիրտիս. «Որդիս, կ'ուզեմ, որ գրես»:

Հետագայ օրերը լեցուն էին խառն զգացումներով: Մէկ կողմէն վախը տիրեց վրաս եւ ոմբակոծեց միտքս ստոյգ ձախողութեան միտքերով, իսկ միւս կողմէն, կ'ուզէի ծիծաղիլ: Ես կ'աստէի՝ գրել: Դպրոցական օրերուս երբ որեւէ ստեղծագործական գրութիւն մը գրելու պարտականութիւնը կը տրուէր ինծի, ես ժամերով պարապ թուղթի էջերուն կը նայէի: Յետոյ ես Էս.Էյ.Թի. քննութեան լեզուական բաժինին մէջ ձախողեցայ: Գրական բնոյթ ունեցող որեւէ բանի նկատմամբ իմ հակակրանքս (չսիրելս) զիս առաջնորդեց, որ համալսարանին մէջ ճարտարագիտութեան մասնագիտութիւնը ընտրեմ:

Հիմա Աստուած ինծի կ'ըսէր, որ գրեմ: Անկարելի է: Մտածեցի, որ սխալ լսած պէտք է ըլլամ: Ուստի պատասխան տալէն խուսափեցայ, բայց տասը ամիս ոչինչ ընելէ ետք,

## ՆԱԽԱԲԱՆ

երկու շաբաթներու ընթացքին Աստուած երկու կիներ ղրկեց ինծի երկու տարբեր նահանգներէ, որոնք ճիշդ նոյն պատգամը փոխանցեցին: Անոնք երկուքն ալ ազնուօրէն, բայց վճռականօրէն զգուշացուցին. «Ճո՛ն, եթէ չգրես այն գիրքերը, զորս Աստուած տուած է քեզի, որ գրես, Ան ուրիշ մէկու մը պիտի տայ զանոնք, բայց դուն պիտի դատուիս անոր համար»:

Երբ երկրորդ կինը խօսեցաւ, Աստուծոյ վախը զգացի, եւ ասիկա աւելի ծանր կշռեց քան իմ վախս եւ գրելու հանդէպ ունեցած հակակրանքս: Ես սկսայ գրել: Կը յիշեմ ինչ պատահեցաւ երբ ես որոշեցի հնազանդիլ. երբ կը մեքենագրէի, միտքերը արագօրէն սկսան քով քովի գալ, միտքեր, որոնց մասին ասկէ առաջ երբեք չէի մտածած կամ լսած: Շուտով անդրադարձայ, որ ատոնք իմ պատգամներս չէին. անոնք Անոր պատգամներն էին: Շատ տարիներ անցած են այդ օրուրնէ ի վեր. Անոր տուած պատգամները, որոնք գիրքերու վերածուած են, ներկայիս հարիւր երեսուն լեզուներու թարգմանուած են եւ անոնցմէ տասնեակ միլիոնաւոր օրինակներ տպուած եւ բաշխուած են ամբողջ աշխարհի տարածքին:

Առաջին գիրքը գրելէս ետք, անձնական խոստում մը տուի Աստուծոյ, որ երբեք պիտի չգրեմ գիրք մը պարզապէս գրելու սիրոյն: Պիտի գրեմ միայն եթէ Ինք ինծի ըսէ, որ գրեմ: Այս երդումը փորձուեցաւ. ամէն տարի 1992-էն մինչեւ 1999 թուականը Ան ինծի տուաւ այն պատգամները, զորս պէտք է գրէի, բայց «Ծածկոյթի Տակ» (Under Cover) խորագիրով գիրքը գրելէս ետք երեք տարի գրելու պատգամ չստացայ Աստուծմէ: Հրատարակիչները յաճախ ինծի կը մօտենային՝ հարցնելու իմ յաջորդ գիրքիս մասին եւ թէ արդեօք կրնային զայն հրատարակել, բայց ես քայլ չէի առներ: Ես տակաւին Աստուծմէ պատգամ չէի ստացած:

Վերջապէս երեք տարի ետք, Աստուած դարձեալ ինծի արտօնեց, որ գրեմ՝ այն պատգամը, որ հիմա ձեր ձեռքերուն մէջ կը գտնուի: Կը հաւատամ, որ ուշացումին պատճառներէն մէկը կապուած էր այն գործին հետ, որ Սուրբ Հոգին իմ ներսիդիս պէտք է ընէր նախքան որ այս գիրքը պատշաճ կերպով ձեակերպուէր: Ես քսանհինգ տարիէ հաւատացեալ



## ՆԱԽԱԲԱՆ

եմ, բայց երբեք այսքան Իրեն մօտիկ ըլլալու քաղցր չեմ ունեցած: Վերջին մէկուկէս տարուան ընթացքին ես ասելի խոր մտերմութիւն ունեցայ Տիրոջ հետ քան երբեւէ ունեցած եմ: Իմ ամբողջ կեանքիս ընթացքին ես երբեք այսքան չեմ լացած, ինչպէս այս վերջին տասնըութ շաբաթներուն: Ես մեծապէս զգացուած եմ պանդոկներու սենեակներու, օդանաւներու, իմ գրասենեակիս, ինքնաշարժիս, տանս, եւ հիանալի բացօթեայ տեղերու մէջ երբ կեդրոնացած աղօթքով ժամանակ կ'անցընեմ: Անոր ներկայութեան իրականութիւնը երբեք այսքան իրական եւ շօշափելի չէ եղած:

Կը հաւատամ, որ այս գիրքը տարիներու ընթացքին Սուրբ Հոգիին կողմէ կատարուած մարգումի հաւաքածոյ մըն է եւ իր մէջ կ'ընդգրկէ Աստուծոյ սիրտէն ուղղուած հրաւեր մը՝ երթալու դէպի մտերմութեան վայր մը ձեզի, Իր զաւակին հետ: Նախքան ձեր սկսիլը, կ'ուզեմ միասին աղօթենք: Ձեր սիրտէն ըսէք այս խօսքերը եւ գիտցէք, որ ես ասիկա բարձրաձայն աղօթած եմ ձեզի համար իմ աշխատասենեակիս մէջ: Մենք ունինք Յիսուսի խոստումը, որ երբ մենք «երկրի վրայ միաբանին [միաբանինք]՝ որեւէ խնդրանքի համար, ինչ որ ալ խնդրեն [խնդրենք]՝ երկնաւոր Հայրս պիտի կատարէ ասիկա» (Մատթէոս 18.19): Եկէք միասին խնդրենք.

Հայր, Յիսուսի անունով կը խնդրեմ, որ մինչ այս գիրքին պատգամը կը կարդամ, բանաս իմ անքերս, որ տեսնեմ, ականջներս՝ որ լսեմ եւ ինձի տաս սիրտ մը՝ ճանչնալու եւ հասկնալու: Կ'ուզեմ Քեզի հետ մտերմութեան մէջ քալել, եւ շարունակ ընել ասիկա: Կ'ուզեմ ճանչնալ Քու խորհուրդդ, կամքդ, գաղտնիքներդ, եւ բուն փափաքներդ, ինչպէս նաեւ Քու ներկայութեանդ մէջ մնալ: Թող այս պատգամը ոչ միայն հասկացողութիւն բերէ, հապա զօրութիւն՝ իմ կեանքս Քու սիրելի Որդիիդ եւ իմ Տէր Յիսուսիս պատկերին նմանութեամբ փոխակերպելու: Որովհետեւ Իր երկրաւոր առաքելութեան ընթացքին Ան կատարեալ կերպով ցոյց տուաւ Քու փառքդ Քեզի շատ մօտ ըլլալովը: Նոյնպէս ալ թող ես, Սուրբ Հոգիին

## ՆԱԽԱԲԱՆ

անձին միջոցով, ցոյց տամ Յիսուսի փառքը Իրեն մօտենալովս: Ես ասիկա Քեզի կը յանձնեմ հիմա, եւ կանխաւ շնորհակալութիւն կը յայտնեմ Քեզի այն փոխակերպման գործին համար, որ պիտի ընես իմ մէջս մինչ ես կը լսեմ եւ մտիկ կ'ընեմ այն խօսքերուն, զորս Դուն ներշնչեր ես այս գործին մէջ: Շնորհակալ եմ Քեզի, որ իմ կեանքս անգամս ալ նոյնը պիտի չըլլայ: Ասիկա կը խնդրեմ՝ համաձայնելով Քու ծառայիդ՝ Ճոն Պըվիրին հետ: Ամէն:

Հիմա հաւատայ եւ շնորհակալութիւն յայտնէ Աստուծոյ քու ջերմեռանդ աղօթքդ իրականացնելուն համար: Ես կը ցնծամ գիտնալով, որ Սուրբ Հոգին հիմակուրնէ սկսած է քեզ դիրքաւորել աւելի մեծ մտերմութեան համար՝ բարձրացնելով քու աղօթքդ սուրբ գահին առջեւ այն միակ Անձին, որ կրնայ իրապէս գոհացնել քու բոլոր փափաքներդ: Թող Հայրը, Յիսուսը եւ Սուրբ Հոգին աւելի իրական ըլլան քեզի համար քան երբեւէ:

Ամենայն անկեղծութամբ,  
Ճոն Պըվիր

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

# ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԵԾԱԳՈՅՆ ՀՐԱԻԷՐԸ



«Աստուծոյ մօտեցէք ու անիկա ձեզի պիտի մօտենայ»:

ՅԱԿՈԲՈՍԻ 4.8

**Ա**ստուծոյ սիրտէն բխող կանչ մը կայ — ո՛չ, աղաղակ մը- եւ ատիկա ամէն օր կը սաստկանայ. «Ինչո՞ւ գոհ ես առանց Իմ ներկայութեանս. ինչո՞ւ հեռու կը մնաս երբ Ինծի հետ յարաբերութիւն կրնաս ունենալ»:

Մենք բոլորս ալ ունինք բարեկամներ կամ մարդիկ, որոնցմով հիացած ենք եւ կ'ուզենք աւելի մտերիմ ըլլալ անոնց հետ: Անոնք յատուկ տեղ կը գրաւեն մեր սիրտերուն մէջ, եւ անոնց հետ ժամանակ անցընելը մեծ հաճոյք է, մանաւանդ երբ անոնցմէ հրաւեր կը ստանանք: Իրենց ընկերակցելու այդպիսի խնդրանք մը մեզ կը լեցնէ ակնկալութեամբ, ուրախութեամբ եւ խանդավառութեամբ: Մենք ուրախութեամբ կ'ընենք այն, ինչ որ պէտք է՝ մեր օրացոյցին մէջ տեղ բանալու եւ ընդունելու իրենց խնդրանքը:

Յակոբոսի գիրքին մէջ մենք կը գտնենք ամենամեծ

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

հրաւերը, որ երբեւէ լոյս տեսած է. «Աստուծոյ մօտեցէ՛ք ու անիկա ձեզի պիտի մօտենայ» (4.8): Պահ մը կանգ առէք եւ այս մասին խոկացէ՛ք՝ տիեզերքի, երկրին եւ անոր բոլոր բնակիչներուն Ստեղծիչը կը խնդրէ ձեր ներկայութիւնը: Ոչ միայն ձեր ներկայութիւնը, այլ Ան կը փափաքի ձեզի հետ մտերիմ ըլլալ, քանի որ Աստուածաշունչը մեզի կ'ըսէ. «[Անիկա] նախանձոտ Աստուած է [Աստուած ձեզի հետ յարաբերութիւն ունենալու մեծ փափաք ունի:]» (Ելք 34.14, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն):

Ասիկա Աստուծոյ աներեր փափաքն է: Ինքն է, որ այս հրաւերը ուղարկած է, քանի որ Ինք կը տեսչայ, որ Իր զաւակներուն կողմէ ճանչցուի: Մարդուն անկումէն ի վեր հազարաւոր տարիներ, բարդ պատրաստութիւններ եւ հսկայական գին պահանջուած է՝ այս տեսակի սերտ յարաբերութեան ճամբան բանալու համար: Յովհաննէսը, Յիսուսի ամենամօտիկ բարեկամներէն մէկը, կը գրէ.

«Մէկը երբէք Աստուած տեսած չէ , բայց [միակ իրայատուկ Որդին] միածին Որդին որ Հօրը ծոցն է [Անոր մտերիմ ներկայութեան մէջ], անիկա պատմեց [Ան յայտնեց զԻնք եւ դուրս բերաւ զԻնք, որպէսզի տեսնուի. Ան մեկնաբանեց եւ ճանչցուց զԻնք]» (Յովհաննէս 1.18, անգլերէն «Ամփոխֆայտ» տարբերակէն):

Ադամ բացայայտօրէն կը ճանչնար Տէրը. բայց մեղքին կամ անհնազանդութեան պատճառով ան բաժնուեցաւ Անոր փառաւոր ներկայութենէն, եւ Իր ճակատագիրը տարածուեցաւ ամբողջ մարդկութեան վրայ: Տղամարդիկ կամ կիներ այլեւս չէին կրնար տեսնել կամ ճանչնալ զԱստուած այնպէս ինչպէս Ադամ ատենօք կ'ընէր: Սակայն Հայրը մեծ եւ եռանդուն սիրով եւ ողորմութեամբ կը փափաքէր փրկել մեր ընկերութիւնը այս սարսափելի բաժանումէն: Ատոր ի պատասխան Ան դրկեց Յիսուսը, որ սկիզբէն Հօր հետ էր, Աստուած մարմինով երեւցած՝ վճարելու այն գինը, որ մեզ պիտի ազատագրէր խաւարէն, որպէսզի մեզ հաշտեցնէ Աստուծոյ հետ, եթէ զԻնք ընդունինք իբրեւ մեր Տէրը:

## ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԵԾԱԳՈՅՆ ՀՐԱԻԷՐԸ

Սակայն Աստուծոյ եւ մարդուն այս վերամիացումը իր ամբողջ ծաւալով քարոզուած չէ, ոչ ալ ապրուած է: Մենք շեշտ դրած ենք մեղքէն եւ մահէն ազատագրուելուն վրայ, բայց չենք յայտարարած այդ մտերիմ յարաբերութիւնը, որ կը սպասէ բոլոր անոնց, որոնք ազատագրուած են: Այս անտեսումը սուղ է եւ նոյնիսկ աղիտալի, քանի որ շատեր կը փախցնեն զԱստուած մտերմօրէն ճանչնալու գեղեցկութիւնը: Այս ողբերգութեան մէկ զուգահեռը պատահեցաւ Հին Կտակարանին մէջ Աբրահամի սերունդներուն հետ:

### ԵՐԿՈՒ ԲՈԼՈՐՈՎԻՆ ՏԱՐԲԵՐ ՇԱՐԺԱՌԻԹՆԵՐ

Ես միշտ զարմացած եմ Մովսէսի եւ անոր ազգականներուն՝ Իսրայէլի որդիներուն միջեւ գոյութիւն ունեցող վերաբերումի եւ վարմունքի ձեւերուն հակադրութիւններով: Ելք գիրքը կը սկսի դաժան գերութեան տակ Աբրահամի սերունդներուն տառապանքով: Անոնք գրեթէ չորս հարիւր տարիէ ի վեր Եգիպտոսի մէջ էին: Սկիզբը անոնք շնորհք վայելեցին, բայց շատ չանցած ստրկացան եւ դաժանօրէն սխալ վարմունքի ենթարկուեցան: Իրենց տանջանքին մէջ անոնք սկսան Աստուծոյ աղաղակել, որ զիրենք փրկէ:

Անոնց աղօթքները Տիրոջ սիրտը շարժեցին եւ Ան Մովսէս անունով ազատարար մը ղրկեց: Թէեւ ան ծնունդով եբրայեցի էր, բայց գերութենէն սպրդեցաւ եւ մեծցաւ իբրեւ Փարաւոնին թոռնիկը անոր ընտանիքին մէջ: Իբրեւ Եգիպտոսի իշխան՝ ան իր եղբայրներուն ծանր վիճակը տեսնելով յուզուեցաւ, բայց իր կեանքը ազատելու համար պէտք է անապատ փախչէր եւ յետոյ տարիներ ետք վերադարձաւ եւ Աստուծոյ Խօսքով եւ զօրութեամբ Իսրայէլը ազատեց իր ստրկութենէն:

Իսրայէլի ազատագրումը եգիպտական գերութենէն զուգահեռ է մեր ազատագրումին մեղքին ստրկութենէն: Եգիպտոսը կը ներկայացնէ աշխարհի համակարգը այնպէս, ինչպէս Իսրայէլը մէկ օրինակն է եկեղեցիին: Երբ վերստին ծնունդ կը ստանանք, մենք կ'ազատագրուինք աշխարհի բռնակալութեան եւ զրկանքի համակարգէն:

Դժուար չէ պատկերացնել, թէ ինչ դաժանութեամբ Իսրայէլի որդիները չարաշահումի եւ բռնութեան

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

Կ'ենթարկուէին Եգիպտոսի քաղաքացիներուն կողմէ: Անոնց կոնակները վիրաւորուած էին Փարաւոնին գործավարներուն մտրակներէն. անոնց տուները ամէնէն աղքատ թաղամասերուն մէջ կը գտնուէին, անոնց կերակուրը աւելցուքներն էին: Անոնք ժառանգութեան տիրանալու յոյսը չունէին, քանի որ ստրուկի նման կ'աշխատէին՝ իրենց եգիպտացի տէրերուն բարգավաճումը կառուցելու համար: Անոնք լացին երբ անոնց հազարաւոր մանուկ որդիները Փարաւոնին հրամանով սպաննուեցան:

Թէեւ անոնք այս ամբողջ դաժանութիւնը կրեցին, բայց շատ շուտ մոռցան: Քանի որ նոյնիսկ Եգիպտոսէն ազատագրուելէ ետք, երբ ձախողութեան մը կը հանդիպէին, անոնք կը զղջային, որ Եգիպտոսէն փախած են եւ ազատագրութեան համար իրենց ըրած աղօթքները անազուր կը համարէին այսպիսի արտայայտութիւններ ընելով. «Մեզի համար աւելի աղէկ էր, որ Եգիպտոսի մէջ ըլլայինք»: Անոնք նոյնիսկ կը համարձակէին առաջարկել. «Մեզի զօրագլուխ մը ընկրենք ու Եգիպտոս դառնանք» (Թուոց 14.4, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Բայց ոչ Մովսէսը. ան միակն էր, որուն համար պայմանները աւելի լաւ էին Եգիպտոսի մէջ. իրականութեան մէջ աշխարհի մէջ ոչ ոք իրմէ աւելի լաւ պայմաններու մէջ չէր գտնուեր: Աշխարհի ամենահարուստ մարդը զինք մեծցուցած էր, ամենալաւ տեղին մէջ կը բնակէր, ամենալաւ կերակուրները կ'ուտէր, ամենալաւ հագուստները կը հագնէր, եւ լաւագոյն ուսուցիչները ունէր: Ծառաները կը հոգային անոր բոլոր պէտքերն ու փափաքները, քանի որ անոր ժառանգութիւնը մեծ էր թէ՛ հարստութեամբ եւ թէ՛ խոստումով: Ան կամաւորաբար այդ ամէնը ձգեց. ան Իսրայէլի որդիներուն պէս չէր. ան երբեք ետեւ չնայեցաւ եւ իր ետին ձգածներուն չցանկաց:

Ինչն էր պատճառը այդ տարբերութեան: Պատասխանը՝ Մովսէս Աստուծոյ հանդիպեցաւ: Ան տեսաւ կրակը եւ մօտեցաւ: Ան կենդանի Աստուծոյ հանդիպեցաւ կրակով վառող մորենիին մէջ Սինա լեռան վրայ. Իսրայէլ չհանդիպեցաւ: Երբ Տէրը զինք մէկ կողմ կանչեց, ան մօտեցաւ: Հետագային, երբ Իսրայէլի որդիներուն նոյնիսկ

ատկէ աւելի սքանչելի հրաւեր մը տրուեցաւ, անոնք ետ քաշուեցան (Տէս Ելք 20.18–21):

Ես շատ յաճախ եկեղեցիներու կը հարցնեմ. «Մովսէս ո՞ր կը տանէր Իսրայէլի որդիները երբ անոնք Եգիպտոսէն հեռացան»: Սովորական պատասխանն է. «խոստացուած երկիրը»: Սակայն ատիկա ճիշդ չէ: Ան կ'երթար դէպի Քորեք կամ Սինա լեռը: Յիշեցէք Աստուծոյ խօսքերը Փարաունին, Մովսէսին միջոցով. «Արձակէ՛ իմ ժողովուրդս, որպէսզի զիս պաշտեն անապատին մէջ» (Ելք 7.16 «Էն.Այ.Վի.» տարբերակէն): Ոչ թէ. «Արձակէ՛ իմ ժողովուրդս, որպէսզի երկիր մը ժառանգեն»: Մովսէս ինչո՞ւ զիրենք խոստացուած երկիրը պիտի տանէր նախքան զիրենք ծանօթացնէր Խոստացողին՝ դարերու փափաքին: Եթէ զիրենք նախ խոստացուած երկիրը տանէր, անոնք աւելի պիտի սիրէին խոստումները քան Խոստացողը, Ինքնին Աստուած: Մովսէս անհամբեր էր զիրենք բերելու ճիշդ այն տեղը, ուր ինք Աստուծոյ հետ հանդիպէր էր:

Շատ անգամ մենք մեր եկեղեցիներուն մէջ ալ ըրած ենք ատիկա. մենք աւելի քարոզած ենք Յիսուսի մեզի համար ընելիքներուն մասին, փոխանակ քարոզենք Անոր իսկական ինքնութեան մասին: Իբրեւ արդիւնք, մենք զարգացուցած ենք շատեր, որոնք Աստուծոյ կը ծառայեն գլխաւորաբար շահի համար, եւ ոչ թէ Իր անձին իբրեւ ուրախ արծազանգ: Ատիկա կարելի է համեմատել կնոջ մը հետ, որ դրամի համար կ'ամուսնանայ տղամարդու մը հետ. անոր շարժառիթը իր ամուսինին անձը ճանչնալ չէ, այլ ան ի՞նչ կրնայ ընել իրեն համար: Օ՛, ձեռով մը ան կրնայ զինք սիրել, բայց ոչ ազնիւ դրդապատճառներով:

Մարդիկ, որոնք կը շեշտեն Աստուծոյ օրհնութիւնները անտեսելով Անոր հետ յարաբերութիւնը, կը ստեղծեն աշակերտներ, որոնք Աստուծոյ կու գան բան մը ստանալու համար, փոխանակ ըլլան անձեր, որոնք Անոր կ'ընդառաջեն Իր ինքնութեան համար: Ան չի նմանիր ուրիշ ոեւէ անձի եւ ոչ ոք կը բաղդատուի Անոր հրաշալի Անձին հետ: Աստուծոյ հանդիպելէ ետք, ինչպէս Մովսէս ունեցաւ այդ փորձառութիւնը, խոստումները իրենց կարեւորութեան տեղը կը գտնեն ընդհանուր պատկերին մէջ: Յիսուս ուրիշ որեւէ

բանէ շատ անելի հիանալի է-նոյնիսկ Իր օրհնութիւններէն:

Իսրայէլի ժողովուրդը ազատագրելու Աստուծոյ հիմնական նպատակը այն էր, որ անոնք ճանչնան եւ սիրեն զԻնք: Ան կ'ուզէր Ինքզինք ճանչցնել անոնց: Ան ըսաւ. «[...] Ձեզ արծիւի թելերուն վրայ վերցուցի ու քովս բերի» (Ելք 19.4): Սակայն անոնք իրենց կոչումը չիրականացուցին:

Իր ժողովուրդին հետ մտերմութիւն ունենալու Աստուծոյ փափաքը երբեք չէ պակասած կամ փոխուած, քանի որ այս փափաքը շարունակ կը յայտնուի Իր Խօսքին մէջ, եւ կ'արտացոլայ Պողոսի ջերմեռանդ աղօթքներուն մէջ.

«[Որովհետեւ եւ միշտ կ'աղօթեմ] որպէսզի մեր Տէր Յիսուս Քրիստոսին Աստուածը՝ փառաց Հայրը՝ տայ ձեզի իմաստութեան ու յայտնութեան հոգին [խորհուրդներու եւ գաղտնիքներու խորաթափանցութեան] իր [խոր եւ մտերիմ] գիտութիւնովը» (Եփեսացիներուն 1.17, անգլերէն «Ամփոխֆայտ» տարբերակէն, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Ան Իր բուն փափաքը յայտնած է: Աստուած կ'ուզէ, որ իրաքանչիւր վերստին ծնած զաւակ խորապէ՛ս եւ մտերմօրէն ճանչնայ զԻնք: Ուա՛ր, ասիկա կը խանդավառէ՞ ձեզ: Եթէ ոչ, պահ մը մտածեցէք եւ արտօնեցէք, որ անոր զարմանալիութիւնը հիացնէ ձեզ:

Մենք կը ծառայենք ողջ Աստուծոյ մը, իսկական Հօր, որուն սիրտը կը ցաւի Իր զաւակներուն համար: Ան հաղորդակցող է, կապակցութիւն կ'ուզէ: Պողոս արագօրէն ասիկա մատնանշեց Կորնթոսի հաւատացեալներուն, որոնք պայքարի մէջ էին. «Գիտէք հարկաւ, թէ մինչ հեթանոս էիք՝ ինչպէս անշունչ կուռքերէն մէկէն միւսը կը քաշկռտուէիք [որոնցմէ ոչ մէկը կրնայ ոչ իսկ բառ մը ըսել]» (Ա.Կորնթացիներուն 12.2–3, Աստուածաշունչի «Տը Լիվինկ Պայպըլ» տարբերակէն): Պողոսի յորդորին մէջ մենք կը տեսնենք այն հիմնական յատկանիշներէն մէկը, որ կը զանազանէ զԱստուած, մեր Հայրը, բոլոր սուտ աստուածներէն եւ կուռքերէն—Ան կը խօսի:



«ԻՆՔՆԱՇԱՐԺԴ ՃԱՄԲՈՒՆ ԵԶԵՐՔԸ ԿԵՑՈՒՐ»

Վերջերս, երբ կը քշէի, Սուրբ Հոգին սիրտիս խօսեցաւ.  
«Ըսելիք մը ունիմ: Ինքնաշարժ դամբուն եզերքը կեցնուր»:

Ես սորված եմ, որ երբ Աստուած ինծի կ'ըսէ, որ բան մը ընեմ, պէտք է անմիջապէս հնազանդիմ, անկախ անկէ, թէ ինչքան աննշան կամ անյարմար կը թուի այդ մէկը այդ պահուն: Արդեօք Մովսէս անապատին ետեւի կողմը իր աներոջ հօտը չէր արածեր երբ Տէրը անոր ուշադրութիւնը գրաւեց (Աստուած տարբեր ձեւերով կը փորձէ մեր ուշադրութիւնը գրաւել): Աստուած մորենիի մը քով եկաւ եւ զայն վառեց առանց սպառելու:

Մենք կը կարդանք ինչպէս Մովսէս ինքն իրեն ըսաւ.  
«Հիմա երթամ ու [...] տեսնեմ [...]» (Ելք 3.3): Անգլերէն Աստուածաշունչին մէջ գործածուած «*turn aside*» բառերը (ուղղութիւնը փոխել, երթալ) կու գան եբրայերէն «*սուր*» (*սաւր*) բառէն: Ճէյմզ Սթրոնկը, որ Աստուածաշունչի բնագիր լեզուներուն մասնագէտ է, այս բառը կը բացատրէ իբրեւ «դառնալ» (կենալ, աշխատանքէն դադրիլ): Մովսէս դիտմամբ հրաժարեցաւ այն բանէն, որ ծրագրած էր ընել, որպէսզի պատասխանէ այն Սուրբին, որ զինք հրաւիրեց (գրաւեց):

Երբ ան ընդառաջեց, մենք կը կարդանք. «*Տէրը տեսաւ, որ անհկա տեսնելու եկաւ, Աստուած մորենիին մէջէն կանչեց անոր ու ըսաւ. 'Մովսէս, Մովսէս'*»:

Երբ Աստուած տեսաւ, որ Մովսէսը դարձաւ, միայն այն ատեն Ան հետապնդեց զինք եւ իր անունովը կանչեց: Ես կը հաւատամ, որ Տէրը պիտի չշարունակէր անոր հետ խօսիլ եթէ Մովսէս չընդառաջէր: Աստուած զինք չկանչեց երբ հօտերը Յոդորին քով փարախին մէջ էին. ամենայարմար ժամանակին չկանչեց: Հապա եթէ Մովսէս մտածէր. «*Եթէ ես ուրիշ բանով տարուիմ եւ հօտերը չարածեմ, անոնք թափառելով պիտի տարածուին եւ ժամեր պիտի տուէ, հաւանաբար ամբողջ օրը պիտի տուէ զանոնք հաւաքելը: Հետագային կը ստուգեմ ասիկա, երբ ամէն բան վերահսկողութեանս տակ է եւ իմ օրս չի խանգարեր*»: Արդեօք արդիւնքը նոյնը պիտի ըլլամ:

Ոմանք կրնան մտածել, որ Աստուած կրնար ատելի

տպաւորիչ բան մը ընել, բայց արդեօք ատիկա Իր բնութեան կը համապատասխանէ: Առնենք Սամուէլին օրինակը, երբ ան իր փոքր տարիքին կը ծառայէր Հեղի քահանայապետին եւ անոր որդիներուն (Տէն Ա.Թգ 3): Գիշեր մը ան կը պառկի եւ ծայն մը կը լսէ, որ կը կանչէ. «Սամուէլ, Սամուէլ»:

Սամուէլը Հեղիին քով կը վազէ եւ կ'ըսէ. «Ահա հոս եմ. քանզի զիս կանչեցիր»: Հեղի ըսաւ. «[...] Ես չկանչեցի. դարձի՛ր պառկէ»:

Սամուէլ երկրորդ անգամ իր անունը կը լսէ եւ կը վազէ քահանային քով եւ նոյն պատասխանը կը ստանայ: Ասիկա երեք անգամ կը պատահի եւ վերջապէս քահանան կը հասկնայ եղածը եւ տղուն կ'ըսէ, որ ինչպէս պատասխանէ: Չորրորդ անգամ երբ կը լսէ. «Սամուէլ, Սամուէլ», գիտէ ինչպէս պիտի պատասխանէ. «[...] Խօսէ՛ք, քանզի քու ծառայ մտիկ կ'ընէ»: Ապա Տէրը կը խօսի եւ անոր ցոյց կու տայ Իր կամքը եւ խորհուրդները, որոնք ապագային պիտի յայտնուին:

Աստուած կրնար տարբեր բան մը ընել: Թերեւս երկրորդ անգամ երբ տեսաւ, որ Սամուէլ չի հասկնար, կրնար ըսել. «Սամուէլ, Հեղիին քով մի՛ վազեր, քեզ կանչողը ես եմ, Տէրը՝ քու Աստուածդ եւ կ'ուզեմ քեզի հետ խօսիլ»: Բայց արդեօք ասիկա է Աստուծոյ ձեւը: Ան կ'ուզէ, որ Իրեն ցանկանք եւ զինք ճանչնանք եւ զինք գիտնանք: Ան կը փնտռէ անոնք, որոնք հոգիով փութաջան են, որոնք կը փնտռեն եւ կը հետապնդեն, նոյնիսկ եթէ ատիկա յամառ յարատեւութիւն կը պահանջէ:

Աւետարաններուն նայելով մենք կը տեսնենք այս նոյնանման ձեւը: Յիսուս հինգ հացով եւ երկու ձուկով կը կերակրէ հինգ հազարը: Յետոյ Ան Իր աշակերտներուն կ'ըսէ, որ նաւակ ելլեն եւ իրմէ առաջ երթան լիճին միւս կողմը: Ան լեռ կը բարձրանայ՝ Իր Հօր հետ ժամանակ անցընելու համար: Աւելի ուշ այդ գիշեր, աշակերտները տակաւին դժուարութեամբ հովին դէմ կը դնէին, որպէսզի լիճին միւս կողմը անցնին, երբ կը կարդանք.

«Առաւօտեան ժամը չորսի մօտ էր, երբ ինք [Յիսուս] ջուրին վրայէն քալելով՝ անոնց քով եկաւ եւ կ'ուզէր

*զանոնք անցնիլ [անոնց քովէն պիտի անցնէր]:*  
(Մարկոս 6.48, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ)

Նկատի առէք հետեւեալ բառերը՝ *«անոնց քովէն պիտի անցնէր»*: Աստուածաշունչի «Էն.Էյ.Էս» տարբերակը այս ձեւով կը պարզէ. *«Եւ կ'ուզէր զանոնք անցնիլ»*: Սակայն երբ աշակերտները տեսան զինք, սկսան պոռալ, եւ Ան պատասխանեց. *«Քաջ եղէք, ես եմ, մի՛ վախնաք»*: Ան նաւակ բարձրացաւ եւ հովը դադրեցաւ: Եթէ անոնք չպոռային, Ան պիտի շարունակէր քալել: Ան անոնց մօտէն անցաւ, բայց եթէ չպոռային, Ան Ինքզինք պարտադրելով անոնց պիտի չմիանար:

Այնպէս կը թուի, թէ Աստուծոյ ձեւն է դէպի մեզ քայլ առնել, եւ եթէ մենք ընդառաջենք, Ան ուրիշ քայլ մըն ալ կ'առնէ եւ ասելի կը մօտենայ: Եթէ չընդառաջենք, Ան բռնի ուժով ներս չի մտնէր, կամ ինքնին մեր պարը չ'ընդմիջէր: Ո՛վ գիտէ, եթէ Մովսէս մէկդի չդառնար, Աստուած պիտի սպասէր այնպէս, ինչպէս սպասեց Սամուէլի պարագային, եւ ինչպէս Յիսուս ըրաւ Իր աշակերտներուն հետ: Ան յաճախ կը սպասէ մինչեւ որ մենք բաւարարաչափ քաղցած ըլլանք ընդառաջելու:

Վերադառնալով քշելու ընթացքին իմ ունեցած փորձառութեանս, հապա եթէ Անոր խօսելէն ետք իմ գացած ճամբայէն չդառնայի: Արդեօք պիտի փախցնէ՞ր Իրեն հետ հանդիպումս: Ես վստահ եմ, որ ուրիշ առիթներով ես փախցուցած եմ Իրեն հետ հանդիպումս, բայց այնպէս պատահեցաւ, որ այն ատեն մայրուղիին վրայ կէս մղոն անդին հանգիստի կանգառ մը կար: Այն պահուն, երբ կեցայ, լսեցի Աստուծոյ Հոգին կը փսփսայ իմ սիրտիս. *«Քեզի չըսի՛, անդադար աղօթէ»* (Ա.Թեսաղոնիկեցիներուն 5.17):

Ես պատասխանեցի. *«Այո՛, Տէր, ըսիր»*:

Ան Իր խորաթափանց հարցաքննութիւնը շարունակեց. *«Աղօթքը մենախօսութիւն է թէ՛ երկխօսութիւն»*:

Պատասխանեցի. *«Երկխօսութիւն է, Տէր, երկկողմանի գրոյց»*:

Ան անմիջապէս պատասխանեց. *«Եթէ ըսի, որ անդադար աղօթես, ատիկա կը նշանակէ, որ Ես կ'ուզեմ քեզի հետ անդադար հաղորդակցիլ»*:

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

Աւելորդ է ըսելը, որ ես խանդավառուեցայ: Ես անդրադարձայ այն հրաշալի առիթին, որ ինձի ընծայուեցաւ եւ ատիկա միայն ինձի տրուած չէ, այլ Իր բոլոր զաւակներուն:

Կրնաս հարցնել. «Ըսել կ'ուզես, որ Աստուած անդադար կը խօսի»: Ան այդպէս չըսաւ իմ սիրտիս: Ան ըսաւ, որ կ'ուզէ անդադար հաղորդակցիլ: Էսօքերը հաղորդակցութեան բազմաթիւ եւ այլազան ձեւերէն մէկն է: Իմ կինս կրնայ ինձի նայիլ եւ ես գիտեմ, թէ ինչ կ'ըսէ, թէ եւ ոչ մէկ բառ խօսուած է, եւ երբեմն կրնամ մինչեւ երեք էջ գրել այդ մէկ նայուածքով իր ըսածներով: Ինչո՞ւ: Ես քսան տարիէն աւելի ապրած եմ իրեն հետ եւ սորված եմ իր հաղորդակցելու ձեւերը, շարժուձեւերն ու վարուելակերպը: Դուք կրնաք նոյն սենեակին մէջ գտնուիլ երբ այս նայուածքներէն մէկը կը տրուի եւ ատիկա ոչինչ կը նշանակէ ձեզի համար: Ինչո՞ւ: Որովհետեւ դուք չէք ճանչնար զինք այնպէս, ինչպէս ես կը ճանչնամ զինք: Իրականութեան մէջ, մեր ամուսնութեան առաջին տարիներուն թերեւս ես այլ չհասկնայի նամակը: Հիմա, իրեն հետ քսանմէկ տարի անցընելէ ետք, իր հաղորդակցութեան ձեւին մասին քիչ մը աւելի գիտեմ:

## ՄՕՏԵՆԱԼՈՒ ԿՈՉԸ

Ձեզի համար կարեւոր է գիտնալ, որ այս գիրքը «ինչպէս ընել»-ու ձեռագիրք մը չէ, բայց կարելի է զայն աւելի նմանցնել ուղեցոյցի կամ քարտէսի մը, որ ուղղութիւններ կու տայ դէպի մեր վերջնական երթալիք տեղը՝ Աստուծոյ սիրտը: Եթէ գանձի մը քարտէսը ունենայի, որ զիս կ'առաջնորդէր դէպի թաղուած գանձ մը, ամայի կղզիի մը վրայ, ինձի համար ոչ մէկ օգուտ պիտի ունենար մինչեւ որ այդ կղզին մեկնէի եւ այդ վայրին հետ ծանօթանայի, որպէսզի կողմնորոշուէի. եւ յետոյ ճամբաներուն մէջ քալելու համար, ժայռերուն վրայ մագլցելու համար եւ հովիտներէն անցնելու համար պէտք է ջանք թափէի, որպէսզի պահուած գանձին հասնէի: Իմ կողմէս պէտք է որոշ գին վճարեմ, ուժ տրամադրեմ եւ ջանք թափեմ: Քարտէսը միայն ճամբան ցոյց կու տայ ինձի եւ չի ձգեր, որ ժամանակս կորսնցնեմ անօգուտ ջանքերով եւ հետախուզութիւններով, ինչպէս նաեւ կը պաշտպանէ զիս

## ԲՈԼՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՄԵԾԱԳՈՅՆ ՀՐԱԻԷՐԸ

կարգ մը ծածուկ թակարդներէ: Այս գիրքը այդ քարտէսին պէս է. ատիկա ձեզի համար հրաւեր մըն է ինծի միանալու՝ հիանալի եւ խանդավառող ճամբորդութեան մը համար — ճամբորդութիւն դէպի Աստուծոյ սիրտը: Այս էջերուն վրայ գտնուող Աստուծոյ Խօսքը պիտի պաշտպանէ ձեզ փոսերէն, թակարդներէն, եւ վտանգներէն, որոնք պիտի փորձեն ձեզ շեղել: Ատիկա պէտք է ձեզ պահէ անելորդ դժուարութիւններէ եւ ուժի ապարդիւն վատնումէ:

Ուստի եթէ պատրաստ էք, սկսինք:

## ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

1. Ձեր կեանքին դժուարութիւնը կամ փորձառութիւնը պատճառ դարձաւ, որ այս գիրքը կարդալու փափաքը ունենաք:
2. Նկատի առէք Իրեն մօտենալու Աստուծոյ հրաւերին այս օրինակները.
  - Մովսէսը տեսաւ վառող մորեմի մը եւ դարձաւ, որ քննէ (տեսնէ): Երբ այդ մէկը կ'ընէր, Աստուած զինք կանչեց:
  - Փոքրիկ տղան՝ Սամուէլը, չորս անգամ լսեց ձայն մը նախքան պատասխանելը. «[...] Խօսէ՛, քանզի քու ծառայ մտիկ կ'ընէ»:
  - Երբ աշակերտները տեսան, որ Յիսուս ջուրին վրայէն կը քալէր-կը քալէր կարծես անոնց քովէն պիտի անցնէր- պոռացին:

Այս օրինակներէն դժուար մէկը լաւագոյնս կը նկարագրէ Աստուծոյ հրաւերը ձեզի:

Պատասխանամբ էք: Եթէ այո, ինչպիսի՞ պատասխան մը տուիք:

3. Երբ կը մտածէք, որ աղօթքը երկխօսութիւն է, երկկողմանի զրոյց, Աստուած ինչ յայտնած է ձեզի, թէ՛ բառացիօրէն եւ թէ՛ ոչ բառացիօրէն:



# ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏԱՄՏՈՒԹԻՒՆԸ



Տէրը ըսաւ. «Ես քեզ աւելի լաւ համարեցի  
քան Ինքզինքս»:

Աստուածաշունչը հիմնական նիւթերու մասին կը խօսի. այս ճշմարտութիւնները կը սկսին Ծննդոց գիրքէն եւ անընդմիջաբար կը զարգանան մինչեւ որ հասնին Յայտնութեան գիրքը: Այդ նիւթերէն մէկն է Աստուծոյ բուն փափաքը եւ հետամտութիւնը մարդուն: Ասիկա իրականութիւն է, Աստուած կ'ուզէ մեզի մօտենալ աւելի քան մենք կ'ուզենք Իրեն մօտենալ:

Իրականութեան մէջ Ան մեզի կը կարօտի (Տէս Յակոբոսի 4.5): Անգլերէն «*եղրն*» (*yearn*) բառը կը նշանակէ «բուն կերպով ցանկալ»: Ասիկա Իր սիրտին ամենախոր աղաղակը եղած է ժամանակներու սկիզբէն ի վեր: Ադամին մեղանչելէն ետք Աստուծոյ առաջին խօսքերը դատավճիռի մը յայտարարութիւնը չէր, այլ՝ «Ադամ, ո՞ր ես»: Կը լսէք անոր սիրտին անկեղծ աղաղակը. «Ինչո՞ւ ինձմէ կը պահուրտիս»: Եկէ՛ք հետեւինք ամբողջ պատմութեան ընթացքին մեզի հանդէպ Անոր ունեցած բուն փափաքին:

ԱԴԱՄԻ ԾՈՌԱՆ ԹՈՌԸ

Ադամին ծոռան թոռան անունը Ենովք էր: Կը հաւատամ, որ օրը եկաւ երբ Ենովք Ադամին քով գնաց եւ անոր հարցուց պարտեզին մէջ անոր անցուցած ժամանակին մասին: Ան կ'ուզէր գիտնալ, որ ինչպէս էր կենդանի Աստուծոյ հետ քալելը: Կրնաք հարցնել՝ ինչպէս Ենովք կրցաւ խօսիլ իր մեծ հօր, մեծ հօր, մեծ հօր հետ: Պատասխան՝ երբ մինչեւ ինը հարիւր երեսուն տարի ապրիս, դուն պիտի տեսնես քո թոռանդ, թոռանդ, թոռանդ ... թոռը: Ադամ միայն վեց հարիւր քսաներկու տարեկան էր երբ Ենովք ծնաւ:

Ճիշդ հաշիւներով՝ Աստուածաշունչը մեզի կ'ըսէ, որ Ադամը վեց հարիւր ութսունեօթը տարեկան էր երբ վաթսունհինգ տարեկան Ենովք իրեն մօտեցաւ: Ասիկա կ'եզրակացնենք Ծննդոց գիրքին մէջ յիշուած Ենովքի պատմութենէն, ուր կը նշուի, թէ Ենովք երեք հարիւր տարի Աստուծոյ հետ քալեց եւ երեք հարիւր վաթսունհինգ տարի ապրեցաւ:

«Ենովք [...] երեք հարիւր տարի Աստուծոյ հետ քալեց եւ տղաքներ ու աղջիկներ ծնաւ: Ենովքին բոլոր օրերը երեք հարիւր վաթսունըհինգ եղան» (Ծննդոց 5.22-23):

Հետեւաբար, հաւանական է, որ վաթսունհինգ տարեկանին էր, որ Ենովքի համար ամէն բան փոխուեցաւ, երբ ան օրհնութիւնն ու սիրտի ցաւը Ադամ նահապետին շրթունքներէն դուրս քաշեց:

Ասիկա միայն իմ երեւակայութիւնս է, եւ ոչ մէկ գրութիւն ունիմ հաստատելու ասիկա, թէ տարիներ տեւեց մինչեւ որ Ենովքը քաջութիւն հաւաքեց իր նշանաւոր նախահօր քով երթալու՝ պարտեզին մասին հարցնելու համար անոր, քանի որ Ադամ շատ յօժարակամ չէր այդ մասին խօսելու: Ադամին բոլոր սերունդները գիտէին ատիկա, եւ շատ հաւանաբար փոքր տարիքէն Ենովքը զգուշացուցին, որ Ադամին հետ այդ մասին չխօսի:

Հրեական պատմական գրութիւնները կը խօսին պարտեզէն վտարուելէն ետք Ադամին ընկճուածութենէ տառապելուն մասին: Ատոր ծանրութիւնը գրեթէ անտանելի էր: Կարգ մը գրութիւններ կը պատմեն, թէ ինչպէս Ադամն ու



Եւան մութ քարայրներու մէջ նստան եւ պատահածին ամօթէն չէին կրնար իրարու նայիլ:

Ադամը կորսնցուցած էր իր վայելչութիւնը: Բան մըն է Աստուծոյ հետ քալելու խոստումին մասին լսելը, բայց բոլորովին ուրիշ բան է Անոր փառքին մէջ բնակելու շօշափելի իրականութիւնը կորսնցնելը: Ադամ անբացատրելի կորուստ կրեց, բայց Ենովք պայքարեցաւ եւ առաւ Ադամին սիրտի ցաւին հին պատմութիւնը եւ զայն հաւատքով եւ ակնկալութեամբ խառնեց: Թէեւ սերունդներ իրենք իրենց միջեւ Ադամին կորուստին մասին իրենց յուսախաբութիւնը մրմռացած էին, Ենովք խոստում մը տեսաւ. «Ես Աստուծոյ հետ պիտի քալեմ»:

Կրնամ երեակայել երկուքին հանդիպումը: Ենովքը կը դողար, բայց իր բուն փափաքը վերջապէս գերազանցեց իր վախը: Պարտութեան վախին շուքին ընդմէջէն ան ճեղքեցանցաւ եւ հաւատաց, որ ատկէ աւելին կար: Իրեն համար Ադամին պատմութիւնը ձախողութեան պատմութենէ մը աւելին էր. աստիկա մարդուն հետ քալելու Աստուծոյ գերագոյն փափաքին յայտնութիւնն էր: Արդեօք Ադամ տեսա՞ւ Ենովքին կրակը երբ ան փոխանցեց այն հեռաւոր օրհնութիւնը, որ կը գտնուէր դրախտի պարտէզին մէջ իր ապրած կեանքին յիշատակին մէջ:

Ադամ կու լար երբ կը պատմէր իր սրտաճմլիկ պատմութիւնը. «Ենովք, ես Անոր հետ քալեցի ... Անոր փառքին մէջ: Տիեզերքին Ստեղծիչը, բոլոր երեւելի բաներուն Արարիչը իմ կողքիս քալեց: Ան Իր գլխաւոր ծրագրիին խոր իմաստութիւնը բաժնեկցեցաւ ինձի հետ. ինչպէս տիեզերքի աստղերը Իր մատներով դրաւ եւ դասաւորեց: Նոյն այդ մատները զիս ստեղծեցին եւ իմ ձեռքս բռնեցին: Ան իւրաքնչիւր աստղի անուն տուաւ եւ զանոնք դրաւ իբրեւ նաւարկութեան եւ եղանակներու նշաններ: Ան ինձի ցոյց տուաւ, որ ինչպէս աշխարհը հաւասարակշռեց ձգողականութեան եւ ելեկտրամականիսական դաշտերուն միջոցով, եւ ստեղծեց կատարեալ կլիմա մը: Ան ինձի հետ բաժնեկցեցաւ սերմին գաղտնիքը եւ թէ ինչպէս իր տեսակին պէս կը վերարտադրէ. ինչպէս կը ջրով անդունդին աղբիւրներով, որոնք ռազմավարական դիրքեր ունին

ամբողջ երկրի տարածքին: Ենովք, Ան ինձի վստահեցաւ բոլոր կենդանիները անուանելու առանձնաշնորհումը — հինգ միլիառէ աւելի կենդանիի տեսակ: Մենք միասին քննարկեցինք զանոնք, բայց Ան վերջին ընտրութիւնը ինձի ձգեց»:

Ինչքան Ադամ կը խօսէր, այդքան Ենովքին քաղցը կ'աւելնար, մինչեւ որ այլեւս չկրցաւ դիմադրել այդ բուռն փափաքին: Պէտք է Աստուծոյ հետ քալէր ինչպէս Ադամ կը քալէր. պիտի չհրաժարէր:

Ենովքը նոյնիսկ ժառանգեց բան մը, որ Ադամը չէր ժառանգած. Ադամին փոշին երկիր վերադարձաւ, բայց Ծննդոց Գիրքը մեզի կ'ըսէ. «Ենովք Աստուծոյ հետ քալեց եւ չէր գտնուեր, քանզի Աստուած առաւ զանիկա» (Ծննդոց 5.24): Ան այս աշխարհէն հեռացաւ՝ առանց մահ տեսնելու:

Իր կեանքին ընթացքին Ենովք մեծ մարգարէ մըն էր: Ան իր օրուան մասին խօսեցաւ ինչպէս նաեւ մեր օրերուն մասին մարգարէացաւ: Ան մարգարէացաւ այն խաբէբայ մարդոց մասին, որոնք վերջին օրերուն եկեղեցիին մէջ պիտի բարձրանան, այնպէս ձեւանալով, որ կարծես, նոյնիսկ հաւատալով, որ իրենք շնորհքով փրկուած են եւ անոր հետեւելիք դատաստանը (տես Յուդա 1-15): Ան տեսաւ Աստուծոյ դատաստանին տեսիլքները, յայտարարելով Տիրոջ երկրորդ գալուստը կոյսէն ծնելէն հազարաւոր տարիներ առաջ:

Ինչո՞ւ Աստուած առաւ զինք երբ ան միայն երեք հարիւր վաթսունհինգ տարեկան էր: Արդեօք իր մեծ մարգարէական ծառայութեան համար: Ո՛չ, այլ որովհետեւ ան «Աստուծոյ հետ քալեց» եւ Եբրայեցիներուն Գիրքը մեզի կ'ըսէ, որ ատիկա «Աստուծոյ հաճելի էր» (Եբրայեցիներուն 11.5):

Սխալ չհասկնաք, Աստուծոյ հետ անոր քալելը հզօր եւ ազդու ծառայութիւն մը յառաջ բերաւ, բայց զԱստուած մտերմօրէն ճանչնալու անոր բուռն փափաքն էր, որ հաճեցուց Տէրը: Ան հանդիպեցաւ Աստուծոյ սիրտին կարօտին, մտերիմ յարաբերութիւն Անոր հետ, այնպէս ինչպէս Ինք կը կարօտի մեզի:

ԱՍՏՈՒԾՈՅ ՍԻՐՏԻՆ ԱՂԱՂԱԿԸ ԲՈԼՈՐ  
ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Ասիկա եղած է Աստուծոյ սիրտին աղաղակը բոլոր ժամանակներուն մէջ: Ժողովուրդ մը, որ կ'ուզէ ճանչնալ զինք՝ ի պատասխան մեզի համար Իր ունեցած փափաքին: Ենովքէն ետք եկաւ Նոյը, ուրիշ ծոռ մը, որ Աստուծոյ սիրտին դպաւ: Ծննդոց Գիրքը մեզի կ'ըսէ. «Նոյ Աստուծոյ հետ քալեց» (Ծննդոց 6.9): Նոյը ընդառաջեց ընկերութեան համար Աստուծոյ ունեցած փափաքին եւ մօտեցաւ: Երբ մօտեցաւ, Աստուած ալ իրեն մօտեցաւ եւ զինք զգուշացուց գալիք բաներուն մասին: Այն դատաստանը, որ աշխարհը անակնկալի բերաւ, սկիզբը Նոյին եւ Աստուծոյ միջեւ գաղտնիք մը էր: Նոյին մտերիմ յարաբերութիւնը Աստուծոյ հետ ծնաւ այն վստահութենէն, որ Աստուած պիտի պատասխանէ անոնց, որոնք կը փնտռեն զինք, անոնց, որոնք կը համարձակին հաւատալ եւ կը մօտենան՝ Իրեն հետ մտերմութիւն ունենալու համար:

Ասիկա դարձեալ կը տեսնենք Աբրահամի հետ երբ Աստուած զինք հրաւիրեց, ըսելով. «Իմ առջեւ քալէ» (Ծննդոց 17.1): Այս հրաւերը կրկին ու կրկին անգամներ ուղղուած է Իսահակին եւ Յակոբին. տակաւին Յակոբ չծնած Աստուած ըսաւ. «Յակոբը սիրեցի» (Հռոմայեցիներուն 9.13): Տէրը հետապնդեց զինք, ինչպէս բոլորիս հետ կ'ընէ, նոյնիսկ երբ Յակոբ չէր փնտռեր զԱստուած: Երբ Յակոբ փախաւ իր եղբորմէն, տեսաւ, որ Աստուած կը սպասէր՝ զինք բռնելու: Երբ Յակոբ քարէ բարձին վրայ քնացաւ, Աստուած զինք երազով մը արթնցուց, սանդուխ մը, որմէ հրեշտակները կ'ելլէին ու կ'իջնէին: Աստուածային կապ մը յայտնուեցաւ Աստուծոյ եւ մարդուն միջեւ:

Չորս հարիւր տարուայ ստրկութենէ ետք Իսրայէլի որդիները, Յակոբին սերունդները, շփոթի մէջ էին զիրենք ազատելու Անոր հիմնական նպատակին շուրջ: Անոնք կը կարծէին, թէ ասիկա խոստացուած երկիրը ժառանգելու մասին էր, բայց ատկէ շատ աւելին էր: Աստուծոյ հիմնական (վերջնական) փափաքը մտերմութիւն ունենալ էր, եւ Ան յստակօրէն յայտնեց Իր նպատակները երբ ամբողջ ազգին

խօսեցաւ բունն փափաքով վառած եւ բանաստեղծական խօսքերով.

«Դուք տեսաք ինչ որ ըրի Եգիպտացիներուն եւ ինչպէս ձեզ արծիւի թելերուն վրայ վերցուցի ու *քովս բերի*» (Ելք 19.4, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Սակայն Անոր փափաքները չէին արտացոլացուէր Իսրայէլի որդիներուն խօսքերուն մէջ. իրենց երկխօսութիւնը շատ տարբեր շարժառիթ մը երեւան կը բերէր. «[...] Մեզ կաթ ու մեղր բղխող երկիր մը չտարիր, ո՛չ ալ մեզի արտ ու այգի տուիր իբր ժառանգութիւն» (Թուոց 16.14): Անոնց սիրտերը կապուած էին այն բանին, որ *ի՛նչ* պիտի ժառանգէին եւ ոչ թէ *զ՛՛նչ* պիտի ժառանգէին (Անոնց սիրտերը կապուած էին իրենց ժառանգելիք բանին եւ ոչ թէ իրենց ժառանգելիք *Անծին*):

Մովսէս շարունակ Աստուծոյ փափաքը յստակացուց Աբրահամի սերունդներուն. այդ յայտարարութիւններէն մէկը արձանագրուած է.

«[...] Քանզի Անիկա Աստուած մըն է, որ ձեզի հետ յարաբերութիւն ունենալու համար բունն փափաք ունի» (Ելք 34.14, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն):

Աստուած ամբողջ Իսրայէլին յայտարարեց. «Ես ձեզ սիրեցի»: Ատով հանդերձ անոնք տգիտութեամբ եւ սիրտի կարծրութեամբ պատասխանեցին. «Մեզ ինչո՞վ սիրեցիր» (Մաղաքիա 1.2): Անտեսելով այդ իրականութիւնը, Անոր սիրտը անոնց կը ցանկար. անոնք շփոթեցին իրենց հասնելու Անոր փորձերը դատապարտութեան արարքներու հետ (անոնք կարծեցին, թէ Աստուած կ'ուզէ դատապարտել զիրենք):

Նոյնիսկ կրկնուող անհնազանդութեան մէջ Անոր փափաքը հաստատ մնաց: Երեսիայի օրերուն Ան աղաղակեց. «[...] Ձեզի խօսեցայ կանուխ ելլելով, բայց դուք մտիկ չըրիք, ձեզ կանչեցի, բայց դուք պատասխան չտուիք» (Երեսիա 7.13): Ան կը յայտնէ, որ զիրենք այսպէս հետապնդած է այն օրէն երբ զիրենք

## ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏԱՄՏՈՒԹԻՒՆԸ

Եգիպտոսէն հանեց մինչեւ այդ օրը (Տեն Երեմիա 7.25):

Այդ բոլորին մէջ Անոր սէրը երբեք չտատանեցաւ, բայց մեզի հանդէպ Իր ունեցած գերագոյն փափաքին մեծագոյն փաստը կը գտնուի Յիսուսի մէջ: Յիսուս Ինք կ'ըսէ. «[Ես] Մարդու Որդին եկաւ կորսուածը *փնտրելու* եւ փրկելու» (Ղուկաս 19.10, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Ան չեկաւ միայն փրկելու, այլ նաեւ՝ *փնտրելու*, երբ տակաւին մենք Իրեն թշնամի էինք:

## ԱՆՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՄԵԶՄԷ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐԻՆ ՀԱՄԱՐ

Երբ մէկու մը կը ցանկանք, յաճախ անոր մասին կը մտածենք: Կը տեսնենք, որ ամբողջ օրը մեր միտքերը անոր վրայ կ'ուղղուին եւ յաճախ անոր հետ կը հաղորդակցինք նոյնիսկ գիշերը մեր քունին մէջ: Թերեւս նոյնիսկ մենք մեզ խոցելի կ'ընենք եւ ուրիշներու հետ կը բաժնեկցինք, թէ որքան յաճախ կ'ուզենք անոր հետ ըլլալ եւ անոր մասին կը մտածենք: Աստուած նոյնն է: Աստուած Դաւիթին ըսաւ մեզի համար Իր ունեցած խորհուրդներուն մասին: Դաւիթ կը պատմէ այն հոյակապ մտածումը, որ Աստուած ունի իրաքանչիւրիս համար.

«Որչանի պատուական են ինձի քու խորհուրդներդ,  
ո՛վ Աստուած: Որչանի մեծ է անոնց թիւը: Եթէ համրեմ  
զանոնք՝ աւազէն շատ են» (Սաղմոս 139.17-18):

Գրեթէ անկարելի է հասկնալ, բայց իրաքանչիւրիս մասին Անոր ունեցած միտքերը ամբողջ երկրի աւազէն շատ են: Պահ մը մտածեցէք այդ մասին, երեւակայեցէք բոլոր աւազի հատիկները հաւաքուած ամբողջ մոլորակէն. բոլոր ծովեզերքներէն, անապատներէն, գետերէն, ծովերէն եւ ովկիանոսներու յատակներէն, եւ անշուշտ բոլոր կոլֆի դաշտերէն: Երբ կը նայիմ կոլֆի դաշտին մէջ գտնուող աւազի թակարդներէն միայն մէկ հատին, չեմ կրնար պատկերացնել, թէ որքան աւազի հատիկներ կան այդ մէկ պզտիկ փոսին մէջ: Սակայն Աստուած կը խօսի երկրի վրայ գտնուող իրաքանչիւր աւազի հատիկին մասին: Թիւը աներեւակայելի

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

է: Վերջին քսանմէկ տարիներուն ընթացքին ես շատ գեղեցիկ միտքեր ունեցած եմ իմ կնոջս մասին, բայց նոյնիսկ իմ բոլոր մտորումներուս մէջ կը կասկածիմ եթէ իմ ամենատպաւորիչ օրս նոյնիսկ պզտիկ շիշ մը կը լեցնէր, ուր մնաց, ամբողջ աշխարհը:

### ԿՐ ՀԵՏԱՊՆԴԵՍ ԱՅՆ, ԻՆՉ ՈՐ Կ'ԱՐԺԵԻՈՐԵՍ

Այս տեսակի միտքերը վերապահուած են այն անձերուն համար, զորս կը սիրէք եւ կ'ուզէք մտերմութիւն ունենալ անոնց հետ: Սկսմք նշմարել, թէ Ան ինչքան կը սիրէ ձեզ: Երբեք կանգ առմձ էք խորհելու, թէ ինչքան մեծ արժէք ունիք Իրեն համար: Երբ գնումի կ'երթանք, կը պտըտինք խանութներու մէջ, որոնք լեցուն են ապրանքներով, որոնց վրայ գիներու պիտակներ կան: Կարգ մը ապրանքներու վրայ գեղջ կայ, ուրիշներ՝ սուղ են. իրաքանչիւրին գին մը սահմանուած է՝ իր արժէքին համաձայն: Բայց եթէ մենք իմաստուն գնորդներ ենք, միշտ կը գնենք առարկաներ, որոնք մեր ծախսած գումարին չափ կամ ատելի կ'արժեն մեզի համար:

Կեանքի մէջ ամէն բանի համար արժէք մը որոշուած է: Այդ արժէքը կ'որոշուի գնողին համոզումին համաձայն: Քանի մը տարի առաջ պէյսպոլ մը ծախու դրուած էր: Բայց ատիկա սովորական գնդակ մը չէր. ատիկա այն գնդակն էր, որ Մարք Մըկուայըրը եօթանասուներորդ անգամ ըլլալով դաշտին սահմաններէն դուրս զարկած էր: Այն ժամանակ ան պէյսպոլի Մէյճըր Լիկ կազմակերպութեան մօտ նոր մրցանիշ մը հաստատեց որպէս մէկ եղանակի մէջ ամենաշատ անգամներ գնդակը դաշտին սահմաններէն դուրս զարնողը: Գնդակը ծախուեցաւ 2.7 միլիոն տոլարի: Նոյնիսկ եթէ այդքան դրամ ունենայի, վստահաբար գնդակին համար այդքան գումար պիտի չվճարէի: Ինչո՞ւ: Որովհետեւ ատիկա այդքան ալ արժէքաւոր չէր ինձի համար: Բայց կը յիշեմ, որ այդ ժամանակ կարդացի, որ կային մարդիկ, որոնք ատկէ ատելի ալ կը վճարէին այդ գնդակին համար եթէ առիթը ունենային: Բայց հիմա որ այդ մրցանիշը կոտրուած է, կը կասկածիմ եթէ ռեւէ մէկը այդ գումարին մէկ մասնիկն անգամ կը վճարէ

## ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏԱՄՏՈՒԹԻՒՆԸ

Ժամանակ մը շատ բաղձալի նկատուած այդ գնդակին համար: Անիկա արժեզրկուած է:

Ուստի հարցումը այն չէ՝ թէ «Ինչ է մեր արժէքը ընկերութեան համար»: Ատիկա կը փոխուի: Նոյնիսկ մարդկային կեանքին արժէքը մարդոց միջեւ կը տարբերի, քանի որ կան միլիոնաւոր ծնողներ, որոնք կը սպաննեն իրենց չծնած զաւակները: Իրենց համար մանուկին կեանքը չ'արժեր այն անյարմարութիւնը, որ իրենց պիտի պաճառէ: Կան ամուսիններ, որոնք կը լքեն իրենց կիներն ու զաւակները, որովհետեւ իրենց աչքերով այդ յարաբերութիւնը արժանի չէ իրենց ժամանակին եւ ոյժին: Իրենց սեփական հանգիստը եւ հաճոյքը շատ ատելի արժէքաւոր է իրենց համար քան իրենց զոյգին կամ զաւակներուն կեանքը: Ոմանք իրենք զիրենք պոռնկութեամբ կը ծախեն: Յանկը անվերջ կը շարունակուի եւ հետեւանքը միլիոնաւոր վիրաւորներ է մեր ընկերութեան մէջ: Ոմանք չսիրուած կամ չուզուած կը զգան, քանի որ իրենց արժէքը ուրիշներու աչքերով կը տեսնեն:

## ՄԵՐ ԱՐԺԷՔԸ ՀԱՅՐ ԱՍՏՈՒԾՈՅ ՔՈՎ

Ինչ է մեր արժէքը Աստուծոյ քով: Հոն է, որ կը գտնենք մեր իսկական արժէքը: Աստուած է, որ կը հաստատէ արժէքի չափանիշները այս տիեզերքին մէջ, եւ ոչ մարդիկը: «Որովհետեւ մարդոց աչքին փառաւորը Աստուծոյ աչքին անարգ է [...]» (Ղուկաս 16.16):

Յիսուս կ'ըսէ. «Ինչ օգուտ, եթէ մարդ ամբողջ աշխարհը շահի, բայց իր կեանքը կորսնցնէ, որովհետեւ ինչ փրկագին պիտի տայ իր կեանքը ետ առնելու համար» (Մատթէոս 16.26): Պահ մը նկատի առէք այս աշխարհին մէջ գտնուող ամբողջ հարստութիւնը: Բազմամիլիոն տոլար արժող դրեակներուն մասին մտածեցէք. բոլոր թանկարժէք քարերը եւ թանկարժէք մետաղները. բոլոր ընտիր ինքնաշարժները, զբօսանաւերը, եւ օդանաւերը. ամենաարդիական ելեկտրոնային սարքերը, եւ ասոնք «աղուոր» բաներէն քանի մը հատն են միայն: Այս աշխարհի մէջ այնքան շատ գանձեր կան, որ գրեթէ անկարելի է երեւակայել: Ըստ վերջին

ուսումնասիրություններուն, համաշխարհային համախառն ներքին արդիւնքը 35.8 եռիլիոն ամերիկեան տոլար է: Այսինքն՝ 35,800,000,000,000.00 ամերիկեան տոլար: Ատիկա բաւական մեծ հարստութիւն է, եւ ասիկա տակաւին առանց անշարժ կալուածքը ներառելու: Սակայն Յիսուս մեզի կ'ըսէ, որ ով որ իր կեանքը այս ամբողջ հարստութեամբ փոխանակէ, վատ գործարք կ'ընէ:

Եթէ մեր իսկական արժէքը, այն արժէքը, որ Աստուած մեզի կու տայ, աւելին է քան այս ամբողջ աշխարհէն եկած եւ աշխարհին մէջ գտնուող հարստութիւնը, ինչ է մեր արժէքը Անոր քով: Մեզի կ'ըսուի. «Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին Որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ» (Յովհաննէս 3.16): Մենք չար իշխանին՝ Արուսեակին իշխանութեան տակ էինք, Ադամը մեզ անոր յանձնելէն ետք (Տէս Ղուկաս 4.6): Ադամին անհնազանդութիւնը բոլորին վրայ տարածուեցաւ եւ մենք գերի դարձանք մեղքին, գործունէութեան դաշտ մը, ուր Արուսեակը կը տիրէ իբրեւ տէր: Ան մեզի դէմ իրաւունքներ ներկայացուց, որ մենք իրեն կը պատկանինք եւ չէր ուզեր արձակել մեզ: Մեր երթալիք տեղը յաւիտենական խաւարն էր, ուրկէ ազատելու յոյս չկայ: Միակ ձեւը, որով կրնայինք ազատագրուիլ, վերստին գնուիլն էր — բայց անոր գինը չափազանց բարձր էր ունէ մարդու համար, որ պիտի ուզէր վճարել:

Աստուած Յիսուսը իբրեւ փրկագին տուաւ մեզի համար: Ոչ ոք եւ ոչ մէկ ուրիշ բան կրնար գնել մեզ, քանի որ Աստուած կ'ըսէ. «(Քանզի սուղ է անոնց անձին փրկութեան գինը, երբեք կարելի չէ գոհացնել)» (Սաղմոս 49.8): Աստուած այնքան բարձր կը գնահատէ մեր հոգիները, որ Ան գնեց մեզ նոյնինքն Յիսուսով: Պօղոս կ'ըսէ. «Աստուած բարձր գինով ձեզ գնեց» (Ա.Կորնթացիներուն 6.20, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն): Դարձեալ կ'ըսէ՝ Հայրը «այնքան մեծ է իր շնորհքով, որ մեր փրկութիւնը գնեց իր Որդիին արիւնով (Եփեսացիներուն 1.7, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն):

Այս տիեզերքին մէջ չկայ մէկը կամ բան մը, որ աւելի



## ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏԱՄՏՈՒԹԻՒՆԸ

արժէքաւոր է Հայր Աստուծոյ համար, քան Իր Որդին՝ Յիսուսը: Սակայն այս գնումով Աստուած յայտարարեց մեր արժէքը համեմատած Իր մեծագոյն գանձին: Ահա՛ հիանալի բան մը՝ եթէ մենք Ինքնին Յիսուսի արժէքէն մէկ սէնթաւելի պակաս արժէինք Աստուծոյ համար, Հայրը երբեք պիտի չտար զԱյն, քանի որ Աստուած երբեք անշահաբեր գործարքներ չ'ըներ: Վատ գնում կամ փոխանակում տեղի կ'ունենայ երբ կու տաս անելի արժէքաւոր բան մը անելի քիչ արժէք ունեցող բանի մը դիմաց: Ուա՛հ: Կը տեսնէ՞ք ինչքան կարեւոր էք Հօր համար: Յիսուս կը հաստատէ ասիկա ըսելով. «Այն փառքը որ ինձի տուիր՝ իրենց տուի, որպէսզի մէկ ըլլան, ինչպէս որ ես եւ դուն մէկ ենք: Ես անոնց մէջ ըլլամ եւ դուն՝ իմ մէջս, այնպէս որ անոնք կատարեալ կերպով մէկ ըլլան, որպէսզի աշխարհը գիտնայ թէ դուն ղրկեցիր զիս եւ թէ սիրեցի զանոնք, *ինչպէս որ* դուն զիս սիրեցիր» (Յովհաննէս 17.22,23, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Յիսուս բացայայտօրէն կը յայտարարէ, որ Հայրը կը սիրէ մեզ նոյնքան, որքան Յիսուսը կը սիրէ: Լսեցի՞ք: Կը տեսնէ՞ք ձեր իսկական արժէքը: Կը հասկնա՞ք ինչո՞ւ Ան կը հետապնդէ ձեզ:

### «ԱՅՈՒՆ, ԲԱՅՑ ԵՍ ՄԷԿՆ ԵՄ ՇԱՏԵՐՈՒ ՄԷՋ»

Ոմանք կրնան առարկել. «Այո՛, Աստուած ասիկա ըրաւ ամբողջ մարդկութեան համար, ընդհանուր ձեւով, բայց ո՞վ եմ ես այդքան շատերու մէջ»: Ատոր պատասխանը հետեւեալն է՝ եթէ դուն միակը ըլլայիր, տակաւին Ան պիտի հետապնդէր քեզ եւ քեզի համար այդ մեծ գինը պիտի վճարէր: Ասիկա յստակօրէն կը տեսնենք Յիսուսի առաքելութեան մէջ: Ան ամբողջ օրը անցուցած էր մեծ բազմութիւններու Աստուծոյ թագաւորութեան մասին սորվեցնելով: Ան յոգնած էր, բայց կար բան մը, որ անմիջապէս պէտք է ըներ: Սուրբ Հոգին առաջնորդութեամբ Յիսուս Իր աշակերտներուն կ'ըսէ, որ նաւակ ելլեն եւ Գալիլիայի լիճին միւս կողմը անցնին: Լիճին մէջտեղը փոթորիկ մը կ'ելլէ եւ իրենց կեանքին կը սպառնայ, բայց Յիսուս այնքան յոգնած է, որ կը քնանայ: Աշակերտները վախով կ'արթնցնեն զԻնք եւ կը յայտնեն սպառնացող

վտանգին մասին. Յիսուս կը պատասխանէ ալիքներուն եւ հովին հրամայելով, որ հանդարտին:

Անոնք գիշերուան մեծ մասը կ'անցընեն այդ ալեկոծ լիճին միւս կողմը անցնելով: Հիմա որ միւս կողմը անցան, վերջապէս թերեւս կրնան քիչ մը հանգստանալ: Բայց հագիւ նաւակէն դուրս կ'ելլեն, իրենց կը հանդիպի խելագար դիւահար մը: Ան գերեզմաններու մէջ կը բնակի եւ շղթաներով չէին կրնար զինք կապել: Միշտ, գիշեր ու ցերեկ գերեզմաններու մէջ կը թափառէր ու կ'աղաղակէր եւ ինքզինք քարով կը վիրաւորէր (Տէս Մարկոս 5.3-5):

Եթէ այսօր ողջ ըլլար, զինք հոգեբուժարանի մը մէջ կը դնէին, շատ հաւանաբար մեկուսարանի մէջ: Թմրեցուցիչներ կու տային իրեն եւ զինք մինակ կը ձգէին: Շատերը զինք վտարուած մը պիտի համարէին, որ ողջ կը պահուէր միայն որովհետեւ օրէնքը չ'արտօներ, որ զինք սպաննեն: Զինք պիտի համարէին անպէտք անձ մը, որ ընկերութեան դրամը եւ ժամանակը կը սպառէ: Անոր արժէքը գրեթէ ոչինչ պիտի ըլլար: Շատ քիչեր պիտի ուզէին անոր ծանօթանալ:

Բայց եւ այնպէս, այս խելագարը մեծ արժէք ունէր Հօր, Յիսուսի եւ Աստուծոյ Հոգիին համար: Յիսուս հզօր կերպով ծառայեց անոր: Այնքան հզօր էր անոր ազատագրումը, որ օրուան վերջաւորութեան ան նստած էր Յիսուսի քով, հագուստները հագած եւ զգաստացած: Ահա՛ հիանալի մասը՝ անոր ծառայելէ ետք, Յիսուս նաւակ մտաւ եւ «կրկին լիճին միւս կողմը անցաւ» (Մարկոս 5.21): Երբեք պիտի չմոռնամ այն օրը, երբ Աստուած ասիկա ցոյց տուաւ ինծի: Ես խենթացայ (չկրցայ զգացումներս զսպել): Ես այնքան ահով լեցուեցայ, որ Յիսուսը, ծանր օրէ մը ետք ուժասպառ, պիտի անցնէր լիճէ մը եւ պիտի պայքարէր փոթորիկի մը դէմ՝ պարզապէս ծառայելու դիւահար վտարուածի մը, զոր ընկերութիւնը անպէտք կը համարէր, եւ ատկէ ետք կրկին անգամ նաւակ պիտի ելլէր եւ նոյն ճամբան անգամ մը եւս պիտի կտրէր: Այդ ամէնը ըրաւ միայն մէկ մարդու համար:

Երբ ասիկա տեսայ, լիովին հասկցայ, որ եթէ ես միակ անձը ըլլայի, տակաւին Ան պիտի փնտռէր զիս եւ իմ փրկագինս վճարէր, որպէսզի Իրեն հետ ընկերութիւն

## ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏԱՄՏՈՒԹԻՒՆԸ

ընէի: Զարմանալի չէ, որ այն գիշերը երբ Ինք ծնաւ, երկինքի հրեշտակները երգեցին — հռչակելով (տօնելով) խաղաղութիւն երկրի վրայ եւ մարդոց միջեւ հաճութիւն: Աստուծոյ մեզի հետամուտ ըլլալը կը բացայայտուէր աշխարհին առջեւ:

### ՅԻՍՈՒՍԻ ՆԱՅՈՒԱԾՔԸ ՄԵԶՄԷ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐԻՆ ՀԱՆԴԷՊ

Մեծագոյն յայտնութիւններէն մէկը, որ Տէրը երբեւէ տուած է ինձի, ունեցայ փրկութենէս կարճ ժամանակ ետք: Ինքնաշարժ քաճ ատենս Իրեն հետ ընկերութիւն կ'ընէի եւ յանկարծ Ան սկսաւ ըսել բան մը, որ յեղափոխեց իմ մտածելու ձեւս: Լսեցի, որ իմ սիրտիս կը փսփսայ. «Ճո՛ն, գիտնս, որ ես քեզ Ինձմէ աւելի կարեւոր կը համարեմ»:

Կը յիշեմ, որ երբ լսեցի այդ նախադասութիւնը, մէկ խօսքով ատիկա հայիոյութիւն եւ դժոխքով ներշնչուած համարեցի: Մտածեցի, որ ատիկա կատարեալ յանդգնութիւն եւ անպատկառութիւն է: Քիչ մնաց պիտի ըսէի. «Ետի՛ս գնա, Սատանայ»: Բայց եւ այնպէս սիրտիս խորը զգացի, որ ատիկա Տիրոջ ձայնն էր: Ուստի ըրի այն, ինչ որ ապահով բանն էր ընելու: Պատասխանեցի. «Տէ՛ր, ասիկա շատ ծայրայեղ է ինձի համար, որ հաւատամ: Հայիոյական կը թուի ինձի, որ Դուն՝ Տէր Յիսուսը, որ երկինքն ու երկիրը ստեղծեցիր, զիս՝ տկար անձս, Քեզմէ աւելի կարեւոր կը համարես: Միակ ձեւը, որ այս միտքը պիտի ընդունիմ, այն է, որ ինձի տաս Նոր Կտակարանէն երեք համարներ, որոնք կը փաստեն այս միտքը»:

Ասիկա ըսելէ ետք, ես զգացի Անոր հաճոյքը եւ անմիջապէս սիրտիս մէջ լսեցի. «Ի՛նչ կ'ըսէ Փիլիպպեցիներուն 2.3-ը»:

Այս համարին ծանօթ ըլլալով, բարձրաձայն մէջբերեցի զայն. «Մի՛ ընէք որեւէ բան, որ հակառակասիրութենէ կամ փառասիրութենէ մղուած ըլլայ. այլ՝ խոնարհ ոգիով՝ ձեր ընկերները աւելի լաւ համարեցէք քան դուք ձեզ»:

Տէրը ըսաւ. «Ասիկա առաջին համարդ է»:

Ես հակադարձեցի. «Տէ՛ր, այս խօսքերը Պօղոս կ'ըսէ Փիլիպպեցի հաւատացեալներուն, որ իւրաքանչիւրը

ուրիշները իրմէ անելի լաւ համարէ: Ատիկա չի խօսիր ինծի հետ Քու ունեցած յարաբերութեանդ մասին:

Անմիջապէս լսեցի. «Որդիս, Ես երբեք զաւակներուս չեմ ըսեր, որ ընեն բան մը, որ Ես Ինքս չեմ ըներ»: Յետոյ Ան ինծի ցոյց տուաւ, որ ասիկա բազմաթիւ տուներու հարցն էր: Ծնողները իրենց զաւակներէն կ'ակնկալեն վարուելակերպ մը, որ իրենք չեն դրսեւորեր (կատարեր): Տէրը երբեք մեզմէ չ'ակնկալէր բան մը, որ Ինք Անձամբ անոր օրինակը չ'ըլլար:

Ես հասկցայ այդ կէտը, բայց տակաւին ատիկա զիս չհամոզեց, որ Ինք զիս Իրմէ անելի լաւ կը համարէ: Ըսի. «Տէր, ատիկա միայն մէկ համար է: Երկու հատ ալ պէտք ունիմ»: Ես անպատկառ չէի ըլլար, այլ՝ զգուշ:

Յետոյ Ան հարցումի ձեւով խօսքեր ըսաւ ինծի, որոնք իմ սիրտս գամեցին. «Ճո՛ն, ո՞վ խաչին վրայ կախուեցաւ, դո՛ւն կամ Ես»:

Տնցուած այն բանէն, որ արդէն գիտէի, բայց հիմա շատ անելի իրական դարձաւ, պատասխանս զուսպ էր. «Դո՛ւն, Յիսուս»:

Շարունակեց. «Դո՛ւն պէտք է կախուէիր այդ խաչէն, բայց Ես կրեցի քու մեղքերդ, դատապարտութիւնդ, վատատողջութիւնդ, հիւանդութիւնդ, ցաւդ եւ աղքատութիւնդ: Ես ատիկա ըրի, որովհետեւ Ես քեզ ինձմէ անելի լաւ համարեցի»:

Ես դողացի երբ Իր խօսքերը լսեցի: Իր խօսած խօսքերը բոլոր կասկածներս ոչնչացուցին: Ես խոհեմութեամբ մտածեցի, թէ ինչպէս Ան Իրեն եղած բաներէն ոչ մէկուն արժանի չէր: Ան արդար ու անմեղ էր: Ա.Պետրոս 2.24-ը եկաւ միտքս. «Մեր մեղքերը ինք կրեց՝» իր մարմինով՝ խաչին վրայ, որպէսզի մեղքի տիրապետութենէն ազատած՝ արդարութեան համար ապրինք: *Մտոր վերքերովն էր որ բժշկուեցաք՝*»:

Այն ատեն գիտցայ, որ Ան իսկապէս զիս անելի կարեւոր կը համարէ, քան Ինքզինքը: Աչքերս արցունքով լեցուեցան եւ սկսայ պաշտել: Ես արդէն գիտէի, որ երրորդ համար մըն ալ կայ եւ անշուշտ Ան ատիկա իմ սիրտիս խօսեցաւ. «Ի՛նչ կ'ըսէ Հռոմայեցիներուն 12.10-ը»:

Ատիկա ուրիշ մէկ ծանօթ համար մըն էր եւ դարձեալ

## ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏԱՄՏՈՒԹԻՒՆԸ

արտասանեցի զայն. «*եղբոր պէս* իրար սիրեցէք զորովանքով: Յարգելու մէջ *իրար գերազանցեցէք*»:

Լսեցի, որ կ'ըսէ. «Միթէ ես բազմաթիւ *եղբայրներու* մէջ անդրանիկը չեմ» (Հռոմայեցիներուն 8.29): Ես կը նախընտրեմ Իմ եղբայրներս եւ քոյրերս եւ Իմ Անձէս ասելի լաւ կը սեպեմ զանոնք»:

Յաճախ լսած էի, որ Յիսուս ինչքան կը սիրէ մեզ: Բայց երբ այդ խօսքերը ըսաւ իմ սիրտիս, ատիկա շատ իրական դարձաւ, թէ մենք անհատապէս որքան յատուկ ենք Իրեն համար: Իրականութեան մէջ Ան Իր ընտանիքին անդամները Իր գանձերը կը կոչէ: Ան մեզի կ'ըսէ, որ մենք յատուկ ենք: Ան մեզի կ'ըսէ, որ մենք Իր աչքին բիբն ենք: Փորձեցէք հասկնալ ասիկա՝ Անիկա մեզի համար կ'ուրախանայ: Օ՛, այո՛, մտիկ ըրէք այս ճշմարիտ եւ գեղեցիկ խօսքերուն. «Քու Տէր Աստուածդ քու մէջդ զօրաւոր է, Անիկա *քեզ* պիտի փրկէ: Անիկա *քեզի* համար ուրախութեամբ պիտի զուարճանայ ու իր սիրովը *քեզի* թողութիւն պիտի տայ եւ քու վրադ ցնծութեամբ պիտի ուրախանայ» (Սովոնիա 3.17):

## ՄԱՐԴԸ ԻՆՉ Է

Հրեշտակները հետաքրքրութեամբ կը նային երբ կը տեսնեն, որ փառաւոր եւ սուրբ Աստուած այդպիսի ուշադրութիւն կը դարձնէ պարզ մարդոց: Կը կարդանք. «Երբ տեսնեմ երկինքը՝ քու մատերուդ գործը՝ լուսինը ու աստղերը, որոնք դուն հաստատեցիր, մարդը ինչ է՝ որ զանիկա կը յիշես, կամ մարդու որդին, որ անոր այցելութիւն կ'ընես» (Սաղմոս 8.3-4): Թէեւ այս խօսքերը Դաւիթը գրած է, ես կը հաւատամ, որ Աստուած արտօնեց, որ ան լսէ միտքերը հզօր հրեշտակային էակներուն, որոնք կը շրջապատեն Իր գահը: Այս հրեշտակները տեսան երբ այս հզօր Աստուածը տիեզերքը կը ստեղծէր: Անոնք այնքան Անոր ահը ունին, որ շարունակ իրարու կ'աղաղակեն. «Սուրբ, սուրբ, սուրբ», քանի որ ամէն անցնող վայրկեան Անոր փառքին մէկ այլ երեսը կը յայտնէ, ուստի միակ բանը, որ կրնան ընել յաւիտեան «Սուրբ» պոռալն է: Անոնք այնքան բարձր կը պոռան, որ գահին սենեակին (դահլիճ մը, ուր առնուագն տասը միլիոն հոգի

կրնայ նստիլ) դրանդիքները կը շարժին: Տակալին անոնք կը զարմանան, որ ինչո՞ւ այս ամէնէն հիանալի Աստուածը այսքան հոգատար է մեզի հանդէպ եւ կը յիշէ մեզ: Անոնք կը նշմարեն, որ կարելի չէ համրել Անոր սիրոյ եւ բարութեան միտքերը մեզի հանդէպ, քանի որ անոնց թիւը անելի է, քան երկրի վրայ գտնուող բոլոր աւազի հատիկները: Անոնք հիացած են ասով:

Մենք ամենաարժէքաւոր բանն ենք Իրեն համար. Իր փնտռուած գոհարները՝ կենդանի քարերը, որոնք կը կազմեն այն խորանը, որուն մէջ Ինք կ'ուզէ բնակիլ: Ինչո՞ւ Աստուած այսպէս կը զգայ մեզի հանդէպ: Ինչ ըրած ենք, որ այսպիսի սիրոյ մը արժանանանք: Ասիկա մեծագոյն ճշմարտութիւնն է: Մենք ոչինչ ըրած ենք, որ Իր սիրոյն եւ հետապնդումին արժանանանք: Որովհետեւ երբ մենք տակալին տկար, կորսուած մեղաւորներ էինք՝ թշնամիներ, Ան մեզ փնտռեց եւ գտաւ: Ան մեր մէջ տեսաւ այն, ինչ որ Անոր սէրը միայն կրնար տեսնել: Ան տեսաւ գանձեր փտածութեան, մեղքի եւ անառակութեան մէջ: Ան մեզ գնեց իբրեւ թանկարժէք բաներ, այն, ինչ որ շատեր կը համարեն քիչ արժէք ունեցող կամ նոյնիսկ անարժէք: Ան մեր վիճակէն անդին տեսաւ եւ տեսաւ այն, ինչ որ միայն Իր շնորհքը կրնար արտադրել:

Հիմա մենք անելի դիւրութեամբ կրնանք հասկնալ Սուրբ Գիրքին խօսքերը. «Աստուած ձեզ սուղ գինով գնեց: Աշխարհին գերի մի՛ դառնաք» (Ա.Կորնթացիներուն 7.2, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն): Ինչո՞ւ մէկը, որ այսքան սիրուած եւ գնահատուած է, պիտի ուզէ վերադառնալ այն համակարգին, ուր ինք ժամանակ մը գերի էր եւ շատ աննշան կը նկատուէր բաղդատած մեր իսկական արժէքին հետ:

Երբ մենք իրապէս հասկնանք, որ Ան ամէնէն կարեւոր էակն է ամբողջ տիեզերքին մէջ, եւ նոյն ատեն ամէնէն անձնականը, եւ թէ Ան բուն կերպով կը հետապնդէ մեզ, ինչպէս կրնանք անտեսել Իրեն մօտենալու այսպիսի հիանալի հրաւեր մը: Մենք այլեւս չենք կրնար մերժել զԻնք, որովհետեւ միայն տգիտութիւնը կրնայ արտօնել այսպիսի ողբերգական քայլ առնելու պակաս մը:

*(Կարեւոր նշում. Սուրբ Գիրքը կ'ըսէ, որ թէեւ Աստուած կը*

## ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏԱՄՏՈՒԹԻՒՆԸ

*հեղափոխությունը մեզ, բայց մենք պետք է ընդառնենք, որպեսզի  
հրեն հեղափոխությունը մեզ մտնենք: Եթե ասկե առաջ  
Յիսուս Քրիստոսը իրեն ձեր անձնական Տերը եւ Փրկիչը չէր  
ընդունած, ուրեմն այս պահուն կարելու է, որ անմիջապես  
կարողաք այս գիրքին երեսի մասին մեջ գործող Յուդեոսը Ա  
մասը:)*

## ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. Երբ Իսրայելի որդիները չորս հարիւր տարուայ  
Եգիպտոսի ստրկութենէն արձակուեցան, անոնք շփոթի  
մէջ էին զիրենք ազատ արձակելու Աստուծոյ հիմնական  
նպատակին շուրջ: Տէրը յայտարարեց. «Ես ... ձեզ քովս  
բերի», բայց եւ այնպէս անոնք ճշացին եւ տրտնջացին՝  
կարծելով, որ այդ ամէնը խոստացուած երկիրը  
ժառանգելու մասին էր: Ինչպէս հեղինակը նշեց, անոնք  
սիրտերը կապուած էին այն բանին, որ ինչ պիտի  
ժառանգեն եւ ոչ թէ զՈ՛վ պիտի ժառանգեն:  
Աստուած ձեզ մեղքի կապանքէն ազատ արձակեց,  
քանի որ կ'ուզէ ձեզ Իր քովը բերել: Երբեք ճշացնէր կամ  
տրտնջացնէր էք: Ինչպէս շփոթած էք բանը Անձին հետ  
(ինչը Ո՛վ-ին հետ):
2. Այս գլուխին մէջ այս հարցումը հարցուեցաւ. «Ինչո՞ւ  
մէկը, որ այսքան սիրուած եւ գնահատուած է, պիտի  
ուզէ վերադառնալ այն համակարգին, ուր ինք  
ժամանակ մը գերի էր»: Ինչպէս կը պատասխանէք այդ  
հարցումին:
3. Հեղինակը բաժնեկցեցաւ երկխօսութիւն մը, որ  
Աստուծոյ հետ ունեցած է, իր փրկութենէն կարճ  
ժամանակ ետք, թէ՛ ինք ինչքան մեծ պատիւ ունի Տիրոջ  
աչքին: Ինչպէս այս գիտելիքը, թէ դուք մեծ արժէք  
ունեցող «փնտռուած գոհար» մըն էք, կը փոխէ կամ  
պետք է փոխէ ձեր կեանքը եւ յարաբերութիւնները:





# ՊԱՇՏՊԱՆԷ՛ ԲՈՒ ԲԱՂՅԴ



Մենք քաղը կ'ունենանք այն բանին, որով կը սնանինք:

Նախքան անապաշխար անձ մը կենդանի Աստուծոյ մօտենայ, նախ Տէրը Անձամբ պէտք է քաշէ զինք: Էյ.Տապլեու. Թոզըրը կը գրէ. «Նախքան մեղաւոր մարդ մը Աստուծոյ մասին ողջամիտ խորհուրդներ ունենայ, լուսատրութեան գործ մը պէտք է կատարուած ըլլայ անոր մէջ» («Տը Փըրսութ աֆ Կար», էջ 11): Յիսուս Ինքը մեզի կ'ըսէ. «Ուեւ մէկը չի կրնար ինծի գալ՝ եթէ զիս ղրկող Հայրը զայն ինծի չբերէ» (Յովհաննէս 6.44): Ահա թէ ինչու բարեխօսելը անոնց համար, որոնք Յիսուսի միջոցով յարաբերութիւն չունին Աստուծոյ հետ շատ ճակատագրական է: Թէեւ Աստուած «կ'ուզէ, որ բոլոր մարդիկը փրկուին եւ հասնին ճշմարտութեան ճանաչումին» (Ա.Տիմոթէոսի 2.4), եւ ամբողջ պատմութեան ընթացքին յարատեւ կերպով ատոր հետամուտ եղած է, Ան տակաւին կ'ուզէ, որ Իր զաւակները կորսուածներուն հանդէպ Իր ունեցած փափաքով վառին եւ Իրեն աղաղակեն անոնց փոխարէն: Ահա թէ ինչու Յիսուս

ըսաւ. «Հունձքը առատ է, բայց մշակները՝ քիչ: Հետեւաբար խնդրեցէք հունձքի Տիրոջմէն, որ իր հունձքին համար մշակներ դրկէ» (Մատթէոս 9.37-38):

Յիսուսի յայտնութեան միջոցով փրկուելէ ետք, մենք բաց հրաւեր ունինք առ Աստուած: Ան Իրեն պատկանողներուն կ'ըսէ. «Մօտեցէ՛ք Ինձի»: Արդէն Աստուած այս յաւերժական (անժամանակ) հրաւերով առաջին քայլը առած է: Մորենին կը վառի ... Ան մեր անունը կը կանչէ ... Ան ճիշդ նաւակին դուրսը կեցած է: Մեր պատասխանին կը սպասէ:

Վերջերս ուրիշ հաւատացեալ մը ըսաւ. «Ճո՛ն, որքան անելի ապրիմ եւ ծառայեմ Աստուծոյ, այնքան անելի կ'անդրադառնամ, որ մեր Անոր մօտենալը կախեալ է Իր մեզ քաշելէն»:

Ես հակադարձեցի. «Ո՛չ, ատիկա ճիշդ չէ»:

Այն ատեն ան մէջբերեց Յիսուսի խօսքերը, թէ՛ ռեւէ մէկը չի կրնար Իրեն գալ՝ եթէ նախ Հայրը զայն չբերէ:

Ես պատասխանեցի. «Այո՛, ատիկա ճիշդ է անհաւատներուն համար: Բայց Աստուած կ'ըսէ, որ դուն Իրեն կը պատկանիս, եւ քեզմէ կը խնդրէ. 'Մօտեցի՛ր Ինձի, եւ ես պիտի մօտենամ քեզի': Ան յստակօրէն կ'ըսէ, որ մենք կրնանք այդ քայլը նախաձեռնել որեւէ ժամանակ»:

Այո՛, կան ժամանակներ երբ Ան կ'ուզէ մեզի հետ հանդիպիլ եւ Ինք կը նախաձեռնէ այդ հանդիպումը: Սակայն ատիկա չի նշանակեր, որ մենք չենք կրնար առաջին քայլը առնել դէպի զԻնք: Մենք Իրեն հետ յարաբերութեան մէջ ենք, եւ ինչպէս հօր եւ զաւակի միջեւ եղող որեւէ սովորական յարաբերութեան պարագային, կան ժամանակներ երբ զաւակը կը սկսի կապ ստեղծել եւ կան ժամանակներ երբ հայրը կը սկսի:

## ԻՆՉՈ՞Ւ ԱԻԵԼԻ ՄԵԾ ԹԻՒՈՎ ՄԱՐԴԻԿ ՉԵՆ ԸՆԴԱՌԱՋԵՐ ԱՆՈՐ ՀՐԱԻԷՐԻՆ

Շփոթեցնող հարցումը հետեւեալն է. «Ինչո՞ւ այդքան մեծ թիով հաւատացեալներ մակերեսային յարաբերութիւն ունին Աստուծոյ հետ: Ինչո՞ւ անոնք չեն խորանար անելի խոր, անելի հաստատ յարաբերութեան մէջ Անոր հետ: Ի՞նչն է, որ զիրենք

## ՊԱՇՏՊԱՆԷՔ ՔՈՒ ՔԱՂՅԴ

կ'արգիլէ: Ինչն է, որ զիրենք պիտի բռնկեցնէ եւ պատճառ դառնայ, որ անոնք ընդառաջեն Իրեն մօտենալու Իր կոչին: Պատասխանը բարդ չէ՝ զի՛նք ճանչնալու մեր քաղցն ու ծարարը: Դաւիթ աղաղակեց.

«Հոգիս ծարաւ է Աստուծոյ, կենդանի Աստուծոյն,  
էրբ պիտի գամ ու երեւնամ Աստուծոյ առջեւ:  
Տորեկ ու զիշեր արցունքներս ինծի հաց եղան,  
որովհետեւ ամէն օր ինծի կ'ըսեն. 'Ո՛ր է քու Աստուածդ':  
Այս բաները միտքս կը բերեմ  
ու հոգիս կը թափեմ իմ ներսիդիս [...]'»  
(Սաղմոս 42.2-4):

Նախքան շարունակէք, կրկին կարդացէք այս համարները դանդաղօրէն եւ մարսեցէք իւրաքանչիւր բառը: Նկատի առէք, Դաւիթ կ'ըսէ. «Այս բաները *միտքս կը բերեմ* ու հոգիս կը թափեմ իմ ներսիդիս»: «Միտք բերել» բառին երրայերէն բառն է՝ *«զախէր»*: Տապլեու.Ի. Վայնի Բառարանը մեզի կ'ըսէ, որ այս յունարէն բառը, ճիշդ անգլերէնին պէս, կը նշանակէ՝ «աւելի քան 'միտք բերել'. կը նշանակէ՝ 'միտքին մէջ պահել' (շարունակ անոր մասին մտածել)»: Ասիկա վստահաբար կը յարմարի հոս: Դաւիթը իրականութեան մէջ կ'ըսէ. «Եթէ *Աստուծոյ հանդէպ փափաքս իմ միտքիս մէջ պահեմ* (միշտ անոր մասին մտածեմ), ատիկա պատճառ պիտի ըլլայ, որ հոգիս թափեմ իմ ներսիդիս»: Ասիկա Անոր հանդէպ անյագ քաղց կը ստեղծէ: Այս քաղցը մեզ կը կանչէ, որ մօտենանք՝ անկախ անկէ, թէ ինչ խոչընդոտներ կը դիմագրաւենք՝ հոգեւոր, մտաւոր կամ ֆիզիքական: Ուստի կարեւոր է, որ պաշտպանենք, ինչպէս նաեւ աւելցնենք մեր քաղցը Անոր հանդէպ:

## ՏԷՐ, ԱԻԵԼՅՈ՛ՒՐ ԻՄ ՔԱՂՅՍ

Շատեր կ'աղօթեն. «Տէ՛ր, աւելցնուր իմ քաղցս Քեզի հանդէպ»: Սակայն ասիկա ճշգրիտ չէ: Մենք ենք, որ կ'որոշենք մեր քաղցը, ո՛չ Ինքը: Ամերիկայի մէջ մենք ունինք նիւթական ունեցումաճքի, զուարճութեան, հաճոյքի, եւ հարստութեան առատութիւն: Միակ ձեւը, որով կրնանք

Աստուծոյ հանդէպ քաղց ստեղծել եւ պահել, մեր հոգին (անձը) պաշտպանելն է՝ ընտրելով այն բաները, որոնցմով պիտի լեցնենք զայն: Առակաց 27.7-ը կ'ըսէ. «Կուշտ մարդը խորիսխը կ'արհամարհէ [...]»: Պարզօրէն, եթէ ձեր անձը լեցուն է հոգերով, հաճոյքներով, հարստութեան սիրով, կամ այս աշխարհի ցանկութիւններով, կուշտ պիտի ըլլաք եւ իրականութեան մէջ պիտի արհամարհէք Աստուծոյ ընկերութեան անուշ խորիսխը:

Պատկերացուցէք Գոհաբանութեան Օրը (Thanksgiving Day): Այս տօնական օրով Ամերիկացիներուն մեծ մասը իրենց ընտանիքներուն եւ բարեկամներուն հետ կը հաւաքուին՝ խնճոյք ընելու համար: Շատեր նախաճաշ չեն ըներ, որպէսզի վերջը ատելի շատ կարենան ուտել: Ինճոյքը կը սկսի. խոշոր հնդկահաւ մը դուրս կու գայ, միջուկ, անուշ գետնախնճոր, բանջարեղէն, թթուահատի (ճահճային հապալասի *cranberry*) թացան, կարկանդակներ եւայլն: Մենք հսկայական քանակով կերակուր կ'ուտենք, քանի որ մեր ախորժակը բացուած է: Վերջանալէն ետք կը հառաչենք, քանի որ շատ կերանք: Կուշտ ենք: Յետոյ, քանի մը ժամ ետք, մենք կ'երթանք ընտանիքի ուրիշ անդամի մը տունը: Նորէն ճաշը դուրս կու գայ իր ամբողջ փառքով: Այս անգամ ուտելիքները ատելի համեղ են, բայց փոխանակ այս հոյակապ ճաշին փափաքինք, վանողական կը գտնենք զայն եւ կը մերժենք: Տակաւին մենք մեր նախորդ ճաշէն այնքան կուշտ ենք, որ նայուածք մը կը նետենք խնճոյքին վրայ եւ գիտենք, որ պիտի չուտենք: Այլեւս կարելոր չէ եթէ այս կերակուրը շատ ատելի գերազանց է. իրականութեան մէջ մենք կ'արհամարհենք զայն: Առակաց Գիրքը ասիկա կը յայտնէ:

Այս ճշմարտութիւնը քիչ մը ատելի բացայայտելու համար, պէտք է անդրադառնանք, որ ատիկա համեմատական է: Եթէ հոգիդ այս աշխարհի ցանկութիւններով ծանրացած է, թերեւս խնճոյքը չարհամարհես, բայց լուրջի պիտի չառնես զայն: Եթէ շատ կերած չես, այլ պարզապէս սովորական կերակուր մը կերած ես երկու ժամ առաջ, եւ քեզի խնճոյքի մը կանչեն, պիտի չարհամարհես ատիկա. թերեւս մեղմօրէն խաճնես կամ անտեսես ատիկա: Յաճախ երբ քաղաք մը հասնիմ, ինձի ճաշի կը հրաւիրեն գեղեցիկ ճաշարանի մը

## ՊԱՇՏՊԱՆԷՔ ՔՈՒ ՔԱՂՅԴ

մէջ, բայց անօթի չեմ ըլլար, որովհետեւ քանի մը ժամ առաջ կերած կ'ըլլամ. ուստի քաղաքավար կերպով հրաւերը կը մերժեմ: Ուտելու գաղափարը ինծի համար վանելի չ'ըլլար ինչպէս վերը՝ Գոհաբանութեան Օրուան պատմութեան մէջ նկարագրեցի, պարզապէս ինծի համար հաճելի չ'ըլլար: Բայց եթէ նոյն առաջարկը ըլլայ մէկու մը, որ մէկ կամ երկու օր անօթի մնացած է, այդ անձը բոլորովին տարբեր պատասխան պիտի տայ: Այդ մարդը խիստ պիտի ցանկայ այն կերակուրին, որուն հանդէպ դուն անտարբեր կեցուածք ունեցար: Ուստի իրականութիւնը այն է, որ այն չափը, որով դուք լեցուած էք կեանքին վերաբերող բաներով կ'որոշէ ձեր պատասխանը Իր կանչին:

Շատ յաճախ եկեղեցիներու մէջ գտնուող մարդիկ Աստուծոյ բաներուն հանդէպ անտարբեր են եւ փափաք չունին: Շատերը չեն արհամարհեր Անոր ներկայութիւնը, բայց բաղդատած անօթի մարդուն հետ, անոնք անտարբեր են իրենց առջեւ գտնուող խնճոյքին նկատմամբ: Ի վերջոյ, անոնք քանի մը ժամ առաջ աշխարհի սեղանէն կերած են եւ կուշտ են: Ես տեսած եմ երբ անոնք կ'ըսեն, որ կ'ուզեն զինք, բայց անոնց գործերը իրենց խօսքերուն ճիշդ չըլլալը կը յայտնեն: Դուք այս գիրքը ունիք, քանի որ կը հաւատամ, որ ւաւելի մօտիկ յարաբերութիւն կ'ուզէք ունենալ Անոր հետ, բայց արդեօք ձեր անձը Իրեն կը փափաքի: Արդեօք դուք այն մարդուն պէս էք, որ օրերով չէ կերած կամ այն ալքոլամոլին, որ խմիչք չէ խմած, կամ թմրամոլին, որ թմրեցուցիչի պէտք ունի: Մենք այսպիսի քաղց պէտք է ունենանք, որպէսզի կատաղաբար եւ յարատւօրէն յարձակինք:

## ԱՆՏԱՐԲԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Յայտնութեան գիրքին մէջ յիշուած վերջին եկեղեցիին ուղղուած Յիսուսի խօսքերուն մանրակրկիտ ուսումնասիրութենէն ետք, հիանալի իրականութիւն մը կը յայտնաբերենք: Նախ կ'ուզեմ հասկնաք, որ Յիսուս եօթը ասիական եկեղեցիներու նամակներ ուղղարկեց, բայց այս նամակները միայն այդ պատմական եկեղեցիներուն համար մտադրուած չէին, այլ՝ մեր բոլորին, այլապէս անոնք գրուած

պիտի չըլլային Սուրբ Գիրքին մէջ: Այն իրականութիւնը, որ անոնք գրուած են Սուրբ Գիրքին մէջ, կը նշանակէ, որ անոնք մարգարէական կիրառութիւն ունին կամ տակաւին այսօր ալ կը խօսին մեզի:

Մարգարէական պատգամները կրնան ունենալ եւ յաճախ ունին բազմաթիւ կիրառութիւններ, իմաստներ կամ կատարում: Իրաքանչիւր եկեղեցւոյ նամակ ոչ միայն պատգամ մը ունի այսօր մեզի համար, այլեւ թերեւս այս պատգամը ամենավերջին տեղը դրուած է, քանի որ ատիկա եկեղեցին կը յանդիմանէ կամ անոր սխալները կը սրբագրէ նախքան Անոր վերադարձը: Ասիկա տրամաբանական է, քանի որ այս նամակը վերջացնելէ ետք Յովհաննէս կ'ըսէ. «Եւ ահա ասկէ ետք տեսայ երկինքի մէջ բացուած դուռ մը, եւ *փողի* հնչիւնին նման ձայնը՝ որ նախապէս լսած էի՝ ինծի հետ կը խօսէր ու կ'ըսէր. «Հո՛ս ել [...]» (Յայտնութիւն Յովհաննէսի 4.1, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Նկատի առէք «*փող*» բառը: Գիտենք, որ վերջին օրերուն Տէրը Իրենինները առնելու համար ինք պիտի իջնէ «երկինքէն երբ հրամանը լսուի, հրեշտակապետը ազդարարէ եւ Աստուծոյ *փողը* հնչէ» (Ա.Թեսաղոնիկեցիներուն 4.16-17, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Կը հաւատամ, որ յատուկ շեշտ մը կայ այս եկեղեցւոյ պատգամին վրայ մեր ապրած օրերուն համար:

Յիսուս յայտնեց, որ այս եկեղեցին գաղջ վիճակի մէջ էր. ւաւի ժամանակակից եզրեր գործածելով, անոնք բուռն փափաք չունէին եւ անփոյթ ձեւով կը վարուէին այն բաներուն հանդէպ, որոնք կարելոր են Իրեն համար: Հազուադէպ կը պատահէր, որ անոնք յատուկ ջանք թափէին զինք հաճեցնելու: Ինչն էր այս վարմունքին պատճառը: Յիշեցնեմ, որ ասիկա ինքնակոչ եկեղեցի մը չէ, զոր Աստուած չի ճանչնար — Յիսուս Ինք կը հաստատէ անոնց ինքնութիւնը: Պատասխանը կը գտնուի անոնց աշխարհահայեացքին մէջ: Յիսուս կ'ըսէ. «Կ'ըսես՝ թէ «Հարուստ էի եւ ւաւիի հարստացայ, եւ ո՛չ մէկ բանի կարօտ եմ» (Յայտնութիւն Յովհաննէսի 3.17): Այս խօսքերը կը յայտնեն, որ անոնց կը պակսի բուռն փափաք — քանի որ իրենց անձերը կուշտ են. ցաւօք, ոչ թէ Իրմով, այլ՝ նիւթական բաներով:

ՄԱԿԵՐԵՍԱՅԻՆ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ

Ոմանք կ'ըսեն, որ իրենց հարցը չափազանց շատ դրամ կամ նիւթական բաներ ունենալն էր: Ասիկա լաւագոյն պարագային Յիսուսի ըսածին մէկ մակերեսային գնահատականն է: Եթէ Դաւիթին նայիք, ան շատ ծառաներ եւ հարստութիւն ունէր: Իրականութեան մէջ ան Սողոմոնին տուաւ «չորս հազար թոն ոսկի, մօտաւորապէս քառասուն հազար թոն արծաթ. իսկ պղինձն ու երկաթը այնքան շատ էին», որ կշռել կարելի չէր (Ա.Մնացորդաց 22.14): Ատով հանդերձ, ան ինքզինք կը նկարագրէ ըսելով. «Ո՛վ Տէր, խոնարհեցուր քու ականջոյ: Պատասխան տո՛ր ինձի, վասն զի *աղքատ ու փնանկ եմ*» (Սաղմոս 86.1, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Ան ինքզինք աղքատ ու տնանկ կը կոչէ: Մենք գիտենք, որ ան պարզապէս քաղաքականօրէն ընդունելի ըլլալու համար չէր ըսեր այդ խօսքերը, քանի որ երբ աստուածային ներշնչումի տակ ես, չես կրնար խաբել: Ան իրապէս ինքզինք կը տեսներ որպէս աղքատ եւ տնանկ, արծաթի պաշարներ ունենալով հանդերձ: Իր պէտքը Աստուծոյ Անձն էր. եւ ատիկա աստուածային քաղցով զարգացած էր: Անգամ մը ես լսեցէք անոր աղաղակը. «Ո՛վ Տէր, խոնարհեցուր քու ականջոյ: Պատասխան տո՛ր ինձի [...]»: Ան շատ պէտք ունի եւ մեծ փափաք ունի Աստուծոյ պատասխանին: Ան անօթի եւ ծարաւ է մտերմութեան: Ատոր համար ան այսպիսի բուռն փափաք ունի. «Տորեկ ու գիշեր արցունքներս ինձի հաց եղան, որովհետեւ ամէն օր ինձի կ'ըսեն. 'Ո՛ր է քու Աստուածդ?'» (Սաղմոս 42.3):

Լաւողիկիայի եկեղեցիին հարցը նիւթական բաները չէր, այլ արտօնելը, որ նիւթական բաները իրենց հոգիները կշտացնեն: Դաւիթը երբեք թոյլ չտուաւ, որ այդ մէկը պատահի: Ան երբեք թոյլ չտուաւ, որ իր մեծ հարստութիւնը յագեցնէ իր հոգիին ախորժակը: Շատ հաւանաբար այս եկեղեցւոյ մարմինին անդամները Դաւիթէն շատ աւելի քիչ ունէին, բայց իրենք զիրենք իրենց ունեցուածքով կերակրեցին ու կշտացան: Ասիկա արգիլեց, որ անոնք Աստուծոյ ներկայութեան եւ ընկերութեան բուռն փափաքը ունենան իրենց ներսիդին:

ԲԱՅԱՐՁԱԿ ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆ

Ես շատ յաճախ ասիկա տեսած եմ վերջին քսան տարիներուն: Կը յիշեմ, առիթով մը ճամբորդեցի հիւսիսային Քանաւատայի Քրի ցեղին պատկանող հնդիկներուն քով: Անոնք վերջին Հիւսիսային Ամերիկայի հնդիկներն էին, որոնք արգելանոցի մէջ կը բնակէին: Իրականութեան մէջ միայն քսան տարի առաջ այս ազնուական մարդիկը կ'ապրէին հնդիկներու յատուկ կոնաձեւ վրաններու մէջ եւ որմզդական եղջերուններու բացած ճամբաներով կը տեղափոխուէին: Անոնք պարզ մարդիկ էին, որոնք շատ քիչ բան ունէին: Միայն նախորդ տասը տարիներուն անոնք ունեցան հեռատեսիլներ իրենց համեստ տուններուն համար:

Մօտաւորապէս հազար հոգի հաւաքուեցաւ հանդիպումներուն: Ես քանի մը օրէ հոն կը գտնուէի եւ տարօրինակ բան մը նկատեցի: Գրեթէ առանց բացառութեան, բոլոր անոնք, որոնք քսան տարեկանէն վեր էին, Աստուծոյ վերաբերող բաներուն նկատմամբ մեծ քաղց ունէին: Անոնք բուն փափաքով լեցուած էին, շատ աւելի, քան Հիւսիսային Ամերիկայի մէջ գտնուողներէն շատերը: Անոնք շատ մեծ փափաք ունէին զԱստուած ճանչնալու: Սակայն, քսան տարեկանէն վար եղողները անտարբեր էին եւ որեւէ տեսակի քաղց չունէին:

Ծառայութիւններէն մէկուն ընթացքին ուսուցանելու եւ քարոզելու օժութիւնը շատ զօրաւոր էր: Մեծ վրանին մէջ գտնուողները իսկապէս կը ստանային: Ժամանակ մը եկաւ երբ նկատեցի, որ վրանին դուրսը եւ ետեւը գտնուող երիտասարդները չափազանց ձանձրացած եւ անտարբեր կ'երեւէին: Գիտեմ երբ քարոզը ձանձրացուցիչ կ'ըլլայ, բայց այս պարագային հարցը ատիկա չէր. Սուրբ Հոգին հիանալի զօրութեամբ կը գործէր՝ Անոր Խօսքը հռչակելու համար: Յանկարծ, առանց անդրադառնալու, սկսայ շարքերուն մէջէն վազելով անցնիլ քաղցածներուն քովէն՝ վրանին ծայրը գտնուող երիտասարդներուն հասնելու համար: Ես իրենց աղաչեցի, որ ներս գան եւ մտիկ ընեն: Անոնք ինծի նայեցան, կարծէք խելագար մը ըլլայի, որ *կեանքի* մասին ոչինչ գիտէ:

Այն ատեն ես նկատեցի անոնց շափիկները եւ պէյսպոլի գլխարկները. կարծես իրենց վրայ գրուածները



լուսաւորուեցան եւ դուրս ցցուեցան: Անոնք իրենց հագուստին վրայ կը կրէին զանազան արհեստավարժ պասքեթպոլի եւ ֆութպոլի խումբերու ցուցանշաններ: Սուրբ Հոգին ինձի ցոյց տուաւ, որ անոնք հեռատեսիլէն իրենց դիտածներով գինովցած եւ կշտացած էին: Յաւօք, անոնք իրենց հոգիներուն քաղցը յանձնած էին բանի մը, որ իրենց օգուտ պիտի չբերէր: Նկատեցի, որ տարիքով աւելի մեծերը հեռատեսիլի կերակուրին վրայ մեծցած չէին: Ասով, ես իմ շփոթութեանս պատասխանը գտայ թէ՛ ինչո՞ւ տարբերութիւն կար քսանէն վար եւ վեր եղողներուն միջեւ:

Կը խնդրեմ, հասկցէք ըսածս: Հեռատեսիլը միշտ չէ, որ մնասակար է մեր աճին եւ քաղցին համար, այլ՝ ասոր հանդէպ մեր վերաբերումն է: Այժմ մեր ընտանիքը հեռատեսիլ ունի, թէեւ երբ տակաւին նոր ամուսնացած էինք, տարիներով հեռատեսիլ չենք ունեցած: Ես ներշնչուած եւ կրթուած եմ հեռատեսիլի զանազան ծրագիրներով: Հեռատեսիլին միջոցով ես կրնամ տեղեակ ըլլալ երկիրներու միջեւ տեղի ունեցող վերջին հարցերէն եւ գործերէն: Սակայն ասիկա չէ, որ զիս կը կերակրէ կամ կը կշտացնէ: Ասիկա իմ սիրտիս բուն փափաքը չէ: Ես կրնամ դիտել եւ տակաւին բուն կերպով Աստուծոյ վերաբերող բաներուն փափաքիլ եւ Սուրբ Հոգիին հետ հաղորդակցութեան մէջ մնալ: Թէեւ աղքատ էին, բայց այս երիտասարդները իրենց ախորժակները յանձնած էին բանի մը, որ իրենց օգուտ պիտի չբերէ:

Այս ճամբորդութենէն կարճ ժամանակ ետք ես գացի Միացեալ Նահանգներուն հիւսիս-արեւմտեան մասը: Ինձմէ խնդրեցին, որ Ուրբաթ երեկոյ մը քարոզեմ: Ծառայութիւնը բաց էր ամբողջ եկեղեցիին համար, բայց ի զարմանք ինձի, նկատեցի, որ եօթը հարիւր ներկաներուն հինգ հարիւրէն աւելին պատանի էին: Ծառայութեան աւարտին տասնեակներով պատանիներ շրջապատեցին զիս եւ հոգեւոր բաներու մասին հարցումներ կը հարցնէին: Ժամացոյցիս նայեցայ եւ գրեթէ կէս գիշեր էր: Մենք Աստուծոյ վերաբերող բաներու մասին կը խօսէինք ծառայութեան աւարտէն շատ երկար ժամանակ ետք:

Վերջապէս ըսի. «Ես շատ կը սիրեմ ասիկա: Դուք բոլորդ Աստուծոյ համար մե՛ծ քաղց ունիք»:

Ինձի հարցուցին եթէ յաջորդ օրը, նախքան մեկնիլս,

բոլորը կրնան զիս ճաշի հրաւիրել: Չկրցայ մերժել իրենց առաջարկը, ուստի անոնք ճաշարանի մը վերի յարկին վրայ գտնուող մեծ սենեակ մը ապահովեցին եւ քննարկումը շարունակուեցաւ: Հիանալի էր եւ թանկ: Երիտասարդներու երկու խումբերուն միջեւ տարօրինակ հակադրութիւն մը կար. հիւսիս-արեւմտեան կողմը գտնուող հարուստ երիտասարդները անօթի էին թէեւ նիւթապէս անոնք շատ անելի ունէին, քան հնդիկ երիտասարդները:

Հիւսիս-արեւմտեան եկեղեցիին մէջ քսան տարեկանէն վեր եղողները այնքան անօթի չէին, որքան երիտասարդները: Ինչո՞ւ անոնք չէին զիս շրջապատողները: Ինչո՞ւ ծառայութեան մէջ պատանիները թիւով շատ անելի մեծ էին, քան բոլոր միւս տարիքային խումբերը միասին: Կը հաւատամ, որ չափահասներուն հոգիները այս աշխարհի հոգերով եւ հաճոյքներով ծանրաբեռնուած էին: Աստուծոյ վերաբերող բաները իրենց կեանքին մէկ մասը կը կազմէին, բայց իրենց սիրտին բուռն փափաքը չէին, թէեւ անոնք կը դաւանէին Յիսուսի Տէր ըլլալը:

Այդ եկեղեցոյ աւագ հովիւին եւ պատանիներու հովիւին ծանօթանալէ ետք յստակ էր, որ աւագ հովիւը ինքզինք վերարտադրած էր ժողովուրդին մէջ, եւ պատանիներու հովիւը նոյնը ըրած էր: Ովսիա 4.9-ը բացայայտ դարձաւ ինծի համար. «[...] ‘Ինչպէս քահանաները՝ նոյնպէս ալ ժողովուրդը’: Քանի որ քահանաները չար են, ժողովուրդն ալ չար է» (անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն): Նոյնպէս կարելի է ըսել. «‘Ինչպէս հովիւը՝ նոյնպէս ալ ժողովուրդը՝» եթէ հովիւը կրակոտ եւ եռանդուն չէ, ժողովուրդն ալ անտարբեր պիտի ըլլայ»: Աստուած տեղափոխեց այդ պատանիներու հովիւը, որ այնքան լեցուն էր տեսիլքով եւ նախանձախնդրութեամբ եւ այսօր ան ուրիշ քաղաքի մը կը դպչի հզօր ձեւերով:

## ԱՆՏԱՐԲԵՐ ԵԿԵՂԵՑԻՒՆ ՀԱՄԱՐ ԴԱՐՄԱՆ

Ասիոյ եկեղեցիին ուղղուած իր նամակին մէջ Յիսուս անդրադարձաւ ճիշդ այս անգգայութեան (անտարբերութեան), որ շատ տարածուած է եկեղեցիին մէջ: Լսեցէք Անոր խօսքերը.

«Ահա ես դրան առջեւ եմ ու կը բաղխեմ: Եթէ մէկը իմ ծայնս լսէ եւ դուռը բանայ՝ ներս պիտի մտնեմ եւ անոր հետ պիտի ընթրեմ, ան ալ՝ ինծի հետ» (Յայտնութիւն Յովհաննէսի 3.20, անգլերէն «Էն. Այ.Վի.» տարբերակէն):

Ինծի համար զարմանալի է, թէ որքան յաճախ ծառայողները այս համարը կը գործածեն՝ չփրկուածներուն կոչ ուղղելու համար, բայց Յիսուս բնաւ այդ մասին չի խօսիր: Ան Իր խօսքը կ'ուղղէ այս եկեղեցիին. Ան կը խօսի այն հաւատացեալներուն, որոնք կրակոտ չեն: Նկատի առէք, Ան կ'ըսէ. «Եթէ մէկը [...] լսէ [...]»: Ինչն է, որ մեզի թոյլ չի տար, որ լսենք: Արդէն կշտացած հոգին է, որ մեզի չ'արտօներ, որ Իր ծայնը լսենք: Աստուած Մովսէսը դրկեց անապատին ետեւի կողմը, Եգիպտոսի շեղումներէն հեռու՝ անոր ուշադրութիւնը գրաւելու համար: Աստուած մէկ հանդիպումով ապահովեց Մովսէսին հետաքրքրութիւնը եւ ան այլեւս երբեք չշեղեցաւ, անկախ անկէ, թէ ո՛ր կը գտնուէր՝ նոյնիսկ երբ ան Եգիպտոս վերադարձաւ:

Յիսուս կ'ըսէ, որ եթէ մէկը Իր ծայնը լսէ եւ դուռը բանայ՝ ներս պիտի մտնէ եւ անոր հետ պիտի ընթրէ: Ան «Կենաց Հաց»ը պիտի մատուցանէ մեր հոգիներուն. Ինքն է Կենաց Հացը: Աստուածաշունչի անգլերէն տարբերակներէն մէկը կ'ըսէ. «Եթէ Իմ կանչս լսէք եւ դուռը բանաք, ներս պիտի մտնեմ, եւ միասին պիտի ընթրենք, որպէս բարեկամներ» (անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն): Ես կը սիրեմ ատիկա, քանի որ այն ժամանակ, այսօրուրնէ աւելի, միասին ընթրելը ընկերային մտերմութեան աւելի բարձր մակարդակ մը ցոյց կու տար: Երբ կը ճամբորդեմ, միշտ կը սիրեմ գոնէ մէկ անգամ ճաշել խորհրդածողովին ղեկավարին կամ հովիւին հետ նախքան մեկնիլս, քանի որ այս ընկերակցութեան ընթացքին մենք կ'ունենանք իրապէս իրարու ճանչնալու առիթը: Ճաշերու ընթացքին փոխանակում մը տեղի կ'ունենայ, որ աւելի ուժեղ է քան ուրիշ որեւէ միջավայրի մէջ: Ատոր համար է, որ Պօղոս մեզի կ'ըսէ, որ չուտենք մէկու մը հետ, որ կը ձեւացնէ, որ ինք հաւատացեալ է, բայց սովորաբար մեղք կը գործէ (Տէս Ա.Կորնթացիներուն

5.11): Ճաշի ընթացքին մենք մեր սիրտերը կը բանանք եւ իրարու հետ կը մտերմանանք, եթէ ատիկա ընենք մէկու մը հետ, որ բացայայտ ապստամբութեան մէջ կ'ապրի, ատիկա հոգեւորապէս առողջ փոխանակում պիտի չըլլայ:

ՄԵՆՔ ՔԱՂՅԸ Կ'ՈՒՆԵՆԱՆՔ ԱՅՆ ԲԱՆԻՆ,  
ՈՐՈՎ ԿԸ ՍՆԱՆԻՆՔ

Անօթութիւնը հիմնական ազդակն է, որ կ'որոշէ եթէ մենք Աստուծոյ հետ մտերմութեան հետամուտ ենք կամ ոչ: Ուրեմն պէտք է յիշենք, որ մե՛նք ենք մեր ախորժակը կառավարողը, եւ ոչ թէ Աստուած: Հարցումը այն է, թէ ինչպիսի՞ ախորժակներ եւ ցանկութիւններ պէտք է զարգացնենք: Հոգեւոր սկզբունք մը կայ, որ երբեք չի փոխուիր.

*Մենք քաղցը կ'ունենանք այն բանին, որով կը սնանինք:*

Ես վերստին ծնունդ ստացայ 1979 թուականին համալսարանի եղբայրութեան մը մէջ: Գիշերով մը մեր ուսանողական եղբայրակցութեան խոհանոցն էի եւ ուտելու բան մը կը փնտռէի երբ Տէրը ըսաւ. «Քու մարմինդ Իմ տաճարս է, անոր հոգ տար»: Այդ ժամանակ ես «Արագ պատրաստուող եւ վնասակար կերակուրի» սիրահար էի: Կը կարծեմ, որ թմրամոլ բառը գործածելը յարմար է, քանի որ ատիկա կը նկարագրէ մէկը, որ բանի մը կապուած է: Վնասակար կերակուր կ'ուտէի պարզապէս որովհետեւ ատիկա ինձի համար համեղ էր: Ես կը սիրէի կազային խմիչքները, արագ պատրաստուող ուտելիքները (fast food), տապկուած խմորը, ամէն տեսակի իւղոտ կերակուր, սպիտակեցուած ալիւրի արտադրութիւններ՝ գիտէք ցուցակը: Ես կը ցանկայի ամէն բանի, որ վնասակար էր եւ քիմքիս հաճելի էր: Ինձի համար փառաւոր ճաշը «Պիկ Մէք համպըրկըր» մը, Քոքա քոլա եւ տապկուած գետնախնձորն էր:

Երբ Աստուած ատիկա ըսաւ ինձի, անդրադարձայ, որ իմ մարմինս թէ՛ Իր Հոգիին համար եւ թէ՛ ինձի համար բարդ բնակարան մըն է: Միտք մը ծագեցաւ մէջս՝ եթէ ես սուղ

Եւ նոր ինքնաշարժ մը ունենայի, երբեք անոր մէջ աղտոտ քարիւղ կամ վերամշակուած իւղ պիտի չդնէի: Միայն լաւագոյն քարիւղը եւ իւրը պիտի դնէի, որպէսզի ասելի լաւ աշխատի եւ ասելի երկար ժամանակ դիմանայ: Մտածեցի՝ ես միայն մէկ ֆիզիքական մարմին ունիմ, որ կարելի չէ փոխարինել, բայց սուղ ինքնաշարժը կարելի է փոխարինել: Անմիջապէս փոխեցի իմ ուտելու սովորութիւններս: Սկսայ կարդալ եւ հարցումներ հարցնել, որպէսզի գիտնամ, թէ մարմինս ինչ կը պահանջէ իր առաւելագոյն կարողականութեամբ գործելու եւ երկար եւ դժուար աշխատանքին դիմանալու համար: Ատիկա գործընթաց մըն էր, բայց քանի մը տարի ետք իմ ամբողջ ուտելու եւ խմելու ձեւս փոխուեցաւ:

Այս ամէնը հիանալի էր, բայց կար յաւելեալ օգուտ մը, որ չէի անդրադարձած, որ կրնայ պատահիլ: Սկիզբը, երբ սկսայ առողջարար ուտելիքներ ուտել, անոնց համը չէի սիրեր, բայց կ'ուտէի որովհետեւ ինծի համար օգտակար էր: Յետոյ, ժամանակ մը ետք, ախորժակս փոխուեցաւ: Անցեալին եթէ պիտի ընտրէի արագ պատրաստուող ուտելիքին եւ դաշտային կանանչեղէններով պատրաստուած աղցանին, ձուկին եւ ամբողջական հատիկի ալիւրով պատրաստուած հացին միջեւ, առանց մտածելու, համպըրկըր կ'առնէի եւ ձուկն ու աղցանը կ'արհամարհէի: Սակայն այսօր, եթէ այդ երկու ընտրութիւնները ունենամ, առողջարար ուտելիքը կ'ընտրեմ առանց նոյնիսկ մտածելու վնասակար ուտելիքին մասին: Իրականութեան մէջ, յաճախ իմ ճամբորդութիւններուս ընթացքին եթէ միայն արագ պատրաստուող ուտելիք կայ, չեմ ուտեր: Կը նախընտրեմ անօթի մնալ, քան ուտել այն բանը, որ ատենօք բուռնօրէն կը ցանկայի: Այլեւս ատոր հանդէպ ախորժակ կամ հակուծ չունիմ: Ես նոյնիսկ չեմ սիրեր ատիկա:

Նոյն սկզբունքը ճիշդ է մեր հոգիներուն համար: Մեր հոգիները կ'ուզեն այն բանը, որով կը սնանենք զիրենք: Եթէ մենք մեզ մարզանքով սնանենք, «Ի.Էս.Փի.Էն» մարզական կայքին հանդէպ բուռն փափաք պիտի ունենանք: Եթէ շարունակ ֆիլմերով եւ Հոլիուուտի բամբասանքով սնանինք, այսպիսի ախորժակներու համար գրաւիչ եղող ֆիլմերու կայաններու, ամսաթերթերու եւ զրոյցներու հանդէպ

բուռն փափաք պիտի ունենանք: Եթէ շարունակ սնանինք գործարքի աշխարհով եւ ներկայ իրադարձութիւններով, անոնց պիտի ցանկանք: Եթէ մեր տուները, ինքնաշարժները, հագուստները, եւայլն մեզի գոհունակութիւն կը պատճառեն, ուրեմն մենք բուռն փափաքով պիտի վառինք երբ գնումի կամ նոր ինքնաշարժի կամ կահաւորումի գաղափարներ կը քննարկենք, եւ հոգեւոր զրոյցները ծանծրացուցիչ պիտի գտնենք: Մենք դժուարութիւն պիտի ունենանք Սուրբ Գիրք կարդալու կամ աղօթքի սենեակին մէջ կենալու: Սակայն եթէ անդադար Աստուծոյ Խօսքով սնանինք, դիւրին պիտի ըլլայ աղօթքի համար ժամանակ յատկացնելը, եւ հոգեւոր բաներու մասին զրոյցները դիւրութեամբ պիտի կատարենք եւ բնական եւ սահուն ընթացք պիտի ունենան: Աստուծոյ ներկայութեան համար բուռն փափաք պիտի ունենանք եւ պիտի ուզենք Անոր հետ մտերմութիւն ունենալ:

## ԱՆԱՌՈՂՋ ԾԱՅՐԱՅԵՂՈՒԹԻՒՆ

Ասիկա կրնայ հասնիլ անառողջ ծայրայեղութեան: Մենք կ'ապրինք ֆիզիքական մարմինի մը մէջ: Մենք պարբերաբար պէտք ունինք հանգիստի եւ առողջ հաճոյքի: Երբ Աստուածաշունչի դպրոց կը յաճախէի, շաբաթական քառասուն ժամ կ'աշխատէի եւ լման ժամանակով ուսանող էի: Շաբաթավերջի մը սենեկակիցս զիս հրաւիրեց խումբ մը ընկերներու հետ «թաչ ֆուֆայլ» խաղալու: Մերժեցի առաջարկը, որպէսզի Սուրբ Գիրքը սերտեմ: Այն պահուն, երբ ան մեկնեցաւ, Աստուածաշունչս հանեցի, որ կարդամ եւ աղօթեմ, բայց ամէն բան մարեցաւ: Չէի կրնար Աստուծմէ լսել: Կարծես պարզապէս բառեր կը կարդայի եւ չէի հասկնար: Սենեկակիցս արդէն մէկ ժամ առաջ գացած էր եւ ես աղաղակեցի. «Տէր, ինչո՞ւ այսքան դժուարութիւն կ'ունենամ Սուրբ Գիրքը հասկնալու կամ Քու ձայնդ լսելու: Ինչ է հարցը: Արդեօք անհաճոյ բան մը ըրի կամ մե՞ղք մը գործեցի»:

Ի պատասխան, Ան ըսաւ. «Գնա՛ եւ «թաչ ֆուֆայլ» խաղցիր»:

Ես ետ քաշուեցայ եւ վերջը հարցուցի. «Ինչ: Ֆուֆայլ խաղամ: Ատիկա հաւատք չի կառուցաներ, ոչ ալ զիս Քեզի ւաւիլ կը մօտեցնէ: Ինչպէս կրնաս ինձի ըսել, որ ատիկա ընեն»:

## ՊԱՇՏՊԱՆԷՔ ՔՈՒ ՔԱՂՅԴ

Տէրը զիս առաջնորդեց համարի մը, որ յանկարծ կենդանացաւ. «[...] Շատ գիրք շինելը ծայր չունի ու շար կարդալը մարմինը կը յոգնեցնէ» (Ժողովող 12.12, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Ըսաւ. «Տղան, դուն ֆիզիքական մարմինի մէջ կը բնակիս (անոր մէկ մասը ուղեղն է) եւ աստիկա զանազան ձեւի հանգիստի պէտք ունի: Եթէ անոր չտաս իր պահանջած հանգիստը, Ինձմէ լսելու եւ աճելու կարողութիւնդ պիտի խափանես»: Յետոյ Ան ինծի ցոյց տուաւ, թէ ինչպէս աշակերտները շատերու ծառայելէ ետք Ան զիրենք հրաւիրեց՝ ըսելով. «Եկէք երթանք ամայի տեղ մը, ուր առանձին կրնանք ըլլալ եւ հոն քիչ մը կը հանգչինք» (Մարկոս 6.31): Պարզօրէն Յիսուս կ'ըսէր. «Անշատուեցէք, որպէսզի ուժասպառ չըլլաք»:

Ես ձգեցի եւ գացի ֆուֆայով խաղալու: Կէսօրէ ետք ժամը երեքէն վեցի միջու երբ կրկին սկսայ Աստուածաշունչս կարդալ, համարները բացուեցան եւ անգամ մը եւս սկսայ զգալ, որ Աստուծոյ կեանքը կը հոսի էութեանս մէջ մինչ եւ Աստուծոյ Խօսքին շուրջ ընկերութիւն կ'ընէի Սուրբ Հոգիին հետ:

## ԲԱԶՄԱԶԲԱՂ

Սերտողութեան մէջ չափազանց շատ ժամանակ անցընելու այս սխալը՝ անտեսելով հանգիստը, որուն կարիքը ունին հոգին ու մարմինը, այն սխալներէն չէ, որուն մէջ շատերը այսօր եւ այս դարուս կ'իյնան: Իրականութեան մէջ ամենամեծ գողը, որ կը գողնայ Աստուծոյ հանդէպ մեր անօթութիւնը, մեր բազմազբաղ ապրելակերպն է: Շատ բարեմիտ հաւատացեալներ այս ծուղակին մէջ ինկած են եւ Աստուծոյ հետ իրենց անցուցած ժամանակը փոխարինած են բազմազբաղ քրիստոնէական ապրելակերպով: Ասիկա նաեւ կրնայ ընդգրկել ծառայութեան խաբուսիկ եւ շարունակական աշխատանքը:

Եկէք պարզ հարցում մը հարցնենք, որպէսզի լուսաբանուինք՝ ինչո՞ւ մենք զմեզ ֆիզիքապէս կը կերակրենք: Յուսամ ձեր պատասխանը պիտի ըլլայ՝ մեր մարմինները սնուցանելու եւ զօրացնելու համար: Կրնամք երեւակայել, որ չուտէք, բայց ձեր կեանքը շարունակէք իր ամենաարագ

ընթացքով: Եթե իբրեւ փորձարկութիւն քանի մը օր չուտենք, բայց շարունակենք երկար ժամեր ֆիզիքական աշխատանք տանիլ առանց աւելորդ քունի, ինչ կը պատահի: Պահ մը մտածեցէք այդ մասին: Ուժասպան կ'ըլլաք եւ կը մարիք:

Բայց եւ այնպէս, որքան դիւրութեամբ մենք ասիկա կ'ընենք հոգեւորապէս. պատճառ մը կայ, որ մենք ասոր կը հանդուրժենք հոգեւորապէս, բայց ոչ ֆիզիքապէս: Եթե երկար ժամանակ չուտենք, մեր ստամոքսները կը գանգատին եւ ոչ միայն մէկ անգամ: Ժամանակի ընթացքին անոնք կը շարունակեն իրենց ձայնը բարձրացնել եւ ցաւէն կը ճչան: Մեր ամբողջ մարմինը կը պոռայ. «Անօթի եմ, կերակրէ զիս»: Սակայն մեր հոգին այդպէս չի պոռար: Կարծէք հակառակը կը պատահի. մեր ներքին մարդուն ձայնը ժամանակի ընթացքին կը ցածնայ: Սակայն պատճառը այն է, որ մենք անոր ձայնը չենք լսեր: Մեր հոգին կը տկարանայ եւ մեր մարմինը աւելի գերիշխող կը դառնայ:

Երբ երկար ժամանակ չենք ուտեր, մեր ախորժակը կը կորսնցնենք: Եթե հինգ օրէն աւելի չուտես, անօթութեան ֆիզիքական ճիչը կը լռէ: Կերակուրը կը կորսնցնէ իր հրապոյրը եւ կտոր մը միսը նոյնքան գրաւիչ կ'ըլլայ, որքան կօշիկ մը ուտելը: Ձեր ախորժակը կը կորսնցնէք եւ չի վերադառնար մինչեւ որ ձեր ներքին պաշարները սպառին եւ անօթութիւնը սկսի:

Նկատած եմ, որ եթե ես արտօնեմ, որ բազմազբաղ ապրելակերպը փոխարինէ Տիրոջ հետ անցուցած իմ ժամանակս, նոյնը կը պատահի: Նախ Սուրբ Գիրքին հանդէպ իմ հետաքրքրութիւնս կը պակսի եւ յետոյ աղօթելու փափաքս կը նուազի: Եթե հազուադէպօրէն (անկանոն կերպով) աղօթեմ կամ կարդամ, պիտի չզգամ, որ կեանքը կը հոսի իմ էութեանս մէջ: Աստուծաշունչը պիտի չխօսի ինձի այնպէս, ինչպէս կը խօսէր երբ յարատեւ կերպով աստուծաշնչական համարներով կը սնանէի:

Ես անօթի մնացած եմ՝ առանց ֆիզիքական ճաշ ուտելու, մինչեւ որ ախորժակս կորսնցուցած եմ եւ ախորժակս ետ բերելու միակ ձեւը եղած է ինքզինքիս ստիպել, որ ուտեմ: Նոյնն է պարագան հոգեւոր առումով: Եթե հոգեւոր ախորժակս կորսնցուցած եմ, կը բանամ Աստուծաշունչս,



կը զղջամ ծուլութեանս համար, եւ յետոյ ակնկալութեամբ Աստուծոյ ձայնը լսելու հետամուտ կ'ըլլամ: Կը շարունակեմ կարդալ մինչեւ որ բան մը խօսի ինձի: Ընդհանրապէս շատ երկար ժամանակ չ'առներ. երբ շարունակեմ, Ան միշտ հաւատարիմ է եւ կը պատասխանէ: Ուրիշ միջոց մը, որով կրնամ նորէն կապուիլ Անոր հետ, քանի մը օր հեռանալ եւ միայն կարդալ եւ աղօթելն է մինչեւ որ յագեանամ:

## ՁԵՐ ՀՈԳԵԻՈՐ ՁԵՐՄԱՉԱՓԸ

Ասիկա կարգապահութիւն մըն է, որ մենք բոլորս պէտք է ունենանք: Հաւատքի մէջ նահանջելը չսկսիր երբ մէկը ինքզինք օտար կնոջ մը հետ անկողինին մէջ կը գտնէ կամ կը բացայայտէ, որ նորէն ալքոլի կամ պոռնկագրութեան տենչը ունի: Ասիկա չսկսիր երբ ան իր սիրելիները եւ իր զաւակները կ'արհամարհէ, եւ այս շարքը կը շարունակուի: Ո՛չ, հաւատքի մէջ նահանջելը կը սկսի երբ կը նկատենք, որ Սուրբ Գիրքին եւ Աստուծոյ վերաբերող բաներուն հանդէպ անտարբեր ենք: Ասիկա կը պատահի երբ ւաւելի կը խանդավառուինք բնական բաներով, քան Աստուծոյ վերաբերող բաներով:

Անօթութիւնը ձեր հոգեւոր ջերմաչափն է: Ատոր մասին մտածեցէք բնականօրէն: Ինչն է առաջին բանը, որ կը հեռանայ երբ անձ մը կը հիւանդանայ: Պատասխանը՝ իր ախորժակն է: Եթէ երբեք հարբուիս եղած էք, պիտի յիշէք ... պարզապէս չէք ուզեր ուտել: Նայեցէք հիւանդներու, որոնք մահացու հիւանդութեան մը վերջին հանգրուանին մէջ կը գտնուին. անոնք կը հալին եւ իրենց կշիռքը կը հասնի երեսուներկու կամ երեսունվեց քիլոյի եւ ներերակային ներարկումով սնունդ կը ստանան: Հիւանդները ուտելու փափաք չեն ունենար: Լսած էք, որ կ'ըսեն. «Ան առողջ ախորժակ ունի»: Նոյնն է պարագան հոգեւոր առումով. հոգեւոր առողջութեան նշանը Աստուծոյ Խօսքին հանդէպ առողջ ախորժակ ունենալն է: Հոգեւոր հիւանդութեան նշաններէն մէկը Աստուծոյ վերաբերող բաներուն հանդէպ ախորժակը կորսնցնելն է:

Ես հանդիպած եմ ծառայողներու, որոնց համար ւաւելի

խանդավառիչ է խօսիլ իրենց շինարարական ծրագիրներուն, նոր ինքնաշարժին, մարզական խումբերու, եւայլնի մասին, քան թէ Աստուծոյ վերաբերող բաներու մասին: Անոնք այնպէս կը վարուին, որ կարծես Տիրոջ վերաբերող բաներուն կամ Տիրոջ քու սիրտիդ խօսած բաներուն վերաբերող խօսքերդ ապարդիւն բաներ են: Անոնք կը խանդավառուին երբ կը խօսին իրենց նոր շինած տունին մասին: Զիրենք կը դիտեմ պաշտամունքի ընթացքին. իրենց շուրջը կը դիտեն, կամ իրենց քարոզին նօթերը կը վերաքաղեն, փոխանակ իրենց ձեռքերը վեր բարձրացնեն եւ կեդրոնանան Անոր վրայ, որ շատ սիրելի պէտք է ըլլայ իրենց համար: Ասիկա աւելի խոր հարցի մը մէկ ախտանշանն է միայն:

Այսպիսի եկեղեցիներու մէջ ես նկատած եմ Աստուծոյ ներկայութեան պակասը: Երբ ապաշխարութեան կոչ կ'ուղղեմ եւ կը հրաւիրեմ, որ Աստուծոյ մօտենան, Սուրբ Հոգին կու գայ եւ իրենք կը զարմանան: Անոնք կամ կը յիշեն, որ ո՛ր ինկան կամ ալ կ'անտեսեն զանիկա, որպէս մեր ծառայութեան վերաբերող յատուկ պարգեւ մը: Ոմանք նոյնիսկ պատահած բաներուն դէմ կը դնեն: Ամենայն դէպս, եթէ ամենաչնչին փափաքը կայ իրենց մէջ, Աստուծոյ ներկայութիւնը դարձեալ պիտի արթնցնէ իրենց քաղցը:

Եսային մեզի կ'ըսէ. «[...] Պլպլած պատրոյգը պիտի չմարէ [...]» (Եսայի 42.3): Այս նախադասութիւնը բառացիօրէն կը վերաբերի լապտերի մը մարող պատրոյգին, երբ իւրը գրեթէ սպառած է, բոցը վերածուած է տկար, մարող ծուխի մը: Ան կը մատնանշէ այն, ինչ որ տկար, փոքր, բարակ, թոյլ եւ դիւրաբեկ է: Ան պիտի չմարէ մարող պատրոյգը, այլ հովահարելով պիտի բոցավառէ զայն: Յիշեցնեմ, Ան շարունակ կը հետապնդէ մեզ նոյնիսկ երբ պլպլած պատրոյգ մըն ենք: Ինչքան աւելի լաւ պիտի ըլլայ եթէ մենք համագործակցինք եւ ընդառաջենք, քանի որ Ան Իր անձը պիտի չպարտադրէ մեր վրայ:

Շատ յաճախ կը տեսնեմ ատիկա: Տեսած եմ, որ ինչպէս Տէրը հովահարելով վերստին կը բոցավառէ այն կրակը, որ շատերու մէջ մարելու վրայ էր: Եկեղեցիներու մէջ եւ խորհրդաժողովներու ընթացքին յաճախ ինձի կ'ըսեն, որ չէին անդրադարձած, որ որքան ինկած են մինչեւ կրակին

վերարձարծուիլը եւ զինք փնտռելու իրենց փափաքին բռնկիլը: Անոնք կ'անդրադառնան, որ իրենց սիրտերը պահպանած չէին եւ կորսնցուցած են այն ախորժակը, որ առողջ սիրտը կ'ունենայ:

## ԱՄԷՆԷՆ ԹԱՆԿԱԳԻՆ ԲԱՆԵՐԸ ՊԱՀԷ

Աստուածաշունչը մեզի կ'ըսէ. «Ամէն զգուշութիւնով քու սիրտդ պահէ [...]» (Առակաց 4.23, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Այ.Վի.» տարբերակէն): Չկայ ասելի կարեւոր բան, զոր կրնանք պահել, անոր վրայ հսկել կամ պաշտպանել: Երբ այս խօսքերուն վրայ կը մտածեմ, միտքս կու գայ, որ մարդիկ ինչպէս արժէքաւոր բաները կը պաշտպանեն: Մենք բոլորս տեսած ենք ցուցադրուած թանկարժէք քարեր, որոնք չկոտրուող ապակիի տակ կը պահուին: Անոնք կը գտնուին վերահսկուած միջավայրի մը մէջ, որ զգայուն է որեւէ ծանրութեան կամ ջերմաստիճանի փոփոխութեան, ուր ամենափոքր խախտումը պատճառ կ'ըլլայ, որ ահազանգը հնչէ եւ դռները փակուին: Ելեկտրական աչքի ճառագայթներ կան, որ եթէ կոտրուին, անմիջապէս կ'ազդարարեն զինուած մարդիկը, որ ներխուժեն: Անոնք պահակներու կը վճարեն, որ օրական քսանչորս ժամ այդ առարկաներուն վրայ հսկեն: Հազարաւոր տոլարներ կը ծախսուին՝ քահր մը պահելու եւ պաշտպանելու համար:

Աստուած մեզի կ'ըսէ, որ երկրի վրայ ամէնէն արժէքաւոր ստացուածքը մեր սիրտերն են, եւ ոչ թէ քարերը: Բայց եւ այնպէս հաւատացեալները իրենց սիրտերը կը յանձնեն բաներու, որոնք ոչ միայն օգտակար չեն, այլ՝ կը վնասեն մեզի: Մենք կը դիտենք եւ կը կարդանք գրեթէ ամէն բան այնքան ատեն, որ անոնք չեն պարունակեր ասելորդ մերկութիւն կամ հայիոյանք: Չենք անդրադառնար, որ աշխարհի մէջ գտնուող հոգին թշնամի է Աստուծոյ Հոգիին: Սակայն այս բանին մէջ աշխարհին պատկանողները շատ ասելի իմաստուն են, քանի որ անոնք փութաջանութեամբ կը պահեն այն, ինչ որ ամէնէն շատ կ'արժեւորեն. մինչ հաւատացեալները անհոգութեամբ կ'ապրին իրենց կեանքը

եւ իրենց սիրտերը չեն պահպաներ ցանկութիւններէ եւ փափաքներէ, որոնք կը գողնան իրենց անօթութիւնը այն Միակ Անձէն, որ իսկապէս կրնայ յագեցնել:

Տէրը «[...] ծարաւցած հոգին կը յագեցնէ ու անօթեցածը բարութիւնով կը լեցնէ» (Սաղմոս 107.9): Ան կը սպասէ, որ յագեցնէ մեզ, բայց Իր բարութիւնը պիտի չյագեցնէ մեզ եթէ արդէն իսկ ուրիշ բաներով լեցուած ենք: Եկէ՛ք մեր սիրտերը անօթի պահենք եւ մեզի ուղղած կոչը թերթեի չառնենք: Որովհետեւ եթէ մենք Իրեն մօտենանք, Ան խոստացած է մեզի մօտենալ:

### ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

1. Առակաց 27.7-ը կ'ըսէ. «Կուշտ մարդը խորիսխը կ'արհամարհէ [...]: Երբ այս համարին վրայ կը մտածէք, ինչ են այն հոգերը, փափաքները եւ հաճոյքները, որոնց նկատմամբ ամէնէն աւելի խոցելի էք: Ինչպէս կրնան անոնք բթացնել ձեր անօթութիւնը Աստուծոյ հետ ընկերութեան «անուշ խորիսխ»-ին հանդէպ:
2. Այս գլուխին մէջ հեղինակը կը խօսի երկու տարբեր եկեղեցական միջավայրներու մէջ գտնուող քսան տարեկանէն վեր եւ քսան տարեկանէն վար եղող երիտասարդներու Աստուծոյ հանդէպ ունեցած բուռն փափաքին՝ անօթութեան մասին: Երբ կը նայիս քու եկեղեցիիդ կեանքին, ինչպէս կը բնութագրես (նկարագրես) քու հոգեւոր ընտանիքիդ ախորժակը՝ յագեցած, անօթի՞ թէ՛ անտարբեր:
3. Առակաց 4.23-ին մէջ գրուած զգուշացումին լոյսին տակ՝ «Ամէն զգուշութիւնով քու սիրտդ պահէ [...]», ինչ քայլեր կրնաս առնել այսօր՝ քու սիրտդ պաշտպանելու համար: Արդեօք հոգեւոր «վնասակար կերակուր» կայ քու սննդականոնիդ մէջ, որ պէտք է վերցնես կամ փոխարինես:

# ԲՈՒՌՆ ՓԱՓԱՔ՝ ԻՐ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ



Խօսուած Խօսքը կը լսուի երբ մենք Անոր  
ներկայութեան մէջ ենք:

Ծառայութեանս վերջին քսան տարիներուն ընթացքին ես ճամբորդած եմ բոլոր ցամաքամասերը, բացի Անթարքթիքայէն, սորվեցնելով Աստուծոյ Խօսքը թէ՛ եկեղեցիներու մէջ եւ թէ՛ խորհրդաժողովներու ընթացքին: Ես առանձնաշնորհումը ունեցած եմ եօթը տարի աշխատելու երկու եկեղեցիներու անձնակազմերու հետ, նախքան լման ժամանակով ճամբորդելս: Այս ընթացքին ես յայտնաբերած եմ, որ եկեղեցիին մէջ կան երկու գլխաւոր խումբեր, եւ անոնց տարբեր միտքերուն միջեւ գտնուող բացը երթալէն կը մեծնայ մինչ Տիրոջ գալուստը կը մօտենայ: Առաջինը անոնք են, որոնք զԱստուած կը փնտռեն Իր գործերուն համար. մինչ երկրորդը անոնք են, որոնք զԻնք կը փնտռեն՝ Իր ինքնութեան համար:

## ԻՍՐԱՅԷԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԸ

Այս հակադրությունը կը տեսնենք Մովսէսի եւ Իսրայէլի որդիներուն հետ: Եկէք աւելի խորապէս ուսումնասիրենք ասիկա: Իսրայէլ բուն կերպով կը փափաքէր ազատիլ հարստահարութենէն (ճնշումէն) եւ Աստուծոյ աղաղակեց՝ զԱյն ճանչնալով որպէս իր ազատարարը: Աբրահամի այս սերունդները կարելի է բաղդատել այն խումբին հետ, որ զինք կը փնտռէր՝ Իր գործերուն համար: Եկեղեցիին մէջ կան մարդիկ, որոնք չեն ուզեր այն կապանքը, որ կ'ընկերանայ աշխարհի համակարգին. բայց տակաւին անոնք անգիտակցաբար գերի են: Անոնք կը դաւանին եւ կը ճանչնան Յիսուսը՝ իբրեւ Տէր եւ Անոր կը նային՝ ազատագրութեան եւ մատակարարման համար: Բայց եւ այնպէս, ինչպէս Իսրայէլի որդիներուն հետ, անոնց սիրտը կը յայտնուի իրենց ցանկութիւններուն, գործերուն, խօսքերուն եւ աշխարհասիրութեան մէջ:

Իսրայէլ հարիւրաւոր տարիներ լացաւ Աստուծոյ փրկութեան համար: Յետոյ Աստուած Մովսէսին երեւցաւ եւ ըսաւ, որ ժամանակը հասած է եւ խոստացաւ, որ պիտի կատարէ ատիկա: Նախքան Փարաունին քով երթալը, Մովսէս հանդիպեցաւ Իսրայէլի երէցներուն հետ եւ յայտարարեց Աստուծոյ ազատագրման խոստումը: Երբ բարի լուրը լսեցին, «ժողովուրդը հաւատաց, որ Տէրը ղրկած է Մովսէսն ու Ահարոնը: Եւ երբ անոնք անդադարձան, որ Տէրը իրենց քաջած նեղութիւններուն նայած է, խոնարհեցան ու երկրպագութիւն ըրին» (Ելք 4.31, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն):

Պատկերացուցէք այդ հաւաքոյթին մէջ տիրող ապրումը: Այդ ղեկավարները իրենց ամբողջ կեանքին ընթացքին լսած էին Աստուծոյ գալիք փրկիչին մասին: Ազատութեան եւ կաթ ու մեղր բխեցնող երկիրի մը համար խոստացուած յոյսը հայրերէն եւ մեծ հայրերէն փոխանցուած էր իրենց: Անոնք տեսան, թէ ինչպէս իրենց մեծերը ապրեցան եւ մեռան եւ երբեք չտեսան այդ խոստումին կատարումը: Այս ղեկավարները կը պայքարէին նոյն հարցումին հետ. «Արդեօք մեր կեանքին ընթացքին պիտի տեսնենք ատիկա կամ պիտի

մեռնինք նախքան խոստումին կատարուիլը: Հիմա իրենց միջեւ կը գտնուէր Եգիպտոսի նախկին իշխաններէն մէկը, մարգուած ղեկավար մը, որ հրաշքով կը հաստատէ, թէ Աստուծոյ ձեռքը իր վրայ է: Այն անձը, որ իրենց վրայ պիտի իշխէր, հիմա իրենց փրկիչը պիտի ըլլայ: Միայն Աստուած կրնայ այսպիսի հրաշք մը ընել: Իրենց սիրտերէն երկիւղ եւ ուրախութիւն կը բխէր: Միակ բանը, որ կրնային ընել, պաշտամունքով եւ շնորհակալութեամբ Աստուծոյ գոհութիւն մատուցանելն էր:

Մովսէս կը ձգէ զիրենք եւ կ'երթայ Փարաւոնին հանդիպելու: Բայց Եգիպտոսի ղեկավարը Աստուծոյ ազատագրութեան լուրով բնաւ չի տպաւորուիր: Ան կը հանդիմանէ Մովսէսը եւ Աբրահամին սերունդները եւ անոնց դժուարութիւնները կ'աւելցնէ դաժան աշխատանքային բեռերով, որոնց գրեթէ անկարելի էր տոկալ: Ինչպէս ամէն բան կը սկսի շատ արագ փոխուիլ: Նոյն այդ ղեկավարները Մովսէսի թշնամի կ'ըլլան եւ խստասրտութեամբ անոր դէմ կը տրտնջան: Այլեւս անոնք պաշտամունքի մասին չեն մտածեր. այնքան կը վհատին եւ կը յուսալքուին Մովսէսէն, որ Աստուծոյ դատաստանը կը հռչակեն իր վրայ (Տէս Ելք 5.21):

Ատով հանդերձ, ժամանակի ընթացքին Աստուած Իր ողորմութեամբ կ'ազատագրէ զիրենք բազմաթիւ նշաններով եւ հրաշքներով: Երբ վերջապէս Փարաւոնը հրաման կու տայ, դարձեալ կեցուածքի մեծ փոփոխութիւն տեղի կ'ունենայ: Անոնք ուրախութեամբ կը լեցուին եւ դուրս կու գան մեծ փառքով եւ օրհնութեամբ: Պատկերացուցէք ազատ արծակուելու մթնոլորտը մինչ անոնք պարելով Եգիպտոսէն դուրս կ'ելլէին՝ Աստուծոյ բարութիւնն ու հաւատարմութիւնը վայելելով: Անոնք ոչ միայն ազատ են, այլ ոսկիի եւ արծաթի առատ գանձերով ողողուած են, ինչպէս նաեւ առողջութիւն եւ շնորհք ստացան երբ Զատկուայ գառնուկը կերան: Այս նախկին ստրուկները ոչ միայն Աստուծոյ երախտապարտ էին, այլեւ Մովսէսի հանդէպ իրենց վստահութեան մակարդակը բոլոր ժամանակներէն աւելի բարձր էր:

Եգիպտոսէն դուրս գալէ ետք Աստուած Մովսէսին կը հրամայէ, որ զիրենք դէպի Կարմիր Ծովուն ափը տանի. անոնք ետեւ կը նային եւ կը տեսնեն, որ Փարաւոնը իր

գորքերով իրենց ետեւէն կու գայ: Կեցուածքի ուրիշ մեծ փոփոխութիւն մը տեղի կ'ունենայ: Անոնք դարձեալ դառնութեամբ կը տրտնջան եւ Մովսէսի դէմ կը բողոքեն. «Եգիպտոսի մէջ գերեզմաններ չըլլալին համար մեզ անապատին մէջ մեռնելու բերիր. ինչ է այս մեզի ըրածդ, որ մեզ Եգիպտոսէն հանեցիր: Այս չէր այն խօսքը, որ քեզի ըսինք Եգիպտոսի մէջ՝ 'Թող տուր մեզի, որ Եգիպտացիներու ծառայութիւն ընենք. քանզի *ււելի աղէկ է մեզի* անապատին մէջ մեռնիլ'» (Ելք 14.11-12, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Եգիպտոսի մէջ երբ ամէն բան լաւ չէր ընթանար, անոնք Մովսէսին ըսին, որ առանձին ձգէ զիրենք. հիմա անոնք դարձեալ դժգոհ են իրենց անկարող ղեկավարէն եւ նորէն կը բողոքեն: Անոնք կը կարծէին, թէ Մովսէսի եւ Ահարոնի դէմ կը տրտնջան, բայց Մովսէս անոնց ըսաւ. «[...] Ձեր տրտունջը մեզի դէմ չէ, հապա Տէրոջը դէմ» (Ելք 16.8): Իրենց շահերը փնտռելու իրենց փափաքը գերազանցեց Աստուծոյ կամքը կատարելու փափաքը: Նկատի առէք այս բառերը. «[...] *Սւելի աղէկ է մեզի* [...]»: Անոնք չունէին Աստուծոյ համար վառող սիրտ մը, այլ իրենց սեփական կեանքերուն հանդէպ իրենց ունեցած սիրով կլանուած էին:

Անգամ մը եւս Աստուած կ'ողորմի, քանի որ Ան կը ճեղքէ Կարմիր Ծովը եւ ծովուն մէջէն ցամաքով կ'անցնէ գանոնք: Յետոյ մէկ հարուածով Աստուած կը թաղէ աշխարհի ամենահզօր բանակը եւ Իսրայէլացիները չորս հարիւր տարիէ ճնշողները: Հիմա անոնք կայտան եւ կենսունակ են: Անոնք Տիրոջ առջեւ կը ցնծան եւ կը պարեն: Կը կարդանք. «Ահարոնին քոյրը՝ Մարիամ մարգարէուհին՝ թմբուկը իր ձեռքը առաւ ու բոլոր կիները թմբուկներով ու պարելով անոր ետեւէն ելան» (Ելք 15.20): Կրնա՞ք պատկերացնել ութ հարիւր հազարէն մինչեւ մէկ միլիոն կիներ կը պարեն եւ թմբուկ կը նուագեն: Ուա՜ր, ինչ հոյակապ փառաբանութեան ծառայութիւն: Անոնք երբեք այսպիսի ուրախութիւն չեն ունեցած: Բայց ասիկա կարճ տեւեց երբ միայն երեք օր ետք ջուրը պակսեցաւ: Դարձեալ անոնք դառնօրէն տրտնջացին եւ դարձեալ Աստուած հայթայթեց:

Քանի մը օր եւս կ'անցնի եւ հիմա հարցը կերակուրն է: Անոնք կը ճչան. «[Օ՛], Երանի՛ թէ Տէրոջը ձեռքով մեռած ըլլայինք



Եգիպտոսի մէջ, երբ մսի կայթասներուն քովը նստած էինք ու կուշտ հաց կ'ուտէինք. քանզի մեզ այս անապատը հանեցիք, որ բոլոր այս ժողովուրդը անօթութենէ մեռցնէք» (Ելք 16.3):

Կը տեսնէք ինչպէս իրենց վարուելակերպը կը կրկնուի: Անոնք ուրախ եւ շնորհակալ են այնքան ատեն որ Աստուած կ'ընէ ինչ որ կ'ուզեն, երբ որ կ'ուզեն եւ դժգոհ են երբ Աստուած չ'ըներ ինչ որ կ'ուզեն, երբ որ կ'ուզեն: Անոնց հիմնական շարժառիթը կը տեսնուի իրենց վարուելակերպին եւ խօսքերուն մէջ երբ ճնշումի տակ են. ամէն բան իրենց մասին է: Անոնք իրենց փափաքները Անոր սիրտէն կամ ներկայութենէն վեր կը դասեն:

### ՄՈՎՍԷՍԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՐԺԱՌԻԹԸ

Այս շրջանը շարունակ կը կրկնուի մինչեւ որ նոյնիսկ Աստուած կը զգուի անկէ: Ան Մովսէսին կ'ըսէ.

«Ելի՛ր դուն ու ժողովուրդն ալ, որ Եգիպտոսի երկրէն հանեցիր ու գնա՛ այն երկիրը, որուն համար երդում ըրի Աբրահամին, Իսահակին ու Յակոբին՝ ըսելով. ‘Քու սերունդիդ պիտի տամ զայն’: քու առջեւէդ հրեշտակ մը պիտի ղրկեմ ու Քանանացին, Ամօրիացին, Քետացին, Փերեզացին, Խեւացին ու Յերուսացին պիտի վռնտեմ: Կաթ ու մեղր բոխող երկիրը պիտի ելլես. բայց ես ձեզի հետ պիտի չելլեմ, քանզի դուն խստապարանոց ժողովուրդ մըն ես. չըլլայ որ քեզ ճամբուն մէջ բնաջինջ ընեմ» (Ելք 33.1-3, անգլերէն Աստուածաշունչի «Էն. Էլ.Թի.» տարբերակէն):

Աստուած Մովսէսին կ'ըսէ, որ կրնայ այդ ժողովուրդը տանիլ խոստացուած երկիրը, որուն համար երկար ժամանակ սպասեցին, եւ Ան նոյնիսկ ընտիր հրեշտակ մը ալ կը ղրկէ իրենց հետ՝ իրենց թշնամիները վռնտելու եւ երկիրը ապահով դարձնելու համար. սակայն Ինք (Իր ներկայութիւնը) իրենց հետ պիտի չերթայ:

Լաւ է, որ Աստուած այս բանը Մովսէսին ըսաւ, քանի որ եթէ Ան այս առաջարկը Իսրայէլի որդիներուն ընէր, անոնք ուրախութեամբ այդ առաջարկը պիտի ընդունէին, խնճոյք մը

պիտի ընէին, պիտի հաւաքուէին եւ երթային: Ինչո՞ւ այսպէս կը կարծեմ: Մտածեցէք այդ մասին՝ եթէ անոնք կ'ուզէին Եգիպտոս վերադառնալ առանց հրեշտակի կամ Աստուծոյ, պարզապէս անապատին անհանգստութիւններէն փախչելու համար, վստահ եմ, որ անոնք խոստացուած երկիրը պիտի առնէին հրեշտակի մը հետ: Սակայն լսեցէք Մովսէսի պատասխանը Աստուծոյ առաջարկին.

«Եթէ քու ներկայութիւնդ *մեզի հետ* չերթայ, մեզ այս տեղէն մի՛ հաներ» (Ելք 33.15):

Պէտք է մենք մեզի յիշեցնենք, որ ի՞նչ էր «այս տեղը»: Ատիկա անապատն էր. դժուարութեան վայրը. երկիր մը, որ զուրկ է հանգիստէ կամ հաճոյքէ: Չկար առատութիւն, միայն ամէնօրեայ կարիքները կը հոգացուէին, եւ նոյնիսկ ատիկա յաճախ գերբնական կերպով կը կատարուէր: Չկային պարտէզներ, բնական աղբիւրներ, կամ ապահովութիւն այդ երկիրին մէջ: Չկային տուններ, գետեր, այգիներ, դաշտեր կամ պտղատու ծառեր, որոնցմէ կրնային ուտել: Չկար գնում, կազդուրում կամ զբաղում: (Բացի եթէ հաճոյքով կը դիտէք, թէ ինչպէս ձեր սիրելիները օձերէն կը խայթուին): Դուք շրջապատուած էք ոչ հետաքրքրական եւ միօրինակ բաներով: Գեղեցիկ բան չկար այդ տեղին մէջ, սակայն Մովսէս կը յայտարարէ. «Ես կը նախընտրեմ Քու ներկայութիւնդ անփափաքելի եւ անհանգիստ տեղին մէջ, քան առատութեան եւ գեղեցկութեան երկիր մը, որ Քու ներկայութենէդ զրուկ է»:

Ինչ էր իր սիրտին աղաղակը: Աստուծոյ ներկայութիւնը: Ան Ինքնին Տիրոջ կը ցանկար աւելի քան Անոր խոստացած օրհնութիւններուն: Ան Աստուծոյ հետ մտերմութիւնը աւելի բարձր գնահատեց, քան որեւէ գանձ, որ Աստուած կրնար տալ: Ասիկա Մովսէսը զատեց Իսրայէլի որդիներէն: Անոնք զԱստուած կը փնտռէին՝ Իր ըրածներուն համար, մինչ Մովսէսը Աստուծոյ Անձը կը փնտռէր: Նոյնիսկ այսօր այս մղող շարժառիթը հաւատացեալները կը բաժնէ երկու խումբերու: Այս բաժանումը յարանուանութեան սահմաններէն անդին կ'երթայ: Կան մարդիկ, որոնք չեն գիտեր, որ

կրնան զԱստուած փնտոել ոչ միայն Իր պաշտպանութեան, մատակարարումին եւ պաշտօնի բարձրացումին համար, այլեւ կրնան զԻնք ընդունիլ Իր ինքնութեան համար եւ զԻնք մտերմօրէն ճանչնալ: Որքան տարբեր է ասիկա այն կնոջմէն, որ դրամի համար կ'ամուսնանայ: Ան իր ամուսինին հետ չ'ամուսնանար անոր անձին համար, այլ իրեն համար անոր ընելիքներուն համար: Այս կարգադրութեան մէջ երկուքն ալ կը կորսնցնեն, որովհետեւ մտերմութիւնը չի կրնար ծաղկիլ այսպիսի շարժառիթի մը հողին մէջ:

### ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ես այցելած եմ աշխարհի ամենագեղեցիկ վայրերը եւ տեսած եմ անհամեմատելի գեղեցկութեամբ տուներ եւ շէնքեր, որոնք ոչ մէկ նշանակութիւն չունին ինծի համար, որովհետեւ Աստուծոյ ներկայութենէն զուրկ են: Նաեւ գտնուած եմ տհաճ վայրերու մէջ ինչպէս՝ բանտեր, երրորդ աշխարհի երկիրներ, եւ տուներ, որոնք թէեւ շատ հաճելի չեն, բայց Աստուծոյ ներկայութեամբ լեցուն են: Կրնամ անկեղծօրէն ըսել, որ կը նախընտրեմ այդ դժուար, անհանգիստ տեղերուն մէջ ըլլալ, ուր Աստուծոյ Հոգին կը բնակի, քան թէ գանձերով լեցուն դղեակներու մէջ, որոնք Իր ներկայութենէն զուրկ են:

Ես առանձնաշնորհումը ունեցած եմ թենիս խաղալու «Էն. Սի.Էյ.Էյ.»-ին կազմակերպած խաղերուն, «Եու.Էս.Թի.Էյ.»-ին մրցումներուն, եւ կրտսերներու «Տէյվիս Քափ»-ի խաղերուն մէջ եւ մեր նահանգին ակոյանը եղած եմ: Շահած եմ ուսումնական մրցանակներ եւ ընկերութեան մէջ փայլած եմ եւ իմ հաւասարներուս, առաջնորդներուս եւ առեւտուրի ղեկավարներու կողմէ յարգուած եմ: Ես դուրս կ'ելլէի գեղեցիկ եւ ժողովրդականութիւն վայելող աղջիկներու հետ: Այս բոլորը կը ներկայացնեն բաներ, զորս շատեր ոչ միայն կը փափաքին, այլ ամբողջ սիրտով կը հետապնդեն: Իրականութեան մէջ այս բոլորին բերած փառքը եւ հաճոյքը երբեք չի բաղդատուիր միայն երեսուն երկվայրկեան Աստուծոյ ներկայութեան մէջ անցընելու հետ: Անկարելի է բաղդատել: Լսեցէք, Սուրբ Գիրքը ինչպէս կը նկարագրէ Մովսէսը.

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

«Հաւատքով էր որ Մովսէս երբ մեծցաւ՝ մերժեց փարաւոնին աղջկան զաւակը կոչուիլ: Նախընտրեց Աստուծոյ ժողովուրդին հետ չարչարուիլ, քան՝ կարճ ժամանակի մը համար մեղքերու հաճոյքը վայելել: Եգիպտոսի գանձերէն շատ աւելի մեծ հարստութիւն նկատեց՝ Քրիստոսի կրած նախատինքները կրել, որովհետեւ աչքերը յառած էր Աստուծոյ վարձատրութեան» (Եբրայեցիներուն 11.24-26):

Նկատի առէք, ան նախընտրեց չարչարուիլ: Իր վիճակը տարբեր էր Իսրայելի որդիներէն. անոնք ընտրութիւն չունէին: Ատով հանդերձ, անոնք տրտնջացին եւ ինք չտրտնջաց: Ան իր ազատ կամքով իր ետին ձգեց լաւագոյն բաները, զորս աշխարհը կրնայ առաջարկել, ինչպէս նաեւ ամենաբարձր դիրքը, որուն մարդ կարող է հասնիլ: Ինչո՞ւ: Ան ուրիշ վարձատրութիւն մը կը փնտռէր: Անոր վարձատրութիւնը խոստացուած երկիրը չէր, այլ Անոր ներկայութեան խոստումը: Մորենիին քով միայն մէկ հանդիպումէ ետք, միակ բանը, որ ան կ'ուզէր այդ պահէն ետք, զԱստուած մտերմօրէն ճանչնալն էր:

Ես հազարաւոր մարդոց քարոզած եմ խոհրդաժողովներու ընթացքին եւ եկեղեցիներու մէջ. ծառայած եմ միլիոնաւորներու հեռատեսիլի եւ գիրքերու միջոցով: Աստուած մեզ օրինած է այնպիսի ձեւերով, որոնք մեր վրայ մեծ ազդեցութիւն ձգած են: Սակայն եթէ ընտրութիւնը ունենայի, առանց վարանելու ես այդ երեւութեական յաջողութիւնը, որ Ան մեզի տուած էր, կը փոխանակէի Իր բացայայտ ներկայութեամբ: Անոր նմանը չկայ: Անոր մօտիկութիւնը զգալը եւ Անոր ձայնը լսելը, որ սիրտիս կը փսփսայ բաներ, զորս երբեք չեմ իմացած, շատ աւելի հիանալի է, քան բազմութիւններու քարոզելը եւ միլիոնաւոր գիրքեր ծախելը: Անոր ներկայութեան փառքը շատ աւելի հիանալի է, քան որեւէ բան:

Սիրտս կը կոտրուի երբ կը տեսնեմ ծառայողներ, որոնք հետամուտ են յաջողութեան եւ կը հաւատան, որ ատոր մէջ պիտի գտնեն իրենց բաւարարութիւնը: Անոնց չարտասանուած նպատակը ուրիշներու կողմէ յարգուիլն

ու ճանչցուիլն է: Տեսած եմ մարդիկ, որոնք իրենց արժեքը եւ բաւարարութիւնը կը փնտռեն ծառայութեան մէջ իրենց արձանագրած իրագործումներուն մէջ, անոնք կ'իյնան յուսահատութեան եւ ի վերջոյ, խաւարին որոգայթներուն մէջ: Անոնք հսկայական առաքելութիւններ կը շինեն եւ վերջաւորութեան կ'իյնան անբարոյութեան կամ ազահութեան թակարդին մէջ, նախքան անդրադառնան, որ այդ բոլորը ինչքան դատարկ է:

Ես ականատես եղած եմ անելի մեծ թիւով մարդոց, որոնք երբեք ուրիշներու յաջողութեան չեն հասած, բայց նոյն ողբերգական վախճանը ունեցած են: Անոնք յուսալքուած են, քանի որ երբեք չեն կրցած երկու հարիւր, հինգ հարիւր, հազար, հինգ հազար անդամէ աւելի եկեղեցի մը կառուցել կամ ուրիշ թիրախ մը, որ իրենց սիրտերուն մէջ դրած են: Անոնց գիրքերուն վաճառքը երբեք իրենց ակնկալած նպատակին չէ հասած եւ անոնք չեն հրաւիրուած «մեծ» խորհրդաժողովներու, ուր կ'ուզէին խօսիլ: Անոնք բաւարարութիւն կը փնտռէին, հոն ուր չկար: Նոյնն է պարագան անոնց, որոնք աշխարհիկ շուկային մէջ դիրքի եւ իրագործումներու հետամուտ են: Այս հաւատացեալները կը փախցնեն կամ չեն տեսներ այն բանը, որուն համար իրապէս ստեղծուած են:

Ի հակադրութիւն, ես հանդիպած եմ մեծ առաքելութիւն ունեցող տղամարդոց կամ կիներու, որոնք յաջողութեան հասած են, բայց իրենց սիրտերը Աստուծոյ կը ցանկան: Անոնք բաժնեկցած են, թէ ինչպէս պատրաստ են ամէն բան ձգելու ուրախութեամբ եւ ուրիշ առաքելութեան մը մէջ ծառայելու կամ ուրիշ բան մը ընելու եթէ աստիկա Աստուծոյ փափաքը ըլլայ: Շատերը երբեք չեն ձգտած ըլլալ այն դիրքին մէջ, ուր ներկայիս կը գտնուին եւ որուն բռնուած չեն: Անոնք կը խոստովանին, որ գիտեն, թէ Աստուած զիրենք հոն դրած է եւ իրենց միակ փափաքը զԱստուած հաճեցնելն է: Ես իրենց սիրտին աղաղակը լսած եմ մեր զրոյցներուն մէջ եւ զայն տեսած եմ իրենց գործերուն մէջ. անոնք տարբեր չեն Դաւիթէն, որ մեծ յաջողութեան հասաւ, բայց ատով հանդերձ, ինքզինք աղքատ ու տնանկ կոչեց:

Նաեւ հանդիպած եմ մարդոց, որոնք յարաբերաբար աւելի

փոքր առաքելութիւն ունին, բայց անոնք խաղաղութեան եւ օրհնութեան մէջ կը քալեն, քանի որ իրենք կ'ընեն այն, ինչ որ կանչուած են ընելու: Անոնք թիւերու եւ արտաքին յաջողութեան բուռն փափաքը չունին, այլ՝ զԱստուած ատելի մտերմօրէն ճանչնալու եւ Անոր բացայայտ ներկայութեան մէջ քալելու: Ասիկա պէտք է ճիշդ ըլլայ բոլոր մարդոց համար: Մենք բոլորս ստեղծուած ենք Աստուծոյ համար, եւ մեզմէ ոչ ոք երբեք իրական բաւարարութիւն պիտի չգտնէ բացի զԱստուած ճանչնալով եւ Անոր ներկայութեան մէջ քալելով: Ասիկա այն տեղն է, ուր ճշմարիտ խաղաղութիւնը եւ բաւարարութիւնը կը գտնուին:

### ԱՍՏՈՒԾՈՅ ԵՐԿՈՒ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հիմա մենք պէտք է սահմանենք Աստուծոյ երկու ներկայութիւնները, զորս կը տեսնենք Սուրբ Գիրքին մէջ. առաջին՝ Իր *ամենուրեքութիւնը*: Դաւիթը այդ մասին կը խօսի երբ կը գրէ. «Ո՛ր երթամ քու Հոգիէդ եւ քու երեսէդ ո՛ր փախչիմ» (Սաղմոս 139.7): Ամենուրեքութիւնը կը խօսի Անոր ամէն տեղ գտնուելուն մասին: Դաւիթ կը շարունակէ ըսելով. «Եթէ երկինք ելլեմ, դուն հոն ես. եթէ դժոխքը անկողինս ընեմ, ահա դուն հոն ես [...] Եթէ ըսեմ. 'Իրացրնէ խաւարը զիս պիտի ծածկէ, այն ատեն գիշերն ալ լոյս կ'ըլլայ իմ բոլորտիքս': Մութն ալ քեզի խաւար չէ, հապա գիշերը ցորեկի պէս լուսաւոր կ'ըլլայ: Խաւարը եւ լոյսը միեւնոյն բանն են քու առջեւդ» (հմր 8, 11-12): Ասիկա կը խօսի մեզ երբեք չընելու Տիրոջ խոստումին մասին (Եբրայեցիներուն 13.5): Թէեւ մենք չենք զգար այս ներկայութիւնը, ատիկա չի ժխտեր Անոր հոն ըլլալը: Պարզապէս մենք անտեղեակ ենք ատկէ:

Երկրորդ ներկայութիւնը Սուրբ Գիրքը կը սահմանէ որպէս Անոր *բացայայտ ներկայութիւնը*: Անգլերէն «*մանիֆեսթ*» բառը (բացայայտել) կը նշանակէ անտեսանելին, չլուսածը կամ չյայտնուածը տեսանելի, լսելի կամ յայտնի դարձնել: Մովսէս Տիրոջ բացայայտ ներկայութեան բուռն փափաքը ունէր: Ասիկա այն ժամանակն է երբ Աստուած Ինքզինք կը յայտնէ ոչ միայն մեր հոգիին, հապա երբ մեր միտքը եւ զգայարաններն ալ տեղեակ կ'ըլլան Անոր մօտիկութիւնէն:

## ԲՈՒՌՆ ՓԱՓԱՔ՝ ԻՐ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ

Ատիկա այն ժամանակն է երբ Անոր գիտութիւնը կը յայտնուի մեր միտքերուն: Ասիկա այն ներկայութիւնն է, որուն մասին Յիսուս կը խօսի երբ կ'ըսէ.

«[...] Ես ալ պիտի սիրեմ զայն եւ ինքզինքս յայտնեմ անոր» (Յովհաննէս 14.21):

Սաղմոսողը անոր կ'ականարկէ յայտարարելով. «Երանի այն ժողովուրդին որ կը ճանչնայ ազդարարութեան փողերուն [ցնծութեան] ձայնը. ո՛վ Տէր, անոնք քու երեսիդ լոյսովը պիտի քալեն» (Սաղմոս 89.15): Պենտէկոստէի օրը Պետրոս անօթի հարցաքննողները յորդորեց. «[...] Ապաշխարեցէք ու դարձի՛ եկէք, որպէսզի մեղքերնիդ ջնջուի. որպէսզի սփոփանքի ժամանակները գան Տիրոջ *երեսէն [ներկայութենէն]* [...]» (Առաքեալներու Գործերը 3.19, 20, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Աստուած Իր ներկայութիւնը տարբեր ձեւերով կրնայ դրսեւորել: Սուրբ Գիրքին մէջ ոմանք զի՛նք տեսան, ուրիշներ Իր ձայնը լսեցին՝ առանց զի՛նք տեսնելու, իսկ ուրիշներ Իր մօտիկութիւնը զգացին եւ անմիջապէս գիտցան բաներ, զորս երբեք չէին գիտցած՝ Անոր յայտնութեան պատճառով: Բայց մէկ բան հաստատ է, երբ Ան գայ, պիտի գիտնաք, ձեր ներքին մարդը պիտի զգայ զի՛նք, եւ պիտի գիտնայ, որ Ան ներկայ է:

## ՏԷՐԸ ՓՆՏՈՒԵԼ ԹԷ՛ ԴՐՍԵԻՈՐՈՒՄՆԵՐԸ

Ես տեսած եմ մարդիկ, որոնք բուն ցանկութիւնը ունին Անոր ներկայութեան, կը մոլորին: Անոնք դրսեւորում մը կը փնտռեն, փոխանակ Տիրոջ անձը փնտռեն: Աստուած Եղիային քովէն անցաւ եւ քանի մը մեծ դրսեւորումներ եղան: Նախ մեծ ու սաստիկ հով մը ելաւ, բայց Տէրը այն հովին մէջ չէր: Հովին ետեւէն երկրաշարժ եղաւ, բայց Սուրբ Գիրքը յստակօրէն կ'ըսէ, որ Տէրը երկրաշարժին մէջ չէր: Յետոյ կրակ եղաւ, բայց Տէրը կրակին մէջ չէր: Կրակին ետեւէն մեղմ ու բարակ ձայն մը լսուեցաւ: Այն ատեն Եղիան գիտցաւ, որ ինք անձնապէս Աստուծոյ ներկայութեան հանդիպած էր:

Ես տեսած եմ ինչպէս մարդիկ դրսեւորումներ կը փնտռեն,

կարծելով, թե դրսեւորումներուն միջոցով զԱստուած պիտի գտնեն, փոխանակ իրենց սիրտին մէջ փնտռեն Տէրը եւ այդպիսով Անոր բացայայտ ներկայութիւնը զգան: Յաճախ Աստուծոյ շունչով լեցուն, սիրտը մեղադրող պատգամ մը քարոզելէս ետք մարդիկը առջեւ կը կանչեն՝ Աստուծոյ հետ հանդիպելու համար: Երբեմն կարգ մը մարդիկ այնպիսի ձեւով մը կ'աղօթեն, որ նեղացուցիչ կամ շեղիչ կ'ըլլայ եւ այդ պահուն եղած գործին հակառակ կ'ըլլայ: Ուրիշներ կը խնդան կամ կը դողան կամ ուրիշ տեսակի արտաքին շարժում մը կ'ընեն: Պատճառը այն է, որ առիթով մը անոնք զԱստուած փնտռած են եւ դողացած, լացած կամ խնդացած են Անոր ներկայութեան մէջ, ուստի հիմա ենթագիտակցաբար նոյն բաները կ'ընեն՝ յուսալով, որ զԱստուած պիտի գտնեն այդ դրսեւորումներուն մէջ, բայց Աստուած հոն չէ: Շատ անգամ ես կը հանդարտեցնեմ մարդիկը եւ իրենց կ'ըսեմ, որ բան մը չընեն, պարզապէս հանդարտ մնան եւ իրենց սիրտին մէջ Անոր դիմեն՝ Յիսուսի անձը փնտռելու համար: Եթէ դրսեւորում ըլլայ, շատ լաւ: Բայց մենք պէտք չէ զինք փնտռենք դրսեւորումներու միջոցով: Պէտք է Տիրոջ Անձը փնտռենք:

Կը յիշեմ Ասիոյ մէջ տեղի ունեցած հանդիպում մը, ուր շատեր ապաշխարութեան կոչին ընդառաջեցին: Զանոնք առջեւ բերելու տեղ չկար, քանի որ սրահին մէջ գտնուողներէն շատերը ընդառաջեցին, ուստի անոնց թելադրեցի, որ իրենց գտնուած տեղերուն մէջ աղօթեն եւ զինք փնտռեն: Աղօթքէն ետք զիրենք քաջալերեցի, որ իրենց կեցած տեղերէն Տիրոջ դիմեն: Աստուծոյ ներկայութիւնը հիանալի կերպով սրահէն ներս խուժեց: Հիանալի է տեսնել, որ ինչպէս Ան յանձն կ'առնէ եւ Ինքզինք կը դրսեւորէ: Ես բազմաթիւ անգամներ անոր փորձառութիւնը ունեցած եմ, բայց աստիկա երբեք հասարակ կամ սովորական չի դառնար: Յաճախ դուք անելի յստակօրէն կը զգաք զինք, քան ձեր շուրջը գտնուողները: Երբ Իր ներկայութիւնը եկաւ, քանի մը հոգի սկսաւ խնդալ, բայց ես տրտմութիւն մը զգացի, եւ աստիկա հաստատուեցաւ: Ան շատ անելի արագ հեռացաւ, քան իր գալուստը այդ շէնքէն ներս, թէեւ մարդիկ շարունակեցին խնդալ եւ պոռալ՝ կարծէք Ան տակաւին ներկայ էր:



Ես կեցուցի զիրենք եւ յանդիմանեցի՝ գիտնալով, որ անոնք պարզապէս կը նմանակէին այն, ինչ որ քանի մը ամիս առաջ պատահեր էր Անոր ներկայութեան մէջ՝ երբ աւետարանիչ մը այցելած էր իրենց երկիրը: Աւետարանիչին ծառայութիւնը կը կրէ շատ զօրաւոր դրսեւորում մը, որ շատեր կը կոչեն «սուրբ խնդուք»: Կը հաւատամ, որ կան ժամանակներ, երբ Աստուած կու գայ, որպէսզի մարդիկ խնդան: Իրականութեան մէջ ես անձամբ անոր փորձառութիւնը ունեցած եմ եւ ատիկա տեսած եմ մեր ծառայութիւններուն ընթացքին: Առիթով մը երբ Ինտոնիզիա էի, օր մը Աստուծոյ Հոգին իջաւ ծառայութեան վրայ եւ երկու ժամ իմ թարգմանիչս եւ ես դիտեցինք ինչպէս մարդիկ այնքան կը խնդան, որ գետնին վրայ կը տապալակէին: Սկիզբը սկսաւ հինգ կիներով, որոնք կու լային եւ վերածուեցաւ անգսպուելի խնդուքի մը, որ ամբողջ եկեղեցիին մէջ տարածուեցաւ: Անոնք երբեք այդպիսի բանի մը փորձառութիւնը չէին ունեցած: Անոնք զԱստուած կը փնտռէին:

Սակայն ասիկա տարբեր էր: Անոնք իրենց աչքերը յառած էին դրսեւորումին, եւ ոչ թէ Ինքնին Տիրոջ: Անոնք եկած էին այն եզրակացութեան, որ եթէ խնդուքի դրսեւորում չկար, ուրեմն Աստուծոյ ներկայութիւնը չէր դրսեւորուած: Ես յաճախ գտնուած եմ Աստուծոյ ներկայութեան մէջ եւ ուժեղ կերպով զգացած եմ Անոր ներկայութիւնը, բայց ոչ մէկ արտաքին դրսեւորում չեմ ունեցած: Ես Անոր ներկայութեան մէջ եղած եմ եւ անզուսպ կերպով լացած եմ, բայց անդրադարձած եմ, որ ատիկա պարզապէս զի՛նք փնտռելու եւ Անոր ներկայութեան գալու արդիւնքը եղած է:

Ատիկա յստակացնելու համար, եկէք առնենք տաքատ հագնելու այս պարզ օրինակը: Հապա եթէ տաքատը հագնելէս ետք ձեռքերս առջեւի գրպաններս դնեմ, որպէսզի զանոնք շտկեմ եւ հարիւր տողար մը գտնեմ: Ես տաքատը չհագայ դրամ ստանալու համար, հապա հագնելու ընթացքին դրամը գտայ: Ես կը փորձէի հագուստներս հագուիլ եւ այդ ընթացքին դրամը գտնելու օգուտը եւ անակնկալը ունեցայ: Մենք չենք փնտռեր դրսեւորումը, այլ՝ Տիրոջ անձը. եւ այդ ճամբով ինչ որ կու գայ օգուտ է:

Ասիոյ եկեղեցիին կեցուածքը սրբագրելէ ետք, անոնց

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

ըսի, որ կը հասկնամ Աստուծոյ ներկայութեան համար իրենց ունեցած անօթութիւնը եւ զգուշացուցի, որ Աստուծոյ Անձը չփոխարինեն փորձառութեամբ մը: Այս յորդորէն ետք Տիրոջ ներկայութիւնը վերադարձաւ սուրբ ահով մը: Այս անգամ շատեր կու լային, եւ ոչ թէ կը խնդային, բայց ի վերջոյ, մեզմէ անոնք, որոնք կը փնտռէին, Անոր հիանալի ներկայութենէն խորապէս յուզուեցան, անկախ անկէ, թէ կու լայինք, թէ ոչ:

### ԴՐԱԵՒՈՐՈՒՄՆԵՐԸ ՉԵՆ ԲԱՒԱՐԱՐԵՐ

Բնաւ մի՛ մոռնաք, մանանան երբեք չբաւարարեց Իսրայէլի որդիները: Աստուած անապատին մէջ մանանա տուաւ անոնց, որպէսզի անոնց ցոյց տայ, որ շատ աւելիին պէտք ունին՝ Իր ներկայութեան: Մովսէս ըսաւ.

«Ու յիշէ՛ այն ճամբան, որ քու Տէր Աստուածդ քառասուն տարի քեզ անապատին մէջ պտըտցուց, քեզ խոնարհեցնելու, փորձելու ու սրտիդ մէջինը իմանալու համար [...] Տէրը քեզ խոնարհեցուց, անօթեցուց եւ մանանայով կերակրեց [...] որ գիտնաս թէ մարդ միայն հացով չսպարի, հապա Տէրոջը բերնէն *ելած* ամէն խօսքովը կ'ապրի (Բ.Օրինաց 8.2-3, շէշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Ուշադրութեամբ քննեցէք անգլերէն «*փրոսիփոժ*» (proceeds «ելած») բառը: Ան չըսաւ՝ «*փրոսիփորդ*», այլ՝ «*փրոսիփոժ*». այս բայը ներկայ ժամանակով գործածուած է, եւ ոչ թէ անցեալ: Խօսուած Խօսքը կը լսենք երբ Անոր ներկայութեան մէջ ենք: Եղիան Աստուծոյ անցնող դրսետրումներուն չքոնուեցաւ, այլ նախքան պատասխանելը ան սպասեց Անոր ներկայութեան մեղմ ու բարակ ձայնին: Ասիոյ մէջ անոնք կապուած էին դրսետրումներուն, որոնց քովէն Աստուած նախապէս անցած էր, բայց Աստուած այլեւս հոն չէր, այդ տեղէն անցած էր: Ան նոր բանի մը անցած էր, մինչ անոնք ետեւ մնալով կը փորձէին զինք գտնել հոն, ուր Ան անցեալին եղած էր:

Ինչպէս մանանան երբեք չբաւարարեց (չյագեցուց) Իսրայէլի որդիները, նոյնպէս ալ դրսետրումները (մանանայի

## ԲՈՒՌՆ ՓԱՓԱՔ՝ ԻՐ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ

Նման դրսևորումները) երբեք նախատեսուած չեն մեր խոր փափաքները բաւարարելու. անոնք ինքնանպատակ չեն: Զանոնք հետապնդելը մեզ պիտի տանի դժգոհութեան ճամբուն մէջ, մինչեւ որ ետ դառնանք այն բաներէն, որոնք չեն կրնար մեզ բաւարարել եւ փնտռենք այն մտերմութիւնը, որ իրմէ կու գայ:

## ՄՏԱԻՈՐ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ ԲԱԻԱՐԱՐՈՒԻԼ

Ուրիշ տխուր բան մըն ալ տեղի կ'ունենայ երբ հաւատացեալները դրսևորումները աւելի վեր կը դասեն, քան Տիրոջ Անձը փնտռելը: Ատիկա ուրիշ շատ մարդիկ Աստուծոյ ճշմարիտ ներկայութեան ճամբէն կը շեղէ: Հիասթափուած դրսևորումներ փնտռողներուն անմիաբան (անհամաձայն) եւ անսովոր վարմունքէն, անոնք կը զգուշանան եւ կը բաւարարուին Աստուծոյ հետ մտաւոր յարաբերութեամբ մը: Ասիկա ողբերգական է երբ մենք շատ աւելիին համար ստեղծուած ենք: Էյ.Տապլետու. Թոզըրը կը գրէ՝ այս վերջին օրերուն հաւատքով արդարանալու վարդապետութիւնը.

... շատերու կողմէ կը մեկնաբանուի այնպիսի ձեւով մը, որ իրականութեան մէջ մարդոց կ'արգիլէ Աստուծոյ գիտութիւնը ունենալէն: Կրօնական դարձի ամբողջ գործողութիւնը դարձած է մեքենայական եւ անհոգի (անկենդան) ... Անձը «փրկուած» է, բայց ան անօթի կամ ծարաւ չէ Աստուծոյ: Իրականութեան մէջ յատկապէս անոր կը սորվեցնեն, որ բաւարարուած ըլլայ եւ կը քաջալերեն, որ քիչով գոհանայ: («Տը Փըրսուֆ աֆ Կար», էջ 12-13)

Աստուծոյ հետ մտաւոր յարաբերութիւնը մեքենայական եւ անհոգի է: Մենք ստեղծուած ենք Անոր հետ ապրելու իրականութեան մէջ, եւ ոչ թէ միայն տեսականօրէն: Մինչեւ որ ատոր լեցունութիւնը չապրինք, երբեք պէտք չէ բաւարարուինք: Յիսուս մեռա՛ մեզ Աստուծոյ ներկայութենէն բաժնող վարագոյրը վերցնելու համար: Այդ պատճառով, կը լսենք, որ սաղմոսողը կ'աղաղակէ.

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

«Ինչպէս սիրելի են քու [վրաններդ] բնակարաններդ, ո՛վ զօրաց Տէր: Իմ անձս կը փափաքի ու նաեւ կը մարի Տէրոջը սրահներուն համար: Իմ սիրտս ու մարմինս ցնծութեամբ կ'աղաղակեն կենդանի Աստուծոյն: Ճնճղուկն ալ տուն գտաւ ու ծիծեռնակը իրեն բոյն՝ իր ձագերը դնելու համար, քու սեղաններուդ քով, ո՛վ զօրաց Տէր, իմ Թագաւորս ու Աստուածս: Երանի՛ [երանելի, երջանիկ, բախտաւոր, նախանձելի են] անոնց որ քու տանդ [եւ քու ներկայութեանդ] մէջ կը բնակին: Անոնք անդադար քեզ պիտի օրհնեն: (Սէլա:» (Սաղմոս 84.1-4):

Աստուածաշունչի «Նիւ Քինկ Ճէյմզ» տարբերակը այս ձեւով կը պարզէ երկրորդ համարը. «Իմ սիրտս ու մարմինս կ'աղաղակեն կենդանի Աստուծոյն համար»: Գրողը յետոյ կը շարունակէ ըսելով թէ՛ ճնճղուկն ու ծիծեռնակը տուն գտած են, բայց ինք անօթեան է, քանի որ ան կը փափաքի Աստուծոյ բնակարանին: Ան կը յայտարարէ, որ ատիկա իր բաղձալի տունն է՝ հոն, ուր Աստուծոյ ներկայութիւնը կայ: Նկատի առէք, ան կ'ըսէ. «Երջանիկ, բախտաւոր, եւ նախանձելի են անոնք, որ Քու ներկայութեանդ մէջ կը բնակին»: Այս է զԱստուած սիրողներուն նպատակը: Անոնք քաղց ունին Անոր բացայայտ ներկայութեան: Որքան ատելի մօտ ըլլանք Անոր, այնքան ատելի կը զօրանայ այդ քաղցը, եւ մենք ատելի կ'ազդուինք:

## ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

1. Այս գլուխին սկիզբը հեղինակը կը գրէ. «Այս ընթացքին ես յայտնաբերած եմ, որ եկեղեցիին մէջ կան երկու գլխաւոր խումբեր ... Առաջինը անոնք են, որոնք զԱստուած կը փնտռեն՝ Իր գործերուն համար. մինչ երկրորդը անոնք են, որոնք զԻնք կը փնտռեն՝ Իր ինքնութեան համար»: Անկեղծ եղէք, դուք ձեզ ո՞ր խումբին մէջ կը տեսնէք:
2. Եգիպտոսի գերութենէն ազատելէ ետք իսրայելացիները յաճախ օր մը կը փառաբանէին եւ կը պաշտէին

## ԲՈՒՌՆ ՓԱՓԱՔ՝ ԻՐ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ

զԱստուած Իր մատակարարումին համար, եւ ուրիշ օր մը կը տրտնջային եւ կը բողոքէին, քանի որ Ան իրենց ուզածը չէր հայթայթած: Մինչ կը յիշէք ձեր կեանքին «անապատի փորձառութիւնները», ինչ վերաբերումի նմանութիւններ կը տեսնէք ձեր եւ Իսրայէլի որդիներուն միջեւ:

3. Թերեւս դուք այս գիրքը կը կարդաք, քանի որ ներկայիս «անապատի փորձառութենէ» մը կ'անցնիք: Եթէ այո, ինչ կրնաք սորվիլ Եղիային փորձառութենէն, որ ան ունեցաւ հովին, երկրաշարժին եւ կրակին դրսեւորումներուն հետ:



ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ՎԱՐԱԳՈՅՐԻՆ ԵՏԻՆ



«Աստուծոյ ներկայութիւնը երկրի երեսին վրայ եղած բոլոր ժողովուրդներէն կը զատէ մեզ»

**Տ**իրոջ ներկայութիւնը միշտ Անոր անծին մասին անելի մեծ յայտնութիւն կը բերէ, եւ իւրաքանչիւր հանդիպումի հետ մենք յաւիտեան կը փոխուինք: Աստուածաշունչը քննելով կը տեսնենք, որ անոնք որոնք Աստուծոյ ճամբաներուն մասին անելի մեծ հասկացողութիւն ունենալով կ'ապրին, այն մարդիկն են, որոնք Անոր ներկայութիւնը հետապնդած եւ ապրած են:

## ԲԱԺՆՈՂ ԱԶԴԱԿԸ

Վերջին գլուխին մէջ մենք տեսանք, որ Աստուած Մովսէսին առաջարկ մը ըրաւ, զոր ան մերժեց: Տէրը Իր խոստումները հասանելի դարձուց, բայց Իր ներկայութենէն զուրկ: Մովսէս շուտով պատասխանեց. «Եթէ քու ներկայութիւնդ մեզի հետ չերթայ, մեզ այս տեղէն մի' հաներ» (Ելք 33.15): Մովսէս սահմանեց այն նախընթացը, որ Աստուծոյ հետ

մօտիկութիւնը կը գերազանցէ այն խոստումները, որոնք Իր ներկայութենէն զուրկ են: Հիմա լսենք Մովսէսին հրեշտակ մը իբրեւ ուղեկից ունենալու գաղափարը մերժելուն ետին գտնուող տրամաբանութիւնը.

«Եթէ քու ներկայութիւնդ մեզի հետ չերթայ, մեզ այս տեղէն մի՛ հաներ: Քանզի ինչնկ պիտի գիտցուի, թէ ես ու քու ժողովուրդդ քու առջեւ շնորհք գտանք, եթէ ո՛չ՝ քու մեզի հետ երթալովդ: *Այսպէս ես ու քու ժողովուրդդ երկրի երեսին վրայ եղած բոլոր ժողովուրդներէն պիտի զապուինք*» (Ելք 33.15-16, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Հօր ճշմարտութիւն մը երեւան կու գայ իր պատասխանին մէջ. Աստուծոյ ներկայութիւնն է, որ մեզ կը զատէ երկրի երեսին վրայ եղած բոլոր միւս մարդոցմէն: Այնպէս չէ որ քանի որ մենք կը դաւանինք, որ քրիստոնեայ ենք, Աստուածաշունչին հաւատացող եկեղեցիներ կը յաճախենք կամ լաւ մարդիկ ենք, որոնք ժամանակին բարեկամի մը հետ ապաշխարութեան աղօթք ըրած են կամ ապաշխարութեան կոչի մը ընդառաջած են: Անոր ներկայութիւնն է, որ մեզ կը զատէ եւ սուրբ կը դարձնէ (Անոր նուիրուած, վերապահուած կամ յատկացուած): Անոր ներկայութիւնն է, որ ասիկա յայտնի կը դարձնէ երկրի վրայ ապրողներուն համար:

Ուրեմն ինչո՞ւ շատեր Աստուծոյ հետ մտաւոր յարաբերութեան մը յանձնուած են: Ինչո՞ւ բաւարարուած ենք Քրիստոսի ներկայութիւնը չունեցող քրիստոնէութեամբ: Ինչպէս սորվեցանք գոհ ըլլալ առանց մտերմութեան: Ինչո՞ւ քրիստոնէութիւնը սորվեցուցած ենք այնպիսի ձեւով մը, որ մարդոց մէջ Անոր մօտենալու եւ Անոր ներկայութեան մէջ բնակելու բուռն փափաքը չի կառուցեր: Ասոր ի պատասխան էլ.Տապլեու. Թօզըրը կը գրէ.

Աստուած կը կամենայ, որ մենք յառաջ երթանք՝ դէպի Իր ներկայութիւնը եւ մեր ամբողջ կեանքը հոն ապրինք: Ասիկա պէտք է փորձառաբար ճանչնանք: Ատիկա վարդապետութենէ մը աւելին է. ատիկա կեանք մըն է, որ պէտք է վայելել ամէն օր, ամէն վայրկեան: («Տը Փըրսութ աֆ Կապ», էջ 34)



Շատեր բաւարարուած են պատկանելիութեան մասին մտաւոր գիտութիւն ունենալով, առանց երբեւէ հետամուտ ըլլալու ներկայիս Անոր հետ կապակցութիւն ունենալու իրականութեան: Այնքան խորապէս արմատաւորուած է փրկութեան գաղափարը, որ քիչեր աւելի անդին կ'երթան: Անոնք աղօթած են եւ օր մը պիտի մեռնին եւ Անոր քով երթան: Սակայն Քրիստոսի իրականութիւնը վրիպած է, եւ մեզի հետ քալելու Աստուծոյ փափաքին մեծ յայտնութիւնը կորսուած է: Ատիկա մէկ անգամուայ կամ շատ հեռու փորձառութիւն մը չէ, այլ Անոր իրական փափաքը մնայուն հաղորդութիւնն է: Եկէք միասին կարդանք Սուրբ Գիրքը, որպէսզի քննենք:

### Ո՛Վ ԱՆՈՐ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆԸ ՈՒՆԵՑԱԻ

Մենք կը տեսնենք Անոր բացայայտ ներկայութիւնը հիսուած ամբողջ Աստուածաշունչին մէջ: Պարտէզին մէջ Ադամը եւ Եան Աստուծոյ հետ կը քալէին մինչեւ որ անհնազանդութեան պատճառով պահուրտեցան «Տէր Աստուծոյ ներկայութենէն» (Ծննդոց 3.8): Այդ պահուն մարդը ինքզինք բաժնեց Աստուծոյ ներկայութենէն: Անոնց որդին՝ Կայէնը, իր կարծրացած սիրտին պատճառով աւելի հեռացաւ Աստուծոյ ներկայութենէն:

Սակայն Աստուած ջանձնուեցաւ, եւ տակաւին կը փափաքէր մտերմութիւն ունենալ մարդուն հետ, զոր կը սիրէր: Ի վերջոյ, Ենովքի եւ Նոյի նման մարդիկ ընդառաջեցին եւ իրենց յարատեւ հետապնդումներով Աստուծոյ սիրտին դպան: Ատոր իբրեւ արդիւնք անոնք աւելի մօտէն քալեցին Աստուծոյ հետ, քան իրենց հազարամեակին պատկանող ռեւէ մարդ, Ադամին Եղեմի պարտէզէն հեռանալէն ետք:

Իր կեանքին ընթացքին Աբրահամ յաճախ Անոր բացայայտ ներկայութեան փորձառութիւնը ունեցաւ: Այսպիսի հանդիպում մը տեղի ունեցաւ երբ Աստուած եկաւ իրեն հետ Սոդոմի եւ Գոմորի ապագան քննարկելու: Երկու քաղաքներուն դատաստանէն ետք կը կարդանք. «Աբրահամ

առտուն կանուխ ելլելով՝ Տէրոջը առջեւ կայնաձ տեղը եկաւ» (Ծննդոց 19.27, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն): Ասիկա մէկն էր այն բազմաթիւ անգամներէն երբ Աբրահամ Աստուծոյ հետ ընկերութիւն կը վայելէր Անոր ներկայութեամբ: Իրականութեան մէջ իր ծեր տարիքին ան իր ծառային ըսաւ. «Տէրը, որուն առջեւ ես կը քալեմ, իր հրեշտակը քեզի հետ պիտի դրկէ ու քու ճամբադ պիտի յաջողցնէ [...]» (Ծննդոց 24.40, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի. տարբերակէն):

Մենք կը կարդանք, որ Սամուէլ «մեծցաւ ու Տէրը անոր հետ էր եւ անոր ըսած խօսքերէն մէկը գետին չձգեց» (Ա.Թագաւորաց 3.19): Ինչպէս կրնայ ըլլալ, որ այդ մարդուն ըսած խօսքերէն մէկը չձախողեցաւ: Պատասխանը այս համարին մէջ կը գտնենք. «Եւ Տէրը այցելութիւն ըրաւ Աննային, որ յղացաւ ու երեք տղայ ու երկու աղջիկ ծնաւ: Սամուէլ մանուկն ալ Տէրոջը առջեւ մեծցաւ» (Ա.Թագաւորաց 2.21): Դարձեալ կը տեսնենք, որ Տիրոջ ներկայութեան մէջ է, որ Իր ներկայութիւնը կը յայտնուի: Երբ կը ճանչնանք զինք, պիտի ըսենք այն, ինչ որ Ինք կ'ըսէ եւ մեր խօսքերը պիտի չձախողին:

Դաւիթը, որ կը սիրէր Աստուծոյ ներկայութիւնը եւ Հին Կտակարանին մէջ գտնուող իր նմաններուն չափ, թերեւս բացի Մովսէսէն, Անոր ներկայութիւնը կը վայելէր, աղաղակեց. «[...] Քու ծառայիդ Դաւիթին տունը քու առջեւդ հաստատ մնայ» (Բ.Թագաւորաց 7.26, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն): Մովսէսի նման, ան չէր ուզեր որեւէ կապ ունենալ յաջողութեան հետ Աստուծոյ ներկայութեան հաշտոյն: Իրականութեան մէջ հետագային, երբ ան պոռնկութեան եւ սպաննութեան ծանր մեղքը գործեց, իր բուն ապաշխարութեան աղաղակը եղաւ. «Չիս երեսէդ մի՛ ձգեր ու քու Սուրբ Հոգիդ ինձմէ մի՛ առներ» (Սաղմոս 51.11, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն): Ան գիտէր, որ առանց Աստուծոյ ներկայութեան կեանքը պարապ եւ անիմաստ պիտի ըլլար: Ան գրեց. «Կենաց ճամբան ինձի պիտի ցուցնես. երեսիդ առջեւ լեցուն ուրախութիւն կայ, քու աջ կողմդ միշտ հաճութիւններ կան» (Սաղմոս 16.11, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն):

Հոգեբանությունը մեզի կ'ըսէ, որ վերջին հինգ տարիներուն մեր ունեցած յարաբերությունները կը ձեւաւորեն մեր անհատականութիւնը: Չեմ կրնար ասոր հետ չհամաձայնիլ, քանի որ Սուրբ Գիրքը մեզի կ'ըսէ. «Ո՛չ, եղբայրներ. չխաբուիք: 'Չար ընկերը լաւ նկարագիրը կը խաթարէ'» (Ա.Կորնթացիներուն 15.33). դարձեալ. «Իմաստուններուն հետ քալողը իմաստուն կ'ըլլայ [...]» (Առակաց 13.20): Ինչ կրնաք ըսել Դաւիթին մասին: Ան անապատին մէջ մինակ էր երբ «Բոլոր նեղութեան մէջ եղող, պարտք ունեցող ու սիրտը վիրաւորուած մարդիկը անոր քով հաւաքուեցան եւ անիկա անոնց վրայ զօրագլուխ եղաւ ու անոր քով չորս հարիւրի չափ մարդ հաւաքուեցան» (Ա.Թագաւորաց 22.2): Ուահ, այս ինչ ամբոյս է, որ անոնց հետ աւելի քան տասը տարի անցընես: Նեղութեան մէջ եղող, սիրտը վիրաւորուած եւ պարտք ունեցող մարդիկ: Անոնք զայրացած են, լարուած եւ շատ հաւանական է, որ կոպիտ եւ անզգայ (անտարբեր) ըլլան: Արդեօք անոնք Դաւիթին անհատականութիւնը ձեւաւորեցին: Ո՛չ: Ինչո՞ւ: Որովհետեւ Դաւիթը շատ ժամանակ կ'անցընէր Աստուծոյ ներկայութեան մէջ, ան արքայաւայել կեցուածք պահեց եւ հետեւաբար զանոնք կերտեց եւ դարձուց համբաւաւոր մեծ ղեկավարներ բազմաթիւ սերունդներու վրայ:

Իմ նախասիրած համարներէս մէկը Դաւիթին պատասխանն է Աստուծոյ հիանալի հրաւերին: Ան կը գրէ.

«Իմ երեսս փնտռեցէք՝ ըսիր իմ սիրտս ալ քեզի ըսաւ.  
'Քու երեսդ պիտի փնտռեմ, ո՛վ Տէր'» (Սաղմոս 27.8):

Ասիկա էր իր կեանքը. Տիրոջ հետ այնքան ժամանակ կ'անցընէր, որ ան ոչ միայն չորս հարիւր նեղացած տղամարդոց վրայ ազդեցութիւն բերաւ, այլեւ ամբողջ ազգի մը վրայ ազդեցութիւն բերաւ: Ան ազդեցութիւն բերող էր, քանի որ ան ամբողջ իմաստութեան, գիտութեան եւ խոհեմութեան Աղբիւրին հետ ժամանակ կ'անցընէր: Սակայն Դաւիթը ատիկա չէր ըներ՝ Աստուծոյ իմաստութիւնը «ստանալու» համար. ան ճնշում բանեցնելով ներս կը մտնէր, քանի որ Անոր սիրտին կը ցանկար: Ան զիւնք

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

ուել անձէ կամ որեւէ բանէ աւելի կը սիրէր, եւ պատճառը այն է, որ Անոր հետ շատ ժամանակ անցուցած էր:

Երանի թէ Դաւիթին որդին՝ Սողոմոնը այս վառող փափաքը ժառանգած ըլլար: Ան երկու անգամ տեսաւ Իսրայէլի Աստուածը, եւ աւելի մեծ իմաստութիւն վայելեց, քան իրմէ առաջ կամ իրմէ ետք եկողները, բայց ան չըմբռնեց Անոր ներկայութեան մէջ բնակելու կարելորութիւնը: Իր կեանքին վերջաւորութեան, երբ իր տարիները անցուցած էր, ան գրեց Ժողովողի տխուր գիրքը: Թէեւ ան ունէր իմաստութիւն, անհաշիւ հարստութիւն, աշխարհի ամենագեղեցիկ կիները, ինչպէս նաեւ անոր համբաւն ու ազդեցութիւնը ամէն տեղ տարածուած էր, միակ բանը, որ կրցաւ ընել «Ունայնութիւն եւ ունայնութիւն» աղաղակելն էր: Եթէ իր հօրը՝ Դաւիթին սիրտը ունենար, Իսրայէլի պատմութիւնը շատ տարբեր պիտի ըլլար:

Իրականութեան մէջ Աստուածաշունչի պատմութեան մեծ մասը տարբեր պիտի ըլլար եթէ զանազան մարդիկ ճանչնային Աստուծոյ ներկայութիւնը հետապնդելու կարելորութիւնը: Դժբախտաբար մեծ թիւով մարդիկ որոշ չափով Անոր ներկայութեան փորձառութիւնը ունեցան, բայց ձեռով մը չհասկցան, թէ ինչ կը ճաշակեն: Անոնք անտեղեակ մնացին այն իրականութենէն, որ Աստուծոյ ներկայութիւնը մնայուն բաւարարութիւն կը պատճառէ եւ բարօրութիւնը կը գտնուի միայն շարունակ զԱյն հետապնդելու մէջ: Այդ տղամարդոցմէ մէկը Դաւիթին սերունդէն մարդ մըն էր՝ Եզեկիա թագաւորը: Իր սկիզբի տարիներուն ան զԱստուած փնտռեց եւ անոր իբրեւ արդիւնք մեծ յաջողութիւն ձեռք բերաւ, բայց հետագային ան մոռցաւ, թէ ուրկէ՞ էր իր յաջողութիւնը: Իր հպարտութեան մէջ ան այլեւս Տիրոջ հետամուտ չէղաւ եւ անոր իբրեւ արդիւնք մեռաւ մեկուսացման մէջ իբրեւ բորոտ (Տէն Բ.Մնացորդաց 26):

## ՄԵԾԱԳՈՅՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Կրնանք շարունակել ամբողջ Հին Կտակարանին մէջէն, բայց մեծագոյն ողբերգութիւնը կը տեսնենք Դաւիթին ըլլալէն տարիներ առաջ երբ իր նախահայրերը, Աբրահամին

սերունդները, Եգիպտոսէն դուրս եկան: Նախորդ գլուխներէն մէկուն մէջ մենք տեսանք, որ Աստուծոյ փափաքն էր զիրենք ազատել, որպէսզի Իր քով բերէ: Ան կ'ուզէր մօտենալ, որպէսզի Իր ներկայութիւնը ցոյց տար, բայց երբ այդ մէկը ըրաւ, ցաօք կը կարդանք. «Ժողովուրդը *հեռուն* կայնեցաւ ու Մովսէս *մօտեցաւ* այն թանձր խաւարին՝ ուր Աստուած էր» (Ելից 20.21, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Ինչ ողբերգութիւն: Աստուած Ինքզինք կը յայտնէ եւ անոնք ետէս կը քաշուին: Միայն Մովսէսը յառաջ մղուելու եւ մօտենալու բուն փափաքը ունէր: Անոնց փոխադարձ կեցուածքին պատճառով Աստուած ստիպուեցաւ քահանայութիւն մը կազմել, որ ժողովուրդին համար Իր առջեւ պիտի կենար: Վրան մը պիտի շինէին, որպէսզի Աստուծոյ քօլարկուած ներկայութիւնը իրենց մէջ բնակէր: Աստուծոյ տուած մանրամասնութիւններուն համաձայն զայն ուշադրութեամբ շինելէ ետք, վերջապէս կանգնեցուցին զայն եւ կը կարդանք.

«Ամպ մը ծածկեց վկայութեան վրանը եւ Տէրոջը *փառքը* [*փառաւոր ներկայութիւնը*] լեցուց խորանը: Մովսէս չէր կրնար մտնել վկայութեան վրանը վասն զի ամպը անոր վրայ կը կենար ու Տէրոջը փառքը լեցուցեր էր խորանը» (Ելք 40.34-35, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

### ԱՍՏՈՒԾՈՅ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՏԱՐԲԵՐ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

Հոս ուրիշ բանի մը մասին պիտի խօսիմ, եւ պիտի քննարկեմ Աստուծոյ ներկայութեան տարբեր աստիճանները: Նկատի առէք վերի համարին մէջ նշուած «*փառաւոր ներկայութիւն*» բառերը: Երբ տակաւին նոր կանգնեցուցած էին վրանը (Վկայութեան Խորանը), Անոր ներկայութիւնը այնքան փառաւոր էր, որ Մովսէս, այն մարդը, որ Աստուծոյ հետ իբրեւ բարեկամ դէմ առ դէմ կը խօսէր, չկրցաւ ներս մտնել: Կրնա՞ք պատկերացնել Անոր ահաւորութեան զօրութիւնը՝ ներկայութիւն մը, որ այդ պահուն թէ՛ հրաշալի է եւ թէ՛ սարսափելի:

Տարիներ ետք, Հեղիի ղեկավարության տակ, որ դատաւոր էր, քահանայ եւ Ահարոնի սերունդէն, Տիրոջ ներկայութիւնը գրեթէ աննշան էր վկայութեան խորանին մէջ: Իրականութեան մէջ անոնք ոչ միայն կրնային անկէ ներս մտնել, այլեւ բացայայտ մեղք ալ կը գործէին ճիշդ այն տեղին մօտ, ուր Մովսէս չկրցաւ մտնել: Կը կարդանք. «Այն օրերը Տէրոջը խօսքը հազուադիւտ էր ու յայտնի տեսիլք չկար» (Ա.Թագաւորաց 3.1): Ինչո՞ւ Տիրոջ խօսքը հազուադիւտ էր: Դարձեալ, Աստուծոյ յայտնութիւնը եւ Իր խօսքը կը գտնուին Իր ներկայութեան մէջ: Հոն ուր ներկայութիւն չկայ, յայտնութիւն չկայ, հոն ուր Ան քիչ չափով ներկայ է, հոն հազուադէպ է յայտնութիւնը, եւ հոն ուր զօրաւոր ներկայութիւն կայ, հոն մեծ յայտնութիւն կայ: Այս գլուխին մէջ կը կարդանք, որ Աստուծոյ ճրագը (Անոր ներկայութիւնը) մթագնած էր եւ մարելու մօտ էր (չկայ ներկայութիւն): Ասիկա պատահեցաւ Հեղիին ղեկավարութեան վերջաւորութեան, երբ փղշտացիները Ուխտի Տապանակը գրաւեցին: Անոր կեանքին վերջին օրը Իքաբօդ անունը յայտարարուեցաւ, որ կը նշանակէ՝ «փառքը հեռացաւ»:

Ի տարբերութիւն Հեղիի օրերուն երբ Աստուծոյ ներկայութիւնը հազուադէպ էր եւ գրեթէ աննկատելի, մեղքին պատճառով, կան պատմութիւններ, ուր թէեւ Անոր ներկայութիւնը փառաւոր չէ, ինչպէս երբ խորանը կանգնեցուցին, Անոր ներկայութիւնը կը մնայ շատ իրական, իսկ յայտնութիւնը՝ հարուստ: Այդ ժամանակներուն Աստուած ատելի ծածուկ կերպով կը մօտենայ՝ ընտրելով Իր փառքը չորսւտորել: Ասիկա կը տեսնենք Յակոբի հետ: Ան Աստուծոյ հետ գօտեմարտեցաւ եւ զԱյն դէմ առ դէմ տեսաւ, բայց ըստ երեւոյթին ոչ Անոր փառքով: Սակայն այդ հանդիպումին իբրեւ արդիւնք Յակոբ փոխակերպուեցաւ եւ աճեցաւ Աստուծոյ յայտնութեան մէջ (Ծննդոց 32.24-30): Յետուն տեսաւ Տէրը եւ նոյնիսկ չանդրադարձաւ, որ երկնային զօրքերու Զօրավարին հետ էր, որ ինք խօսեցաւ: Սակայն միա կողմէն՝ Մովսէս աղաղակեց, որ Տիրոջ երեսը տեսնէ եւ անոր ստացած պատասխանն էր. «Դուն իմ երեսս չես կրնար տեսնել. վասնզի մարդ չի կրնար զիս տեսնել ու ապրիլ» (Ելք

33.20): Մենք կը տեսնենք Մովսէսի փափաքը զԱստուած Իր ամբողջ փառքովը տեսնելու, բայց չկրցաւ. սակայն Յեսուն եւ ուրիշներ Տիրոջ երեսը տեսնելով հանդերձ ապրեցան: Ինչո՞ւ: Անոնք Տէրը Իր ամբողջ փառքովը չտեսան:

### ԻՐ ԵՐԵՍԻՆ ԼՈՅՍԸ

Նախ, եկէք ամփոփ ձեռով քննարկենք Տիրոջ փառքը: Ոմանք կը կարծեն, որ ատիկա մառախուղ, ամպ կամ ասոնց նման դրսեւորում մըն է: Ատիկա այսպիսի նախադասութիւններ յառաջ կը բերէ. «Օ՛, անցեալ գիշեր ծառայութեան ընթացքին Աստուծոյ փառքը իջաւ»: Բայց ասիկա անիմաստ խօսքերով Անոր խորհուրդը կը սահմանափակէ եւ կը նսեմացնէ» (Տէն Յոբ 38.2):

Նախ Աստուծոյ փառքը ամպ չէ: Կրնաք հարցնել. «Ուրեմն ինչո՞ւ Սուրբ Գիրքին մէջ գրեթէ ամէն անգամ որ Աստուծոյ փառքը կը դրսեւորուի, ամպը կը նշուի»: Պատճառը՝ Աստուած Ինքզինք կը ծածկէ ամպին մէջ: Անիկա շատ սքանչելի է մեր աչքերուն, ուստի ամպը կը ծածկէ Անոր դէմքը, այլապէս Իր շուրջը գտնուող ամէն մարմին կը սպառի եւ անմիջապէս կը մեռնի: Յիշեցնեմ, Աստուած Մովսէսին ըսաւ, որ ոչ ոք կրնայ Իր երեսը տեսնել եւ ապրիլ: Ուրեմն. «Ինչո՞ւ Եսային, Եզեկիէլը եւ Յովհաննէս առաքեալը Տիրոջ փառքը տեսան եւ ապրեցան եւ անոր մասին գրեցին»: Պատասխանը պարզ է. «Անոնք հոգեւոր աշխարհին մէջ էին (հոգիով լեցուած էին) եւ մարմինէն դուրս էին: Մահկանացու մարմինը Սուրբ Տիրոջ ներկայութեան չի կրնար կենալ Իր ամբողջ փառքին մէջ: Ան լափող կրակն է, որուն մէջ բնաւ խաւար չկայ (Եբրայեցիներուն 12.29: Ա.Յովհաննէսի 1.5): Պօղոս առաքեալ Յիսուսի մասին կը գրէ.

«[...] Ան՝ որ երանելին է եւ միակ հզօրը, թագաւորներու Թագաւորը եւ տէրերու Տէրը, միակը՝ որ անմահ է. ան՝ որ անմատչելի լոյսին մէջ կը բնակի. զոր մարդոցմէ ոչ ոք տեսած է եւ ոչ ոք ալ կրնայ տեսնել [...]» (Ա.Տիմոթէոսի 6.15-16):

Յիսուս անմատչելի լոյսին մէջ կը բնակի, զոր մարդոցմէ ո՛չ ոք տեսած է եւ ոչ ոք ալ կրնայ տեսնել: Իրականութեան մէջ սաղմոսողը կ'ըսէ. «Լոյսը հանդերձի պէս կը հագնիս» (Տեն Սաղմոս 104.2): Պօղոս առանց երկմտելու գրեց ասիկա, որովհետեւ ան Դամասկոսի ճամբուն վրայ Անոր փառաւոր ներկայութեան այս անմատչելի լոյսին փորձառութիւնը չափով մը ունեցած էր: Ան այս ձեռով պատմեց ատիկա Ագրիպպաս թագաւորին.

«Ճամբու ընթացքին, կէսօր ատեն տեսայ, ո՛վ արքայ, արեւն անելի զօրաւոր լոյս մը՝ որ երկինքէն փայլատակեց իմ եւ հետս գացողներուն շուրջը» (Առաքեալներու Գործերը 26.13):

Պօղոս չտեսաւ Յիսուսի երեսը. ան միայն տեսաւ, որ լոյս մը կը թխի Անկէ, որ ծածկեց եւ նսեմացուց Միջին Արեւելքի պայծառ արեւը: Ատիկա առաւօտեան կամ ուշ կէսօրէ ետքի արեւը չէր, այլ՝ կէսօրուայ արեւը: Ես տասներկու տարի ապրած եմ «արեւի նահանգին»՝ Ֆլորիտայի մէջ, եւ երբեք *պէտք* չեմ ունեցած արեւու ակնոց գործածելու: Սակայն քանի մը տարի առաջ Լիսան եւ ես Միջին Արեւելք գացինք. հոն ես *պէտք* ունեցայ արեւու ակնոց գործածելու: Արեւը շատ անելի պայծառ էր այդ չոր անապատային կլիմային մէջ, եւ հասարակածին մօտ ըլլալը քանի անգամով կ'աւելցնէր անոր պայծառութիւնը: Ատոու կանուխ եւ ուշ կէսօրէ ետք արեւը տանելի էր, բայց ժամը տասնմէկէն մինչեւ ժամը երկու շատ պայծառ էր: Սակայն Պօղոս կ'ըսէ, որ Յիսուսի լոյսը անելի պայծառ էր քան ինքնին Միջին Արեւելքի կէսօրուան արեւը: Պահ մը յիշեցէք երբ վերջին անգամ փորձեցիք ուղղակի կէսօրուան արեւուն նայիլ: Դժուար է, բացի եթէ ծածկուած է կամ ամպի մը ծածկոցին տակ է: Տիրոջ փառքին պայծառութիւնը բազմապատիկ անգամ անելի գերազանց է, քան այս պայծառութիւնը:

Ահա թէ ինչու թէ՛ Յովէլը եւ թէ՛ Եսային ըսին, որ վերջին օրերուն, երբ Տիրոջ փառքը երեւնայ, արեւը պիտի խաւարի: «Ահա Տէրոջը օրը կու գայ [...] երկնքի աստղերն ու անոնց համաստեղութիւնները իրենց լոյսը պիտի չտան: Արեւը իր



ելած ատենը պիտի խաւարի եւ լուսինը իր լոյսը պիտի չտայ» (Եսայի 13.9-10):

Թոյլ տուէք, որ աւելի մանրամասնօրէն բացատրեմ: Ինչ կը տեսնենք գիշերուայ պայծառ երկինքին մէջ: Աստղեր: Անոնք ամէն տեղ տարածուած են գիշերուայ երկինքին մէջ: Բայց երբ առտուն արեւը ծագի, ինչ կը պատահի: Ո՛ր կ'երթան: Արդեօք աստղերը մինչեւ մայրամուտ կը փախչին եւ յետոյ հորիզոնին տակ իրենց պահուըտած տեղէն վազելով իրենց տեղերը կը վերադառնան: Ըստ երեւոյթին, պատասխանը ոչ է: Ուրեմն ինչ կ'ըլլայ: Աստղերուն փառքը յատուկ մակարդակ մը ունի, բայց արեւուն փառքը այնքան աւելի մեծ է, որ երբ արեւը կ'երեւի, ի տարբերութիւն արեւին, անոնք կը մթագնին: Անոնք տակաւին իրենց տեղերուն մէջ են, բայց չեն տեսնուիր: Նոյնպէս ալ երբ Յիսուս վերադառնայ, Իր փառքը արեւէն այնքան աւելի մեծ պիտի ըլլայ, որ Ան պիտի մթագնէ զայն: Ատիկա պիտի չերեւի, թէեւ տակաւին ներկայ է: Ուրի: Կը հասկնանք ինչու Պօղոս կը գրէ. «Ձոր մարդոցմէ ոչ ոք տեսած է եւ ոչ ոք ալ կրնայ տեսնել»:

Տիրոջ փառքը կը գերազանցէ միւս բոլոր լոյսերը: Ան կատարեալ եւ կլանող լոյս է: Ահա թէ ինչու Անոր երկրորդ գալուստով այս աշխարհի մարդիկը «Քարայրներու մէջ ու երկրին խոռոչները պիտի մտնեն Տէրոջը վախէն եւ անոր *վեհափառութեանը մեծութենէն* [...]» (Եսայի 2.19, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Յովհաննէսը կը ներկայացնէ ատիկա.

«Երկրի թագաւորները, իշխանները, հրամանատարները, հարուստները, զօրաւոր մարդիկը, եւ ծառայ թէ ազատ՝ բոլորը պահուըտեցան քարայրներու եւ լեռներու ժայռերուն մէջ: Անոնք կ'ըսէին լեռներուն եւ ժայռերուն. 'Մեր վրայ ինկէք ու ծածկեցէք մեզ անոր *աչքէն [երեսէն]*, անոր՝ որ գահին վրայ կը նստի. ազատեցէք մեզ Գառնուկին բարկութենէն [...]» (Յայտնութիւն Յովհաննէսի 6.15-16, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

ԻՆՉ Է ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔԸ

Եկէք այս հարցումին պատասխանենք. «Ինչ է Տիրոջ փառքը»: Պատասխանելու համար վերադառնանք Մովսէսի Աստուծոյ հետ ունեցած խօսակցութեան: Մովսէս ոչ միայն Աստուծոյ ներկայութիւնը խնդրեց, այլև խնդրեց Անոր փառքը տեսնել:

«Մովսէս ըսաւ. ‘Կ’աղաչեմ, քու *փառքդ* ցուցուր ինձի’»  
(Ելք 33.18, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

«*Փառք*» բառին եբրայերէնը «*քաւօտ*» (kəbōd) բառն է: «Աստուածաշունչի Սթրոնկի Բառարանը» այսպէս կը սահմանէ այս բառը՝ «բանի մը կշիռը» (ծանրութիւնը), բայց միայն փոխաբերական, դրական իմաստով»: Նաեւ անոր սահմանումներէն է՝ շքեղութիւն, առատութիւն եւ պատիւ: Մովսէս Աստուծմէ կը խնդրէր, որ «Քու ամբողջ շքեղութեամբդ Քու անձդ ցուցուր ինձի»: Ուշադրութեամբ նայեցէք Աստուծոյ պատասխանին.

«Իմ բոլոր *բարութիւնս* քու առջեւէդ պիտի անցընեմ ու Տէրոջը անունը քու առջեւդ պիտի կանչեմ [...]» (Ելք 33.19, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Մովսէս Անոր ամբողջ փառքը խնդրեց եւ Աստուած անոր պատասխանեց. «Իմ բոլոր *բարութիւնս*»: «*Բարութիւն*» բառին եբրայերէն բառը «*թուվ*» (טוב / tov) բառն է, որ կը նշանակէ «բարութիւն իր ամենալայն իմաստով»: Այսինքն՝ բան մը ետ չպահել:

Յետոյ Աստուած կ’ըսէ. «Տէրոջը անունը քու առջեւդ պիտի կանչեմ»: Նախքան երկրաւոր թագաւոր մը գահին սենեակը մտնէ, մունետիկ մը իր անունը կը կանչէ: Այդ կանչին կ’ընկերանան փողի ձայներ երբ ան իր շքեղութեամբ գահին սենեակը կը մտնէ: Թագաւորին մեծութիւնը կը յայտնուի եւ իր արքունիքին մէջ կարելի չէ շփոթիլ, թէ ո՛վ է թագաւորը: Անոր փառաւոր ներկայութիւնը ժողովուրդը ահով կը լեցնէ: Բայց ինչ պիտի պատահէր եթէ այդ թագաւորը սովորական հագուստներ հագած, առանց իրեն ուղեկցող ծառաներու, իր

քաղաքին փողոցներուն մէջ քալէր: Իրականութեան մէջ այն, ինչ որ պալատին միջավայրին մէջ բացայայտ էր, դուրսը կը կորսուի, քանի որ շատեր, որոնք անոր քովէն կ'անցնին, պիտի չգիտնան անոր իրական ինքնութիւնը: Անոր ներկայութիւնը նոյնքան հիանալի եւ նկատելի պիտի չըլլայ ինչպէս իր գահի սենեակին փառքին մէջ էր: Հիմնականօրէն ճիշդ այս էր, որ Աստուած Մովսէսին համար ըրաւ ըսելով. «Իմ անունս պիտի կանչեմ եւ Իմ ամբողջ փառքովս քու առջեւէդ պիտի անցնիմ»:

Նոր Կտակարանին մէջ կը կարդանք, որ Տիրոջ փառքը կ'երեւի Յիսուս Քրիստոսի երեսին (անձին) մէջ (Բ.Կորնթացիներուն 4.6): Շատեր, որոնք Տիրոջ ներկայութեան մէջ եղած են, կը վկայեն, որ տեսիլքով Յիսուսը տեսած են եւ Անոր երեսին նայած են: Ասիկա շատ հաւանական է, բայց հետեւեալը ունիմ ձեզի ըսելու՝ Անոր ամբողջ փառքը տեսած չէն:

Ուրիշներ կրնան ըսել, որ աշակերտները Յիսուսի դէմքին նայեցան Անոր մեռելներէն յարութիւն առնելէն ետք: Այս ալ ճիշդ է, բայց ասիկա Իր փառքին բացայայտ ցուցադրութիւնը չէր: Ինչպէս նշեցի, Հին Կտակարանին մէջ կարգ մը մարդիկ տեսան եւ ապրեցան Տիրոջ ներկայութիւնը, բայց ոչ Անոր փառքին յայտնութեամբ: Տէրը երեւցաւ Աբրահամին Մամբրէի կաղնիներուն մէջ, բայց ոչ Իր փառքով (Ծննդոց 18.1-2): Յակոբ Աստուծոյ հետ գօտեմարտեցաւ եւ Յետուն (Յետու 5.13-15) նոյնիսկ չճանչցաւ զԻնք, եւ ուրիշներ ալ կան:

Երբ Յետուն Անոր երեսին նայեցաւ Երիքովի վրայ յարձակելէն առաջ, Տէրը իբրեւ պատերազմի Մարդ երեւցաւ իրեն: Չգիտնալով, որ ո՛վ է Ան, Յետուն հարցուց. «Մեզմէ՞ ես թէ՛ մեր թշնամիներէն ես» (Յետու 5.13): Այն ատեն Տէրը ինքզինք *յայտնեց* իբրեւ Տիրոջ Ջօրավարը եւ Յետուին հրամայեց, որ իր ոտքերէն կօշիկները հանէ, քանի որ կայնած տեղը սո՛րբ էր: Յակոբ ամբողջ գիշերը Տիրոջ հետ գօտեմարտեցաւ եւ արշալոյսին մօտ վերջապէս աղաղակեց. «Շնորհք ըրէ, անունդ ըսէ ինձի [...]» (Ծննդոց 32.29): Վերադառնանք սովորական հազուստներ հազած իր թագաւորութեան փողոցներուն մէջ քալող թագաւորին օրինակին, որ շատերու քովէն աննկատ կ'անցնէր: Ասիկա կը նկարագրէ այն, ինչ որ պատահեցաւ Յետուին եւ Յակոբին,

ատով հանդերձ անոնք մեծ յայտնություն ստացան Անոր մասին:

Նոյնն է պարագան Յարութենէն ետք: Առաջին անձը, որուն հետ խօսեցաւ Յիսուս, Մարիամ Մագդաղենացին էր, եւ ան կարծեց, որ Ան պարտիզպանն էր (Յովհաննէս 20.15-16): Աշակերտները ծովափին Յիսուսի հետ ձուկի նախաճաշ կերան (Յովհաննէս 21.9-10) եւ սկիզբը չճանչցան զինք կամ Իր ձայնը: Անոնք զինք ճանչցան այն ատեն երբ իրենց համար ծանօթ բան մը ըրաւ: Դարձեալ, Իր յարութենէն ետք, Ան քալեց երկու աշակերտներու հետ, որոնց ըսած էր Իր մահուրնէ առաջ, որ ինչ պիտի պատահէր, բայց անոնք չճանչցան զինք, քանի որ «Անոնց աչքերը ծածկուած էին» (Ղուկաս 24.16), եւ անոնք ալ չճանչցան Անոր երեսը, կերպարանքը կամ ձայնը: Բոլորը տեսան Անոր դէմքը եւ Անոր ներկայութեան փորձառութիւնը ունեցան, բայց ոչ Անոր փառքին բացայայտ ցուցադրութիւնովը, բայց բոլորը Անոր ներկայութենէն յայտնություն ստացան:

Ի հակադրութիւն, Յովհաննէս առաքեալը զինք Հոգիով տեսաւ երբ Պատմոս կղզիին վրայ էր, բայց հոն ունեցած իր հանդիպումը բոլորովին տարբեր էր ծովափին վրայ ունեցած նախաճաշի հանդիպումէն, քանի որ հոն Յովհաննէսը Տէրը տեսաւ Իր փառքով: Ան այսպէս կը նկարագրէ Յիսուսը. «[...] Անոր դէմքը կէսօրուան արեւուն նման կը փայլէր: Երբ զայն տեսայ, մեռելի նման ինկայ անոր ոտքերուն առջեւ [...]» (Յայտնություն Յովհաննէսի 1.16-17): Տիրոջ փառաւոր ներկայութիւնը այնքան ուժեղ էր, որ Յովհաննէս մեռելի նման ինկաւ:

Տիրոջ փառքն է, որ գԱստուած Աստուած կ'ընէ: Անոր բոլոր յատկանիշները՝ իշխանութիւնը, զօրութիւնը, իմաստութիւնը, բառացիօրէն Անոր անչափելի կշիռը եւ մեծութիւնը. առանց որեւէ բան ծածկուած կամ ետ պահուած ըլլալու: Այս փառաւոր ներկայութեան փորձառութիւնը կարելի է ունենալ անկախ անկէ, թէ Աստուծոյ կերպարանքը մասամբ կը տեսնուի, ինչպէս Մովսէս միայն Անոր ոտքերը եւ ետին տեսաւ, կամ ինչպէս Պօղոսի պարագային երբ ան Դամասկոսի ճամբուն վրայ կերպարանք մը չտեսաւ, այլ՝ միայն անմատչելի լոյս մը եւ ձայն մը:

ԻՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԸ

Եկեք վերադառնանք Աբրահամի սերունդներուն: Երբ Աստուած առաջին անգամ Իր ներկայութիւնը յայտնեց Սինա լեռան վրայ, անոնք ետ քաշուեցան եւ աղաղակեցին. «Ահա մեր Տէր Աստուածը *իր ձեռքն [Իր փառքը]* ու մեծութիւնը մեզի ցուցուց ու անոր ձայնը կրակին մէջէն լսեցինք [...] Եւ հիմա մենք ինչո՞ւ մեռնինք. (քանզի այս մեծ կրակը մեզ պիտի սպառէ.) եթէ մենք մեր Տէր Աստուծոյն ձայնը անգամ մըն ալ լսելու ըլլանք, պիտի մեռնինք» (Բ.Օրինաց 5.24-25, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Անոնք չկրցան դիմանալ Անոր փառաւոր ներկայութեան, քանի որ անոնց խիղճերը արատաւորուած էին իրենց ինքնասէր ճամբաներով:

Յետոյ Վկայութեան Խորանը կանգնեցուցին եւ Աստուած բնակեցաւ անոր ներքին բաժինին մէջ, որ կը կոչուէր «Սրբութիւն Սրբութեանց»: Քահանայապետը տարին մէկ անգամ կը մտնէր հոն: Այդ առիթով քահանան նախ կը մտնէր դուրսի գաւիթին կողմէն, ուր իր եւ ժողովուրդին գործած մեղքերուն փոխարէն զոհասեղանին վրայ զոհի արիւնը կը մատուցանէր Աստուծոյ: Ատկէ ետք քահանան խորանին քով գտնուող աւազանին մէջ կը լուացուէր: Յետոյ ան վարագոյրին ընդմէջէն կը մտնէր դէպի Սրբութիւնը: Հոն բնական լոյս չէր մտնէր: Միակ լոյսը ոսկիէ մոմակալին տուած լոյսն էր, որ կը ներկայացնէ Յիսուսը՝ մեր Լոյսը (Յովհաննէս 9.5): Այս տեղին մէջ կը գտնուէր նաեւ առաջաւորութեան հացը, որ կը խօսի Յիսուսի մասին, իբրեւ մեր Կեանքի Հացը (Յովհաննէս 6.48): Այդ տեղին մէջ գտնուող երրորդ առարկան խունկի սեղանն էր, որ կը ներկայացնէր յարատեւ աղօթքի եւ պաշտամունքի կեանքը:

Նոյնիսկ այդ տեղին մէջ, ան տակաւին մտած չէր ըլլար հոն, ուր Աստուծոյ ներկայութիւնը կը բնակէր: Տակաւին կար ուրիշ վարագոյր մը, որ Սրբութիւնը կը բաժնէր Ամէնէն Սուրբ Վայրէն կամ Սրբութիւն Սրբութեանցէն: Այս տեղին մէջ, քաւութեան վրայ, կը բնակէր Աստուծոյ իրական բացայայտ ներկայութիւնը: Ասիկա այն վարագոյրն է, որ պատռուեցաւ երբ Յիսուս Իր հոգին ամանդեց՝ «[...] Տաճարին վարագոյրը պատռուեցաւ եւ վերէն վար երկու մասի բաժնուեցաւ [...]»

(Մատթեոս 27.51): Նկատի առէք, որ ատիկա վերէն վար պատռուեցաւ, եւ ոչ թէ վարէն վեր: Աստուած, եւ ոչ թէ մարդը պատռեց այս վարագոյրը, քանի որ Ան այդ տեղէն կը հեռանար: Ան նոր բնակավայր մը կը պատրաստէր, բնակավայր մը, որուն միշտ բուն կերպով փափաքած էր՝ Իր վերակենդանացած զաւակներուն սիրտը: Երբ պատահեցաւ ատիկա: Յիսուներեք օր ետք՝ Պենտէկոստէի օրը, Աստուած բնակեցաւ Իր շատ փափաքած վրանին մէջ: Կը կարդանք.

«Յանկարծ սաստիկ հովի մը սուլոցին պէս ձայն մը հնչեց երկինքէն եւ լեցուց ամբողջ տունը, ուր անոնք նստած էին: Յետոյ անոնք տեսան հրեղէն լեզուներ, որոնք տարածուեցան եւ հանգչեցան իւրաքանչիւրին վրայ: Բոլոր ներկաները Սուրբ Հոգիով լեցուեցան [...]» (Առաքեալներու Գործերը 2.2-4):

Ինչպէս Աստուծոյ ներկայութիւնը վրանէն ներս չմտաւ մինչեւ որ Մովսէսը *վերջացուց* վրանին գործը, նոյնպէս երբ Յիսուս ըսաւ. «Ամէն ինչ *վերջացած է*: Ապա գլուխը խոնարհեցուց եւ հոգին ասանդեց» (Տէս Յովհաննէս 19.30), դարձեալ, Տէրը եկաւ բնակելու Իր նոր բնակարանին մէջ, որ յաւիտենական Գառնուկին արինով պատրաստուեցաւ:

«Ուրեմն, եղբայրներ, համարձակութիւն ունինք սուրբ տեղը մտնելու Յիսուսին արինովը, այն նոր ու կենդանի ճամբովը՝ որ բացաւ [սրբացուց] մեզի վարագոյրին մէջէն [...] *մօտենանք* ճշմարիտ սրտով, լեցուն հաւատքով, սրտերնիս չար խիղճէն մաքրուած ու մարմիննիս մաքուր ջրով լուացուած. անխախտ պահենք յոյսին դաւանութիւնը, վասնզի հաւատարիմ է անիկա որ խոստացաւ» (Եբրայեցիներուն 10.19-23, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Մենք համարձակութիւն ունինք *մօտենալու* Անոր, որ կը բնակի «Ամենասուրբ Տեղին» («Սրբութիւն Սրբութեանցին») մէջ: Այս տեղը վրանի մը կամ տաճարի մը մէջ չէ, հիմա ատիկա մեր մարմինն է: Այո՛, Աստուած եկաւ բնակելու այն մարդոց սիրտերուն մէջ, որոնք Յիսուսի զոհաբերութեամբ

սրբագործուած են: Յաճախ երբ կը հրաւիրենք զինք, կ'երեւակայենք, որ հեռու գահի սենեակ մը կը մտնենք, որ միլիոնաւոր մղոններ հեռու է մեզմէ: Ո՛չ, մենք տակաւին չենք սորված դէպի մեր ներսիդին դառնալ. մենք տակաւին դէպի դուրս կը նայինք: Նոր Կտակարանէն համար մը մեզի պարզօրէն կ'ըսէ. «Դուք պէտք չունիք երկինք երթալու (որպէսզի Քրիստոսը գտնէք եւ զինք վար իջեցնէք, որ ձեզի օգնէ)» (Հռոմայեցիներուն 10.6, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն):

Այո՛, Աստուած ֆիզիքական գահի սենեակ մը ունի երրորդ երկինքին մէջ: Սակայն Ան այնքան մեծ փափաք ունի Իր ժողովուրդին մօտ ըլլալու, որ Հին Կտակարանին մէջ Ան բնակավայր մը շինեց վրանի մը մէջ, երկրի վրայ, ուր Իր բացայայտ ներկայութիւնը կը բնակէր: Հիմա Ան Իրեն համար ուրիշ բնակավայր մը շինած է այն մարդոց սիրտերուն մէջ, որոնք իրենց կեանքերը Յիսուսի տուած են եւ խնդրած են, որ Իր Հոգիով լեցուին: Ան Իրեն համար տեղ մը շինած է, որ ամենամօտ տեղն է Իր սիրոյ եւ գուրգուրանքի առարկային: Երբ կը մօտենանք Անոր, որ մեր սիրտերուն մէջ է, կը մտնենք նաեւ գահին սենեակը, որ միլիոնաւոր մղոններ հեռու է: Ինչպէս կ'ըլլայ ասիկա: Աստուծոյ Հոգիին մէջ հեռաւորութիւն չկայ: Իր ներկայութեան ըլլալ կը նշանակէ գահին սենեակին մէջ ըլլալ Յիսուսի եւ Հօր հետ, որովհետեւ Ան Քրիստոսի եւ Աստուծոյ Հոգին է (Տէն Հռոմայեցիներուն 8.9):

Նկատի առէք, գրողը կ'ըսէ. «Անխախտ պահենք *յոյսին* դաւանութիւնը [առանց տատանելու], վասնզի հաւատարիմ է անիկա որ խոստացաւ»: Գրողը նաեւ կ'ըսէ.

«[Այդ յոյսը] ունինք իբրեւ հաստատ ու անշարժ խարիսխ մը մեր անձին, որ վարագոյրին ներսի կողմն ալ [*Ներկայութեան*] կը մտնէ» (Եբրայեցիներուն 6.19, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Հին վարագոյրին պատռուիլը այս աշխարհի մէջ գտնուող բոլոր պաշտողներուն համար ճամբան բացաւ, որ Աստուծոյ ներկայութեան գան նոր ու կենդանի ճամբով մը: Վարագոյրը հիմա դարձաւ մեր մարմինը: Եթէ մեր մարմինին դուրսի

գաւիթէն անդին անցնինք՝ զայն խաչելով կամ ուրանալով (Տեն Կողոսացիներուն 5.24), կը մտնենք նոր «Ամենասուրբ Տեղը» սիրտին, ուր շարունակական հաղորդութիւնը հասանելի է: Անոր ներկայութիւնը կը դառնայ մնայուն իրականութիւն մը: Ան մեզի վստահեցուց, որ եթէ անկեղծ սիրտով մօտենանք, Ան Իր ներկայութիւնը պիտի յայտնէ: Ինչպէս Վկայութեան Խորանին մէջ Իր ներկայութիւնը մշտապէս հոն էր երբ անոնք հաւատարիմ էին Իրեն, նոյնպէս Անոր ներկայութիւնը մշտական է մեր սիրտերէն կազմուած Իր վրանին մէջ (Իրեն համար վրան դարձած մեր սիրտերուն մէջ):

Նորէն լսեցէք Յակոբոսին խօսքերը. «Աստուծոյ մօտեցէ՛ք ու անիկա ձեզի պիտի մօտենայ»: Ինչ յոյս, ինչ մաքուր վստահութիւն, Աստուած կը խոստանայ եւ Ինքն Իր անձին վրայ երդում կ'ընէ, որովհետեւ «անկարելի է, որ Աստուած սուտ խօսի, [որպէսզի] հաստատուն մխիթարութիւն ունենանք մենք, որ ապաստան գտանք մեր առջեւ դրուած յոյսը ամուր բռնելու» (Եբրայեցիներուն 6.18): Ինչ է այս յոյսը: Եթէ մօտենանք, Ան պիտի մօտենայ մեզի: Ան վստահեցուցած է ատիկա:

Ուրեմն ինչո՞ւ աւելի մեծ թիւով մարդիկ չեն վայելեր Անոր բացայայտ ներկայութիւնը: Ինչպէս էյ.Տապլեու. Թողորը աղաղակեց.

Յիսուսի մարմինին պատռուելով վարագոյրը վերցուելէ ետք, երբ Աստուծոյ կողմէ այլեւ ոչինչ կայ, որ կ'արգիլէ մեր մուտքը, ինչո՞ւ դուրսը կը մնանք: Ինչո՞ւ կ'ընդունինք, որ մեր կեանքին բոլոր օրերը Սրբութիւն Սրբութեանցէն դուրս մնանք եւ երբեք ներս չմտնենք՝ մեր աչքերը Աստուծոյ յառելու համար: Կը լսենք, որ Փեսան կ'ըսէ. «[...] Երեսդ ցուցնոր ինձի, թող ձայնդ լսեմ, քանզի ձայնդ քաղցր ու դէմքդ գեղեցիկ է» (Երգ Երգոց 2.14): Կը զգանք, որ այդ հրաւերը մեզի համար է, բայց տակաւին չենք մօտենար, եւ տարիները կ'անցնին եւ վրանին դուրսի գաւիթներուն մէջ կը ծերանանք եւ կը յոգնինք: Ինչը կ'արգիլէ մեզ: («Տը Փըրսութ աֆ Կար», էջ 41):



Տակալին հարցումը կը մնայ. «Ինչը կ'արգիլէ մեզ: Ինչո՞ւ մեր սեփական ուժերով կը պայքարինք, եւ մեր կուրութեան պատճառով նպատակին չենք հասնիր: Ինչո՞ւ այսքան մեծ թիով մարդիկ դժգոհ եւ ձանձրացած են, երբ մենք այդպիսի հիանալի յոյս մը ունինք, որուն ետին կը կանգնի Իր խոստումը, որ չի կրնար դրժուիլ: Երբ շարունակենք, մենք պիտի յայտնաբերենք, որ ինչն է, որ արգելք է այս հիանալի ընկերային յարաբերութեան, որ Աստուած հասանելի դարձուցած է բոլոր հաւատացեալներուն»:

## ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. Այս գլուխին սկիզբը, հետեւեալ հարցումները հարցուեցան. «Ինչո՞ւ շատեր Աստուծոյ հետ մտաւոր յարաբերութեան մը յանձնուած են: Ինչո՞ւ բաւարարուած ենք քրիստոնէութեամբ՝ առանց Քրիստոսի ներկայութեան: Ինչպէս սորվեցանք գոհ ըլլալ առանց մտերմութեան: Ինչպէս կը պատասխանէք այս հարցումներուն:
2. Հեղինակը կը նշէ, որ հոգեբանութիւնը մեզի կ'ըսէ, որ վերջին հինգ տարիներուն մեր ունեցած յարաբերութիւնները կը ձեւաւորեն մեր անհատականութիւնը: Ան նաեւ կ'ըսէ, որ Սուրբ Գիրքը կը հաստատէ ասիկա. «Չար ընկերը լաւ նկարագիրը կը խաթարէ» (Ա.Կորնթացիներուն 15.33) եւ «Իմաստուններուն հետ քալողը իմաստուն կ'ըլլայ [...]» (Առակաց 13.20): Ձեր կեանքին մէջ եղամ՞ են ժամանակներ, որ այս ծայրայեղութիւններէն մէկուն կամ երկուքին օրինակն են: Ինչ էին արդիւնքները:



ՎԵՅԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ



Ան մտերմութիւն առաջարկեց անոնց, բայց անոնք իրենց սեփական ընտրութեամբ չունեցան ատիկա:

Մինչ այս առաջին քանի մը գլուխը կը գրեմ, շատ մեծ քաղց կը բորբոքի սիրտիս մէջ: Այս բաներուն մասին խօսիլը կը հովէ բոցը եւ կ'աւելցնէ իմ փափաքս՝ հետապնդելու Ան, որ մեզ շատ հիանալի կերպով կը սիրէ: Ան շարունակ հետապնդած է մեզ՝ իբրեւ անհատներ այս բոլոր դարերու սիրային յարաբերութեան մէջ: Սակայն այս Մէկը, որ շատ արժանի է մեր հետապնդումին, ինքնին «այնքան ալ դիւրութեամբ հասանելի չէ»: Ան սուրբ եւ մեծ Թագաւորն է եւ որպէս այդպիսին պէտք է մեծարուի: Հետեւաբար դուք վստահաբար չէք կրնար խօսիլ «մօտենալ»-ու մասին՝ առանց անդրադառնալու «սուրբ վախ»-ի հարցին:

## ՃԱՄԲԱՆԵՐՈՒՆ ԲԱԺՆՈՒԻԼԸ

Հոս «փնտռողները հաճեցնող պատգամները» եւ ճշմարտութիւնը յաճախ կը բաժնուին: Այս պատգամները կարելի է գտնել որեւէ յարանուանութեան կամ շրջանակի մէջ. անոնք կը խօսին Աստուծոյ մը մասին, որ մարդոց կը փափաքի եւ կ'ուզէ օրինել զանոնք, սակայն պատգամները սխալ են, քանի որ անոնք զանց կ'ընեն Անոր սրբութիւնը: Յաճախ ասիկա կ'ընեն բարի դիտաւորութեամբ. կարգ մը մարդիկ տեսած կամ ապրած են օրինապաշտութեան ողբերգութիւնը. մինչ ուրիշներ պարզապէս կ'ուզեն մարդիկը տեսնել սիրուած եւ խնամուած: Յետոյ դժբախտաբար կարգ մը պատգամներ դիտումնաւոր կերպով մասնակի ձեւով (պակասաւոր կերպով) կը քարոզուին՝ աւելի մեծ թիւով հետեւորդներ ունենալու համար:

Անոնք որոնք օրինապաշտութեան ճիրաններէն վրիպած են եւ միայն կը քարոզեն սիրող, հասկցող Աստուած մը, որ մեր անօրէնութեան եւ աշխարհիկութեան համար հատուցում կ'ընէ, իրենց շարժառիթներով եւ ռազմավարութեամբ հակադարձողներ են: Այս խորհուրդը յառաջ չէ եկած Աստուծոյ ներկայութեան մէջ մտնելով Անոր Խօսքը անձամբ Անկէ լսելէն: Եթէ այդպէս ըրած ըլլային, պիտի անդրադառնային, որ Անոր մօտենալու ուրիշ ձեւ չկայ, բացի այն ճամբով, որուն եզերքներուն կը գտնուին թէ սուրբ սէր եւ թէ վախ:

Այս պատգամները կը քարոզեն «դիւրին Տէր» մը, ինքնին այն նպատակին հաշտոյն, որ կը փորձէ իրականացնել: Տիրոջ վախին մասին չխօսիլը հիմնականօրէն «Անոր ներկայութիւնը կը ծածկէ» մարդոցմէ:

## ԱՀԱԻՈՐ (ՊԱՏԿԱՌԱՆՔԻ ԱՐԺԱՆԱՅԱԾ)

Կայ մնայուն, երբեք չփոխուող ճշմարտութիւն մը, որ կը վերաբերի Անոր ներկայութեան մէջ գտնուողներուն: Ատիկա կարելի է ամփոփել այս մէկ համարով.

«Աստուած խիստ զարհուրելի է սուրբերուն ժողովին մէջ եւ ահաւոր է շուրջը եղողներուն վրայ» (Սաղմոս 89.7):

## ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Եկէք դարձեալ կարդանք համարին երկրորդ մասը. «Աստուած [...] ահաւոր է շուրջը եղողներուն վրայ»: Ասիկա միշտ ճիշդ է եւ միշտ կը մնայ. Աստուած երբեք պիտի չդրսետորէ Իր ներկայութիւնը մթնոլորտի մը մէջ, ուր Իր ահը չկայ: Ան պիտի չմօտենայ կամ պիտի չբնակի միջավայրի մը մէջ, ուր ան մեծագոյն պատիւի, պատկառանքի եւ յարգանքի արժանացած չէ: Կարելոր չէ ինչքան լաւ է երգեցողութիւնը կամ «պաշտամունքը» կամ ինչքան լաւ է քարոզը կամ ուսուցումը, ոչ ալ ինչքան աստուածաշնչական է աղօթքը. եթէ Անկէ չեն վախնար, Ան պիտի չմօտենայ Ինքզինք յայտնելու: Հեղին եւ անոր որդիներուն պարագայէն տարբեր պիտի չըլլայ:

Տարիներու ընթացքին ես մտած եմ սրահներ, ուր հարիւրաւոր կամ հազարաւոր հաւատացեալներ հաւաքուած են: Եղած են անթիւ անգամներ, երբ, ցաւօք սրտի, Աստուծոյ ներկայութեան նշոյլն անգամ չէ եղած: Պատճառը՝ մարդոց մէջ եւ երբեմն նոյնիսկ ղեկավարութեան մէջ սուրբ վախ չկար: Փառաբանութեան եւ պաշտամունքի խումբերը կրնան հրաշալի ըլլալ, ծածանող դրօշակներով եւ պարողներով, եւ վարպետ նուագածուներով եւ երգողներով: Ծառայութիւնները կրնան ըլլալ նորարար եւ բարձր արհեստագիտութիւն կիրառող, մամուլի վրայ յայտարարութիւններ դնող: Ձեռնարկները կրնան ըլլալ ստեղծագործ եւ զուարճալի, ուր մարդիկը կ'ողջունեն զուարթամտութեամբ եւ հետաքրքրող նիւթերով, բայց բան մը պակաս է: Մթնոլորտը Աստուծոյ ներկայութենէն զուրկ է: Սիրտ ճմլող իրականութիւնը այն է, որ ներկաներուն մեծամասնութիւնը տեղեակ չէ, որ իրապէս ինչքան պարապ է մթնոլորտը: (Հոս պիտի միջադրեմ, որ հաղորդակցելու նորարար ձեւերը թարմ են եւ ինքնին ոչ մէկ ձեւով չեն արգիլեր Աստուծոյ բացայայտ ներկայութիւնը: Ես եղած եմ այդպիսի ժամանակակից վայրերու մէջ եւ վայելած եմ Աստուծոյ ներկայութեան ճոխութիւնը: Աստուծոյ ներկայութիւնը կապ չունի արհեստագիտութեան առկայութեան կամ բացակայութեան հետ, բայց ատիկա սիրտին վիճակը կ'արտացոլացնէ):

Այսպիսի կացութիւններու մէջ Տէրը զիս կ'առաջնորդէ, որ խօսիմ հնազանդութեան եւ Տիրոջ վախին մասին եւ

ամէն անգամ որ ապաշխարութեան կոչ կ'ուղղուի, տեսած եմ, որ մեծամասնութիւնը կ'ընդառաջէ, յաճախ ներառեալ ղեկավարները: Գրեթէ առանց բացառութեան նախքան աղօթք մը ըսուի, Աստուծոյ ներկայութիւնը կը դրսեւորուի, եւ մարդիկ կը սկսին լալ: Ինչո՞ւ ատիկա կը պատահի: Որովհետեւ Աստուած կը գրաւուի դէպի այն մարդիկը, որոնք զինք կը սիրեն, կը պատուեն եւ Իր վախը ունին: Այդ պատճառով Յակոբոսը կ'ըսէ.

«Աստուծոյ մօտեցէք ու անիկա ձեզի պիտի մօտենայ: Սրբեցէք ձեռքերնիդ, մեղաւորներ եւ մաքրեցէք սրտերնիդ, երկմիտներ» (Յակոբոսի 4.8):

Երբ առաջին անգամ կը նայիք այս համարին, կրնաք կարծել, թէ Յակոբոսը կը խօսի չփրկուածներուն, որոնք մենք յաճախ կ'անուանենք վերստին չծնածներ, «մեղաւորներ»: Սակայն իր խօսքին մէջ Յակոբոսը տասնհինգ անգամ զինք լսողները կը կոչէ *եղբայրներ*: Ան կը խօսի վերստին ծնածներու:

Եկէք նայինք «մեղաւոր» բառին. յունարէնի մէջ ատիկա «համարթուրն» բառն է: Աստուածաշունչի անգլերէն Վայնի Բառարանին համաձայն այդ բառին բառացի սահմանումն է՝ «մէկը, որ նշանակէտը չի կրնար հարուածել»: Յարմար է, որ այս բառը գործածուի չփրկուած անձի մը համար, բայց ատիկա նաեւ կը գործածուի քրիստոնեայի մը համար: Այս պարունակին մէջ ատիկա կը վերաբերի հաւատացեալին, որ իր մտածողութեան մէջ նպատակակէտէն շեղած է, որ իր կարգին կրկնուող սխալ արարքներ կամ վարմունք կը ստեղծէ: Կը շարունակէ ըսելով. «[...] Դուք, երկմիտ մարդիկ, ձեր միտքերը յստակացուցէք»: Այս նախադասութեամբ ան կ'երթայ դէպի հարցին արմատը, թէ ինչո՞ւ հաւատացեալը նպատակէն կը շեղի:

Շատ կարեւոր է, որ հասկնանք, թէ Տիրոջ վախը կը սկսի մեր սիրտին մէջ եւ մեր արտաքին գործերով կը դրսեւորուի: Առիթով մը Աստուած Իր ժողովուրդին համար ըսաւ — եւ նկատի առէք «մօտենալ» բառը.

## ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐԵԿԱՄԼԵՐԸ

«Այս ժողովուրդը ինձի բերնովը կը մօտենայ եւ զիս շրթունքներովը կը պատուէ, բայց անոնց սիրտը ինձմէ հեռու է ու ինձմէ ունեցած վախերնին մարդոց սորվեցուցած պատուիրանք մըն է» (Եսայի 29.13, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Աստուծոյ մօտենալը միշտ կը սկսի այն սիրտէն, որ Աստուծմէ կը վախնայ եւ զԱյն կը սիրէ ուրիշ ոեւէ մէկէն կամ որեւէ բանէ աւելի: Ատիկա միայն արտաքին գործեր չէ, այլ սիրտին շարժառիթը: Հետեաբար նախ Տիրոջ վախը սահմանելէ ետք պէտք է անդրադառնանք սիրտին կեցուածքին:

Սկսինք. Աստուծոյ վախը ունենալ կը նշանակէ զինք մեծարել, յարգել եւ Իրեն հանդէպ ամենամեծ յարգանքը ունենալ. ինչպէս նաեւ երկրպագել, ակնածիլ եւ Անկէ պատկառիլ: Կը նշանակէ Իր անձին, Իր ներկայութեան, Իր պատուիրաններուն եւ փափաքներուն հանդէպ մեծագոյն յարգանքով դողալ: Ասիկա միայն սկիզբն է:

## ԱՍՏՈՒԾՈՅ ԳԱԼ՝ ԱՆԱՐԳԱԼԻՑ ՎԵՐԱԲԵՐՈՒՄՈՎ

Երբեմն բանի մը ինչ ըլլալը հասկնալու համար կ'օգնէ, որ գիտնանք, թէ ինչ չէ ատիկա: Առանց սուրբ վախի Աստուծոյ մօտենալու հիանալի մէկ օրինակը կը տեսնենք Ահարոնին երկու որդիներուն կեանքին մէջ:

Նախքան վկայութեան խորանին շինարարութեան աւարտիլը Տէրը Մովսէսին թելադրեց. «Քեզի մօտեցուր քու եղբայրդ Ահարոնը՝ իր որդիներուն հետ՝ Իսրայէլի որդիներուն մէջէն, որպէս զի ինձի քահանայութիւն ընեն. Ահարոնը եւ իր որդիները՝ Նաֆաթը ու Աբիուղը, Եղիազարը ու Իթամարը» (Ելք 28.1):

Այդ տղամարդիկը զատուեցան եւ մարզուեցան՝ Տիրոջ ծառայելու եւ ժողովուրդին համար խրամատին մէջ կայնելու համար: Անոնց արտօնութիւն տրուած էր Իր ներկայութեան մօտենալու: Անոնց պաշտամունքի պարտականութիւնները եւ սահմանները նկարագրուեցան

եւ յատուկ թելադրութիւններով Աստուծմէ՝ Մովսէսին փոխանցուեցան: Մարզուելէ ետք անոնք օծուեցան, յետոյ Աստուծոյ ներկայութիւնը լեցուց վկայութեան խորանը եւ անոնց ծառայութիւնը սկսաւ:

Բայց անոնցմէ երկուքին համար աստիկա կարճ տեւեց. նոյիսկ վկայութեան խորանին մէջ Տիրոջ փառքին երեւնալէն ետք: Կարճ ժամանակ ետք.

«Ահարոնին որդիները՝ Նադաբ ու Աբիուդ՝ ամէն մէկը իր բուրվառը առաւ ու անոր մէջ կրակ դրին եւ վրան խունկ դրին ու Տէրոջը առջեւ *անսուրբ* կրակ մատուցանեցին, որ ինք պատուիրած չէր անոնց» (Ղեւտացուց 10.1, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Նկատի առէք, Նադաբը եւ Աբիուդը Տէրոջը առջեւ անսուրբ կրակ մատուցանեցին: Անգլերէն «Ուեպսթըր» Բառարանը «*անսուրբ*» բառը հետեւեալ ձեւով կը սահմանէ՝ «Սուրբ բաներու հանդէպ անարգանք կամ արհամարհանք ցոյց տալ. անարգալից»: Կը նշանակէ՝ Աստուծոյ կողմէ սուրբ կոչուած բաներուն հետ այնպէս վարուիլ, որ կարծէք ատոնք սովորական բաներ ըլլային: Այս երկու տղամարդիկը առին բուրվառները, որոնք Տիրոջ պաշտամունքին համար յատկացուած էին, եւ զանոնք լեցուցին իրենց ընտրած կրակով եւ խունկով, եւ ոչ թէ Աստուծոյ կողմէ պատուիրուած ընծայով: Անոնք սուրբ բաներուն հետ անփոյթ ձեւով վարուեցան եւ աստիկա պատճառ դարձաւ անհնազանդութեան:

Անոնք Տիրոջ ներկայութեան մօտեցան իրենց հետ ունենալով անարգալից, անընդունելի ընծայ մը, քանի որ սուրբ բանը սովորական համարեցին: Տեսէք ինչ պատահեցաւ.

«Տէրոջը առջեւէն կրակ ելաւ ու սպառեց զանոնք եւ Տէրոջը առջեւ մեռան» (Ղեւտացուց 10.2):

Այդ երկու տղամարդիկը անմիջապէս դատուեցան իրենց անարգանքին համար եւ անմիջապէս սպաննուեցան: Այս անարգանքը տեղի ունեցաւ ինքնին Աստուծոյ ներկայութեան



եւ թէեւ անոնք քահանայ էին, բայց ատիկա զերծ չէր պահեր զիրենք զԱստուած պատուելէն: Անոնք մեղանչեցին, քանի որ սուրբ Աստուծոյ մօտեցան կարծէք Ան սովորական մէկը ըլլար: Աստուծոյ ներկայութիւնը իրենց համար սովորական դարձած էր: Լսենք այն խօսքերը, որ Մովսէս ըսաւ անոնց դատապարտութենէն անմիջապէս ետք եւ նկատի առէք «*Ինծի մօտեցողներուն*» բառերը.

«Այն ատեն Մովսէս ըսաւ Ահարոնին. «Տէրը այսպէս խօսեցաւ, ըսելով. *‘Ինծի մօտեցողներուն* մէջ սուրբ պիտի սեպուիմ ու բոլոր ժողովուրդին առջեւ փառաւորուիմ»» եւ Ահարոն լուռ կեցաւ» (Ղեւտացուց 10.3, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Ասիկա թէ՛ յաիտենական եւ թէ՛ տիեզերական հրաման մըն է: Աստուած կ’ըսէ, որ ոչ ոք կրնայ *Իրեն մօտենալ* զինք թեթեւի առնելով կամ զինք սովորական մէկը համարելով: Ան պէտք է սուրբ համարուի եւ Իր ներկայութեան մէջ բոլոր գտնուողներուն կողմէ յարգուի:

Տէրը յստակօրէն ըսած էր, որ անարգալից վերաբերումը չի կրնար Իր ներկայութեան ապրիլ, բայց Նադաբն ու Աբիդը չզգուշացան: Այսօր նոյնն է պարագան. Անիկա նոյն սուրբ Աստուածն է: Չենք կրնար ակնկալել, որ մեզի թոյլատրուի Իր ներկայութեան մէջ մտնել անարգական վերաբերումով:

Չկան յատուկ բացառութիւններ ընտանեկան կապերու պատճառով: Այս երկու քահանաները Մովսէսին եղբօրորդիներն էին ինչպէս նաեւ Ահարոնին որդիները: Բայց երկուքն ալ շատ լաւ գիտէին, որ կարելի չէ Աստուծոյ դատաստանը հարցականի տակ առնել, քանի որ միակ արդարը Ինքն է: Իրականութեան մէջ Մովսէսը զգուշացուց Ահարոնը եւ երկու ողջ մնացած որդիները, որ նոյնիսկ չսզան անոնց պատիժին համար, որպէսզի իրենք ալ չմտնին: Ատիկա ատելի պիտի անպատուէր Տէրը, ուստի Նադաբի եւ Աբիդի մարմինները բանակէն դուրս տարուեցան եւ թաղուեցան:

Այս երկու երիտասարդները լուրջի չառին Աստուծոյ որոշակի թելադրանքները: Անոնք անարգանքով եկան

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

Եւ Աստուծոյ վախը չունէին եւ այս սիրտի վիճակները անհնազանդ արարքներ յառաջ բերին: Կը տեսնենք, որ մեղքին արմատը Աստուծոյ վախին բացակայութիւնն է:

### ԱՍՏՈՒԾՄԷ ՎԱԽՆԱԼԸ ԸՆԴԴԷՄ ԱՍՏՈՒԾՈՅ ՎԱԽԻՆ

Երբ Աստուած Իսրայէլի որդիներուն երեցաւ Սինա լեռան վրայ, անոնք չկրցան կենալ Անոր ներկայութեան մէջ: Պատճառը՝ անոնք Աստուծոյ վախը չունէին. քանի որ երբ անոնք հեռացան Անոր ներկայութենէն, Մովսէս անոնք ըսաւ.

«Մի՛ վախնաք, վասնզի Աստուած ձեզ փորձելու եկաւ, այնպէս որ անոր վախը ձեր առջեւ ըլլայ, որպէս զի չմեղանչէք» (Ելք 20.20):

Մովսէս ըսաւ. «Մի՛ վախնաք», քանի որ Աստուած եկաւ տեսնելու եթէ Անոր «վախը ձեր առջեւն է»: Այնպէս կը թուի, որ կարծէք հակասութիւն է, բայց այդպէս չէ: Մովսէս Աստուծմէ վախնալը կը զատորոշէր Տիրոջ վախէն: Տարբերութիւնը հսկայական է: Աստուծմէ վախսցող անձը պահելիք բան մը ունի. ան չ'ուզեր մօտենալ, քանի որ Աստուծոյ ներկայութեան մաքուր լոյսը պիտի բացայայտէ իր պահած բանը: Պօղոս մեզի կ'ըսէ. «Բայց բոլոր այդ ծածուկ արարքները Քրիստոսի լոյսով կը յայտնուին եւ կը յանդիմանուին» (Եփեսացիներուն 5.13):

Աստուած չ'ուզեր, որ մենք վախնանք Իրմէ, այլ՝ Իր վախը ունենանք: Պօղոս կը գրէ. «[...] Աստուած մեզի երկչոտութեան հոգի չտուաւ [...]» (Բ.Տիմոթէոսի 1.7), եւ Յովհաննէս կը գրէ. «Սիրոյ մէջ վախ չկայ, հապա կատարեալ սէրը վախը մէկդի կը վանէ. վասնզի վախը տանջանքի ենթակայ է: Ուստի ան որ կը վախնայ, սիրոյ մէջ կատարեալ չէ» (Առաջին Յովհաննէսի 4.18): Այս նախադասութիւններով այս մարդիկը կը խօսին վախի հոգիին մասին, եւ ոչ թէ Աստուծոյ վախին. քանի որ Նոր Կտակարանը գրողները նոյնպէս մեզի կ'ըսեն՝ «[...] Ահով ու դողով անձերնուդ փրկութիւնը գործեցէք» (Փիլիպպեցիներուն 2.12). եւ դարձեալ Պօղոս մեզի կ'ըսէ. «[...] Աստուած պաշտենք հաճելի

կերպով, ակնածութեամբ եւ բարեպաշտութեամբ. վասնզի մեր Աստուածը մաշող կրակ է» (Եբրայեցիներուն 12.28-29): Պետրոս տակաւին ասելի ուղղակի եւ յայտնապէս կը խօսի երբ կը գրէ. «[...] Գրուած է. ‘Սուրբ եղէք, քանզի ես սուրբ եմ’: Եթէ Հայր կը կոչէք զանիկա՝ որ առանց աշառութեան կը դատէ ամէն մէկը իր գործին համեմատ, ուրեմն ձեր պանդխտութեան ժամանակը վախով անցուցէք» (Առաջին Պետրոսի 1.16-17): Այս նախադասութիւնները կարդալով՝ չէք կրնար ժխտել, որ սուրբ վախը Նոր Կտակարանի Քրիստոնէութեան կենսական մէկ մասն է:

Նկատի առէք, որ երբ Աստուծոյ ներկայութիւնը եկաւ, Մովսէսը ժողովուրդին ըսաւ. «[...] Այնպէս որ անոր վախը ձեր առջեւ ըլլայ, որպէս զի չմեղանչէք»: Աստուծոյ սէրը չէ, որ մեզ մեղքէն հեռու կը պահէ, այլ՝ Տիրոջ վախը: Պօղոս կ’ըսէ. «[...] Ահով ու դողով անձերնուդ փրկութիւնը գործեցէք», եւ ոչ թէ «սիրով եւ ազնուութեամբ»: Ուրիշ նամակի մը մէջ ան կը յորդորէ ըսելով՝ քանի որ մենք խոստում ունինք, որ Աստուծոյ ներկայութիւնը մեր մէջ պիտի բնակի, «Ուստի հեռու մնանք մարմնական եւ հոգեկան ամէն պղծութենէ, մենք մեզ կատարելապէս մաքրենք՝ Աստուծոյ երկիւղովը ապրելով» (Բ. Կորնթացիներուն 7.1): Նկատի առէք, ան չ’ըսեր. «Աստուծոյ սիրովը»:

Երբեք չեմ մոռնար երբ այցելեցի հանրաձայնօթ ծառայողի մը, որ խարդախութեան համար բանտը կը գտնուէր: Ես հարցուցի. «Ե՞րբ սկսաւ Յիսուսի հանդէպ սիրահարութիւնդ մարիլ»:

Ինծի նայեցաւ եւ առանց վարանելու ըսաւ. «Այդպէս բան չեղաւ»:

Ես զարմացած պատասխանեցի . «Բայց ի՞նչ կրնաս ըսել այդ խարդախութեան եւ շնութեան մասին»: Ըսաւ. «Ճո՛ն, այդ ամբողջ ընթացքին կը սիրէի Տէրը, բայց Անոր վախը չունէի»: Եւ յետոյ ըսաւ բան մը, որ զիս յուզեց. «Միլիոնաւոր ամերիկացիներ կան ինծի պէս: Անոնք Յիսուսը իրենց Փրկիչը կը կոչեն եւ կը սիրեն զինք, բայց Անոր վախը չունին իբրեւ իրենց գերագոյն Տէրը»:

Այդ պահուն լոյս մը վառեցաւ իմ մէջս: Անդրադարձայ, որ մենք կրնանք սիրել «Յիսուս»-ի մէկ պատկերը, որ

մեր երեւակայութեամբ եւ հասկացողութեամբ ստեղծած ենք, բայց ատիկա իրական Յիսուսը չէ. որովհետեւ Սուրբ Գիրքը մեզի կ'ըսէ, որ զԱստուած մտերմօրէն ճանչնալու սկիզբը կամ սկզբնակէտը Տիրոջ վախն է (Տէն Առակաց 1.7, 2.5): Անդրադարձայ, որ այս մարդը կը սիրէր Յիսուսի խեղաթիրուած մէկ պատկերը:

«ԵՐԱՆԻ ԹԷ ԻՄ ՎԱԽՍ ՈՒՆԵՆԱՅԻՆ»

Մովսէս շատ յստակօրէն կ'ըսէ, թէ Տիրոջ վախն է, որ մեզ մեղքէն հեռու կը պահէ, եւ մեղքը մեզ կը բաժնէ Աստուծոյ հետ մտերմութիւն ունենալէն: Տէրը Իր ուխտի ժողովուրդին ըսաւ. «[...] Ձեր ու ձեր Աստուծոյն միջեւ բաժանում ձգողը ձեր անօրէնութիւնները եղան: Ձեր մեղքերը անոր երեսը ձեզմէ ծածկեցին [...] (Եսայի 59.2): Նկատի՛ առէք, Ան կ'ըսէ, որ մեր մեղքերը մեզ Իրմէ բաժնեցին, եւ ոչ թէ զի՛նք մեզմէ: Ան կը խօսի Իր սեփական ժողովուրդին մասին երբ այս յայտարարութիւնը կ'ընէ, եւ ոչ թէ հեթանոսներուն մասին: Մենք ենք, որ մենք զմեզ Աստուծոյ մտերմութենէն կը բաժնենք, եւ ասոր արմատը սուրբ վախին բացակայութիւնն է:

Ի տարբերութիւն Աստուծմէ *վախցող* մարդուն, Աստուծոյ վախը ունեցող մարդը պահելիք բան չունի: Ան գիտէ, որ իր կեանքը Տիրոջ առջեւ բաց գիրք մըն է: Ան Աստուծոյ փափաքները ամէն բանէ վեր կը դասէ: Ատիկա իր բարեկամներուն, ընտանիքին կամ իր իսկ փափաքներէն աւելի ծանր կը կշռէ: Ան կ'անդրադառնայ, որ ոչինչ կրնայ աւելի բաւարարուածութիւն պատճառել մեզի քան Աստուծոյ հնազանդիլը: Ան ինքզինք կ'ուրանայ, կը վերցնէ խաչը, եւ Յիսուսի կը հետեւի: Ան Աստուծոյ համար կ'ապրի:

Ասիկա կը նկարագրէ Մովսէսին կեանքը: Ան Աստուծոյ վախը ունէր մինչ Իսրայէլ չունէր: Անոնք իրենց փափաքները, պէտքերը եւ հանգիստը աւելի բարձր գնահատեցին, քան Աստուծոյ փափաքները: Անոնք չվստահեցան Անոր, թէ՛ւ բազմաթիւ անգամներ բարձրաձայն ըսին, թէ կը վստահին Իրեն: Անոնք Անոր Խօսքը, փափաքները կամ հրամանները ամէն բանէ վեր չպատուեցին եւ քանի որ Անոր վախը չունէին, երբեք իրապէս զի՛նք չսիրեցին: Ինչո՞ւ: Անոնք երբեք Անոր

իրական յայտնութեան փորձառութիւնը չունեցան: Ասոր համար անոնք Իր ներկայութենէն ետ քաշուեցան: Հարցեր կային, զորս Անոր ներկայութեան լոյսէն պէտք է ծածկէին: Անոնք գիտէին, որ պիտի գար տեղ մը, ուր այդ լոյսը պիտի ստիպէր, որ այդ հարցերը լուծէին եւ ընտրէին, որ որո՞ւ պիտի ծառայեն:

Մինչ Իսրայէլ ետ կը քաշուէր, Մովսէս կը մօտենար: Հիմա ան պէտք է Տիրոջ ըսէր, որ այդ նոյն մարդիկը, որ Ինք այդքան հզօր եւ հիանալի կերպով գերութենէն ազատեր եւ Իրեն բերեր էր, չէին ուզեր աւելի մօտենալ: Մովսէսը կը սարսափէր այդ պահէն, բայց Աստուած արդէն գիտէր, եւ Իր պատասխանով զարմացուց Մովսէսը.

«[...] Այս ժողովուրդին քեզի ըսած խօսքերը լսեցի. անոնց ամէն ըսածը շիտակ է» (Բ.Օրինաց 5.28):

Կրնամ պատկերացնել Մովսէսին դէմքին վրայ երեւցած ցնցումը: Ոչ միայն ան անտեղեակ էր, որ Աստուած գիտէր անոնց խօսքերը (զարմանալի չէ՞, որ մենք կը մոռնանք, որ Ան ամէն բան գիտէ), այլեւ ինչքան ցնցիչ էր յայտնաբերելը, որ Իսրայէլի որդիներուն ըսածը ի վերջոյ շիտակ էր: Յետոյ Մովսէսը առանց մտածելու պատասխանեց. «Ինչո՞ւ անոնք չեն կրնար Քեզի մօտենալ»:

Կրնաք լսել վիշտը Աստուծոյ ծայնին մէջ երբ Ան կը բացատրէ, որ ինչո՞ւ ժողովուրդը չի կրնար *մօտենալ*:

«Երանի՜ թէ անոնց սիրտն ալ այնպէս ըլլար, որ ինձմէ վախնալով միշտ իմ բոլոր պատուիրանքներս պահէին [...]» (Բ.Օրինաց 5.29):

Աստուած Իր պատասխանով երկու բան շատ յստակ դարձուց: Առաջին՝ անկարելի է Աստուծոյ մօտենալ եթէ սուրբ վախ չկայ. եւ երկրորդ՝ այս վախին ապացոյցը Անոր պատուիրաններուն հնազանդիլն է: Իսրայէլի որդիները գիտէին ինչպէս համարձակութեամբ խօսիլ եւ հնազանդ երեւիլ, բայց Աստուծոյ վախը չկար իրենց սիրտերուն մէջ: Ատիկա միշտ կը սկսի մեր սիրտին մէջ եւ մեր հնազանդութեան միջոցով կը դրսեւորուի:

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

Այն ատեն Տէրը Հին Կտակարանի ամէնէն ողբերգական յայտարարութիւններէն մէկը կ'ընէ: Ան այս պատգամը Մովսէսի միջոցով Իր ժողովուրդին կը փոխանցէ.

«Գնա՛ անոնց ըսէ. 'Դուք ձեր վրանները դարձէք՝»  
(Բ.Օրինաց 5.30):

Որքան կոտորած պէտք է ըլլար Աստուծոյ սիրտը, եւ որքան ծանր պէտք է ըլլար Մովսէսին սիրտը երբ ան վերադարձաւ: Նոյնիսկ հիմա իմ սիրտս անոր ծանրութիւնը կը զգայ: Աստուած զանոնք Եգիպտոսէն հանեց մէկ պատճառով՝ զանոնք Իր քովը բերելու համար, եւ անոնցմէ վրիպեցաւ ատիկա (Տէս Ելք 19.4): Ասիկա էր Իր մեծ ազատագրութեան աստուածային նպատակը: Ատով հանդերձ երբ առիթը ընծայուեցաւ Ինքզինք յայտնելու, անոնք ետ քաշուեցան. անոնք չկրցան կանգնիլ Իր ներկայութեան մէջ, քանի որ Իր վախը չունէին: Անոնք Իր ներկայութենէն եւ ձայնէն բաժնուած իրենց վրանները վերադարձան: Ան մտերմութիւն առաջարկեց իրենց, բայց անոնք իրենց ընտրութեամբ չընդունեցին ատիկա:

## ՏԻՐՈՋ ՀԵՏ ԲԱՐԵԿԱՄՈՒԹԻՒՆ

Միւս կողմէն լսենք այն խօսքերը, որ Աստուած Մովսէսին ըսաւ ժողովուրդին ըսելէն ետք, որ իրենց վրանները վերադառնան.

«Բայց դուն հոս ինձի հետ կեցիր [...] [եւ ես] քեզի ըսեմ [...]:» (Բ.Օրինաց 5.31):

Ուան: «Դուն հոս ինձի հետ կեցիր [...] [եւ ես] քեզի ըսեմ [...]:» Ինչ սքանչելի: Ինչ մեծ ուրախութիւն: Ինչ աներեւակայելի առանձնաշնորհում: Մովսէսը հրաւիրուած է կենալու եւ Աստուծոյ սիրտին ձայնը լսելու: Ամբողջ տիեզերքին մէջ աւելի լաւ բան չկայ: Մնալ Անոր ներկայութեան մէջ, որ անսահման է Իր սիրոյն, իմաստութեան եւ զօրութեան մէջ: Կենալ Անոր մօտ, զոր ամբողջ երկինքը կը պաշտէ եւ կը փափաքի: Մովսէս այս հրաւերը ստացաւ:

## ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Մովսէսը ընտրեց Տիրոջ վախը եւ հետեւաբար մտերիմ յարաբերութիւն ունեցաւ Անոր հետ: Մենք ասոր ապացոյցը կը տեսնենք սաղմոսողին խօսքերուն մէջ. «Անիկա իր ճամբաները Մովսէսին ճանչցուց ու իր գործերը՝ Իսրայէլի որդիներուն» (Սաղմոս 103.7): Մովսէսը յաճախ գիտէր Աստուծոյ ընելիքները նոյնիսկ նախքան Անոր ընելը, որովհետեւ Տէրը Իր սիրտը կը բաժնեկցէր Մովսէսին հետ երբ ան կը կենար այն տեղին մօտ, ուր ժողովուրդը չէր կրնար գալ:

Իսրայէլ զԱստուած կը ճանչնար իրենց աղօթքներուն տուած Իր պատասխաններով: Անոնք չէին գիտեր Անոր շարժառիթը, փափաքները, ծրագիրները կամ Անոր սիրտին մէջ գտնուած որեւէ ուրիշ խոր բան: Անոնք գիտէին Անոր գործերը, բայց երբեք չէին գիտեր, թէ ինչո՞ւ Ան կ'ընէր ասոյն: Մովսէս զինք կը ճանչնար գաղտնի տեղը խօսուածներուն միջոցով: Իմ նախասիրած համարներէս մէկն է.

«Տէրոջը բարեկամութիւնը իրմէ վախցողներուն հետ է ու իր ուխտը անոնց կը սորվեցնէ» (Սաղմոս 25.14):

Առանց պարունակը փոխելու կրնանք այս համարը այսպէս ըսել. «Տէրը Իր սիրտին գաղտնիքները կը վստահի անոնց, որոնք Իր վախը ունին, եւ Իր Ուխտին ճամբաները ցոյց պիտի տայ անոնց»: Մենք բոլորս գաղտնիքներ ունինք (բոլորը վատ չեն), բայց մենք զանոնք չենք բաժնեկցիր ծանօթներու հետ, հապա զանոնք կը վստահինք մօտիկ բարեկամներու, անոնց, որոնց հետ մտերիմ ենք եւ որոնց կը վստահինք: Ասոր ետին արդարացի պատճառ մը կայ՝ մենք գիտենք, որ անոնք երբեք պիտի չօգտագործեն մեր սիրտին պատկանող այդ թանկագին բաները՝ մեզ վիրաւորելու կամ չարաշահելու համար: Մենք գիտենք, որ անոնք երբեք սխալ պիտի չմեկնաբանեն մեր ըսածները, կամ իրենց շահին համար պիտի չխեղաթիրեն զանոնք: Անոնք գիտեն մեր սիրտը եւ մեր օգուտը կը փնտռեն:

Նոյնն է պարագան Աստուծոյ համար. Ան Իր գաղտնիքները չ'ըսեր անոնց, որոնք իրենց սեփական հաճոյքներով եւ բարօրութեամբ մտահոգուած են:

Ան Իր գաղտնիքները կը բաժնեկցի անոնց հետ, որոնք Իր սիրտը ունին եւ իրենց կեանքը նուիրած են. այդպիսիները Ան բարեկամ կը կոչէ: Աստուածաշունչի անգլերէն տարբերակներէն մէկը ատիկա կը հաստատէ յայտարարելով՝ «Տիրոջ հետ բարեկամութիւնը վերապահուած է անոնց, որոնք Իր վախը ունին, անոնց հետ Ան կը բաժնեկցի Իր ուխտին գաղտնիքները» (Սաղմոս 25.14, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն):

### ԱՐԲԱՀԱՄ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐԵԿԱՄԸ

Հին Կտակարանին մէջ կայ մարդ մը, որ Աստուծոյ բարեկամը կը կոչուի. անոր անունը Աբրահամ է: Ինչո՞ւ ան Աստուծոյ բարեկամն էր: Ատոր պատասխանը կը գտնուի այն մեծագոյն փորձութեան մէջ, որ ան երբեւէ դիմագրաւեց: Ան քսանհինգ տարի սպասեց Աստուծոյ խոստումին՝ այն որդիին, որ իրեն եւ իր ամուլ կնոջ՝ Սառայէն ծնաւ: Երբ Սառայէն շատոնց պակասած էր կանանց օրէնքին մէջ ըլլալը, Աստուած այս որդին տուաւ եւ անոր անունը Իսահակ դրին, որ կը նշանակէ խնդուք: Այս երիտասարդը իրենց երեակայածէն անդին ուրախութիւն բերաւ իրենց տան:

Աստուած ուշադրութեամբ կը հետեւէր այս ընտանիքին երբ քնքուշ սէրը կը զօրանար Աբրահամին եւ անոր շատ սիրելի Իսահակին միջեւ: Փորձութեան ժամանակը եկաւ եւ Աստուած Աբրահամին ըսաւ. «Հիմա քու սիրած մէկ հատիկ որդիդ Իսահակը առ ու Մօրիայի երկիրը գնա եւ հոն զանիկա ողջակէզ ըրէ լեռներէն մէկուն վրայ, որ ես քեզի պիտի ցուցնեմ» (Ծննդոց 22.2, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Կրնա՞ք երեակայել Աբրահամին ցնցումը այս խնդրանքին վրայ: Ասիկա խոստացուած զաւակն էր. նոյնինքն այն զաւակը, որուն համար ան քսանհինգ տարի համբերութեամբ սպասած էր: Արդէն Իսմայէլը վնտուած էր. ոչինչ պիտի մնար իրեն: Ինչո՞ւ հիմա, երբ սիրոյ կապը շատ զօրաւոր էր: Ինչո՞ւ Աստուած այդքան երկար սպասեց: Ինչո՞ւ ատիկա չխնդրեց երբ ան տակաւին մանուկ էր: Բազմաթիւ Աստուածաշունչ ուսումնասիրողներ կը հաւատան, որ այն ատեն Իսահակը երեսուներեք տարեկան էր:



Կրնա՞ք երեւակայել այդ գիշերը: Հաւանաբար կռիւ մը ծագեցաւ Աբրահամին հոգիին մէջ: Ինչպէս Աստուած ատիկա կրնար պահանջել իրմէ: Ամէն բան կ'ընթանար այնպէս ինչպէս նախատեսուած էր: Օրին մէկը Իսահակը պիտի ամուսնանար, եւ անոր սերունդները պիտի ծնէին այն ազգերը եւ թագաւորները, զորս Աստուած խոստացած էր: Ինչպէս Աստուած կրնար այդքան կանուխ պահանջել անոր կեանքը: Կրնա՞ք լսել անոր հոգիին դէմ պատերազմող հարցումները. *Սկիզբէն Ան ինչո՞ւ ինծի Իսահակը տուաւ: Ան ինչո՞ւ զայն ինծի տուաւ եթէ արդէն պիտի առնէր զինք: Արդեօք Ան Իսահակը կը սիրէ՞ ինչպէս ես: Ինչո՞ւ անոր փոխարէն իմ կեանքս չ'առնէր:*

Սակայն Աբրահամին մէջ կար բան մը, որ մերժեց այդ բոլոր հարցումները եւ խորհուրդը. Տիրոջ հանդէպ անոր վախը: Աստուած խօսեցաւ եւ ինք պիտի հնազանդէր: Կը կարդանք. «Աբրահամ *առտուն կանուխ* ելաւ ու իր իշուն համետը դրաւ եւ իրեն հետ երկու ծառայ ու իր Իսահակ որդին առաւ եւ ողջակէզի համար փայտ ճեղքեց ու ելաւ գնաց այն տեղը, որ Աստուած իրեն ըսաւ» (Ծննդոց 22.3, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Նկատի առէք, «*Առտուն կանուխ*» բառերը: Երբեք լսած էք մէկը կ'ըսէ. «Վերջին քանի մը ամիսներուն Աստուած այս բանին մասին կը խօսի ինծի, բայց տակաւին չըրի ատիկա»: Ասիկա Տիրոջ վախին բացակայութիւնը ցոյց կու տայ:

Տիրոջ վախը ունենալ կը նշանակէ Անոր Խօսքէն դողալ: Ատիկա կը նշանակէ, թէ մենք կը հնազանդինք նոյնիսկ եթէ հնազանդելու պատճառը կամ անոր օգուտը չենք տեսներ: Կը նշանակէ հնազանդիլ նոյնիսկ երբ չենք հասկնար: Հնազանդիլ նոյնիսկ եթէ ատիկա մեզի ցա՛ւ կը պատճառէ: Իբրեւ Աւետարանին պատգամաւորները, մենք Քրիստոսի մարմնին մեծ վնաս հասցուցած ենք: Շատ յաճախ մենք հնազանդութեան մօտեցում կը զարգացնենք միայն երբ ատիկա մեզի օգուտ պիտի բերէ: Այսպիսի բաներ կ'ըսենք. «Եթէ տաս, Աստուած պիտի ...», կամ «Եթէ աղօթես, Աստուած պիտի ...», կամ «Եթէ հնազանդիս, Աստուած պիտի ...»: Կարծես այս նամակը կը փոխանցես. «Յիսուսի եկուր, որպէսզի ստանաս»: Արդեօք ես կը հաւատամ, որ Ան

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

Կ'օրհնէ: Բացարձակապէս: Սակայն Իրեն ծառայելու մեր շարժառիթը երբեք օրհնութիւնները պէտք չէ ըլլան: Պէտք է ծառայենք Անոր ինքնութեան համար, եւ ոչ թէ մեզի համար Անոր կատարածներուն համար:

Աբրահամին հնազանդութիւնը անմիջական էր, երբ ան երեք օր ճամբորդեց դէպի այն լեռը, որ Աստուած իրեն ցոյց տուաւ: Ինչո՞ւ Աստուած անելի մօտ տեղ մը չընտրեց: Ինչո՞ւ երեք օրուան ճամբորդութիւն: Ես կը հաւատամ, որ Ան Աբրահամին ժամանակ տուաւ, որ լաւ մտածէ, նոյնիսկ ետ դառնայ: Սկիզբը Աստուծոյ ծայնը լսելով շարժիլը բան մըն է, իսկ զայն մինչեւ վերջ հասցնելը (կատարելը) բոլորովին տարբեր բան է: Հապա եթէ երեք օր ետք Իրմէ բան մը չլսէս, եւ հիմա կեցած լեռան կը նայիս, ուր պէտք է սպաննես ամենակարեւոր անձը եւ բանը քու կեանքիդ մէջ:

Այդուհանդերձ, Աբրահամը լեռան գագաթը ելաւ, զոհասեղան մը շինեց, Իսահակը կապեց եւ դանակը բարձրացուց: Յանկարծ Տիրոջ հրեշտակը Աբրահամը կանչեց ու ըսաւ.

«Տղուն ձեռք մի՛ դպցներ եւ անոր բան մը մի՛ ըներ. քանզի հիմա գիտցայ թէ Աստուծմէ կը վախնաս. որովհետեւ քու մէկ հատիկ որդիդ ինձմէ չխնայեցիր» (Ծննդոց 22.12, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Աստուած ինչպէս գիտցաւ, որ Աբրահամը Իրմէ կը վախնար: Որովհետեւ անիկա հնազանդեցաւ նոյնիսկ երբ չէր հասկնար. նոյնիսկ երբ ատիկա իրեն ցաւ կը պատճառէր. նոյնիսկ երբ ատիկա իր սեփական օգուտին համար չէր: Աստուած կը դիտէր երբ Աբրահամը Տիրոջ փափաքները ամէն բանէ վեր կը դնէր: Այն ատեն Աստուած գիտցաւ. «Ահա մարդ մը, որուն կրնամ Իմ Անձս յայտնել եւ Իմ սիրտիս մէջ գտնուածները բաժնեկցիլ անոր հետ»:

## ԱՍՏՈՒԾՈՅ ՅԱՅՏՆՈՒԱԾ ԵՐԵՍՆԵՐԷՆ ՄԷԿԸ

Ատկէ անմիջապէս ետք Աբրահամ իր աչքերը վեր վերցուց ու նայեցաւ եւ ահա իր ետեւը խիտ մացառներուն մէջ եղջիրներէն բռնուած խոյ մը կար եւ իր սիրտէն աղաղակեց. «Եհովայիրէ՛» (որ կը նշանակէ՝ «Տէրը պիտի ապահովէ»):

## ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐԵԿԱՄԼԵՐԸ

Ան առաջինն է, որ ճաչցաւ զԱստուած՝ իբրեւ Եհովայիբէն: Աստուած ցոյց տուաւ Իր այս երեսը, որ ասկէ առաջ ոչ ոք ճանչցած էր՝ ի պատասխան Աբրահամին ակնածանքին եւ հնազանդութեան:

Թերեւս զիս կը ճանչնաք իբրեւ «Ճոն Պըվիր՝ գրողը»: Ձեզմէ ոմանք թերեւս զիս կը ճանչնան որպէս «Ճոն Պըվիր՝ պատգամաբերը»: Բայց կայ ուրիշ անձ մը, որուն անունը Լիսա է, եւ ան զիս կը ճանչնայ իբրեւ «Ճոն՝ ամուսինը»: Ան իմ մտերիմ բարեկամս է, ինչպէս նաեւ իմ կինս եւ ես անոր հետ կը բաժնեկցիմ գաղտնիքներ, զորս ուրիշ ոչ ոք գիտէ: Կան որդիներ, որոնք զիս կը ճանչնան որպէս «Ճոն՝ հայրիկը»: Ես անոնց հետ կը յարաբերիմ այնպիսի ձեւերով, որ միայն հայր մը եւ իր որդիները կը յարաբերին: Դուք ալ այդպիսի մարդիկ ունիք ձեր կեանքին մէջ: Նոյնն է պարագան Աստուծոյ համար:

Աստուած Աբրահամին հետ բաժնեկցեցաւ բաներ, զորս ուրիշ ոչ ոք գիտէր: Տէրը նոյնիսկ Իր ծրագիրները բաժնեկցեցաւ Աբրահամին հետ եւ անոր արտօնեց, որ իր կարծիքներով միջամտէ: Անոնք հարցերը միասին կը քննարկէին: Այդպիսի կացութիւն մըն էր Սողոմոն եւ Գոմորի պարագան: Աստուած ըսաւ. «Միթէ Աբրահամէն պիտի պահեմ ինչ որ պիտի ընեմ» (Ծննդոց 18.17): Տէրը Աբրահամի մօտեցաւ՝ այդ կացութիւնը քննարկելու համար եւ Աստուած արժեւորեց եւ մտիկ ըրաւ իր խօսքերուն: Իրենց խօսակցութեան հիման վրայ Սողոմոն պիտի խնայուէր եթէ տասը արդար մարդ գտնուէր հոն: Բայց եւ այնպէս նոյնիսկ տասը արդար մարդ չգտնուեցան:

## ԱՍՏՈՒԾՈՅ ԾՐԱԳԻՐԷՆ ԱՆՏԵՂԵԱԿ

Զարմանալի է, որ Աբրահամի եղբօրորդին՝ Ղովտը, զոր Աստուածաշունչը «արդար» կը կոչէ (տես Երկրորդ Պետրոսի 2.7) շատ տարբեր էր: Ղովտ մարմնաւոր էր եւ Աստուծոյ վախը չունէր: Անոր պատմութիւնը բոլորովին տարբեր է: Ան Աբրահամի հետ սկսաւ, բայց երբ մարմինը հոգիին հետ կը բնակի, վերջ ի վերջոյ փախումներ պիտի ըլլան: Աբրահամը, աւելի հետաքրքրուած ըլլալով

Աստուծոյ վերաբերող բաներով, քան այս աշխարհին առաջարկածներով, ընտրութիւն մը կու տայ Ղովտին: Աբրահամ աւելցուքները պիտի առնէր, բայց այս երկու տղամարդիկը չէին գիտեր, որ ասիկա վերջ ի վերջոյ ամէնէն պտղատուն պիտի ըլլար, քանի որ կաթ ու մեղր բխող երկիրը պիտի ըլլար:

Կը կարդանք. «Ղովտ աչքերը վեր վերցուց ու Յորդանանի ամէն կողմը նայեցաւ [երկար նայուածք մը նետեց] եւ տեսաւ, որ ամէն տեղ ջրարբի էր [...]» (Ծննդոց 13.10): Այդ ժամանակ ասիկա ամէնէն ցանկալի եւ պտղատու երկիրն էր: Ինչո՞ւ երկար նայուածք: Ան գիտէր, որ Սողոմ եւ Գոմոր քաղաքները չարութեամբ լեցուն էին: Այդ երկար նայուածքը հաւանաբար կը փորձէր գտնել միջոց մը՝ վայելելու անոնց առատութիւնը՝ առանց անոնց ազդեցութեան տակ մտնելու: Ան որոշեց իր վրանը Սողոմի դաշտերուն մէջ բանալ, փոխանակ քաղաքին մէջ բնակէր: Այս ձեւով ան կրնար հեռու մնալ անոր չարութեան կեդրոնէն, բայց նոյն ատեն այդ շրջանին առատութիւնը վայելել: Կը կարդանք. «Ղովտ [...] իր վրանը Սողոմի քով բացաւ» (Ծննդոց 13.12): Սակայն անկախ անկէ, թէ որքան լաւ կը ծրագրէք հեռու մնալ մեղքէն, եթէ Աստուծոյ վախը չունիք, վերջ ի վերջոյ անոր պիտի հակիք: Ասիկա էր պարագան Ղովտին. ան սկսաւ դաշտերուն մէջ վրանով մը, բայց վեց գլուխ ետք ան ունեցաւ տուն մը Սողոմի դռներէն ներս (Տեն Ծննդոց 19.2):

Սողոմը կը ծաղկէր եւ կը բարգաւաճէր: Անոնք բնաւ գաղափար չունէին, որ քանի մը ժամ ետք երկրի երեսէն պիտի ջնջուէին: Ասիկա պէտք չէ զարմացնէ մեզ: Սակայն մտահոգիչը այն է, որ Ղովտը նոյնպէս անտեղեակ էր: Աստուած հրեշտակներ դրկեց՝ զինք զգուշացնելու համար, ողորմութեան պատգամաբերներ: Ի տարբերութիւն Աբրահամի, որ Աստուծոյ վախը ունէր եւ Անոր ներքին խորհուրդը գիտէր նոյնիսկ նախքան անոր վերջնականացումը, մինչ Ղովտը նոյնքան անտեղեակ էր, որքան Սողոմի մեղաւորները: Աբրահամ Աստուծոյ բարեկամն է, որովհետեւ Անոր վախը ունի:

ԻՐԱԿԱՐՆ ՅԻՍՈՒՍԸ

Մովսէսի եւ Աբրահամի կեանքերը Տիրոջ վախին լոյսին տակ քննելու ընթացքին, մենք ատելի կ'ընդարձակենք սահմանումը: Տիրոջ վախը կը ներառէ սիրել այն, ինչ որ Աստուած կը սիրէ եւ ատել այն, ինչ որ Ինք կ'ատէ: Ինչ որ կարելի է Իրեն համար կարելի կը դառնայ մեզի համար, եւ ինչ որ շատ կարելի է Իրեն համար մեզի համար ալ շատ կարելի է չ'ըլլար: Իր առաջնահերթութիւնները եւ փափաքները մեր սեփականը կ'ընենք: Տիրոջ վախը ունենալուն դրսեւորումը Աստուծոյ փափաքներուն եւ կամքին հանդէպ աներեւ հնազանդութիւնն է:

Սուրբ Գիրքին համաձայն, երբ Տիրոջ վախին կը յարինք, Աստուած ատելի կը մօտենայ մեզի: Երբ Անոր հետ մտերիմ հանդիպում կ'ունենանք, Անոր հանդէպ մեր ունեցած սիրոյն սաստկութիւնը կ'աւելնայ: Կը սիրենք այդ յայտնուած ճշմարիտ եւ ողջ Աստուածը, եւ ոչ պարզապէս Անոր գաղափարը: Առանց Տիրոջ խոր եւ մնայուն վախին, մենք պարզապէս կը դաւանինք, որ կը սիրենք զինք առանց ճշմարիտապէս եւ մտերմաբար ճանչնալու զինք: Մենք Իր մասին տեղեկութիւն ունինք, բայց զինք չենք ճանչնար. հետեւաբար մեր սէրը ուղղուած է մեր երեւակայութեան մէջ ձեւաւորուած «Յիսուս»-ի մէկ պատկերին, փոխանակ ուղղուի Անոր, որ Հօր աջ կողմը նստած է:

Ասիկա կարելի է բաղդատել Հոլիուուտի աստղերուն կամ մեծ մարզիկներու երկրպագուներուն իրենց հերոսներուն հանդէպ ունեցած նայուածքին հետ: Անոնք կը սիրեն այն կերպարը, որ մամուլը կը ներկայացնէ այս գերաստղներուն մասին հարցազրոյցներու եւ թերթի յօդուածներու միջոցով: Անոնց անունները տարածուած են ամերիկեան տուններու մէջ: Լսած եմ երկրպագուներու խօսքերը, կարծէք այս հռչակաւոր մարդիկը իրենց մտերիմ բարեկամները ըլլային: Տեսած եմ ինչպէս անոնց զգացումները կը գրաւուին այդ հռչակաւոր մարդոց անձնական կեանքով՝ կարծէք անոնք իրենց ընտանիքին մէկ անդամը ըլլային: Բայց եթէ անոնք անձամբ հանդիպին անոնց, կրնան իրական անձը շատ տարբեր գտնել գովազդուած կերպարէն: Հռչակաւոր

մարդոց եւ անոնց երկրպագուներուն միջեւ յարաբերութիւնը միակողմանի է: Եթէ անոնք հանդիպին, շատ քիչ հասարակաց կէտեր պիտի ունենան եւ նոյնիսկ ատելի քիչ բան խօսելու, քանի որ անոնք իրապէս զիրար չեն ճանչնար:

Ես այս երեւոյթը տեսած եմ նաեւ եկեղեցիին մէջ: Շատեր Տիրոջ մասին կը խօսին կարծէք Ան շատ մօտ է, բայց երբ անոնց խօսակցութիւնը կը լսես, այն տպատրութիւնը կ'ունենաս, որ անոնք կը կը խօսին Մէկու մը մասին, որուն մասին միայն տեղեկութիւն ունին՝ զինք չեն ճանչնար: Անոնք գիտեն այն, ինչ որ լսած են, որ մարդիկ կ'ըսեն, բայց ոչ Անոր ձայնը. գիտեն գործերը, բայց ոչ Անոր ճամբաները. այն, ինչ որ Ան ըսած է, բայց ոչ այն, ինչ որ Ան ներկայիս կ'ըսէ:

Ասոր մէկ ծայրայեղ օրինակը պատահեցաւ անցեալ տարի: Ընտանիքս եւ ես Հաուայի արձակուրդի գացած էինք: Ժամերու տարբերութեան պատճառով ես կանուխ արթնցայ: Այդ առաւօտ ես ծովափին կ'աղօթէի երբ մարդ մը ինծի մօտեցաւ եւ սկսաւ խօսիլ: Ան կղզիով շատ խանդավառուած էր եւ գրեթէ անմիջապէս ըսաւ. «Հոս աղջիկները հրաշալի են: Անոնք շատ ընկերային եւ համարձակ են»: Ան շարունակեց խօսիլ երեկոյթի մը մասին, որուն վերջերս ներկայ գտնուած էր եւ ուրիշ մարմնաւոր նիւթեր. ամբողջ ժամանակը անոր խօսակցութիւնը լեցուն էր հայիոյանքներով:

Ան ինծի հարցուց, որ ինչ գործով կը զբաղէի եւ ես ըսի: Երբ ան լսեց, որ ես ծառայող եմ, շատ խանդավառուեցաւ եւ սկսաւ Տիրոջ մասին խօսիլ: Ան ըսաւ, որ իր եկեղեցիին մէջ մոթօսիքլէթ քշողներու քարոզչական ծառայութեան մաս կը կազմէ եւ յետոյ խօսեցաւ իր հովիւին մասին: Ան պատմեց, թէ ինչպէս Յիսուսը ճանչցած է եւ նոյնիսկ ինծի տուաւ թերթիկ մը, որ իր հետը ունէր: Յետոյ ան խօսեցաւ իր կնոջ եւ զաւակներուն մասին, որոնք հիւրանոցին մէջ քնացած էին (իմ միտքերս անմիջապէս վերադարձան կղզիին աղջիկներով իր խանդավառութիւն): Սիրտս կոտրուեցաւ, քանի որ յստակ էր, որ այս մարդը կը կարծէր, թէ ինք Տէրը կը ճանչնար, բայց իր կեանքը հակառակը ցոյց կու տար: Ասոր համար Յիսուս կ'ըսէ, թէ մենք հաւատացեալները պիտի ճանչնանք իրենց պտուղներէն կամ ապրելակերպէն, եւ ոչ թէ իրենց խօսքերէն կամ ծառայութիւններէն (Տէս Մատթէոս 7.20-23):

Ասիկա միայն մէկն է այն քանի մը օրինակներէն, որ կրնամ մէջբերել: Վստահ եմ, որ դուք հանդիպած էք այսպիսի յուզիչ դէպքերու: Այս բոլոր պարագաներուն իրենք զիրենք «Քրիստոնեայ դաւանողներուն» Աստուծոյ մասին ունեցած գիտութիւնը կը նմանի գերաստղին մասին երկրպագուին ունեցած գիտութեան: Սիրտս կը կոտրուի այս բանին համար: Ահա մարդիկ, որոնք կ'ուզեն փրկուիլ, բայց եւ այնպէս աշխարհը կը սիրեն, եւ իրենց հաճոյքները, ժամերը եւ օրակարգերը աւելի վեր կը դասեն, քան Աստուծոյ փափաքները:

Նաեւ կան անոնք, որոնք իրապէս փրկուած են, բայց Ղովտի պէս մարմնաւոր են եւ աշխարհի գործերուն մէջ մտած են: Անոնք կ'ուզեն Աստուծոյ ծառայել, բայց իրենց ախորժակներուն գերի դարձած են: Անոնք չեն արտօնած, որ խաչը սպաննէ իրենց ինքնասէր կեանքը, քանի որ Աստուծոյ մաքրագործութեան դէմ կը դնեն: Անոնք ջերմեռանդօրէն չեն փնտոեր Անոր կամքը եւ թագաւորութեան յառաջացումը: Թէեւ անոնք փրկուած են, բայց մտերմութիւն չունին Անոր հետ: Անոնք տակաւին դուրսի գաւիթին մէջ կ'ապրին. սահմանափակուած իրենց մարմնի վարագոյրով՝ անոնք չեն կրնար մօտենալ նոր եւ կենդանի ճամբուն: Անոնք մօտ են Անոր ներկայութեան, բայց նոյն ատեն շատ հեռու:

Անոնք, որոնք դուրսի գաւիթին մէջ կ'ապրին, չեն հասկցած, թէ ինչո՞ւ Ան ազատագրեց զիրենք այս աշխարհի ճնշումէն: Անոնցմէ կը վրիպի զԱստուած մտերմօրէն ճանչնալու բարձր կոչումը: Անոնք կը սիրեն այն պատգամները, որոնք կը խօսին Աստուծոյ սիրոյն, օրհնութիւններուն, պահպանութեան, մատակարարումին եւ առատութեան մասին — եւ այս բոլորը ճիշդ են, բայց անոնք կը խուսափին սիրտին վերաբերող հարցերէն: Անոնք ընտրած են բաներ, որոնք չեն կրնար զիրենք բաւարարել, մինչ կ'անցնին իրենց իսկ սիրտերուն մէջ բնակող Կենդանի Զուրի աղբիւրին քովէն:

Պէտք է յայտարարենք, որ Աստուած կ'ուզէ մտերիմ յարաբերութիւն ունենալ մեզի հետ եւ թէ Ան սուրբ է եւ ծաղր չ'ըլլար: Ան շատ մեծ գին վճարեց՝ մեզ Իրեն բերելու համար, ինչպէս կրնանք բարեկամ մնալ այս աշխարհին հետ:

Մօտենալու իր յորդորէն առաջ Յակոբոսը կը զգուշացնէ. «[...] Չէք գիտեր որ աշխարհին հետ բարեկամութիւն ընել՝ Աստուծոյ թշնամութիւն ընել կը նշանակէ» (Յակոբոսի 4.4): Ան կը շարունակէ ըսելով, որ եթէ մենք աշխարհային ցանկութիւններու ետեւէ ըլլանք, մենք մեզ Աստուծոյ թշնամի կը դարձնենք: Յիշեցնեն, ան հաւատացեալներուն կը խօսի: Պօղոսը եւս անորոշ եզրեր չի գործածեր. «Որովհետեւ Աստուած իր շնորհքը յայտնեց՝ որպէսզի բոլոր մարդիկ փրկուին: Այդ շնորհքը մեզ կը մղէ, որ անհաւատ կենցաղէ եւ աշխարհիկ ցանկութիւններէ հեռանանք, զգաստութեամբ, արդարութեամբ ու բարեպաշտութեամբ ապրինք այս աշխարհի մէջ» (Տիտոս 2.11-12): Դարձեալ, այս է պատճառը, որ Պօղոս մեզի կ'ըսէ, որ ահով ու դողով մեր անձերուն փրկութիւնը գործենք:

### ՅԻՍՈՒՍԻ ԲԱՐԵԿԱՄՆԵՐ

Յաճախ կը լսենք պատգամներ, որոնք կը յայտարարեն՝ անոնք, որոնք Յիսուսը կ'ընդունին, Անոր բարեկամներն են հիմա: Յուսամ հիմա կը հասկնաք, որ Աստուած աժան, խումբի բարեկամ մը չէ: Առիթով մը երբ կ'աղօթէի, Ան աղաղակեց. «Հարցուր իմ ժողովուրդիս եթէ կ'ուզեն, որ ես իրենց հաւատարիմ ըլլամ այնպէս ինչպէս իրենք հաւատարիմ են Ինձի»: Յիսուս իբրեւ Փրկիչ չեկաւ, որպէսզի բոլոր մարդիկը Իր «վերստին ծնածներու ակումբ»-ին կարենան միանալ: Ան կ'ուզէ յարաբերութիւն ունենալ անոնց հետ, որոնք կը սիրեն զինք այնպէս ինչպէս Ինք սիրեց զիրենք. հոս կը գտնենք Իր բարեկամութիւնը: Ասիկա կը հաստատուի Իր իսկ խօսքերով.

«Դուք իմ բարեկամներս էք, եթէ գործադրէք ինչ որ կը պատուիրեմ ձեզի» (Յովհաննէս 15.14):

Յիսուսի հետ բարեկամութիւնը ունի իր յարաչափերը կամ առանձնայատկութիւնները: Ան չըսաւ. «Դուք բոլորդ Իմ բարեկամներս էք եթէ հաւատաք, թէ ես եմ Քրիստոսը»: Հապա ըսաւ. «Դուք իմ բարեկամներս էք, եթէ գործադրէք ինչ որ կը պատուիրեմ ձեզի»: Այս գլուխին մէջ մենք



քննարկեցինք, որ «Անոր պատուէրները կատարելու» զօրութիւնը Տիրոջ վախին մէջ կը գտնուի:

Յիսուս այս հաստատումը ըրաւ երբ Յուդան գնաց գինք մատնելու: Եթէ յաջորդ համարը շարունակենք, կը տեսնենք, որ Յիսուս կը խօսի տասնմէկին հետ. «Այլեւս ձեզ ծառայ չեմ կոչեր [...]» (Յովհաննէս 15.15): Այն իրականութիւնը, որ ան ըսաւ. «Այլեւս» կ'ենթադրէ, որ կար ժամանակ մը երբ Ան անոնց իբրեւ ծառայ կը նայէր, բայց հիմա նոր մակարդակ մը կար: Այս հաստատումէն ետք Ան կը շարունակէ.

«[...] Որովհետեւ ծառան չի գիտեր, թէ ինչ կ'ընէ իր տէրը. այլ՝ ձեզ բարեկամ կոչեցի, որովհետեւ ինչ որ Հօրմէս լսեցի՝ ձեզի յայտնեցի» (Յովհաննէս 15.15):

Նկատի առէք, Տիրոջ բարեկամները գիտեն, թէ Ան ինչ կ'ընէ: Անոնք գիտեն Անոր ճամբաները: Ինչո՞ւ անոնք հիմա բարեկամներ կը կոչուին եւ յարաբերութեան սկիզբը այդպէս չէին կոչուեր: Պատասխանը այն է, որ անոնք փաստեցին իրենց հաւատարմութիւնը եւ հնազանդութիւնը, քանի որ անոնք Իրեն հետեւեցան թէ՛ փորձութիւններու եւ թէ՛ դժուար ժամանակներու ընթացքին ինչպէս նաեւ Անոր հետ ուրախացան հրաշքներով եւ բարիքներով: Անոնց հաւատարմութիւնը փաստուեցաւ իրենց հնազանդութեամբ:

Անոր խօսքը կը վերաբերի բոլոր անոնց, որոնք Անոր անունը կը կանչեն. «Դուք իմ բարեկամներս էք, եթէ գործադրէք ինչ որ կը պատուիրեմ ձեզի»: Նկատի առէք, Ան յստակօրէն կ'ըսէ ասիկա՝ բարեկամութիւնը վերապահուած է անոնց, որոնք կը հնազանդին Իրեն: Ասիկա կ'արտացոլացնէ այն, ինչ որ մենք տեսանք Սաղմոսներու գիրքին մէջ՝ «Տիրոջ հետ բարեկամութիւնը վերապահուած է անոնց, որոնք Իր վախը ունին»:

Ինչո՞ւ Աստուած կը զսպէ բարեկամութիւնը: Կը հաւատամ, որ ասիկա կ'ընէ մեզ ծանօթութեան (սովորական համարելու) վտանգներէն պաշտպանելու համար: Յիշեցէք, Ահարոնի որդիները եւ անոնց հօր՝ Ահարոնին տրուած խրատը. «*Ինծի մօտեցողներուն* մէջ սուրբ պիտի սեպուիմ [...]»:

Ասիկա անգամ մը եւս պատահեցաւ Նոր Կտակարանին մէջ երբ մարդ մը եւ իր կինը սուրբ Աստուծոյ ներկայութեան մտան ոչ առողջ ծանօթութեամբ: Անոնք մեռան Անոր ներկայութեան մէջ (Տէս Առաքեալներու Գործերը 5.1-11): «Մեծ վախ» մը պատեց եկեղեցին երբ հաւատացեալներու մարմինը հասկցաւ ակնածանքին բացակայութեան լրջութիւնը: Դարձեալ, «[Աստուած] ահաւոր է շուրջը եղողներուն վրայ»:

Անցեալ տարի ես հիանալի գաղտնիք մը յայտնաբերեցի: Երբ աղօթքի կը սկսէի, բառեր չէի գործածեր եւ պարզապէս կը խոկայի իմ Հօրս հիանալի շքեղութեան եւ մեծութեան վրայ: Կը մտածէի Յիսուսի շքեղութեան մասին եւ այդ փառաւոր ճակատամարտին, որ Ան շահեցաւ ինծի համար, որպէսզի Իրը ըլլամ: Ես կը խորհրդածէի Անոր հիանալի Հոգիին վրայ եւ այն իրականութեան, որ Ինք ընտրեց ինծի հետ ապրիլ: Ինչքան հիանալի է այդ ամէնը:

Ես յայտնաբերեցի, որ ատիկա ընելով, նախքան իմ բառերէս որեւէ մէկը արտասանեմ, Տիրոջ ներկայութիւնը ինծի կը հանդիպի: Շփոթած, թէ ինչքան դիւրին դարձած էր Անոր ներկայութեան մտնելը, Սուրբ Հոգիին հարցուցի: Ան իմ սիրտիս խօսեցաւ. «Տղան, Յիսուս ինչ ըսաւ Իր աշակերտներուն երբ անոնց աղօթել սորվեցուց»:  
Տէրունական աղօթքը գոց ըսի. «Հայր մեր երկնաւոր, սրբաբանով անունդ»: Ապշեցայ. ուրախութենէս գոռացի. «Ասիկա է կարեւոր կէտը, ասիկա է կարեւոր կէտը»: Ահա սկիզբէն ըսուած է, պէտք է Անոր հետ վերաբերինք որպէս Սուրբ. «Սրբաբանով անունդ»: Անոր հետ պէտք է վարուինք սուրբ պատկառանքով: Երկար տարիներ ես արտասանած եմ այս աղօթքը, առանց անդրադառնալու, թէ Յիսուս իրապէս ինչ կ'ըսէ:

## ԿԵԱՆՔԻ ԳԱՆՁԵՐՈՒՆ ԲԱՆԱԼԻՆ

Տիրոջ վախը Աստուծոյ հետ մտերմութեան բանալին եւ կեանքի հիմն է: Եսային մեզի կ'ըսէ.

«Տէրը բարձրացած է, վասնզի բարձրերը կը բնակի:

## ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐԵԿԱՄՆԵՐԸ

Սիօնը [եկեղեցին] իրաւունքով ու արդարութիւնով լեցուց: Քու ժամանակներուդ հաստատութիւնը ու փրկութեանդ զօրութիւնը իմաստութիւն ու գիտութիւն պիտի ըլլայ: Տէրոջը վախը անոր գանձն է» (Եսայի 33.5-6):

Սուրբ վախը կը բանայ փրկութեան, իմաստութեան եւ գիտութեան գանձը: Ինչհիւ: Որովհետեւ անիկա Աստուծոյ հետ մտերմութեան հիմն է եւ այդ մտերմութեան վայրին մէջ Իր գանձերը կը յայտնուին: Աստուծոյ սիրոյն կողքին ատիկա ինքնին կեանքի հիմը կը կազմէ: Չենք կրնար ճշմարտապէս սիրել զԱստուած եւ Անոր հետ մտերմութիւն վայելել մինչեւ որ նախ Իր վախը չունենանք:

## ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. Ձեր բառերով, ինչպէս կը բացատրէք, թէ ինչ կը նշանակէ Աստուծոյ վախը ունենալ, ընդդէմ Աստուծմէ վախնալուն:
2. Այս գլուխը կը հակադրէ Աբրահամը՝ «Աստուծոյ բարեկամը», իր եղբորորդիին՝ Ղովտին հետ, որ «արդար» կոչուեցաւ: Երբ Ղովտ կը քննէր ցանկալի հողերը, որոնք կը գտնուէին Սոդոմ եւ Գոմոր չար քաղաքներուն կողմերը, ըստ երեւոյթին ան կը փորձէր գտնել միջոց մը՝ վայելելու անոնց առատութիւնը՝ առանց անոնց ազդեցութեան տակ մտնելու: Դուք երբեք հակում ունեցամ՞ էք նոյն ձեւով տրամաբանելու:

Ինչպէս կրնայ Տիրոջ հանդէպ իսկական վախը կանխել այդպիսի թերի դատողութիւնը:

3. Մտածելով հեղինակին Հաուայիի ծովափին վրայ գտնուող մարդուն հետ ունեցած հանդիպումին մասին, երբեք այդպիսի հանդիպումներ ունեցամ՞ էք: Ինչպէս վարուեցաք անոնց հետ:

Անկախ անկէ, թէ ատիկա այդ դէպքին պէս ծայրայեղ էր կամ ոչ, երբեք պատահամ՞ է, որ դուք այդ ծովեզերքին

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

վրայ գտնուող մարդը եղած էք, ուր ձեր խօսակցությունը կամ արարքները բացայայտած են, թե ձեր սիրտը իրապես ո՞ր էր այդ ժամանակ: Ի՞նչ սորվեցաք կամ ներկայիս ի՞նչ կը սորվիք այդ դեպքերէն:

4. Սաղմոս 25.14-ին լոյսին տակ («Տէրոջը բարեկամութիւնը իրմէ վախճողներուն հետ է»), հեղինակը կը նշէ, որ Աստուած Իր բարեկամութիւնը կը զսպէ (ետ կը պահէ), որպէսզի մեզ պաշտպանէ ծանօթութեան վտանգներէն:

Ի՞նչ են «ծանօթութեան վտանգներ»-ը:

# ԻՆՉ ԲԱՆ ԱՐԳԵԼՔ Է ՃՇՄԱՐԻՏ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ



Խաբուածները կը մխիթարուին Աստուծոյ գիտութեամբ մը,  
որ պարզապէս չունին:

**S**իրոջ վախը Աստուծոյ հետ մտերմութեան հիմն է:  
Ասիկա յստակացուած է Առակաց գիրքին սկիզբը:  
Կը կարդանք. «Իմաստութեան սկիզբը [հիմը] Տէրոջը վախն  
է [...]» (Առակաց 1.7): Ինչպիսի՞ իմաստութիւն [գիտութիւն]:  
Քանի մը համար ետք գրողը մեզի կ'ըսէ.

«[...] Եթէ իմ խօսքերս ընդունիս  
Ու իմ պատուիրանքներս քովդ պահես,  
Այնպէս որ ականջդ իմաստութեան տաս  
Ու սիրտդ հանճարին բանաս,  
Եթէ դուն իմաստութիւնը քեզի կանչես  
Եւ քու ձայնդ հանճարին ուղղես,  
Եթէ զանիկա արծաթի պէս փնտռես  
Ու ծածուկ գանձերու պէս խնդրես,

Այն ատեն Տէրոջը վախը պիտի հասկնաս  
Եւ *Աստուծոյ գիտութիւնը* պիտի գտնես» (Առակաց 2.1-5,  
շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Անգլերէն «*Տիրջընրի աֆ Պիպլիքըլ Լէնկուէճըզ*»-ին (Աստուածաշունչի լեզուներու բառարան) համաձայն «*Գիտութիւն*» բառը կը նշանակէ՝ «անձի մը մասին տեղեկութիւն, յստակօրէն ակնարկելով այդ անձին հետ յարաբերութեան»: «*Վայնզ Էքսփոզիթըրի*» բառարանին համաձայն «*Գիտութիւն*» բառը կը նշանակէ՝ «Անոր (Աստուծոյ) մտերիմ փորձառական գիտութիւնը ունենալ»: Յետոյ ան կը շարունակէ ըսելով՝ «Դրական իմաստով՝ զԱստուած՝ գիտնալը՝ կը համապատասխանէ Անոր վախը ունենալուն»:

Նախորդ համարին մէջ կը տեսնէք, որ Տիրոջ վախը ունենալ կը նշանակէ Անոր պատուիրանքները պահել: Անոր պատուիրանքները պահել կը նշանակէ Անոր խօսքին ականջդ տալ՝ ամենայն պատրաստակամութեամբ հնազանդելու՝ ամէն պարագայի մէջ: Մտերմութեան հակառակը կը սպասէ անոնց, որոնք չունին այս սուրբ վախը, քանի որ Յակոբոս մեզի կ'ըսէ, թէ մենք մեզ «խաբած կ'ըլլանք» (Յակոբոսի 1.22) երբ Անոր կամքը գիտենք, բայց չենք հնազանդիր անոր: Խաբկանքը վախնալիք բան մըն է, քանի որ խաբուածները կը հաւատան, որ իրենք շիտակ են, երբ իրականութիւնը այդպէս չէ: Խաբուածները կը մխիթարուին Աստուծոյ գիտութեամբ մը, որ պարզապէս չունին:

## ՏԻՐՈՋ ԱՂԱԻԱՂՈՒԱԾ ՊԱՏԿԵՐԸ

Առանց Տիրոջ վախին մենք զԱստուած իրապէս չենք ճանչնար: Սխալ պատկեր մը կը զարգանայ, կը ձեւաւորուի եւ կը ձուլուի մեր շունչին կամ երեւակայութեան մէջ: Թէեւ կը յայտարարենք, որ Իրեն հետ յարաբերութիւն ունինք եւ մեր շրթունքներով կը պատուենք զԻնք, մեր սիրտը Իր սրտին մօտ չէ եւ մեր կեանքը Իր փափաքներուն համաձայն չէ: Ասիկա բացայայտ է Իսրայէլի որդիներուն մէջ:

Ինչպես նախորդ գլուխներուն մէջ նշեցի, Մովսէս զանոնք բերաւ, որպէսզի Սինայի մէջ Աստուծոյ հանդիպին, սակայն «Ժողովուրդը հեռուն կայնեցաւ ու Մովսէս մօտեցաւ [...]» (Ելք 20.21): Ինչքան արտաճմլիկ բան է, որ անոնք չկրցան մօտենալ այս նախատեսուած փառաւոր ընդմիջումին: Ո՞վ գիտէ ինչ պիտի ըլլար: Անոնք առիթը ունէին լսելու Անոր խօսքերը, որ Ինք պիտի խօսէր Իր սեփական ձայնով: Սակայն, ինչպէս արդէն քննարկեցինք, անոնք չկրցան տանիլ Անոր ներկայութիւնը, քանի որ չունէին այնպիսի սիրտեր, որոնք Անոր վախը ունէին եւ հետեւաբար չկրցան պահել Անոր պատուիրանքները (Բ.Օրինաց 5.29):

Յուսախաբուած՝ Աստուած Իր եւ ժողովուրդին միջեւ միջնորդ մը դրաւ: Ան Մովսէսի ըսաւ. «[...] Ահարոնին հետ մէկտեղ ելիր [*Դուն եւ Ահարոնը* մէկտեղ ելէք]» (Ելք 19.24, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Աստուած Իր քով կանչեց Մովսէսը եւ Ահարոնը՝ իբրեւ միջնորդներ: Անոնք ժողովուրդին համար Իր ըսելիք խօսքերը պիտի լսէին, եւ անոնց խօսքերը Իրեն պիտի բերէին: Ասիկա շատ հեռու էր այդ սկզբնական մտերմութենէն, որ Ան ծրագրած էր:

Սակայն երբ Ելք Գիրքը շարունակենք կարդալ, կը տեսնենք, որ Մովսէս լերան վրայ է եւ Ահարոնը բանակատեղիին մէջ է: Կարծէք ան սկսաւ վեր ելլել, բայց վերջաւորութեան ժողովուրդին վերադարձաւ: Ինչո՞ւ: Ան ասելի հանգիստ զգաց ժողովուրդին ներկայութեան, քան Աստուծոյ ներկայութեան: Ան չունէր Տիրոջ վախը: Ահարոնը մարդոցմէ ասելի կը վախնար, քան Աստուծմէ, եւ հետեւաբար անոնց կը ծառայէր. վերջաւորութեան ան ժողովուրդին տուաւ իր ուզածը, եւ ինչպէս պիտի տեսնենք, ասիկա երկար չի տւեր:

Մովսէսը գրեթէ քառասուն օրէ ի վեր լերան վրայ էր եւ կը կարդանք.

«Երբ ժողովուրդը տեսաւ, որ Մովսէս ուշացաւ լեռնէն իջնելու, Ահարոնին քով հաւաքուեցան ու ըսին. ‘Ելիր, մեզի աստուածներ շինէ, որպէս զի մեր առջեւէն երթան. քանզի Մովսէսը, մեզ Եգիպտոսի երկրէն հանող մարդը, չենք գիտեր, թէ ինչ եղաւ’: Ահարոն

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

ըսաւ անոնց. «Ձեր կիներուն, ձեր տղաքներուն եւ ձեր աղջիկներուն ականջները եղած ոսկի օղերը հանեցէք ու ինծի բերէք» (Ելք 32.1-2):

Ահարոնը ղեկավարութեան ձիրքը ունէր, որ իր մէջ ունի որոշ յատկութիւններ, որոնցմէ մէկն է մարդիկը մաքնիսի պէս քաշել: Ատիկա ուրիշները կը քաշէ անկախ անկէ, թէ ձիրք ունեցող ղեկավարը Աստուծոյ հետ է թէ՛ ոչ: Ասիկա կը բացատրէ, որ ինչպէս կրնաք ունենալ հազարաւոր անդամներ ունեցող եկեղեցի մը, որ Աստուծոյ ներկայութենէն զուրկ է, ուր Անոր փափաքները սխալ կերպով ներկայացուած են: Շատ յաճախ այն ղեկավարը, որ Տիրոջ վախը չունի, իր աստուածատուր ձիրքերը կը գործածէ՝ ժողովուրդին փափաքները իրականացնելու համար, եւ ոչ թէ Տիրոջ:

Ժողովուրդը Ահարոնը յորդորեց. «Ելի՛ր, մեզի աստուածներ շինէ, որպէս զի մեր առջեւէն երթան. քանզի Մովսէսը [...] չենք գիտեր թէ ինչ եղաւ»: Նկատի՛ առէք, անոնք չըսին. «Քանզի Աստուած չենք գիտեր, թէ ինչ եղաւ»: Անոնք զԱստուած չեն ուրանար (Անկէ չեն հրաժարիր), այլ պարզապէս Մովսէսը անատակ կը համարեն:

## ԱՍՏՈՒԱՐԾ ԹԷ՛ ԱՍՏՈՒԱԾ

Երբ բնագիրները կ'ուսումնասիրէի, կ'ուզէի գիտնալ, որ արդեօք թարգմանիչները չթարգմանեցին այն, ինչ որ իրականութեան մէջ հոս ըսուած էր: Անոնք անգլերէն «կայծ» («աստուածներ») բառը գործածած են: Սակայն «աստուածներ» բառը եբրայերէնով «էլոհիմ» (Elohim) բառն է: Այս բառը 2,606 անգամ գործածուած է Հին Կտակարանին մէջ. ատոր մօտաւորապէս 2,350 անգամը (աւելի քան իննիսուն տոկոսը) կ'ակնարկէ ամենակարող Աստուծոյ, որուն կը ծառայենք: Ատիկա երեսուներկու անգամ նշուած է Ծննդոց գիրքին առաջին գլուխին մէջ միայն, եւ անոնցմէ իւրաքանչիւրը ակնարկութիւն է Տիրոջ: Օրինակ՝ կարդանք Աստուածաշունչին առաջին համարը. «Սկիզբէն Աստուած [էլոհիմ] երկինքն ու երկիրը ստեղծեց» (Ծննդոց 1.1): Հոս «էլոհիմ» բառը թարգմանուած է «Աստուած»:



Մտաւորապէս երկու հարիր յիսուն անգամ Հին Կտակարանին մէջ այս բառը գործածուած է նկարագրելու սուտ աստուած մը: Ուստի պէտք է միշտ ատիկա կարդանք իր պարունակին մէջ, որպէսզի ճիշդ իմաստը հասկնանք:

Ահարոնը ժողովուրդին ըսաւ. «Ձեր կիներուն, ձեր տղաքներուն եւ ձեր աղջիկներուն ականջները եղած ոսկի օղերը հանեցէք ու ինծի բերէք» (Ելք 32.2): Ժողովուրդը այդպէս ըրաւ, «Անիկա [ոսկին] առաւ անոնց ձեռքէն ու տիպով մը քանդակեց եւ ձուլածոյ հորթ մը շինեց» (Ելք 32.4):

Երբ ան իր տիպով ոսկին ձուլածոյ հորթի մը վերածեց, ամբողջ ժողովուրդը ըսաւ. «Ո՛վ Իսրայէլ, ասոնք են քու աստուածներդ, որոնք քեզ Եգիպտոսի երկրէն հանեցին» (Ելք 32.4):

Դարձեալ, «աստուած» բառին համար գործածուած եբրայերէն բառը «*էլոհիմ*» բառն է: Ժողովուրդը կ'ըսէր. «Ո՛վ Իսրայէլ, ասոնք են քու *էլոհիմ-դ*, որոնք քեզ Եգիպտոսի երկրէն հանեցին»: Սկսմբ հասկնալ, թէ ինչ է պատահածը: Շարունակենք կարդալ, որպէսզի վստահ ըլլանք, որ այս մարդիկը ինչ կ'ըսեն:

«Եւ երբ Ահարոն տեսաւ ասիկա, անոր առջեւ սեղան մը շինեց: Ահարոն յայտարարեց. 'Վաղը տօն է *ՏէՐՈՋԸ*'» (Ելք 32.5, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Այս համարին մէջ գործածուած «*Տէր*» բառին եբրայերէնը «*Եհովա*» կամ «*Եահուէ*» բառն է: «*Եահուէ*»-ն Հին Կտակարանի ամենասուրբ բառն է: Ատիկա միակ ճշմարիտ Աստուծոյ յատուկ անունն է: Ատիկա Հին Կտակարանին մէջ երբեք չէ գործածուած սուտ աստուած մը նկարագրելու կամ անուանելու համար: Այդ բառը այնքան սուրբ էր, որ եբրայեցի դպիրները նոյնիսկ ամբողջ բառը չէին գրեր: Անոնք ձայնաւոր գիրերը կը հանէին եւ պարզապէս կը գրէին YHWHY (Yahweh-ին փոխարէն): Հրեայ դպիրները զայն կ'անուանէին սուրբ քառագիրը, անասելի չորս գիրերը: Ասիկա այն աննշելի անունն է, սուրբ անունը, որ Իսրայէլի կեանքին մէջ հայիոյութենէ պաշտպանուած էր:

Ուստի հիմնականօրէն Ահարոնը եւ Իսրայէլի որդիները հետեւեալը ըրին՝ հորթ մը ձուլեցին, եւ անոր մատնանշելով ըսին. «Ահա՛ Եհովան, միակ ճշմարիտ Աստուածը, որ մեզ Եգիպտոսի երկրէն հանեց»: Չըսին. «Ահա՛ Բաաղը, ան, որ մեզ Եգիպտոսէն հանեց»: Ոչ ալ իրենց ազատագրութիւնը ուրիշ սուտ աստուծոյ մը վերագրեցին: Անոնք այդ հորթը Տէր կոչեցին:

### ՊԱՇՏԱՄՈՒՆՔ, ՈՐՈՒՆ ԿԸ ՅԱԶՈՐԴԷ ՑԱՆԿՈՒԹԻՒՆԸ

Անոնք բացայայտօրէն զԱստուած չէին ուրանար, այլ Անոր փառքը իջեցուցին այս ձեւաւորուած հորթի արձանին մակարդակին: Անոնք խաբուած էին, թէ Անոր գիտութիւնը ունէին: Անոնք տակաւին Եհովան կը դաւանէին իբրեւ իրենց փրկիչը եւ Եգիպտոսէն ազատողը: Անոնք չուրացան Անոր բժշկարար զօրութիւնը. անոնք պարզապէս փոխեցին Անոր անձին պատկերը: Շարունակելով կը յայտնաբերենք.

«Հետեւեալ առաւօտ կանուխ ելան ու ողջակէզներ մատուցանեցին եւ խաղաղութեան զոհեր բերին եւ ժողովուրդը ուտելու ու խմելու նստան ու խաղալու ելան» (Ելք 32.6):

Նկատի առէք, անոնք իրենց ընծաները բերին: Ինչո՞ւ ընծաներ պիտի բերէին: Պատուելու Ան, որուն կը յայտարարէին, որ կը ծառայեն, Եհովան: Ընծաները կամ պաշտամունքը մատուցանելէ ետք, անոնք խաղցան եւ մարմնաւոր ախորժակներու անձնատուր եղան: Անգլերէն Աստուածաշունչի «Էն.Այ.Վի.» տարբերակը կ'ըսէ. «անոնք ելան, որպէսզի անզուսպ խրախճանքի (կերուխումի) անձնատուր ըլլան»:

Արդեօք ատիկա այսօր կը պատահի: Կան մարդիկ, որոնք Անոր փրկարար շնորհքով աշխարհէն ազատագրուած են, որոնք սուրբ վախ չունին եւ կը կանչեն այն Յիսուսը, որ իրենց երեւակայութեան մէջ շինած են: Միեւնոյն ժամանակ անոնք ամուր բռնուած են իրենց վերածնունդի

փորձառության եւ զի՛նք կ'ընդունին եւ կը դաւանին իբրեւ Տէր մինչ եկեղեցի կու գան, փրկության եւ ազատության երգեր կ'երգեն, պատգամներ կը լսեն, դրամ կու տան, բայց դուրս կ'ելլեն եւ բան մը ծախելու համար սուտ կը խօսին, ամբողջ ժամանակը վկայելով, որ ինչպէս Աստուած կ'օրհնէ իրենց գործը: Թերեւս անոնք իրենց հովիւին եւ ուրիշներու մասին կը բամբասեն, եւ ասիկա կ'արդարացնեն ըսելով. «Ասիկա ճշմարտութիւնն է, եւ ուրիշներ ալ գիտեն ասիկա». շնութիւն կամ ուրիշ անառակ արարքներ կ'ընեն, եւ յետոյ այդ բոլորը կ'արդարացնեն ըսելով, որ թէեւ Յիսուս զիրենք փրկած է, տակաւին իրենք մարմինի մէջ կը բնակին եւ պէտքեր ունին: Յանկը գրեթէ անվերջ է:

Արդեօք անոնք կը ճանչնան Յիսուսը: Հարցուցէք անոնց. անոնք վճռականօրէն պիտի ըսեն. «Այո»: Արդեօք անոնք խաբուամ՞ծ են: Արդեօք անոնք կը դաւանին Ան, որ հիմա ամենազօր Աստուծոյ աթոռին աջ կողմը նստած է, երկինքի մէջ, կամ Յիսուս մը, որ իրենք ստեղծած են իրենց պատկերին համաձայն, որ իրենց պիտի տայ ինչ որ ուզեն: Այս բոլորէն կարելոր՝ այս բոլորին մէջ մենք մեզ ո՞ր կը գտնենք:

Դուք պիտի յայտնաբերէք, որ երբ մարդիկ Տիրոջ վախը չունին, անոնք կրնան զի՛նք հրաւիրել, բայց անոնք մարմնական ախորժակներուն կը յարին եւ մարմինը Աստուծոյ թշնամի է, որովհետեւ Աստուծոյ օրէնքներուն չի հնազանդիր (Տէն Հռոմայեցիներուն 8.5-7): Անոնք անհնազանդ են Իր փափաքներուն թէեւ Իր անունը կը գոչեն, կը յայտարարեն, որ զի՛նք կը ճանչնան, եւ կը հաւատան, որ Ան հաւանութիւն կու տայ իրենց վարմունքին: Անոնց անհնազանդութիւնը կը բխի սիրտէ մը, որ սուրբ վախ չունի. ամէն անհնազանդութեան արմատը եւ սխալ կապը «Յիսուսը ճանչնալու» խաբկանքը հազած կ'ըլլայ:

## ՉԿԱՅ ԾԱԾՈՒԿ ԲԱՆ

Ասիկա կը տեսնենք ամբողջ Աստուածաշունչին մէջ: Շատ ժամանակ չառաւ, որ ասիկա մարդուն անկումէն ետք

յայտնուի եւ սկսաւ Ադամին որդիին՝ Կայէնին հետ: Երբ Կայէնին ծնողքը պարտէզին մէջ մեղանչեցին, տգիտութեան պատճառով իրենք զիրենք թուզի տերեւներով ծածկեցին — գետինին պտուղով: Աստուած իրենց ցոյց տուաւ Իր կամքը, որ անասուն մը ընծայել էր: Ան անոնց անասունի մորթէ հանդերձներ հագցուց, որ կը կարծեմ, որ գառնուկի մորթ էր:

Սակայն Կայէնը անտեղեակ չէր. ան իր ծնողներէն գիտէր, որ Աստուած կ'ուզէր, որ կենդանի մը իբրեւ զոհ մատուցանէին, եւ ոչ թէ երկրին պտուղէն: Ատով հանդերձ, մենք կը կարդանք. «Ժամանակ մը յետոյ Կայէն երկրի պտուղէն Տէրոջը ընծայ բերաւ» (Ծննդոց 4.3, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Ըստ երեւոյթին, ան կը փորձէր Աստուծոյ ծառայել, քանի որ չ'ըսեր, որ ան սուտ աստուածի մը ընծայ բերաւ: Ան ժրաջանութեամբ աշխատեցաւ, որ իր ընծան բերէ Աստուծոյ. բայց եւ այնպէս ան բացայայտ անհնազանդութեան մէջ էր:

Ինչ է անոր անհնազանդութեան արմատը: Պարզապէս Տիրոջ վախին պակասը: Ասիկա յստակօրէն կը տեսնենք երբ Աստուած կը հարցաքննէ զինք իր սպաննուած եղբորը մասին. իր պատասխանը անպատկառ (արհամարհական). «Չեմ գիտեր, միթէ ես իմ եղբորս պահապանն եմ» (Ծննդոց 4.9) էր: Դարձեալ կը տեսնէք, ինչպէս Իսրայէլի եւ հորթին պարագային, որ Տիրոջ վախին այս բացակայութեամբ՝ Աստուծոյ պատկերը կը պզտիկնայ (կը խեղճանայ), եւ Անոր ծառայելու ընդունելի ձեւերը կը փոխուին: Էսաբուած, հիմա Կայէնը նոյնիսկ կը կարծէ, թէ կրնայ բան մը պահել Աստուծմէ, ինչպէս կրնար ուրիշ մարդու մը հետ ընել: Կայէնին աչքին Աստուծոյ պատկերը իջած էր մարդու մակարդակին: Պօղոս լրջօրէն կը զգուշացնէ մեզ, որ վերջին օրերուն մենք այս ձեւն ալ պիտի տեսնենք. «Թէեւ իրենք Աստուած կը ճանչնային բայց Աստուծոյ պէս չփառաւորեցին [...] եւ անեղծ Աստուծոյ փառքը փոխեցին, նմանցնելով եղծանելի մարդու [...]» (Հռոմայեցիներուն 1.21-23): Ինչպէս Կայէնին պարագային, Աստուծոյ վախին բացակայութիւնը զիրենք կը յանձնէ խաբկանքի եւ կը հաւատան, որ Աստուած չի նկատեր իրենց հակառակ ճամբաները:

Կայէնին պատասխանը ցոյց կու տայ, որ ան մոռցած է,

որ ոչինչ կը թաքնուի Աստուծմէ: Աստուած մարդ չէ. Ան ամէն բան կը տեսնէ եւ գիտէ: Երբ Տիրոջ վախը կը կորսնցնենք, մեր հոգեւոր պարզ տրամաբանութիւնը կը պակսեցնենք, քանի որ նոյնիսկ բացայայտ կերպով մեղանշողը գիտէ, որ Աստուած իր ըմբոստութենէն տեղեակ է: Անոնք որոնք Աստուծոյ գիտութիւնը ունին, բայց Անոր սուրբ վախը չունին, իրենք զիրենք այսպէս կը մխիթարեն. «Տէրը [...] չի տեսներ» (Եզեկիէլ 9.9), կամ եթէ իրապէս տեսնէ, անշուշտ պիտի հասկնայ: Նոյնիսկ ղեկավարները ասկէ բացառուած չեն: Աստուած կ'ըսէ. «Որդի՛ մարդոյ, կը տեսնե՞ս, թէ ինչքն կ'ընեն Իսրայէլի տանը ծերերը [...] անոնք կ'ըսեն թէ՛ 'ՏԷՐԸ մեզ չի տեսներ [...]'» (Եզեկիէլ 8.12):

Արդեօք մոռցա՞նք Աստուծոյ վախը ունենալու մասին Յիսուսի խիստ կարեւոր խօսքերը մեզի: Ան մեզի կ'ըսէ. «Չկայ ծածուկ բան որ ջլայտնուի եւ ոչ ալ գաղտնի բան՝ որ չգիտցուի» (Ղուկաս 12.2): Սակայն երբ կը կորսնցնենք Աստուծոյ վախը, զինք մեր մակարդակին կ'իջեցնենք, եւ ենթագիտակցաբար կը կարծենք, թէ կրնանք Իրմէ բաներ ծածկել: Եթէ անոնց հարցնէք Աստուծոյ ամենուրեքութեան մասին, առանց վարանելու շատ համաձայն պիտի գտնուին: Բայց իրենց անձին խորերը անոնք կորսնցուցած են Անոր ահաւորութեան գիտակցութիւնը. որովհետեւ եթէ տակաւին ունենային, պիտի չձգտէին բաներ գաղտնի պահել: Անոնք բարեպաշտ մարդոցմէ բաներ կը պահեն եւ յաճախ կը յաջողին, բայց կը մոռնան, որ՝ «Տէրոջը աչքերը ամէն տեղ չարերն ու բարիները կը դիտեն» (Առակաց 15.3):

## ՀԱՒԱՏԱԼ, ՈՐ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԵՍ, ԵՐԲ ՉԵՍ

Սակայն հարցը հոս չի վերջանար: Խաբկանքին յաջորդ քայլը կ'առաջնորդէ հաւատալու, թէ դուք հնազանդութեան մէջ էք, երբ իրականութեան մէջ չէք: Ասիկա նկարագրուած է Դաւիթի զարմերէն մէկուն՝ Ոզիա անունով թագաւորի մը պարագային: Երբ ան տասնվեց տարեկան էր, իր հայրը՝ Ամասիան մեռաւ եւ Ոզիան անոր տեղ

Յուդայի թագաւորը ըրին: Եթէ տասնվեց տարեկանիդ թագաւոր ըլլաս, եթէ խելացի ես, զԱստուած կը փնտռես եւ Ոգիան այդպէս ըրաւ: Ատոր իբրեւ արդիւնք ան մեծապէս բարգաւաճեցաւ: Տարիներ շարունակ ան առատութիւն եւ յաջողութիւն վայելեց: Յետոյ կը կարդանք. «[...] Անոր անունը հեռու տեղեր տարածուեցաւ, վասնզի անիկա զարմանալիօրէն օգնութիւններ գտաւ, մինչեւ որ ուժովցաւ» (Բ.Մնացորդաց 26.15):

Բայց երբ Ոգիան ուժովցաւ, անոր սիրտը հպարտացաւ: Հպարտութիւնն ու Տիրոջ վախը իրարու հակառակ բաներ են: Երբ սիրտին մէջ սուրբ վախ չկայ, ատիկա հպարտութիւն կը զարգացնէ: Ուշադրութեամբ կարդացէք, թէ ինչ պատահեցաւ.

«Բայց երբ ուժովցաւ, անոր սիրտը հպարտանալով չարութիւն ըրաւ եւ իր Տէր Աստուծոյն դէմ յանցանք գործեց ու Տէրոջը տաճարը մտաւ, որպէս զի խունկի սեղանին վրայ խունկ ծխէ: Անոր ետեւէն Ազարիա քահանան մտաւ ու անոր հետ Տէրոջը ութսուն քահանաները՝ որոնք զօրաւոր մարդիկ էին: Անոնք Ոգիա թագաւորին դէմ կեցան ու անոր ըսին. ‘Ո՛վ Ոգիա, քեզի չ’իյնար, որ Տէրոջը խունկ ծխես, հապա Ահարոնեան քահանաներուն՝ որոնք խունկ ծխելու համար սրբուած են. սրբարանէն դ՛րուս ելիր, քանզի յանցանք գործեցիր ու այս բանին համար Տէր Աստուծմէ պիտի չպատուրուիս’»: Ոգիա բարկացաւ ու անոր ձեռքը խունկ ծխելու համար բուրվառ կար: Երբ քահանաներուն բարկացաւ, քահանաներուն առջեւ, Տէրոջը տանը մէջ խունկի սեղանին քով, անոր ճակատին վրայ բորոտութիւն երեցաւ» (Բ.Մնացորդաց 26.16-19):

Հարցումը, որ պէտք է հարցնենք, հետեւեալն է՝ «Երբ Ոգիայի սիրտը հպարտացաւ, ան աւելի շմտ հոգեւոր դարձաւ թէ՛ աւելի պակաս հոգեւոր դարձաւ»: Երբ այս հարցումը կը հարցուի ունկընդիրներու, շատերը կը պատասխանեն, որ ան աւելի պակաս հոգեւոր դարձաւ: Բայց ատիկա ճիշդ չէ,

քանի որ ան տաճար մտաւ պաշտելու: Իրականութեան մէջ ան աւելի հոգեւոր (կրօնական) դարձաւ իր արարքներով: Շատ յաճախ կը տեսնէք, որ չափազանցուած հոգեւոր վարմունքները եւ հպարտութիւնը միասին կը գործեն. մէկը միւսը կը ծածկէ: Հպարտութիւնը թոյլ չի տար, որ անձը խոստովանի, որ ինք կրօնական է, եւ կրօնը հպարտութիւնը կը ծածկէ իր հոգեւոր վարուելակերպով: Երկրօքն ալ Տիրոջ վախին եւ ճշմարիտ խոնարհութեան բացակայութեան արդիւնքն են:

Նկատի առէք, Ոգիան զայրացաւ երբ իրեն ճշմարտութիւնը ըսին: Ճիշդ նոյնը պատահեցաւ Կայէնի հետ երբ իրեն ճշմարտութիւնը ըսուեցաւ: Սուրբ Գիրքը մեզի կ'ըսէ. «[...] Կայէն խիստ բարկացաւ ու երեսը կախեց» (Ծննդոց 4.5): Կայէնը Աստուծմէ բարկացաւ: Ամէն անգամ որ ճշմարտութիւնը կ'ըսես անձի մը, որ սուրբ վախի բացակայութեան պատճառով անհնազանդութեան մէջ կ'ապրի, պիտի բարկանայ: Ինչո՞ւ: Ան իրապէս կը հաւատայ, որ ինք ճիշդ է: Ան խաբուած է, եւ խաբուիլ կը նշանակէ հաւատալ, որ դուն ճիշդ ես երբ սխալ ես:

Այլապէս Ոգիան ինչո՞ւ քահանաներէն պիտի զայրանար եթէ չհաւատար, որ ինք ճիշդ էր: Ան տաճարը մտաւ՝ պաշտելու, բայց Ահարոնի որդիներուն պէս՝ անտեսելով չպատուեց Տիրոջ կանոնները եւ նսեմացուց Անոր պատկերը: Ան իր անհնազանդութեամբ ամբողջութեամբ անհամաձայն էր Աստուծոյ հետ մտերմութիւն փնտռելու գաղափարին հետ, եւ այնպէս կ'երեւէր, որ այդպէս վարուելով՝ ան իրականութեան մէջ աւելի հեռացաւ այն Անձէն, զոր կ'ուզէր պաշտել:

Այս պատասխանը բաւարար է հասկնալու, թէ ինչո՞ւ եկեղեցիին մէջ շատեր, որոնք կը յայտարարեն, որ Աստուծոյ հետ մտերմութիւն ունին, Անոր փափաքներուն հետ անհամաձայն են: Այս մեր քննարկած սկզբունքները առանց հասկնալու, դուք կրնաք շփոթի մատնուիլ երբ կը տեսնէք, որ մարդիկ կը բաժնեկցին Աստուծոյ իրենց տուած յայտնութիւնը, որ կը հակասէ Աստուածաշունչին ճշմարտութեան: Ինչպէս կրնան աղօթքէն ելլել եւ քննադատել

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

ղեկավարներ, զորս Աստուած ըսած է, որ պատուեն: Եթէ փորձես իրենց ըսել, թէ Աստուածաշունչը ինչ կ'ըսէ այդ մասին, կը զայրանան: Անոնք կը կարծեն, թէ դուն զիրենք չես հասկնար եւ հոգեւոր չես, երբ իրականութեան մէջ իրենք են, որ Անոր ճամբաներուն դէմ կը դնեն:

Իբրեւ ղեկավար՝ ես բազմաթիւ անգամներ առիթը ունեցած եմ խօսելու մարդոց հետ, որոնք բաժնեկցած են այն, ինչ որ կը հաւատան, որ Աստուած իրենց յայտնած է եւ իմ հոգիս խռոված է: Թէեւ անոնք համոզուած են, որ Աստուծմէ լսած են, անոնք կը խուսափին որեւէ խօսքէ, որ ես կը բաժնեկցիմ Աստուածաշունչէն: Անոնք միայն ինծի հետ չեն ըներ աստիկա, այլ՝ բոլոր անոնց հետ, որոնք կը փորձեն իրենց օգնել: Անոնք կը գործածեն ուրիշ աստուածաշնչական համարներ, պարունակէն դուրս՝ իրենց ըսածը հաստատելու համար եւ կը մերժեն ուրիշ որեւէ հակաճառութիւն: Յետոյ անոնք կը խուսափին ինձմէ եւ իրենք զիրենք կ'անջատեն այն բոլորէն, որոնք կը փորձեն իրենց օգնել, քանի որ այլեւս իրենց աչքին մենք հոգեւոր չենք: Ժամանակի ընթացքին կը փաստուի, որ անոնց ճամբաներուն պտուղները Աստուծոյ կամքին հակառակ են, կամ իրենց ակնկալածը չի պատահիր: Կրնայ ըլլալ, որ անոնք իրենց երեւակայութեան ձայնը լսեցին եւ ոչ թէ Յիսուսի: Արդեօք անոնք մտերմութիւն կը փնտռէին եւ խաբկանք գտան:

## ԱՍՏՈՒԾՈՅ ՄՕՏԵՆԱԼ ԿՌԱՊԱՇՏ ՍԻՐՏՈՎ

Կայ ձեւ մը այս սոսկալի խաբկանքէն զերծ մնալու, եւ դարձեալ, աստիկա կը գտնուի Տիրոջ վախին մէջ: Երբ Աստուծոյ վախը ունինք, պէտք է Անոր գանք շիտակ (չէզոք) սիրտով, պատրաստ՝ լսելու Անոր խրատական եւ սրբագրող խօսքերը: Մենք մեր իմաստութեան կամ անձնասէր ցանկութիւններուն չենք հակիր, հապա բուն կերպով Անոր կամքը կը փափաքինք:

Տիրոջ կամքին համաձայն չեղող բուն ցանկութիւններով Տիրոջ մօտենալը, երբ գիտենք Իր կամքը, շատ անխոհեմ եւ վտանգաւոր բան է. քանի որ աստիկա կրնայ մեզ տանիլ



խաբկանքի յաջորդ հանգրուանին, որ շատ զգաստացնող է: Խաբկանքի այս մակարդակը այն է, երբ Աստուած Ինք մեզի կ'արտօնէ, որ մեր ուզածը ունենանք:

«Տէրոջը խօսքը ինծի եղաւ՝ ըսելով. 'Որդի՛ մարդոյ, այն մարդիկը իրենց կուռքերը իրենց սրտերուն մէջ կանգնեցուցին ու իրենց անօրէնութեանը գայթակղութիւնը իրենց երեսներուն առջեւ դրին. միթէ անոնց պատասխան պիտի տամ՝» (Եզեկիէլ 14.2-3):

Տէրը տրտմեցաւ, որ Իր ժողովուրդը Իր առջեւ եկաւ՝ ուղղութիւն, խորհուրդ եւ իմաստութիւն խնդրելու համար, մինչ իրենց սիրտերուն մէջ պահուած կուռքեր ունէին: Յստակ չէ, թէ արդեօք անոնք ամբողջութեամբ գիտակից էին ատոր. բայց այնպէս կը թուի, որ ճշմարտութիւնը անոնց աչքերէն ծածկուած էր: Այդ կուռքերը պատճառ դարձան, որ անօրէնութեան մէջ իյնան: «Անօրէնութիւն» բառին եբրայերէնը «աւոն» (awon) բառն է եւ կը նշանակէ՝ Աստուծոյ կամքին հանդէպ անարգանք, անկախ անկէ, թէ դիտումնաւոր է կամ ոչ:

Նկատի՛ առէք, Աստուած չըսաւ, որ անոնք կուռքեր կանգնեցուցած էին իրենց փակերուն, նստասենեակներուն կամ ննջարաններուն մէջ: Այս կռապաշտութիւնը անոնց սիրտերուն մէջ էր: Յիշեցէ՛ք, կռապաշտութիւնը սահմանափակուած չէ օտար աստուծոյ մը անունը կանչելով: Ինչպէս նախապէս ըսի, կռապաշտութեան ձեւերէն մէկը զԱստուած աւելի ցած պատկերի մը իջեցնելն է. մէկը, որ մեզի պիտի տայ այն, ինչ որ բուն կերպով կը ցանկանք: Ամէն տեսակի կռապաշտութեան արմատը ազահութիւնն է: Նոր Կտակարանը կը հաստատէ ասիկա.

«Հետեւաբար մեռցուցէ՛ք ձեր մէջ երկրաւոր ցանկութիւնները, այսինքն՝ ձեզմէ դուրս վանեցէ՛ք պոռնկութիւնը, պղծութիւնը, կիրքը, չար ցանկութիւնը եւ ազահութիւնը, ինչ որ կռապաշտութիւն է» (Կողոսացիներուն 3.5-6, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Եփեսացիներուն 5.5-ին մէջ Պօղոս դարձեալ կ'ըսէ, որ ազահ մարդը կռապաշտ է: Յստակ է, որ կռապաշտութիւնը կը սահմանուի իբրեւ ազահութիւն. ուստի եկէք սահմանենք ազահութիւնը: «Ուեպաթըր» Բառարանը ատիկա կը սահմանէ իբրեւ «առարկայ մը ձեռք բերելու եւ անոր տիրանալու զօրաւոր ցանկութիւն»: Աղօթքով եւ Տիրոջմէն խնդրեցի Իր սահմանումը: Իր պատասխանն էր. «Ազահութիւնը շահի ձգտումն է»:

Ասիկա ազահութիւնը չի սահմանափակեր դրամի ցանկութեամբ: Ասիկա կը ներառէ ստացուածքը, դիրքը, հանգիստը, ընդունելութիւնը, հաճոյքը, իշխանութիւնը, սեռային ցանկութիւնը, եայլն: Ազահութիւնը այն վիճակն է, որուն մէջ մենք մեզ կը գտնենք երբ գոհ չենք: Մենք կը ձգտինք, քանի որ Աստուծոյ մեզի տուածով խաղաղ կամ հանգիստ չենք: Գիտակցաբար կամ անգիտակցաբար մենք դէմ կը դնենք Անոր ծրագիրին կամ գործընթացին մեր կեանքին մէջ: Այդ պատճառով Աստուածաշունչը մեզի կ'ըսէ. «Դրամասիրութիւնը [ազահութիւնը] թող տեղ չունենայ ձեր կեանքին մէջ. գոհացէք ձեր ունեցածով, որովհետեւ Աստուած ինք կ'ըսէ. 'Բնաւ երեսի վրայ պիտի չձգեմ եւ պիտի չըքեմ քեզ'» (Եբրայեցիներուն 13.5): Երբ կ'ապրինք այս վստահութեամբ՝ «[...] Երեսիդ [Տիրոջ] առջեւ լեցուն ուրախութիւն կայ, քու աջ կողմդ միշտ հաճութիւններ կան» (Սաղմոս 16.11), Իր ներկայութենէն կամ մեզի համար Իր ունեցած ծրագիրէն դուրս բաւարարութիւն պիտի չփնտռենք:

Ազահութիւնը կը բնակի անհանդարտութեան մէջ եւ կը սնանի անսպառ ցանկութեամբ: Ասիկա հիանալի կերպով կը նկարագրէ Իսրայէլի որդիները երբ անոնք Եգիպտոսէն դուրս եկան: Անոնք շարունակ կը փորձէին յափշտակել այն, ինչ, որ կը կարծէին, թէ իրենց համար լաւագոյնն էր, նոյնիսկ երբ Աստուած Իր կամքը կը յայտնէր: Անոնք չսիրեցին այն գործընթացը, որ Աստուած ընտրեց՝ զիրենք պատրաստելու, որ խոստացուած երկիրը գրաւեն, եւ տրտնջացին պայմաններուն, ջուրին, կերակուրին եայլնի մասին: Անոնք չունէին սուրբ վախ եւ անոնց սիրտերը հասունցած էին՝

ազահութիւն զարգացնելու: Երբ Աստուած Ինքզինք յայտնեց, անոնք ապաստանարան փնտռեցին, որպէսզի պահեն այն ճշմարտութիւնը, թէ իրենց գաղտնի հաճոյքի եւ շահի ցանկութիւնները կը գերազանցէին Աստուծոյ Անծին համար իրենց ունեցած փափաքը:

Երբ Տէրը եւ Մովսէսը միասին առանձնացան, ժողովուրդը զԱստուած ձեւորեց այնպէս մը, որ Ան ունենայ պատկերը մէկու մը, որ իրենց պիտի տար իրենց ազահ ցանկութիւնները: Հետաքրքրականօրէն ամէն բան ոսկիին շուրջը կը դառնար: Այս դրամասիրութեան ապացոյցը այն էր, որ անոնք Աստուծոյ կամքին հանդէպ բարեպաշտ գոհունակութիւն չունէին: Անոնք հիմա կը գործէին խաբկանքի թանձր մշուշին մէջ:

(Որպէս կողմնակի նշում, ազահութիւնը նաեւ կռապաշտութեան ուրիշ ձեւերու արմատն է: Ամբողջ մարդկութիւնը ստեղծուած է զԱստուած պաշտելու բնածին փափաքով մը: Սակայն շատերը չեն ուզեր ենթարկուիլ ճշմարիտ Ստեղծիչին: Ուստի սուտ աստուած մը կը կանգնեցնեն: Բայց ղվ է պատճառը (սկիզբ տուողը) այս սուտ աստուծոյն: Պատասխանը՝ ան, որ ստեղծեց զայն՝ մարդը: Մարդը կը պաշտէ այս սուտ աստուածը, որ վերջաւորութեան իրեն կու տայ իր փափաքածը: Դարձեալ, արմատը ազահութիւնն է):

Եզրակացութիւն՝ անկախ անկէ, թէ անոնք ինչ ձեւ կ'առնեն, բոլոր կուռքերը աղբիւր են: Անոնք կը գրաւեն այն տեղը, որուն միայն Աստուած արժանի է: Կուռքը կրնայ ծառայել իբրեւ քու ուրախութեանդ, հանգիստիդ, խաղաղութեանդ, մատակարարումիդ, եւայլնի աղբիւրը: Աստուած կ'ըսէ. «Դուք ձեզի չաստուածներ ու կուռքեր մի՛ շինէք [...]» (Լեւտացւոց 26.1): Մենք ենք որ ատիկա կուռքի կը վերածենք: Կուռքը որեւէ բան է, որ Աստուծմէ առաջ կը դնենք մեր կեանքերուն մէջ: Ատիկա կրնայ ըլլալ մեր սիրածը, վստահածը, փափաքածը կամ այն բանը, որուն աւելի ուշադրութիւն կը դարձնենք, քան Տիրոջ: Կուռքը այն բանն է, որմէ ուժ կը ստանաս կամ որուն ուժ կու տաս:

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

Հաւատացեալը կռապաշտութեամբ կը ներգրաւուի երբ ան կ'արտօնէ, որ իր սիրտը դժգոհութեամբ գրգռուի եւ Աստուծոյ կամքէն դուրս բաւարարութիւն կը փնտոէ իր կեանքին համար: Դարձեալ, եզրակացութիւնը ազահութիւնն է:

### ԱԳԱՀՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԱՅՆ ՊԱՏԱՍԽԱՆՈՒԱԾ

Վերադառնալով այն խօսքերուն, որ Աստուած Եզեկիէլին ըսաւ, Ան կ'ողբար այն իրականութիւնը, որ Իր սեփական ժողովուրդը օգնութիւն խնդրելու եկաւ՝ իր սիրտին մէջ կուռքեր ունենալով: Անոնք կ'ուզէին, որ Աստուած իրենց տար այն, ինչ որ իրենք եսասիրութեամբ կը ցանկային, փոխանակ Անոր կամքը փնտոեն: Նոյնն է պարագան պատանիներուն, որոնք կ'ակնկալեն, որ իրենց ծնողները համաձայնին իրենց գաղափարներուն հետ, փոխանակ իրենց ծնողներուն իմաստութիւնը խնդրեն, չանդրադառնալով, որ իրենց ծնողները աւելի իմաստուն են եւ միայն լաւագոյնը կ'ուզեն իրենց համար:

Աստուծոյ պատասխանը Եզեկիէլին թէ՛ տագնապեցնող էր եւ թէ՛ սթափեցնող: Ան յստակօրէն եւ ուժգնօրէն Եզեկիէլին կ'ըսէ, որ երբ Իրեն պատկանողները Իրեն գան ազահ սրտերով. «[...] Ես Տէրս անոր կուռքերուն շատութեանը համաձայն պատասխան պիտի տամ» (Եզեկիէլ 14.4): Անգլերէն Աստուածաշունչի «Նիւ Ամերիքըն Սթենտըրտ» տարբերակը ատիկա այսպէս կ'ըսէ. «Ես՝ Տէրս պիտի ստիպուիմ անոր պատասխան տալ՝ նկատի ունենալով անոր կուռքերուն շատութիւնը»: Կարելի է այսպէս կարդալ. «Ես՝ Տէրս պիտի ստիպուիմ անոր ազահ ցանկութիւններուն համաձայն այդ հարցին մէջ անոր պատասխան տալ»:

### ԱՍՏՈՒԾՈՅ ՄԱՐԴՈՒ ՄԸ ՄՈԼՈՐԻԼԸ

Ասիկա բացայայտ է Բաղասամի կեանքին մէջ: Ան Եհովային մեծ մարգարէն էր, եւ ոչ թէ սուտ աստուծոյ մը, այլ ինքնին այն Տիրոջ, որուն մենք կը ծառայենք: Անոր մարգարէական ծառայութիւնը այնքան հզօր էր, որ

թագաւորներու ականջին հասաւ: Այդ թագաւորներէն մէկը Բաղակն էր, Մովաբի եւ Մադիամի թագաւորը:

Մովաբի եւ Մադիամի ժողովուրդը սարսափեցան, որովհետեւ Իսրայէլը ամբողջութեամբ բնաջինջ ըրած էր աշխարհի ամենահզօր ազգը՝ Եգիպտոսը, եւ հիմա անոնք Մովաբի դաշտերուն մէջ իջեանած էին: Ժողովուրդը խորհեցաւ, որ եթէ Եգիպտոսը այդքան դիրութեամբ կրնար ոչնչացուիլ, անոնք դժուարութիւն պիտի չունենային նոյնը իրենց ընելու: Վախը ամենուրեք կը տիրէր եւ նոյնիսկ պալատ հասաւ:

Թագաւորը ծրագիր մը ունէր: Ան գիտէր, որ այս մեծ մարգարէին՝ Բաղասամին օրհնածը օրհնեալ կ'ըլլար եւ անիծածը՝ անիծեալ: Ան Բաղասամին ազնուականներ դրկեց մեծ ընծաներով եւ անոր աղաչեց, որ իրենց հետ վերադառնայ, որպէսզի թագաւորին քով կենայ եւ Մովաբի բարձր տեղերէն Իսրայէլը անիծէ:

Բաղասամ խանդավառուեցաւ. «[...] Այս գիշեր դուք ալ հոս կեցէք, որպէս զի գիտնամ, թէ Տէրը ուրիշ ինչ պիտի ըսէ ինծի» (Թուոց 22.8): Անոր պատասխանը շատ կը նմանի այսօրուայ հաւատացեալներէն շատերուն պատասխանին. «Աղօթեմ այս հարցին մասին եւ լսեմ, թէ Տէրը ինչ կ'ըսէ»:

Տէրը Բաղասամին քով կու գայ եւ կը հարցնէ. «Ո՞վ են քեզի հետ եղող մարդիկը»: Այլ խօսքով: «Ինչո՞ւ պէտքը կը զգաս նոյնիսկ աղօթելու այդ մասին: Այս մարդիկը Ինծի հետ ուխտ չունին, բայց անոնք քեզմէ կը խնդրեն, որ Իմ ուխտի ժողովուրդս անիծես: Ինչո՞ւ պէտքը կը զգաս նոյնիսկ հարցնելու»:

Ասոր մէջ բոլորիս ուղղուած նամակ մը կայ՝ կան բաներ, որոնց համար պէտք չէ՛ աղօթենք: Մենք արդէն պէտք է գիտնանք Աստուծոյ փափաքը նախքան Անոր հարցնենք: Ինծի համար տհաճ է երբ իմ պատանի տղաքս ինծի մօտենան եւ խնդրեն բան մը, որուն համար արդէն գիտեն, որ «ո՛չ» պիտի ըսեմ: «Ինչո՞ւ նոյնիսկ կը հարցնեն»: Իրենց տալէս ետք այն պատասխանը, որ իրենց հոգիին խորը գիտէին, որ պիտի լսեն, ես ինծի կը մըմռամ: Անոնք ատիկա կ'ընեն,

քանի որ իմ խօսքս տակաւին օրէնք է կամ սահմանափակող բան մը իրենց կեանքին այդ բաժինին մէջ, եւ ոչ թէ իրենց համար հաճոյք է ատիկա ընելը:

Վերադառնալով Բաղասամին, կը պատկերացնեմ, որ առաջարկուած վարձատրութիւնը հսկայական էր եւ ան պատուաւոր դիրք պիտի ստանար մովաբացիներուն եւ մադիանացիներուն մէջ: Արդեօք Բաղասամին դրամի եւ պատիւի ցանկութիւնը իր աչքերը ծածկեց ողջմտութիւնը ընդունելէ:

Աստուած, որ ողորմած է, հաւանաբար մտածեց՝ «*Լաւ, Բաղասամ, քանի որ դուն չհասկցար, կամ իրականութեան մէջ չ'ուզեցիր հասկնալ, կամքս շար յարակ պիտի դարձնեմ*»: Ուստի կ'ըսէ. «Ատոնց հետ մի՛ երթար, ժողովուրդը մի՛ անիծեր. վասն զի անիկա օրհնեալ է» (հմր 12): Հիմա յստմկ է: Յաճախ կը տեսնեմ, որ երբ Աստուած խօսի, Անոր խօսածը շատ որոշակի եւ յստակ է. մենք ենք, որ կը կը պղտորենք եւ կը բարդացնենք զանիկա:

Բաղասամ կը հնազանդի եւ յաջորդ առաւօտ պատգամաւորները կը դրկէ ըսելով. «Դուք ձեր երկիրը գացէք. վասնզի Տէրը *չի թողոր* [կը մերժէ] որ ձեզի հետ երթամ» (հմր 13, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Թէեւ ան կը հնազանդի, բայց դժկամութիւն մը կը լսուի անոր բառերու ընտրութեան մէջ, մասնաւորաբար «*չի թողոր*» (կամ «*կը մերժէ*») բառը: Հետեւեալը պատկերացուցէք՝ պատանի դուստր մը պարի հրաւիրուած է երիտասարդի մը կողմէ, որ իրապէս հանրաժանօթ է, բայց վատ համբաւ ունի: Ան ոգեւորուած է, որ հրաւիրուած է այդքան հանրաժանօթ մէկու մը կողմէ եւ խանդավառութեամբ երթալու արտօնութիւն կը խնդրէ իր հօրմէն: Իր աղջկան հանդէպ իր սէրէն եւ մտահոգութենէն մղուած՝ հայրը մեղմօրէն կը մերժէ անոր խնդրանքը: Ան շատ կը յուսախաբուի եւ երիտասարդին կ'ըսէ. «Չեմ կրնար երթալ, ծնողքս չի ձգեր»: Իրականութեան մէջ ան այսպէս ըսել կ'ուզէ. «Ծնողքս 'ո՛չ' ըսաւ, բայց ես 'այո՛' պիտի ըսէի»: Իր ծնողքն է, որ մերժեց իրեն արտօնութիւն տալ: Ինք կ'ուզէ երթալ, բայց իր ծնողքին խօսքն է, որ իրեն կ'արգիլէ իր ցանկացած փափաքին հասնիլ: Դժբախտաբար

Եթէ ան իր ծնողքին սիրտը չստանայ, վերջաւորութեան ձեւ մը պիտի գտնէ այդ երիտասարդին հետ ըլլալու, եւ սովորաբար ահաւոր հետեւանքներու դիմաց պիտի գտնուի:

Բաղասամ մարգարէ մըն էր, որ դրամի հանդէպ անառողջ փափաք ունէր: Ազահութիւնը իր մէջ կը վառէր: Ան կեանքի վերաբերող անլի աղուոր բաներու կը ցանկար ինչպէս նաեւ անլի մեծ ընկերային ազդեցութեան: Ան կը հնազանդէր, բայց ոչ առանց դժկամութեան: Աստուծոյ խօսքը սահմանափակում կը բերէր, եւ ոչ հաճոյք, քանի որ անիկա զինք կ'արգիլէր իր իրական ուզածը ունենալէն:

### ՄԵՐ ՍԵՓԱԿԱՆ ՓԱՓԱՔՆԵՐՈՎ ՏԱՐՈՒԱԾ

Մովաբի եւ Մադիամի ծերերը Բաղակ Թագաւորին վերադարձան եւ յայտնեցին. «Բաղասամ կը մերժէ մեզի հետ գալ»: Սակայն ասիկա չկասեցուց թագաւորը. ան անմիջապէս անոնցմէ անլի բարձր դիրք ունեցող եւ անլի պատուաւոր մարդիկ եւ անլի դրամ ղրկեց Բաղասամի:

Բաղակ ինչո՞ւ ատիկա կ'ընէ: Կը հաւատամ, որ դիւային ուժերը կը մղէին զինք: Ինչո՞ւ կ'ըսեմ ատիկա: Աստուածաշունչը կը բացատրէ. «Իւրաքանչիւր մարդ կը փորձուի՝ *իր իսկ ցանկութիւններէն* տարուելով ու *խաբուելով*» (Յակոբոսի 1.14, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Երկու բան նկատի առէք: Առաջին՝ «*իր իսկ ցանկութիւններէն*» բառերը: Որեւէ զօրաւոր ցանկութիւն, որ ունինք, որ Աստուծոյ կամքին հակառակ է, ազահութիւն է, որ իր կարգին կոապաշտութիւն է: Երկրորդ՝ նկատի առէք «*խաբուելով*» բառը. ասիկա թշնամիին բաժինն է — ան կը խաբէ: Սակայն ասիկա լսեցէք. չէք կրնար խաբուիլ բանով մը, որուն չէք ցանկար: Եթէ էքսթրասի թմրեցուցիչը առաջարկէք եկեղեցւոյ անդամներէն շատերուն, անոնք պիտի չվարանին ձեզի մերժելու: Ինչո՞ւ: Որովհետեւ անոր չեն փափաքիր: Չէք կրնար խաբուիլ բանով մը, որուն չէք ցանկար: Սակայն կրնաք խաբուիլ այն ցանկութիւններով, զորս խաչին տակ չէք դրած: Կը խաբուինք այն բաներով, որոնց կը ցանկանք, կամ *բուռնօրէն կը փափաքինք*:

Թշնամին գիտէր, որ այս մարգարէն դրամը եւ ճանչցուած ըլլալը կը սիրէ եւ այս անաստուած թագաւորը կը մղէ, որ աւելի դրկէ այդ երկուքէն: Այս ներկայացուցիչները իշխանութիւնը ունին առաջարկելու որեւէ բան, որ Բաղակը ունի երբ կ'ըսեն. «Ինձի ինչ որ ըսես՝ պիտի ընեմ»: Ուստի, ինչ հիանալի առաջարկ: Դրացիիդ ունեցածը քեզի առաջարկուիլը բան մըն է, ան կրնայ շատ բան ունենալ կամ կրնայ չունենալ, բայց թագաւորի մը իր ունեցածը քեզի առաջարկելը բոլորովին ուրիշ բան է — մասնաւորաբար երբ քու տկարութիւնդ թագաւորին զօրութեան մարզերէն մէկն է: Բայց եւ այնպէս լսենք Բաղասամի պատասխանը.

«Եթէ Բաղակ իր տունովը լեցուն արծաթ ու ոսկի ալ տայ ինձի, իմ Տէր Աստուծոյս հրամանին հակառակ *չեմ կրնար* պզտիկ կամ մեծ բան մը ընել» (Թուոց 22.18, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Շատեր կը ներշնչուին Բաղասամի հնազանդութենէն: Սակայն նորէն լսենք անոր բառերու ընտրութիւնը, «*չեմ կրնար*»: Դարձեալ, Տիրոջ խօսքը անոր կ'արգիլէ իր իրական փափաքածը ունենալ: Բաղասամ գիտէ այն, ինչ որ եկեղեցի յաճախողներէն շատերը գիտեն: *Չէք կրնար կամովին անհնազանդ գտնուիլ Տիրոջ խօսքին հանդէպ եւ փակաւին օրհնուիլ*: Ան նաեւ գիտէ այն, ինչ որ թերեւս եկեղեցի յաճախողներուն կէսը գիտէ. կամովին անհնազանդութիւն ընողները դատաստանի պիտի ենթարկուին: Սակայն երբեմն այս տեղեկութիւնը բաւարար է ձեզ փորձանքի մէջ ձգելու, քանի որ եթէ չէք կրնար որոշ ձեւով մը ատիկա ստանալ Աստուծոյ կամքով, դուք պիտի շարունակէք փնտռել, որպէսզի գտնէք ձեւ մը, որ ստանաք այն, ինչ որ կ'ուզէք «Աստուծոյ կամքին» սահմաններուն մէջ: Ատիկա բացատրելու համար քննենք Բաղասամին յաջորդ խօսքը.

«Արդ, կ'աղաչեմ, այս գիշեր դուք ալ հոս կեցէք, որպէս զի գիտնամ թէ Տէրը ուրիշ ինչ պիտի ըսէ ինձի» (Թուոց 22.19):



Լսեցի՞ք ինչ ըսաւ: «[...] Տէրը ուրիշ ինչ պիտի ըսէ [...]»: Արդեօք ինք կը կարծէր, թէ ւաւելի շատ դրամը Աստուծոյ միտքը պիտի փոխէ: Արդեօք ինք կը կարծէր, թէ առաջին անգամ, որ Տէրը ըսաւ. «Ատոնց հետ մի՛ երթար», Աստուած կ'ուզէր, որ տեղի չտայ եւ ւաւելի լաւ առաջարկի մը սպասէ:

Ինչո՞ւ ան պէտք է նորէն աղօթէր այդ մասին: Կը տեսնէ՞ք, ան տակաւին կը փորձէ ձեւ մը գտնել իր ուզածին հասնելու: Իր բուռն ցանկութիւնը կը գերակշռէ ամէն ողջմտութիւն: Ասիկա բնաւ տարբեր չէ այդ պատանի աղջիկէն, որ իր հորը գլուխը կը տանի մինչեւ որ այդ հանրածանօթ տղուն հետ դուրս ելլէ: Բաղասամը յամառ (կամակոր) է եւ պատրաստ չէ ուրախութեամբ Աստուծոյ փափաքը կատարելու, որովհետեւ ատիկա կը քննադատէ իր ազահ սիրտը: Կամ ուրիշ ձեւով ըսելու համար, կռապաշտ սիրտը: Սուրբ Գիրքը ատիկա կը հաստատէ ըսելով. «[...] Կամակորութիւնը կռապաշտութեան պէս է» (Ա.Թագաւորաց 15.23): Ահա՛ Աստուծոյ պատասխանը Բաղասամին.

«Եւ Աստուած գիշերը Բաղասամին եկաւ ու ըսաւ անոր. 'Եթէ մարդիկը քեզ կանչելու գան, ելիր, անոնց հետ գնա՛. բայց ինչ որ քեզի հրամայեմ, միայն ան ըրէ՛» (Թուոց 22.20):

Յաջորդ առտու մարդիկը զինք կանչելու պիտի երթային, քանի որ անոնք Բաղասամի հետ մնացին՝ յուսալով, որ իրենց հետ կը վերադառնայ: Ուստի Աստուած հիմնականօրէն կ'ըսէ. «Եթէ մարդիկը քեզ կանչելու գան, անոնց հետ գնա՛. բայց ինչ որ քեզի հրամայեմ, միայն ան ըրէ՛»: Ուստի, թերեւս մենք սխալ էինք մեր գնահատումին մէջ: Նկատի՛ առէք, չ'ըսեր. «Գիշերը Սատանան Բաղասամին քով եկաւ եւ ըսաւ. 'Ելիր, անոնց հետ գնա՛'», ոչ ալ կ'ըսէ. «Ահա խաբող հոգի մը Բաղասամին եկաւ այդ գիշեր եւ ըսաւ ...»: Քիչ առաջուան ըսածս կատակ էր, բայց ասոր լոյսին տակ, կրնայ այնպէս թուիլ, որ Աստուած զինք մղած էր, որ տեղի չտայ (չընդունի), որպէսզի ւաւելի շատ դրամ առնէ, քանի որ հիմա Ինք կ'ըսէ. «Գնա՛»:

ՄԵՐ ՈՒՉԱԾԸ ՁԵՌՔ ՁԳԵԼ

Հիմա Բաղասամը Աստուծմէ խօսք ստացաւ, որ երթայ: Ան յաջորդ օրը առտու կանուխ ելաւ՝ ընելու այն, ինչ որ Տէրը նախորդ իրիկուն իրեն պատուիրեր էր, որ ընէ, եւ տեսէք ինչ եղաւ.

«Բաղասամ առտուն ելաւ ու իր իշուն համետը դրաւ եւ Մովսէսի իշխաններուն հետ գնաց: Բայց *Աստուծոյ բարկութիւնը բորբոքեցաւ [քանի որ ան գնաց]*» (Թուող 22.21-22, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Մէկ վայրկեան: Տէրը բարկացաւ, որովհետեւ Բաղասամը կ'ընէր միայն այն, ինչ որ Աստուած իրեն նախորդ գիշերը ըսած էր: Գիտենք, որ Աստուած մտազար չէ, ուստի ինչպէս կը բացատրենք ասիկա: Պատասխանը կը գտնուի Աստուծոյ խօսքերուն մէջ, որ Եզեկիէլին ուղղուած է: Յիշեցնեմ, որ Տէրը կ'ըսէ, թէ երբ Իրենինները Իրեն գան՝ իրենց սիրտին մէջ ազահութիւն ունենալով՝ «Ես՝ Տէրս անոր ազահ ցանկութիւններուն համաձայն պիտի ստիպուիմ այդ հարցին մէջ անոր պատասխան տալ»:

Ասիկա է, որ եկեղեցիին մէջ շատերը չեն գիտեր կամ չեն հասկնար: Եթէ իսկապէս բան մը կ'ուզենք, եթէ շարունակենք ցանկալ, երբ Աստուած արդէն յայտնած է Իր փափաքը, հաւանաբար Ան պիտի տայ մեզի ատիկա, նոյնիսկ երբ Իր կամքին հակառակ է, եւ նոյնիսկ եթէ գիտէ, որ հետագային պիտի դատապարտուինք:

Այս պահուն, կրնաք ցնցուիլ. բայց նկատի առէք Իսրայէլը, անոնք թագաւոր կ'ուզէին: Սամուէլը Տիրոջ մօտեցաւ իրենց խնդրանքով եւ Աստուած իրենց իմացուց, որ Իր փափաքն էր, որ անոնք թագաւոր չունենան: Ան Սամուէլին ըսաւ, որ թագաւորը պիտի առնէր իրենց լաւագոյն որդիները, դուստրերը, արտերը, այգիները եւ պուրակները եւ տուրքեր պիտի դնէր իրենց վրայ:

Սամուէլ Տիրոջ այս խօսքը ժողովուրդին պատմեց. կարդացէք անոնց պատասխանը. «Սակայն ժողովուրդը Սամուէլին

խօսքին մտիկ ընել չուզեց»: Նկատի առեք, Աստուածաշունչը չ'ըսեր՝ անոնք Տիրոջ ձայնը մերժեցին: Դարձեալ, ինչպէս Մովսէսին պարագային, անոնք պատգամաբերը իրաւագրկեցին, որպէսզի պահեն *Տիրոջ համար իրենց ունեցած սեփական պատրկերը*, որպէսզի իրենց ուզածը ձեռք բերեն: Աստուած Սամուէլը առանձնաբար մխիթարեց: «Անոնք քեզ չեն մերժեր, այլ զիս կը մերժեն» (Տէն Ա.Թագաւորաց 8):

Ի պատասխան անոնց խնդրանքին Աստուած անոնց տուաւ անոնց թագաւորը: Ան նոյնիսկ ընտրեց այդ թագաւորը, որոնց առաջինը Սաւուղն էր: Ինչպէս կանխագուշակուած էր, թագաւորները առին անոնց լաւագոյն արտերը, տղաքն ու աղջիկները եւ տուրք կը հաւաքէին: Յետոյ այդ թագաւորները վերջաւորութեան զանոնք բաբելոնեան գերութեան առաջնորդեցին: Աստուած անոնց տուաւ այն, ինչ որ անոնք սրտանց փափաքեցան:

Նկատի առեք Իսրայէլը անապատին մէջ: Անոնք կերան լաւագոյն կերակուրը, որ մարդը երբեւէ կերած է՝ մանանան: Եղիան անոնցմէ միայն երկու կարկանդակ կերաւ եւ քառասուն օր գիշեր-ցերեկ վազեց: Ահա՛ զօրութեամբ լեցուն կերակուր մը:

Սակայն Իսրայէլը անկէ ձանձրացաւ եւ միսի համար տրտնջալով ճչաց: Անոնք Տիրոջմէն միս ուզեցին եւ կը կարդանք, որ Աստուած «անոնց տուաւ անոնց ուզածը [...]» (Սաղմոս 106.15): Դարձեալ, անոնց տրուեցաւ անոնց ազահ ցանկութիւնները: Իրականութեան մէջ, Ան հրաշքով ատիկա հայթայթեց անոնց.

«Երկնքի մէջ արեւելեան հովը հանեց  
 Եւ իր զօրութիւնովը հարաւային հովը բերաւ.  
 Անոնց վրայ փոշիի պէս միս տեղացուց:  
 Ծովու աւազին չափ թեւաւոր թռչուններ  
 Անոնց բանակին մէջ եւ  
 Անոնց վրաններուն չորս կողմը իջեցուց» (Սաղմոս 78.26-28):

Անոնք խնդրեցին, Աստուած անոնց տուաւ հրաշքի

միջոցով («Իր զօրութիւնովը»)։ Ան երեք միլիոն հոգի կերակրելու չափ լորամարգի բերաւ անապատը։ Ուառւ, ինչ հիանալի հրաշք, քանի որ լորամարգին անապատին մէջ չ'ապրիր։ Ոչ միայն այդ, այլեւ անոնք զէնքեր կամ շուներ չունէին։ Սակայն տեսէք, թէ ինչ կը պատահի։

«Կերան եւ աղէկ կշտացան.

Վասնզի *իրենց ցանկացածը* իրենց տուաւ։

Իրենց ցանկացածներէն զուրկ չմնացին

Եւ քանի որ իրենց կերակուրը իրենց բերանն էր,

Աստուծոյ բարկութիւնը անոնց վրայ բորբորքեցաւ

Ու սպաննեց անոնց զօրաւորները

Ու գետինը զարկաւ Իսրայէլի ընտիրները» (Սաղմոս

78.29-31, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ)։

Ան հրաշքով կը շնորհէ անոնց ցանկութիւնը, բայց նախքան անոնց աւարտելը Անոր դատաստանը անոնց վրայ եկաւ։ Ան անոնց սիրտին բուռն փափաքին համաձայն պատասխանեց։

Նկատի առէք հետեւեալը՝ երիտասարդ տղամարդ մը դուրս կ'ելլէ երիտասարդուհիի մը հետ։ Երիտասարդին ծնողները մտածեցին եւ. «Տղան, մենք հանգիստ չենք այս յարաբերութեամբ։ Կ'ուզենք, որ դադրիս անոր հետ տեսնուելէ»։ Անոր պատանհներու հովիւը կը հաստատէ ատիկա. «Կ'ուզեմ կրկնել քու ծնողներուդ խօսքերը։ Երբ այդ մասին կ'աղօթեմ, շատ անհանգիստ կը զգամ։ Դուն իրապէս պէտք է դադրիս այդ աղջիկը տեսնելէ»։ Բայց երիտասարդը վերջաւորութեան այսպէս կը հակաճառէ. «Ես շատ աղօթեցի այդ մասին եւ Աստուած ինձի ըսաւ, որ կրնամ ամուսնանալ անոր հետ»։ Անոնք կ'ամուսնանան եւ յետոյ ան կը զարմանայ, թէ ինչո՞ւ այդքան մեծ հարցեր ունին։

Նկատի առէք հետեւեալը՝ մարդ մը իր կնոջ կ'ըսէ, որ յատուկ գործի դիրքի մը համար կ'աղօթէ։ Կինը կ'ըսէ. «Ես հանգիստ չեմ զգար այդ դիրքին մասին։ Եթէ ատոր տիրանաս, տարին ատելի քան երկու հարիւր օր պիտի ճամբորդես։ Այլեւս ամիսը թերեւս մէկ անգամէն ատելի

պիտի չկարենաս եկեղեցի յաճախել, եւ պիտի փախցնես այն պատգամները, որ Աստուած մեր հովիւին սիրտին վրայ կը դնէ, չըսելու համար պաշտամունքը, եւ ծառայութեան որեւէ դիրք ...»: Հովիւը նոյնանման մտահոգութիւններ կ'արտայայտէ, բայց ամուսինը որոշած է եւ կ'աղօթէ մինչեւ, որ այդ պաշտօնի բարձրացումը ստանայ: Տարի մը ետք ան կը զարմանայ, թէ ինչպէս ինքզինք գտած է պանդոկի սենեակի մը մէջ, օտար կնոջ մը հետ եւ հեռու է իր ընտանիքէն:

Յանկը գրեթէ անվերջ է: Պէտք է անդրադառնանք, որ երբ մենք կը ցանկանք բան մը, որ Աստուծոյ մեզի համար ունեցած կամքին հակառակ է, Ան յաճախ ատիկա կու տայ մեզի. Անոր պատասխանը մեր սիրտին մէջ բնակող կուռքերուն համաձայն պիտի ըլլայ: Վերջաւորութեան Ան ատիկա կ'ընէ՝ մեր սիրտերը վերստին գրաւելու համար:

«[...] Եկողին՝ ես Տէրս անոր կուռքերուն շատութեանը համաձայն պատասխան պիտի տամ որպէս զի Իսրայէլի տունը իրենց սրտերէն բռնեմ, վասնզի անոնք իրենց կուռքերով ինձմէ օտարացան» (Եզեկիէլ 14.4-5):

Անգլերէն Աստուածաշունչի «Էն.Այ.Վի.» տարբերակը այսպէս կ'ըսէ. «Ատիկա կ'ընեմ, որպէսզի վերստին գրաւեմ Իսրայէլի ժողովուրդին սիրտերը»: Տէրը շատ կը փափաքի մեզ վերստին դէպի Իր սիրտը քաշել: Յիշեցնեմ, մենք Անոր հետապնդումի առարկան ենք, Ան մեզի կը փափաքի: Թէեւ Ան կը փափաքի, որ ոչ ոք մուրի, կարելի չէ Անոր քթին խնդալ: Անոր սիրտը վերապահուած է անոնց համար, որոնք իրենց սիրտերը ամբողջութեամբ տուած են: Ատոր համար, Ան կ'ուզէ վերստին գրաւել մեր սիրտերը ազահութեան բոլոր թակարդներէն, որ անոր մէջ պահուլտած կռապաշտութիւն է:

Երբ անառակ որդին իր հօրմէն ժառանգութիւնը խնդրեց, ան եկաւ իբրեւ որդի, եւ ոչ թէ իբրեւ օտարական կամ ծառայ, այլ իբրեւ անոր ընտանիքին անդամներէն մէկը: Բացայայտ է, որ այս որդին իր հօրը սիրտը չունէր, այլ իր սեփական անձնասէր շարժառիթներն էին, որ զինք կը մղէին: Հայրը

չմերժեց անոր խնդրանքը, թէեւ գիտէր, որ իր որդին սխալ ձեւով պիտի գործածէ զայն: Տակաւին անոր տուաւ այդ մեծ գումարը, եւ որդին վերջաւորութեան մեծ տառապանք կրեց, ինչպէս հայրը գիտէր, որ պիտի ըլլար: Լաւ լուրը այն է, որ վերջաւորութեան որդին ինքզինքին եկաւ եւ իր հօրը վերադարձաւ: Այս վերամիացումով ան իր հօրը սիրտը ճանչցաւ այնպիսի ձեւով մը, որ ատկէ առաջ չէր ճանչցած:

Աստուած վերջաւորութեան կը յուսայ, որ վերագրաւէ իր բոլոր զաւակները, որոնք մոլորած են, քանի որ սուրբ վախ չունին: Յաւօք, ինչպէս Բաղասամի պարագային, ոմանք երբեք ճշդումներ չեն ըներ եւ Տիրոջ սիրտը չեն ճանչնար. եթէ Բաղասամին մնացեալ պատմութիւնը կարդաք, պիտի տեսնէք, որ ան շարունակեց իր ազահ հետապնդումները եւ վերջաւորութեան սուրով դատուեցաւ:

Այս բաղդատութիւնը ներկայացուած է Նոր Կտակարանին մէջ ուր անոնք, որոնք ներկայիս սուրբ վախ չունին, դասուած են Իսրայէլի որդիներուն, Կայէնին եւ Բաղասամին հետ (որոնց բոլորին մասին ես խօսեցայ այս գլուխին մէջ): Այս ազդարարութիւնը կը կարդանք.

«Կ'ուզեմ ձեզի յիշեցնել, թէպէտ դուք այդ բոլորը գիտէք, թէ ինչպէս Տէրը, անցեալին, իր ժողովուրդը Եգիպտոսէն ազատելէ ետք՝ կորուստի մատնեց անհաւատները» (Յուդայի 5):

Յետոյ Յուդան կը նկարագրէ Նոր Կտակարանի հաւատացեալները, որոնք կը դաւանին Աստուծոյ շնորհքը, բայց կը սայթաքին եւ ետ իրենց նախկին վիճակին կը վերադառնան՝ ապրելով ազահութեան, ցանկութեան եւ անհնազանդութեան կեանք մը:

«Վայ անոնց, որոնք Կայէնի գացած ճամբով գացին: Դրամի սիրոյն՝ մոլորութեան մէջ ինկան, Բաղասամին պէս, եւ իրենց ապստամբութեան համար ալ պիտի կորսուին, Կորխին պէս: Անոնց ներկայութիւնը կ'արատաւորէ ձեր սիրոյ հաւաքոյթի սեղանները, ուր

## ԻՆՉ ԲԱՆ ԱՐԳԵԼՔ Է ՃՇՄԱՐԻՏ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ

անոնք անպատկառորէն կու գան ձեզի խրախճանակից ըլլալու, միայն իրենց փորը լեցնելու համար» (Յուդա 11-12):

Նկատի առէք, անոնք կ'արատաւորեն մեր սիրոյ հաւաքոյթի սեղանները, որ այսօր ակնարկ է մեր եկեղեցւոյ ծառայութիւններուն: Մենք երբեք պէտք չէ մոռնանք, որ Յիսուս կու գայ հարսի մը համար (Իր մտերիմ սիրահարին), որ ինքզինք անբիծ պահած է աշխարհի ցանկութիւններէն: Բայց Յուդան կ'ըսէ, որ այս անունով հաւատացեալները «անպատկառորէն կու գան ձեզի խրախճանակից ըլլալու, միայն իրենց փորը լեցնելու համար»: Անոնք կ'ուզեն օրհնութիւնները եւ նոյնիսկ Տիրոջ մօտ ըլլալ, բայց Տիրոջ վախը չունին: Անոնք խաբուած են եւ իրենց խաբկանքը պիտի շարունակէ աճիլ եթէ սուրբ վախով եւ սիրով Աստուծոյ սիրտին չվերադառնան:

## ԶԳՈՒՇԱՅՈՒՐ ԻՆՉՊԷՍ ՆԱԵՒ ՍՈՐՎԵՅՈՒՐ

Ուրիշ ձեռով մը ըսեմ ասիկա: Եբրայեցիներուն Գիրքը գրողը կ'ըսէ. «Մենք, սակայն, Աստուծմէ երես դարձնողներէն չենք, որոնք կորուստի սահմանուած են [...]» (Եբրայեցիներուն 10.39): Ես համոզուած եմ, որ պատճառը, որ դուք այսօր այս գիրքը կը կարդաք եւ պատրաստակամութիւնը ունիք ձեր սիրտը քննելու, այն է, որ դուք ոչ միայն կ'ուզէք մտերմութեամբ քալել Աստուծոյ հետ, այլ ձեր ամբողջ սիրտով կ'ուզէք հաճեցնել զինք գործով եւ ճշմարտութեամբ, ոչ միայն մտադրութեամբ եւ խօսքով: Այս պատճառով Աստուածաշունչը մեզի կ'ըսէ.

«Ուստի իմ սիրելիներս, ինչպէս ամէն ատեն հնազանդ եղաք՝ ոչ միայն իմ ներկայութեանս, հապա ալ աւելի հիմա, իմ բացակայութեանս ատեն, *ահով ու դողով* անձերնուդ փրկութիւնը գործեցէք. վասնզի Աստուած է որ ձեր մէջ կը ներգործէ կամենալը ու ընելը իր հաճութեանը համար» (Փիլիպպեցիներուն 2.12-13, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Անոնք, որոնք սուրբ վախով կը քալեն, պիտի հնազանդին երբ Աստուծոյ ներկայութիւնը կը զգան, ինչպէս նաեւ երբ չեն զգար: Անոնք հաստատ են, նոյնիսկ երբ այնպէս կը թուի, որ Աստուած լքեր է զիրենք, բան մը, որ Ան երբեք չ'ըներ: Տէրը կը գրաւուի անոնցմով, որոնք սուրբ վախով կը քալեն եւ զիրենք կը զօրացնէ՝ ոչ միայն կամենալու, այլեւ կատարելու Իր բարեհաճութիւնը: Ան մեզ չի յորդորեր, որ մեր անձերուն փրկութիւնը գործենք սիրով եւ ուրախութեամբ, այլ՝ ահով ու դողով: Դարձեալ, Տիրոջ վախը շատ կարեւոր է եւ աստիկա առանց պայմանի հնազանդութիւն յառաջ կը բերէ մեր սիրտերուն, ինչպէս նաեւ մեր գործերուն մէջ:

Այն, ինչ որ ես գրեցի այս գլուխին մէջ, սթափեցնող է, բայց Պօղոս մեզի կ'ըսէ, որ բոլոր հաւատացեալները Քրիստոսով կատարեալ ներկայացնելու համար պէտք է խրատենք կամ զգուշացնենք եւ ուսուցանենք (Կողոսացիներուն 1.28): Խրատները կամ զգուշացումները սկիզբը դրական չեն երեւիր, բայց վերջաւորութեան անոնք կեանք կը փրկեն եւ պտուղ կու տան՝ երբ ուշադիր ըլլանք անոնց: Ես հաճոյքով մտիկ կ'ընեմ ուրախ եւ լաւատեսական խօսքերու, բայց նաեւ կ'անդրադառնամ, որ Դատաստանի Օրը շատեր ծառայողներուն պիտի նային եւ աղաղակեն. «Ինչո՞ւ զիս չզգուշացուցիր»: Այդ քարոզիչները պիտի դողան եթէ անոնք զԱստուած փնտռողներուն հանդէպ զգայուն, այսինքն՝ զիջումներ ընելով եկեղեցին գրաւիչ դարձնող կամ Քրիստոսը փնտռողները հաճեցնող պատգամներ տուած են եւ պիտի մնան արիւնոտ ձեռքերով (անոնց կորուստին պատասխանատու պիտի ըլլան):

Առիթով մը, ծառայութեան մը ընթացքին ես այս յայտարարութիւնը ըրի եւ յետոյ հովի մը ինձի մօտեցաւ զայրացած: Ըսաւ. «Ինչպէս կը համարձակիս ըսելու, որ մէկու մը արիւնը կրնայ մեր ձեռքերուն վրայ ըլլալ: Ատիկա Հին Կտակարանին կը պատկանի, եւ ոչ թէ շնորհքին»: Ես Աստուածաշունչս բացի եւ իրեն ցոյց տուի Պօղոսին խօսքերը.



## ԻՆՉ ԲԱՆ ԱՐԳԵԼՔ Է ՃՇՄԱՐԻՏ ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ

«Ուստի այսօր կ'իմացնեն ձեզի, թէ ես անպարտ եմ ամենուն արհունէն: Վասնզի ետ չկեցայ Աստուծոյ բոլոր կամքը ձեզի յայտնելէ: Ուրեմն զգուշացէ՛ք ձեր անձերուն եւ բոլոր հօտին համար, որուն վրայ Սուրբ Հոգին ձեզ տեսուչ դրաւ Աստուծոյ եկեղեցին հովուելու, զոր իր արհնովը ստացաւ» (Առաքեալներու Գործերը 20.26-28):

Երբեք պիտի չմոռնամ անոր դէմքին վրայ երեւցող ցնցումի արտայայտութիւնը երբ այդ բառերը կարդաց: Ան տարիներէ ի վեր ծառայութեան մէջ է եւ շարունակ կարդացած է այս համարները, բայց այդ օրը առաջին անգամ ըլլալով տեսաւ ատիկա: Ան համեստօրէն ներողութիւն խնդրեց եւ քանի մը վայրկեան եւս խօսեցանք մեր քարոզներուն մէջ միակողմանի ըլլալու թակարդին մէջ չիյնալու մասին՝ միշտ շեշտելով դրականը կամ նոյնիսկ բացասականը: Պէտք է հաւասարակշռուած ըլլանք եւ «զգուշացնենք» ինչպէս նաեւ «ուսուցանենք»:

Ասիկա այն ժամանակաշրջանն է, որուն մասին Յիսուս զգուշացուց, որ շատեր, ներառեալ ընտրուածները, կրնան խաբուիլ. Ան ըսաւ, որ համատարած խաբկանք պիտի ըլլայ: Մեր կեցուածքին ուշադիր պէտք է ըլլանք, որպէսզի չիյնանք: Պէտք է մօտենանք մեր սիրտին մէջ սուրբ վախ ունենալով, եւ ոչ թէ անհոգ սիրտով մը, որ խաբկանքի հակամէտ է: Մեր սիրող Հայրը մեր կողմն է, եւ կեանքի եւ աստուածայաշտութեան վերաբերեալ բոլոր բաները մեզի տուած է: Ան Տէր Յիսուսի միջոցով մեզի տուած է շնորհք՝ Անոր կամքին հնազանդելով ապրելու համար, եւ միայն այս սուրբ վախով է, որ կրնանք իսկական մտերմութիւն ունենալ:

## ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

1. Այս հաստատումը եղած է՝ «Առանց Տիրոջ վախին ... սխալ պատկեր մը կը զարգանայ, կը ձեւաորոտի եւ կը ձուլուի մեր հոգիին կամ երեւակայութեան մէջ»: Մինչեւ օրս ձեր ունեցած հաւատքին վրայ յետադարձ հայեացք

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

մը նետելով, եղմի՞ծ է ժամանակ մը, երբ Աստուծոյ մասին ձեր պատկերացումը սխալ էր: Եթէ այո, ատիկա ինչ ձեռով աղաւաղուած էր:

2. Հեղինակը կը մատնանշէ, որ երբ մենք կը ցանկանք բանի մը, որ մեզի համար Աստուծոյ ունեցած կամքին հակառակ է, Աստուած յաճախ ատիկա պիտի տայ մեզի: Ձեր աղօթքի կեանքին անկեղծօրէն նայելով, կայ բան մը, որուն համար շարունակ Աստուծոյ կը մօտենաք, որ կրնայ ազահ ցանկութիւն մը ըլլալ: Ձեր կեանքին մէջ կայ դէպք մը երբ ստացաք բան մը, որուն բուռնօրէն կը ցանկայիք, եւ յետոյ գոջացիք:
3. Առաջին գլուխին վերջաւորութեան գտնուող առաջին հարցումին մէջ ձեզի հարցում մը ուղղուեցաւ, որ կ'ըսէր՝ ինչն էր պատճառը, որ դուք այս գիրքը կարդալու փափաքը ունեցաք: Եթէ մտածէք, որ մինչեւ հիմա ինչ օգուտ ձեռք բերիք, ինչ բաներ մարտահրաւեր էին ձեզի համար: Ինչ փոփոխութիւններ սկսած էք տեսնել Աստուծոյ հանդէպ ձեր ունեցած պատկերացումին մէջ եւ ինչ կը նշանակէ զիսք հաճեցնել գործով եւ ճշմարտութեամբ:



# MessengerX

*Ձեր «Էփիլեյշն»-ը՝ ամենօրեայ աշակերտության համար*

## Բոլորովին անվճար

Պարզապես ներբեռնեցէ՛ք ձեր շարժական սարքին վրայ և օգտագործեցէ՛ք:  
Կամ օգտագործեցէ՛ք «ուեպ» տարբերակը հետևելու հասցեով.



**MessengerX.com**



## 120 + լեզուներ, որոնց թիւը կ'աւելնայ



Դիտեցէ՛ք և ներբեռնեցէ՛ք բովանդակութիւնը աւելի քան 120 լեզուներով:



Բաժնեկցեցէ՛ք աղբիւրներ ձեր բարեկամներուն հետ կամ սերտողութեան խումբ մը սկսե՛ք:



Մենք մշտապես նորութիւններ կ'աւելցնենք պարունակութեան:

## Դիտեցէք: Կարդացէք: Լսեցէք:

Չետազօտեցէք բովանդակութեան ընդարձակ գրադարանը, որ կ'ընդգրկէ դասընթացքներ, ելեկտրոնային գիրքեր, օտեօ-գիրքեր, կարճ ֆիլմեր, եւ ավելին, զորս կրնաք դիտել, կարդալ եւ լսել:






## Աճեցէք Ամենակարելոր Մարզերուն Մէջ

Չետազօտեցէք այնպիսի սիւթեր, ինչպիսիք են՝ ընտանեկան փոխյարաբերութիւններ, առողջ յարաբերութիւններ, գտնել ձեր կեանքին նպատակը , պոռնկագրութենէ ազատագրութիւն, ինչպէս ձեր հաւատքը կառուցել, Աստուծոյ ձայնը լսել, գործարքի ղեկավարութիւն, եւ ավելին:

## Ձեր Աճին Ճամբորդութիւնը


**MessengerX**-ին նպատակն է ձեզի օգնել, որ ձեր յաջորդ քայլը առնէք ձեր կեանքին մէջ: Ուստի մենք ծրագրած ենք աշակերտական ճամբորդութիւն մը, օգտագործելով հզօր միջոցներ, որպէսզի յարատեւելով ճամբորդութեան ավարտին հասնիք:



## Աւելի շատ հնարաւորութիւններ, գորս պիտի սիրէք

- Պարզ եւ դիւրին բաժնեկցելու միջոցներ, որոնք ձեզի պիտի օգնեն, որ Խօսքը տարածէք եւ խոյնիսկ սերտողութեան խումբեր սկսիք:
- «Chromecast» եւ «AirPlay»՝ ձեր նախասիրած սմարթ հեռատեսիլներով դիտելու համար:
- Պահպանեցէք ձեր յառաջադիմութիւնը ձեր բոլոր սարքերուն վրայ: Պահպանեցէք ձեր նախասիրած սիւլթերը ձեր գրադարանին մէջ՝ արագ մուտքի համար:
- Ներբեռնեցէք սիւլթերը ձեր սարքին վրայ՝ անցանց դիտելու համար:
- Ուժեղ որոնում եւ զտում՝ գտնելու համար այն, ինչ որ կը փնտռէք:
- Ինքնաբերաբար անցնիլ օտիօ-գիրքի մը, Աստուածաշունչերու եւ խոյնիսկ պաշտամունքի երգերու յաջորդական գլուխներուն՝ ձեր լեզուով:

# MessengerX - Նոյնքան դիպին, որքան՝ 1-2-3ը






- 1 Ներբեռնե՛ք **MessengerX** «Էփիլիթշոն»-ը «Apple Store»-էն եւ «Google Play»-էն:
- 2 Մասնակցային հաշիւ ստեղծե՛ք եւ ձեր լեզուն ընտրե՛ք:
- 3 Փնտո՛ւե՛ք, կարդա՛ցէ՛ք, դիտե՛ցէ՛ք, լսե՛ցէ՛ք, ներբեռնե՛ցէ՛ք եւ բաժնեկցե՛ցէ՛ք ձեր նախասիրած աղբիւրները:

**Դարձե՛ք աշակերտ եւ աշակերտե՛ցէ՛ք**  
Իբրեւ **MessengerX**-ին մէկ մասը, դուք կ'օգնէք թարգմանուած աղբիւրները տրամադրելու աշխարհի շուրջ գտնուող բոլոր մարդոց:

**Որովհետեւ ամէն մարդ արժանի է գիտնալու:**



**MessengerX.com**



# ՃՇՄԱՐԻՏ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ



«Կրօնական հոգին այն հոգին է, որ Իմ Խօսքս կը գործածէ՝  
իր կամքը կատարելու համար»:

**Խ**աբկանքը կը սպասէ անոնց, որոնք Տիրոջ վախը չունին, իսկ մտերմութիւնը կը սպասէ անոնց, որոնք սուրբ վախով կը մօտենան: Ասոր արտաքին ապացոյցը Աստուծոյ փափաքներուն առանց պայմանի հնազանդիլն է. մենք ոչ միայն կը հնազանդինք, այլ կ'ունենանք Անոր կամքը կատարելու սիրտը: Մենք ասիկա շարունակ կը տեսնենք Աստուծոյ հետ քալող մարդոց կեանքերուն մէջ:

Ենովքին վկայութիւնը այն է, որ ան Տէրը հաճեցուց: Մենք քաղուածքներ պիտի կատարենք Կղեմէսի գրութիւններէն, որ առաջին եկեղեցիին հայրերէն էր, որպէսզի անի մեծ խորաթափանցութիւն ունենանք: Կղեմէս Հռոմէացին, որ առաջին դարուն ապրեցաւ եւ Պետրոս եւ Պօղոս առաքելներուն կ'ուղեկցէր, կը գրէ. «Օրինակի համար առնենք Ենովքը, որ *հնազանդութեամբ արդար* գտնուելով վերափոխուեցաւ (երկինք փոխադրուեցաւ), եւ մահ չտեսաւ»:

Աստուծոյ հաճութեան բնորոշիչ նշանը Ենովքի մէջ անոր հնազանդութիւնն էր:

Սուրբ Գիրքին մէջ յաջորդ մարդը, որ մտերիմ ընկերութեամբ քալեց Աստուծոյ հետ, Նոյն էր: Անգլերէն Աստուածաշունչի «Տը Լիվինկ Թրանսլէյշըն» տարբերակը անոր կեանքին մասին պատկերացում մը կու տայ մեզի երբ կը գրէ.

«Այս է Նոյին [եւ իր ընտանիքին] պատմութիւնը՝ Նոյ իր դարուն մարդոցը մէջ արդար ու կատարեալ մարդ մըն էր. [Ան *յարապեւ կերպով Աստուծոյ կամքին հետեւեցաւ* եւ մտերիմ յարաբերութիւն վայելեց Անոր հետ]» (Ծննդոց 6.9, անգլերէն Աստուածաշունչի «Էն. Էլ.Թի.» տարբերակէն, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Ինչպէս Ենովքին պարագային, Նոյին կեանքին բնորոշիչ նշանը այն էր, որ ան յարատեւ կերպով Աստուծոյ կամքին հետեւեցաւ: Այլ խօսքով՝ ան կը հնազանդէր Աստուծոյ փափաքներուն: Անոնք հակապատկերներն են Բաղասամի, որ միայն իր անձնական շահերուն համար կը հնազանդէր: Ան հասկցաւ, որ մէկը բացայայտ անհնազանդութեան համար չի կրնար օրհնուիլ եւ վերջաւորութեան պիտի դատապարտուի: Բաղասամը խեղաթիւրեց Աստուծոյ խօսքը անով, որ ան հնազանդեցաւ իր անձնական շահը փնտռելով, փոխանակ Աստուծոյ կամքը կատարելու սէրէն մղուած հնազանդէր: Տիրոջ կամքը անոր գերագոյն փափաքը չէր, այլ օրէնք մըն էր:

Դաւիթին պարագային բնաւ այդպէս չէր: Սուրբ Գիրքը անոր կեանքին մասին կը գրէ.

«[Ան՝ Աստուած] Դաւիթը տուաւ իրենց թագաւոր, որուն համար վկայութիւն տալով՝ ըսաւ. ‘Յեսսէի որդին Դաւիթը գտայ իմ սրտիս համեմատ մարդ, որ իմ բոլոր կամքս պիտի կատարէ’» (Առաքեալներու Գործերը 13.22):

Աստուծոյ վախը կ’ունենանք երբ մենք ոչ միայն կը հնազանդինք, այլեւ իր բոլոր կամքը կը կատարենք: Մենք կը ձգտինք իրականացնել Անոր փափաքները, կարծէք



## ՃՇՄԱՐԻՏ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

ատոնք մերը ըլլային: Անոր սիրտին ցանկությունները մերը կը համարենք: Ասիկա է իսկական հնազանդութիւնը:

## ԿՐՕՆԱԿԱՆ ՀՈԳԻՆ

Երբեք պիտի չմոռնամ, երբ Տէրը կը պաշտէի, Ան մեղմօրէն սիրտիս խօսեցաւ. «Ճո՛ն, գիտե՛ս ի՛նչ է կրօնական հոգին»:

Ես փորձառութեամբ սորված եմ, որ երբ Աստուած մեզի հարցում կը հարցնէ, Ան տեղեկութիւն չի փնտռեր, այլ կը հարցնէ, որովհետեւ մե՛նք չենք գիտեր, կամ որպէսզի մեր ունեցած սահմանափակ յայտնութիւնը ընդարձակէ: Ես գրած եւ խօսած եմ կրօնական մարդուն վարմունքին մասին, բայց Անոր հարցումին պատասխանելով ըսի. «Տէ՛ր, ըստ երեւոյթին, չեմ գիտեր: Ի՛նչ է կրօնական հոգին»:

Այն ատեն Ան սիրտիս խօսեցաւ. «Կրօնական հոգին այն հոգին է, որ Իմ Խօսքս կը գործածէ՝ իր կամքը կատարելու համար»: Անոր խօսքերը օրերով իմ սիրտիս խորերը արձագանգեցին, եւ շատ հարցումներու պատասխաններ կը ստանայի:

Բաղասամ ճիշդ ասիկա ըրաւ: Ան կ'ուզէր հնազանդիլ, բայց իր եսասիրական շահին համար. փոխանակ Աստուծոյ սիրտին փափաքը իրականացնելու ետեւէն ըլլար: Այդ պատճառով, Տիրոջ հրեշտակը անոր ըսաւ. «[...] Քու ճամբադ ուղիղ չէ իմ առջեւ» (Թուոց 22.32, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Անգլերէն «Ուեպսթըր» Բառարանին համաձայն անգլերէն «փըրվըրս» բառը կը նշանակէ «ծոմոած կամ խեղաթիրուած»: Ուստի կարելի է ատիկա սահմանել իբրեւ Աստուծոյ Խօսքին նպատակը ծոմել կամ խեղաթիրել, եւ զայն մեր սեփական շահերուն համար գործածել:

## ՃՇՄԱՐԻՏ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ

Եթէ քննէք Աբրահամին, Մովսէսին, Յեսուին, Դաւիթին, Եսթերին, Դանիէլին եւ ուրիշներու կեանքերը Աստուածաշունչէն, որոնք մտերմօրէն քալեցին Տիրոջ հետ, պիտի գտնէք այս հասարակ յայտարարը անոնց

բոլորին կեանքին մէջ: Աստուծոյ հետ անոնց մտերմութեան կորիզը Անոր փափաքներուն հանդէպ անկեղծ, սրտանց հնազանդութիւնն էր: Աստուծոյ աղաղակը այն բոլոր մարդոց, որոնց հետ Ան ուխտի յարաբերութիւն ունէր Հին Կտակարանին մէջ, հետեւեալն էր.

«Վասն զի ձեր հայրերը խստութեամբ խրատեցի, զանոնք Եգիպտոսի երկրէն հանած օրէս մինչեւ այսօր, կանուխ ելլելով ըսի. *‘Իմ ձայնիս մտրիկ ըրէք’*» (Երեմիա 11.7, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Տէրը կ’ողբար, որ Իր ժողովուրդը չէր հնազանդեր, հապա իր սիրտին թելադրանքներուն կը հետեւէր: Անոնք Իր սիրտը չստացան, այլ Իր ըսածներով զսպուած էին: Հետեւաբար անոնք ճամբաներ կը փնտռէին, որ իրենց սեփական ցանկութիւնները իրականացնեն՝ իրենց երեւակայած սահմաններուն մակարդակով, զորս Աստուած պիտի հանդուրժէր եւ հետեւաբար չէին կրնար մտերիմ ընկերութիւն ունենալ Անոր հետ: Ամբողջական հնազանդութիւնը բացարձակապէս կենսական է մտերմութեան համար: Նոր Կտակարանին մէջ Յիսուս մեզի կ’ըսէ.

«Բայց ժամանակը կու գայ եւ արդէն իսկ եկած է, երբ ճշմարիտ երկրպագուները հոգիով եւ ճշմարտութեամբ պիտի պաշտեն Հայրը, որովհետեւ Հայրն ալ *կ’ուզէ* որ իր երկրպագուները այդպիսին ըլլան: Հոգի է Աստուած, եւ անոր երկրպագուները պէտք է հոգիով եւ ճշմարտութեամբ զայն պաշտեն» (Յովհաննէս 4.23-24, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Շատ բան կայ այս քանի մը նախադասութեան մէջ: Առաջին՝ նկատի առէք, Հայրը *կ’ուզէ*, որ իր երկրպագուները այդպիսին ըլլան: Կը յիշէք, նախորդ գլուխներէն մէկուն մէջ մենք քննարկեցինք, թէ Ան ինչ մեծ սիրով մեզի կը փափաքի եւ հետամուտ է մեր ընկերութեան: Դարձեալ, ասիկա կը բացայայտուի Յիսուսի խօսքերով:

Երկրորդ՝ Ան կը փնտռէ այն մարդիկը, որոնք հոգիով եւ ճշմարտութեամբ պիտի պաշտեն զԻնք: Եկէք քննարկենք

երկրպագութիւնը: Երբեք չեմ մոռնար այն օրը երբ Աստուածաշունչս կը կարդայի եւ Սուրբ Հոգին սիրտիս մէջէն գոռաց. «Երկրպագութիւնը դանդաղ երգ չէ»: Ատիկա անմիջապէս ուշադրութիւնս գրաւեց:

Շատեր երկրպագութիւնը կը տեսնեն պարզապէս իբրեւ դանդաղ երգ մը: Նկատի առէք տպական անետարանական ծառայութեան մը շարքը՝ մեր ծառայութեան կու գանք եւ կը սկսինք փառաբանութեամբ, որուն կը յաջորդէ երկրպագութիւնը, յետոյ յայտարարութիւնները, յետոյ կու գան ընծաները, պատգամը եւ վերջապէս Սուրբ Հոգիով աղօթքի ծառայութիւնը: Աւանդական եկեղեցիները ունին տպագրուած զեկոյցներ, մինչ մենք՝ անետարանականներս, պարզապէս գոց սորված կ'ըլլանք մերինը, բայց մենք կը պարծենանք, որ Հոգիով կ'առաջնորդուինք կամ Հոգիով ազատ ենք: Ինչ կը վերաբերի երկրպագութեան (պաշտամունքին), անոնք, որոնք չեն գիտեր փառաբանութեան եւ երկրպագութեան միջեւ գտնուող տարբերութիւնը, փառաբանութիւնը արագ երգերն են եւ երկրպագութիւնը դանդաղ երգերն են: Կարծէք կատակի պէս է. մենք շարականներէն ազատագրուեցանք միայն մեծ պաստառով լուսարձակներու կապուելու: Ուստի երբ *երկրպագութիւն* բառը կ'ըսէք, հաւատացեալներուն մեծամասնութեան համար առաջին բանը, որ անոնց միտքը կու գայ, անոնք խտասալիկին, երաժշտական տեսահոլովակի վրայ գտնուող կամ ծառայութեան մէջ երգուած դանդաղ երգերն են:

Երբ Տէրը ասիկա ըսաւ ինծի, անմիջապէս իմ Աստուածաշունչս մէկդի հրեցի եւ ըսի. «Տէր, ես չեմ գիտեր ինչ է երկրպագութիւնը: Կը խնդրեմ ինծի ըսէ, որ ճիշդ ինչ է ասիկա»:

Այն ատեն Ան հաստատօրէն ըսաւ. «Ատիկա կեանք է»:

Ան անմիջապէս ինծի օրինակ մը տուաւ: Ըսաւ. «Տղան, հետեւեալը նկատի առ՝ առտուն կ'արթննաս եւ Լիսան օգնութեան պէտք ունի՝ մանուկները պատրաստելու, որ դպրոց երթան, բայց դուն կ'ըսես, որ շատ զբաղած ես: Քիչ ետք առաւօտուն ան օգնութեան պէտք ունի եւ դուն նոյն պատասխանը կու տաս: Յետոյ ան քեզի կը հարցնէ եթէ

կրանս իրեն օգնել, որ ճաշը պատրաստէ, բայց դարձեալ դուն կ'ըսես, որ շատ զբաղած ես: Այդ յետմիջօրէին ան կը հարցնէ եթէ կրնաս պզտիկները դպրոցէն բերել, բայց նոյն պատասխանը կը ստանայ քեզմէ: Դարձեալ ան քու օգնութեանդ կը դիմէ՝ ընթրիքը պատրաստելու եւ անկէ ետք մաքրելու համար եւ դարձեալ նոյն պատասխանը կը ստանայ՝ շատ զբաղած ես»:

Ան շարունակեց. «Այդ գիշեր, փոքրերուն քնանալէն ետք, հիմա իրմէ բան մը կ'ուզես, որոշակիօրէն սեռային յարաբերութիւն: Ուստի իրեն կը մօտենաս քնքուշ խօսքերով. 'Սիրելիս, ես քեզ շատ կը սիրեմ'»:

Յետոյ Ան հարցուց ինծի. «Ինչպիսի՞ պատասխան պիտի տայ ան քու սիրոյ եւ սեռային մտերմութիւն խնդրող խօսքերուդ»:

Ես պատասխանեցի. «Ան հաւանաբար պիտի ըլլէ. 'Կորսուէ՛'»:

Յետոյ Ան ըսաւ. «Ճիշդ ես, եւ ինչո՞ւ այդ մէկը պիտի ըլլէ քեզի»:

Պատասխանեցի. «Քանի որ մտերիմ սեռային յարաբերութիւնը կը սկսի առտուն եւ պարզապէս իր գագաթնակէտին կը հասնի սեռային միութեամբ երեկոյեան»:

Անոր խօսքին վրայ մտածելով, անդրադարձայ, որ եթէ ատիկա ընէի իմ կնոջս հետ, իրեն հանդէպ իմ սիրոյ խոստովանութիւնս պիտի ըլլար միայն խօսքով եւ ոչ թէ գործով եւ ճշմարտութեամբ: Ամուսին մը, որ շարունակ այս ձեւով կը վարուի իր կնոջ հետ ինքզինք կը խաբէ:

Յետոյ Տէրը ինծի ըսաւ. «Տղան, ես շատ զաւակներ ունիմ, որոնց ուշադրութիւնը կ'ուզեմ գրաւել ամբողջ շաբթուան ընթացքին, բայց անոնք կ'անտեսեն Ձիս: Ես կը փորձեմ իրենց օգնել, որպէսզի իրենց դրացիին քարոզեն (ծառայեն), բայց անոնք մտիկ չեն ըներ, կամ իմ առաջնորդութիւնս կը խափանեն, քանի որ զբաղած են կամ կ'ուզեն իրենց ծրագրած հաճոյքը վայելել: Անոնք Ինծի մտիկ չեն ըներ երբ իրենցմէ կը խնդրեմ, որ ընծայ տան, կամ իրենց եկեղեցիին կամ համայնքին մէջ ծառայեն կամ իրենց ընտանիքին անդամներուն ծառայեն, եւայլն: Յետոյ պաշտամունքի կու

գան եւ Ինձմէ բան մը կ'ուզեն, այսինքն՝ *օրհնութիւններ*, եւ կը սկսին մեղմ երգեր երգել՝ Ինձի հանդէպ սիրոյ խօսքերով եւ ասիկա պաշտամունք (երկրպագութիւն) կը կոչեն: Ասիկա երկրպագութիւն չէ, այլ դանդաղ երգ է»:

Ես ապշեցայ: Անդրադարձայ, որ երկրպագութեան մասին իմ հասկացողութիւնս խեղաթիւրուած էր: Հետագային ես հիանալի բան մը յայտնաբերեցի, որ ատկէ առաջ երբեք չէի նկատած: Թոյլ տուէք, որ ձեզի՝ ընթերցողներուդ հարցում մը հարցնեմ՝ Աստուածաշունչին մէջ «*երկրպագութիւն*» բառը առաջին անգամ ո՞ր կը գտնէք: Այս հարցումը շատ կարեւոր է, որովհետեւ փորձառաբար գիտեմ, որ երբ գիրք կը գրէք, ամէն անգամ, որ նոր եզր մը կը գործածէք, եզր մը, որ շատերուն ծանօթ չէ, պէտք է այս երեք բաներէն մէկը ընէք՝ սահմանումը տալ կամ անոր իմաստը բացատրող օրինակ մը տալ, կամ բառը գործածել այնպիսի ձեւով մը, որ ցոյց կու տայ անոր իմաստը: Աստուածաշունչին մէջ «*երկրպագութիւն*» բառը առաջին անգամ կը գտնէք Ծննդոց 22-ին մէջ: Կ'ըսէ.

«Աբրահամ ըսաւ իր ծառաներուն. ‘Դուք իշուն հետ հոս կեցէք եւ ես ու տղան մինչեւ հոն երթանք ու *երկրպագութիւն* ընենք [...]’» (Ծննդոց 22.5, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Աբրահամ հոն չէր բարձրանար Իսահակին հետ դանդաղ երգ մը երգելու: Ան հոն կը բարձրանար՝ իր կեանքին ամենաթանկագին ունեցուածքը սպաննելու համար, պարզապէս որովհետեւ Աստուած իրմէ խնդրեց ասիկա ընել: Ուստի ինչպէս կը տեսնէք, պաշտամունքը *հնազանդութեան կեանք մըն* է: Ասիկա կը բացատրէ, թէ Աստուած ինչո՞ւ բուռն կերպով կ'ըսէ Իր սեփական ժողովուրդին, որոնք երգեր կ'երգէին Իրեն.

«Քու երգերուդ ձայնը ինձմէ հեռացուր, [Անոնք միայն աղմուկ են իմ ականջներուս: Քու երաժշտութեանդ մտիկ պիտի չընեմ, ինչքան ալ գեղեցիկ ըլլայ: Փոխարէնը կ'ուզեմ տեսնել արդարութեան հզօր ջրհեղեղ մը, արդար կեանքի գետ մը, որ երբեք չի

չորնար]» (Ամովս 5.23-24, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն:

Ես բազմաթիւ ծառայութիւններու ներկայ գտնուած եմ, ուր երաժշտութիւնը եղած է յառաջդիմական եւ գեղեցիկ, բայց Տիրոջ բացայայտ ներկայութիւնը չկար: Այդ կացութիւններուն մէջ ես սովորաբար նախ ամէն զգուշութիւնով իմ սիրտս կը քննեմ՝ Սուրբ Հոգիին հարցնելով. «Արդեօք Քեզ վիրաւորեցի՞ կամ մեղանչեցի՞»: Շատ յաճախ սիրտիս խորը վստահութիւն մը կ'ըլլայ, որ այդ մէկը չեմ ըրած, ուստի գիտեմ, որ արգելքը ժողովուրդէն է: Յետոյ վստահութեամբ կը քարոզեմ Տիրոջ վախին եւ հնազանդութեան մասին: Այդ մթնոլորտներուն մէջ գրեթէ ամէն անգամ ես կը տեսնեմ, որ ժողովուրդին յիսուն տոկոսը պատգամին վերջաւորութեան ապաշխարութեան կոչին կ'ընդառաջէ: Յետոյ կ'երթամ յաջորդ ծառայութեան նոյն երկրպագութեան երգերով եւ երկրպագութեան խումբով, եւ գրեթէ ամէն անգամ Աստուծոյ ներկայութիւնը հիանալի կերպով կը դրսեւորուի: Ինչո՞ւ: Ճշմարիտ երկրպագութիւնը հնազանդութեան կեանք է եւ այդ կեանքէն կը հոսին երկրպագութեան երգերը, որոնք կ'ուրախացնեն Աստուծոյ սիրտը, փոխանակ զինք վանեն ինչպէս տեսանք վերի համարին մէջ: Ասիկա նման է այն պարագային երբ ես կնոջս կը մօտենամ՝ սեռային մտերմութեան համար՝ ամբողջ օրը զինք սիրելէս ետք, եւ ոչ թէ զինք անտեսելէս ետք:

### ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՄԲ ԵՐԿՐՊԱԳԵԼ

Յիսուս մեզի կ'ըսէ, որ Հայրը կ'ուզէ, որ Իրեն երկրպագուները զինք պաշտեն հոգիով եւ ճշմարտութեամբ: Յաջորդ գլուխներուն մէջ մենք մանրամասնօրէն պիտի անդրադառնանք զԱստուած *հոգիով* պաշտելու երեւոյթին: Հիմա եկէք քննարկենք զինք *ճշմարտութեամբ* պաշտելու երեւոյթը: «Ճշմարտութիւն» բառը յունարէնով «ալէյթէա» (alētheia) բառն է: Անգլերէն Վայնի Բառարանին համաձայն, այս բառը կը նշանակէ «Արտաքին երեւոյթին ետին գտնուող իրականութիւնը. դրսեւորուած հարցի մը իսկական էութիւնը»:

Ես կը սիրեմ այս սահմանումը, քանի որ ատիկա հիանալի

կերպով կ'ընդլայնե (կ'ընդգծե) այն, ինչ որ Յիսուս կը յայտնե: Ան ցոյց կու տայ, որ ճշմարիտ երկրպագութիւնը կը գտնուի մարդու մը հիմնական մակարդակին վրայ, որ սիրտն է: Բացատրելու համար պիտի մատնանշեմ եւ սահմանեմ հաղորդակցութեան երեք մակարդակները:

Առաջինը բանաւոր հաղորդակցութիւնն է, որ ամենացած մակարդակն է: Յիսուս ասիկա կը մատնանշէ այն հոր օրինակով, որ իր երկու որդիներէն կը խնդրէ, որ իր այգին երթան աշխատելու (Մատթէոս 21.28-31): Որդիներէն մէկը կը պատասխանէ. «Անշուշտ հայրիկ», բայց չ'երթար: Միւս որդին կը պատասխանէ. «Անկարելի է», բայց յետոյ կ'երթայ: Ապա Յիսուս կը բացատրէ, որ իր հոր կամքը կատարողը սկիզբը «ոչ» ըսողն էր, եւ ոչ թէ «այո՛» ըսողը: Այսպիսով ցոյց կու տայ, որ գործերը հաղորդակցութեան ւեւի բարձր ձեւն են, քան բառերը:

Յակոբոսը եւս ցոյց կու տայ, որ բանաւոր հաղորդակցութիւնը ամենացած մակարդակն է երբ կ'ըսէ. «Ենթադրենք, որ կիսամերկ եւ օրուան հացին կարօտ եղբայր մը կամ քոյր մը ձեզի դիմեց: Եթէ ձեզմէ ոեւէ մէկը անոնց ըսէ՝ 'Գացէք, Աստուած ձեզի հետ ըլլայ, տաքցէք եւ կշտացէք', եւ անոր մարմինին համար պէտք եղած զգեստը կամ ուտելիքը չտայ, ինչ օգուտ ունի: Նոյնպէս ալ հաւատքը առանձինն՝ առանց գործերու՝ մեռած է» (Յակոբոսի 2.15-16): Յովհաննէս առաքեալը եւս կը հաստատէ այս ճշմարտութիւնը երբ կ'ըսէ. «Այն մարդը, որ նիւթական ամէն բարիք ունի, եւ տեսնելով հանդերձ, թէ իր մէկ եղբայրը օգնութեան կարօտ է՝ իր գուրջը չի շարժիր, ինչպէս կրնայ ըսել՝ թէ Աստուծոյ սէրը ունի իր մէջ» (Առաջին Յովհաննէսի 3.17):

Ասիկա կը տեսնենք անհամար պարագաներու մէջ, որոնցմէ մէկը կրնայ այս մէկը ըլլալ՝ մարդ մը իր կնոջ կ'ըսէ, որ կը սիրէ զինք, բայց երբեք ժամանակ չ'անցըներ անոր հետ. կամ կին մը, որ իր ամուսինին կ'ըսէ, որ կը յարգէ զինք, բայց անոր խորհուրդին մտիկ չ'ըներ երբ ան կ'ըսէ, որ վարկային քարտին մէջ գտնուող ամբողջ դրամը չծախսէ: Կարծեմ արդէն գիտէք, որ այս ցանկը գրեթէ անվերջ է: Յովհաննէսը իր նամակին մէջ կը շարունակէ ըսելով.

«Որդեակներս, ո՛չ թե խօսքով ու լեզուով սիրենք, հապա գործով ու ճշմարտությունով» (Առաջին Յովհաննէսի 3.18):

«Ամփիլիֆայտ» Աստուածաշունչը կը գրէ. «Որդեակներ, մեր սէրը [միայն] ... խօսքով թող չըլլայ, այլ՝ գործով եւ ճշմարտությունով»: Մենք պէտք է անշուշտ խօսքով սիրենք, բայց ատիկա կեղծաւորութիւն կ'ըլլայ եթէ չկայ գործ եւ ճշմարտութիւն՝ հաստատելու համար մեր սիրոյ խօսքերը: Նկատի առէք, կ'ըսէ. «գործ եւ ճշմարտութիւն»: Ասիկա կը նկարագրէ հաղորդակցութեան երկու անելի բարձր մակարդակները:

Յաջորդ մակարդակը *գործը* կամ արարքն է. սակայն ասիկա ամենաբարձր մակարդակը չէ հաղորդակցութեան մէջ, եւ շատ դիւրութեամբ կրայ մոլորեցնել, քանի որ արարքները կրնան ճշմարտութեան հակառակ ըլլալ: Օրինակ՝ Պօղոս կ'ըսէ. «Ի՛նչ օգուտ, եթէ բոլոր ինչքերս աղքատներուն տամ եւ նոյնիսկ մարմինս կրակի մատնեմ. եթէ սէր չունիմ՝ ոչինչով կ'օգտուիմ» (Առաջին Կորնթացիներուն 13.3): Այն գործերը, զորս ան այս համարին մէջ կը նկարագրէ, սիրոյ բարձրագոյն մակարդակը կը թուին ըլլալ, բայց ան կ'ըսէ, որ մենք կրնանք այս փառաւոր թուացող գործերը ընել՝ առանց Աստուծոյ սէրը ունենալու մեր սիրտին մէջ:

Ասոր կը յաջորդէ հաղորդակցութեան ամենաբարձր մակարդակը, որ *սիրտն* է: Ատիկա մարդուն հիմնական մակարդակն է: Ասիկա այն մակարդակն է, որ Յովհաննէսը եւ Յիսուսը *ճշմարտութիւն* կոչեցին: Սիրտին մտածումներն ու մտադրութիւնները կը բացայայտեն մեր պաշտամունքին ճշմարիտացիութիւնը (անկեղծութիւնը), բայց առանց Աստուծոյ Խօսքին, կարելի չէ զանազանել զանոնք: Աստուածաշունչը մեզի կը թելադրէ, որ ամէն զգուշութիւնով մեր սիրտը պահենք, քանզի կեանքի զօրութիւնները անկէ կը հոսին: Եթէ ատիկա անտեսենք, դիւրութեամբ կը խաբուինք: Սիրտը առանձինը, առանց Աստուծոյ Խօսքին եւ Անոր Հոգիին, կ'ըլլայ սիրտ մը, որ ամէն բանէն անելի խաբեբայ է:

Աստուած Իր ժողովուրդին կը յայտարարէ. «Եթէ դուք



*յօժարիք* ու հնազանդիք, երկրին բարիքը պիտի ուտէք» (Եսայի 1.19, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Նկատի առէք, Ան միայն չ'ըսեր հնազանդիք, այլ՝ *յօժարիք* եւ հնազանդիք: Յօժարութիւնը մեր սիրտին կեցուածքին հետ կապ ունի: Կրնամ իմ որդիէս խնդրել, որ բան մը ընէ եւ ան կրնայ անմիջապէս հնազանդիլ, եւ ամբողջութեամբ ենթարկուած երեւիլ, բայց ամբողջ ժամանակը սիրտին մէջ տրտնջալ: Իրականութիւնը այն է, որ ան ճշմարտապէս չի հնազանդիր, այլ՝ կեղծաւորութեամբ: Յովհաննէս մեզի կ'ըսէ, որ պէտք է սիրենք զԱստուած եւ մարդիկը գործով եւ ճշմարտութեամբ, որ սիրտի մակարդակն է, «Ահա այսպէս կը գիտնանք՝ թէ ճշմարտութեան հետեւող կը մնանք: Այսպէս նաեւ մեր սիրտերը վստահութիւն կ'ունենան Աստուծոյ առջեւ կանգնելու» (Առաջին Յովհաննէսի 3.19):

Երբեք չեմ մոռնար այն օրը երբ Աստուած այս հարցով դիմագրաւեց զիս: Ես շատ կը ջանայի, որ ամէն տեսակի գանգատէ զերծ մնամ: Այն եզրակացութեան հասած էի, որ գանգատիլը Աստուծոյ նկարագիրին դէմ վիրաւորանք կամ անարգանք է, քանի որ գանգատիլը Աստուծոյ կ'ըսէ. «Ես Քու ըրածդ չեմ սիրեր, եւ եթէ ես Քու տեղդ ըլլայի, տարբեր բան կ'ընէի»: Ատիկա սուրբ վախի բացակայութիւնն է եւ Աստուած կ'ատէ ատիկա. իրականութեան մէջ ատիկա Իսրայէլի որդիներուն խոստացուած երկիրը մտնելու առիթը կորսնցուց: Ուստի երկարատեանէ ի վեր ես խօսքերովս չէի գանգատած եւ իրականութեան մէջ սկսած էի այդ բանով հպարտ զգալ: Սակայն առաւօտ մը, երբ հազիւ արթնցայ, լսեցի, որ Սուրբ Հոգին վճռական կերպով կ'ըսէ. «Ես լսեցի քու սիրտիդ գանգատը»: Զիս գամեց Իր ըսածով. ես ցնցուած նստած տեղս մնացի՝ անդրադառնալով, որ ինչքան խաբուած էի հպարտութեանս մէջ: Իմ աստուածապաշտութիւնս ճշմարտութեամբ չէր եւ Անոր սրբագրող խօսքին լոյսին տակ իմ սիրտիս սխալը բացայայտուեցաւ: Ես շուտով ապաշխարեցի եւ մինչեւ հիմա հանգիստ եմ, որ այդ օրէն ի վեր անգամն ալ այդ ձեւով չսրբագրեց զիս: Փառք Աստուծոյ Իր շնորհքին համար:

Եկէք ասոր լոյսին տակ անգամ մը եւս նայինք «ճշմարտութիւն» բառին համար Վայնի Բառարանին տուած

սահմանումին: Ան կ'ըսէ, թէ «ճշմարտութիւն» կը նշանակէ՝ արտաքին երեւոյթին ետին գտնուող իրականութիւնը. դրսեւորուած հարցի մը իսկական էութիւնը: Մենք շատ դիւրութեամբ կրնանք շեղիլ ճշմարտութենէն: Օրինակ մը տամ: Կրնանք աղօթել եւ երգել Տիրոջ, բայց տակաւին ոչ մէկ բառ դուրս չգայ մեր սիրտէն: Ամբողջ երգեցողութեան ընթացքին մենք կը մտածենք, որ որքան անօթի ենք, այդ առաւօտուն մեր փոքրերը ինչպէս կռուեցան, ինչ հիանալի օր մը ծրագրած ենք անցընել ծառայութենէն ետք եւայլն: Կրնանք աղօթել եւ ըսել. «Տէր, շատ շնորհակալ եմ Քեզի»: Սակայն օրերով մեր դժուար կացութեան մասին գանգատած կ'ըլլանք: Իսկապէս շնորհակալ ենք թէ՛ մեր սիրտին խորերը կ'այլապանենք Տէրը, քանի որ Ան հարցերը չի լուծեր այնպէս, ինչպէս մենք կը կարծէինք, որ պէտք է լուծէ: Օ՛, ցանկը անվերջ է:

Ճշմարտութեամբ Տիրոջ երկրպագել կը նշանակէ ոչ միայն հնազանդիլ Անոր, այլեւ բերկրիլ այն բանով, որ Ան մեզմէ խնդրեց, որ ընենք: Կը նշանակէ Անոր ըսել այն, ինչ որ իրապէս քու սիրտիդ մէջ է, եւ ոչ թէ ինչ որ գիտես, որ յարմար բանն է ըսելու: Ատիկա Աստուծոյ հետ երկերեսանի չըլլալ է: Կը սիրեմ Դաւիթին խօսքերը երբ կ'ըսէ.

«Ամէն ժամանակ անոր յուսացէք, ո՛վ ժողովուրդ.

*Անոր առջեւ սրտերնիդ բացէք,*

Քանզի Աստուած ապաւէն է մեզի» (Սաղմոս 62.8, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Յայտնաբերած եմ, որ երբ անկեղծ եմ Տիրոջ հետ, Ան պիտի մօտենայ: Եթէ բան մը կը ծածկեմ, ատիկա ինծի արգելք պիտի ըլլայ, եւ ոչ մէկ տեղ պիտի չկարենամ հասնիլ աղօթքիս մէջ. ատիկա կատարեալ պայքար մը պիտի ըլլայ, քանի որ Անոր հետ պիտի չկարենամ կապուիլ: Ան կ'ուզէ այն մարդիկը, որոնք Իրեն պիտի մօտենան սիրտի պարկեշտութեամբ, եւ ոչ թէ կեղծաւորութեամբ: Երբեմն երբ կը տեսնեմ մարդիկ, որոնք ծառայութիւններու ընթացքին կ'ըսեն. «Շնորհակալ եմ, Յիսուս ... Ալէլուիա ... փանք Աստուծոյ», ես ինծի կը հարցնեմ եթէ անոնք պարզապէս

## ՃՇՄԱՐԻՏ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

«Քրիստոնէութեան լեզուն» կը կրկնեն թէ՛ իրենց սիրտին ամենախոր բաժինէն կը խօսին: Ասիկա կը նմանի այն ամուսինին, որ իր կինը հանդարտեցնելու համար գրեթէ առանց զգացումի կ'ըսէ. «Կը սիրեմ քեզ, հոգիս»: Ասիկա բոլորովին տարբեր է նշանուած ատեն ըսած ծեւէն երբ խոր եւ կրակոտ սիրով կ'ըսէր. «Կը սիրեմ քեզ»:

Ճշմարիտ երկրպագութեան կեանքէն, որ մեր էութեան խորքէն եկած հնազանդութիւնն է, պիտի բխին երկրպագութեան երգեր: Քրիստոսի մարմինին մէջ կան տղամարդիկ եւ կիներ, որոնք փառաբանութեան եւ երկրպագութեան երգեր յօրինելու շնորհքը ունին: Անոնք ժամանակակից սաղմոսերգուներ են: Ոմանք ճշմարիտ երկրպագութեան կեանքը կ'ապրին, իսկ ուրիշներ աշխարհիկ եւ հեշտասէր են: Անոնք որոնք պղծուած են, տակաւին կրնան հոյակապ երգեր յօրինել իրենց շնորհքին պատճառով, սակայն Տիրոջ ներկայութենէն զրկուած կ'երգեն. մինչդեռ մաքրութեան իրենց վրայ կը կրեն Աստուծոյ փառաւոր ներկայութիւնը երբ սրտանց կը ծառայեն Անոր եւ Իր ժողովուրդին:

## ՅԻՍՈՒՍԻ ԻՆՔՉԻՆՔ ՅԱՅՏՆԵԼՈՒ ԽՈՍՏՈՒՄԸ

ԶԱստուած ճշմարտութեամբ պաշտել կը նշանակէ մեր սիրտին պարկեշտութեամբը պաշտել զԻնք: Ատիկա բառին ամենախիսկական իմաստով Անոր վախը ունենալ եւ Անկէ պատկառիլ է: Սաղմոսողը կ'ըսէ.

«Երանի այն ժողովուրդին, որ կը ճանչնայ  
[երկրպագութեան ուրախ կոչը, քանգի] անոնք քու  
երեսիդ [ներկայութեանդ] լոյսովը պիտի քալեն»  
(Սաղմոս 89.15, անգլերէն Աստուածաշունչի «Էն.  
Էլ.Թի.» տարբերակէն):

Աստուած կը փնտռէ անոնք, որոնք պիտի լսեն երկրպագութեան կեանքի Իր կոչը: Անոնք, որոնք ուշադրութիւն կը դարձնեն, Անոր ներկայութեան մէջ պիտի քալեն: Անոնք զԻնք մտերմօրէն պիտի ճանչնան երբ Ան Ինքզինք պիտի յայտնէ անոնց: Յիսուս ատիկա այսպէս կ'ըսէ.

«Մօտ ատենէն այլեւ աշխարհը զիս պիտի չտեսնէ, բայց դուք պիտի տեսնէք զիս [...] Ով որ կ'ընդունի իմ պատուիրաններս եւ կը գործադրէ զանոնք, ան է, որ զիս կը սիրէ: Եւ Հայրս պիտի սիրէ զիս սիրողը: Ես ալ պիտի սիրեմ զայն եւ *ինքզինքս յայտնեմ անոր*» (Յովհաննէս 14.19-21, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Անոնք, որոնք կ'ընդունին Անոր պատուիրանները եւ կը գործադրեն զանոնք, անոնք են, որ ճշմարտութեամբ կը պաշտեն զինք, եւ Ան կը խոստանայ, որ պիտի տեսնեն զինք: Յիշեցնեմ, որ «*յայտնել*» կը նշանակէ անտեսանելի մարզէն դէպի տեսանելի մարզը բերել. անյայտ մարզէն դէպի յայտնի մարզը բերել: Անգլերէն Աստուածաշունչի «Նիւ Ամերիքըն Սթէնտըրտ» տարբերակը այսպէս կ'ըսէ. «Ես պիտի սիրեմ զայն եւ *ինքզինքս պիտի բացայայտեմ անոր*»: Աստուածաշունչի «Ամփիլիֆայտ» տարբերակը այսպէս կը գրէ.

«Քիչ մը ատենէն ալ աշխարհ զիս պիտի չտեսնէ. բայց դուք պիտի տեսնէք զիս [...] Ան որ իմ պատուէրներս կ'ընդունի եւ կը պահէ զանոնք, անիկա է զիս սիրողը եւ ան որ զիս կը սիրէ՝ իմ Հօրմէս պիտի սիրուի ու ես զանիկա պիտի սիրեմ եւ *ինքզինքս ցոյց պիտի տամ (յայտնեմ, դրսեւորեմ) անոր: [Պիտի արտօնեմ, որ յտրակօրէն տեսնէ զիս եւ իմ իրական ըլլալս պիտի յայտնեմ անոր]*» (Յովհաննէս 14.19, 21, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Միայն անոնք, որոնք ճշմարտապէս կը պաշտեն զինք իրապէս կը ճանչնան զինք: Ան *ինքզինք կը յայտնէ անոնց, քանի որ անոնք իր սիրելի բարեկամներն են: Ասիկա ապշեցուց առաքեալները, ուստի անոնցմէ մէկը ըսաւ.*

«Ըսաւ անոր Յուդա (ոչ Իսկարիովտացին), 'Տէր, ինչպէս կ'ըլլայ, որ դուն *ինքզինքդ մեզի պիտի յայտնես - քու իրական ըլլալդ պիտի յայտնես - եւ ո՛չ թէ աշխարհի*': Յիսուս պատասխան տուաւ ու ըսաւ անոր. 'Եթէ մէկը [իրապէս] զիս սիրէ, *իմ խօսքս պիտի պահէ՝ ուսուցումիս պիտի հնազանդի. ու իմ Հայրս զանիկա պիտի սիրէ եւ անոր պիտի գանք ու*

անոր քով օթեան (բնակավայր, յատուկ բնակավայր) պիտի ընենք: Ան որ զիս [իրապէս] չի սիրեր, [իմ ուսուցումներս չի պահեր եւ անոնց չի հնազանդիր] [...]» (Յովհաննէս 14.22-24, անգլերէն «Ամփոփայտ» տարբերակէն, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Ուստի ինչպէս կը տեսնէք, այս ամէնը կախեալ է հնազանդութենէն: Յիշեցէք, որ Աստուած ինչ որոտաց իմ սիրտիս մէջ: «Երկրպագութիւնը Անոր սիրտին փափաքներուն հնազանդող կեանքն է»: Երբ իսկապէս կը սիրենք զինք, Ան պիտի գայ մեզի, ոչ թէ այցելութեան, այլ մեր մէջ բնակելու համար: Այսպիսով Ան Ինքզինք պիտի յայտնէ:

Կան շատեր, որոնք Աստուծոյ Հոգիին պարգեւը ունին, բայց իրենց ամբողջ սիրտով Տիրոջ խօսքերը չեն պահեր: Անոնք ամէնէն դիւրին խաբուողներն են: Ատոր պատճառը այն է, որ Տիրոջ ներկայութիւնը չափով մը կարելի է զգալ անոնց ձիրքին, ինչպէս՝ քարոզին, երգեցողութեան, աղօթքին կամ ուրիշ ձեւի ծառայութեան մէջ: Նոյնն էր պարագան Բաղասամին, որ մարգարէութեան մէջ մեծ շնորհք ունէր եւ ատոր իբրեւ արդիւնք որոշ չափով Աստուծոյ ներկայութիւնը կը զգար երբ այս պարգեւը կը գործէր, բայց եւ այնպէս ան Աստուծոյ սիրտէն շատ հեռու էր:

Իսաբկանքը այն է, որ այս մարդիկը շատ դիւրութեամբ կրնան ենթադրել, որ ծառայութեան ընթացքին իրենց վրայ գտնուող Տիրոջ ներկայութիւնը ցոյց կու տայ իրենց կեանքերուն հանդէպ Անոր յօժարութիւնը, եւ այդ ներկայութիւնը կը շփոթեն Անոր հետ մտերմութեան հետ: Ատիկա շատ քիչ կը տարբերի լաւ մարդէ մը, որ գործաւոր մը կը վարձէ: Այդ անձը սխալ կերպով կրնայ ենթադրել, որ պարզապէս որովհետեւ ան ամբողջ օրը գործատիրոջ ներկայութեան մէջ է, կը նշանակէ, որ ինք անոր հետ մտերիմ է: Ասիկա, ինչպէս գիտէք, սխալ ենթադրութիւն է: Յիսուս կ'ըսէ, որ շատեր, որոնք պիտի յայտարարեն, որ զինք կը ճանչնան.

«Դուրսը պիտի մնաք ու սկսիք դուռը զարնել եւ ըսել. 'Տէր, Տէր, բաց մեզի': Ան [Տէրն] ալ պատասխան տալով՝ պիտի ըսէ ձեզի. 'Ձեզ [մտերմօրէն] չեմ

ճանչնար, ուրկէ՛ էք՝: Այն ատեն պիտի սկսիք ըսել. 'Մենք *քու առջեւդ* կերանք ու խամցինք եւ դուն մեր փողոցներուն մէջ սորվեցուցիր': Բայց անիկա պիտի ըսէ. 'Ձեզի կ'ըսեմ, ձեզ չեմ ճանչնար, ուրկէ՛ էք. մէկդի կեցէք ինձմէ, բոլոր անիրաւութիւն գործողներդ՝» (Ղուկաս 13.25-27, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Եթէ ասիկա կարդաք Մատթէոսի Աւետարանին մէջ գրուած պատմութեան հետ (Մատթէոս 7.21-23), պիտի յայտնաբերէք, որ այս բաները ընողները Յիսուսի անունով հրաշքներ ընողներն են: Անոնք շնորհքներով օժտուած էին, բայց եւ այնպէս կ'ենթադրէին, որ Տիրոջ ներկայութիւնը, որ շնորհքին կ'ընկերանար, հաւասար էր Անոր հաւանութիւնը ցոյց տուող ներկայութեան կամ մտերմութեան: Կրնաք տեսնել ցնցումը անոնց, որոնք կ'ըսէին, որ կը ճանչնանք զինք, բայց հեռացուեցան: Շատ կարեւոր է, որ հասկնանք, թէ տարբերութիւն կայ Անոր մնայուն ներկայութեան եւ ծառայութեան ընթացքին Անոր ներկայութեան միջեւ:

Վերը նշուած համարին մէջ կրնաք տեսնել, որ Յիսուսի պատասխանը Յուդային (ոչ Իսկարիովտացին) ցոյց կու տայ, որ անոնք, որոնք զինք ճշմարտութեամբ կը պաշտեն, անոնք են, զորս Ան պիտի փնտռէ, որ Իր բնակարանը ընէ: Ասիկա շատ ուշագրաւ է, քանի որ կը խօսի Անոր մնայուն ներկայութեան մասին: Կը սիրեմ Անոր գործածած բառերը՝ *տուն, ապրելավայր, յապուկ բնակավայր*: Այս բառերուն մէջ կը գտնուի ուշագրաւ տարբերութիւնը Հին Կտակարանի եւ Նոր Կտակարանի սուրբերուն միջեւ: Հին Կտակարանի սուրբերը չունէին Աստուծոյ բնակավայրը ըլլալու առանձնաշնորհումը: Աստուծոյ բնակավայրը «Սրբութիւն Սրբութեանց»-ն էր Վկայութեան Խորանին կամ տաճարին մէջ: Սակայն կը տեսնենք զուգահեռ մը: Հեղիի օրերուն Աստուծոյ ներկայութիւնը հազուադէպ էր եւ գրեթէ չկար Վկայութեան Խորանին մէջ՝ իր եւ ժողովուրդին իրենք զիրենք գոհացնող ճամբաներուն պատճառով: Սակայն Անոր ներկայութիւնը զօրաւոր էր այն օրերուն երբ Անոր ժողովուրդը ջանասիրութեամբ կը հնազանդէր Անոր:

## ՃՇՄԱՐԻՏ ՊԱՇՏԱՄՈՒՆՔ

Նոյնն է պարագան նաեւ այսօր: Այն հաւատացեալները, որոնք հոգիով եւ ճշմարտութեամբ կը պաշտեն զԻնք՝ խանդավառ սիրտերով կը հնազանդին Անոր, անոնք են, որոնք Անոր մնայուն ներկայութեան մէջ կ'ապրին: Ասոնք են, զորս Ան կ'ընտրէ, որ Ինքզինք յայտնէ անոնց: Օ՛, ինչ փառաւոր ընկերութիւն կը սպասէ մեզի: Ինչպէս կրնայ ռեւէ հաւատացեալ երբեւէ կատակ ընել անհնազանդութեան կամ աշխարհիկութեան հետ երբ մեզ սպասող այսպիսի գանձ մը ունինք:

Ան խոստացած է մեզ Իր տունը, ապրելավայրը, յատուկ բնակավայրը ընել, եւ այդպիսով Ան պիտի դրսեւորէ կամ պիտի յայտնէ Իր իրական ինքնութիւնը: Օ՛, այսպիսի փառաւոր խոստումի մը միտքը, եւ ատիկա միայն ապագային համար չէ, այլեւ ներկային: Ասոնք իմ նախասիրած բառերէս են Աստուածաշունչէն, որ այս փառաւոր Թագաւորը կ'ուզէ «Ինքզինք դրսեւորել» կամ Ինքզինք ճանչցնել անձնապէս քեզի եւ ինձի: Հետագայ գլուխներուն մէջ մենք ուրախութեամբ պիտի քննենք, որ Ան ինչպէս ատիկա կ'ընէ: Սակայն յաջորդ գլուխին մէջ մենք նախ պիտի քննարկենք ուրիշ շատ կարեւոր եւ անհրաժեշտ առաքինութիւն մը, որ Ան կը փնտռէ անոնց մէջ, որոնց մէջ Ան կը բնակի:

## ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. Երբ կը քննէք Ենովքի, Նոյի, Աբրահամի, Մովսէսի, Դաւիթի, Եսթերի, Դանիէլի եւ ուրիշներու կեանքերը Աստուածաշունչէն, կը տեսնէք, որ անոնց բոլորին կեանքերուն մէջ գտնուող հասարակ յայտարարը անկեղծ, սրտանց հնազանդութիւնն էր Աստուծոյ փափաքներուն, փոխանակ իրենց անձնական փափաքներուն: Ինչ պիտի պատահէր ձեր կեանքին մէջ եթէ այդպիսի հնազանդութիւն կիրարկէիք այսօր:
2. Անդրադառնալով հեղինակին հիմնորով ըսուած խօսքին. «Փառաբանութիւնը արագ երգերն են եւ երկրպագութիւնը՝ դանդաղ երգերը», այդ գնահա-

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

տականը քեզի հետ առնչություն ունի: Այն պատգամը, որ ան վերջաւորութեան Տիրոջմէն ստացաւ պաշտամունքի մասին հետեւեալն էր. «Ատիկա կեանք է»: Այդ նախադասութիւնը ինչպէս կ'ազդէ կեանքիդ մէջ փոփոխութիւններ բերելու կարիքին:

3. Երբ կը մտածէք Ղուկաս 13.25-27-ին եւ Մատթէոս 7.21-23-ին մէջ Յիսուսի ըսածին մասին, ինչպէս կը բնութագրէք Անոր մնայուն ներկայութեան եւ ծառայութեան ընթացքին Անոր ներկայութեան միջեւ գոյություն ունեցող տարբերութիւնը:



# ԱՍՏՈՒԱԾ ՈՐՈ՞Ւ ՀԵՏ ԿԸ ԲՆԱԿԻ



Թագաւորութեան զօրութեան երկուորեակներն են՝  
*Տիրոջ Վախը եւ Խոնարհութիւնը:*

Այս գլուխին մէջ մենք պիտի ուսումնասիրենք ուրիշ կարեւոր տարր մը մեր ընկերութիւնը ջերմեռանդօրէն փափաքողին մօտենալու մէջ: Մեր առաջնակարգ համարը մեզի կոչ կ'ընէ՝ «Աստուծոյ մօտեցէ՛ք ու անիկա ձեզի պիտի մօտենայ»: Սակայն եկէ՛ք քննենք, թէ ինչ կը կարդանք այս հիանալի հրաւերէն առաջ եւ ետք.

«[...] Անոր համար կ'ըսէ. 'Աստուած ամբարտաւաններուն հակառակ կը կենայ, բայց *խոնարհներուն* շնորհք կու տայ' [...] Աստուծոյ մօտեցէ՛ք ու անիկա ձեզի պիտի մօտենայ [...] Տէրոջը առջեւ *խոնարհեցէ՛ք* ու ան ձեզ պիտի բարձրացնէ» (Յակոբոսի 4.6-10, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Աստուծոյ սիրտին աղաղակը խոնարհութեան երկու

յորդորներու միջեւ տեղադրուած է. եւ լաւ պատճառով, քանի որ Աստուած կ'ըսէ.

«Քանզի այսպէս կ'ըսէ Բարձրը ու Բարձրեալը, որ յալիտենականութեան մէջ կը բնակի ու անոր անունը Սուրբ է. 'Ես բարձր ու սուրբ տեղը կը բնակիմ, բայց կոտրած ու խոնարհ հոգի ունեցողին հետ եմ, որպէս զի խոնարհներուն հոգին կենդանացնեմ եւ կոտրած սրտերը ապրեցնեմ'» (Եսայի 57.15, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Յակոբոսը կ'ըսէ, որ եթէ մենք մեզ Աստուծոյ առջեւ խոնարհեցնենք, Ան մեզ պիտի բարձրացնէ: Ո՞ր պիտի բարձրացնէ: Աստուած Եսայի մարգարէին միջոցով կ'ըսէ. «Բարձր ու սուրբ տեղը»: Ան կը փնտռէ մարդիկ, որոնց մէջ պիտի բնակի, եւ ոչ թէ անոնց այցելէ: Յակոբոսը մեզ կը հրաւիրէ այցելութենէն աւելիին. մենք հրաւիրուած ենք շարունակ Անոր ներկայութեան մէջ բնակելու եւ ինչպէս Եսային կ'ըսէ, ատիկա միայն խոնարհներուն հասանելի է:

### ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ՄԵՐ ԱՆԳԻՏՈՒԹԻՒՆԸ

Քրիստոսի մարմինին մէջ շատեր չեն հասկնար խոնարհութիւնը կամ անոր զօրութիւնը. անոնք ատիկա կը համարեն իբրեւ տկարութիւն, թուամոռթութիւն, անողնայար կամ նոյնիսկ կրօնական ըլլալ: Սակայն իրականութեան մէջ մարդիկ ճշմարտապէս խոնարհները կը շփոթեն ամբարտաւաններու հետ: Նկատի առէք Դաւիթը, որ հորը խնդրանքով կ'այցելէ իր աւագ եղբայրներուն, որոնք Փղշտացիներուն դէմ կը պատերազմէին: Ան կու գայ եւ կը նկատէ, որ բոլոր զինուորները, ներառեալ իր եղբայրները, տարօրինակ նոր մարտական դիրքի մը մէջ կը գտնուին՝ հսկայ Գողիաթէն վախնալով ժայռերուն ետեւը պահուրտած են: Ան կ'իմանայ, որ ասիկա կը շարունակուի քառասուն օրերէ ի վեր: Յետոյ Դաւիթը մարդոց կը հարցնէ ոչ վախկոտ ձայնով մը. «[...] Այս անթլփատ Փղշտացին ո՞վ է՝ որ կենդանի Աստուծոյն զօրքերը կը նախատէ» (Ա.Թագաւորաց 17.26):

Ասիկա կը զայրացնէ անոր աւագ եղբայրը՝ Եղիաբը: Ան շատ հաւանաբար կը մտածէ՝ *իմ փոքր եղբայրս ոչ միայն անդաստիարակ է, այլեւ ինքնահաւան է*: Ուստի Եղիաբը իր կարգին խիստ ձեռով կ'ըսէ Դաւիթին. «[...] Ես քու հպարտութիւնդ ու սրտիդ չարութիւնը գիտեմ [...]» (Ա.Թագաւորաց 17.28, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Անգլերէն Աստուածաշունչի «Էն.Այ.Վի.» տարբերակը այսպէս կ'ըսէ. «Ես գիտեմ դուն ինչքան *ինքնահաւան* ես»:

Կեցէք, ո՛վ էր հպարտը: Միայն մէկ գլուխ առաջ Սամուէլ մարգարէն Յեսսէին տունը եկաւ՝ յաջորդ թագաւորը օծելու համար եւ այս անդրանիկ որդին չընտրուեցաւ: Թէ՛ Յեսսէն եւ թէ՛ Սամուէլը կարծեցին, թէ Եղիաբը պիտի ընտրուէր, որովհետեւ ան հաւանաբար Յեսսէին որդիներէն ամենաբարձրահասակը, ամենազօրաւորը, եւ ամենախելացին էր, բայց Աստուած հաստատ կերպով ըսաւ. «[...] Ես զանիկա անարգեցի [մերժեցի] [...]» (Ա.Թագաւորաց 16.7): Միայն մէկ պատճառ կայ, որ Աստուած մերժէ անձ մը եւ ատիկա հպարտութիւնն է: Այն հպարտութիւնը, որով Եղիաբը Դաւիթը կը մեղադրէր, իր մէջ կը գտնուէր, բայց Աստուած կը պարծենար Դաւիթին խոնարհութեամբ ըսելով, որ Իր սիրտին համեմատ մարդ էր (Առաքեալներու Գործերը 13.22), եւ Դաւիթը շատ հեռու էր տկար, թուամորթ կամ անողնայար ըլլալէն:

Դաւիթը իր վրայէն կը թօթափէ այս բանաւոր յարձակումը եւ մեծ վստահութեամբ կը հանդիպի Գողիաթին, անոր ըսելով, որ շուտով իր գլուխը պիտի կորսնցնէ: Յետոյ Դաւիթը կը վազէ դէպի թշնամիին բանակավայրը, կը սպաննէ Գողիաթը եւ կ'առնէ անոր գլուխը:

Պիտի փաստեմ, որ որքան յաճախ մենք իրապէս չենք հասկնար խոնարհութիւնը: Թուոց գիրքը, որ Աստուածաշունչին առաջին հինգ գիրքերէն մէկն է, կը պատկանի այն խումբին, որ կը կոչենք «*Հնգամատեան*»: Այս գիրքին մէջ կը կարդանք.

«Մովսէս շատ հեզ մարդ մըն էր՝ երկրի վրայ եղած բոլոր մարդոցմէ աւելի» (Թուոց 12.3):

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

Ուառն, ինչ հիանալի յայտարարութիւն: Եթէ անկեղծ ենք, կը խոստովանինք, որ շատ պիտի ուզէինք, որ ատիկա մեզի համար ըսուէր, բայց մենք ատիկա չենք համարձակիր ըսել: Ինչո՞ւ: Միայն անբարտաւան մարդը ատիկա կ'ըսէ ինքն իր մասին: Սակայն ի՞նչ գրեց Թուոց գիրքը: Պատասխանը՝ Մովսէսը: Ուառն:

Մենք երբեք խոնարհ չենք համարեր այն մարդը, որ կ'ըսէ, որ ինք խոնարհ է, ո՞ր մնաց եթէ ըսէ, որ ամենախոնարհ մարդն է երկրի վրայ: Կրնա՞ք պատկերացնել ծառայող մը, որ քրիստոնէական խորհրդաժողովի մը մէջ կ'ըսէ. «Ձեզի կ'ըսեմ, ես խոնարհ եմ, ուստի ատոր մասին պիտի խօսիմ ձեզի»: Զինք կը ծաղրեն եւ վրան կը խնդան եւ հերետիկոս կը կոչեն զինք, բայց լսեցէք, թէ Յիսուս ինչ կ'ըսէ.

«Ինծի եկէք դուք բոլորդ, յոգնածներ եւ բեռնաւորուածներ [...] եւ *ինձմէ տորվեցէք*, որովհետեւ հեզ եմ եւ սրտով *խոնարհ*, եւ դուք ձեր հոգեկան հանգստութիւնը պիտի գտնէք» (Մատթէոս 11.28-29, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Ուստի հիմնականօրէն խոնարհութեան բուն իմաստը մեզմէ վրիպած է, որովհետեւ մենք կը կարծէինք, որ ատիկա կը նշանակէ մեր անձին մասին երբեք չխօսիլ եւ որպէս անարժան որդեր ապրիլ, սակայն ատիկա շատ հեռու է ճշմարտութենէն:

## ԽՈՆԱՐԿՈՒԹԵԱՆ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Խոնարհութիւնը ունի երեք երեսներ: Առաջին՝ Աստուծոյ հանդէպ մեր հնազանդութիւնը. երկրորդ՝ մեր ամբողջութեամբ Անկէ կախեալ ըլլալը. եւ երրորդ՝ մեր մասին մեր տեսակէտը: Եկէք հակիրճ ձեռով քննենք իւրաքանչիւրը:

Առաջին՝ մեր հնազանդութիւնը. Յակոբոսը խոնարհութեան մասին գրելէն անմիջապէս ետք կը շարունակէ ըսելով. «Ուստի հնազանդեցէք Աստուծոյ» (4.7): Ասիկա հնազանդութիւնը կը կապէ խոնարհութեան հետ: Տէրը միշտ Իր սեփական ժողովուրդին Իր խոստումները եւ ծրագիրները կու տայ: «Քանզի ձեզի համար ծրագիրս գիտեմ, կ'ըսէ Տէրը,

Ծրագիր մը բարօրութեան եւ ո՛չ չարիքի, ձեզի ապագայ մը եւ յոյս մը տալու» (Երեմիա 29.11): Այս խոստումները Անոր կամքն են եւ մեր երթալիք տեղին մասին մարգարեական պատկեր մը կը գծեն մեր մէջ: Մենք լրջօրէն կը փափաքինք, որ անոնք իրագործուին, քանի որ Ան է, որ այս փափաքները մեր սիրտերուն մէջ կը դնէ (Տէն Սաղմոս 37.4): Մեր սիրտերուն մէջ մենք կը նայինք, որ Ան ո՛ր կը տանի մեզ, եւ մեր հասկացողութիւնը կ'որոշէ տրամաբանական ճամբան, որուն պէտք է հետեւինք: Սակայն շատ յաճախ Ան մեզ կ'առաջնորդէ այնպիսի ուղղութիւններով, որոնք տրամաբանութեան լիովին հակառակ կը թուին ըլլալ: Ճշմարիտ խոնարհութիւնը կ'ընդունի Աստուծոյ իմաստութիւնն ու հրահանգները որպէս մեր սեփական իմաստութենէն շատ աւելի բարձր, եւ կ'ընտրէ հնազանդիլ նոյնիսկ երբ չենք հասկնար: Առակաց 3.5-ը կ'ըսէ. «Քու բոլոր սրտովդ Տէրոջը ապաւինէ եւ քու իմաստութեանդ մի՛ վստահիր»:

Աբրահամը տարիներ սպասեց Իսահակին խոստումին կատարումին համար, եւ ժամանակի ընթացքին տրամաբանական ընթացքով ան պիտի ամուսնանար եւ զաւակներ պիտի ծնէր: Աբրահամը սկսաւ տեսնել բազմութեան Հայր ըլլալու խոստումը: Սակայն Աստուած այդ ամէնը կը փոխէ երբ գիշեր մը Ան Աբրահամին կ'ըսէ, որ երեք օրուան ճամբորդութիւն մը ընէ եւ յետոյ մեռցնէ Իսահակը: Տրամաբանական չէր: Կրնա՞ք երեւակայել անոր հնազանդելու պայքարը: Ասիկա ցաւալի հրաման մըն էր եւ բացարձակապէս անիմաստ էր՝ նկատի ունենալով խոստումը: Սակայն խոնարհութենէն մղուած, Աբրահամը ընտրեց հնազանդիլ նոյնիսկ երբ չէր հասկնար:

Աստուածաշունչին մէջ կան ուրիշ շատ օրինակներ այդ մասին երբ Աստուած կը հրահանգէ կամ կ'արտօնէ, որ պայմաններ պատահին, որոնք Իր մեզի ցոյց տուածին հակառակ կը թուին ըլլալ, սակայն հնազանդութեամբ մենք կը տեսնենք Անոր խոստումին կատարումը մեր հասկացողութենէն դուրս գտնուող ձեւով մը:

ՄԵՐ ԿԱՏԱՐԵԱԼ ԿԱԽՈՒԱԾՈՒԹԻՒՆԸ  
ԱՍՏՈՒԾՄԷ

Երկրորդ՝ խոնարհությունը կարելի է սահմանել իբրև մեր կատարեալ եւ բացարձակ կախումաւորութիւնը Աստուծոյ: Դաւիթը ամբարտաւան կ'երեւէր, բայց եւ այնպէս ան գիտէր, որ իր կարողութիւնը Աստուծոյ էր: Ան ըսաւ. «Առիծին ու արջին ձեռքէն զիս ազատող Տէրը այս Փղշտացիին ձեռքէն ալ պիտի ազատէ» (Ա.Թագաւորաց 17.37): Անոր եղբայրները իրենց սեփական ուժին վստահեցան, ատոր համար երբ իրենք զիրենք Դաւիթին հետ բաղդատեցին, իրենք զիրենք տարիքով անելի մեծ եւ անելի զօրաւոր տեսան: Դաւիթին ուժը իր հաւատքին եւ հնազանդութեան մէջ էր:

Ասիկա կը տեսնենք Քաղէբին եւ Յեսուին պարագային: Անոնք տասներկու ղեկավարներէն երկուքն էին, որոնք ընտրուեցան՝ երթալու եւ ստուգելու խոստացուած երկիրը: Քառասուն օր ետք տասներկուքը վերադարձան՝ Մովսէսին եւ ժողովուրդին յայտնելու այդ երկիրին մասին: Տասը ղեկավարները այսպէս ըսին. «Գացինք այն երկիրը, ուր դրկեցիր. իրացընէ [հոյակապ երկիր է] կաթ ու մեղր կը բղխի հոն: Ահա անոր պտուղը [իբրև ապացոյց]: Բայց այն երկրին մէջ բնակող ժողովուրդը զօրաւոր է եւ քաղաքները պարսպապատ ու խիստ մեծ են [...]» (Թուոց 13.27-28, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն):

Երբ այս մարդիկը խօսեցան, ժողովուրդը իրարանցումի մէջ ինկաւ: Այն ատեն Քաղէբը լռեցուց ժողովուրդը եւ հաստատ վստահութեամբ յորդորեց զանոնք: «Ելլենք ու ժառանգենք զայն», ըսաւ ան: «Մենք անշուշտ կրնանք անոր տիրել» (հմր 31):

Միւս ղեկավարները խիստ կերպով պատասխանեցին. «Մենք այն ժողովուրդին վրայ ելլելու կարող չենք, վասն զի անոնք մեզմէ զօրաւոր են» (հմր 32):

Ապա Աստուածաշունչը մեզի կ'ըսէ. «[Եւ] բոլոր ժողովուրդը ուզեցին քարկոծել զանոնք [Քաղէբը եւ Յեսուն]» (Թուոց 14.10):

Ժողովուրդին եւ միւս ղեկավարներուն աչքին, Քաղէբը եւ Յեսուն չափէն անելի ինքնավստահ եւ մեծամիտ էին: Այն

ղեկավարները, որոնք ըսին, որ երկիրը չեն կրնար գրաւել, իրապաշտ էին: Անոնք չափեցին կացութիւնը եւ գիտցան, որ իրենց համար՝ իբրեւ նախկին ստրուկներ, բացարձակապէս անկարելի էր գրաւել այդպիսի զօրաւոր եւ պարսպապատ երկիր մը: Ի վերջոյ անոնք պարզապէս իրենց կիներն ու մանուկները կը պաշտպանէին (Տէս Թուոց 14.3): Այնպէս կը թուէր, որ կարծէք այդ ղեկավարները խոնարհ էին, ազգին մասին կը մտածէին, որը կը ներառէր ծերերուն եւ տկարներուն կեանքերը: Այնպէս կը թուէր, որ Քաղէբը եւ Յեսուն այնքան ինքնահաւան էին, որ հաշուի չէին առնէր անօգնական մարդոց բարօրութիւնը:

Սակայն լսեցէք, որ անոնց վստահութիւնը ուրկէ կու գար. «[...] Տէրոջը դէմ ապստամբ մի՛ ըլլաք եւ այն երկրին ժողովուրդէն մի՛ վախնաք, քանզի անոնք մեր կերակուրն են. անոնց ապահովութիւնը գացած է իրենց վրայէն ու Տէրը մեզի հետ է: Անոնցմէ մի՛ վախնաք» (Թուոց 14.9): Յեսուն եւ Քաղէբը ամբողջութեամբ Աստուծոյ կարողութեան ապաւինած էին, եւ ոչ թէ իրենց կարողութեան: Անոնք գիտէին, որ Անոր կամքը իրենց համար այդ երկիրը մտնել եւ զայն նուաճել էր: Թերեւս անոնք մեծամիտ երեւցան, մինչ անոնց խումբին պատկանող ղեկավարները իրատես կը թուէին ըլլալ: Բայց Աստուած է, որ խոնարհը հպարտէն բաժնեց:

Խոնարհութիւնը կամ Աստուծոյ շնորհքին լիովին ապաւինիլը կը տեսնենք Պօղոսի կեանքին օրինակին մէջ: Ան ինքն իր մասին կ'ըսէ.

«[...] Բնաւ չենք խորհիր որ մենք մեր ոյժերով այդպիսի գործ մը կրնանք ընել. այլ՝ Աստուած է որ այդ կարողութիւնը կու տայ մեզի» (Բ.Կորնթացիներուն 3.5):

Եւ դարձեալ.

«Ահա թէ ինչու՝ մեծ հաճոյքով կը պարծենամ տկարութիւններովս. [ուրախ եմ ըլլալու Քրիստոսի զօրութեան կենդանի ցուցադրութիւնը՝ փոխանակ իմ սեփական զօրութիւնս եւ կարողութիւններս ցոյց տամ]» (Բ.Կորնթացիներուն 12.9-10, անգլերէն Աստուածաշունչի «Թի.Էլ.Պի.» տարբերակէն):

Ասիկա ընթացք մըն էր Պօղոսի կեանքին մէջ. ինչքան տարիները կ'անցնէին, այնքան աւելի Աստուծոյ շնորհքէն կախեալ կ'ըլլար եւ այնքան քիչ կ'ապաւինէր իր սեփական ուժին, ձիրքերուն կամ կարողութիւններուն: Որքան աւելի ինքզինք կը պարպէր Քրիստոսի ենթարկուելով, այնքան աւելի համարձակ եւ զօրաւոր կը դառնար Քրիստոսը փառաւորելու իր վճռակամութեան մէջ:

### ՄԵՆՔ ՄԵՐ ԱՆՁԻՆ ԻՆՉՊԷՍ ԿԸ ՆԱՅԻՆՔ

Ասով կը հասնինք խոնարհութեան երրորդ երեսին՝ ինչպէս մենք մեր անձին կը նայինք: Սկիզբը երբ Պօղոսը փրկուեցաւ, ան ինքզինք խոնարհեցուց՝ հրաժարելով իր բոլոր իրագործումներէն եւ ձեռք բերած դիրքէն, որ Յիսուսի հանդիպելէն առաջ ձեռք բերած էր. անաղբ կոչեց զանոնք: Շատերու համար դժուար չէ Քրիստոսը ճանչնալէ առաջ մեր ապրած կեանքը աղբ համարելը:

Բայց ինչ կրնանք ըսել մեր փրկութենէն ետք Քրիստոսով ունեցած մեր իրագործումներուն մասին: Ասիկա յաճախ բոլորովին ուրիշ պատմութիւն է: Այս արարքներուն մասին ան կ'ըսէ. «Եղբայրներ, ինքզինքս դեռ կատարելութեան հասած չեմ համարեր. բայց կ'աշխատիմ անցեալը մոռնալ [այն, ինչ որ Աստուած իր միջոցով ըրած է փրկուելէն ետք] եւ գալիքին նայիլ» (Փիլիպպեցիներուն 3.13, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Իր դարձի գալէն տարիներ ետք Պօղոսը առաքեալ ձեռնադրուեցաւ (Տէն Առաքեալներու Գործերը 13.1-4): Ան ստացաւ հոգեւոր յայտնութիւններու եւ իմաստութեան առատութիւն, որ իրեն դարձեալ տուաւ իրագործումի առիթը: Ան եկեղեցիներ ծնաւ ամբողջ Ասիոյ եւ Արեւելեան Եւրոպայի տարածքին: Մենք կը տեսնենք անոր խոնարհութիւնը Ք.Ե. 56 թուականին Կորնթոսի մէջ իր սկսած կոյս եկեղեցիին ուղղուած իր նամակին մէջ: Իր մահուրնէ տասը տարի առաջ էր, փորձառու վերթեան մըն էր Յիսուսի ծառայութեան մէջ, բայց եւ այնպէս լսեցէք անոր խօսքերը.



«Վասնզի ես առաքելներուն ամենէն յետինն եմ, որ արժանի ալ չեմ առաքել ըսուելու [...]» (Ա.Կորնթացիներուն 15.9):

Կը լսէք այս խօսքերուն մէջ գտնուող խոնարհութիւնը: Կեղծ խոնարհութիւնը գիտէ ինչպէս օգտագործել քաղաքականօրէն ընդունելի խօսքեր՝ խոնարհ երեւնալու համար, բայց անոր մէջ չէք գտներ սիրտի կամ միտքի խոնարհութիւն: Ատիկա խաբուսիկ է եւ ոչ ճշմարիտ: Բայց երբ Սուրբ Հոգիին ներշնչումով Աստուածաշունչ կը գրես, չես կրնար խաբել: Ան արտօնութիւն պիտի չստանար այդպիսի խօսք մը գրելու եթէ իսկապէս ինքզինք այդպէս չտեսնէր: Ուստի երբ Պօղոս ըսաւ, որ ինք ամենայետին առաքելն է, ատիկա քաղաքականօրէն ընդունելի խօսակցութիւն չէր, այլ՝ ճշմարիտ խոնարհութիւն:

Սակայն նայինք Պօղոսի յաջորդ խօսքին. «[...] Անոնց վրայ ամենէն աւելի աշխատեցայ [...]» (Ա.Կորնթացիներուն 15.10): Ովքեր են այդ ամէնը: Պատասխանը՝ բոլոր միա առաքելները: Կեցէք: Արդեօք Պօղոսը կը պարծենայ: Այնպէս կը թուի, որ կարծէք ան հիմա իր խօսքը կը փոխէ: Ան ինչպէս կրնայ ըսել, որ առաքելներուն մէջ յետինն է եւ անկէ անմիջապէս ետք ըսել. «[...] Անոնց վրայ ամենէն աւելի աշխատեցայ [...]»: Սկիզբը ատիկա ամբարտաւանութիւն կը թուի ըլլալ, եւ կարծէք, թէ ան անկեղծ չէր իր սկիզբը ըսածին մէջ, բայց այդպէս չէ: Ատիկա կու գայ Պօղոսի կախուածութեան մասին ըրած մէկ ուրիշ յայտարարութենէն անմիջապէս առաջ.

«[...] Ո՛չ թէ ես, հապա Աստուծոյ շնորհքը, որ ինծի հետ էր» (Ա.Կորնթացիներուն 15.10):

Ան ինքզինքը ամենայետինը դասելէ ետք կը խոստովանի, որ ինչ որ ըրաւ՝ միայն Աստուծոյ շնորհքով ըրաւ: Ան կրցաւ ինքզինք բաժնել այդ բոլոր իրագործումներէն. ան լիովին կը գիտակցէր, որ իր բոլոր իրագործումները իր մէջէն հոսող Աստուծոյ կարողութենէն կը բխէին:

Պօղոսի ինքնապատկերացումը՝ իբրեւ «առաքելներուն ամենէն յետինը», դժուար ընդունելի է: Թէ՛ անոր օրերուն

եւ թէ՛ եկեղեցւոյ ամբողջ պատմութեան ընթացքին, ան մեծագոյն առաքեալներէն մէկը կը համարուէր: Հիմա նկատի առէք, որ Պօղոս ինչ կ'ըսէ Եփեսացիներուն եօթը տարի ետք, Բ.Ե. 63 թուականին, իր մեկնելէն երեք կամ չորս տարիներ առաջ: Այդ եօթը տարիներուն ընթացքին, Կորնթացիներուն նամակը դրկելէն ետք, ան աւելի բան կ'իրագործէ, քան իր կեանքին որեւէ ուրիշ մէկ ժամանակաշրջանը: Հոս ան ինքզինք կը նկարագրէ.

«Ինծի՛ որ բոլոր սուրբերուն փոքրագոյնն եմ, այս շնորհքը տրուեցաւ,») հեթանոսներուն մէջ Քրիստոսին անքննելի ճոխութիւնը քարոզելու» (Եփեսացիներուն 3.8, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Եօթը տարի առաջ ան ինքզինք «առաքեալներուն ամենէն յետինը» կոչեց եւ հիմա ան ինքզինք կը նկարագրէ իբրեւ «բոլոր սուրբերուն փոքրագոյն»-էն աւելի ցած: Ինչ: Եթէ մէկը կրնայ պարծենալ, անշուշտ ատիկա Պօղոսը պիտի ըլլայ, եւ յիշեցէք, Սուրբ Գիրքը գրելու ատեն չէք կրնար սուտ խօսիլ. չէք կրնար գրել կրօնականօրէն ընդունելի արտայայտութիւն մը: Ան իրապէս ինքզինք այդպէս կը տեսներ:

Այս ընթացքը շարունակուեցաւ, որովհետեւ կը տեսնենք, որ իր մահէն անմիջապէս առաջ ան նամակ մը գրեց Տիմոթէոսին, որուն մէջ ըսաւ.

«[...] Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ մեղաւորները փրկելու, որոնց գլուխը ես եմ» (Ա.Տիմոթէոսի 1.15):

Հիմա ան առաքեալներուն ամենէն յետինը չէ, կամ նոյնիսկ բոլոր սուրբերուն փոքրագոյնը, այլ ան ինքզինք կը տեսնէ իբրեւ բոլոր մեղաւորներուն գլուխը: Նկատի առէք, ան չ'ըսեր «Ես գլուխն էի», այլ՝ «Ես գլուխն եմ»: Եւ ինքն էր, որ ստացաւ Քրիստոսով բոլորովին նոր ստեղծուած մը ըլլալու յայտնութիւնը. հիները անցան եւ ահա ամէն բան նոր եղաւ (Տեն Բ.Կորնթացիներուն 5.17): Ան երբեք չմոռցաւ, որ ինչքան մեծ պարտք ունէր Փրկիչին:

Որքան երկար կը ծառայէր Պօղոսը, այնքան ինքզինք աւելի պզտիկ կը տեսնէր մինչ իր խոնարհութիւնը հետզհետէ

Կ'աճէր: Ուստի կրնայ ըլլալ, որ ասիկա է պատճառը, որ որքան ան կը մեծնար, այնքան Աստուծոյ շնորհքը նոյն համեմատութեամբ կ'աւելնար իր մէջ: Որովհետեւ Յակոբոսը մեզի կ'ըսէ, որ Աստուած «խոնարհներուն շնորհք կու տայ» (Յակոբոսի 4.6): Արդեօք կրնայ ըլլալ, որ Աստուած նաեւ ատոր համար Պօղոսին այնքան մտերմօրէն յայտնեց Իր ճամբաները, որ ասիկա զարմացուց Պետրոս առաքեալը: Աստուած Եսայիին միջոցով կ'ըսէ, որ Ան խոնարհներուն հետ կ'ապրի, եւ ոչ թէ անոնց կ'այցելէ: Երբ Անոր հետ կ'ապրինք, Անոր հետ մտերիմ կը դառնանք:

## ԶՕՐՈՒԹԵԱՆ ԵՐԿՈՒՈՐԵԱԿՆԵՐԸ

Հիմա հասանք տեղ մը, ուր պիտի հանդիպինք Թագաւորութեան զօրութեան երկուորեակներուն. անոնք *Տիրոջ Վախը* եւ *խոնարհութիւնն* են: Յիշեցնեմ, որ վերջին գլուխներուն մէջ մենք յստակօրէն նկատեցինք, որ Տիրոջ վախը զԱստուած մտերմօրէն գիտնալու սկիզբն է, սակայն հիմա կը տեսնենք, որ նոյնը ճիշդ է խոնարհութեան պարագային: Սաղմոսողը կը յայտարարէ.

«Իր ճամբան հեզերուն պիտի սորվեցնէ» (Սաղմոս 25.9, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Աստուած Իր ճամբաները հեզերուն կը յայտնէ, բայց քանի մը համար ետք կը տեսնենք.

«Ո՛վ է այն մարդը որ *Տէրոջմէն կը վախնայ*:  
Ահա անոր պիտի սորվեցնէ իր ընտրած *ճամբան*»  
(Սաղմոս 25.12, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Հիմնականօրէն, անոնք որոնք Տիրոջ վախը ունին, ճշմարտապէս խոնարհ են, եւ ճշմարտապէս խոնարհները Տիրոջ վախը ունին: Յիշեցէք, որ Մովսէսը գիտէր Աստուծոյ ճամբաները, սակայն Իսրայէլը զինք կը ճանչնար միայն իրենց աղօթքներուն պատասխանուած ձեւէն, որոնք Անոր գործերն էին: Մովսէսը թէ՛ Տիրոջ վախը ունէր եւ թէ՛ շատ հեզ էր: Կը տեսնէք կապը: Իսրայէլ չունէր Տիրոջ վախը

(Բ.Օրինաց 5.29), ինչպես նաեւ խոնարհութիւն (որ մենք տեսանք վերը Յեսուին եւ Քաղէբին օրինակին մէջ):

Սաղմոսողը Տիրոջ վախը կը կապէ խոնարհութեան հետ որպէս գրեթէ անբաժանելի բաներ: Մենք շարունակ ասիկա կը տեսնենք Սուրբ Գիրքին մէջ: Օրինակներէն մէկն է.

«Տէրոջը վախը իմաստութեան խրատն է, ու փառքին առջեւէն խոնարհութիւն կ'երթայ» (Առակաց 15.33, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Խաւարի թագաւորութիւնն ալ ունի իր զօրութեան երկուորեակները: Անոնք *Տիրոջ Վախին* եւ *Խոնարհութեան ճիշդ հակառակն* են. անոնք *Ըմբոստութիւնն* ու *Հպարտութիւնն* են: Մենք զանոնք հակադրուած կը տեսնենք Առակաց գիրքին մէջ.

«*Խոնարհութիւնը* եւ [ակնածալից եւ պաշտամունքով] *Տէրոջը երկիւղին* վախճանը հարստութիւն, փառք ու կեանք են: Ծուռ [յամառ] մարդուն ճամբուն մէջ փուշեր ու որոգայթներ կան ուստի իր հոգին պահողը՝ անոնցմէ հեռու պիտի կենայ» (Առակաց 22.4-5, Աստուածաշունչի «Ամփիլիֆայտ» տարբերակէն, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Կը տեսնէք ինչպէս խոնարհութիւնը եւ Տիրոջ վախը իրարու հետ կապուած են եւ անոնք կը հակադրուին հպարտութեան եւ ըմբոստութեան: Յիսուս Ինքզինք անելի խոնարհեցուց քան ռեւէ ուրիշ մարդ կամ հրեշտակային էակ: Ասոր համար Ան խիստ բարձրացուեցաւ անելի քան ռեւէ ուրիշ մէկը (Տէն Փիլիպպեցիներուն 2.8-9): Ան նաեւ կը ներշնչուէր եւ կը հրճուէր Տիրոջ վախով բոլոր առաքինութիւններէն անելի. հետեւաբար, Աստուծոյ ներկայութեան Հոգին Անոր հետ եւ Անոր վրայ առանց չափի էր (Եսայի 11.2-3: Յովհաննէս 3.34):

Ասոր հակառակ օրինակն է Արուսեակը, որ օձեալ քերովբէն էր, որ ներկայիս Սատանայ կը կոչուի, որ հպարտութեան միջոցով ինքզինք բարձրացուց եւ իրմէ առաջ կամ իրմէ ետք եկողներէն բոլորէն անելի ըմբոստացաւ: Հետեւաբար, զայն «գութին խորունկ տեղերը» իջեցուցին (Տէն

Եզեկիէլ 28.14-17: Եսայի 14.12-15):

Յիշեցէք, որ Սուրբ Գիրքը շարունակ ցոյց կու տայ, որ Աստուծոյ բնակութեան վայրը բարձր տեղերն են, իսկ դիւային ուժերուն բնակութեան վայրը աւելի ցած տեղերն են: Դուք շարունակ պիտի տեսնէք ամբողջ Աստուածաշունչին մէջ հպարտութիւնը եւ ապստամբութիւնը կապուած ցածութեան հետ, եւ խոնարհութիւնը եւ Տիրոջ վախը կապուած բարձրութեան հետ: Բարձրանալ կը նշանակէ Աստուծոյ հետ մտերմութեամբ բնակիլ:

### ԱՆՈՆՔ ՈՐՈՆՔ ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՀԵՏԱՊՆԴԷ

Աստուած ամբարտաւաններուն եւ ըմբոստներուն հակառակ կը կենայ (Յակոբոսի 4.6), բայց Ան կը գրաւուի դէպի անոնց, որոնք Իր վախը ունին — ճշմարտապէս խոնարհները: Հին Կտակարանին մէջ կային խումբ մը մարդիկ, որոնք Աստուծոյ կը ծառայէին կամ զինք կը պաշտէին ինչպէս որ Սուրբ Գիրքը կը պատուիրէ: Անոնք գառնուկ եւ ցուլ կը բերէին զոհի համար, սրբարանին մէջ խունկ կը վառէին, եւ հացի ընծայ կը բերէին: Սակայն Աստուած կ'ըսէ, որ Իր աչքին անոնց զոհերը մարդ մը սպաննելու պէս էին. անոնց ընծաները կը նմանէին Անոր խոզի արիւն մատուցանելուն. եւ անոնց խունկը, որ աղօթքի եւ զոհաբանութեան օրինակ է, կուռք օրհնելու կը նմանէր: Ան յետոյ անոնց ըսաւ. «ատոր պատճառը».

«Վասն զի կանչեցի ու պատասխան տուող չեղաւ, խօսեցայ ու մտիկ չըրին: Իմ առջեւ չարութիւն ըրին եւ իմ չհաւնածս ընտրեցին» (Եսայի 66.4):

Ինչն է, որ Ան չի հաւնիր: Զոհեր առանց հնազանդութեան (Տէս Ա.Թագաւորաց 15.22): Այլ խօսքով, որեւէ տեսակի երկրպագութիւն, որուն մէջ Տիրոջ վախը չկայ:

Տէրը զօրաւոր հարուած տուաւ այս «երկրպագուներուն»: Ան Իր անսպասելի պատասխանով զանոնք կեցուց առարկելու կամ իրենց ընթացքը շարունակելու հնարաւորութենէն: Կրնա՞ք երեւակայել այդ մարդոց ապրած ցնցումը: Անոնք կը կարծեն, որ Անոր կը ծառայեն եւ կը

հաճեցնեն Չայն, բայց կը յայտնաբերեն, որ Ան վանողական կը գտնէ իրենց պաշտամունքը: Սակայն ինչ կը վերաբերի Իր ժողովուրդին, Տէրը երբեք արմատախիլ չ'ըներ հոն, ուր մտադիր չէ ցանել. Ան երբեք չի փլեր հոն, ուր մտադիր չէ կառուցել: Ուստի Ան այնուհետեւ կը քաջալերէ զանոնք ըսելով, որ ինչն է, որ Չինք կը գրաւէ.

«[...] Ես այս մարդոց պիտի նայիմ [esteem-գնահատեմ], այսինքն խոնարհին եւ կոտրած հոգի ունեցողին» (Եսայի 66.2, Աստուածաշունչի «Էն.Այ.Վի.» տարբերակէն):

Անգլերէն «էսթիմ» բառին համար գործածուած եբրայերէն բառը «նաւէթ» բառն է: Սթրոնկի Բառարանին համաձայն այս բառը կը նշանակէ՝ «ուշադրութեամբ նայիլ. հաճոյքով, բարեհաճութեամբ կամ հոգատարութեամբ վերաբերիլ»: Ուստի հիմնականօրէն Աստուած կ'ըսէ. «Այս է այն անձը, որուն հետ հաճոյքով կը վերաբերիմ, եւ որուն մեծ ուշադրութիւն կը դարձնեմ»: Պարզօրէն Ան կ'ըսէ. «Ես այս անձին ետեւէն եմ. Ես զինք է, որ կը հետապնդեմ»: Թոմի Թենին, ժամանակակից հեղինակ եւ ուսուցիչ, մեր սերունդին ամենահիանալի գիրքի վերնագիրներէն մէկը ունի՝ «ԶԱստուած Հետապնդողները»: Ատիկա կատարեալ կերպով կը նկարագրէ զԱստուած սիրողներուն սիրտերը: ԶԱստուած հետապնդելը բան մըն է, իսկ Աստուծոյ կողմէ հետապնդուիլը բոլորովին տարբեր բան է: Սակայն ճիշդ ասիկա է, որ Աստուած կ'ըսէ հոս:

Նկատի առէք Դաւիթը: Աստուած Իսրայելի աւագ մարգարէին՝ Սամուէլին կը թելադրէ, որ Յեսսէին տունը երթայ, նոյնիսկ Սամուէլին բողոքելէն ետք, քանի որ ան կը վախճար Սաուղին զայրոյթէն: Սակայն տակաւին Աստուած իրեն կը թելադրէ, որ երթայ, որովհետեւ Ան Յեսսէին որդիներէն մէկը կ'ուզէ: Մարգարէն կը քննէ եօթը աւելի աւագ եղբայրները եւ վերջապէս Տէրը մէկ խօսքով անոր կ'ըսէ. «Ո՛չ Սամուէլ, Ես այս աւագ տղաքը չեմ հետապնդեր, այլ այդ փոքրիկ կարմրաւուն տղան, որ դաշտը ոչխարներուն հետ է» (պարզաբանուած հեղինակին կողմէ):

Աստուած ինչո՞ւ Դաւիթը կը հետապնդէր, եւ ոչ թէ անոր միւս եղբայրները կամ Իսրայէլի միւս բոլոր տղամարդիկը: Ատոր պատասխանը կը գտնուի վերը նշուած համարին մէջ: Աստուած Իր շնորհքը կը թափէ եւ կը հետապնդէ անոնք, որոնք խոնարհ են եւ կտտրած հոգի ունին, եւ Անոր խօսքին դիմաց կը դողան: Կոտրած հոգի ունեցողները անոնք են, որոնք շուտով կ'ապաշխարեն, քանի որ աստուածային իշխանութեան ենթարկուելու նուիրուած են: Ուրիշ թարգմանութիւն մը այսպէս կը գրէ. «Ես ուրախ կ'ըլլամ անոնցմով, որոնք խոնարհ են եւ ապաշխարող, որոնք Իմ վախս ունին եւ Ինձի կը հնազանդին» (Անգլերէն Աստուածաշունչի «Թի.Ի.Վի.» տարբերակէն): Կոտրած հոգին ճշմարիտ խոնարհութեան եւ Տիրոջ վախին մէկ ուրիշ ձեւն է: Ուստի հիմնականօրէն Ան կը յայտնէ, որ Ան կը հետապնդէ անոնք որոնք խոնարհ են եւ Իր վախը ունին. անոնք որոնք Թագաւորութեան զօրութեան երկուորեակներուն հիման վրայ կը քալեն: Ահա թէ ինչո՞ւ Աստուածաշունչը մեզի կ'ըսէ.

«Ան չի սիրեր ինքնահաւան մարդիկը, բայց խոնարհներուն շնորհք կու տայ» (Առակաց 3.34, անգլերէն Աստուածաշունչի «Թի.Ի.Վի.» տարբերակէն):

Եւ դարձեալ.

«Ո՛րչափ մեծ է քու բարութիւնդ՝  
Որ քեզմէ վախցողներուն համար պահեցիր [...]   
Զանոնք քու երեսիդ ծածկոցովը պիտի ծածկես [...]»  
(Սաղմոս 31.19-20):

Ահա թէ ինչո՞ւ Նոր Կտակարանը մեզի կ'ըսէ՝ «խոնարհութիւն հագէք [հագնինք]» (Ա.Պետրոսի 5.5) եւ «ձեր [մեր] պանդխտութեան ժամանակը [ակնածալի] վախճով անցուցէք» (Ա.Պետրոսի 1.17): Սուրբ Հոգի Աստուած այս խօսքերով Պետրոսի միջոցով մեզ կը յորդորէ, որ Իրեն հետ քաղցր հաղորդակցութեան մէջ մտնենք, որ Իր սիրտին բուն փափաքն է մեզի համար, իբրեւ Իր սիրելի զաւակները:

Ընտրութիւնը մերն է: Աստուած մեզի համար ճամբան

հարթած է, որ Իրեն հետ քալենք, եւ մեզի տուած է Իր շնորհքը՝ ատիկա ընելու համար: Ինչ հրաշալի Աստուծոյ եւ Հօր մը կը ծառայենք: Հիմա մեզի կը մնայ լսել եւ մտիկ ընել Անոր ներքին սենեակը մտնելու Անոր կոչին, ուր Ան Ինզինք կը յայտնէ: Յաջորդ քանի մը գլուխներուն մէջ մենք պիտի քննարկենք, թէ Ան ինչպէս կ'ընէ ատիկա:

## ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

1. Այս գլուխին մէջ կը շեշտուի, որ թէեւ խոնարհութիւնը ընդհանրապէս սխալ հասկցուած է որպէս տկարութիւն, թուամորթութիւն եւ անողնայար ըլլալ, ճշմարտապէս խոնարհները կը շփոթուին ամբարտաւաններու հետ: Մինչ ասոր մասին կը մտածէք, ձեր միտքը կու գա՞ն մարդիկ, զորս կ'անտեսէք, իբրեւ ամբարտաւան, որոնք իրականութեան մէջ շատ խոնարհ են: Եթէ այո՛, ինչ կրնաք սորվիլ այդ սխալ գնահատականէն:
2. Մտածեցէ՛ք խոնարհութեան երեք երեսներուն մասին՝ Աստուծոյ հնազանդիլ, լիովին Անոր ապաւինիլ, եւ մեր անձին մասին մեր ունեցած տեսակէտը — եւ ասոնցմէ իւրաքանչիւրին մասին աստուածաշնչական օրինակներ ունենալով: Ասոնցմէ ո՞ր մէկը ձեր ամենամեծ մարտահրաւերը կը համարէք:
3. Եսայի 66-ին մէջ խումբ մը մարդիկ Աստուծոյ կը ծառայէին եւ Ձինք կը պաշտէին բառացիօրէն օրէնքին հետեւելով՝ պատշաճ զոհեր բերելով, պատշաճ խունկ վառելով, եւ պատշաճ ընծաներ մատուցանելով: Սակայն Տէրը ուրախ չէր անոնց պաշտամունքով, քանի որ անոնք հնազանդ չէին: Ինչ ձեւերով մեր պաշտամունքը կրնայ Աստուծոյ համար տհաճ ըլլալ, նոյնիսկ երբ ատիկա շնորհք ունեցող, տաղանդաւոր դեկավարներու գլխաւորութեամբ կը կատարուի:



# ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ՀԵՏ ՄՏԵՐՄՈՒԹԻՒՆ



Կը հաւատամ, որ Սուրբ Հոգին ամէնէն անտեսուած անձերէն  
մէկն է եկեղեցիին մէջ:

Հիմա հասանք գիրքին այն մասը, որ մինչեւ հիմա  
փափաքով կը սպասէի, որ քննարկեմ. Տէրը իրապէս  
ինչպէս կը մօտենայ մեզի: Նախ եւ առաջ կրկնեմ, Ան շատ  
աւելի ջերմեռանդութեամբ ձեզի կը փափաքի, քան դուք  
Իրեն: Յիշեցէք Մովսէսին խօսքերը. «*[Անիկա] նախանձոյր  
Աստուած է [Աստուած ձեզի հետ յարաբերութիւն ունենալու  
մեծ փափաք ունի:]*» (Ելք 34.14, անգլերէն Աստուածաշունչի  
«Էն.Էլ.Թի.» տարբերակէն):

Վերջերս երբ աղօթքի մէջ խորասուզուած էի, նախքան  
լիովին գիտակցիմ, թէ ինչ կ'ըսեմ, աղաղակեցի. «Տէր,  
երթ Քեզի հետ մտերիմ ընկերութիւն չեմ կրնար ունենալ  
հոս՝ երկրի վրայ, ապա կը խնդրեմ, զիս տուն՝ Երկինք  
տար Քեզի հետ»: Ծունկերս քիչ մը դողացին մինչ բառերը  
սիրտէս դուրս կը բխէին: Գիտէի, որ ըսածիս մէջ լուրջ էի,

բայց գրեթե անմիջապես միտքս ճշաց. «Ի՞նչ խնդրեցիր»: Բանականությունս հարցականի տակ դրաւ, թէ արդեօք պէտք էր այդպիսի բան մը խնդրէի:

Քանի մը ժամ ետք դէպի Ֆենիքս, Արիզոնա գացող օդանաւ մը առի, նստարանիս մէջ նստայ, պայուսակէս Աստուածաշունչս հանեցի եւ պարզապէս բացի զայն: Առաջին համարը, որ տեսայ հետեւեալը կ'ըսէր.

«[...] Ո՛վ [Տէր] իմ Վէմս, մի՛ լռեր,  
 Չըլլայ որ լռելուդ համար,  
 Գերեզմանը իջնողներուն նմանիմ»  
 (Սաղմոս 28.1):

Գրեթե տեղէս ցատկեցի: Ի՞նչ էր հաւանականութիւնը, որ աչքերս պատահականօրէն այդ համարին վրայ իյնային: Ատիկա քանի մը ժամ առաջ ճիշդ իմ հարցուցած հարցումիս մասին էր: Գիտէի, որ ատիկա Աստուծմէ ինծի տրուած խօսք մըն էր, քանի որ սիրտս արագ կը տրոփէր:

Դաւիթը կ'ըսէ, որ եթէ Աստուած մեզի հետ չխօսի, մեր վիճակը դժոխքի ճամբան բռնած մեղաւորի մը վիճակէն աւելի լաւ չէ: Ես ինծի հետ Աստուածաշունչի «Նիւ Լիվինկ Թրանսլէյշըն» տարբերակը կ'ունենամ, ուստի բացի եւ տեսայ, որ այդ առաւօտ աղօթածիս կը յարմարէր: Կ'ըսէ. «Որովհետեւ եթէ լռես, ես կրնամ յանձնուիլ եւ մեռնիլ»: Ես ճիշդ ասիկա աղաղակեցի: Ես շատ անգամ կարդացած եմ այս համարը, բայց ատկէ առաջ երբեք այս լոյսին տակ չէի տեսած զայն:

Ես անմիջապէս գիտցայ, որ Աստուծոյ կամքին հակառակ չէի աղօթած, այլ Սուրբ Հոգիով աղօթած էի: Ատիկա դարձեալ ինծի փաստեց, որ Աստուած չ'ուզէր լռել մեզի հետ, այլ Ան անկեղծօրէն կ'ուզէ մեզի հետ հաղորդակցիլ: Իմ շատ նախասիրած համարներէս մէկը Դաւիթին կողմէ գրուած այս խօսքերը կը պարունակէ.

«[Իմ սիրտս լսեց, որ կ'ըսես.] 'Եկէք եւ ինծի հետ խօսեցէք': [Եւ] Իմ սիրտս ալ քեզի ըսաւ. 'Տէր, կու գամ'» (Սաղմոս 27.8, անգլերէն Աստուածաշունչի «Էն. Էլ.Թի.» տարբերակէն):

Կը լսէք Աստուծոյ սիրտին փափաքը: Ան մեզմէ իրաքանչիւրը կը հրաւիրէ ըսելով. «Մօտեցիր, Ես կ'ուզեմ հաղորդակցիլ քեզի հետ, սիրտս բանալ եւ քեզի ցոյց տալ մեծ եւ հզօր բաներ, զորս դուն չես գիտեր»: Ասիկա պէտք է բնութագրէ իրաքանչիւր հաւատացեալի կեանքը. «Աստուծոյ մօտեցէք» եւ եթէ մօտենանք, Ան կը վստահեցնէ, որ «Անիկա ձեզի պիտի մօտենայ»: Մենք կ'որոշենք մեր մտերմութեան մակարդակը, եւ ոչ թէ Ինք: Ան արդէն իսկ բացած է այն դուռը, որ դէպի Իր առանձնասենեակները կը տանի. Ան կը սպասէ, մեզ կը կանչէ, որ գանք: Մեր որոշումն է պատասխանել կամ ոչ, եւ ինչքան աւելի մօտենանք, այնքան աւելի Ան Ինքզինք եւ Իր փափաքները կը յայտնէ: Սակայն դարձեալ նայինք Յակոբոսին խօսքերուն, որ ան կ'ըսէ այս մեծ հրաւերէն անմիջապէս առաջ:

«Կամ թէ կը կարծէք որ գիրքը պարմայ տեղ կ'ըսէ,  
թէ նախանձի կը փափաքի մեր մէջ բնակող հոգին»  
(Յակոբոսի 4.5):

Ան կը փափաքի ունենալ մեզ, բայց նախանձով: Անցեալ քանի մը գլուխներուն մէջ մենք տեսանք, որ Ան մեզ պիտի չբաժնեկցի այս աշխարհի ազահ ցանկութիւններուն հետ: Այդ պատճառով Յակոբոսը կ'ըսէ. «[...] Չէք գիտեր, որ աշխարհին հետ բարեկամութիւն ընել՝ Աստուծոյ թշնամութիւն ընել կը նշանակէ: Որովհետեւ ով որ կ'ուզէ աշխարհին բարեկամ ըլլալ՝ ինքզինք Աստուծոյ թշնամի կը դարձնէ» (Յակոբոսի 4.4): Ասիկա կը նմանի այն կնոջ, որ իր անհաւատարիմ ամուսինին կ'ըսէ. «Չես կրնար թէ՛ զիս եւ թէ՛ քու սիրուիդ ունենալ. ուստի ընտրէ՛: Եթէ զինք ընտրես, զիս մերժած կ'ըլլաս եւ ես կը հեռանամ»: Նոյնն է պարագան Տիրոջ. Ան մեզ պիտի չբաժնեկցի աշխարհին հետ: Ան մեր սիրտերուն բուռն փափաքը պիտի ըլլայ կամ Ինքզինք պիտի չյայտնէ մեզի:

ՄԵՐ ՄԷՋ ԲՆԱԿՈՂ ՀՈԳԻՆ ԿԸ ՓԱՓԱՔԻ

Ասկէ առաջ մենք լայնօրէն քննարկեցինք մեզի հանդէպ Անոր ունեցած կարօտը. բայց հիմա մենք պէտք է կեդրոնանանք Հոգի բառին վրայ: Շատ նշանակալից է, որ Սուրբ Գիրքը կը գրէ. «Կը փափաքի մեր մէջ բնակող Հոգին [...]»: Նկատի առէք, անիկա չ'ըսեր. «Մեր մէջ բնակող Յիսուսը կը փափաքի [...]»: Յիսուս հոս՝ երկրի վրայ չէ, Ան Աստուծոյ մեծութեան աջ կողմը նստած է, եւ Ան այդտեղ է գրեթէ երկու հազար տարիէ ի վեր: Այն օրը, որ Յիսուս մեկնեցաւ, հրեշտակները Անոր աշակերտներուն ըսին. «Ո՛վ Գալիլիացի մարդիկ, ինչո՞ւ կայնէր դէպի երկինք կը նայիք. այս Յիսուսը որ ձեզմէ երկինք համբարձաւ, այսպէս պիտի գայ՝ ինչպէս տեսաք անոր երկինք երթալը» (Առաքեալներու Գործերը 1.11): Ան ֆիզիքապէս համբարձաւ եւ ամպ մը զանիկա անոնց աչքէն ծածկեց, եւ մենք խոստում ունինք, որ Ան նոյն ձեւով պիտի վերադառնայ:

Զիս սխալ մի՛ հասկնաք, մեր հիանալի Փրկիչը՝ Յիսուսը մեզի կը փափաքի, բայց Ան, որ մեր մէջն է Անոր հեռանալէն անմիջապէս ետք, Սուրբ Հոգին է, եւ Ան է այս համարին մէջ նշուած Աստուածութեան յատուկ անձը: Սակայն Ան շատ ձեւերով անտեսուած է այն մարդոց կողմէ, որոնք Յիսուսի անունը կը կանչեն: Իրականութեան մէջ, ես կը հաւատամ, որ Սուրբ Հոգին ամէնէն անտեսուած անձերէն մէկն է եկեղեցիին մէջ: Մտածեցէք, քանի՞ անգամ մէկու մը հետ քսան վայրկեան ձեր ինքնաշարժով գացած էք եւ ամբողջ ճամբան մէկ բառ չէք ըսած, սակայն որքան յաճախ մենք ատիկա կ'ընենք Անոր հետ: Մենք կը մտածենք մեր օրուան մասին, կամ մինչ կը քշենք, քրիստոնէական երաժշտութիւն կամ ձայնասփիռի կայաններու մտիկ կ'ընենք եւ շատ յաճախ նոյնիսկ չենք գիտնար, որ Ան մեզի կ'ընկերակցի: Մենք չենք անդադառնար, որ Ան մեզի կ'ընկերակցի տան մէջ, գրասենեակին մէջ եւ ուրիշ անհամար տեղերու մէջ, ուր մեր ժամանակը կ'անցընենք. սակայն եթէ մեզի հարցնեն, մենք անշուշտ կ'ընդունինք Անոր գոյութիւնը եւ թէ Ան մեր սիրտերուն մէջ կը գտնուի:

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՄԱՍԻՆ  
ՄԵՐ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄԸ

Անոր ներկայությունը եւ ընկերակցությունը չճանչնալու պատճառներէն մէկը Սուրբ Հոգիին մասին մեր պատկերացումն է. ասիկա խորհրդաւոր է Անոր մասին մեր գրած ձեւին եւ քարոզած ձեւին պատճառով: Իրականութեան մէջ եթէ ամէն անգամ Աստուծոյ Հոգիին մասին լսած ատենս, որ Անոր «այն կամ անիկա» (անգլերէնով «*իթ*» անձնական դերանունը, որ առարկաներու համար կը գործածուի) կ'ըսուի, այսինքն Անոր մասին որպէս անձ չեն խօսիր, մէկ տղար ստանայի, հիմա ֆինանսապէս հարուստ պիտի ըլլայի: Յաւօք, շատերը Ձինք կը տեսնեն իբրեւ «սուրբ էակ» մը, եւ ոչ թէ Ան, որ Ամենասուրբն է, եւ կ'ուզէ ձեր ամենամտերիմ բարեկամը ըլլալ: Եթէ միայն Սուրբ Գիրքին վրայ խոկայինք, պիտի գիտնայինք, որ Ան ունի միտք (Հռոմայեցիներուն 8.27), ինչպէս նաեւ կամք (Ա.Կորնթացիներուն 12.11), եւ զգացումներ, որոնք նկարագրուած են մեզի հանդէպ Անոր ունեցած սիրով (Հռոմայեցիներուն 15.30): Ան կը խօսի (Եբրայեցիներուն 3.7). իրականութեան մէջ Ան յստակօրէն կ'ընէ ասիկա (Ա.Տիմոթէոսի 4.1): Ան կը սորվեցնէ (Ա.Կորնթացիներուն 2.13), կը տրամի (Եփեսացիներուն 4.30), կը նախատուի (Եբրայեցիներուն 10.29), եւ կրնանք Իրեն ստել, ինչպէս ռեւէ մարդու կ'ընենք:

Անոր մասին մեր առաջին տպաւորութիւնը ընդհանրապէս աղանիի պատկերն է: Սակայն ինչո՞ւ Ան պատկերուած է իբրեւ աղանի: Ան ոչ մէկ անգամ իբրեւ աղանի չէ յայտնուած: Չորս անտարաններուն մէջ ալ գրուած է, որ Յովհաննէս Մկրտիչը տեսաւ, որ Աստուծոյ Հոգին Յիսուսի վրայ կ'իջնէ՝ «աղանիի պէս» (Մատթէոս 3.16: Մարկոս 1.10: Դուկաս 3.22: Յովհաննէս 1.32): Ասիկա Ձինք աղանի չ'ըներ: Ես լսած եմ, որ մարդիկ տղամարդոց կամ կիներու մասին կ'ըսեն. «Ան հովի արագութեամբ վազեց» կամ «Ան եզի պէս զօրաւոր է»: Ասիկա այդ կինը հով չ'ըներ, կամ այդ մարդը չորքոտանի անասուն չ'ըներ: Անոնք մարդ են:

Մէկ ուրիշ մը կրնայ ըսել. «Այո՛, բայց Յովհաննէս առաքեալը տեսաւ Սուրբ Հոգին իբրեւ կրակի լամբարներ երբ Աստուծոյ գահը տեսաւ»: Այո՛, ճիշդ է, քանի որ ան գրեց.

«[Ուղղակի] Աթոռին առջեւ եօթը հաս բորբոքած կրակի լամբարներ կային, որոնք Աստուծոյ եօթը հոգիներն էին» (Յայտնութիւն Յովհաննէսի 4.5, անգլերէն Աստուածաշունչի «Թի.Էլ.Պի.» տարբերակէն). բայց այս նոյն Յովհաննէսը նաեւ գրեց. «[Եւ նայեցայ, եւ ահա] [...] Երէցներուն մէջստեղ կայնած Գառնուկ մը կար, որպէս թէ մորթուած [...] [Յետոյ երէցները եւ միաները, որ գահի սենեակին մէջ էին, Գառնուկին երգեցին]. ‘Արժանի ես դուն այդ գիրքը առնելու եւ ասոր կնիքները քակելու. վասնզի մորթուեցար ու քու արիւնովդ մեզ ծախու առիր Աստուծոյ համար ամէն ցեղէ ու լեզուէ եւ ժողովուրդէ ու ազգէ’» (Տէն Յայտնութիւն Յովհաննէսի 5.6-9): Շատ յստակ է, որ ան Յիսուսի մասին կը խօսի, բայց մենք Ձինք իբրեւ անասուն չենք տեսներ: Մենք անշուշտ գիտենք, որ Յիսուս մարդ է, որուն պատկերով մենք ստեղծուած ենք. մենք անասունի՛ պատկերով ստեղծուած չենք:

Սուրբ Հոգին անձ է, եւ մենք Իր պատկերով ստեղծուած ենք: Օ՛, այո՛, Ի՛ր պատկերով: Ծննդոց գիրքին մէջ կը կարդանք. «Աստուած ըսաւ. ‘Մեր պատկերին ու նմանութեանը պէս մարդ ընենք’» (Ծննդոց 1.26): Չ՛ըսեր. «Իմ պատկերովս մարդ պիտի ընեմ»: Ո՛չ, Հայրը, Որդին եւ Սուրբ Հոգին միասնաբար եւ նոյն ատեն ստեղծեցին մարդը: Մենք լաւատեղեակ ենք Հօր եւ Որդիին դերէն Ստեղծագործութեան մէջ, բայց Սուրբ Գիրքը նաեւ յստակօրէն կ’ըսէ. «Ձիս Աստուծոյ Հոգին ստեղծեց» (Յոր 33.4), եւ դարձեալ. «Հոգիդ կը դրկես ու անոնք կը ստեղծուին [...]» (Սաղմոս 104.30): Ուստի երբ Աստուած ըսաւ. «Մեր պատկերին պէս մարդ ընենք», Սուրբ Հոգին անշուշտ ներառուած էր: Մենք ստեղծուած ենք Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին պատկերով: Ան անձ է, Աստուածութեան երրորդ Անձը, եւ ոչ թէ խորհրդաւոր հով մը կամ սրընթաց թռչուն մը:

Ինչպէս Մարիամ կրցաւ Սուրբ Հոգիով յղանալ եթէ մենք Անոր պատկերով ստեղծուած չենք: Սակայն Սուրբ Գիրքը կը գրէ. «[Բայց երբ ան տակաւին կոյս էր] Մարիամ յղի մնաց Սուրբ Հոգիէն» (Մատթէոս 1.18, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն): Յետոյ Տիրոջ հրեշտակը Յովսէփին ըսաւ. «[...] Անոր ներսիդին ծնածը Սուրբ Հոգիէն է» (Մատթէոս 1.20): Եթէ Սուրբ Հոգին «բան» (նիւթ) մը կամ

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ՀԵՏ ՄՏԵՐՄՈՒԹԻՒՆ

«այդ կամ ատիկա» ըլլար, ինչպէս Մարիամին մէջ մարդ պիտի ձեւաւորուէր: Ան Աստուծոյ Հոգիէն յղի մնաց: Նոյն պատկերը ունեցող երկու հոգի պէտք է՝ բնական զաւակ ստեղծելու համար:

Յուսամ կը տեսնէք, որ Սուրբ Հոգին անձ է, իրականութեան մէջ Ան շատ հրաշալի անձ մըն է: Այս պատճառով Պօղոս հաւատացեալներուն կ'ըսէ.

«Տէր Յիսուս Քրիստոսին շնորհքը եւ Աստուծոյ սէրը ու *Սուրբ Հոգիին հաղորդութիւնը* ձեր ամենուն հետ ըլլայ: Ամէն» (Բ.Կորնթացիներուն 13.13, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Նկատի առէք, որ ան կ'ըսէ. «Սուրբ Հոգիին *հաղորդութիւնը* ձեզի հետ ըլլայ»: Տարիներ շարունակ ես սերտած եմ «*հաղորդութիւն*» բառը, քանի որ զԱստուած մտերմօրէն ճանչնալը իմ բուն փափաքս է: Ես ատիկա փնտռեր եմ գրեթէ բոլոր յունարէն բառարաններուն մէջ, զորս կրցած եմ ձեռք բերել: Հետեւեալները այդ բառին հիմնական սահմանումներէն են.

- Ընկերութիւն
- Միասին բաժնեկցիլ *կամ* ընկերային հաղորդակցութիւն
- Գործակցութիւն *կամ* համատեղ մասնակցութիւն
- Սերտ փոխադարձ կապ
- Մտերմութիւն

Կան ուրիշ բառեր, որոնք կը գործածուին «*հաղորդութիւն*» բառը սահմանելու համար, բայց անոնք շատ նման են առնուազն վերը նշուած սահմանումներէն մէկուն, ուստի ես ասոնք ընտրեցի: Եկէք իւրաքանչիւրին նայինք անջատաբար եւ անոնց վրայ խոկանք:

## ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Առաջին բառը՝ «*ընկերութիւն*»-ը «Ուեպսթըր» Բառարանին համաձայն կը նշանակէ՝ *ընկերակցութիւն կամ հաւաքոյթ*: Նաեւ կը նշանակէ՝ *ընկերային ըլլալու որակ կամ վիճակ*:

Երբեք չէք ակնկալեր, որ ընկերներ իրարու հետ ջարաբերին. անոնք երկուքն ալ զիրար տեղեակ կը պահեն, թէ ներկայիս ինչ կ'ընեն կամ ինչ կը ծրագրեն ընել: Անոնք ընկերներ են եւ անոնց միջեւ շարունակական հաղորդակցութիւն կայ: Սուրբ Հոգիին եւ Անոր ծառաներուն միջեւ այս յարաբերութեան օրինակները շարունակ կը գտնենք Առաքեալներու Գործերը գիրքին մէջ: Հետեւեալը Պօղոսին խօսքերէն օրինակ մըն է.

«Հիմա, ահաւասիկ, Սուրբ Հոգիին մղումով Երուսաղէմ կ'երթամ: Չեմ գիտեր, թէ հոն ինչ պիտի պատահի ինծի: Միայն գիտեմ, թէ *ամէն մէկ քաղաքի* մէջ Սուրբ Հոգին կ'ազդարարէ ինծի՝ ըսելով թէ բանտարկութիւն եւ նեղութիւն կը սպասեն ինծի» (Առաքեալներու Գործերը 20.22-23, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Անոր սեփական խօսքերը ցոյց կու տան մնայուն հաղորդակցութիւն Պօղոսին եւ Սուրբ Հոգիին միջեւ: Անոնք ծառայակիցներ էին կեանքի, ճամբորդութեան եւ առաքելութեան մէջ:

Նոյնն է պարագան Տիրոջ բոլոր ծառաներուն Նոր Կտակարանին մէջ: Ուր որ կ'երթային Ան իրենց հետ էր եւ անոնց հետ կը հաղորդակցէր երբ անոնք Իրեն կը նայէին: Ան անոնց ընկերակիցն էր: Փիլիպպոսը, ուրիշ աշակերտ մը, համաքաղաքային ժողով մը ձգեց եւ դէպի անապատ գնաց, բայց ան առանձին չէր կամ կորսուած չէր այնպէս մը որ ընելիքը չգիտնար, քանի որ «Սուրբ Հոգին ըսաւ Փիլիպպոսի. 'Մօտեցիր եւ այդ կառքին քովէն քալէ'» (Առաքեալներու Գործերը 8.29):

Պետրոսը, երբ կը փորձէր հասկնալ դժուար տեսիլք մը, պէտք չունեցաւ Աստուածաշունչի իր սեփական գիտելիքներուն ապաւինելու, քանի որ ան լսեց Հոգիին ձայնը, որ կ'ըսէր. «Ինչ որ Աստուած իբրեւ մաքուր կ'ընծայէ՝ դուն պիղծ մի՛ համարեր»: Ապա ատելի ուղղութիւն տալու համար, «[...] *Հոգին ըսաւ իրեն*. 'Երեք հոգիներ եկած՝ քեզ կը փնտռեն: Ել, վար իջիր եւ անոնց հետ գնա՝ առանց վարանելու, որովհետեւ ես դրկեցի զանոնք'» (Առաքեալներու Գործերը 10.19-20, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):



Կը տեսնէք Սուրբ Հոգիին ընկերակցութիւնը Պօղոսին ամբողջ խումբին հետ Ղուկասի գրութիւններուն մէջ. «Փռիւզիոյ ու Գաղատացիներու կողմերը պտըտեցան. հոն *Սուրբ Հոգին արգիլեց* որ Աստուծոյ խօսքը Ասիայի մէջ խօսին: Երբ Միւսիայի կողմերը երթալով կը ջանային դէպի Բիւթանիա երթալ. *Յիսուսի Հոգին թող չտրուաւ անոնց*» (Առաքեալներու Գործերը 16.6-7, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Ես կրնամ ուրիշ քանի մը օրինակներ ալ բերել: Սակայն կ'ուզեմ շեշտել, որ Նոր Կտակարանի ծառայողները լաւատեղեակ էին, որ Աստուծոյ Հոգին միշտ իրենց կ'ընկերակցէր. Անոր հետ յարաբերիլը երբեք սարսափելի կամ սովորականէն դուրս դէպք մը չէր: Անոնք կ'ակնկալէին Անոր մասնակցութիւնը իրենց կեանքին մէջ այնպէս, ինչպէս մենք կ'ակնկալենք, որ ուրիշ ոեւէ մէկը մասնակցի մեր կեանքին եթէ մենք ամէն օր եւ քսանչորս ժամ անոր հետ կ'ապրինք:

Մարդիկ ինծի կը հարցնեն, թէ արդեօք ճամբորդութիւններու ընթացքին պանդոկներու սենեակներուն մէջ մնալէն կը ձանձրանամ: Կը պատասխանեմ. «Անկեղծօրէն ես երբեք չեմ ձանձրանար անոնցմէ»: Իրականութեան մէջ ես եղած եմ աշխարհի ամենագեղեցիկ քաղաքներուն մէջ եւ բնաւ փափաք չեմ ունեցած տեսարժան վայրերը տեսնելու, որովհետեւ ես այնքան կը վայելեմ Անոր ընկերակցութիւնը, որ չեմ ուզեր այդ ժամանակը կորսնցնել: Անցեալին, նախքան Սուրբ Հոգիին ընկերակցութիւնը իրապէս հասկնալս եւ ապրիլս, շատ տխուր կ'ըլլայի երբ առանձին ըլլայի: Կ'ուզէի շարունակ մարդոցմով շրջապատուիլ: Հիմա կ'ուզեմ առանձին ըլլալ, որպէսզի կարենամ դիւրութեամբ լսել եւ խօսիլ Անոր հետ:

Ասիկա է Անոր բուն փափաքը՝ ձեզի հետ հաղորդակցիլ: Պահ մը ձեր աչքերը գոցեցէք եւ մտածեցէք, որ Սուրբ Հոգին ձեր ուղեկիցը կամ ծառայակիցն է: Որովհետեւ Աստուծոյ խօսքը կը յայտարարէ՝ թող «Սուրբ Հոգիին *հաղորդութիւնը* ձեզի հետ ըլլայ»: Կամ ասոր վրայ խոկացէք. «Թող Սուրբ Հոգիին *ընկերակցութիւնը* ձեզի հետ ըլլայ»: Կամ դարձեալ, «Թող Սուրբ Հոգին ձեզի *ընկերանայ*»: Թող այս խօսքերը տարածուին ձեր սիրտին մէջ՝ ձեր եւ ձեր Արարիչին միջեւ մտերմութեան դուռը բանալու համար:

ՄԻԱՍԻՆ ԲԱԺՆԵԿՑԻԼ

Երկրորդ սահմանումը՝ *միասին բաժնեկցիլը* կամ *ընկերային հաղորդակցութիւնը*, կը նկարագրէ միտքերու կամ զգացումներու փոխանակում: Ամէնէն արժէքաւոր ժամանակները, որ իմ ամենամօտիկ բարեկամներուս հետ կ'անցընեմ, անոնք են երբ միասին կը զրուցենք եւ կը բաժնեկցինք մեր սիրտին ամենախոր կամ ամենամտերիմ բաները: Այդ պահերուն մենք խոցելի կ'ըլլանք եւ կը բաժնեկցինք բաներ, որ մեզ լաւ չճանչցող անձ մը կրնայ մեզ սխալ հասկնալ կամ ծաղրել: Սակայն գիտենք, որ մեր սիրելի բարեկամներուն պարագային այդպէս պիտի չըլլայ. անոնք ատիկա պիտի չընեն, քանի որ գիտեն մեր սիրտը եւ սխալ պիտի չմեկնաբանեն մեր բաժնեկցած բաները: Պօղոսը ցոյց կու տայ Սուրբ Հոգիին հետ այդպիսի յարաբերութեան օրինակը երբ կը գրէ. «Քրիստոսով ճշմարիտը կ'ըսեմ, առանց ստելու, եւ խիղճս ալ *Սուրբ Հոգիով* կը վկայէ [որ ըսածս ճիշդ է] [...] (Հռոմայեցիներուն 9.1, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն): Սուրբ Հոգին գիտէր Պօղոսին սիրտը, եւ Պօղոսն ալ՝ Անոր սիրտը: Մտերմութիւն մը զարգացաւ երբ անոնք միասին բաժնեկցեցան իրենց խոր միտքերն ու զգացումները:

Դարձեալ, այս է պատճառը, որ Տիրոջ վախը ունենալը շատ կարեւոր է: Տէրը Իր խոր միտքերը պիտի չբաժնեկցի այն մարդոց հետ, որոնց համար թանկագին չեն անոնք, ճիշդ ինչպէս մենք մեր մարգարիտները պիտի չթափենք զանոնք խեղաթիրողներուն առջեւ: Պարզ ասած՝ մենք մեր կեանքին խոր բաները երբեք չենք բաժնեկցիր անոնց հետ, որոնք մեր սիրտը չունին. նոյնն է պարագան Աստուծոյ:

Հին Կտակարանի սուրբերէն մէկը կ'աղաղակէ. «Աստուծոյ գաղտնիքը կրնաս հասկնալ» (Յոբ 11.7): Սակայն Սուրբ Հոգիին հետ մտերմութեան բաց դռան պատճառով, որ նոր ուխտը կը բերէ, Պօղոս խանդավառութեամբ կ'ըսէ. «Բայց Աստուած մեզի յայտնեց *իր Հոգիովը*, վասնզի Հոգին ամէն բան կը քննէ, Աստուծոյ *խորունկ* բաներն ալ» (Ա.Կորնթացիներուն 2.10, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Նկատի առէք, որ ատիկա Իր Հոգիին միջոցով կ'ըլլայ: Ան

## ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ՀԵՏ ՄՏԵՐՄՈՒԹԻՒՆ

Աստուածութեան այն անձն է, որ մեզի հետ կը բաժնեկցի Աստուծոյ մտերիմ կամ խորունկ բաները: Ուան՛, ատիկա չի՛ խանդավառեր ձեզ:

Ուստի նորէն կանգ առէք, ձեր աչքերը գոցեցէք, եւ խոկացէք այն իրականութեան վրայ, որ Սուրբ Հոգին այսպիսի մտերմութիւն կ'ուզէ ունենալ ձեզի հետ: Ան կը փափաքի ձեզի ցոյց տալ Իր խորունկ միտքերն ու զգացումները եւ լսել ձերը: Որովհետեւ Աստուծոյ Խօսքը կ'ըսէ. «Թող Սուրբ Հոգիին *միտքերուն եւ զգացումներուն բաժնեկցիլը* ձեզի հետ ըլլայ»:

## ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆ

Երրորդ սահմանումը՝ *գործակցութիւնը* կամ *համալրելի մասնակցութիւնը*, գեղեցիկ կերպով կը տեսնենք առաջին եկեղեցիին ղեկավարներուն վկայութեան օրինակին մէջ: Անոնք իրենց նամակին մէջ կը գրեն.

«Վասնզի աղէկ երեւցաւ Սուրբ Հոգիին ու մեզի ալ [...]»  
(Առաքեալներու Գործերը 15.28):

Անոնք յստակ կերպով ցոյց տուին Սուրբ Հոգիին տեսակէտը ինչպէս նաեւ իրենց տեսակէտը: Անոնք իրենց համատեղ մասնակցութիւնը բերին որոշումին մէջ. անոնք Թագաւորութեան գործին մէջ գործակիցներ էին: Ասոր արտացոլացումը կրնանք տեսնել Հին Կտակարանին մէջ երբ Աստուած Աբրահամին եկաւ՝ Սողոմոն մասին Իր ծրագիրները քննարկելու համար: Աբրահամին թոյլ տրուեցաւ, որ իր տեսակէտներով ընդհատէ եւ Աստուած Իր որոշումը վերջնականացուց Աբրահամին խորհուրդը լսելէ ետք:

Ասիկա նաեւ քանի մը անգամ կը տեսնենք Մովսէսի հետ: Տէրը Իր բարկութեամբ պատրաստ էր Իսրայէլի որդիները ոչնչացնելու եւ ատիկա կ'ընէր եթէ չ'ըլլար Մովսէսին խորհուրդը: Ան Աստուծոյ յիշեցուց Անոր սեփական խոստումները եւ համբաւը. Մովսէսի ներդրումին իբրեւ արդիւնք, պատմութիւններէն մէկուն մէջ կը կարդանք. «Տէրը զղջաց [միտքը փոխեց] այն չարիքին համար, որ ըսեր էր, թէ իր ժողովուրդին պիտի ընէ» (Ելք 32.14, Աստուածաշունչի

«Էն.Էյ.Էս.» տարբերակէն): Մովսէսը եւ Աբրահամը երկուքն ալ Աստուծոյ գործակիցներ էին, բայց երկուքն ալ չունէին այն մնայուն հաղորդակցութիւնը, որ այսօր մենք ունինք նոր ուխտին պայմաններուն տակ. եթէ այդ մասին մտածէք, ատիկա շատ զարմանալի է:

Մենք կը տեսնենք յստակ ապացոյցը Սուրբ Հոգիին դերին՝ իբրեւ մեր երէց գործակիցը, երբ կը լսենք այն բառերը, որ Պօղոս կ'ըսէ Եփեսոսի ղեկավարներուն.

«Ուրեմն զգուշացէ՛ք ձեր անձերուն եւ բոլոր հօտին համար, որուն վրայ *Սուրբ Հոգին* ձեզ տեսուչ դրաւ *Աստուծոյ* եկեղեցին հովուելու, զոր *իր արհիւնովը* ստացաւ» (Առաքեալներու Գործերը 20.28, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Այս համարին մէջ մենք յստակօրէն կը տեսնենք Աստուածութեան տարբեր անձերը, բայց նոյն ատեն անոնց կատարեալ միասնութիւնը: *Սուրբ Հոգին* առաջին անձն է, որուն մասին կը խօսուի, եւ Ան է, որ զանոնք վերակացուներ ըրաւ: Յետոյ Հայրը կը յիշուի *Աստուծոյ եկեղեցին* արտայայտութեան մէջ, եւ վերջապէս մենք կը տեսնենք Որդիին դերը, քանի որ *Անոր արհիւնն* էր, որ մեզ գնեց. երեք տարբեր անձեր, բայց մէկ Աստուած: Ասիկա դժուար հասկնալի է, բայց մենք ունինք բնական օրինակ մը, որ ատիկա ճշգրտօրէն ցոյց կու տայ: Մենք գիտենք, որ ջուրը երեք տարբեր ձեւեր կրնայ առնել՝ սառոյց, հեղուկ եւ շոքի — բայց բոլորը մէկ մասնկային կառուցուածք ունին: Նոյնն է պարագան Աստուածութեան, որ երեք անձերէ բաղկացած է, բայց կատարելապէս մէկ է:

Դարձեալ, հետաքրքրական է նշել, որ Սուրբ Հոգին Աստուածութեան այն անձն է, որ այդ ղեկավարները իրենց պաշտօններուն վրայ դրաւ: Ասիկա նաեւ յստակ կերպով կը տեսնենք երբ տարբեր եկեղեցիի մը՝ Անտիոքի երէցները Տէրը փնտռեցին: Երբ ատիկա ըրին, «Սուրբ Հոգին ըսաւ. ‘Չատեցէ՛ք ինձի Բառնաբասը եւ Սօղոսը այն գործին համար, որուն ես կանչեր եմ անոնք’»: Յետոյ անոնք աղօթեցին եւ ձեռք դրին այդ երկու տղամարդոց վրայ, եւ կը կարդանք.

«Անոնք ալ *Սուրբ Հոգիէն դրկուած* [...]» (Առաքեալներու Գործերը 13.2-4, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Ան Աստուածութեան այն անձն էր, որ այդ մարդոց հետ կ'աշխատէր՝ Յիսուսը փառաւորելու համար:

Այս քանի մը օրինակներէն յստակ գործակցութիւն մը կը տեսնենք, ուր Սուրբ Հոգին առաջնորդը կամ երէց գործակիցն է: Պէտք է դարձեալ շեշտեմ ասիկա՝ Ան կը փափաքի, որ դուք եւ ես Անոր գործակիցները ըլլանք, այո՛ր, գործակիցներ: Մենք ասիկա յստակօրէն կը կարդանք Կորնթացիներուն ուղղուած Պօղոսի նամակին մէջ երբ կը գրէ. «Վասնզի մենք Աստուծոյ գործակից ենք [...]» (Ա.Կորնթացիներուն 3.9): Անգլերէն «*Տելօ*» բառը կը նշանակէ «*ծառայակից*» կամ «*գործընկեր*»: Անգլերէն Աստուածաշունչի «*Քինկ Ճէյմզ*» տարբերակը ասելի կը յստակացնէ ըսելով. «Վասնզի մենք Աստուծոյ հետ գործաւորներ ենք»: Ուստի, դարձեալ կը հարցնեմ՝ կը ճանչնամք գործընկերներ, որոնք իրարու հետ չեն յարաբերիր եւ չեն աշխատիր:

Քանի մը վայրկեան ես առէք եւ խորհեցէք Սուրբ Հոգիին ձեր երէց գործակիցը ըլլալու փափաքին մասին: Որովհետեւ Աստուծոյ Խօսքը կ'ըսէ. «Թող Սուրբ Հոգիին *գործակցութիւնը* ձեզի հետ ըլլայ» կամ դարձեալ, «Թող Սուրբ Հոգին Իր *համապրեղ մասնակցութիւնը* բերէ ձեզի հետ ամէն բանի մէջ»:

## ՓՈԽԱԴԱՐՁ ՍԵՐՏ ԿԱՊ

Յաջորդ սահմանումն է՝ *փոխադարձ սերտ կապ*: Ասիկա կարելի է լաւագոյնս նկարագրել տարիներու ընթացքին Աստուծոյ մեծ տղամարդոց եւ կիներուն հետ իմ ունեցած փորձառութիւններս բաժնեկցելով: Կը յիշեմ առաջին անգամ, որ Դոկտ. Տէյվիտ Չոյին հանդիպեցայ, որ Քորէայի Սէուլ մայրաքաղաքին մէջ գտնուող աշխարհի մեծագոյն եկեղեցիներէն մէկուն հովին է: Ան առաջին անգամ ըլլալով իմ հայրենի եկեղեցիս կ'այցելէր: Այն ատեն ես օգնական հովիւներէն մէկն էի, եւ իմ պարտականութիւնս էր անոր այցելութեան ընթացքին զինք փոխադրել: Ես քանի մը տարիէ կ'ընէի ատիկա, ուստի ատկէ առաջ մօտաւորապէս հարիւր ծառայողներ տարած եւ բերած էի, քանի որ շատեր

կու գային մեր եկեղեցին: Սակայն ասիկա տարբեր էր, քանի որ երբ ան առաջին անգամ իմ ինքնաշարժիս մէջ նստեցաւ, Տիրոջ ներկայութիւնը մտաւ իմ ինքնաշարժէս ներս: Գրեթէ անմիջապէս սկսայ լալ, արցունքներ կը հոսէին այտերէս: Շատ լուռ էի, քանի որ չէի ուզեր զինք խանգարել նախքան իր ծառայելը, բայց ի վերջոյ ստիպուեցայ խօսիլ: Համեստօրէն եւ մեղմօրէն ըսի. «Դուկտ. Չօ, Աստուած հոս է, մեր ինքնաշարժին մէջ»: Ան ժպտաց եւ գլուխը շարժեց:

Հետագային մտածեցի, որ որքան այս մարդը գրեր եւ քարոզեր է Սուրբ Հոգիին հետ իր ունեցած հաղորդութեան մասին: Յետոյ յիշեցի ուրիշներ, զորս տարիներու ընթացքին տարած եւ բերած եմ, որոնք նոյնպէս կը շեշտէին եւ Սուրբ Հոգիին հետ մօտիկ յարաբերութիւն ունէին: Թէեւ ես մօտ հարիւր ծառայողներ փոխադրած էի, անոնցմէ միայն քանի մը հատը կը յիշեմ, որ երբ անոնց հանդէպեցայ, անմիջապէս Սուրբ Հոգիին հետ շփում ունեցայ: Անոնցմէ մէկը Ժան Ուիլքըրսըն անունով կին մըն էր, ծառայող մը, որ տարիներ բարեխօսական աղօթքի մէջ եղած է, եւ Տիրոջ հետն է հիմա: Երբ առաջին անգամ անոր հանդիպեցայ, ան եկեղեցւոյ ինքնաշարժը բարձրացաւ, ամբողջ ճամբուն ընթացքին իմ բերանս ահէս բաց մնաց: Ես չէի կրնար քշելուս վրայ կեդրոնանալ: Անդրադարձայ, որ ես կը գտնուէի կնոջ մը ներկայութեան, որ ոչ միայն Աստուծոյ մասին գիտէր, այլեւ իրապէս Ջայն մտերմօրէն կը ճանչնար: Ան շատ կը խօսէր Սուրբ Հոգիին մասին եւ Անոր ներկայութիւնը բացայայտ եւ զօրաւոր էր ամէն անգամ, որ ես անոր հետ կ'ըլլայի:

Վերջերս ես խօսեցայ չորս հազար անդամներէ բաղկացած եկեղեցիի մը մէջ Միացեալ Նահանգներուն միջին արեւմտեան բաժինին մէջ: Ես քարոզեցի Սուրբ Հոգիին մասին Կիրակի առաւօտեան պաշտամունքին ընթացքին եւ այդ գիշեր երբ վերադարձանք, պէտք է բեմ բարձրանայի ծառայութեան սկսելէն քառասունհինգ վայրկեան ետք: Բարձրախօսը ստացայ ծառայութենէն երկու ժամ ետք, քանի որ Սուրբ Հոգին ուրիշ ծրագիրներ ունէր: Ան շատերու ծառայեց, հիանալի էր: Վերջապէս նախքան բեմ բարձրանալս, հովիւր, որ փափուկ կամ տկար մարդ մը չէ (ան կրնայ 227 քիլոյէն աւելի ծանրութիւն շալկել), լալով ինձի

մօտեցաւ ըսելով. «Ճո՛ն, ութը տարուայ մէջ, որ այս եկեղեցին հովուած եմ, երբեք Աստուծոյ ներկայութիւնը այսքան ուժեղ կերպով չեմ զգացած»:

Ես անմիջապէս պատասխանեցի. «Ատիկա պատահեցաւ, որովհետեւ մենք այս առաւօտ Սուրբ Հոգիին մասին խօսեցանք, եւ երբ Անոր մասին կը խօսիս, Ան կը յայտնուի»:

Այս սերտ փոխադարձ կապը կը տեսնենք ամուսնութիւններու մէջ: Կարգ մը տղամարդ ծառայողներ յաճախ կը խօսին իրենց կիներուն մասին: Անոնք յաճախ անոնց մասին կը խօսին իրենց պատգամներուն մէջ կամ անոնց մասին կը խօսին իրենց զրոյցներուն մէջ եթէ անոնք ներկայ չեն: Անոնք յաճախ միասին կ'ըլլան ոչ միայն իրենց անձնական կեանքին մէջ, այլեւ հանրութեան առջեւ: Ուստի երբ ծառայողին մասին կը մտածէք, նաեւ անոր կնոջ մասին կը մտածէք: (Նոյնն է պարագան եթէ կինն է ծառայողը): Յաճախ ինծի կը հարցնեն Լիսային մասին երբ ան ինծի հետ չէ, քանի որ ես յաճախ անոր մասին կը խօսիմ եւ կը գրեմ: Սակայն կան ուրիշ ծառայողներ, որոնք թէեւ ամուսնացած կ'ըլլան, բայց անոնք շատ քիչ անգամ կը խօսին իրենց կիներուն մասին եւ հազուադէպ զանոնք միասին կը տեսնէք: Երբ այդ ծառայողին անունը կ'ըսէք, անմիջապէս անոր կնոջ մասին չէք մտածեր:

Նոյնն է պարագան Սուրբ Հոգիին: Կան որոշ զաւակներ, որոնք սերտ փոխադարձ կապ ունին Աստուծոյ Հոգիին հետ: Երբ անոնց մասին կը խօսիք, Սուրբ Հոգիին մասին կը մտածէք, որովհետեւ այդ տղամարդիկը կամ կիները գիտակցաբար կը ծառայեն Անոր հետ իբրեւ կրտսեր գործակիցներ, հետեւաբար Ան կը յայտնուի անոնց ծառայութիւններուն մէջ: Արդիւնքը այն է, որ Յիսուս ատի պատիւ կը ստանայ, քանի որ Աստուծոյ Հոգին կը փառաւորէ Յիսուսը:

Սուրբ Հոգին կ'ուզէ սերտ փոխադարձ կապի մէջ ըլլալ ձեզի հետ: Եթէ Զինք պատուէք, Ան պիտի յայտնուի, բայց եթէ չպատուէք, պարագան շատ քիչ տարբեր պիտի ըլլայ այն ծառայողէն, որ մտերիմ չէ իր կնոջ հետ, որուն հետ տարիներէ ի վեր ամուսնացած է: Ոչ միայն ինք եւ իր կինը իրարմէ հեռու պիտի ըլլան, այլեւ հանրութեան աչքին ալ իրարմէ հեռու պիտի ըլլան: Ուստի հետեւեալին մասին

մտածեցէք. «Թող Սուրբ Հոգիին սերտ ընկերակցութիւնը (կապը) ձեզի հետ ըլլայ»:

### ՄՏԵՐՄՈՒԹԻՒՆ

Վերը նշուած ցանկին մէջի վերջին սահմանումը «մտերմութիւն» բառն է: Այս բառը հաղորդութեան լաւագոյն սահմանումն է, քանի որ առիկա կ'ամփոփէ նախորդ չորս դասակարգումները, զորս մենք քննարկեցինք: Իրականութեան մէջ, Ուեպթըրի Բառարանին համաձայն անգլերէն «քըմյունյըն»՝ (communion) «հաղորդութիւն» բառին սահմանումներէն մէկն է՝ «մտերիմ ընկերութիւն» կամ «փոխյարաբերութիւն»՝ «հաղորդակցութիւն»: Մտերմութիւնը կը զարգանայ միայն հաղորդակցութեան միջոցով, որ զօրաւոր բարեկամութեան պողոտան է: Նոր Կտակարանի տարբերակներէն մէկուն մէջ կը կարդանք. «Սուրբ Հոգիին մտերիմ բարեկամութիւնը ձեր բոլորին հետ ըլլայ» (Անգլերէն Աստուածաշունչի «Տը Մեսեճ» տարբերակէն):

Դարձեալ, ամէն բան բարեկամութենէն կախեալ է. սահիկ է հաղորդութեան վերջնական նպատակը: Աստուծոյ Հոգին կ'ուզէ ձեր բարեկամը ըլլալ: Ան կարօտը ունի ձեր ընկերութեան: Ան կ'ուզէ ձեզի սորվեցնել այն, ինչ որ Ինք գիտէ եւ Անոր գիտութիւնը անսահման է: Ան Աստուած է. պահուած կամ խորհրդաւոր բան չկայ Իրեն համար: Չկայ գիտութիւն մը, որ Ան չունի: Ինչպէս Եսային կ'ըսէ.

«Ո՛վ քննեց Տէրոջը Հոգին ու անոր խորհրդակից ըլլալով՝ ուղղութիւն տուաւ անոր: Անիկա որո՞ւ խորհուրդ հարցուց, ո՞վ անոր իմաստութիւն տուաւ ու դատաստանի ճամբան սորվեցուց: Ո՛վ անոր գիտութիւն սորվեցուց ու իմաստութեան ճամբան ճանչցուց» (Եսայի 40.13-14, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Պատասխանը՝ ոչ ոք, քանի որ Ան Աստուած է:

Նորէն կը կրկնեմ՝ Ան Աստուած է: Անոր իմաստութիւնը, գիտութիւնը եւ հասկացողութիւնը անսահման են եւ Ան Իր գիտցածը ձեզի սորվեցնելու մեծ փափաք ունի: Մտածեցէք ատոր մասին. երբ մեծ արժէք ունեցող բան մը գիտէք,



բունն փափաք կ'ունենաք զանիկա ձեր մօտիկներուն եւ սիրելիներուն հետ բաժնեկցելու: Նոյնն է պարագան Անոր: Ան կ'ուզէ Իր գիտցածը ձեզի հետ բաժնեկցիլ: Կը հասկնամք ինչ է ձեզի տրամադրուածը: Ձեզի ընծայուած առիթները կը փախցնէք, որովհետեւ չէք հետապնդեր Աստուածութեան այն անձը, որ ձեր մէջ կը բնակի: Կը փորձէք Յիսուսի հետ ձեր յարաբերութիւնը առանց Սուրբ Հոգիին զարգացնել:

Շատ յաճախ եկեղեցիին մէջ գտնուողներէն շատերը կը փորձեն Յիսուսի մօտենալ առանց Սուրբ Հոգիին հետ մտերիմ յարաբերութիւն ունենալու: Վերջերս ես ասոր մասին մտածեցի եւ միտք մը ծագեցաւ մէջս, որ Յիսուսի երկրաւոր առաքելութեան ընթացքին յաճախ հրեաները կ'ուզէին Աստուծոյ հետ յարաբերութիւն ունենալ առանց Յիսուսի: Անոնք այսպիսի բաներ կ'ըսէին. «Մենք պոռնկութենէ չենք ծնած, մենք մէկ Հայր ունինք, որ է Աստուած» (Յովհաննէս 8.41), եւ «[...] Մենք Մովսէսին աշակերտներն ենք: Մենք գիտենք, թէ Աստուած Մովսէսին հետ խօսեցաւ [...]» (Յովհաննէս 9.28-29): Անոնք վստահ էին Աստուծոյ հետ իրենց յարաբերութենէն, որ իրականութեան մէջ չունէին: Անոնց վստահութիւնը կու գար այն իրականութենէն, որ անոնք գիտէին Անոր Խօսքերը (Սուրբ Գիրքը), որ Մովսէսի միջոցով տրուած էր: Սակայն արդեօք իրապէս գիտէին: Անոնք մերժեցին ստանալ նոյնինքն այդ մարդացած Խօսքէն, որ իրենց միջեւ կանգնած էր:

Այսօր ալ նոյնն է պարագան, բազմաթիւ հաւատացեալներ Յիսուսի հետ յարաբերութիւն կ'ուզեն առանց Սուրբ Հոգիին: Սակայն Ան է, որ մեր մէջ կանգնած է, եւ առանց Անոր ոչ ոք կրնայ Յիսուսը ճանչնալ. եւ հարցերը աւելի բարդացնելու համար, աւելի դիւրին է Աստուծոյ Հոգին անտեսել, քան Յիսուսը անտեսելը հրեաներուն համար, որովհետեւ Ան մարմին եւ արիւն չէ, ինչպէս Յիսուս էր:

Յիսուս կ'ըսէ. «Եթէ զիս ճանչնայիք, իմ Հայրս ալ պիտի ճանչնայիք [...]» (Յովհաննէս 14.7): Յիսուս պարզապէս կ'ըսէր. «Հայրը հոս չէ, երկինքն է, բայց եթէ Ձիս ճանչնաք, Հայրս ալ պիտի ճանչնաք, քանի որ Մենք մէկ ենք»: Նոյնն է պարագան Սուրբ Հոգիին: Յիսուս այլեւս հոս չէ. Ան երկինքն է, բայց եթէ Սուրբ Հոգին ճանչնաք, Յիսուսն ալ պիտի

ճանչնաք, որովհետեւ անոնք մէկ են: Ահա թէ ինչու Ան նաեւ ճանչցուած է որպէս «Քրիստոսի Հոգին» (Ա.Պետրոսի 1.11, Հռոմայեցիներուն 8.9):

### ՈՒՐԻՇ ՄԸ ՃԻՇԴ ԻՆԾԻ ՊԷՍ

Աշակերտներէն բաժնուելէն անմիջապէս առաջ Յիսուս անոնց ըսաւ.

«Եթէ կը սիրէք զիս՝ պիտի գործադրէք իմ պատուիրաններս: Եւ ես Հօրս պիտի աղաչեմ՝ որ ուրիշ Մխիթարիչ [Օգնական] մը տայ ձեզի, որպէսզի յաւիտեան ձեզի հետ ըլլայ: Անիկա Սուրբ Հոգին է, որ ճշմարտութիւնը կը յայտնէ: Աշխարհը չի կրնար զայն ընդունիլ, որովհետեւ ո՛չ կը տեսնէ եւ ո՛չ ալ կը ճանչնայ զայն: Բայց դուք կը ճանչնաք զայն, որովհետեւ ձեր մէջ պիտի մնայ եւ ձեր հետ պիտի ըլլայ» (Յովհաննէս 14.15-18):

Շատ բան կայ այս քանի մը նախադասութիւններուն մէջ: Նախ եւ առաջ դարձեալ նկատի առէք, որ Յիսուս հնազանդութեան մասին կը խօսի. «Գործադրէք իմ պատուիրաններս», որմէ ետք կ'ըսէ. «Եւ ես Հօրս պիտի աղաչեմ՝ որ [...] տայ ձեզի [...]» Սուրբ Հոգիին ընկերակցութիւնը: Ան Սուրբ Հոգին ստանալը ուղղակի կը կապէ Խօսքին հնազանդելուն հետ, եւ հետեւաբար՝ Տիրոջ վախին հետ: Պետրոսը կը հաստատէ ասիկա ըսելով. «Այս իրողութիւններուն վկաներն ենք մենք, ինչպէս նաեւ Սուրբ Հոգին, որ Աստուած *տուաւ իրեն հնազանդողներուն*» (Առաքեալներու Գործերը 5.32, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): (Դարձեալ, նկատի առէք գործակցութիւնը, երկու տարբեր վկաներ նշուած են՝ աշակերտները եւ Սուրբ Հոգին): Պետրոսը կ'ըսէ, որ Աստուած Սուրբ Հոգին կու տայ *անոնց, որոնք կը հնազանդին իրեն*: Ուստի դարձեալ, մտերմութեան հիմը Տիրոջ վախն է: Ինչո՞ւ մենք ատիկա ասելի յօժարութեամբ չենք քարոզած մեր պատգամներուն մէջ:

Վերադառնալով Յովհաննէսի Աւետարան 14-րդ գլուխին, Յիսուս կ'ըսէ, որ Հայրը «*ուրիշ Օգնական*» մը պիտի տայ անոնց, որոնք Աստուծոյ վախը ունին: Նոր Կտակարանին մէջ

կան երկու յունարէն բառեր մեր անգլերէն «ընսպորը» (another = ուրիշ) բառին համար: Եթէ քննենք զանոնք, Սուրբ Հոգիին մասին անելի բան կը գիտնանք: Առաջին յունարէն բառը «*ալոս*» բառն է, որ կը նշանակէ «ուրիշ մը նոյն տեսակէն»: Միւս բառը «*հէթթերոս*» բառն է, որ կը նաշանակէ «ուրիշ մը տարբեր տեսակի»:

Օրինակ մը, որ այս բառերուն տարբերութիւնը ցոյց կու տայ, հետեւեալն է՝ ենթադրենք, որ դուք կտոր մը պտուղ կը խնդրէք եւ ես ձեզի դեղձ կու տամ: Ատիկա ուտելէ ետք ուրիշ կտոր մըն ալ կը խնդրէք, եւ ես ձեզի խնձոր կու տամ: Ես իսկապէս ձեզի ուրիշ կտոր մըն ալ տուի, բայց տարբեր տեսակի: Սակայն եթէ ձեզի ուրիշ դեղձ մըն ալ տամ, այն ատեն ձեզի տուած կ'ըլլամ ուրիշ պտուղ մը նոյն տեսակէն. ատիկա ճիշդ ձեզի տուածիս նման է: Ասիկա կը բացատրէ «*հէթթերոս*»-ին եւ «*ալոս*»-ին տարբերութիւնը:

Յիսուսի գործածած յունարէն բառը «*ալոս*»-ն է՝ ուրիշ մը նոյն տեսակէն: Յիսուս կ'ըսէ. «Սուրբ Հոգին ճիշդ Ինձի պէս է»: Իրականութեան մէջ «Օգնական» բառին յունարէնը «*փարաքլետոս*» բառն է: Այս բառը կու գայ երկու տարբեր բառերէ՝ «*փարա*», որ կը նշանակէ՝ «կողքին» եւ «*քալէօ*», որ կը նշանակէ՝ «կանչել»: Հետեւաբար «*փարաքլետոս*» բառը կը նշանակէ՝ մէկը, որ կանչուած է ուրիշի մը կողքին կենալու՝ անոր օգնելու համար: Այս բառը սկիզբը կը գործածուէր դատարանի մէջ՝ իրաւաբանական օգնականի, պաշտպան փաստաբանի մը ակնարկելու համար. յետոյ ընդհանրապէս մէկու մը համար, որ ուրիշի մը դատական գործը կը պաշտպանէ, բարեխօս մը կամ փաստաբան: Հետաքրքրական է, որ այս բառը միայն մէկ անգամ գործածուած է նամակներուն մէջ, եւ այդ ալ Յիսուսին ակնարկելու համար (Ա.Յովհաննէսի 2.1): Ուստի ինչպէս Յիսուս յաւիտեան մեր փաստաբանը կամ բարեխօսն է, նոյնպէս ալ Սուրբ Հոգին մեր փաստաբանն է: Ան կանչուած է մեր կողքին ըլլալու՝ մեզի օգնելու համար:

Յիսուս կը յայտնէ Իր աշակերտներուն. «Ճիշդ ինչպէս ես ձեզի հետ էի, նոյնպէս ալ Ան պիտի ըլլայ ձեզի հետ»: Ես յաճախ կը լսեմ մարդիկ կ'ըսեն. «Օ՛, եթէ միայն կարենայի Յիսուսի հետ քալել, շատ հարցումներ կը հարցնէի»: Արդեօք կը հարցնէին: Անոնց այդպիսի արտայայտութիւններ

ունենալը ինքնին ցոյց կու տայ, որ անոնք Սուրբ Հոգիին հետ մտերմութիւն չունին: Եթէ Աստուծոյ Հոգիին հետ ընկերութիւն չեն ըներ, ինչո՞ւ կը կարծեն, թէ Յիսուսի հետ տարբեր ձեով պիտի վարուէին: Իրականութեան մէջ Յիսուս այս ապշեցուցիչ յայտարարութիւնը ըրաւ.

«Բայց ես ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի»  
(Յովհաննէս 16.7):

Նախքան Անոր յայտարարութիւնը ամբողջացնելս, կ'ուզեմ ըսել, որ Անոր յայտարարութեան այս նախաբանը միշտ ալ ապշեցուցած է զիս: Ան երեք ու կէս տարի քալեց անոնց հետ: Ան երբեք սուտ մը կամ խաբուսիկ միտք մը չըսաւ անոնց: Ամէն բան, որ Ան ըսաւ անոնց այդ տարիներուն ընթացքին միշտ ալ կատարուեցաւ: Սակայն այն, ինչ որ Ան անոնց հետ պիտի բաժնեկցէր այնքան ապշեցուցիչ էր, որ պէտք է նախաբանով մը սկսէր. «Տղայք, այն ինչ որ ձեզի պիտի ըսեմ սուտ չէ, այլ ճշմարտութիւնն է»: Ուստի շարունակենք եւ տեսնենք Անոր անհաւատալի յայտարարութիւնը.

«[...] Ձեզի համար լաւ է որ ես երթամ, որովհետեւ եթէ չերթամ՝ Մխիթարիչը [Օգնականը] պիտի չգայ ձեզի. իսկ եթէ ես երթամ՝ զայն պիտի դրկեմ ձեզի»  
(Յովհաննէս 16.7):

Ուտո՞ւ, կանգ առէք եւ մտածեցէք այս խօսքերուն մասին: Ան կ'ըսէ, որ աւելի լաւ է անոնց համար, որ Ինք երթայ: Հիմա կրնաք հասկնալ, թէ Ան ինչո՞ւ այդ խօսքը այս նախաբանով պէտք է սկսէր. «Տղայք, ես ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի»: Երբ անոնց հետ էր, անոնց սորվեցուց Թագաւորութեան ամենախորունկ բաները, որ ոեւէ մէկը երբեւէ լսած էր: Ան բժշկեց անոնց հիւանդները, յարուցանեց անոնց մեռելները, դուրս հանեց տանջող հոգիները, վճարեց անոնց վճարելիքները եւ տուրքերը, եւ ատիկա միայն սկիզբն էր: Սակայն հիմա Ան կ'ըսէ՝ ձեզի համար աւելի լաւ է եթէ ես երթամ: Ինչո՞ւ: Ան կը պատասխանէ ըսելով, որ եթէ Ինք երթայ, Մխիթարիչը՝ Օգնականը պիտի դրկէ մեզի:

Մտածեցէք, եթէ Յիսուս երկրի վրայ մնար եւ եթէ ուզէինք Իրեն հետ ընկերութիւն ընել կամ Իրեն հարցումներ հարցնել,

պէտք է օդանաւով Թել Ալի երթայինք, ինքնաշարժ մը վարձէինք, դէպի Գալիլիայի արուարձանները քշէինք, եւ Ձինք գտնէինք: Ատիկա շատ դժուար պիտի չլլար, քանի որ հազարաւորներ պիտի ըլլային Անոր շուրջը: Սակայն նախ պէտք է սպասէիք այդ հազարաւորներուն, որոնք ձեզմէ առաջ եկած են, որ մեկնին, որպէսզի հասնիք մէջտեղը, ուր Ինք կը գտնուի: Սակայն նոյնիսկ այն ատեն, ձեզի սպասել պիտի տային, քանի որ Պետրոսը այնքան համարձակօրէն արտայայտուող է, որ բոլոր խօսակցութիւններուն ինք կը տիրէ: Անոր կողքին կան նաեւ Յակոբոսը եւ Յովհաննէսը, որոտման որդիները. անոնք ալ շատ լուռ մարդիկ չեն, եւ յետոյ կան միւս աշակերտները, որոնք առիթի մը կը սպասէին, որ իրենց սիրտին մէջ եղածը հարցնեն: Բացի այդ բոլորէն, Յիսուս պէտք է գիշերը վեցէն ութը ժամ քնանար, Իր անձնական պէտքերուն հոգար, եւ կանոնաւորապէս ուտէր:

Սակայն մեր մէջը բնակող Սուրբ Հոգիին գեղեցկութիւնը այն է, որ Ան պէտք չունի քնանալու: Կրնաք Անոր հետ խօսիլ օրուան ընթացքին կամ գիշերը որեւէ ժամանակ եւ պէտք չունիք ուրիշներու սպասելու, որ վերջանան: Դուք միշտ ունիք Անոր ամբողջական եւ կատարեալ ուշադրութիւնը: Իրականութեան մէջ տասը հազար մարդ կրնայ Անոր հետ մտերմօրէն խօսիլ նոյն պահուն: Ան ունի կարողութիւնը անձնապէս հաղորդակցելու բոլոր անոնց հետ, որոնք մեզի պէս անօթի են: Սակայն հոն չի վերջանար. տակաւին աւելին կայ, քանի որ Յիսուս կը շարունակէ.

«Տակաւին շատ բաներ ունիմ ըսելիք ձեզի, սակայն այժմ չէք կրնար տանիլ: Բայց երբ գայ ինքը՝ Սուրբ Հոգին, որ ճշմարտութիւնը կը յայտնէ, անիկա պիտի առաջնորդէ ձեզ ամբողջական ճշմարտութեան, որովհետեւ անիկա ինքնիրմէ պիտի չխօսի, այլ ինչ որ լսէ՝ գայն պիտի խօսի եւ ձեզի պիտի պատմէ գալիք բաները: Անիկա զիս պիտի փառաւորէ, որովհետեւ ինչ որ ինձմէ առնէ՝ պիտի յայտնէ ձեզի: Ինչ որ Հայրս ունի՝ իմս է. ասոր համար է որ ըսի ձեզի, թէ ինչ որ առնէ ինձմէ՝ պիտի յայտնէ ձեզի» (Յովհաննէս 16.12-15):

Երբ Սուրբ Հոգին մեզի հետ կը խօսի, հիմնականօրէն

Յիսուան է մեզի հետ խօսողը, որ իրականության մէջ Հօր Խօսքն է մեզի համար: Օ՛, այո՛, թէեւ անոնք երեք տարբեր անձեր են, իրաքանչիւրը իր անձնական միտքը, կամքը եւ զգացումները ունի, սակայն անոնք բացարձակապէս մէկ են: Երբեք պիտի չտեսնէք, որ անոնք իրարմէ տարբեր են, եւ միշտ զիրենք պիտի գտնէք մէկ իրենց նպատակին, ծրագիրին եւ կամքի գործադրութեան մէջ: Յիշեցէք Աստուածաշունչին յստակ յայտարարութիւնը. «Մտիկ ըրէ, ո՛վ Իսրայէլ. Տէրը՝ մեր Աստուածը միակ Տէրն է» (Բ.Օրինաց 6.4):

### ՅԱՐԱԲԵՐՈՒԹԵԱՆ ԵՐԵՔ ՄԱԿԱՐԴԱԿՆԵՐԸ

Վերը նշուած համարին մէջ Յիսուս Իր աշակերտներուն ըսաւ, որ տակաւին շատ բաներ ունէր ըսելիք իրենց, բայց չէին կրնար տանիլ: Անոնք չէին կրնար Աստուծոյ աւելի մտերիմ բաները հասկնալ իրենց բնական զգայարանքներով:

Յիշեցէք, Իր յարութենէն ետք Յիսուս երեւցաւ Իր աշակերտներէն տասին, Թովմասը ներկայ չէր: Յիսուսը ողջ տեսնելու միւսներուն վկայութիւնը լսելէ ետք, Թովմասը ըսաւ. «Մինչեւ որ գամերուն հետքերը չտեսնեմ անոր ձեռքերուն մէջ ու մատներս չդնեմ գամերուն տեղերը եւ ձեռքս չդպցնեմ անոր կողին՝ չեմ հաւատար» (Յովհաննէս 20.25):

Հետագային Յիսուս անոնց բոլորին երեւցաւ: Ան անմիջապէս Թովմասին ըսաւ, որ իր մատը Իր ձեռքին մէջ դնէ եւ իր ձեռքը Յիսուսի կողին դպցնէ եւ հաւատայ:

Այն ատեն Թովմասը բացագանչեց. «Տէրս եւ Աստուածս»: Այն ատեն Յիսուս բան մը ըսաւ Թովմասին, որ ես շատ երկար ժամանակ չհասկցայ.

«[Թովմաս] Զիս տեսնելուդ համար հաւատացիր, չէ՛. երանի՛ անոնց՝ որոնք առանց զիս տեսնելու կը հաւատան» (Յովհաննէս 20.29):

Անցեալին կը զգայի, որ Յիսուս քիչ մը կարծր էր Թովմասին հետ, քանի որ անոր շատ յոյս չտուաւ անոր զղջալէն եւ բացագանչելէն ետք. «Տէրս եւ Աստուածս»: Իմ դատողութիւնս սխալ էր՝ իմ անգիտութեանս եւ սխալ հասկացողութեանս պատճառով: Հետագային Սուրբ Հոգին Յիսուսի յայտնածին մասին լուսաւորութիւն բերաւ: Ան

խստութեամբ չվարուեցաւ Թովմասին հետ, այլ պարզապէս իրականութիւնը կը յայտնէր: Յիսուս պարզապէս կը յայտնէր, որ անոնք որոնք Ձինք կը ճանչնան իրենց ֆիզիքական զգայարանքներով, չեն կրնար Ձինք ճանչնալ այն խորութեամբ, որ հոգիով ճանչցողները կը ճանչնան Ձինք, հետեաբար վերջինները անլի կ'օրհնուին:

Նայեցէք Պօղոս առաքեալին: Ան երբեք Յիսուսի հետ չքալեց այնպէս ինչպէս Պետրոսը եւ միւսները ըրին, այլ ան Յիսուսը ճանչցաւ Սուրբ Հոգիին յայտնութեամբ: Ան կը գրէ.

«Կը ծանուցանեմ ձեզի, եղբայրներ, այն անտարանը որ ինձմէ քարոզուեցաւ, թէ անիկա մարդու բան չէ: Որովհետեւ ես ալ մարդէ չառի զանիկա, եւ մէկէն ալ չսորվեցայ, հապա Յիսուս Քրիստոսին յայտնութենէն [...] Բայց երբ Աստուած ուզեց, (որ որոշեց զիս իմ մօրս որովայնէն եւ իր շնորհքովը զիս կանչեց,) ինձի իր Որդին յայտնել, որպէսզի զանիկա հեթանոսներուն մէջ քարոզեմ, նոյն ատեն բան մը չիմացուցի մարմինին ու արինին, ո՛չ ալ Երուսաղէմ ելայ ինձմէ առաջ առաքեալ եղողներուն քով, հապա Արաբիա գացի ու նորէն Դամասկոս դարձայ» (Գաղատացիներուն 1.11-17):

Ժամանակի ընթացքին Պօղոս կրցաւ այնպիսի խոր խորաբերութիւն ունենալ Տիրոջ հետ, որուն առաջին առաքեալներէն ոչ մէկը չհասաւ: Նոյնիսկ Պետրոսը այդ մասին կը խօսի գրելով.

«Ինչպէս մեր սիրելի եղբայրը՝ Պօղոս ալ՝ [Աստուծոյ կողմէ] իրեն տրուած իմաստութիւնովը գրեց ձեզի. ինչպէս բոլոր թուղթերուն մէջ ալ այս բաներուն վրայով կը խօսի. *որոնց մէջ քանի մը դժուարիմաց խօսքեր կը գտնուին* [...] (Բ.Պետրոսի 3.15-16, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Ուսում: Պետրոսը երեք ու կէս տարի Ինքնին մարդացած Տիրոջ հետ քալեց, եւ Պօղոս երբեք այդ մէկը չըրաւ, բայց եւ այնպէս Պօղոս խորաթափանցութիւն կու տայ Յիսուսի բնոյթին եւ ճամբաներուն մասին այն չափով, որ

Նոյնիսկ Պետրոսը դժուարութիւն կ'ունենայ հասկնալու: Ինչո՞ւ: Որովհետեւ շատ հաւանաբար Պետրոսը շարունակ ժամանակ կ'անցընէր իր տեսածները եւ լսածները յիշելով, եւ ատիկա զինք կ'արգիլէր Յիսուսի հետ աւելի խոր մտերմութեան մէջ մտնելէ: Այս է պատճառը, որ Յիսուս կ'ըսէ. «Օ՛, տակաւին շատ բաներ ունիմ ըսելիք ձեզի, սակայն այժմ չէք կրնար տանիլ»:

Ասոր մէկ տկար օրինակը (կը խնդրեմ հասկցէք, ասիկա միակ պատճառը չէ, բայց կ'օգնէ լուսաբանելու) այն մարդիկն են, որոնք համացանցի վրայ իրարու կը սիրահարուին, առանց անձամբ իրարու հանդիպելու: Ասիկա յաճախ կը պատահի, եւ դիւրութեամբ կրնայ դառնալ աւելի զօրաւոր սէր, քան անոնց սէրը, որոնք զիրար անձամբ կը ճանչնան:

Իրականութեան մէջ ձեզի ցոյց տալու համար, թէ ատիկա որքան զօրաւոր կրնայ ըլլալ, ձեզի ցոյց պիտի տամ, որ ինչպէս ատիկա կրնայ նոյնիսկ ամուսնութիւններ քանդել: Կը յիշեմ իրիկուն մը ծառայութենէ մը ետք մօտեցայ մարդու մը, որուն սիրտը ծանրացած կ'երեւէր: Ան երկու մանուկներ ունէր իր գիրկը: Մտահոգ, հարցուցի. «Ամէն բան լա՞մ է»:

Ան ըսաւ. «Ո՛չ, վերջերս կինս զիս ձգեց եւ փախաւ մարդու մը հետ, որուն համացանցին վրայ ծանօթացած էր»:

Յետոյ ան շարունակելով ըսաւ, որ ան ոչ միայն զինք ձգեց, այլեւ այն վեց մանուկները, որոնք միասին ունեցած էին՝ մարդու մը համար, որուն երբեք անձամբ չէր հանդիպած: Անոնք լրջօրէն սիրահարուեցան համացանցի միջոցով եւ այդ սէրը այնքան զօրաւոր էր, որ ան նոյնիսկ իր զաւակները ձգեց:

Վերադառնալով դրականին, ժամանակի ընթացքին ես նկատած եմ, որ անոնք, որոնք հեռուէն իրարու հետ յարաբերելով իրարու կը սիրահարին, մտերմութեան աւելի խոր մակարդակ կ'ունենան, քան անոնք, որոնք շարունակ անձամբ կը սիրաբանին: Պատճառը դարձեալ այն է, որ անոնք կրցան ֆիզիքականէն անդին անցնիլ եւ հոգիով իրարու մօտենալ: Շատ անգամ երբ մարդիկ անձամբ իրարու կը հանդիպին, ֆիզիքական կերպարանքը եւ գեղեցկութիւնը կը տիրէ անոնց վրայ կամ արտաքին շարժումներ կամ վարուելակերպը կը կուրցնէ զիրենք եւ իսկական անձը չեն տեսներ:

Ինչպէս նախորդ գլուխին մէջ ըսի, ինչպէս հաղորդակցութեան երեք մակարդակներ կան՝ բանաւոր,



գործ եւ սիրտ, նոյնպէս յարաբերութեան կամ ուրիշ մը ճանչնալու երեք մակարդակներ կան: Ամենացած մակարդակը բնական կամ ֆիզիքական մակարդակն է: Դժբախտաբար ասիկա այն մակարդակն է, որ բազմաթիւ ամուսնութիւններ կը մղէ, եւ անգամ մը, որ ֆիզիքականը կը կորսնցնէ իր փայլը, երկուքը իրարմէ ւելի կ'անջատուին: Տղամարդը յաճախ ւելի կը խորանայ մարզանքի, իր սիրած զբաղումներուն, ծառայութեան եւայլնի մէջ, իսկ կինը կը յարի գնումի, բարեկամներու, ծառայութեան եւայլն: Յաւալի է:

Յաջորդ մակարդակը շունչը կամ անձին անհատականութիւնն է: Ասիկա այն մակարդակն է, ուր Դաւիթը եւ Յովնաթանը սերտօրէն կապուեցան: Կը կարդանք. «Յովնաթանին սիրտը Դաւիթին սրտին հետ կապուեցաւ» (Ա.Թագաւորաց 18.1): Դաւիթը անոր մահուան համար ողբալով աղաղակեց. «Քեզի համար շատ կը ցաւիմ, ո՛վ եղբայր իմ Յովնաթան. դուն ինծի խիստ սիրելի էիր. քու սէրդ ինծի զարմանալի էր, կանանց սէրէն ւելի էր» (Բ.Թագաւորաց 1.26): Դաւիթը երբեք Յովնաթանը չգիտցաւ այլասերուած ձեւով մը, բնաւ ֆիզիքական գրաւչութիւն չկար երկուքին միջեւ. բայց անոնք ւելի խոր մակարդակի վրայ կապուած էին, քան ֆիզիքականը, եւ ատիկա կը տեսնենք անոր խօսքին մէջ երբ կ'ըսէ, որ Յովնաթանին սէրը կանանց սէրէն ւելի է: Անոնք զիրար գիտէին ւելի բարձր մակարդակի վրայ՝ շունչի: Այն հասկացողութիւնը, որ շունչի յարաբերութեան մակարդակը ւելի բարձր է, քան ֆիզիքականը կը բացատրէ, որ ինչո՞ւ մարդիկ կրնան իրենց ընտանիքները ձգել՝ մարդոց համար, որոնց հանդիպած են միայն հեռաձայնով, նամակով կամ համացանցով:

Սակայն մէկը ճանչնալու բարձրագոյն մակարդակը հոգեւոր մակարդակն է: Ահա թէ ինչու Պօղոսը կ'ըսէ.

«[...] Հոգին ամէն բան կը քննէ, Աստուծոյ խորունկ բաներն ալ: Վասնզի մարդոցմէ ո՛վ գիտէ մարդուն բաները, բայց միայն մարդուն հոգին որ իր մէջ է. նոյնպէս ալ Աստուծոյ բաները մէկը չի գիտեր, բայց միայն Աստուծոյ Հոգին: Իսկ մենք ո՛չ թէ այս աշխարհի հոգին առինք, հապա այն Հոգին որ Աստուծմէն է [...]» (Ա.Կորնթացիներուն 2.10-12):

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

Ասիկա այն մակարդակն է, որով Պողոսը ճանչցաւ Յիսուսը: Թէեւ Պետրոսն ալ Ձինք այս մակարդակով ճանչցաւ, շատ հաւանաբար ան երբեմն կը վերադառնար այն յիշատակներուն, ուր Ձայն ուրիշ տարբեր մակարդակներով կը ճանչնար երբ անոնք մարմինով միասին կը քալէին: Այդ պատճառով Պողոսը կը շեշտէ հետեւեալ կէտը.

«Ուստի ասկէ յետոյ մենք մէկը մարմնով չենք ճանչնար, թէեւ Քրիստոսը մարմնով ճանչցանք, բայց հիմա ալ այնպէս չենք ճանչնար» (Բ.Կորնթացիներուն 5.16):

Եթէ կ'ուզենք երթալ զԱստուած մտերմօրէն ճանչնալու մակարդակին, պէտք է անդրադառնանք, որ մեծագոյն օրինութիւնը, որ Ան մեզի տուած է, Ինքզինք մարմինով յայտնելը չէ, այլ՝ Իր Հոգիով:

Ուառն: Դուք ալ ինծի պէս խանդավառուամձ էք: Ինչ հիանալի Տիրոջ մը կը ծառայենք: Ան ծարաւը ունի ատելի խոր ձեւով Ինքզինք ճանչցնելու մեզի: Ան է, որ նախ փափաքեցաւ ունենալ այս մտերմութիւնը: Քու սիրտդ հիմա նոյն բանին համար անօթութեամբ կ'աղաղակէ:

## ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

1. Բնաւ այս աղօթքը աղօթամձ ես. «Հաճիս, զիս տուն տար՝ երկինք՝ Քեզի հետ ըլլալու»: Ինչ էին պայմանները երբ այս աղօթքը ըրիր:
2. Եկեղեցիին մէջ շատեր կը փորձեն Յիսուսի մօտենալ, առանց Սուրբ Հոգիին հետ մտերիմ յարաբերութիւն ունենալու, նոյնիսկ երբ անոնք գիտեն, որ ոչ ոք կրնայ Յիսուսը ճանչնալ առանց Սուրբ Հոգիին: Ինչո՞ւ:  
Արդեօք ասիկա ճիշդ է քու կեանքիդ մէջ:
3. Երբ Սուրբ Հոգիին գործակցութեան դերին վրայ կը խոկաս, Անոր ներկայութիւնը ինչպէս կ'ազդէ քու վստահութեանդ վրայ, որ քու սիրտիդ մէջը եղածը ըսես Աստուծոյ: Իրականութեան մէջ կայ բան մը, որ կրնաս պահել:

## ՀՕՐ ԽՈՍՏՈՒՄԸ



Բնաւ պիտի չօրհնուիք բանով մը, որուն չէք հաւատար:

Ես Յիսուս Քրիստոսը իբրեւ Փրկիչ ճանչցայ եղբայրութեան մը պատկանող եղբօր մը միջոցով Փրկտի Համալսարանին մէջ, 1979-ին: Անգամ մը որ իմ ճամբաներէս ետ դարձայ եւ Յիսուս Քրիստոսը իմ Տէրս դաւանեցայ, գիտցայ, որ Աստուծոյ Թագաւորութեան մէջ ծնայ: Սուրբ Գիրքը մեզի կ'ըսէ. «Եթէ քու բերնովդ Յիսուսը Տէր խոստովանիս ու սրտիդ մէջ հաւատաս թէ Աստուած զանիկա մեռելներէն յարուցանեց՝ պիտի փրկուիս. (Վասնզի սրտով կը հաւատայ մէկը արդարանալու համար ու բերնով կը խոստովանի փրկուելու համար:))» (Հռոմայեցիներուն 10.9-10):

Կասկած չկար, որ ես փրկուած էի: Սիրտս կը վկայէր այդ մասին եւ Աստուածաշունչն ալ կը հաստատէր ասիկա: Սակայն իմ ապրած նոր կեանքիս մէջ բան մը կը պակսէր, եւ քանի մը ամիս չկրցայ գիտնալ, որ ինչ է ասիկա: Կը զգայի, որ Տէրը հեռու է ինձմէ, թէեւ գիտէի, որ ես Իր

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

գաւակն եմ: Երբ Աստուածաշունչ կը կարդայի, այնպէս կը թուէր, որ կարծես ամպի մէջ էի. դժուար էր հասկնալ, եւ միայն սահմանափակ չափով կը հասկնայի, թէեւ շատ ջանասիրութեամբ կը կարդայի: Նաեւ իմ աննպաստ պայմաններուս դէմ յաղթական կեանք մը չէի ապրեր եւ այնպէս կը թուէր, որ իբրեւ համալսարանի աշակերտ, իմ հասակակիցներուս բանեցուցած զօրաւոր ճնշումի հոսանքին դիմաց տկար էի:

Ժամանակի ընթացքին ես սկսայ հանդիպիլ մարդոց, որոնք աւելի մտերմօրէն կը քալէին Տիրոջ հետ, քան ես: Անոնք Անոր մասին կը խօսէին գեղեցիկ եւ անձնական ձեւով: Ես շփոթած էի: Անոնք ինչ կ'ընէին, որ ես չէի ըներ: Ինչո՞ւ Աստուած իրենց կու տար այս մօտիկութիւնը, որ ես չէի կրնար ունենալ: Այնպէս կը թուէր, որ անոնք ունէին ուժ եւ նամակով Տիրոջ ճամբաները հասկնալու, որ ես պարզապէս չունէի: Յետոյ երբ Աստուածաշունչս սերտեցի, անդրադարձայ, որ Տիրոջ հետ ուրիշ հանդիպում մը կար, որ ես չէի ունեցած:

## ՀՕՐ ԽՈՍՏՈՒՄԸ

Եկէք նայինք, որ ես ինչ յայտնաբերեցի Սուրբ Գիրքէն: Յիսուսի երկինք համբարնալէն անմիջապէս առաջ մենք կը կարդանք.

«Անոնց հետ մէկտեղ գտնուած ատենը *ապսպրեց* անոնց, որ Երուսաղէմէն չհեռանան, հապա սպասեն Հօրը Խոստումին, 'որ' ըսաւ. 'Ինձմէ լսեցիք, վասնզի իրան Յովհաննէս ջրով մկրտեց, բայց դուք շատ օրեր չանցած Սուրբ Հոգիով պիտի մկրտուիք'» (Առաքեալներու Գործերը 1.4-5, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Յիսուս Իրեն հաւատացողներուն ըսաւ, որ տեղ մը չերթան, չքարոզեն, նոր եկեղեցիներ չսկսին, կամ իրենց կոչումը չիրագործեն մինչեւ որ նախ չստանան «Հօր Խոստումը», որ Իր բառերով Սուրբ Հոգիի մկրտութիւնն էր: «Մկրտուիք» բառը, որ Յիսուս կը գործածէ այս համարին

մէջ կու գայ յունարէն «*պափթի՛զօ*» բառէն, որ կը նշանակէ՝ «ընկղմել, սուզել, ամբողջութեամբ ջուրին մէջ թաղել»: Յիսուս կ'ըսէր, որ Սուրբ Հոգիի մկրտութիւն մը կար, որ անոնք տակաւին չէին ունեցած. թէեւ կը հաւատային Անոր յարութեան, Անոր Տէր ըլլալը կը դաւանէին, եւ Անոր հաւատարիմ հետեւորդներն էին, որոնք երկինք պիտի երթային:

Առաջին բաներէն մէկը, որ ուշադրութիւնս գրաւեց, այն իրականութիւնն էր, որ Սուրբ Հոգիին լեցունութիւնը ստանալը առաջարկ, ընտրութիւն կամ յանձնարարութիւն մը չէր, հապա *հրահանգ (պատուէր)* մը: Հրահանգը կը տրուի մեր օգուտին, պաշտպանութեան կամ Թագաւորութեան բարիքին համար: Մենք պէտք չէ անոր պատուէրները թերթի առնենք՝ մեր, ինչպէս նաեւ Թագաւորութեան սիրոյն:

Հօր այս Խոստումը, որ իրենց պատուիրուեցաւ, որ ստանան, իրենք չէին գիտեր, որ Յիսուսի համբարնալէն տասը օր ետք տեղի պիտի ունենար: Հետաքրքրական է, որ մեռելներէն յարութիւն առնելէ ետք Յիսուս հինգ հարիւր հաւատացեալներու երեցաւ (Ա.Կորնթացիներուն 15.6), բայց Անոր հեռանալէն տասը օր ետք միայն հարիւր քսան հոգի կային Վերնատան մէջ: Ես համոզուած եմ, որ հինգ հարիւրէն շատերը սկսան սպասել Խոստումին, բայց երբ ժամանակը անցաւ, մարդոց ալիքներ հեռացան անհամբերութեան, կասկածի եւ անհաւատութեան կամ ուրիշ պատճառներով մինչեւ որ անոնցմէ միայն մաս մը մնաց: Յաւօք, գրեթէ հինգէն չորսը չըրին այն ինչ որ Յիսուս պատուիրեց:

Անոնք, որոնք մնացին, միաբան էին. անոնք իրենց անձնական օրակարգին համար մեռած էին: Անոնք Յիսուսի պատուէրը թերթի չառին կամ անոր համար պատրուակներ չտուին: Ես համոզուած եմ, որ անոնց կեցուածքը մնալ էր ինչքան ժամանակ, որ պէտք էր, պարզապէս որովհետեւ Տէրը ըսաւ, որ սպասեն: Երբ Աստուծոյ համար մնացին միայն անոնք, որոնք Յիսուսի պատուէրը լրջօրէն ընդունեցին, կը կարդանք.

«Երբ Պենտէկոստէի տօնը հասաւ, ամէնքն ալ միաբան մէկտեղ էին: Յանկարծակի երկնքէն ձայն մը եղաւ

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

սաստկաշունչ հովի մը ձայնին պէս եւ բոլոր տունը լեցուց՝ ուր նստեր էին: Եւ բաժնուած լեզուներ երեւցան իրենց՝ որպէս թէ կրակէ՝ ու ամէն մէկուն վրայ նստան: Եւ ամէնքն ալ Սուրբ Հոգիով լեցուեցան ու սկսան ուրիշ լեզուներով խօսիլ, ինչպէս Հոգին իրենց խօսիլ կու տար» (Առաքեալներու Գործերը 2.1-4):

Այդ օրը կը կոչուէր «Պենտէկոստէ», որ Նոր Կտակարանէն ծագում առած բառ մը չէ, այլ Իսրայէլի գլխաւոր տօներէն մէկն է: Նկատի առէք, անոնք Սուրբ Հոգիով *լեցուեցան* կամ *մկրտուեցան*, ճիշտ ինչպէս Յիսուս կանխագուշակեր էր: Ասիկա Հօր Խոստումն էր, եւ անոր հետ միասին անոնք սկսան *ուրիշ լեզուներով* խօսիլ:

Այսօր ոմանց համար «լեզուներ» բառը շփոթեցուցիչ կամ խորհրդաւոր է պարզապէս անոնց անգիտութեան պատճառով: Երբ Սուրբ Գիրքը «լեզուներ»-ու մասին կը խօսի, որոնց մասին ես ալ պիտի խօսիմ, ատիկա կը խօսի լեզուի մը մասին, որ անճանաչելի է ձեր հասկացողութեան համար: Մենք այս բառը կը գործածենք նաեւ աստուածաշնչական խօսակցութիւններէ դուրս: Երբ դուք օտար երկրէ եկած անձի մը հետ էք, որ անգլերէն կը խօսի եւ կ'ուզէք գիտնալ անոր մայրենի լեզուն, անոր կը հարցնէք, որ ինչ է իր «մայրենի լեզուն»: Երբ այս հարցումը կը հարցնէք անոր, դուք պարզապէս կ'ուզէք գիտնալ, ան առաջին անգամ ի՞նչ լեզուն տրվեցաւ իր ծնողներէն մինչ կը մեծնար:

Սաստկաշունչ հովին ձայնը Սուրբ Հոգիին զարթօնքն էր, որ Իր առաջին մուտքը կը գործէր այն տաճարներէն ներս, ուր Ան միշտ ալ ուզած էր բնակիլ: Դարձեալ, Սուրբ Գիրքը չ'ըսեր, որ Ան հով էր, այլ հովը Անոր մուտքին դրսեւորումն էր:

## ՀԱԿԱՌԱԿ ՃԱՄԲԱՆԵՐ

Հոս պիտի մէջբերեմ այս հետաքրքրական դիտարկութիւնը: Սատանան եւ անոր համախոհները միշտ կ'ընեն բաներ, որոնք Աստուծոյ ճամբաներուն հակառակ են կամ անոնցմէ այլատրուած են: Երբ Սուրբ Հոգին Իր առաջին մուտքը կը գործէ, ատիկա այնպիսի ձեւով մը կ'ընէ, որ ատիկա չի կրնար մարդոցմէ վրիպիլ: Մարդիկ *կը տեսնեն*

## ՀՕՐ ԽՈՍՏՈՒՄԸ

Եւ կը լսեն Անոր դրսեւորումը երբ Ան կը լեցնէ զիրենք: Ասիկա պիտի տեսնենք Առաքեալներու Գործերը գիրքին մէջ գտնուող ուրիշ պատմութիւններու մէջ: Սակայն երբ Սուրբ Հոգին հեռանայ, լուրեւամբ կ'ընէ ատիկա: Յիշեցէք, երբ Դաւիթի Սամփսոնին ըսաւ, որ փղշտացիները իր վրայ կու գան եւ ան քունէն արթննալով ըսաւ.

«Ելլեմ ու միւս անգամներուն պէս ցնցուիմ': Անիկա չէր գիտեր թէ Տէրը իրմէ գացեր էր» (Դատաւորաց 16.20, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Սամփսոնը չէր գիտեր, որ Տէրը գացեր էր, որովհետեւ Աստուծոյ Հոգին միշտ լուռօրէն կը հեռանայ: Սակայն երբ դեւերը կը մտնեն, անոնք լուռօրէն կը մտնեն, բայց երբ կը հեռանան, շատ անգամ ատիկա կ'ընեն որոշ ձեւի դրսեւորումով մը (ասիկա պիտի տեսնէք ամբողջ Աւետարաններուն մէջ):

## ԽՈՍՏՈՒՄԸ ԲՈԼՈՐԻՆ ՀԱՄԱՐ Է

Եկէք վերադառնանք Պենտէկոստէի օրին: Աշխարհի վրայ գտնուող բոլոր երկիրներէն հրեաներ Երուսաղէմ կ'այցելէին այդ տօնին համար: Երբ քաղաքը սաստկաշունչ հովին ձայնը լսեց, բազմութիւններ եկան հոն, ուր աշակերտները կը գտնուէին: Այս այցելուները ցնցուեցան երբ լսեցին անուս աշակերտները իրենց լեզուներով կը պատմեն Աստուծոյ մեծամեծ բաներուն մասին: Զարմացած այցելուները բացազանչեցին. «Ինչ պիտի ըլլայ այս»:

Պետրոսը օգտուեցաւ անոնց ցնցումէն եւ ոտքի կանգնեցաւ՝ բոլոր ներկաներուն Յիսուսը քարոզելու: Իր պատգամին վերջաւորութեան ան ըսաւ.

«Աստուած այս Յիսուսը յարուցանեց, որուն մենք ամէնքս ալ վկայ ենք: Ուստի Աստուծոյ ձեռքով բարձրանալով ու Սուրբ Հոգիին խոստումը Հօրմէն առնելով՝ տարածեց ասիկա, որ դուք հիմա կը տեսնէք ու կը լսէք» (Առաքեալներու Գործերը 2.32-33, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

Նկատի առէք, ան կ'ըսէ, որ Սուրբ Հոգիին խոստումը բան մըն է, որ անոնք կրնան *տեսնել* եւ *լսել*: Դուք ձեզի ըսէք. «տեսնել եւ լսել»: Կարելոր է, որ ասիկա յիշենք յառաջիկայ համարներուն համար:

Հաւաքուած ամբոխը իր սիրտին մէջ զղջաց եւ հարցուց՝ «Ինչ ընենք»: Պետրոսը պատասխանեց.

«Պետրոս ըսաւ անոնց. 'Ապաշխարեցէք ու ձեզմէ ամէն մէկը թող մկրտուի Յիսուս Քրիստոսին անունովը մեղքերու թողութեան համար եւ Սուրբ Հոգիին պարգեւը պիտի ընդունիք: Վասնզի *խոստումը* ձեզի է ու ձեր որդիներուն եւ *բոլոր հեռու եղողներուն՝ որոնք մեր Տէր Աստուածը պիտի կանչէ*» (Առաքեալներու Գործերը 2.38-39, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Ուշադրութեամբ նկատի առէք, այն խոստումը, որ անոնք *տեսան* եւ *լսեցին*, կը պատկանի *բոլոր հեռու եղողներուն՝ որոնք մեր Տէր Աստուածը պիտի կանչէ*: Ճիշդ այն, ինչ որ աշակերտները ստացան Վերնատան մէջ, խոստացուած է բոլոր անոնց, որոնք Տիրոջ կը դիմեն, որոնց մէջ կան դուք եւ ես:

Հոս կ'ուզեմ շատ կարճ ձեռով ձեզի ծանօթացնել այն բոլոր մարդիկը, որոնք Նոր Կտակարանին մէջ արձանագրուած է, որ Սուրբ Հոգին ստացան: Կան ուրիշ չորս պատահարներ: Երկու բան պիտի նշենք: Առաջին՝ բոլոր պատմութիւններուն մէջ, բացի մէկ պատմութենէ, ասիկա Յիսուս Քրիստոսը իբրեւ Տէր ընդունելէն անջատ փորձառութիւն մըն էր: Երկրորդ՝ բոլոր պարագաներուն ալ ներկաները կը տեսնէին եւ կը լսէին Սուրբ Հոգիին լեցունութիւնը ստացող մարդոց արտաքին դրսեւորումները:

## ՍԱՄԱՐԻԱ

Փիլիպպոսը Սամարիայի քաղաքներէն մէկը գնաց եւ Յիսուսը հռչակեց: Բազմութիւններ եկան անոր խօսածները լսելու: Մեծ հրաշքեր եղան ինչպէս՝ «շատ դիւահարներէ պիղծ ոգիները մեծաձայն աղաղակելով՝ կ'ելլէին: Եւ շատ անդամալոյծներ ու կաղեր կը բժշկուէին» (Առաքեալներու



Գործերը 8.7): Աւետարանչութիւնը հիանալի եւ հզօր էր եւ մեծ ուրախութիւն եղաւ այն քաղաքին մէջ, եւ կը կարդանք.

«Երբ Փիլիպպոսին հաւատացին, որ Աստուծոյ թագաւորութեանը ու Յիսուս Քրիստոսին անունը կը քարոզէր, մկրտուեցան թէ՛ այրեր եւ թէ՛ կիներ: Սիմոն ինքն ալ հաւատաց ու մկրտուելով [...]» (Առաքեալներու Գործերը 8.12-13):

Ժողովուրդը Յիսուս Քրիստոսի բարի լուրին հաւատաց եւ ջուրի մէջ մկրտուեցաւ: Ուստի Սուրբ Գիրքին համաձայն, անոնք հիմա վերստին ծնան Աստուծոյ թագաւորութեան մէջ: Սակայն երբ կը շարունակենք կարդալ, կը տեսնենք.

«Երուսաղէմի մէջ եղող առաքեալները երբ լսեցին, թէ Սամարացիները Աստուծոյ խօսքը ընդունել են, Պետրոսն ու Յովհաննէսը անոնց դրկեցին. որոնք հոն հասնելով՝ աղօթք ըրին անոնց համար, որպէսզի Սուրբ Հոգին առնեն: (Վասնզի դեռ ո՛րեւէ մէկուն վրայ իջած չէր, հապա միայն Տէր Յիսուսին անունովը մկրտուած էին:» (Առաքեալներու Գործերը 8.14-16):

Թագաւորութեան մէջ արդէն ծնած ըլլալու յաւելեալ հաստատում մը դարձեալ տրուած է այն յայտարարութեամբ, որ անոնք «Տէր Յիսուսին անունովը մկրտուած էին»: Կասկած չկայ, որ անոնք խաւարի թագաւորութենէն ազատագրուած էին եւ հիմա Աստուծոյ ընտանիքին մէջ էին: Սակայն թէեւ անոնք հիմա վերստին ծնունդ ստացած հաւատացեալներ էին, բայց տակաւին Սուրբ Հոգիով չէին մկրտուած:

Կրնաք հարց տալ, թէ՛ անոնք ինչպէս փրկուեցան, քանի որ Սուրբ Գիրքը յստակ կ'ըսէ. «Մէկն ալ չի կրնար Յիսուսը Տէր կոչել՝ եթէ ոչ Սուրբ Հոգիով» (Ա.Կորնթացիներուն 12.3): Ատիկա ճիշդ է, մենք չենք կրնար Յիսուսը Տէր դաւանիլ առանց Սուրբ Հոգիին ազդեցութեան, սակայն ասիկա բոլորովին տարբեր է Անով լեցուելէն: Դարձի պահուն մենք կը սրբագործուինք, կը կնքուինք եւ Սուրբ Հոգին մեր մէջ կը բնակի (Տէն Ա.Պետրոսի 1.2: Եփեսացիներուն 1.13: Հռոմայեցիներուն 8.9-11), բայց Անոր ներկայութեամբ

չենք լեցուիր մինչեւ որ Հօրմէն խնդրենք Յիսուսի անունով: Որովհետեւ Սուրբ Գիրքը կ'ըսէ.

«Ուստի եթէ դուք որ չար էք՝ ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ գիտէք, որչափ աւելի ձեր Հայրը երկնքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց որ իրմէ կը խնդրեն» (Ղուկաս 11.13):

Անոր «ձեր Հայրը երկնքէն» (ձեր երկնաւոր Հայրը) խօսքերէն կը տեսնենք, որ այս խոստումը տրուած է միայն անոնց, որոնք արդէն Անոր զաւակներն են: Նոյն ձեւով Յիսուս յետոյ կ'ըսէ. «աշխարհը չի կրնար ընդունիլ» ճշմարտութեան Հոգին (Յովհաննէս 14.17): Յիսուսի խօսքերէն մենք կը տեսնենք, որ ատիկա թագաւորութեան մէջ վերածնելէն անջատ փորձառութիւն մըն է:

Շարունակենք Սամարիայի ժողովուրդին հետ.

«Այն ատեն ձեռքերնին դրին անոնց վրայ, որ Սուրբ Հոգին առնեն: Երբ *տեսաւ* Սիմոն թէ առաքեալներուն անոնց վրայ ձեռք դնելովը Սուրբ Հոգին կը տրուի, անոնց ստակ տուաւ ու ըսաւ. 'Ինծի՛ ալ այս իշխանութիւնը տուէք, որպէսզի որո՞ւ վրայ ձեռք դնեմ՝ անիկա Սուրբ Հոգին առնէ՛» (Առաքեալներու Գործերը 8.17-19, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Այդ հաւատացեալները Սուրբ Հոգին ստացան երբ արդէն փրկուած էին: Մեզի յատուկ կերպով չէ ըսուած, որ մարդիկը լեզուներով խօսեցան. բայց Սիմոնը ինչո՞ւ դրամ պիտի առաջարկէ անոնց: Սուրբ Գիրքը կ'ըսէ, որ ան *տեսաւ*, որ անոնք Սուրբ Հոգին ստացան: Յստակ դրսեւորում մը կար, եւ ատիկա ուրիշ բան չի կրնար ըլլալ, բացի անոնց լեզուներով խօսիլը տեսնելը, քանի որ ատիկա կը համապատասխանէ Նոր Կտակարանին մէջ միւս լեցուելու փորձառութիւններուն ընթացքին պատահածներուն:

Վերաքաղելով Սամարիայի այս աստուածաշնչական պատմութիւնը, նախ եւ առաջ կը տեսնենք, որ Աստուծոյ Հոգիին լեցունութիւնը ստանալը դարձի գալէն անջատ փորձառութիւն մըն էր, եւ երկրորդ՝ որ ներկաները արտաքին դրսեւորում մը *տեսան*:

## ՀՕՐ ԽՈՍՏՈՒՄԸ

### ԵՓԵՍՈՍ

Պօղոս առաքեալը եւ իր խումբը Եփեսոս եկան եւ քանի մը աշակերտներ գտան: Առաջին հարցումը, որ հարցուց անոնց հետեւեալն էր.

«Երբ հաւատացիք, Սուրբ Հոգին առի՞ք արդեօք»  
(Առաքեալներու Գործերը 19.2):

Ասիկա նաեւ պէտք է ըլլայ առաջին հարցումը, որ մենք կը հարցնենք անոնց, որոնք նոր դարձի եկած են: Ինչո՞ւ պիտի ուզէինք, որ մարդիկ նոյնիսկ մէկ ժամ ապրին առանց Տիրոջ հետ մտերմութիւն ունենալու եւ Յիսուսի վկաները ըլլալու զօրութիւնը ունենալու (Տէն Առաքեալներու Գործերը 1.8):

Այս աշակերտները Սուրբ Հոգիին մասին չէին լսած, անոնք միայն Յովհաննէս Մկրտիչին կողմէ ջուրով մկրտուած էին: Ուստի Պօղոսը եւ անոր խումբը անոնց կը պատմեն փրկութեան մասին, որ Յիսուս Քրիստոսի միջոցով կու գայ: Շարունակելով կը կարդանք.

«Երբ ասիկա լսեցին, Տէր Յիսուսին անունովը մկրտուեցան» (Առաքեալներու Գործերը 19.5):

Սուրբ Գիրքին համաձայն, անոնք վստահաբար վերստին ծնած են թագաւորութեան մէջ, քանի որ Յիսուսի Տէր ըլլալը դաւանած են եւ ջուրով մկրտուած են: Շարունակելով կը տեսնենք.

«Պօղոս, երբ անոնց վրայ ձեռք դրաւ, Սուրբ Հոգին անոնց վրայ եկաւ եւ լեզուներ կը խօսէին ու կը մարգարէանային» (Առաքեալներու Գործերը 19.6):

Դարձեալ անոնք լեզուներով կը խօսէին եւ կը մարգարէանային այն պահուն, երբ Աստուծոյ Հոգին լեցուց զանոնք, եւ դարձեալ ներկաները *տեսան* եւ *լսեցին* Հօր Խոստումին դրսեւորումը ստացողներուն մէջ:

Մարգարէանալ կը նշանակէ՝ «աստուածային ներշնչումով խօսիլ»: Պենտէկոստէի օրը Պետրոսը մարգարէացաւ

երբ ան փոխանցեց այդ բացառիկ պատգամը, որ հազարաւորներ թագաւորութենէն ներս բերաւ: Ան Աստուծոյ Խօսքը փոխանցեց առանց նախապատրաստութեան կամ նախնական ուսումնասիրութեան. ան ներշնչումով խօսեցաւ: Եփեսոսի մէջ գտնուող այդ մարդիկը նախքան Սուրբ Հոգիով լեցուին, շատ քիչ բան գիտէին Աստուծոյ ճամբաներուն մասին, եւ հիմա՝ լեցուելէ ետք, անոնք ներշնչումով կը խօսէին Աստուծոյ Խօսքը:

Նոյնը կը պատահի բոլոր անոնց, որոնք Աստուծոյ Հոգիով կը լեցուին: Ուսուցիչը կու գայ մեր մէջ բնակելու, եւ Աստուծոյ բաները աւելի յստակ կը դառնան: Նախքան Հոգիով լեցուիլս, Աստուծոյ Խօսքը եւ ճամբաները ինծի համար աղօտ էին: Ոչ ատկէ յետոյ. Աստուածաշունչը անձամբ ինծի համար բացուեցաւ: Բազմաթիւ անգամներ ես ականատես եղած եմ անոնց, որոնք երկար ժամանակ առանց Սուրբ Հոգիին իբրեւ հաւատացեալ ապրելէ ետք, Սուրբ Հոգիով լեցուելէ ետք կ'ըսեն. «Ես շատ հարցումներ ունէի, եւ հիմա բոլորին պատասխանը ստացայ», նաեւ. «Աստուածաշունչը ինծի համար շատ յստակ դարձաւ»:

Նոյնպէս ես լսած եմ Սուրբ Գիրքի ջանասէր աշակերտներ, որոնք վերստին ծնած հաւատացեալներ են, բայց Սուրբ Հոգիով լեցուած չեն, կը խօսին Հոգիով լեցուած հաւատացեալներուն Աստուածաշունչի գիտութեան մասին: Թերեւս անոնք երեք անգամ աւելի կը սերտեն, սակայն անոնք կը զարմանան Հոգիով լեցուած հաւատացեալին հասկացողութեան վրայ: Անոնց ակնարկութիւնները լսելով, պարզապէս կը պատասխանեն. «Պարզ է, անոնք, որոնք չեն լեցուած, Սուրբ Հոգիին կատարեալ լուսաւորութիւնը չունին»:

Բայց անոնք կրնան լեցուիլ, քանի որ Հոգիով լեցուիլը Աստուծոյ խոստումն է բոլոր անոնց, որոնք Յիսուսի անունը կը կանչեն: Աստուած շատ բարի՛ է մեզի հանդէպ:

Ուստի դարձեալ, ինչպէս Սամարիայի ժողովուրդին հետ, Եփեսոսի հաւատացեալներուն Աստուծոյ Հոգին ստանալը իրենց դարձէն անջատ փորձառութիւն մըն էր, եւ դարձեալ ներկաները *տեսան* արտաքին դրսեւորում մը:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԸ

Առաքելներու Գործերը գիրքին 9-րդ գլուխին մէջ Սօղոսը, զոր մենք կը ճանչնանք Պօղոս անունով, դէպի Դամասկոս կ'երթար՝ հաւատացեալները հալածելու համար: Երբ մօտեցաւ, տեսաւ կուրցնող լոյս մը երկինքէն եւ լսեց Տիրոջ ձայնը, որ կը հարցնէր.

«Սաւորդ, Սաւորդ, ինչո՞ւ զիս կը հալածես»:

Սօղոս անմիջապէս հարցուց, որ ո՞վ էր իրեն հետ խօսողը, եւ Տէրը ըսաւ. «Ես եմ Յիսուսը»:

Այն ատեն Սօղոս ըսաւ. «Տէ՛ր, ի՞նչ կ'ուզես, որ ընեմ»:

Տէրը անոր ըսաւ, որ Դամասկոս երթայ եւ հոն թելադրութիւններ պիտի տրուէին իրեն:

Կը հաւատամ, որ հոս ան վերստին ծնունդ ունեցաւ: Ասիկա կ'ըսեմ երկու պատճառով: Առաջին՝ երբ Տէրը ըսաւ. «Ես եմ Յիսուսը», Սօղոս Չինք իբրեւ «Տէր» դաւանեցաւ: Երկրորդ՝ Սօղոս երեք օր ծոմ պահեց եւ աղօթեց, յետոյ Անանիան իր քով եկաւ եւ յստակ ըսաւ.

«Սաւորդ *եղբայր*, Տէրը զիս ղրկեց, այն Յիսուսը, որ ճամբուն մէջ քեզի երեցաւ, երբ կու գայիր, որպէսզի տեսութիւնդ ստանաս *ու Սուրբ Հոգիով լեցուիս*» (Առաքելներու Գործերը 9.17, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Նկատի առէք «*եղբայր*» բառը: Ան Յիսուս Քրիստոսի կը հաւատար եւ Չայն իբրեւ Տէր դաւանած էր եւ երեք օրէ կ'աղօթէր: Ուստի վերստին ծնունդ ստանալէ ետք, Անանիան իրեն համար կ'աղօթէ, որ Սուրբ Հոգիով լեցուի:

Հոս չ'ըսուիր, որ Սօղոս լեզուներով խօսեցաւ: Սակայն ինք անձամբ յստակ կ'ըսէ մեզի Կորնթացիներուն ուղղուած իր նամակին մէջ. «Աստուծմէ կը գոհանամ որ բոլորէդ ասելի լեզուներով կը խօսիմ» (Ա.Կորնթացիներուն 14.18): Երբ ան սկսաւ լեզուներով խօսիլ: Երբ Անանիան իր վրայ ձեռք դրաւ եւ աղօթեց (Առաքելներու Գործերը 9.17):

ԿՈՌՆԵԼԻՈՍ ԵՒ ԻՐ ՏՈՒՆԸ

Հոռմայեցի սպայ մը կար Կոռնելիոս անունով: Ինք, իր ընտանիքը եւ բարեկամները վերստին ծնունդ ստացող առաջին հեթանոսները դարձան: Կոռնելիոսը յաճախ ծոմ կը պահէր եւ կ'աղօթէր եւ օր մը կէսօրէ ետք հրեշտակ մը անոր երեւցաւ եւ ըսաւ, որ մարդիկ զրկէ եւ Պետրոսը կանչէ:

Երբ քանի մը օր ետք Պետրոսը եկաւ, Կոռնելիոսը իր սիրելիները հաւաքած էր եւ անոնք պատրաստ էին իր պատգամը լսելու: Պետրոս սկսաւ Յիսուսը քարոզել եւ նախքան իր խօսքը վերջացնէր, կը կարդանք.

«[...] Երբ Պետրոս այս խօսքերը կը խօսէր, Սուրբ Հոգին իջաւ ամենուն վրայ, որոնք խօսքը կը լսէին: Թլփատուածներէն եղող հաւատացեալները, որոնք Պետրոսին հետ եկած էին, զարմացան որ հեթանոսներուն վրայ ալ Սուրբ Հոգիին պարգեւը կը լեցուէր եւ կը լսէին անոնց ուրիշ լեզուներով խօսիլը եւ Աստուած կը փառաւորէին» (Առաքեալներու Գործերը 10.44-46):

Հրեաները ոչ մէկ կապ չէին ունենար հեթանոսներուն հետ կրօնական եւ նոյնիսկ շատ մը ընկերային հարցերու մէջ: Անոնք կտրուած էին խոստումի ուխտերէն, առանց յոյսի, եւ առանց Աստուծոյ (Տեն Եփեսացիներուն 2.12): Ուստի այն, ինչ որ հոս կը պատահի մեծապէս կը զարմացնէ Պետրոսի հետ եղող հրեաները: Անոնք ապշած էին, որ այս հեթանոսները փրկութիւն եւ Սուրբ Հոգին ստացան:

Ասիկա միակ դէպքն է Աստուածաշունչին մէջ, ուր մարդիկ իրապէս կը փրկուին եւ նոյն ատեն Սուրբ Հոգին կը ստանան: Ես անձնապէս կը հաւատամ, եւ գիտեմ, որ դուք կրնաք առարկել ասոր, որ Աստուած ասիկա ըրաւ, որովհետեւ գիտէր, որ այդ հրեաները պիտի չաղօթէին Կոռնելիոսի եւ անոր սիրելիներուն համար, որպէսզի անոնք ստանան Յիսուսը կամ Սուրբ Հոգին, քանի որ անոնք ընդհանրապէս կը կասկածէին, որ անոնք կրնան փրկուիլ: Մտածեցէք, չկայ անմիջական հրաշալի արտաքին փաստ մը, որ ցոյց կու տայ, որ անձ մը վերստին ծնած է: Ուստի նոյնիսկ եթէ այդ մարդիկը Պետրոսի քարոզած խօսքը ընդունէին, եւ դաւանէին

## ՀՕՐ ԽՈՍՏՈՒՄԸ

Յիսուսը, հրեաները պիտի չհաւատային, որ անոնք կրնան դարձի գալ:

Սակայն երբ Աստուած զանոնք Սուրբ Հոգիով լեցուց եւ անոնք սկսան լեզուներով խօսիլ, ճիշդ ինչպէս այդ հրեաները խօսեցան երբ լեցուեցան, անոնք չկրցան հերքել, որ Աստուած Իր փրկութիւնը թափեր էր հեթանոսներուն վրայ:

Այս դէպքը անկասկած ցոյց կու տայ, որ անձի մը Սուրբ Հոգիին լեցունութիւնը ստանալը իրականացած կը տեսնենք լեզուներ խօսելու արտաքին դրսեւորումով: Աստուածաշունչի ուրիշ թարգմանութիւն մը կը գրէ. «Հեթանոսներուն վրայ ալ Սուրբ Հոգիին պարգեւը կը լեցուէր: Եւ այդ մասին կասկած չկայ, քանի որ անոնք կը լսէին անոնց ուրիշ լեզուներով խօսիլը եւ զԱստուած փառաւորելը» (Առաքեալներու Գործերը 10.45-46, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն): Անոնք ինչպէս գիտցան: «Քանի որ լսեցին...»: Անոնք տեսան եւ լսեցին Հօր Խոստումը:

## ԼԵԶՈՒՆԵՐԸ ՊԻՏԻ ԴԱԴՐԻՆ

Թերեւս հիմա հարցնէք. «Այո՛, այդ բոլորը ճիշդ է առաջին աշակերտներուն համար, բայց Աստուածաշունչը չ'ըսէր, որ լեզուները պիտի դադրին երբ կատարեալը գայ: Այո՛, կ'ըսէ: Բայց կատարեալը եկած է: Ոմանք կրնան ըսել. «Այո՛, կատարեալը Աստուածաշունչն է, եւ հիմա որ մենք զանիկա ունինք, լեզուներուն պէտք չունինք: Եկէք նայինք Աստուածաշունչին՝ տեսնելու համար, թէ արդեօք այդ մեկնաբանութիւնը ճիշդ է: Պօղոս կը գրէ.

«Սէրը բնա՛ւ չիյնար. բայց եթէ մարգարէութիւններ ըլլան՝ պիտի խափանին, եթէ լեզուներ՝ պիտի դադրին, եթէ գիտութիւն՝ պիտի խափանուի: Վասնզի շատէն քիչը գիտենք ու շատէն քիչը կը մարգարէանանք. բայց երբ կատարեալը գայ, այն ատեն շատէն քիչը պիտի խափանուի» (Ա.Կորնթացիներուն 13.8-10, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Նախ եւ առաջ, կը կարդանք, որ երբ կատարեալը գայ, ոչ միայն լեզուները պիտի դադրին, այլեւ գիտութիւնն

(յայտնուած գիտութիւնը, ճշգրիտ ըլլալու համար) ալ պիտի անցնի (անհետանայ): Վստահաբար ատիկա տակաւին չէ եղած: Ուստի եկէք շարունակենք կարդալ, որպէսզի գիտնանք, որ ճիշդ էր Է այն ժամանակաշրջանը, որ «կատարեալը պիտի գայ»:

«Քանզի հիմա մենք որպէս թէ հայելիի մէջ կը տեսնենք անյայտ կերպով, *բայց այն ատեն* երես առ երես: Հիմա շատէն քիչ մը տեղեակ եմ, *բայց այն ատեն* այնպէս պիտի ճանչնամ՝ ինչպէս ճանչցուեցայ» (Ա.Կորնթացիներուն 13.12, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Նկատի առէք, ան երկու անգամ կ'ըսէ. «բայց այն ատեն»: Ատիկա կ'ակնարկէ այն ժամանակին երբ կատարեալը եկած է: Երկու բան ցոյց կու տան այդ ժամանակը: Առաջին՝ մենք Տէրը *երես առ երես* պիտի տեսնենք: Հիմա Զինք երես առ երես կը տեսնէք: Կը տեսնէք Անոր յարութիւն առած մարմինը՝ կրակի բոցի պէս ասքերով եւ բուրդի պէս ճերմակ մազերով, եւ Անոր երեսը արեւու պէս կը փայլի: Երկրորդ ցուցանիշն է՝ «պիտի ճանչնամ՝ ինչպէս ճանչցուեցայ»: Կը ճանչնամք Զինք այնպէս, ինչպէս Ինք կը ճանչնայ ձեզ: Այս հարցումներուն պատասխանը ըստ երեւոյթին ոչ է: Ան կը խօսի այն ժամանակին մասին, երբ մենք Տիրոջ հետ պիտի ըլլանք մեր փառաւորեալ մարմիններով: Այն ատեն է, որ կատարեալը պիտի գայ:

Ուստի քանի որ կատարեալը դեռ չէ եկած, ուրեմն վստահաբար լեզուները տակաւին չեն դադրած: Մինչ կը շարունակենք, հետագայ գլուխներուն մէջ ձեզի ցոյց պիտի տամ, որ լեզուներուն գլխաւոր պատճառներէն մէկը Աստուծոյ հետ աւելի խոր մտերմութիւն ունենալն է երկրի վրայ:

## ԱՄԷՆՔԸ ԼԵԶՈՒՆԵՐ ԿԸ ԽՕՍԻՆ

Ուրիշ մը կրնայ հարցնել. «Ես կը հաւատամ լեզուներուն, բայց բոլոր հաւատացեալները չեն կրնար ստանալ զանոնք, քանի որ նոյնիսկ Սուրբ Գիրքը կը հարցէ՝ 'Ամէնքը լեզունէր կը խօսին' եւ ատոր պատասխանը ոչ է»: Ասիկա դարձեալ Պօղոսին հարցումին մասին մեծ թիրիմացութիւն մըն է: Այս



հարցին վերջ դնելու համար, որ շատերէն գողցած է Աստուծոյ Խոստումը, նախ պէտք է հաստատենք, որ Նոր Կտակարանը կը խօսի լեզուներու չորս տարբեր դասակարգներու մասին: Երկուքը հանրային ծառայութեան համար են, եւ երկուքը՝ Աստուծոյ հետ անձնական ընկերութեան համար: Մենք պէտք է համառօտ կերպով վերաքաղենք իրաքանչիւրը, որպէսզի պէտք եղած ձեւով պատասխանենք այս հարցումին. «Արդեօք Աստուծոյ կամքն է, որ Իր բոլոր զաւակները լեզուներով խօսին»:

### ԼԵԶՈՒՆԵՐ, ՈՐՈՆՔ ՆՇԱՆ ԵՆ ԱՆՀԱԻԱՏՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Լեզուներու այս առաջին խումբը «հանրային» ծառայութեան համար է: Երբ «հանրային» բառը կը գործածենք, կը խօսին ուրիշ անձի մը կամ մարդոց խումբի մը ծառայելու մասին: Պօղոս անոնց մասին կը գրէ.

«Ուրեմն լեզուները նշանի համար են ո՛չ թէ հաւատացեալներուն, հապա անհաւատներուն [...]»  
(Ա.Կորնթացիներուն 14.22):

Այս լեզուները տեղի կ'ունենան երբ Սուրբ Հոգին մեր բանականութեան սահմաններէն անդին կ'անցնի եւ մեզի կու տայ կարողութիւնը այս աշխարհին պատկանող մէկ ուրիշ լեզուով խօսելու, որ նախապէս մարգուած չենք խօսելու կամ կարողութիւնը չունինք խօսելու: Ասիկա կը տրուի ինչպէս Աստուծոյ Հոգին կը կամենայ. մենք չենք կրնար որոշել անով գործել, եւ շատ յաճախ նոյնիսկ չենք անդրադառնար երբ անով կը գործենք: Մենք պարզապէս կը գիտնանք, որ լեզուներով կը խօսինք, բայց չենք անդրադառնար, որ այս երկրին ծանօթ լեզուով մը կը խօսինք:

Ձեզի օրինակ մը տամ: Վերջերս կը քարոզէի Քոլորատոյի մեծ եկեղեցիներէն մէկուն մէջ: Իմ անձնակազմէս մէկը այդ ծառայութեան մէջ էր՝ ետեւի շարքերէն մէկուն վրայ նստած էր: Ան շատ ժամանակ կ'անցընէ աղօթքով եւ բարեխօսութեամբ եւ զգաց, որ կարծես Տէրը կ'ուզէր, որ ինձի համար աղօթէր երբ ես կը քարոզէի: Ուստի ամբողջ

ծառայութեան ընթացքին ան կը կարծէր, թէ պարզապէս մեղմօրէն օտար լեզուներով կ'աղօթէր (որուն մասին շուտով պիտի անդրադառնամ): Ծառայութենէն ետք պարոն մը, որ անոր առջեւը նստած էր, իրեն դառնալով կ'ըսէ. «Դուք շատ լաւ ֆրանսերէն կը խօսիք, իրականութեան մէջ, կատարեալ առողջանութեամբ»:

Ան իրեն ըսաւ, որ ինք ֆրանսերէն խօսիլ չէր գիտեր:

Այն ատեն ան զարմանքով ըսաւ անոր. «Ես ֆրանսերէնի ուսուցիչ եմ, եւ դուք այդ մարդուն համար կատարեալ ֆրանսերէնով կ'աղօթէիք ամբողջ ժամանակը, որ ան կը քարոզէր եւ դուք աստուածաշնչական համարներ կը մէջբերէիք ձեր աղօթքներուն մէջ եւ ձեր համարը մէջբերելէն անմիջապէս ետք մարդը իր պատգամին մէջ ըսաւ, որ մեր Աստուածաշունչերուն մէջ բանանք այդ նոյն համարը, որ դուք այդ պահուն աղօթեցիք»:

Աւելորդ է ըսել, որ մարդը շատ յուզուած էր, եւ իմ անձնակազմիս անդամը շատ խանդավառուած էր: Ատիկա նշան մըն էր այդ մարդուն համար, որ իմ քարոզածս իրապէս Աստուծոյ Խօսքն էր:

Այս լեզուն աշակերտներուն հետ երեւցաւ Պենտէկոստէի օրը: Սուրբ Գիրքը կը գրէ.

«Երուսաղէմի մէջ բնակող Հրեաներ կային՝ աստուածավախ մարդիկ՝ երկնքի տակ եղած բոլոր ազգերէն ժողովուած, երբ այս ձայնը եղաւ, բազմութիւնը մէկտեղ եկաւ ու խռովեցաւ, վասնզի կը լսէին, որ անոնք իրենց ամէն մէկուն լեզուովը կը խօսէին: Ամէնքն ալ կը սքանչանային ու կը զարմանային եւ իրարու կ'ըսէին. ‘Չէ՞ որ ահա ասոնք ամէնքն ալ, որ կը խօսին, Գալիլիացի են. ուրեմն ինչպէս կը լսենք մենք մեր ամէն մէկ լեզուովը՝ որուն մէջ ծնած ենք [...] [յետոյ այդ նկարագրուած ազգերուն ցանկը տրուած է, որ ես զանց ըրած եմ] [...] կը լսենք որ մեր լեզուներով կը պատմեն Աստուծոյ մեծամեծ բաներու մասին» (Առաքեալներու Գործերը 2.5-11):

Դարձեալ, այս լեզուները նշան են անհաւատներուն համար: Անոնք նշան էին վերը նշուած ֆրանսերէնի ուսու-

ցիչին համար, ինչպես նաև այս համարին մէջ նշուած աշխարհի բոլոր կողմերէն եկած ուսեալ մարդոց համար: Այս նշանը անոնց ուշադրութիւնը գրաւեց եւ Աստուծոյ Խօսքին հանդէպ անոնց սիրտը բացաւ:

Ես լսած եմ բազմաթիւ պարագաներ, երբ հաւատացեալներ մարդոց Աստուծոյ Խօսքը խօսած են օտար լեզուներով, զորս երբեք չեն սորված, եւ ատիկա նշան մըն է, որ կը հաստատէ Աստուծոյ սիրոյ պատգամը: Ամէն պարագայի, կայ հսկայական ծառայութիւն մը, որ կը բխի այս հրաշալի նշանէն:

### ԼԵԶՈՒՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԸ ՏՐՈՒԻՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Լեզուներու այս երկրորդ դասակարգը դարձեալ հանրային ծառայութեան համար է: Այս լեզուները երկնային լեզուներ են. երկրի վրայ անոնց նման բարբառներ չկան: Նոյնն է պարագան մնացեալ բոլոր դասակարգներուն, զորս քիչ ետք պիտի սահմանեն:

Թերեւս հիմա հարցականի տակ առնէք այն իրականութիւնը, որ երկինքի մէջ մէկէ աւելի բարբառներ կան: Նկատի առէք այս հաւանականութիւնը՝ Յայտնութեան գիրքը մեզի կ'ըսէ, որ ան որ կը յաղթէ, երկինքի մէջ Յիսուս անոր պիտի տայ «ճերմակ խիճ մը [...] եւ այն խիճին վրայ նոր անուն մը գրուած, որ մէկը չի գիտեր, բայց միայն ան՝ որ կ'ընդունի» (Յայտնութիւն Յովհաննէսի 2.17): Նաև Ինքնին Յիսուսի մասին կը կարդանք, որ «Անոր ասքերը կրակի բոցի պէս էին: Անոր գլխուն վրայ շատ թագեր կային ու գրուած անուն մը ունէր, որ մէկը չի գիտեր, բայց միայն ինք» (Յայտնութիւն Յովհաննէսի 19.12): Ուստի եթէ ուրիշ ոչ ոք չի գիտեր այդ անունները, ուրեմն միակ բացատրութիւնը այն է, որ տարբեր լեզուներ կան երկինքի մէջ:

Այս լեզուները կ'իյնան Սուրբ Հոգիին պարգեւներուն ինը դասակարգներէն մէկուն մէջ, որոնք ցանկագրուած են Առաջին Կորնթացիներուն տասներկրորդ գլուխին մէջ: Հետեւեալը կը կարդանք.

«[...] ուրիշին՝ զանազան լեզուներ, ուրիշի մը՝ այդ լեզուներով խօսուածը մեկնաբանելու կարողութիւն » (Ա.Կորնթացիներուն 12.10):

Նկատի առէք, այս լեզուները պէտք է մեկնաբանուին, եւ ոչ թէ թարգմանուին: Ինչո՞ւ: Որովհետեւ անոնք երկնային լեզուներ են, որոնք բնական աշխարհին ծանօթ չեն:

Կը յիշեմ Սինկափուրի մէջ հանդիպում մը: Ինձմէ խնդրեցին, որ այդ երկրի մեծագոյն եկեղեցիներէն մէկուն մէջ ծառայեմ եւ ասիկա իմ քանի մը այցելութիւններու առաջինն էր: Նախքան բեմը ինձի տրուի, որ քարոզեմ, բազմութիւնը, որ շատ մեծ էր, քանի մը գեղեցիկ երկրպագութեան երգեր երգելէ ետք լուռ էր: Յանկարծ մարդ մը սկսաւ երկնային լեզուով խօսիլ: Շատ բարձր եւ յստակ էր, բայց ան բարձրախօս չունէր: Ան այդ հսկայական դահլիճին մէջ պատշգամին վրայ տեղ մըն էր, սակայն ամէն մարդ կը լսէր անոր ձայնին մէջ գտնուող յստակութիւնը եւ իշխանութիւնը: Կարծէք երկինքը բարձրացուց անոր ձայնը:

Երբ ան կը խօսէր, իմ ներքին մարդս ուրախութենէն կը ցատկէր, իսկ արտաքին մարդս ակնածանքէն սառած էր: Կարծէք թելերուս եւ ոտքերուս բոլոր մազերը տնկուած էին եւ սիրտս կը բաբախէր այդ սուրբ մթնոլորտին մէջ: Երբ ան աւարտեց, մեկնաբանութիւնը սկսաւ եւ այդ լեզուին եւ մեկնաբանութեան միջոցաւ տրուած Տիրոջ խօսքը ճիշդ այն խօսքն էր, որ ես այդ գիշեր պիտի քարոզէի: Ես հիացած էի: Աստուած ոչ միայն ինձի, այլ այդ ամբողջ ժողովուրդին համար հաստատեց, որ այդ գիշեր իմ փոխանցելիք խօսքս Իրմէ էր:

Այս լեզուները, երբ կը մեկնաբանուին, նման են մարգարէութեան: Այդ պատճառով, Պօղոս կ'ըսէ. «Մարգարէութիւն ընողը անելի՛ օգտակար կ'ըլլայ, քան լեզուներով խօսողը, բացի այն պարագայէն՝ երբ թարգմանող [մեկնաբանող] մը գտնուի, եւ ամբողջ եկեղեցին օգտուի» (Ա.Կորնթացիներուն 14.5): Դարձեալ, այս համարներուն միջոցով կը տեսնէք, որ այս լեզուները եկեղեցիին կը տրուին հանրային ծառայութեան համար. եւ անոնք լեզուներու այն դասակարգն են, որոնց մասին Պօղոս կը խօսէր երբ

հարցուց. «Ամէնքը լեզունէր կը խօսին»: Ուստի հիմա եկէք այս համարը պարունակին մէջ կարդանք.

«Եւ Աստուած եկեղեցիին մէջ դրաւ մէկ քանիները, նախ՝ առաքեալներ, երկրորդ՝ մարգարէներ, երրորդ՝ վարդապետներ, ետքը՝ հրաշքներ գործողներ, ետքը՝ բժշկելու պարգեւ ունեցողներ, օգնողներ, կառավարողներ, լեզուներ խօսողներ: Միթէ ամէնքը առաքեալներ են. միթէ ամէնքը վարդապետներ են. միթէ ամէնքը հրաշքներ կը գործեն. միթէ ամէնքը բժշկութեան պարգեւներ ունին. միթէ ամէնքը լեզուներ կը խօսին. միթէ ամէնքը թարգմանութիւն [մեկնաբանութիւն] կ'ընեն» (Ա.Կորնթացիներուն 12.28-30):

Կը նկատէք, որ Պօղոսը կը խօսի ծառայութեան պարգեւներուն մասին, զորս Աստուած եկեղեցիին մէջ դրած է: Անշուշտ բոլորը առաքեալներ կամ մարգարէներ կամ ուսուցիչներ կամ հովիւներ չեն կամ հրաշքներ գործելու եւ բժշկելու պարգեւները չունին, եւ բոլորը լեզուներով խօսելու կամ երկնային լեզուները մեկնաբանելու ծառայութեան պարգեւը չունին: Ինչո՞ւ: Պատասխանը հետեւեալ համարներուն մէջ է.

«Ուրեմն լեզուները [*լեզուներ նշանի համար*] նշանի համար են ո՛չ թէ հաւատացեալներուն, հապա անհաւատներուն [...] եթէ բոլոր եկեղեցին մէկտեղ զայ ու ամէնքն ալ օտար լեզուներով [*լեզուներ մեկնաբանութեան համար*] խօսելու ըլլան եւ հոն մտնեն տգէտներ, կամ անհաւատներ, պիտի չըսեն թէ դուք խենդեցեր էք» (Ա.Կորնթացիներուն 14.22-23, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Նախքան մեր հարցումին պատասխանելս, նշեմ, որ այս երկու համարները յստակօրէն ցոյց կու տան երկու հանրային լեզուներուն տարբերութիւնը: Ան նախ կը գրէ, որ լեզուները նշան են անհաւատներուն համար: Ասիկա երբ կը խօսինք երկրին այն լեզուներով, որոնց մէջ չենք մարզուած: Անհաւատ

մը, որ գիտէ այս լեզուները, յստակ կը տեսնէ, որ անկարելի է, որ մենք այդ խօսքերը խօսինք առանց Տիրոջ հրաշալի միջամտութեան: Ուստի ատիկա նշան մըն է անհաւատին համար:

Յետոյ Պօղոսը կը խօսի ամբողջ եկեղեցիին միասին հաւաքուելուն եւ նոյն ատեն լեզուներով խօսելուն մասին: Յստակ է, որ ասիկա երկինքի լեզուներն են: Ես այդ մէկը գիտեմ, որովհետեւ Պենտէկոստէի օրը բոլոր հաւատացեալները տարբեր երկրաւոր լեզուներով Աստուծոյ մեծամեծ բաներուն մասին կը խօսէին: Ատոնք պէտք չունէին մեկնաբանուելու, քանի որ անհաւատները կը հասկնային անոնց ըսածները: Այս համարին մէջ ան կը խօսի եկեղեցիին հետ երկնային լեզուով խօսելու մասին, որ պէտք է մեկնաբանուի: Այլապէս՝ ոչ ոք պիտի հասկնայ: Ինչպէս կը տեսնէք, պէտք չկայ, որ բոլորը լեզուներով խօսին, այլապէս տգէտները կամ անհաւատները պիտի կարծեն, թէ մենք խենդ ենք:

Ուստի այս հարցումին՝ «Միթէ ամէնքը լեզուներ կը խօսին» պատասխանը, որ շատերու կողմէ շատ սխալ հասկցուած է, պարզ է: Երբ հարցը կը վերաբերի ծառայութեան պարգեւներուն, զորս Աստուած եկեղեցիին մէջ կը դնէ, Ան ընտրելական է, քանի որ բոլորը պէտք չունին անոնցմով գործելու: Սակայն Ան կողմնակալ չէ, եւ կը կրկնեմ, Ան ընտրելական չէ մեր անձնական ընթացքին համար մեզմէ իւրաքանչիւրիս՝ հաւատացեալներուս Իր տուածին մէջ: Հետեւեալ երկու դասակարգները կը խօսին լեզուներու պարգեւին մասին Աստուծոյ հետ մեր անձնական յարաբերութեան հետ կապուած:

## ԼԵԶՈՒՆԵՐ ԱՆՁՆԱԿԱՆ ԱՂՕԹՔԻ ՀԱՄԱՐ

Լեզուներու յաջորդ երկու դասակարգները անձնական աղօթքի համար են, եւ Հօր նախախնամութիւնն են իւրաքանչիւր հաւատացող քրիստոնիայի համար: Մենք կը տեսնենք զանոնք յաջորդ երկու համարներուն մէջ.

«Քանզի եթէ ես աղօթք ընեմ օտար լեզուով, իմ հոգիս աղօթք կ'ընէ, բայց միտքս անպտուղ է: Ուրեմն ի՞նչ ընելու

եմ: Աղօթք ընեմ հոգիով, աղօթք ընեմ մտառութեամբ ալ. սաղմոս երգեմ հոգիով, սաղմոս երգեմ մտառութեամբ ալ» (Ա.Կորնթացիներուն 14.14-15):

Նկատի առէք, Պօղոս որոշակիօրէն այս լեզուները կը բնորոշէ իբրեւ աղօթքներ, ոչ լեզուներ, որոնք եկեղեցիին կը ծառայեն: Այս գլուխին մէջ նաեւ կը կարդանք. «Ան որ օտար լեզուով կը խօսի, ո՛չ թէ մարդոց կը խօսի, հապա Աստուծոյ» (Ա.Կորնթացիներուն 14.2): Երբ այս երկու հանրային լեզուներէն մէկը կը խօսինք, մենք կը խօսինք անհաւատներուն (լեզուներ նշանի համար), կամ եկեղեցիին (լեզուներ մեկնաբանութեան համար). բայց երբ լեզուներով կ'աղօթենք, Աստուծոյ կը խօսինք, եւ ոչ թէ մարդոց: Կը տեսնէ՞ք տարբերութիւնը:

Վերը նշուած համարին մէջ Պօղոս մեզի կ'ըսէ աղօթելու երկու ձեւերու մասին՝ մէկը մտառութեամբ, որ ինծի համար անգլերէնն է: Միւս ձեւը լեզուներով աղօթելն է, որ իմ հոգիս կ'աղօթէ՝ Սուրբ Հոգիով առաջնորդուած: Նոյնն է պարագան երկրպագութեան երգեր երգելուն. «Սաղմոս երգեմ հոգիով, սաղմոս երգեմ մտառութեամբ ալ»:

Յուդան կը նկարագրէ լեզուներով անձնական աղօթք ընելը ըսելով.

«Բայց դ՛ր՛ք, սի՛րելիներ, անձերնիդ շինեցէք ձեր ամենասուրբ հաւատքին վրայ եւ Սուրբ Հոգիով աղօթեցէք» (Յուդայի 20-21):

Նկատի առէք, երբ լեզուներով կ'աղօթենք, մեր անձերը կը շինենք, մինչդեռ երբ լեզուներով եկեղեցիին կը խօսինք եւ կը մեկնաբանենք, եկեղեցին կը շինենք (Ա.Կորնթացիներուն 14.5): Աստուած երկուքը կ'ուզէ, եւ երկուքն ալ շատ կարեւոր են:

Յաջորդ գլուխին մէջ ես աւելի խորութեամբ պիտի քննարկեմ լեզուներու այս դասակարգը: Դուք պիտի յայտնաբերէք, որ ատիկա անհրաժեշտ է՝ մեր Տիրոջ հետ քալելու համար: Ես լեզուներու այս դասակարգը կը կոչեմ. «Մտերմութեան լեզուն»:

## ԼԵԶՈՒՆԵՐ ԲԱՐԵԽՕՍՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Լեզուներու չորս դասակարգերուն վերջինը բարեխօսութեան համար է, երբ մենք աղօթքով խրամատին մէջ կը կայնինք — կ'աղաչենք կարիքաւորներուն համար:

«Նոյնպէս Հոգին ալ օգնութեան կը հասնի մեր տկարութիւններուն. քանզի ինչո՞ւ եւ ինչպէս աղօթելու ենք՝ չենք գիտեր. բայց ինքը՝ Հոգին՝ բարեխօս կ'ըլլայ մեզի համար անբարբառ հառաչանքներով: Եւ սրտերը Քննողը գիտէ Հոգիին ինչ խորհիլը, քանզի Աստուծոյ կամքին համեմատ բարեխօսութիւն կ'ընէ սուրբերուն համար» (Հռոմայեցիներուն 8.26-27):

Կան ժամանակներ երբ մենք շուարած ենք, թէ ինչ պիտի աղօթենք: Անգլերէն Աստուածաշունչի «Տը Նիւ Լիվինկ Թրանսլէյշըն» տարբերակը լաւագոյն ձեւով ցոյց կու տայ ասիկա ըսելով. «Քանի որ մենք նոյնիսկ չենք գիտեր, որ ինչ բանի համար պէտք է աղօթենք, ոչ ալ ինչպէս պէտք է աղօթենք»:

Ես տեղեակ չեմ ամէն բանէ, որ կը պատահի իմ սիրելիներուս կամ ուրիշ կարիքաւորներու կեանքին մէջ, բայց Աստուծոյ Հոգին տեղեակ է: Մայրս Ֆլորիտայի մէջ կ'ապրի եւ ես Քոլորատոյի մէջ կ'ապրիմ: Ենթադրենք, որ ան կը գտնուի կացութեան մը մէջ, որ աստուածային օգնութիւն կը պահանջէ, բայց ան չ'անդրադառնար ատոր կամ ինծի հետ չի կրնար կապուիլ: Ինչպէս պիտի գիտնամ ինչ աղօթեմ, ուր մնաց, որ գիտնամ, որ ան աղօթքի պէտք ունի:

Առաջին անգամ այս համարը ինծի համար իրական դարձաւ իմ համալսարանական օրերուս: Ես ընդամենը երկու տարիէ հաւատացեալ էի, բայց շատ անօթի էի ուրիշներուն Յիսուսի մասին խօսելու. ուստի սկսայ համալսարանին մէջ Աստուածաշունչի սերտողութեան պահեր ընել, որուն նպատակն էր եղբայրութեան եւ գովէճի աղջկանց ընկերութեան պատկանող աշակերտներուն հասնիլ: Մօտաւորապէս վաթսուն հոգի ներկայ կը գտնուէին այդ սերտողութիւններուն: Գիշեր մը Սուրբ Հոգիին մասին կը սորվեցնէի: Աստուածաշունչին մէջէն իրենց ցոյց կու տայի



Աստուծոյ կամքը: Սերտողութեան ընթացքին կար աղջիկ մը, որուն սորվեցուցած էին, որ ինք ինքնաբերաբար արդէն իսկ Սուրբ Հոգին ստացած է երբ վերստին ծնած է եւ որ լեզուներուն ժամանակը անցած է: Ինչ ցաւալի է, որ անոր ուսուցիչները Աստուածաշունչին չէին հաւատար, հապա կը հաւատային իրենց առաջնորդ-ուսուցիչներուն, որոնք նոյնպէս կոյր էին: Սակայն այդ գիշեր երբ ան տեսաւ, որ Աստուածաշունչը ինչ կ'ըսէ այդ մասին, ան հաւատաց եւ քանի մը ուիրշներու հետ միասին անմիջապէս Սուրբ Հոգիով լեցուեցաւ:

Յաջորդ առաւօտ կանուխ եղբայրութեան եղբայրներէս մէկը ինթըրքոմի միջոցաւ ինծի իմացուց, որ այցելու մը ունիմ: Ես շուտով հագուեցայ եւ մեր տան նախասենեակը գացի՝ ողջունելու նոյն այն երիտասարդուհին, որուն գուլճի աղջկանց ընկերութիւնը մեր թաղին մէջ կը գտնուէր: Ան կը փայլէր եւ ըսաւ. «Ճո՛ն, կը ներես, որ քեզ արթնցուցի, բայց չկրցայ համբերել, կ'ուզեմ քեզի պատմել այս առաւօտ ինչ պատահեցաւ»:

Ան պատմեց, որ ինչպէս Սուրբ Հոգին զինք արթնցուցած էր այդ առաւօտ ժամը հինգին եւ իր սիրտին մէջ աղօթելու կարիքը զգացած էր: Ան գիտէր, որ շատ սխալ բան մը կար, ուստի մեկուսացած տեղ մը գտաւ եւ սկսաւ լեզուներով աղօթել: Ան ըսաւ, որ հետզհետէ լեզուները սաստկացան, քանի որ ան գիտէր, որ պատերազմի մէջ էր: Ուստի երբ կ'աղօթէր, Տիրոջ հարցուց, թէ որո՞ւ համար Աստուած զինք կը մղէր, որ բարեխօսէ: Միակ բանը, որ ան լսեց իր սիրտին մէջ այն էր, որ տարեց մարդու մը համար էր եւ որ անոր կեանքը վտանգի տակ էր: Ան մէկ ժամ աղօթեց եւ յետոյ զգաց, որ խաղաղութիւն եկաւ իր սիրտին մէջ:

Գրեթէ քանի մը վայրկեան ետք իր սենեակակիցը, որ նոյնպէս հաւատացեալ է, կարեւոր հեռաձայն մը կը ստանայ: Իր սենեակակիցը հեռաձայնին պատասխանելով կ'իմանայ, որ իր սիրելի մեծ հայրիկը այդ առաւօտ ժամը հինգին սրտի կաթուած անցուցած է, եւ անոր կեանքը հրաշքով խնայուած է: Անոր վիճակը կայունացած է այդ հեռաձայնէն միայն քանի մը վայրկեան առաջ, ճիշդ այն պահուն երբ ան խաղաղութիւն զգաց, որ աղօթելէն դադրի:

Ան կը փայլէր: Իր ամբողջ քրիստոնէական կեանքին ընթացքին անոր ըսած են, որ լեզուներուն ժամանակը անցած է, քանի որ անոնց կարիքը չկայ այլեւս: Ան ինչ բաներ փախցուցած էր, քանի որ մէկը պարզապէս Սուրբ Գիրքին չէր հաւատացած: Հիմա այլեւս զինք երբեք չէք կրնար համոզել հակառակին համար: Ան մէկ անգամ ընդմիջտ վճռած է, որ լեզուներով աղօթելը այսօր մեզի՝ հաւատացեալներու համար անհրաժեշտութիւն է:

Ես ասիկա անհամար անգամներ տեսած եմ: Բարեխօսութեան համար գործածուած լեզուներուն լաւագոյն օրինակներէն մէկը Եսթերին՝ մեր Աւստրալիոյ գրասենեակին տնօրէնին պատահած կացութիւնն է: Ան աղօթքի մեծ պատերազմիկ մըն է ինչպէս նաեւ ծառայող: Ինիսունական թուականներուն երբ ան Աստուածաշունչի դպրոց կը յաճախէր, առաւօտ մը, երբ իր տան գործերը կ'ընէր, իր ձեռքերը վերցուց եւ ըսաւ. «Տէ՛ր, այսօր ես աղօթելու բան մը չունիմ, ուստի եթէ ինծի պէտք ունիս, ահա՛ ես հոս եմ»:

Ան կ'ըսէ, որ յանկարծ աղօթելու մեծ բեռ մը զգաց: Ան իր նստասենեակին մէջ ծռեցաւ եւ լեզուները սկսան մեծ զօրութեամբ դուրս հոսիլ իրմէ: Ան իր հոգիով շարունակ կը տեսնէր չինացի տղամարդ մը աղտոտ գետինի մը վրայ ծունկի եկած ձեռքերը շրջանակաձեւ կը շարժէր, կարծէք կը մաքրէր զայն: Մինչ կ'աղօթէր, ան մղումը ունեցաւ պոռալու. «Ուրքի ելիր: ուրքի ելիր: Ուրքի ելիր»: Բաւական ժամանակ աղօթելէ ետք ան իր սիրտին մէջ ազատութիւն զգաց եւ իր տան գործերուն վերադարձաւ:

Մօտաւորապէս հինգ ամիս ետք Նոր Զելանտացի մարդ մը, որ Չինաստանի մէջ միսիոնար է, իրենց Աստուածաշունչի դպրոցը կու գայ եւ կը բաժնեկցի չինացի հովիւի մը պատմութիւնը, որ ուրիշ հովիւի մը հետ բանտին մէջ կը հալածուէր Չինաստանի մէջ: Միւս հովիւը այս չինացի հովիւին նայելով կ'ըսէ, որ Աստուած զինք բանտէն պիտի արձակէր: Ասիկա ունենալով իրենց սիրտին մէջ անոնք կը շարունակէին իրենց առօրեայ բանտի մաքրութեան գործերը ընել:

Շատ ժամանակ չանցած պահակը կ'որոշէ բոլոր բանտարկեալները իրենց խցիկները ուղարկել, բացի այդ հովիւէն: Հիմա ան մինակ էր այդ սենեակին մէջ եւ գետինը կը մաքրէր երբ յանկարծ ծայն մը կը լսէ, որ կ'ըսէր. «Ոտքի ելիր: Ոտքի ելիր: Ոտքի ելիր»: Չկարենալով իր լսածը անտեսել, ան ոտքի կը կանգնի եւ դէպի դուռը կ'երթայ: Զարմանալիօրէն դուռը կղպուած չէր, ուստի ան կը բանայ զայն եւ աննկատ կերպով խիստ հսկողութեան տակ եղող բանտէն դուրս կ'ելլէ, եւ երբ դուրս կ'ելլէ, դուրսը կեցած վարձակառք մը կը տեսնէ: Վարձակառքը կը նստի եւ կը հեռանայ այդ տեղէն:

Եսթերը շատ խանդավառուած էր՝ մտածելով, որ ասիկա կրնար ըլլալ այն բանը, որուն համար ան քանի մը ամիս առաջ աղօթած էր: Ուստի ան կը մօտենայ միսիոնարին (որուն ատկէ առաջ երբեք չէր հանդիպած իր կեանքին մէջ) անոր խօսելէն ետք, եւ կը յայտնաբերէ, որ ըստ իր աղօթքի օրագիրին, ատիկա ճիշդ այն օրն էր, որ ան իր նստասենեակին մէջ աղօթած էր:

Նաեւ Աստուածաշունչի դպրոցին ղեկավարներէն մէկը Եսթերին եւ միսիոնարին կը մօտենայ: Ան նոյնպէս կը յիշէ բեռ մը, որ Սուրբ Հոգին ամիսներ առաջ դրած էր իր վրայ՝ կարիքաւոր մարդու մը համար աղօթելու: Երբ ան թախանձագին լեզուներով կ'աղօթէ, ան ալ յստակ կերպով կը տեսնէ չինացի մարդ մը, որ բանտը կը գտնուէր: Միսիոնարը այդ չինական եկեղեցիին մէկ խմբային նկարը կը հանէ եւ Աստուածաշունչի դպրոցին ղեկավարը մատով ցոյց կու տայ այն մարդը, զոր լեզուներով աղօթած ատեն տեսած էր: Աւելորդ է ըսել, որ ատիկա բանտը գտնուող այդ աւագ հովիւն էր:

Այն ատեն Եսթերը եւ Աստուածաշունչի դպրոցին ղեկավարը իրենց աղօթքի օրագիրներուն մէջ գրած նոթերը կը բաղդատեն եւ կը յայտնաբերեն, որ ճիշդ նոյն օրն էր: Աստուած երկուքին ալ կը հաստատէ, որ անոնք մեծ բաժին ունէին այդ մարդուն ազատագրման մէջ, իբրեւ արդիւնք աղօթելու իրենց հնազանդութեան:

ԻՆՉՊԷՍ ՊԻՏԻ ՀԱԻԱՏԱՆՔ

Հապա եթէ Եսթերը սորված ըլլար, որ Աստուածաշունչին յայտնուելէն ետք լեզուներուն ժամանակը անցած է: Հապա եթէ ան սորված ըլլար, որ լեզուները բոլորին համար չեն: Այսօր որքան մարդիկ այս առիթը կը փախցնեն, քանի որ անոնք կը հաւատան մարդոց սորվեցուցածներուն, փոխանակ հաւատան Աստուածաշունչին սորվեցուցածներուն:

Մեծագոյն ողբերգութիւններէն մէկը, որ իմ ծառայութեանս տարիներուն տեսած եմ, այն է, որ բազմաթիւ քրիստոնեաներ Աստուծոյ Խօսքը կը մեկնաբանեն իրեց փորձառութիւններուն համաձայն, փոխանակ արտօնեն, որ Աստուծոյ Խօսքը տնօրինէ իրենց փորձառութիւնները: Աստուած մեր փորձառութիւններով սահմանափակուած չէ. Ան շատ աւելի մե՛ծ է:

Սուրբ Հոգիով լեցուելու իմ փնտռութիւնս մէջ ես հանդիպած եմ բազմաթիւ բարեմիտ քրիստոնեաներու, որոնք փորձած են զիս տարհանօղել լեզուներ խօսելէ: Յիսուսը իբրեւ իմ Տէրս ընդունելէս քանի մը ամիս ետք, համալսարանի ծառայութեան կողմէ կազմակերպուած առաջնորդներու ժողովի մը գացի, որ տպագրած էր այն նիւթերը, որոնք օգտագործուած էին՝ զիս փրկութեան առաջնորդելու համար: Ես միշտ երախտապարտ պիտի մնամ այդ խումբին:

Սակայն ժողովին ընթացքին ես ցնցուեցայ: Նախագահը իրաքանչիւր ղեկավարի հարցուց, թէ ինչ էր իրենց թիւ մէկ աղօթքի խնդրանքը այդ կիսամեակին համար: Երիտասարդ մը ըսաւ, որ ինք կ'աղօթէր, որ «Բ» միջին ունենայ: Ուրիշ մը ըսաւ, որ ան կ'աղօթէր իր սենեկակիցին փրկութեան համար: Յետոյ անոնք ինձի եկան եւ ես պարզապէս ըսի. «Ես կ'ուզեմ Սուրբ Հոգին ստանալ ինչպէս Աստուածաշունչին մէջ ըրին երբ նոր լեզուներով խօսեցան»:

Երբ այդ խօսքերը ըսի, գլխաւոր ղեկավարը արագօրէն եւ ջղագրգռութեամբ ըսաւ. «Ճո՛ն, հանդիպումէն ետք այդ մասին կը խօսինք»:

Մենք երբեք չխօսեցանք: Սակայն եղբայրութեան եղբայրս,

## ՀՕՐ ԽՈՍՏՈՒՄԸ

որ զիս Տիրոջ առաջնորդած էր, ժողովէն ետք զիս մէկ կողմ քաշեց եւ ըսաւ. «Ճո՛ն, անոնք նոր լեզուներով խօսելու չեն հաւատար»:

Իբրեւ նոր հաւատացեալ, ես զարմանքով անոր նայեցայ եւ ըսի. «Ի՛նչ, Աստուածաշունչին մէջ գրուածին չէ՞ն հաւատար»:

Ասիկա զիս ետ տարաւ, քանի որ նախկին յարանուանութիւնը, որուն կը պատկանէի, իրենց վարդապետութիւնը մեծ մասամբ հիմնած էին մարդոց սորվեցուցածներուն վրայ, փոխանակ՝ Աստուածաշունչին: Իրականութեան մէջ մեզի կը քաջալերէին, որ Աստուածաշունչ չկարդանք, այլ թոյլ տանք, որ մեր հովիւը զայն մեկնաբանէ մեզի համար: Ես տասնհինգ տարի եկեղեցի յաճախեցի եւ կը կարծէի, որ երկինք պիտի երթամ, երբ իրականութեան մէջ դէպի դժոխք կ'երթայի: Ուստի երբ իմ եղբայրութեան եղբօրս միջոցով Աստուծոյ փրկութեան ծրագիրը գտայ Աստուածաշունչին մէջ, որոշեցի, որ ես Աստուծոյ Խօսքին պիտի հաւատամ անկախ անկէ, թէ կը հասկնամ զայն կամ ոչ: Ատիկա Տիրոջ վախն է, եւ Տիրոջ վախը հասկացողութեան սկիզբն է (Տէն Սաղմոս 111.10):

## ՕՐՀՆՈՒԱԾ ԿԱՄ ՏԳԷՏ

Լաւ լուր մը ունիմ. Աստուծոյ կամքն է, որ դուք լեցուիք Իր Հոգիով եւ երկինքի՛ լեզուներով աղօթէք: Իրականութեան մէջ եթէ կ'ուզէք լսել Աստուծոյ սիրտին աղաղակը ձեզի համար, ատիկա հետեւեալն է.

«Կ'ուզեմ որ դուք ամէնքդ լեզուներ խօսիք [...]»  
(Ա.Կորնթացիներուն 14.5):

Կրնաք ըսել. «Պօղոս այդ խօսքերը կորնթացիներուն կ'ըսէ»:

Ո՛չ, մենք յստակօրէն կը կարդանք. «Առաջ ասիկա գիտցէք, թէ Սուրբ Գիրքին մէջ մարգարէութիւն մը երբեք մարգարէներէն չեկաւ» (Բ.Պետրոսի 1.20, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն), եւ թէ՛ «Բոլոր գիրքը Աստուծոյ շունչն է [Բոլոր Սուրբ գիրքերը Աստուծոյ ներշնչումով գրուած են]» (Բ.Տիմոթէոսի 3.16): Պարզ ասած,

ասոնք Պողոսի խօսքերը չեն կորնթացիներուն ուղղուած, այլ Տիրոջ խօսքերն են մեզի, քանի որ Աստուծոյ Խօսքը «կենդանի է եւ յաւիտենական» (Ա.Պետրոսի 1.23): Աստուած է, որ Իր զաւակներուն կ'ըսէ. «Կ'ուզեմ որ դուք ամէնքդ լեզուներ խօսիք»:

Երբեք պիտի չօրհնուիք բանով մը, որուն չէք հաւատար: Կ'ուզեմ ասիկա նորէն ըսել. «Աստուած մեր տրամաբանութենէն, պէտքէն կամ զգացումներէն չ'ազդուիր, այլ՝ մեր հաւատքէն»: Դուք պիտի տեսնէք, որ Յիսուս շարունակ մարդոց կ'ըսէ. «Ձեր հաւատքին պէս ըլլայ ձեզի»: Հաւատքը պարզապէս կը հաւատայ, որ այն, ինչ որ Աստուած կ'ըսէ, որ պիտի ընէ, կ'ընէ: Հաւատքը կու գայ Աստուծոյ խօսքերը լսելէն, ոչ թէ մարդուն սխալ համոզումներէն:

Շատ կարեւոր է, որ մենք քարոզենք եւ հաւատանք ճշմարտութեան եւ ոչ թէ փորձառութեան: Փորձառութիւնը ճշմարտութիւնը հիանալի կերպով հաստատող մըն է, բայց պէտք չէ ճշմարտութիւնը սորվեցնող ըլլայ: Սուրբ Հոգին է մեր Ուսուցիչը եւ Ան երբեք Աստուծոյ գրուած Խօսքին հակառակ բան մը պիտի չըսէ: Երբ կը հաւատանք Աստուծոյ Խօսքին, պիտի տեսնենք եւ պիտի ապրինք: Ուստի շատեր ասիկա հակառակ ձեւով կ'ընեն. անոնք կ'ուզեն նախ ապրիլ (փորձառութիւնը ունենայ) եւ յետոյ հաւատալ: Ատիկա դարձեալ կը նկարագրէ Յիսուսի խօսքերը Թովմասին: Մենք ունինք ընտրութիւնը մեր հաւատքը հիմնելու ուրիշներու փորձառութիւններուն վրայ կամ Անոր Խօսքին վրայ, որուն մասին գրուած է.

«Աստուած մարդ չէ, որ սուտ խօսի, ո՛չ ալ մարդու որդի, որ զղջայ. Ինք ըսաւ ու պիտի չընէ՞, կամ ինք խօսեցաւ ու պիտի չգործադրէ» (Թուոց 23.19):

Առ ի եզրակացութիւն, լեզուներով աղօթելու մասին Սուրբ Հոգին բոլորիս կ'ըսէ. «Ձեմ ուզեր, որ չզհտցող ըլլաք» (Ա.Կորնթացիներուն 12.1): Յետոյ Ան շարունակելով կը քննարկէ այն, ինչ որ մենք գրեցինք այս գլուխին մէջ եւ աւելին: Յետոյ այս բոլոր հարցերը քննարկելէ ետք Ան յստակօրէն կ'ըսէ.

## ՀՕՐ ԽՈՍՏՈՒՄԸ

«Բայց եթէ մէկը տգէտ է՝ թող տգէտ ըլլայ»  
(Ա.Կորնթացիներուն 14.38):

Այլ խօսքով, Ան Պողոսի միջոցով մեզի կ'ըսէ. «Լեզուներու հարցին հետ կապուած Ես Իմ կամքս յստակացուցի ձեզի: Եթէ որոշէք տգէտ մնալ, տգէտ պիտի ըլլաք եւ պիտի չօրհնուիք Իմ մատակարարումովս»: Վստահ եմ, որ Ան տրտմած էր երբ Պողոսի վրայ հանգչեցաւ, որ աստիկա գրէ, քանի որ Ան կանխատեսաւ այն մարդիկը, որոնք տարիներ ետք ասիկա քննարկումի առարկայ պիտի դարձնէին (ասիկա նոյնիսկ հարցում չէր առաջին եկեղեցիին օրերուն):

Դարձեալ, Ան տխրութեամբ մեզի կ'ըսէ, որ կրնանք մեր տգիտութեան մէջ մնալ, բայց եթէ մնանք, Անոր վերջին ակնարկութիւնը այս հարցին հետ կապուած հետեւեալն է.

«Լեզուներ խօսիլն ալ մի՛ արգիլէք»  
(Ա.Կորնթացիներուն 14.39):

Ահա զգուշացում մը, եթէ լսէք, որ մէկը լեզուներուն վրայ կը յարձակի, ան ուղղակի Տիրոջ դէմ անհնազանդութեան մէջ է: Աստուած գիտէր, որ ոմանք վերջին օրերուն կամ տգիտութեամբ կամ յամառութեամբ Իր ոչխարներուն պիտի ըսեն, որ լեզուներով խօսելու ժամանակը անցած է կամ աստիկա Աստուծմէ չէ:

Կ'աղօթեմ, որ դուք տեսնէք այն հիանալի նախախնամութիւնը, որ Աստուած Իր զաւակներուն տուած է երբ յաջորդ գլուխին կ'անցնինք եւ կը յայտնաբերենք այն հիանալի մտերմութեան լեզուն, որ Սուրբ Հոգին կու տայ անոնց, որոնք կը հաւատան:

*(Ծանօթութիւն. Եթէ Սուրբ Հոգիով չէք լեցուած, բացէք Յաւելուած Բ էջը. կ'ուզեմ աղօթել, որ Անոր լեցունութիւնը սրանաք):*

ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. Այս գլուխին սկիզբը հեղինակը կ'անդրադառնայ իր երիտասարդ հաւատքին երբ ան համալսարանի աշակերտ էր: Ան կը նկարագրէ, որ նոր կեանք կ'ապրէր, բայց կը զգար, որ բան մը կը պակսէր թէւ ան ջանասիրութեամբ կը կարդար Սուրբ Գիրքը: Դուք անցեալին նոյն կացութեան մէջ եղամ՞ծ էք կամ թերեւս նոյնիսկ ձեր ներկայի կեանքին մէջ:
2. Երբ այս դասին մասին կը մտածէք, թէ ինչ կը նշանակէ լեզուներով խօսիլ, ձեր համոզումները ինչպիսի՞ մարտահրաւերներու առջեւ կը գտնուին: Ինչպէս ազդեց ձեր վրայ այն լուրը, որ Աստուծոյ կամքն է, որ դուք Իր Հոգիով լեցուիք եւ երկինքի լեզուներով աղօթէք:
3. Դուք այս գիրքը կը կարդաք պատճառով մը՝ փորձառութիւն մը կամ դէպք մը ձեզ մղած է, որ քննէք, թէ ինչ կը նշանակէ Աստուծոյ մօտենալ: Կրնա՞յ ըլլալ, որ Ան ձեզի համար միջոց մը հայթայթած է, որ Իրեն ատելի մօտենաք այս գիրքին մէջ հիմա ձեր ուսումնասիրածին միջոցով: Կրնա՞յ ըլլալ, որ անձնական եւ բարեխօսական աղօթքի համար տրուած լեզուներու պարգեւը Տիրոջ հետ ձեր ընթացքին մէջ ձեր յաջորդ քայլը պիտի ըլլայ:



ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ԼԵԶՈՒՆ



Աստուծոյ իմաստութիւնը կամ խորհուրդը խորունկ ջուր է եւ  
յաճախ առեղծուած մըն է բնական միտքին համար:

**Ե**ս շարունակ գրած եմ ասիկա, բայց վստահ ըլլալու  
համար, որ ասիկա իրական պիտի դառնայ ձեր խոր  
էութեան մէջ, պիտի շարունակեմ կրկնել զայն՝ *Աստուած  
բուն կերպով կը փափաքի ձեզի հետ մտերմութիւն ունենալ:*  
Ան ձեր ընկերութեան ծարաւը ունի: Ան ոչ միայն կ'ուզէ ձեզի  
հետ յարաբերիլ, այլեւ կ'ուզէ, որ այդ յարաբերութիւնը ըլլայ  
ճոխ եւ հարուստ:

ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ ՀԱՂՈՐԴՈՒԻԼ ԻՐ  
ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

Այս առատ հաղորդութիւնը իրականանալու համար Ան  
մեզի համար ճամբայ մը բացած է՝ Իրեն հետ ընկերութիւն  
ընելու Ի՛ր մակարդակով: Բացատրեմ: Սուրբ Գիրքը մեզի  
կ'ըսէ.

«Վասնզի ան որ օտար լեզուով կը խօսի, ո՛չ թէ մարդոց կը խօսի, հապա Աստուծոյ» (Ա.Կորնթացիներուն 14.2):

Գիտենք, որ Պօղոսը չ'ականարկեր հանրային լեզուներու երկու դասակարգներէն որեւէ մէկուն, քանի որ երկուքին պարագային ալ մարդիկ մարդոց կը խօսին Աստուծոյ Խօսքը՝ խօսողին համար անձանօթ լեզուներով: Այս համարին մէջ Պօղոսը կը խօսի աղօթելու կամ Աստուծոյ հետ հաղորդուելու մասին: Երբ լեզուներով *կ'աղօթենք*, ուղղակի Աստուծոյ հետ կը խօսինք եւ ոչ թէ մարդոց: Պօղոս նաեւ կը գրէ. «Սուրբ Հոգին օգնութեան կը հասնի մեր տկարութիւններուն. քանզի ինչո՞ւ եւ ի՞նչպէս աղօթելու ենք՝ չենք գիտեր [...]» (Հռոմայեցիներուն 8.26, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն): Դարձեալ, Աստուծոյ հետ հաղորդուելու երկու անջատ խոչընդոտներ կան՝ յաճախ մենք չենք գիտեր ի՞նչ աղօթենք կամ երկրորդ՝ ի՞նչպէս աղօթենք:

Ասոր լաւագոյն օրինակը հետեւեալն է. եթէ Միացեալ Նահանգներու նախագահին գրասենեակը մտնէի, պիտի կարենայի՞ անոր հետ իր մակարդակին հաղորդակցիլ: Պատասխանը բացայայտօրէն ո՛չ է. ան պէտք է իմ հասկացողութեանս մակարդակին իջնէ: Ան երկրին գործունէութիւններուն մասին, ներառեալ բոլոր ապահովութեան հարցերը, որոնք հանրութեան հասանելի չեն, շատ անելի գիտէ, քան ես: Ան տեղեակ է երկրին բազմաթիւ ծրագիրներէն եւ նախագիծերէն՝ անոնց եզրերով եւ ծածկագիրներով, որոնք գաղտնի պէտք է մնան, քանի որ եթէ անոնք սխալ մարդոց ձեռքը իյնան, անոնք կրնան ազգային անվտանգութեան սպառնալ:

Ասոր զուգահեռ, եթէ տիեզերքի Թագաւորին գրասենեակը մտնեմ — Անոր գահին սենեակը — եթէ միայն իմ հասկացողութեամբս աղօթեմ, մեր հաղորդակցութիւնը սահմանափակ պիտի ըլլայ: Չեմ կրնար Տիրոջ հետ խօսիլ Իր մակարդակով, որովհետեւ Ան շատ անելի գիտէ, քան ես: Միակ միջոցը, որ Ան կրնայ ինձի հետ հաղորդակցիլ իմ հասկացողութեանս մակարդակին իջնելն է: Ինչպէս մեր վերի օրինակին մէջ, Ան շատ անելի գիտէ, քան ես տիեզերքի գործունէութիւններուն մասին, որոնք կը ներառեն

խորհուրդները, որոնք գաղտնի պահուած են տարբեր պատճառներով, պատճառներէն մէկը այն է, որ վստահ ըլլայ, որ խորհուրդները սխալ ձեռքերու մէջ պիտի չիյնան: Ասիկա յստակօրէն կ'երեւի Պօղոսի դիտողութեան մէջ.

«Աստուծոյ ծածուկ իմաստութեան մասին կը խօսինք խորհրդով, [որ թաքուն էր եւ մեզմէ ծածկուած կը մնար մինչեւ հիմա] որ աշխարհի ստեղծուելէն առաջ սահմանեց Աստուած մեր փառքին համար. որ այս աշխարհի իշխաններէն մէկը չճանչցաւ. քանզի եթէ ճանչցած ըլլային, ալ փառքերուն Տէրը խաչը չէին հաներ» (Ա.Կորնթացիներուն 2.7-8):

Թէեւ ասիկա որոշակիօրէն կը խօսի Տէր Յիսուսի խաչելութեան եւ յարութեան իմաստութեան եւ անոր յաջորդող փառքին մասին, ասիկա միայն մէկ օրինակ է, ուր Աստուած վստահ կ'ըլլայ, որ Իր իմաստութիւնը սխալ ձեռքերու մէջ չ'իյնար: Բայց ուրիշներ ալ կան: (Տէն Մատթէոս 7.6): Սուրբ Գիրքը մեզի կ'ըսէ, որ մենք պատերազմի մէջ ենք, եւ թշնամիները, որոնց դէմ կը պատերազմինք իշխանութիւններ, պետութիւններ, խաւար աշխարհին իշխանները, եւ հոգեւոր դիւային ուժեր են (Եփեսացիներուն 6.12): Բնական պատերազմի մէջ միասին կռուողներուն միջեւ գաղտնի հաղորդակցութիւն պէտք է ըլլայ: Նոյնն է պարագան Տիրոջ Զօրավարին եւ Անոր թագաւորութեան պատերազմիկներուն: Ինչ հոյակապ գաղտնի հաղորդակցութեան համար կապուելու միջոց մը տուած է Տէրը Իր զաւակներուն՝ թագաւորութեան բարօրութեան եւ մեր պաշտպանութեան համար: Թշնամին չի գիտեր, որ մենք ինչ բան կը խնդրենք Հօրմէն երբ լեզուներով կը խօսինք: Թերեւս դիւային ուժերը մեր կամ մեր սիրելիներուն վրայ յարձակելու համար ծրագիր մը կը մշակեն, բայց երբ լեզուներով կ'աղօթենք, յանկարծ հրեշտակային օգնութեան ռմբակոծում մը կը յայտնուի ի զարմանս դելերուն: Ատոր իբրեւ արդիւնք, դելերը սարսափահար կը փախչին նախքան անոնց յարձակումները յաջողին:

ԳԼԽԱԻՈՐ ՆՊԱՏԱԿԸ

Լեզուներով մեր աղօթած աղօթքի լեզուն միայն վտանգաւոր գիտութիւնը սխալ ձեռքերու մէջ իյնալէն պահելու համար չէ: Անոր գլխաւոր նպատակը մտերմութիւնն է: Կինս եւ ես երկար ատենէ միասին ենք եւ այնքան մտերմացած ենք, որ մեզի յատուկ հաղորդակցութիւն մը մշակած ենք: Ան կրնայ մարդոցմով լեցուն սենեակի մը մէջ ինծի բաներ ըսել, որ ուիրշ ոչ ոք կը հասկնայ: Մենք մտերմութեան լեզու մը զարգացուցած ենք: Ասիկա միայն ամուսիններու եւ կիներու յատուկ չէ, այլ բոլոր անոնց, որոնք մտերիմ յարաբերութիւններ ունին: Ատիկա կրնայ ըլլալ մարդոց միջեւ, որոնք իրենց ամբողջ կեանքը բարեկամներ եղած են, անոնք, որոնք տարիներ միասին աշխատած են, անոնք, որոնք միասին պատերազմի գացած են, եւայլն: Եզրակացութիւն՝ կայ բարեկամութեան լեզու մը, որ կը ձեւաւորուի, որ անոնց յատուկ է:

Նոյն ձեւով, Աստուած մեզի տուած է խոր մակարդակի վրայ Իրեն հետ մտերմօրէն հաղորդակցելու եւ ընկերութիւն ընելու ձեւ մը. մակարդակ մը, որուն մեր բնական, չփրկուած միտքը երբեք չի կրնար հասնիլ: Սաղմոսողը կանխատեսեց ատիկա եւ գրեց. «Անդունդը անդունդին կը կանչէ քու յորձանքներուդ ձայնովը» (Սաղմոս 42.7): Այս հաղորդակցութիւնը կը բաղդատուի կենդանի յորձանքներու հետ: Յիսուս կ'ըսէ, որ մեր սիրտերէն «[...] կենդանի ջուրի գետեր պիտի բխին»: Այս ըսաւ Հոգիին համար, որ իրեն հաւատացողները պիտի առնէին [...]» (Յովհաննէս 7.38-39): Տիրոջ հետ մեր մտերիմ հաղորդութիւնը հոսող կենդանի ջուրերու կը նմանցուի: Օ՛, ինչ հիանալի բան տուած է մեզի Սուրբ Հոգին: Ինչ հիանալի կարողութիւն տուած է մեզի: Երբ այդ մասին կը մտածենք, կ'ապշիւնք:

Եկէք աւելի մանրամասնօրէն ուսումնասիրենք, քանի որ հետզհետէ աւելի լաւ բաներ կը յայտնաբերենք: Պօղոս շարունակելով կ'ըսէ այն հաւատացեալին մասին, որ լեզուներով կ'աղօթէ.

«[...] Որովհետեւ ո՛չ ոք զինք կը հասկնայ, թէպէտեւ անիկա Հոգիին զօրութեամբ խորհուրդներ կը պատմէ» (Ա.Կորնթացիներուն 14.2):

Ինչ ըսել կ'ուզե Պօղոս «խորհուրդներ» բառով: Յունարէն բառը «մուսթէրիան» (musterion) բառն է: Տապլեու.Ի.Վայնը, որ յունարէն Նոր Կտակարանի բառերու մասնագէտ է, այս բառին մասին կը գրէ. «Նոր Կտակարանին մէջ ատիկա կը նշանակէ, ոչ թէ խորհրդաւոր բան մը (ինչպէս անգլերէն բառին պարագային է), այլ այն, ինչ որ անօժանդակ բնական ընկալումին տարողութենէն դուրս ըլլալով, միայն աստուածային յայտնութեամբ կրնայ գիտցուիլ, եւ կը յայտնուի ... միայն անոնց, որոնք Անոր Հոգիով լուսաւորուած են: Սովորական իմաստով 'խորհուրդ' կը նշանակէ պահուած գիտելիք. Անոր աստուածաշնչական իմաստն է՝ յայտնուած ճշմարտութիւն»:

Ուստի ահա լեզուներով աղօթելու բազմաթիւ առաւելութիւններէն մէկը: Սուրբ Հոգի Աստուած գիտէ Յիսուսի եւ Հօր միտքը, քանի որ անոնք Մէկ են: Ան նաեւ գիտէ, որ ինչ կը պակսի մեզի, քանի որ Ան մեր մնայուն Ընկերակիցն (Հաղորդակիցն) է: Ուստի Ան կը միջնորդէ մեզի տալով երկինքի լեզուով բառեր՝ կատարեալ կերպով խնդրելու, փնտռելու կամ հաղորդակցելու համար: Օ՛, ինչ հիանալի: Թերեւս կը մտածէք՝ բայց ես չեմ հասկնար ինչ կ'ըսեմ երբ լեզուներով կ'աղօթեմ: Այո՛, եւ այս պատճառով Պօղոս կ'ըսէ.

«Անոր համար ան որ օտար լեզուով կը խօսի, աղօթք թող ընէ որ թարգմանէ ալ: Քանզի եթէ ես աղօթք ընեմ օտար լեզուով, իմ հոգիս աղօթք կ'ընէ, բայց միտքս անպտուղ է» (Ա.Կորնթացիներուն 14.13-14):

Ուստի ըլլայ ատիկա խնդրանք, բարեխօսութիւն կամ պարզապէս Աստուծոյ հետ հաղորդակցութիւն, եթէ Սուրբ Հոգիէն խնդրեմ, որ լուսաւորութիւն բերէ իմ հասկացողութեանս այն բաներուն վերաբերեալ, որ Ան իմ հոգիս կու տայ, որ աղօթեմ, Ան պիտի ընէ՛ ատիկա: Ոչ միայն իմ հոգիս պիտի վայելէ ընկերակցութիւնը, այլեւ՝ իմ անձս (շունչս):

ՅԱՅՏՆՈՒԱԾ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ ՏՆՏԵՍԵԼ

Շատ անգամ այս ընկերության մէջ Տիրոջ յայտնութիւնները կու գան աստուածաշնչական համարներէ, որոնք յանկարծ կը կենդանանան, եւ այս ճշմարտութիւններն են, զորս ես գրած եւ սորվեցուցած եմ ծառայութեան տարիներուն: Սակայն շատ ատելի կայ, զորս ես տակաւին չեմ սորվեցուցած:

Կրնաք դուք ձեզի հարցնել, թէ արդեօք ես ինչո՞ւ զանոնք չեմ սորվեցուցած: Պատճառը այն է, որ ժամանակը ճիշդ չէ, կամ Աստուած կ'ուզէ, որ Իր ժողովուրդին ուրիշ բան մը ըսուի եւ շեշտուի: Երբ մենք կը խօսինք իբրեւ թագաւորութեան դեսպանները, պէտք է յիշենք, որ մենք կը խօսինք Աստուծոյ պատգամներուն պէս, եւ կան բաներ, զորս Ան կ'ուզէ, որ խօսուին, եւ ուրիշ բաներ, որոնք այդ յատուկ ժամանակին պէտք չեն խօսուին:

Երբեք պիտի չմոռնամ այն ժամանակը երբ ատիկա դժուար ձեռով սորվեցայ: Ես պիտի հանդիպէի Աստուծոյ մէկ մարդուն, որ իր երկրին մէջ շատ ճանչցուած էր: Ես լսած էի անոր ծառայութեան մասին եւ հիացած էի անով եւ շատ կը փափաքէի անոր հանդիպիլ: Ուրիշ հովիւ մը դասաւորեց, որ մենք հանդիպինք: Ես շատ խանդավառուած էի: Ուստի մենք գիշեր մը ընթրիք-հանդիպում մը ունեցանք — հովիւը, Աստուծոյ մարդը, եւ մեր կիները: Ընթրիքին ընթացքին ես բաժնեկցեցայ ամենախորունկ յայտնութիւնները, զորս Աստուած տուած էր ինծի, զորս միտքիս մէջ ունէի, եւ ատիկա ըրի՝ Աստուծոյ մարդը տպաւորելու համար: (Այդ ժամանակ ես գիտակցաբար ասոր մասին չէի մտածեր, բայց ետ նայելով գիտեմ, որ ատիկա էր իմ շարժառիթս — ինչ տհասութիւն):

Այդ գիշեր հովիւը մեզ ինքնաշարժով մեր պանդոկը տարաւ: Կինս եւ ես ուժասպառ էինք. շատ երկար օր մըն էր: Սակայն թէեւ յոգնած էի, հոգիս մէջ զգացում մը կար, որ զիս շատ անհանգիստ կ'ընէր: Գիտէի, որ Տէրը կ'ուզէր, որ աղօթեմ, ուստի կնոջս ըսի, որ ինք քնանալու երթայ առանց ինծի: Այդպէս ըրաւ, եւ ես դէպի մեր պանդոկին պատշգամը գացի: Հագիւ ոտքս պատշգամին շեմին դրի, Սուրբ Հոգիին ձայնը լսեցի, որ խստօրէն կ'ըսէր. «Ուրեմն թագաւորը իր տան մէջ գտնուող բոլոր գանձերը ցուցնոց այս գիշեր»:

Յանկարծ շատ յուսալքուած զգացի: Ամբողջովին ցնցուեցայ, ինչպէս նաեւ ամչցայ: Գիտէի, որ Սուրբ Հոգին կ'ականարկէր Եզեկիայի սխալին: Մարդիկ իրեն այցելեցին եւ ինք ուզեց զանոնք տպաւորել եւ կը կարդանք.

«Եզեկիա ատոնց համար ուրախացաւ եւ իր թանկագին բաներուն տունը, արծաթն ու ոսկին ու խունկերը եւ պատուական իւղը ու իր զէնքերուն բոլոր տունը եւ իր գանձերուն մէջ բոլոր գտնուածը ցուցուց: Իր տանը մէջ եւ իր բոլոր տէրութեանը մէջ բան մը չմնաց, որ Եզեկիա անոնց չցուցնէ» (Եսայի 39.2):

Իր բոլոր գանձերը անոնց ցոյց տալէ ետք Եսայի մարգարէն Տիրոջմէն կշտամբանք մը բերաւ Եզեկիային: Ես նոյնը զգացի: Գիտեմ, որ այդ գիշեր ես Աստուծոյ ինծի ցոյց տուած ճշմարտութիւնները կամ գանձերը ըսի՝ այդ մարդը տպաւորելու համար:

Յետոյ Աստուած ինծի խստութեամբ ըսաւ. «Տղան, ես Իմ թանկագին ճշմարտութիւններս քեզի չյայտնեցի, որ դուն ասդին անդին երթաս եւ զանոնք դուրս թափես ամէն անգամ որ ատիկա քեզի յարմար երեւի: Ատոնք տպաւորելու համար չեն տրուած քեզի: Դուն Իմ քեզի տուածիս տնտեսն ես եւ պէտք չէ խօսիս, բացի եթէ քեզ մղեմ»:

Ես շուտով զղջացի եւ ներում խնդրեցի եւ բեռը վերցուեցաւ եւ ես անմիջապէս անկողին գացի խաղաղութեամբ: Անոր ողորմութիւնը հիանալի է:

Եթէ իմաստուն գտնուինք, մեր ներքին շրջանակի բարեկամները կ'ընտրենք այնպէս մը, որ անոնք ըլլան մարդիկ, որոնք անզգուշութեամբ ռեւէ մէկուն չեն պատմեր այն, ինչ որ գաղտնիք է մեր միջեւ: Մտերիմ բարեկամները իրարու մասին իրենց գիտցածներուն հետ իմաստութեամբ կը վարուին: Եթէ բարեկամ մը շարունակ այս մէկը կը խախտէ, մենք պէտք է դադրինք անոր հետ բաներ բաժնեկցելէ, գիտնալով, որ անոնք այլեւս անոր համար թանկարժէք չեն նկատուիր: Նոյնն է պարագան Տիրոջ գաղտնիքներուն: Եթէ կ'ուզենք, որ Ան Իր սիրտը բանայ մեզի, պէտք է զգայուն ըլլանք, որ Ան ինչ կ'ուզէ եւ ե՞րբ կ'ուզէ, որ մենք բաժնեկցինք:

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՈՐՀՈՒՐԴԸ ԴՈՒՐՍ ԲԵՐԵԼ

Երբ ես կ'աղօթեմ կամ Աստուծոյ հետ լեզուներով կը հաղորդակցիմ, կը յայտնաբերեմ, որ յանկարծ գաղափարներ, յայտնութիւններ, իմաստութիւն կամ ուսուցումներ միտքս կու գան: Լաւագոյն ձեւը, որ կրնամ ատիկա նկարագրել այն է, որ անոնք պարզապէս փրփրելով վեր կ'ելլեն բանտարկուած օդի պէս, որ ծովուն խորերէն կ'արծակուի եւ դէպի մակերես կ'ելլէ: Գաղափարները իմ ներքին մարդուս խորերէն փրփրելով վեր կ'ելլեն եւ իմ միտքիս կամ հասկացողութեանս մէջ կը յայտնուին: Սուրբ Գիրքը մեզի կ'ըսէ.

«Մարդուն հոգին Տէրոջը լոյսն [մումն] է, սրտին բոլոր շտեմարանները կը քննէ» (Առակաց 20.27):

Պէտք է ի մտի ունենանք, որ Սուրբ Հոգին մեր միտքին չի խօսիր, այլ՝ մեր հոգիին: Ատիկա մեր էութեան այն մասն է, որ Ան կը լուսաւորէ: Երբ Հոգիով կ'աղօթենք եւ մեկնաբանութիւն (թարգմանութիւն) կը խնդրենք, Աստուծոյ իմաստութիւնը կամ խորհուրդը փրփրելով վեր կ'ելլէ մեր սիրտէն դէպի մեր հասկացողութեան կամ միտքին մարզը: Սուրբ Գիրքը մեզի կ'ըսէ.

«Մարդու մը սրտին խորհուրդը խորունկ ջուրերու պէս է, բայց խելացի մարդը զանիկա դուրս կը հանէ» (Առակաց 20.5):

Ինչ է խորհուրդը: Ատիկա իմաստութիւն է, որ յատուկ կացութեան մը մէջ կը կիրարկուի: Ինչհիւ մարդիկ խորհրդատուներու քով կ'երթան: Ստանալու համար իմաստութիւն մը, որ իրենց համար խորհրդաւոր է, որ իրենք պէտք ունին որոշ պարագայի մը համար:

Նկատի առէք, միակը, որ կրնայ Աստուծոյ խորհուրդը դուրս հանել, որ կը նմանցուի խորունկ ջրորէն եկող կենդանի ջուրին, խելացի մարդն է, կամ ան, որ գիտէ «խորհրդատու»-ին ճամբաները: Սուրբ Հոգին գիտէ թագաւորութեան բոլոր խորհուրդները (չյայտնուած խորհուրդ,



գիտութիւն, եւ իմաստութիւն): Դարձեալ վերաքաղելով այն, ինչ որ Յիսուս աղաղակեց եւ ըսաւ.

«Ան՝ որ ինծի հաւատայ՝ ինչպէս գիրքը կ'ըսէ. 'Անոր փորէն կենդանի ջուրի գետեր պիտի բխին'»: Այս ըսաւ Հոգիին համար, որ իրեն հաւատացողները պիտի առնէին» (Յովհաննէս 7.38-39):

Ըստ Առակաց գիրքին՝ մեր սիրտէն դուրս եկող ջուրը Աստուծոյ խորհուրդը կամ խորհուրդներն են, եւ Յիսուս պարզօրէն կ'ըսէ, որ ատոր աղբիւրը Աստուծոյ Հոգին է: Ան կեանքի ջուրի աղբիւրն է (Տէս Երեմիա 2.13): Հիմա ուշադրութեամբ կարդացէք Պօղոսին ըսածը.

«[...]Աստուծոյ ծածուկ իմաստութեան [կամ խորհուրդին] մասին կը խօսինք խորհրդով [...] որպէսզի մենք ճանչնանք այն բաները, որոնք Աստուծմէ տրուեցան մեզի. որոնց մասին կը խօսինք ոչ թէ մարդկային իմաստութեան սորվեցուցած խօսքերովը, հապա Հոգիին սորվեցուցածներովը եւ հոգետոր բաները հոգետորի հետ կը յարմարցնենք» (Ա.Կորնթացիներուն 2.7,12-13, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Ուստի Աստուծոյ իմաստութիւնը կամ խորհուրդը խորունկ ջուր է եւ յաճախ բնական միտքին համար խորհուրդ (գաղտնիք) մըն է: Սակայն Յիսուս մեզի կ'ըսէ, որ այս կենդանի ջուրը Սուրբ Հոգիէն պիտի ելլէ: Ինչպէս: Պօղոսը յստակօրէն կ'ըսէ մեզի.

«Վասնզի ան որ օտար լեզուով կը խօսի, ո՛չ թէ մարդոց կը խօսի, հապա Աստուծոյ. վասնզի մէկը չկայ որ իմանայ, բայց անիկա հոգիով խորհուրդները կը յայտնէ» (Ա.Կորնթացիներուն 14.2, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Ահա՛: Այդպէս է, որ խելացի մարդը Աստուծոյ խորհուրդը դուրս կը հանէ: Որքան յաճախ ես Աստուածաշունչին մէջ եկած եմ տեղեր, որոնք ինծի համար հանելուկ եղած են: Միտքս կու գան հարցումներ, որոնց պատասխանը

չունիմ: Չանոնք հասկնալը ինձի համար *խորհուրդ* մըն է: Գրեթէ միշտ ես կ'ըսեմ. «Սուրբ Հոգի՛, ես չեմ հասկնար ասիկա, հաճիս ցոյց տուր ինձի ...»: Յետոյ պարզապէս լեզուներով կ'աղօթեմ եւ կամ այն ատեն կամ ժամանակ մը ետք, լեզուներով աղօթելէ դադրելէս եւ աղօթքի ներքին սենեակէս դուրս ելլելէս ետք, պահուած ճշմարտութեան յայտնութիւնը փրփրելով վեր կ'ելլէ՝ դէպի իմ միտքս կամ հասկացողութիւնս: Օ՛, ինչ հիանալի է ատիկա:

Բազմաթիւ անգամներ երբ գիրք մը կը գրեմ, ես հանդիպած եմ փակուղիի մը: Այն ուղղութիւնը, որով պէտք է շարունակեմ, *խորհուրդ* (առեղծուած) մը եղած է ինձի համար: Այն ատեն ես այնոչէս կ'ելլեմ եւ կը սկսիմ լեզուներով աղօթել եւ ժամանակի ընթացքին, ընդհանրապէս քանի մը վայրկեան ետք, իմաստութիւնը դուրս կու գայ կարծէք յանկարծ բացուած ամբարտակ մը ըլլար, եւ ես քանի մը ժամ եւս կը մեքենագրեմ:

Երբ ամուրի էի, ինձի համար *խորհուրդ* (գաղտնիք) էր, որ որո՞ւ հետ պիտի ամուսնանամ: Իբրեւ ամուրի Քրիստոնեայ տղամարդ ասպած տարիներուս, երեք աղջիկներ շատ սիրած (հաւնած) եմ, բայց Հոգիով աղօթելով ժամանակ անցընելէս ետք, գիտէի, որ Աստուած յստակօրէն «ո՛չ» կ'ըսէր: Յետոյ ես հանդիպեցայ Լիսային եւ մէկ ամիս ես ամէն օր կէս ժամ լեզուներով աղօթեցի մեր յարաբերութեան համար: Այդ աղօթքներուն ընթացքին Աստուած ինձի շատ զօրաւոր «այո՛ր» մը ըսաւ, եւ ատկէ ետք բազմաթիւ հաստատումներ ալ տուաւ: Սակայն պէտք է ըսեմ, որ նախքան այդ հաստատումները ստանալս, ես ամէն կասկածէ վեր գիտէի, որ ան պիտի ըլլար իմ զոյգս, քանի որ երբ այդ մասին լեզուներով կ'աղօթէի, ատիկա յստակ կ'ըլլար ինձի համար եւ խաղաղութիւն կը զգայի:

Եղած են ժամանակներ երբ իմ կեանքիս կամ ինձի մօտիկ անձի մը կեանքին մէջ յայտնուած բանի մը մասին հասկացողութիւն չեմ ունեցած: Ատիկա *խորհուրդ* մըն է ինձի համար: Ես պարզապէս Սուրբ Հոգիին կը հարցնեմ, որ այդ պարագային վերաբերեալ Իր իմաստութիւնը կամ տեսակէտը ցոյց տայ ինձի: Ի հարկէ բաւական լեզուներով աղօթելէ ետք, եթէ ատիկա տեղեկութիւն մըն է, որ Ան կ'ուզէ, որ ունենամ, կու գայ:

## ՄՏԵՐՄՈՒԹԵԱՆ ԼԵԶՈՒՆ

Եղած են պարագաներ, երբ իմ ընտանիքիս որոշ մէկ անդամը աղօթքի պէտք ունեցած է եւ աստիկա իմ գիտակցութենէս (հասկացողութենէս) պահուած է, բայց Աստուծոյ Հոգին իմ վրաս հանգչած է, որ այդ ընտանիքի անդամին համար լեզուներով աղօթեմ եւ հետագային ես տեղեկացած եմ այն աստուածային օգնութեան կամ մտասի կանխումին մասին, որ ան ստացած է:

*Խորհուրդները* բաներ են, որոնք մեր բնական միտքին համար պահուած են: Ատոնք կրնան ըլլալ՝ զոր եկեղեցին պիտի երթամ, զոր ծառայութեան պէտք է մասնակցիմ, զոր տունը պէտք է գնեմ, ինչպէս պէտք է ազդու կերպով աղօթեմ նախագահին եւ ուրիշ ղեկավարներու համար, կամ ինչպէս պէտք է ազդու կերպով աղօթեմ հովիւիս համար: Ինչպէս գիտէք, ցանկը անվերջ է:

## ԱՍՏՈՒԾՈՅ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ ԳԻՏՆԱԼՈՒ ՄԷՋ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ

*Խորհուրդին* այն մարզը, որ հաւատացեալներուն մեծ մասը կ'ընկնէ, ուղղութիւնն է: Աստիկա է հիմնական պատճառը, որ մարդիկ խորհրդատուներու կը դիմեն: Բայց ես հիանալի լուր մը ունիմ ձեզի համար: Դուք այլեւս երբեք պէտք պիտի չունենաք անգամ մը եւս մտահոգուելու, որ ինչ պէտք է ընէք: Աստուած կը խոստանայ. «Եթէ ձեզմէ մէկը իմաստութենէ [*ինչ ընել*] պակասած ըլլայ, թող խնդրէ Աստուծմէ՝ որ ամենուն առատապէս կու տայ ու չի նախատեր՝ եւ անոր պիտի տրուի» (Յակոբոսի 1.5): Մենք կրնանք կատարեալ ձեռով խնդրել: Ինչպէս: Մեր կացութեան մասին լեզուներով աղօթելով: Ես դժուար կացութիւններու մէջ եղած եմ ասկէ առաջ, ուր չեմ գիտցած, որ ինչ պէտք է ընեմ, եւ յետոյ լեզուներով աղօթած եմ, եւ ամէն անգամ ներշնչեալ գաղափար մը փրփրելով վեր ելած է իմ սիրտէս եւ աստիկա այն իմաստութիւնն էր, որուն ես պէտք ունէի այդ կացութեան համար:

Տարիներու ընթացքին մենք այս ձեռով գործած ենք ծառայութեան մէջ: Երբ ուղղութիւն չեմ ունեցած, որ ինչ պէտք է ընեմ, որոշ ժամանակ մը լեզուներով աղօթած

եմ եւ յանկարծ աստուածային ներշնչեալ գաղափարներ սկսած են հոսիլ: Կինս եւ ես տարիներ առաջ սկսանք այս ծառայութիւնը. մեր տուած բոլոր կարեւոր որոշումները Հոգիով աղօթելէն յառաջ եկած են: Այսօր մենք ունինք երեսունէն աւելի պաշտօնեաներ եւ երեք ցամաքամասերուն վրայ գրասենեակներ: Աստուած մեզի տուած է առանձնաշնորհումը միլիոնաւոր կեանքերու դպչելու Իր Խօսքով եւ ներկայութեամբ: Տասնչորս տարուան ընթացքին մենք պէտք չենք ունեցած դրամ փոխ առնելու եւ այժմ ունինք առատ ֆիզիքական եւ անձնակազմի ունեցուածք, որպէսզի ազդու կերպով օգնենք Աստուծոյ ժողովուրդին: Պատճառը այն է, որ Աստուած կ'ըսէ.

«Ես եմ քու Տէր Աստուածդ, որ քեզի օգտակար եղածը կը սորվեցնեմ, քալելու ճամբուդ մէջ քեզի կ'առաջնորդեմ: Երանի՜ թէ իմ պատուիրանքիս մտիկ ընէիր: Այն ատեն քու խաղաղութիւնդ՝ գետի պէս ու արդարութիւնդ ծովուն ալիքներուն պէս պիտի ըլլար» (Եսայի 48.17-18):

Կրնամ անկեղծօրէն ըսել, որ մեր խաղաղութիւնը գետի պէս հոսած է: Մենք գտնուած ենք ժամանակներու մէջ երբ այնպէս կը թուէր, որ պէտք է կատարեալ խուճապի մէջ ըլլայինք՝ դատելով մեզ շրջապատող պարագաներէն: Սակայն երբ լեզուներով աղօթած ենք եւ մեր գործերը Անոր յանձնած ենք, խաղաղութիւնը սկսած է առատօրէն լեցնել մեր կեանքերը: Լեզուներով աղօթելու մասին կը կարդանք.

«Յիրաւի այս ժողովուրդին հետ չհասկցուելու շրթունքով եւ օտար լեզուով պիտի խօսի: Քանզի անոնց ըսաւ. 'Յոգնածը հանգստացնելու միջոցը ասիկա է ու մխիթարութիւնը ասիկա է' [...]» (Եսայի 28.11-12):

Անոնք, որոնք խաղաղութիւն չունին, հանգիստ չունին: Այն հանգիստը, որուն մասին Ան կը խօսի այս համարին մէջ, այն խաղաղութեան արդիւնքն է, որ կը հոսի գետի պէս: Ես կրնամ պատմել տարիներու ընթացքին պատահած անհամար պատմութիւններ՝ այս կէտը լուսաբանելու

համար, բայց միտքս յատուկ կացութիւն մը կու գայ: Ինծի համար շատ դիւրին պիտի ըլլար ամբողջ խաղաղութիւնս կորսնցնել, քանի որ չէի գիտեր, որ ինչ պէտք է ընեմ: Այս կացութիւնը պատահեցաւ երբ ես Մեքսիքո ճամբորդեցի՝ անտարանչական ժողովի մը մէջ քարոզելու համար: Մէկ գիշերուայ անտարանչութեան համար օդանաւով Մոնթերէյ քաղաքը գացի: Ամբողջ օրը լեզուներով աղօթած էի եւ հոգիով տեսիլք մը տեսայ, ուր պայծառ լոյս մը երկինքէն այդ դահլիճին վրայ կը հոսէր, ուր մենք այդ գիշեր պիտի ծառայէինք: Տէրը իմ սիրտիս խօսեցաւ եւ ըսաւ. «Ասիկա Իմ փառքս է, որ այս գիշեր պիտի դրսեւորուի»:

Այդ գիշեր այդ ծառայութիւնը համադրող հովիւր եւ ես խանդավառութեամբ ինքնաշարժով դէպի այդ սրահը գացինք: Անոր եկեղեցին մեծ ջանք թափած էր՝ այդ անտարանչութեան պատրաստուելու համար: Երբ ծառայութեան սկսելէն տասնհինգ վայրկեան առաջ հասանք, ես նկատեցի, որ բարկացած դէմքով մարդ մը, որ իրեն ընկերակցող երկու զինեալ պահակներ ուներ, հովիւին մօտեցաւ: Ան հովիւին հետ սպաներէնով խօսեցաւ, եւ յստակ էր, որ ազնիւ ոճով չէր խօսեր: Յետոյ հովիւր ինծի մօտեցաւ եւ ըսաւ. «Ճո՛ն, դուն պիտի չկարենաս քարոզել այս գիշեր»:

Ըսի. «Ինչո՞ւ»:

Ըսաւ. «Այդ մարդը պետական բարձրաստիճան պաշտօնեայ մըն է, եւ Մեքսիքոյի մէջ օրէնք մը կայ, որ կ'ըսէ՝ դուն չես կրնար անտարանը քարոզել Մեքսիքոյի մէջ եթէ Մեքսիքոյի քաղաքացի չես: Այդ օրէնքը հազուադէպօրէն կը կիրարկուի, բայց այս մարդը կը պնդէ, որ մենք հնազանդինք անոր: Եթէ չհնազանդիս, ինքզինքդ լուրջ հարցի մէջ կրնաս գտնել: Իրականութեան մէջ ան կ'ուզէ անմիջապէս քեզի հետ խօսիլ»:

Միտքս անմիջապէս Պետրոսը եւ Յովհաննէսը եկան, որոնց ըսած էին ղեկավարները, որ անտարանը չքարոզեն, բայց անոնք չհնազանդեցան, քանի որ ատիկա Աստուծոյ Խօսքին հակառակ էր: Ուստի հովիւին ըսի. «Անկարելի է, որ այս մարդը կարենայ կեցնել այն, ինչ որ այսօր կէսօրէ ետք աղօթքի ընթացքին Աստուած ինծի ցոյց տուաւ, որ պիտի պատահի: Ասիկա քու եկեղեցիիդ պիտի ազդէ: Որովհետեւ

եթէ պիտի չազդէ, երբ ան այստեղէն հեռանայ, ես պիտի քարոզեմ: Ես մինչեւ հոս չեկայ, որպէսզի նստիմ եւ ոչինչ ընեմ: Բայց եթէ ասիկա բացասական ազդեցութիւն պիտի ունենայ քու վրայ, չեմ քարոզեր»:

Ըսաւ. «Ճո՛ն, այս մարդը կրնայ մեծ հարց ստեղծել մեր եկեղեցիին համար, ուստի կը կարծեմ, որ լաւագոյնը այն է, որ մենք ընենք այն, ինչ որ ան կ'ըսէ»: Ես տեղի տուի հովիւին խորհուրդին եւ մենք պետական պաշտօնեային քով գացինք:

Առաջին բանը, որ այս մարդը ըրաւ, ինծի նայեցաւ եւ կոպիտ կերպով ըսաւ. «Սպաներէն կը խօսիմ»:

«Ո՛չ, պարո՛ն»,— պատասխանեցի ես:

Յետոյ ան ըսաւ. «Մէկ բան պիտի ըսեմ քեզի: Դուն այս ժողովուրդին միայն կրնաս խօսիլ զքօսաշրջիկութեան հետ կապուած նիւթեր»: Յետոյ ան դարձաւ եւ շարունակեց խստօրէն հովիւին հետ սպաներէնով խօսիլ. ամբողջ ժամանակը զինեալ պահակները մեզի կը նայէին՝ իրենց դէմքերուն վրայ շատ վախազդու նայուածքներով: Երբ այդ պետական պաշտօնեան վերջացուց հովիւը ազդարարելը, անոնք մեկնեցան:

Հովիւը շատ ցնցուած էր եւ ներողութիւն խնդրեց ինձմէ, որ պիտի չկարենայի ծառայել, եւ սրահ մտաւ՝ ծառայութեան համար վերջին պատրաստութիւնները ընելու համար:

Այդ պահուն ես շատ նեղացած էի: Գիտէի, որ Աստուծոյ խորհուրդին պէտք ունիմ. ինչ ընելիքս ինծի համար *խորհուրդ* մըն էր (չէի գիտեր ի՞նչ ընեմ): Ուստի սրահէն դուրս ելայ եւ կէս մը առանձնացած տեղ մը տեսայ, ուր կրնայի աղօթել: (Ես քաղաքին կեդրոնն էի, ուստի բոլորովին առանձնացած տեղ մը չկար): Գիտէի, որ Աստուծոյ խորհուրդը դուրս հանելու ձեւը Հոգիով աղօթելն էր: Ուստի սկսայ համարձակօրէն լեզուներով խօսիլ: Քանի մը հոգի քովէս անցան, բայց մտածեցի, որ հաւանաբար անոնք կը կարծէին, որ ես օտար մըն եմ, որ շրջելով ես ինծի կը խօսիմ:

Քանի մը վայրկեան լեզուներով խօսելէ ետք Աստուծոյ խաղաղութիւնը սկսաւ լեցնել հոգիս: Գրեթէ տասնհինգ վայրկեան շարունակեցի եւ յանկարծ այս միտքը ծագեցաւ

սիրտիս մէջ. լսեցի. «Մէկ կողմ դիր Աստուածաշունչդ եւ այս մարդոց խօսիր ամենակարեւոր Զբօսաշրջիկին մասին, որ երբեւէ այցելած է Մեքսիքո»:

Ես խանդավառութենէս ցատկեցի եւ բարձրաձայն բացագանչեցի. «Եղան, եղան. ան ինձի ըսաւ, որ միայն զբօսաշրջիկութեան հետ կապուած նիւթեր կրնամ խօսիլ: Ես իրենց Յիսուսի մասին պիտի խօսիմ, ամենակարեւոր Զբօսաշրջիկը, որ երբեւէ այցելած է Մեքսիքո»:

Ես շուտով սրահ վերադարձայ: Սակայն ծառայութիւնը արդէն սկսած էր եւ հովիւր առջեւն էր՝ ներկաները կ'ողջունէր: Անոր կիներ, որ սրահին ետեւը կը գտնուէր, ըսաւ. «Ճո՛ն, Հովիւր կ'ուզէ, որ առջեւ գաս»:

Վեր բարձրացայ եւ ան ինձի նայեցաւ եւ փսփսաց. «Աստուած ինձի ըսաւ, որ քեզի ըսեմ, որ ընես այն, ինչ որ քեզի թելադրեց, որ ընես»:

Այն ատեն ըսի. «Ժողովուրդ, պետական պաշտօնեայ մը ինձի ըսաւ, որ ձեզի հետ միայն զբօսաշրջիկութեան հետ կապուած նիւթեր կրնամ խօսիլ: Ուստի հիմա ձեզի պիտի խօսիմ ամենակարեւոր Զբօսաշրջիկին մասին, որ երբեւէ այցելած է Մեքսիքո՝ Յիսուսը»:

Ժողովուրդին մէջ գտնուող հաւատացեալները խանդավառութեամբ ծափահարեցին: Յետոյ յաջորդ վաթսուն վայրկեաններուն ես քարոզեցի Աստուծոյ Խօսքը: Երբ աւարտեցի, առջեւ կանչեցի բոլոր անոնք, որոնք պատրաստ էին ձգելու իրենց կեանքը եւ իրենք զիրենք Յիսուսի տիրութեան նուիրելու:

Երբ շատեր առջեւ կու գային, յանկարծ նկատեցի, որ ոստիկան մը սրահին ետեւէն ուղղակի դէպի բեմը կ'ուղղուէր: Ես ինձի մտածեցի՝ *նախքան ձերբակալուիլս, պէտք է այս մարդիկը փրկուին*: Յիշեցի Պետրոսը եւ Յովհաննէսը, որոնք Գեղեցիկ կոչուած դրան քով կը քարոզէին եւ նախքան կարենային մարդոց ըսել, որ ինչպէս պէտք է ընդունին Յիսուսը, ձերբակալուեցան: Ուստի փրկուելու համար առջեւ եկողներուն հետ շուտով աղօթեցի: Անոնց հետ աղօթելէ ետք, նկատեցի, որ ոստիկանը բեմին ծայրէն քալելով քովէս անցաւ եւ բեմին ետեւի վարագոյրին միւս կողմը անցաւ: Անմիջապէս

թերթերութիւն զգացի, քանի որ հիմա կրնայի ժողովուրդին ծառայել:

Յետոյ ժողովուրդին ըսի, որ կրնան խորհրդատուներուն հետ երթալ, որոնք պիտի շարունակեն ծառայել իրենց: Երբ բեմէն կը հեռանային, կաղ մարդ մը տեսայ: Լսեցի, որ Սուրբ Հոգին սիրտիս մէջէն կ'ըսէր. «Անիկա առաջինն է, որ կ'ուզեմ բժշկել: Կեցնիր զինք եւ անմիջապէս աղօթէ իրեն համար»:

Ըրի ճիշդ այն, ինչ որ Ան ըսաւ ինծի եւ իրեն համար աղօթելէ ետք ըսի. «Պարոն, կը խնդրեմ, որ հիմա ձեր անթացուպը ձգէք»:

Ան ինծի նայեցաւ, կարծէք ըսել կ'ուզէր՝ ես չեմ կրնար ընել ատիկա, բայց երբ ւաւի մղեցի զինք, ըրաւ այդ մէկը: Յետոյ անոր ձեռքէն բռնեցի եւ սկսանք միասին քալել: Ան դանդաղ սկսաւ, բայց հետզհետէ արագացաւ մինչեւ որ վերջաւորութեան սկսանք միասին վազել:

Ժողովուրդը մեծապէս խանդավառուեցաւ: Մարդիկ սկսան ամէն կողմէն գալ եւ հարիւրաւոր մարդիկ բեմին վրայ հաւաքուեցան: Շատերը Սուրբ Հոգիին զօրութեամբ բժշկուեցան: Յիշեմ քանի մը հատը: Մենք աղօթեցինք կնոջ մը համար, որ խուլ էր եւ Տէրը անոր ականջները բացաւ: Ան այնքան շատ լացաւ, որ անոր բաց կապոյտ պլուզին առջեւի մասը անոր դէմքէն հոսող արծունքներու հոսանքէն զոց կապոյտ դարձաւ: Աստուած ուրիշ կնոջ մը աչքերը բժշկեց եւ ուրիշի մը քաղցկեղը:

Յետոյ մենք աղօթեցինք հինգ տարեկան տղու մը համար եւ ան բժշկուեցաւ: Մենք մէկ ժամէն ւաւի մարդոց ծառայեցինք. գեղեցիկ էր եւ շատեր իրենց ուրախութենէն կու լային: Պահ մը նկատեցի, որ հոն քամերայով մարդիկ կային, բայց շատ ուշադրութիւն չդարձուցի անոնց:

Յաջորդ առաւօտ ես երկրէն հեռացայ եւ Միացեալ Նահանգներ վերադարձայ: Շաբաթ մը ետք հովիւը Միացեալ Նահանգներ եկաւ ինծի հետ հանդիպելու: Ան ըսաւ. «Ճոն, պէտք է, որ գայի եւ ասիկա անձամբ քեզի հետ բաժնեկցէի»: Ան ըսաւ, որ այդ գիշեր պետական պաշտօնեան երկու գաղտնի գործակալներ ուղարկած էր ծառայութեան եւ անոնց հրամայած էր, որ եթէ քարոզեմ, զիս ձերբակալեն:



Անոնք հասան երբ ես կաղ մարդուն համար կ'աղօթէի: Երբ անոնք տեսան, որ ան կը քալէր, մէկը միսին ըսաւ. «Քու կարծիքովդ ասիկա իրական է»:

Անոր գործընկերը պատասխանեց. «Չեմ գիտեր, բայց եկուր ատելի մօտենանք եւ ստուգենք»: Հովիւը տեղեակ էր անոնց զրոյցէն, քանի որ անոր ծառայողներէն մէկը լսած էր անոնց խօսակցութիւնը եւ մօտիկէն կը հետեւէր անոնց:

Երկու պաշտօնեաները առջեւ եկան եւ տեսան հրաշքները: Երբ կնոջ ականջները բացուեցան, անոնցմէ մէկը ըսաւ. «Կարծեմ իրական է»:

Յետոյ անոնք տեսան, որ հինգ տարեկան տղան Աստուծոյ զօրութեամբ բժշկուեցաւ եւ իրարու նայեցան եւ ըսին. «Իրական է»:

Յետոյ հովիւը ինծի ըսաւ. «Ճո՛ն, այն մարդիկը, որոնք եկած էին քեզ ձերբակալելու, յետոյ առջեւ եկան եւ քեզմէ աղօթք խնդրեցին, եւ այդ գիշեր երկուքն ալ փրկուեցան»:

Աւելորդ է ըսել, որ հովիւը եւ ես շատ ուրախացանք գրասենեակիս մէջ. բայց տակաւին ատելին կար: Յետոյ ան քաղաքին թերթը հանեց եւ ինծի յօդուած մը ցոյց տուաւ, որ մեր ծառայութեան յաջորդող օրը լոյս տեսած էր: Յօդուածը կ'ըսէր, որ պաշտօնեաները ըսին, որ ես զեղծարար մըն եմ եւ ապօրինի կերպով երկրէն դուրս դրամ կը հանեմ, բայց անոնք յայտնեցին, որ տեսած են, որ մարդիկ կը բժշկուին եւ տեսած չեն, որ դրամ առնուած է: Հետաքրքրականը այն է, որ ես սիրտիս մէջ զգացած էի, որ սիրոյ նուէր պիտի չառնեմ եւ մեր ծառայութիւնը վճարեց օդանաւի տոմսակին գինը: Մենք մէկ սենթ երկրէն դուրս չհանեցինք այդ ծառայութենէն:

Ինչ հրաշալի է Սուրբ Հոգին: Ինչպէս կրնայ մէկը այս ժամանակներուն մէջ ապրիլ առանց Անոր առաջնորդութեան: Եթէ այդ օրը ես չկարենայի լեզուներով աղօթել իմ սենեակիս մէջ եւ այդ գիշեր՝ դրօշակին ձողին շուրջ, ես Մեքսիքոն պիտի ձգէի հիասթափած, որ չկրցայ իրագործել Աստուծոյ նպատակը: Հովիւը՝ պետական պաշտօնեային ահարկութեան պատճառով, ինծի պիտի չ'արտօներ, որ քարոզեմ: Սակայն քանի որ ուրիշ լեզուներով աղօթեցի, Աստուծոյ կամքը եւ իմաստութիւնը, որ մեզի համար

*խորհուրդ* մըն էր, յայտնուեցաւ: Ես կրցայ բարեխօսել հովիւին համար Աստուծոյ կամքին համաձայն, որուն իբրեւ արդիւնք ան Աստուծոյ ձայնը լսեց, եւ Տէրը այդ ընդդիմութեան մէջէն անցնելու իմաստութիւր տուաւ ինծի: Իրեն է ամբողջ փառքը:

Օ՛, թշնամին ինչպէս ասոր դէմ պատերազմած է եկեղեցիին մէջ: Ան կը վախնայ անկէ, քանի որ ատիկա Աստուծոյ հաղորդակցութեան ուղիղ գիծն է Իր սուրբերուն հետ եւ դեւերը տեղեակ չեն, թէ ինչ կը կատարուի: Երբեմ մենք ունինք կացութիւններ կամ մեր սիրտերուն մէջ փափաքներ, զորս կրնանք մեր հասկացողութեամբ արտայայտել, բայց շատ աւելի, կան ուրիշ ժամանակներ երբ ունինք կացութիւններ, զորս չենք կրնար մեր սեփական հասկացողութեամբ արտայայտել եւ Սուրբ Հոգիին խօսքերուն պէտք ունինք: Այս պատճառով Պօղոս կ'ըսէ. «Ուրեմն ինչ ընելու եմ: Աղօթք ընեմ հոգիով, աղօթք ընեմ մտառութեամբ ալ» (Ա.Կորնթացիներուն 14.15):

## ՄԵՐ ՆԵՐՔԻՆ ՄԱՐԴԸ ՇԻՆԵԼ

Վերջերս սիրտիս աղաղակը այն է, որ Աստուծոյ ժողովուրդը Սուրբ Հոգիին հետ ավելի մեծ մտերմութեան մէջ մտնէ այնպիսի պատճառներով, զորս վերը նշուած օրինակներուն մէջ տեսանք: Մեր պատասխանը Իրեն մօտենալու Իր աղաղակին հետզհետէ ավելի կարեւոր պիտի դառնայ: Ժամանակի ընթացքին բաւարար պիտի չըլլայ միայն Սուրբ Գիրքին մասին հասկացողութիւն ունենալը, բան մը, որ նոյնիսկ փարիսեցիները ունէին: Մենք պէտք է զգայնութիւն զարգացնենք Աստուծոյ Սուրբ Հոգիին *ներկայիս ըսածերուն* նկատմամբ, փոխանակ՝ միայն *անցեալին* Անոր *ըսածներուն* նկատմամբ: Յիսուս այսպէս ասարեցաւ: Ան կ'ըսէ. «Ես ինքնիրմէս բան մը չեմ կրնար ընել. ինչպէս կը լսեմ, այնպէս կը դատեմ *[որոշումներ կու տամ]* [...]» (Յովհաննէս 5.30, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Այ.Վի.» տարբերակէն, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Անգլերէն Աստուածաշունչի «Ամփոխֆայտ» տարբերակը շատ ավելի յստակ ձեւով կ'արտայայտէ ասիկա ըսելով.

«Ես ինքնիրմէս բան մը չեմ կրնար ընել [առանձինս, ես ինձմէ — այլ միայն ինչպէս որ Աստուծմէ սորված եմ եւ երբ Անոր հրամանները կը ստանամ] ... [Ես կ'որոշեմ այնպէս, ինչպէս ինձի հրամայուած է որոշել: Ինչպէս կը լսեմ, այնպէս որոշում կու տամ]» (Յովհաննէս 5.30, անգլերէն Աստուածաշունչի «Ամփոփայտ» տարբերակէն):

Յիսուս Իր կեանքին ընթացքին այնքան զգայուն էր Սուրբ Հոգիին առաջնորդութեան եւ ձայնին, որ Ան շարունակ կը խոստովանէր Իր կախումաւորութիւնը Անկէ: Ան կ'ըսէ. «Որդին ինք իրմէ ոչինչ կը կատարէ, այլ կը կատարէ միայն այն՝ ինչ որ կը տեսնէ թէ Հայրը կը կատարէ» (Յովհաննէս 5.19): Դարձեալ Ան կ'ըսէ. «[...] Այս խօսքերը որ ձեզի կ'ըսեմ՝ ես ինձմէ չեմ ըսեր. [...]» (Յովհաննէս 14.10): Իբրեւ Անոր հետետորդները, մեզի յստակօրէն կ'ըսուի. «Ան որ կ'ըսէ թէ 'Անոր մէջ կը բնակի', այնպէս պէտք է քալէ՝ ինչպէս անիկա քալեց» (Ա.Յովհաննէսի 2.6):

Ինչպէս Ան էր, նոյնպէս մենք պէտք է ընդառաջող ըլլանք Աստուծոյ Հոգիին: Իրականութեան մէջ ես անձնապէս կը հաւատամ, որ Աստուծոյ փափաքն է մեզի համար, որ մենք աւելի գիտակից դառնանք Իր մարզին (թագաւորութեան), քան այն, ինչ որ տեղի կ'ունենայ մեր շուրջը՝ բնական աշխարհին մէջ: Լեզուներով աղօթելը մեր ներքին մարդը կը շինէ, որպէսզի Սուրբ Հոգիին զգայուն դառնանք: Դարձեալ, կը կարդանք.

«Ան որ օտար լեզուով կը խօսի՝ իր անձին *շինութիւն կ'ընէ* [...]» (Ա.Կորնթացիներուն 14.4, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Անգլերէն «*էփիֆայզ*» (շինութիւն կ'ընէ) բառին համար գործածուած յունարէն բառը «*օյքատամէօ*» (oikodomeō) բառն է: Անոր զուտ սահմանումն է՝ «տուն շինել»: Ասիկա հետաքրքրական է անով որ մեր մարմինները Սուրբ Հոգիին տաճարներն են: Պօղոս մասնաւորապէս մեզի կ'ըսէ, որ «դուք Աստուծոյ շինութիւնն էք» (Ա.Կորնթացիներուն 3.9): Մենք Անոր տունն ենք: Հետեաբար երբ լեզուներով կ'աղօթենք, մենք մեր բնակավայրը կ'ընդարձակենք Սուրբ

Հոգիին համար: Մենք անոր անելի տեղ կու տանք լեցնելու: Անշուշտ ասիկա ֆիզիքական իմաստով չենք ըսեր, այլ՝ փոխաբերական իմաստով. որովհետեւ Տապլեու.Ի.Վայնը մեզի կ'ըսէ, որ այս բառը «կը նշանակէ՝ 'կառուցել', ըլլայ ատիկա բառացի իմաստով կամ փոխաբերական իմաստով»:

Ուստի երբ լեզուներով կ'աղօթենք, մենք կ'ընդարձակենք Անոր ներկայութիւնը եւ զօրութիւնը մեր կեանքերուն մէջ պարունակելու մեր կարողութիւնը: Մենք կը զօրացնենք մեր ներքին մարդը, որպէսզի անելի դիրութեամբ առաջնորդուինք Աստուծոյ Հոգիով, քան թէ մեր բնական միտքով:

Պարոն Վայնը նաեւ մեզի կ'ըսէ, որ այս բառը կը գործածուի փոխաբերական իմաստով՝ «հաւատացեալներուն հոգեւոր աճը բարձրացնել եւ անոնց նկարագիրը զարգացնել» իմաստով: Նմանապէս, Յուդա առաքեալը իր նամակին մէջ կ'ըսէ.

«Բայց դ՛րք, սիրելիներ, անձերնիդ շինեցէք ձեր ամենասուրբ հաւատքին վրայ եւ Սուրբ Հոգիով աղօթեցէք» (Յուդայի 20):

Այս համարին մէջ գործածուած «Շինեցէք» բառին համար գործածուած յունարէն բառը «Ըփոյքպարամէօ» (epoikodomeō) բառն է: Այս բառը կը նշանակէ՝ «վրան շինել»: Ասիկա դարձեալ կ'ակնարկէ մեր հոգիները շարունակ շինելու գործողութեան: Պօղոս հաւատացեալներուն կ'ըսէ, որ անոնք Աստուծոյ շինութիւնն են, եւ ինք Աստուծոյ շնորհքով հիմը դրաւ՝ զանոնք Քրիստոսի բերելով, բայց յետոյ յստակօրէն կ'ըսէ. «Ամէն մէկը թող զգուշանայ թէ ինչպէս կը շինէ» (Ա.Կորնթացիներուն 3.10):

Այսօր շատ մը հաւատացեալներու հոգիները տկար են, քանի որ անոնք իրենց ներքին մարդը չեն շինած: Անոնք անելի շուտ կը տեսնեն բնական աչքերով, քան իրենց սիրտին աչքերով: Անոնք անելի շուտ կը հաւատան իրենց բնական ականջներով լսածին, քան ինչ որ Աստուծոյ Հոգին կ'ըսէ իրենց սիրտերուն: Անոնց արտաքին մարդը կը տիրէ իրենց կեանքերուն վրայ: Անոնց ներքին մարդը կը նմանի մարդու մը, որ ամբողջ օրը բազմոցին վրայ կը նստի եւ հեռատեսիլ

կը դիտէ եւ չիփս կ'ուտէ: Օ՛, թերեւս անոնք ջանասիրութեամբ կ'աշխատին իրենց կեանքին եւ ծառայութեան մէջ, բայց անոնց ներքին մարդը անտեսուած է: Այդ հաւատացեալները յաճախ ինծի կ'ըսեն. «Ինչո՞ւ ես երբեք Աստուծոյ ձայնը չեմ լսեր»: Ատոր պատճառը շատ պարզ է: Դարձեալ, Աստուած կը հաղորդակցի մեր հոգիներուն հետ, եւ ոչ թէ մեր միտքերուն: «Մարդուն հոգին Տէրոջը լոյսն [ճրագն] է» (Առակաց 20.27): Եթէ մեր ներքին մարդը շինուած չէ, մենք չենք կրնար յստակ լսել:

Պօղոս եբրայեցի հաւատացեալներուն ըսաւ, որ ինք դեռ շատ ըսելիք ունէր անոնց, բայց չէր կրնար, քանի որ անոնց լսելիքները բթացած էին (Եբրայեցիներուն 5.11): Այդ մարդիկը լսողութեան օգնական գործիքներու պէտք չունէին, հապա անոնց ներքին մարդը շեղած էր եւ հոգեւոր բաներու նկատմամբ անտարբեր դարձած էր: Ուստի հիմնականօրէն մարդոց այս խումբը շինութեան հակառակը կ'ընէր. անոնց սիրտերը աւելի կը բթանային՝ Տիրոջ Խօսքը լսելու: Այս սկզբունքը կը վերաբերի անոնց, որոնք կ'անտեսեն իրենց ներքին մարդուն շինութիւնը: Առանց զօրաւոր ներքին մարդու, Աստուծոյ հետ մեր մտերմութիւնը արգելքի կը հանդիպի: Այս պատճառով է, որ Պօղոս համարձակութեամբ կ'ըսէ. «[...] Բոլորէդ աւելի լեզուներով կը խօսիմ» (Ա.Կորնթացիներուն 14.18): Ան շարունակելով եբրայեցիներուն կ'ըսէ.

«Բայց հաստատուն կերակուրը չափահասներուն *[հոգեւորապէս հասուններուն]* համար է, որոնց զգայարանքները սովորութեամբ *[վարժութեան ճամբով]* վարժուած են բարին ու չարը զանազանել» (Եբրայեցիներուն 5.14, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Նկատի առէք, ան կը նշէ անոնց զգայարանքները. ասոնք արտաքին զգայարանքները չեն, այլ՝ ներքին: Նաեւ նկատի առէք, որ ան մեզի կ'ըսէ, որ գործածելով, կամ ինչպէս բնագիրը կ'ըսէ, վարժութեան ճամբով, մեր ներքին զգայարանքները կը զօրացնենք՝ Աստուծմէ եկածը եւ չարէն եկածը զանազանելու համար:

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

Ինչպէս մենք ունինք հինգ բնական զգայարանքներ, նոյնպէս ունինք հինգ հոգեւոր զգայարանքներ: Սուրբ Գիրքը մեզի նմուշ մը կու տայ: Ստորեւ նշուածներէն իւրաքանչիւրը երբ կը կարդաք, դուք ձեզի հարցուցէք եթէ կրնաք նշուածներէն որեւէ մէկը ընել ձեր բնական զգայարանքներով: Ասիկա ձեզի պիտի օգնէ, որ եզրակացնէք, որ գրողները կը խօսին հոգեւոր զգայարանքներու մասին, եւ ոչ թէ բնական զգայարանքներու մասին:

### ՃԱՇԱԿԵԼ –

«Ճաշակեցէք ու տեսէք, թէ Տէրը բարի է» (Սաղմոս 34.8, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

«Ո՛րչափ քաղցր է քու խօսքդ իմ *քիմքիս*,  
Մեղրէն աւելի անոյշ է իմ բերնիս»  
(Սաղմոս 119.103, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

«Ես քու խօսքերդ գտածիս պէս՝ զանոնք *կերայ*:  
Քու խօսքդ իմ սրտիս ցնծութիւն եւ ուրախութիւն եղաւ»  
(Երեմիա 15.16, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

### ԴՊՉԻԼ –

«Ելէք անոնց մէջէն ու զատուեցէք՝ կ'ըսէ Տէրը: 'Պիղծ բանի մի՛ *դպչիք* ու ես ձեզ պիտի ընդունիմ [...]»  
(Բ.Կորնթացիներուն 6.17, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

«Քաշուեցէք, քաշուեցէք, անկէ ելէք, պիղծ բանի մի՛ *դպչիք*, անոր մէջէն ելէք. մաքուր եղէք, ո՛վ Տէրոջը սպասները կրողներ» (Եսայի 52.11, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

### ՀՈՏՈՒԸՏԱԼ –

«Բայց գոհութիւն Աստուծոյ, որ միշտ մեզի յաղթութիւն կու տայ Քրիստոսով ու զինք ճանչնալուն *հոգը* մեզմով յայտնի կ'ընէ ամէն տեղ: Վասնզի մենք

Աստուծոյ առջեւ Քրիստոսին *անոյշ հոյրն* ենք թէ փրկուածներուն մէջ եւ թէ կորսուածներուն: Ոմանց՝ մահուան *հոյր* դէպի մահ եւ ոմանց՝ կենդանութեան հոտ՝ դէպի կեանք [...]» (Բ.Կորնթացիներուն 2.14-16, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

«Եւ սիրով վարուեցէք, ինչպէս Քրիստոս ալ մեզ սիրեց ու իր անձը մեզի համար մատնեց՝ *անուշահոյր* պատարագ ու զոհ ըլլալով Աստուծոյ» (Եփեսացիներուն 5.2, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

«Բայց ես ամէն բան առած եմ ու առատօրէն ունիմ. լեցուած եմ Եպափրոդիտոսի ձեռքով ձեր ղրկածները ընդունելով, որ անոյշ *հոյր* մըն է, ընդունելի պատարագ, Աստուծոյ հաճելի» (Փիլիպպեցիներուն 4.18-19, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

## ՏԵՍՆԵԼ –

«Վասնզի կեանքի աղբիւրը քու քովդ է.  
Քու լուսովդ լոյս պիտի *տեսնենք*»  
(Սաղմոս 36.9, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

«Որպէսզի սրտերնուդ *աչքերը* լուսաւորուելով՝ գիտնաք, թէ ինչ է անոր ձեզ կանչելուն յոյսը ու ինչ է անոր ժառանգութեանը փառքին ճոխութիւնը սուրբերուն մէջ» (Եփեսացիներուն 1.18-19, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

«Ուստի ամէնքը անոր հնազանդեցուց, անոր չինազանդող բան չձգեց. բայց հիմա ամէնքը անոր հնազանդած չենք տեսներ: Սակայն Յիսուսը [...] *կը տեսնենք*» (Եբրայեցիներուն 2.8-9, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

«Եթէ քու *աչքդ* պարզ է, բոլոր մարմինդ լուսաւոր կ'ըլլայ: Բայց եթէ քու *աչքդ* վատ է, բոլոր մարմինդ մութ կ'ըլլայ. ուրեմն եթէ քու մէջդ եղած լոյսը խաւար է, ալ այն խաւարը որչափ է» (Մատթէոս 6.22-23, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

ԼՍԵԼ –

«Եղիա Աքաաբին ըսաւ. ‘Վեր ելիր, կեր ու խմէ՛, վասն զի անձրեւի *ոտնաձայն* կայ» (Գ.Թագաւորաց 18.41-42, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

«Ան որ *լսելու ականջ* ունի՝ թող *լսէ*» (Ղուկաս 14.35, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

«Ան որ *ականջ* ունի, թող *լսէ* թէ Հոգին ինչ կ’ըսէ [...]» (Յայտնութիւն Յովհաննէսի 2.7, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Ինչ կը վերաբերի մեր ներքին մարդուն բթանալուն եւ Աստուծոյ Հոգիին հանդէպ անտարբեր դառնալուն, Յիսուս ասիկա յստակացուց՝ ըսելով.

«Անոր համար առականերով կը խօսիմ անոնց, որ կը տեսնեն՝ *[արտաքին մարդը]* ու չեն տեսներ *[ներքին մարդը]* եւ կը լսեն՝ *[արտաքին մարդը]* ու չեն լսեր *[ներքին մարդը]* ու միտք չեն առներ: Անոնց վրայ պիտի կատարուի Եսայիի մարգարէութիւնը, որ կ’ըսէ. ‘Լսելով պիտի լսէք *[արտաքին մարդը]* ու պիտի չիմանաք *[ներքին մարդը]*: Տեսնելով պիտի տեսնէք *[արտաքին մարդը]* ու պիտի չտեսնէք *[ներքին մարդը]*’: Վասնզի այս ժողովուրդին սիրտը *[ներքին մարդը]* թանձրացաւ եւ իրենց ականջներովը ծանր լսեցին *[ներքին մարդը]* ու աչքերնին գոցեցին *[ներքին մարդը]*, որպէսզի չըլլայ թէ աչքերով տեսնեն *[ներքին մարդը]* եւ ականջներով լսեն *[ներքին մարդը]* եւ սրտով իմանան *[ներքին մարդը]* [...]» (Մատթէոս 13.13-15, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Հոգեւորապէս հասուն մարդիկը կը զարգացնեն իրենց ներքին զգայարանները՝ հոգեւոր բաները զանազանելու համար՝ ինչ որ Աստուծմէ է եւ ինչ որ չէ: Այս զարգացումը տեղի կ’ունենայ հաւատացեալին զգայարանքներուն գործածութեամբ կամ մարզուելով: Մենք բոլորս ունինք բնական զգայարանքներ եւ կարգ մը անհատներ աւելի զարգացած



են, քան ուրիշներ պարզապէս որովհետեւ անելի մարզուած են: Օրինակ՝ կան մարդիկ, որոնք զարգացուցած են իրենց համի զգացողութիւնը՝ գիտնալու համար գինիներու որակը: Վարժութեան ճամբով անոնք կրնան համտեսել եւ որոշել գինիին տարին, եթէ աստիկա կանուխ կամ ուշ բերքի գինի է, այդ տարուան անձրեւներուն առատութիւնը կամ բացակայութիւնը, եւայլն:

Ուրիշներ իրենց աչքերը մարզած են՝ թանկարժէք քարերու արժէքը որոշելու համար: Չմարզուած աչքին համար քարը կրնայ անթերի թուիլ, բայց մարզուած աչքը կրնայ որոշել կտրուածքին եւ գոյնին որակը, փոքր կամ մեծ թերութիւններուն թիւը, եւ յստակութեան աստիճանը:

Կան ճայնի մասնագէտներ, երաժիշտներ, խմբավարներ, եւայլն, որոնք իրենց ականջները մարզած են՝ ճայներ եւ մեղեդիներ լսելու համար: Անոնք կրնան ըսել եթէ ամբողջ նուագախումբին մէջ գործիք մը համաժամանակեայ չէ: Տարիներու ընթացքին անոնք իրենց լսելու զգացողութիւնը մարզած են՝ ներդաշնակութիւնը նկատելու համար:

Կան մարդիկ, որոնք մարզած են իրենց հոտառութիւնը: Անոնք կրնան զանազանել անուշահոտի մը վերի խաւը վարի միւս խաւերէն եւ կրնան տալ օճանելիքի մը մէջ գտնուող համեմներու, ծաղիկների եւ կիտրոնագգի պտուղների ամբողջ փունջին անունները:

Այս անհատները ընտրած են բարելաւել իրենց բնական զգայարանքները: Այնպէս չէ, որ անոնք անելի մեծ շնորհք ունին. անոնք որոշած են իրենց ունեցածը զարգացնել. աստիկա պատահականօրէն չեղաւ, անոնք իրենց ուշադրութիւնը կեդրոնացուցին այդ նպատակին վրայ:

Հաւանաբար արդէն ձեր միտքը կու գան ուրիշ շատ օրինակներ, որոնք ցոյց կու տան, թէ ինչպէս կրնանք մեր արտաքին զգայարանքները մարզել: Նոյն սկզբունքը կը վերաբերի հոգիին: Դուք կրնաք երկար տարիներէ ի վեր հաւատացեալ ըլլալ եւ ձեր հոգին չզարգացնել: Սուրբ Գիրքը մեզի կ'ըսէ, որ Յովհաննէս Մկրտիչը «կը մեծնար ու կը զօրանար հոգիով» (Դուկաս 1.80): Պօղոս Տիմոթէոսին կ'ըսէ, որ ինքզինք ամբողջութեամբ նուիրէ հոգեւոր զարգացման, որպէսզի «քու յառաջդիմութիւնդ ամենուն յայտնի ըլլայ»

(Ա.Տիմոթէոս 4.15): Ինչպէս կը շինենք մեր ներքին մարդը: Սուրբ Գիրքը յստակ կը պարզէ՝ Աստուծոյ գրուած Խօսքին միջոցով (Ա.Պետրոս 2.2: Առաքեալներու Գործերը 20.32), Անոր Խօսքին հնազանդելով (Եբրայեցիներուն 5.9), եւ լեզուներով աղօթելով (Ա.Կորնթացիներուն 14.4: Յուդա 20):

## ՄԵՐ ՀՈԳԻՆԵՐԸ ԶԱՐԳԱՅՆԵԼՈՒ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ինչո՞ւ շատ կարեւոր է մեր ներքին զգայարանքները զարգացնելը: Եթէ մեր ներքին զգայարանքները զարգացած են, մենք աւելի ազատ կերպով կը հաղորդակցինք Սուրբ Հոգիին հետ: Ան կրնայ աւելի մտերմօրէն խօսիլ մեզի հետ շատ մը մակարդակներու վրայ: Բացատրելու համար եկէք նորէն նայինք բնականին: Եթէ ձեր բոլոր հինգ զգայարանքները չաշխատին, ինձի համար անկարելի կ'ըլլայ ձեզի հետ հաղորդակցիլ: Կրնամ պոռալ, բայց դուք չլսէք. ձեր ուսին դպնալ, բայց դուք չզգաք. նշան մը բռնել, բայց դուք չտեսնէք, եւայլն:

Վերջերս հայրիկս, որուն տարիքը ութսունը անց է, լսողութեան օգնական գործիքի պէտք ունէր, բայց չէր ուզեր: Երբ բոլորս միասին հաւաքուած կ'ըլլանք, կը զրուցենք եւ կ'ընթերենք, կը նկատեմ, որ կարծէք ան ուրիշ տեղ մըն է: Ձայնս բարձրացնելով կ'ըսեմ. «Հասկցա՞ր, Հայրի՛կ»: Ան շուարած կը նայի, կարծէք կ'ըսէ. «Ինչ ըսիր»: Անդրադարձայ, որ ան մեր խօսակցութիւններէն որեւէ մէկը չէր վայելեր, որովհետեւ անոր լսողութեան զգայարանքը բթացած էր: (Ուրախ եմ յայտնելու, որ հիմա ան ունի լսողութեան օգնական գործիք): Նոյնն է պարագան հոգիին: Եթէ ձեր զգայարանքները բթացած են, լաւագոյն պարագային զրոյցին միայն մէկ մասը կը հասկնաք: Յաճախ կը լսեմ, որ մարդիկ կ'ըսեն. «Կարծէք Աստուած ինձի հետ մտերմօրէն չի խօսիր»: Դարձեալ, շատ հաւանական է, որ անոնց ներքին զգայարանքները թերզարգացած են: Պէտք է այս հարցը լուծենք. Աստուած աւելի կ'ուզէ մեզի հետ խօսիլ, քան մենք կ'ուզենք. Անոր մտիկ ընել, բայց շատ յաճախ եբրայեցի

հաւատացեալներուն պէս մեր «լսելիքները բթացած են» (Եբրայեցիներուն 5.11):

Կը զօրացնէք այն, ինչ որ կը գործածէք, եւ կը տկարացնէք այն, ինչ որ չէք գործածեր: Երբ հոգիով կ'աղօթենք, մեր ներքին մարդը կ'աղօթէ, եւ մեր բնական հասկացողութիւնը կամ մարմինը կը գրկուի: Ատիկա մեր բնական տրամաբանութեան համար ծոմապահութեան ձեւ մըն է, որպէսզի Աստուծոյ հետ անարգել հաղորդակցութեան (հաղորդութեան) մէջ մտնենք: Կը քաջալերեմ ձեզ, որ ոչ միայն Հոգիով աղօթէք, այլեւ Աստուծոյ հաւատաք մեկնաբանութեան համար եւ դուք ձեզ մարզէք լսելու մինչ կ'աղօթէք:

Շատ առաւօտներ մէկ ժամէն աւելի պարզապէս լեզուներով կ'աղօթեմ: Երբ կը դադրիմ միտքով թափառելէ, որ աւելի արագ կը զսպուի եթէ պաշտամունքի երգեր երգեմ, կամ նախ իմ սիրտս բանամ Անոր առջեւ, ինծի համար դիւրին կ'ըլլայ հոգեւորին վրայ կեդրոնանալը: Ընդհանրապէս Տիրոջ մօտիկութեան զգացումը բոլոր բնական մտահոգութիւնները կամ պարտաւորութիւնները կը նսեմացնէ: Այդ ժամանակներուն կը տեսնեմ, որ գաղափարներ, յայտնութիւններ, եւ իմաստութիւն կը ծագին հասկացողութեանս մէջ: Փորձառաբար սորված եմ, որ ամենաիմաստուն բանը, որ կրնամ ընել այս բաները գրելն է երբ կ'աղօթեմ եւ այն ատեն Սուրբ Հոգին ուրիշ բաներու պիտի անցնի:

Իմ առաջին տարիներուս երբ Հոգիով կ'աղօթէի, շատ կը հիասթափուէի, քանի որ երբեմն բնական բաներու մասին կը մտածէի երբ լեզուներով կ'աղօթէի: Օրինակ՝ երբ կ'աղօթէի, նոր գիրքերու վերնագիրներու մասին գաղափարներ կ'ունենայի, խօսիլ կ'ուզէի մարդոց հետ, որոնց հետ երկար ժամանակէ ի վեր չէի կապուած, մէկու մը նուէր տալու մասին կը մտածէի, ծառայութեան դրամը ինչպէս ծախսելու մասին կը մտածէի, եւայլն: Ի վերջոյ, հասկցայ, որ ասիկա շատ յաճախ Սուրբ Հոգիին ներշնչումը եւ առաջնորդութիւնն էր: Կարճ ժամանակ ետք ես սկսայ այդ գաղափարները գրել եւ նկատեցի, որ երբ ատիկա կ'ընէի, անոնք իմ միտքէս կը հեռանային եւ ուրիշ գաղափարներ կը

յայտնուէին: Այն ատեն ես ատոնք գործի կը լծէի եւ անոնց վրայ Աստուծոյ օրհնութիւնը կը տեսնէի: Անդրադարձայ, որ երբ լեզուներով կ'աղօթէի, Սուրբ Հոգին ոչ միայն մարդիկ կամ ազգեր կը բերէր միտքս, այլեւ ինծի ուղղութիւն կու տար բաներու համար, զորս Ան կ'ուզէր, որ ընեմ: Դարձեալ, ատիկա Աստուծոյ հետ շատ անլի բարձր մակարդակի վրայ հաղորդակցելու ձեւ մըն է:

### ՀՈԳԵԻՈՐ ՄԱՐԶԻՆ ՄԷՋ ԱՊՐԻԼ

Անձնապէս կը հաւատամ, որ Պօղոս իր նամակներուն մեծ մասը այսպէս գրեց: Ան այսպիսի ակնարկութիւններ կ'ընէր. «Որ թէպէտ մարմնով հեռու եմ, բայց հոգիով ձեզի հետ եմ եւ կ'ուրախանամ երբ ձեր բարի վարքը *տեսնեն* ու ձեր հաւատքին հաստատութիւնը՝ Քրիստոսին վրայ» (Կողոսացիներուն 2.5, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Ան իր բնական աչքերով չէր տեսներ զանոնք, քանի որ ան յստակօրէն կ'ըսէ, որ ինք ֆիզիքապէս հոն չէր: Դարձեալ ան կորնթացիներուն կ'ըսէ. «Ես թէպէտեւ մարմինով հեռու՝ բայց հոգիով ձեզի հետ եմ, եւ արդէն իբրեւ ձեր մէջ ներկայ՝ վճիռս տուի» (Ա.Կորնթացիներուն 5.3): Պօղոսը ինչպէս կրնար ներկայ ըլլալ եւ տեսնել այն ինչ որ կորնթացի եւ կողոսացի հաւատացեալները կ'ընէին եւ կ'ըսէին, երբ ան ֆիզիքապէս հոն չէր: Պէտք է յիշենք, որ մենք հոգեւոր էակներ ենք, եւ Աստուծոյ Հոգիին մարզին մէջ չկայ հեռաւորութիւն կամ արգելքներ: Անոնց, որոնց հոգիները Տիրոջմով շինուած են, անլի տեղեակ կ'ըլլան տեղի ունեցող բաներէն, ուստի անլի ազդու կերպով կ'աղօթեն կամ կը ծառայեն կարիքաւորներուն: Յիշեցէք, վերջին գլուխին մէջ մեր Աստրալիոյ գրասենեակին տնօրէնին Աստուածաշունչի դպրոցին ղեկավարը ճանչցաւ այդ չինացի հովիւր անոր եկեղեցիին բազմաթիւ անդամներուն մէջէն՝ առանց զինք նախապէս տեսած ըլլալու:

Պօղոսը պարզապէս իր հոգիով կը տեսնէր բաներ, որոնք տարբեր եկեղեցիներու մէջ կ'ըլլային, երբ լեզուներով կ'աղօթէր. յետոյ այդ բաներուն կ'անդրադառնար իր նամակներուն մէջ եւ կ'ուղարկէր զանոնք: Իմ ճամբոր-

դուփիններուս ընթացքին եւ երբ լեզուներով կ'աղօթեմ, տեսած եմ բաներ, որոնց մէջէն իմ ընտանիքիս անդամները կամ իմ անձնակազմս կ'անցնին: Այն ատեն հեռաձայնած եւ շատ անգամ նախքան որ մէկը ինծի ըսէ, ես արդէն լուրերէն տեղեակ եղած եմ: Սակայն քանի որ Հոգիով աղօթած եմ, պատրաստուած եմ ըսելու այն ինչ որ պէտք է ըսեմ եւ ինչպէս պէտք է վարուիմ այդ կացութեան հետ:

Երբ Ափրիկէ էի, հանդիպեցայ մարդու մը, որ Քենիայի մէջ ցեղային պատերազմիկ էր: Ան տարիներ առաջ Յիսուսը ճանչցած էր, եւ տակաւին իր ժողովուրդին մէջ կը մնայ՝ անոնց ծառայելու համար: Անոր քրիստոնէական անունը Յովհաննէս է եւ ան երբեմն ծառայութեամբ Ափրիկէէն դուրս կը ճամբորդէ: Միացեալ Նահանգներ իր վերջին ճամբորդութեան ընթացքին ան մնաց զոյգի մը հետ, որ ինծի ալ ծանօթ է: Անոր երեքշաբթեայ կեցութեան ընթացքին ան կանոնաւորաբար կը զեկուցեր Ափրիկէ գտնուող իր ընտանիքին մասին: Քիչ մը շփոթած, այն ընտանիքը, որոնց հետ կը բնակէր, անոր հարցուց, թէ ինչպէս ան գիտէր, որ ինչ կը պատահէր Ափրիկէ գտնուող իր կնոջ հետ, քանի որ անոնք գիտէին, որ անոր ընտանիքը հեռաձայն չունէր. իրականութեան մէջ Ափրիկէի իրենց ամբողջ գիւղին մէջ հեռաձայն չկար: Ուստի ան ըսաւ. «Պօղոս այսպէս կ'ընէր Ասիոյ եկեղեցիներուն հետ: Անոնք Տիրոջմով իր ընտանիքն էին, քանի որ ան հոգեւորապէս ծնաւ զանոնք, եւ երբ անոնցմէ հեռու կ'ըլլար, երբ կ'աղօթէր, ան հոգիով անոնց հետ կ'ըլլար եւ անոնց բարի վարքը կը տեսնէր. ան նոյնիսկ կրնար անոնց գործերուն մասին գրել անոնց: Ես միայն կ'ընեմ այն, ինչ որ Աստուած բոլոր հաւատացեալներուն տուած է կարողութիւնը Սուրբ Հոգիին զօրութեամբ ընելու: Ահա թէ ինչպէս ես կը հետեւիմ իմ ընտանիքիս գործունէութիւններուն, եւ ես ասիկա կ'ընեմ ամէն անգամ որ անոնցմէ հեռու եմ»:

Յովհաննէսին վկայութիւնը տալուս պատճառը այն է, որ ատիկա կատարելապէս կը համապատասխանէ Աստուծոյ Խօսքին: Ինչո՞ւ ասիկա պէտք է զարմացնէ մեզ: Պօղոս ոչ միայն մէկ անգամ նշեց ատիկա Նոր Կտակարանին մէջ, հապա քանի մը անգամ: Ոչ ոք այս ասիկայեցի մարդուն ըսած

է, որ Սուրբ Գիրքը ճշմարիտ չէ կամ անոր ժամանակը անցած է ինչպէս շատերուն կ'ըսուի Ամերիկայի մէջ: Ինչո՞ւ մենք ետ կը քաշուինք ընելէ այն բանը, որուն համար Յիսուս այդքան բարձր գին վճարեց, որ մեզի հայթայթէ: Ինչո՞ւ մեր ներքին մարդը չենք շիներ, որպէսզի մեր սիրելի Տիրոջ եւ Փրկիչին՝ Յիսուսի աւելի ազդու ծառաներ եւ զաւակներ ըլլանք:

Դեռ ուշ չէ: Անկախ անկէ, թէ տաճար տարեկան էք կամ ութսունհինգ տարեկան, տակաւին նո՞ր վերստին ծնած էք կամ տասնեակ տարիներ առաջ, կրնաք ձեր ներքին մարդը շինել լեզուներով աղօթելով եւ երբ կ'աղօթէք, անոր թարգմանութիւնն ալ խնդրեցէք, որպէսզի ձեր հասկացողութիւնը Սուրբ Հոգիին հիանալի հաղորդութենէն օգտուի: Շատ բան կայ, որ Ան կը փափաքի յայտնել ձեզի. դուք պարզապէս պէտք է ձեր արտաքին մարդը հանդարտ պահէք եւ ձեր սիրտին մէջ մօտենաք Անոր, որ ամէն բան գիտէ: Ինչ հիանալի հրաւեր. այդ առիթը մի՛ կորսնցնէք:

## ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

1. Արդեօք գտնուած էք կացութիւններու մէջ, ուր լեզուներու պարգելը ձեզի օգնած է, որ աւելի լաւ հասկնաք, թէ Աստուած ինչպէս կ'աշխատի ձեր կեանքին մէջ: Ինչպիսի՞ լուսաւորութիւն, խաղաղութիւն կամ թարմութիւն ստացած էք:
2. Հեղինակը կը գրէ Աստուծոյ յայտնած խորհուրդները պատշաճ կերպով տնտեսելու մասին՝ մատնանշելով Եզեկիայի օրինակին (Եսայի 39.2) եւ հանրաձայնօրէն հովիւի մը հետ իր ունեցած կացութեան: Ինչքան կարեւոր է, որ դուք սպասէք Տիրոջ ճիշդ ժամանակին, որ ուրիշներու յայտնէք այն, ինչ որ Ան յայտնած է ձեզի: Ունի՞ք ուրիշները տպաւորելու իրական փափաք, զոր պէտք է կառավարէք:

# ՎՍՏԱՀՈՒԹԵԱՄԲ ԼԵՅՈՒՆ ՀԱՒԱՏՔ



Աստուած մեր պէտքին չի պատասխաներ:  
Ան մեր հաւատքին կը պատասխանէ:

**Տ**արիներու ընթացքին ես հանդիպած եմ բազմաթիւ անկեղծ հաւատացեալներու, որոնք լեցուած են Սուրբ Հոգիով, սիրով եւ Աստուծոյ վախով, եւ ետ կը կենան մեղքէն, բայց տակաւին անոնք ալ կը հարցնեն. «Ինչո՞ւ Աստուծոյ ձայնը չեմ լսեր կամ Անոր ներկայութիւնը չեմ զգար»: Կը զգամ այդ սուրբերուն հիասթափութիւնը, քանի որ անոնք կ'ընեն ամէն ինչ, որ գիտեն, բայց աղօթքի ժամանակ ճիշդ ձեռով չեն կրնար կապուիլ: Անոնց հետ միայն քանի մը վարկեան խօսելէ ետք ընդհանրապէս մենք կը յայտնաբերենք անոնց պայքարին պատճառը: Շատ յաճախ մէկ պատասխան կայ, եւ ատիկա հետեւեալ համարին մէջ կը գտնուի.

«Ուրեմն, եղբայրներ, *համարձակութիւն* ունինք սուրբ տեղը մտնելու Յիսուսին արիւնովը, այն նոր

ու կենդանի... մօտենանք ճշմարիտ սրտով, [վստահություն] լեցուն հաւատքով, սրտերնիս չար խիղճէն մաքրուած ու մարմիննիս մաքուր ջրով լուացուած. անխախտ պահենք յոյսին դաւանութիւնը, վասնզի հաւատարիմ է անիկա որ խոստացաւ» (Եբրայեցիներուն 10.19-23, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Նախ, գրողը մեզի կ'ըսէ, որ մենք կրնանք սուրբ տեղը մտնել, ուր Տէրը կը բնակի: Յիշեցէք, որ այն պահուն, որ Յիսուս խաչին վրայ Իր Հոգին ասանդեց, տաճարին վարագոյրը վերէն վար պատռուեցաւ: Աստուած դուրս ելաւ եւ կը պատրաստուէր Իր նոր տաճարը՝ վերստին ծնած մարդ արարածին մէջ մտնել: Ուստի հիմա երբ կը մօտենանք, մենք զինք մեր ներսիդին կը փնտռենք, եւ ոչ թէ կուրօրէն կ'երեւակայենք մտնել գահի սենեակ մը, որ միլիոնաւոր մղոններ հեռու է. քանի որ մեր ներսիդին գտնուող Աստուծոյ Հոգիին հետ կապուիլ կը նշանակէ՝ գահի սենեակին մէջ ըլլալ Յիսուսի եւ Հօր հետ:

Նկատի առէք, հեղինակը մեզի կ'ըսէ, որ պէտք է *համարձակութեամբ* գանք: Ինչպէս կրնանք այդպիսի վստահութեամբ մօտենալ: Պարզապէս որովհետեւ Ան արդէն ճամբան հարթած է մեզի համար՝ Անոր ներկայութեան մէջ մտնելու Անոր թագաւորական արիւնին միջոցով, որ Ան Գողգոթային վրայ թափեց: Մեր խիղճը մաքրուած է մեղքին պատճառած դատապարտութեան բռնակալութենէն, եւ հիմա մենք կրնանք կատարեալ վստահութեամբ մտնել Անոր ներկայութեան:

Ասիկա բախտի հետ կապուած բան մը չէ, որ դիպուածով կը յաջողի կամ չի յաջողիր: Ասիկա իրականութիւն է. Աստուած կ'ըսէ, որ եթէ մենք մօտենանք, Ինք պիտի մօտենայ մեզի: Սակայն մեծամասնութեան պայքարին բանալի պատճառը կը գտնուի հետեւեալ արտայայտութեան մէջ. «վստահութեամբ լեցուն հաւատք»: Պէտք է հաւատքով գանք: Որովհետեւ Սուրբ Գիրքը յստակօրէն մեզի կ'ըսէ.

«Բայց առանց հաւատքի անհնար [է] Աստուծոյ հաճելի ըլլալ [եւ զինք գոհացնել]. վասնզի ան որ *Աստուծոյ*



*կը մօտենայ*, պէտք է որ [անպայմանօրէն] հաւատայ թէ Աստուած կայ եւ թէ վարձահատոյց կ'ըլլայ անոնց, որ զինք կը փնտռեն [ջերմեռանդութեամբ եւ ջանասիրութեամբ]» (Եբրայեցիներուն 11.6, անգլերէն «Ամփոփայտ» տարբերակէն, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Լսեցէք հետեւեալ խօսքերը. «առանց հաւատքի անհնար է հաճեցնել զինք: Քանի մը վայրկեան տրամադրեցէք եւ թող այս խօսքերը խորասուզուին ձեր սիրտին մէջ:

«ԵՍ ՊԱՐԶԱՊԷՍ ԿԸ ՓՆՏՈՒԵՄ ՄԷԿԸ,  
ՈՐ ԿԸ ՀԱՒԱՏԱՅ»

Երբեք չեմ մոռնար այն օրը երբ Տիրոջմով միայն քանի մը տարեկան էի, ամուրի էի եւ յարկաբաժինի մը մէջ կը բնակէի Հիւսիսային Քալիֆորնիոյ մէջ: Առաւօտ մը երբ խոր քունի մէջ էի, յանկարծ անկողինիս մէջ ցատկեցի եւ նստած դիրք առի եւ բերանէս հետեւեալ բառերը ելան գոռալով. «Ես պարզապէս կը փնտռեմ մէկը, որ կը հաւատայ»:

Զարթուցիչ ժամացոյցիս նայեցայ եւ տեսայ, որ առաւօտեան ժամը 4:00 էր: Այնքան խոր քունի մէջ էի, որ պէտք է ստուգէի, թէ ո՛ր եմ եւ թէ ի՛նչ պատահեցաւ: Անկողինիս քովը գտնուող լոյսը վառեցի եւ նկատեցի, որ ուր որ պառկած էի, հոն սաւանս թրջուած էր, բայց տաքութիւն կամ ուրիշ որեւէ տեսակի հիւանդութիւն չունէի: Թէ՛ ապշած էի եւ թէ՛ երկիւղած, քանի որ անդրադարձայ, որ Աստուած իմ բերանովս խօսեցաւ, բայց յետոյ մտածեցի. «*Ինչո՞ւ արիկա աւելի խորունկ բան մը չէր: Գիտեմ, որ Ան հաւատարացող մարդիկ կը փնտռէ*»: Յոգնած էի, ուստի անմիջապէս ետ քունի մտայ:

Յաջորդ առտու երբ արթնցայ, ամբողջ առաւօտը հետեւեալ նախադասութիւնը կը լսէի. «Ես պարզապէս կը փնտռեմ մէկը, որ կը հաւատայ ... Ես պարզապէս կը փնտռեմ մէկը, որ կը հաւատայ ... Ես պարզապէս կը փնտռեմ մէկը, որ կը հաւատայ ...»: Առաւօտեան շուրջ ժամը տասին յանկարծ միտք մը ունեցայ: Ես ինձի բարձրաձայն ըսի. «Ասիկա խորունկ իմաստ ունի»:

Այդ պահէն սկսեալ եւ սկսայ հետեւեալ երկու հարցումներուն մասին մտածել. «*Ինչը ամէնէն շատ կը տրտնեցնէ Յիսուսը: (ոչ թէ ինչը ամէնէն շատ կը զայրացնէ զինք, ատիկա անշուշտ կեղծաւոր փարիսեցիները պիտի ըլլան) եւ ինչը ամէնէն շատ կը հաճեցնէ զինք*»: Նախ Ան շատ կը տրտմէր այն մարդոցմէ, որոնք չէին հաւատար, որ Ան կ'ընէ այն, ինչ որ կ'ըսէ, որ պիտի ընէ: Պարզ ասած, անոնց թերահաւատութիւնը: Իրականութեան մէջ ասիկա է հաւատքը՝ անիկա կը հաւատայ, որ Աստուած կ'ըսէ այն բաները, զորս պիտի ընէ, եւ Ան լուրջ է Իր խօսքին մէջ: Աստուած մարդ չէ, որ սուտ խօսի, այլ Ան Իր խօսքին նեցուկ կը կենայ Իր անունին պատիւովը: Ան Իր Անձին վրայ երդում կ'ընէ, քանի որ Իրմէ բարձրը չկայ: Ուստի երբ Անոր վրայ կը կասկածինք, մենք Անոր պարկեշտութիւնը կը նախատենք:

Եկէք քննարկենք այս հարցը: Լսեցէք Յիսուսի հիասթափութիւնը հետեւեալ համարներուն մէջ. ասոնք միայն քանի մը հատն են Մատթէոսի ատետարանէն (եւ ընտրեցի անգլերէն Աստուածաշունչի «Թուտէյզ Ինկլիշ Վըրժըն» տարբերակը, քանի որ ատիկա լաւագոյնս կ'արտայայտէ Անոր տրամադրութիւնը).

«Ինչ թերահաւատ էք» (Մատթէոս 6.30-31, անգլերէն Աստուածաշունչի «Թի.Ի.Վի.» տարբերակէն):

«Աշակերտները Իր մօտ գացին, արթնցուցին զանիկա ու ըսին. 'Տէր, ազատէ մեզ, ահա կը կորսուինք'»:

«Ինչո՞ւ այդպէս վախկոտ էք», պատասխանեց Յիսուս: «Ինչ թերահաւատ էք» (Մատթէոս 8.25-26, անգլերէն Աստուածաշունչի «Թի.Ի.Վի.» տարբերակէն):

«Յիսուս շուտ մը իր ձեռքը երկնցուց, բռնեց զանիկա ու ըսաւ. 'Թերահաւատ, ինչո՞ւ երկմտեցար'» (Մատթէոս 14.31, անգլերէն Աստուածաշունչի «Թի.Ի.Վի.» տարբերակէն):

«Ինչո՞ւ դուք ձեզի կը խորհիք թէ հաց չունիք: Թերահաւատներ» (Մատթէոս 16.8, անգլերէն Աստուածաշունչի «Թի.Ի.Վի.» տարբերակէն):

## ՎՍՏԱՀՈՒԹԵԱՄԲ ԼԵՅՈՒՆ ՀԱՒԱՏՔ

Կը լսէք Անոր ոճին մէջ գտնուող հիասթափութիւնը եւ տխրութիւնը այս համարներէն իւրաքանչիւրին մէջ: Սակայն ինծի ամէնէն շատ կը զարմացնէ այն դէպքը երբ աշակերտները չկրցան դէմ մը դուրս հանել լուսնոտ տղայէ մը: Կարդանք ինչ որ Յիսուս ըսաւ Իր անձնակազմին.

«Ով անհաւատ եւ խտորեալ աճգ, մինչեւ Երբ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ Երբ ձեզի պիտի համբերեմ. զանհկա հոս ինծի բերէք՝: Յիսուս սաստեց ու դեւը անկէ ելաւ եւ տղան բժշկուեցաւ նոյն ժամուն» (Մատթէոս 17.17-18, անգլերէն Աստուածաշունչի «ԹԻ.Ի.ՎԻ.» տարբերակէն):

Ան վստահաբար չզսպեց Իր զգացումները: Անոր ոճը հիասթափութենէն անդին կ'երթայ, զգուանքի եւ տխրութեան եւ արդար բարկութեան կը մօտենայ:

Յետոյ աշակերտները Անոր հարցուցին, թէ ինչո՞ւ իրենք չկրցան դեւը դուրս հանել: Յիսուս պարզօրէն ըսաւ.

«Ձեր թերահաւատութեան պատճառով» (Մատթէոս 17.20, անգլերէն Աստուածաշունչի «ԹԻ.Ի.ՎԻ.» տարբերակէն):

## ԱՍՏՈՒԱԾ ՄԵՐ ՀԱՒԱՏՔԻՆ ԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԷ

Ամէն ինչ, որ Տիրոջմէն կը ստանանք, հաւատքի միջոցով է: Ճշմարտութիւն մը կայ, որ յայտնաբերած եմ, որ Քրիստոսի մարմինին մէջ շատեր չեն գիտեր, եւ այդ ճշմարտութիւնը այն է, որ Աստուած մեր պէտքին չի պատասխաներ. Ան մեր հաւատքին կը պատասխանէ: Կանգ առէք եւ պահ մը այս խօսքին մասին մտածեցէք: Ես կրնամ անհամար օրինակներ տալ՝ ասիկա բացատրելու համար Աստուածաշունչէն, բայց միայն երկու հատ տամ: Առաջին՝ օր մը Յիսուս բազմաթիւ դեկավարներու կը սորվեցնէր տան մը մէջ եւ կը կարդանք.

«[...] Տէրոջը զօրութիւնը ներկայ էր զանոնք բժշկելու» (Ղուկաս 5.17):

Կը սիրեմ ինչպէս Սուրբ Գիրքը յատուկ կերպով մեզի կ'ըսէ, որ Աստուծոյ զօրութիւնը ներկայ էր այդ ղեկավարները բժշկելու: Անիկա մեզի կը տեղեկացնէ, որ ղեկավարներէն առնուազն մէկը, բայց շատ հաւանաբար քանի մը հատը, պէտք ունէր բժշկուելու, բայց անոնցմէ ոչ ոք ստացաւ: Ինչո՞ւ: Անոնցմէ ոչ մէկը ատիկա ստանալու հաւատքը չունէր:

Սակայն կային խումբ մը մարդիկ, որոնք պատգարակով անդամալոյծ մարդ մը բերին տունը, բայց ներս չկրցան մտնել, քանի որ հոն շատ մարդիկ կային, ուստի զինք տանիք հանեցին եւ կղմինտորը քակելով մարդը պարաններով Յիսուսի առջեւ իջեցուցին: Յետոյ կը կարդանք.

«Յիսուս *տեսնելով անոնց հաւատքը* [...] ըսաւ անդամալոյծին. 'Քեզի կ'ըսեմ, Ելի՛ր մահիճո՞ւ ան ու տունդ գնա': Ան ալ իսկոյն անոնց առջեւ ելաւ ու վրան առաւ ինչ բանի վրայ որ պառկած էր եւ գնաց իր տունը ու Աստուծոյ փառք կու տար: Ամէնքը ապշած մնացին ու Աստուծոյ փառք կու տային եւ վախով լեցուած՝ կ'ըսէին. 'Այսօր նորանշան բաներ տեսանք՝» (Դուկաս 5.20-26, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Յիսուս տեսաւ անոնց հաւատքը: Անդամալոյծը, զինք տանողներուն հետ միասին, գիտէին, որ Տէրը Իր խոստումը կը կատարէ: Շատ հաւանաբար անոնք գիտէին այն, ինչ որ Աստուած արդէն ըսեր էր Իր ժողովուրդին. «Անոր բոլոր բարիքները մի՛ մոռնար, որ կը քաւէ բոլոր անօրէնութիւններդ ու կը բժշկէ քու բոլոր հիւանդութիւններդ» (Սաղմոս 103.2-3): Միւս կողմէ, ղեկավարները ապշած մնացին երբ անդամալոյծին բժշկուիլը տեսան ու Աստուծոյ փառք կու տային. բայց անոնցմէ ոչ ոք բժշկուեցաւ: Ինչո՞ւ: Որովհետեւ մենք չենք կրնար ստանալ նոյնիսկ այն, ինչ որ Աստուած կ'ուզէ, որ ունենանք, եթէ հաւատքով չստանանք: Հօր կամքն էր, որ այդ հիւանդ ղեկավարները ստանային, բայց անոնք չստացան: Աստուած կ'ընդառաջէ երբ մենք կը հաւատանք, եւ ատիկա կը դրսեւորուի երբ մենք Անոր խօսքին համաձայն յառաջ կ'ընթանանք:

Այլ դէպքի մը ընթացքին, յոյն կին մը Յիսուսի կու գայ:

## ՎՍՏԱՀՈՒԹԵԱՄԲ ԼԵՅՈՒՆ ՀԱԻԱՏՔ

Ան կ'աղաչէ Անոր, որ իր աղջիկը դիային ճնշումէ ազատէ: Յիսուս ըսաւ անոր.

«[Նախ իմ սեփական ընտանիքիս՝ հրեաներուն պէտք է օգնեմ]: Աղէկ չէ տղոցը հացը առնել ու շուներուն ձգել» (Մարկոս 7.27, անգլերէն Աստուածաշունչի «Էն. Էլ.Թի.» տարբերակէն):

Ան զինք շուն կոչեց: Ան կրնար անարգուիլ եւ բարկացած հեռանալ: Սակայն ան ձեռով մը կը ճանչնար Անոր նկարագիրը: Ուստի ան անմիջապէս հետեւեալ պատասխանը տուաւ.

«Այո՛, Տէր, վասնզի շուներն ալ՝ սեղանին տակ տղոցը փշրանքներէն կը կերակրուին» (Մարկոս 7.28, անգլերէն Աստուածաշունչի «Էն. Էլ.Թի.» տարբերակէն):

Ան գիտէր, որ Աստուծոյ Որդիին ներկայութեան կը գտնուէր, եւ կը հաւատար, որ Ան բարի Աստուած է, որ զօրութեան պակաս չունի: Ան հաստատ որոշում առած էր, քանի որ գիտէր, որ միակ բանը, որ պէտք է ընէր, իր խնդրանքին բռնուած մնալն էր եւ իր խնդրանքը պիտի չմերժուէր: Ան հաւատքով մնաց, եւ անոր համար Յիսուս ըսաւ.

«Այդ խօսքիդ համար գնահատեմ, քու աղջիկէդ դելը ելաւ» (Մարկոս 7.29):

Երբ իր տունը դարձաւ, իր աղջիկը ամբողջութեամբ բժշկուած գտաւ: Դարձեալ, Յիսուս պատասխանեց անոր հաւատքին, եւ ոչ թէ անոր պէտքին, քանի որ անոր առաջին խնդրանքը պէտքի արտայայտութիւն էր, բայց անոր պատասխանը Յիսուսի տուած առաջին պատասխանին անոր հաւատքով բոցավառուած էր:

## ՀԱԻԱՏՔԸ ԱՄԷՆ ԲԱՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԲԱՆԱԼԻՆ Է

Այս սկզբունքը թագաւորութեան մէջ գտնուող բոլոր բաներուն կը վերաբերի: Իրականութեան մէջ Յակոբոս բաւական համարձակ էր ըսելու, որ երբ Աստուծոյ կը մօտենանք աղօթքով, պէտք է այդ մէկը ընենք.

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

«[...] հաւատքով, առանց երկմտելու, որովհետեւ երկմիտ մարդը կը նմանի ծովու ալիքներուն, որոնք հովերէն կը շարժին ու կը տարուբերին: Այն մարդը թող չկարծէ թէ Տէրոջմէ բան մը պիտի առնէ» (Յակոբոսի 1.6-7):

Ուառւ, նորէն մտիկ ըրէք այդ խօսքերուն. «Այն մարդը թող չկարծէ թէ Տէրոջմէ բան մը պիտի առնէ»: Պահ մը խոկացէք ասոր վրայ: Մտածեցէք «բան մը պիտի չառնէ» բառերուն մասին: Ատիկա վերջնական խօսք մըն է, որուն մէջ մոխրագոյն տարածքներ չկան, առանց բացառութիւններու: Աստուած վստահ կ'ըլլայ, որ մենք ասիկա շատ յստակ կերպով կը հասկնանք: Ան հաւատքին կը պատասխանէ, ուրիշ ո՛չ մէկ բանի:

Ատոր համար է, որ շատեր Սուրբ Հոգին չեն ստացած: Անոնք հաւատքով չեն խնդրեր: Սուրբ Գիրքը մեզի կը հարցնէ.

«Ասիկա միայն կ'ուզեմ ձեզի հարցնել. 'Օրէնքին գործերովը դուք Հոգին առիք՝ թէ *հաւատքին լսելովը*'» (Գաղատացիներուն 3.2, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Ասիկա կը համընկնի Յակոբոսի ըսածին: Դուք *ոչինչ* կրնաք ստանալ Տիրոջմէն եթէ հաւատքով չմօտենաք Անոր, ատիկա անշուշտ կը ներառէ Անոր Հոգին: Բազմաթիւ անգամներ ես հանդիպած եմ անօթի հաւատացեալներու, որոնք լեզուներով չեն խօսիր: Անոնք գիտեն, որ աւելին կայ եւ կը փնտռեն, բայց Սուրբ Հոգիով լեցուելու մասին Աստուծոյ Խօսքը լսելէ ետք, ինձի կ'ըսեն. «Անգամ մը աղօթեցի, որ ստանամ եւ բան մը չպատահեցաւ»: Կամ երբ կը խնդրեն, որ ստանան, ատիկա կ'ընեն «թերեւս այդպէս է»-ի վերաբերմունքով: Անոնք չունին այդ վճռակամութիւնը, որ վերը նշուած յոյն կիներ ունէր: Անոնք վստահութեամբ լեցուն չէն գար: Անոնք համարձակութեամբ չէն գար: Աստուած կ'ակնկալէ, որ մենք Իր կամքը ճանչնանք, քանի որ Աստուածաշունչը կ'ըսէ. «Անոր համար անմիտ մի՛ ըլլաք, հապա իմացէք

թէ ինչ է Տէրոջը կամքը» (Եփեսացիներուն 5.17). ապա  
ատիկա գիտնալէ ետք, հաւատքով եւ վստահութեամբ  
խնդրենք:

Ինչ կը վերաբերի մտերմութեան համար Աստուծոյ  
մօտենալուն, այս նոյն սկզբունքը կը կիրարկուի: Շատ անգամ  
երբ հաւատացեալներ Տիրոջ կը մօտենան, կը յուսան, որ  
Անոր հետ պիտի կապուին: (Խօսքս աստուածաշնչական  
«յոյս» բառին չի վերաբերիր, որ «վստահ ակնկալութիւն» է,  
այլ՝ «թերեւս այդպէս է» յոյսին, որ զարգացած է մեր անգլերէն  
լեզուին մէջ): Հաւատացեալները յաճախ օդին խօսքեր կը  
խօսին յուսալով, որ անոնք պիտի լսուին: Այս վերաբերմունքը  
հաւատք չէ եւ Աստուծոյ ներկայութեան պիտի չմտնէ:  
Դարձեալ, Աստուածաշունչը կ'ըսէ. «Առանց հաւատքի  
անհնար [է] Աստուծոյ հաճելի ըլլալ. վասնզի ան որ Աստուծոյ  
կը մօտենայ, պէտք է որ հաւատայ թէ *Աստուած կայ*»  
(Եբրայեցիներուն 11.6, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):  
Գրողը եբրայեցի հաւատացեալներուն կ'ըսէ, որ երբ Աստուծոյ  
մօտենաք, պէտք է հաւատաք, որ *Ան կայ*: Այլ խօսքով, Ան  
հոն պիտի ըլլայ. Ան պիտի լսէ, եւ Ան պիտի պատասխանէ':

Յակոբոս կ'ըսէ. «Այդ մարդը թող չկարծէ թէ Տէրոջմէ բան  
մը պիտի առնէ. երկմիտ մարդը անհաստատ է իր բոլոր  
ճամբաներուն մէջ» (Յակոբոսի 1.7-8): Երկմիտ մարդը այն  
մարդն է, որ Աստուծոյ կը մօտենայ, բայց հարցականի տակ  
կ'առնէ Անոր ներկայութեան մէջ ըլլալը: Ան նոյնիսկ կրնայ  
մտածել, թէ արդեօք Աստուած կը նկատէ իր գալուստը:

Երկմիտ ըլլալու նշաններէն մէկը միտքերու շեղումն է:  
Բացատրեմ: Ծառայութիւններու ընթացքին շատ անգամ երբ  
մարդիկ առջեւ կու գան, որպէսզի պատգամէն ետք իրենց  
համար աղօթենք, երաժիշտներուն կ'ըսեմ, որ դադրին  
նուագելէ: Ատոր պատճառը այն է, որ թէեւ երաժշտութիւնը  
միայն գործիքային է, շատեր պիտի երգեն ծանօթ երգերուն  
բառերը, եւ Տիրոջ վրայ պիտի չկեդրոնանան: Յակոբոս  
կ'ըսէ. «Աստուծոյ մօտեցէք ու անիկա ձեզի պիտի մօտենայ  
[...] մաքրեցէք սրտերնիդ, երկմիտներ» (Յակոբոսի 4.8):  
Ինչպէս կրնանք զԱստուած փնտռել երբ մեր միտքերը  
նոյնիսկ Անոր վրայ կեդրոնացած չեն: Կրնա՞ք երեւակայել, որ  
ընկերոջ մը այդ ձեռով կը մօտենաք:

Մարդոց ուշադրութիւնը շատ դիրութեամբ կը շեղի, քանի որ անոնք կը յուսան, որ երբ Աստուծոյ մօտենան, Անոր հետ պիտի կապուին: Ո՛հ, պէտք է հաւատաք, որ *Ան կայ*, պէտք է հաւատաք, որ *Ան* հոն է. պէտք է հաւատաք, որ *Ան կը* լսէ եւ պիտի պատասխանէ. եւ Ան արժանի է ձեր անբաժան ուշադրութեան: Հաւատքը կը վստահեցնէ, որ *Ան* ձեզի կու տայ Իր ամբողջ ուշադրութիւնը, քանի որ գիտէք, որ Ան խոստացած է, եւ Ան չի ստեր. եթէ մօտենաք, Ան, Իր կարգին պիտի մօտենայ: Օ՛, այս պահուս իմ սիրտիս մէջ գտնուող խանդավառութիւնը գրեթէ անզսպելի է: Ինչ հիանալի Աստուծոյ մը կը ծառայենք: Ան պիտի պատասխանէ մեզի եթէ հաւատքով մօտենանք Անոր:

### ԻՆՉՊԷՍ ՀԱԻԱՏՔ ԿԸ ՍՏԱՆԱՆՔ

Հիմա պէտք է անդրադառնանք այն հարցումին, որ շատ յաճախ կը հարցուի՝ «Ինչպէս կ'աւելցնեմ հաւատքս»: Ասիկա հարցուած է տարիներ շարունակ, իրականութեան մէջ, առաքելներէն սկսելով.

«Առաքելները ըսին Տէրոջը. ‘Մեր հաւատքը աւելցուր’: Տէրը ըսաւ. “Եթէ մանանեխի հատիկի մը չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին. ‘Արմատախիլ եղիր եւ ծովուն մէջ տնկուէ’, պիտի հնազանդի ձեզի”» (Ղուկաս 17.5-6):

Նկատի առէք, որ նախ Ան կ'ըսէ. «Եթէ մանանեխի հատիկի մը չափ հաւատք ունենաք»: Հատիկը շատ պզտիկ բան մըն է, բայց իր մէջ ունի կարողականութիւնը աճելու եւ հսկայ ծառի մը վերածուելու: Ուստի նախքան խօսինք մեր հաւատքին զարգանալուն եւ հսկայ պտղատու ծառի մը վերածուելուն մասին, նախ պէտք է հարցնենք՝ նախ ինչպէս կը ստանանք այդ հատիկը: Այդ հարցումին պատասխանը յստակօրէն կը գտնենք հետեւեալ համարին մէջ.

«Ուրեմն հաւատքը *լսելն է ու լսելը*՝ Աստուծոյ խօսքէն» (Հռոմայեցիներուն 10.17, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):



Շատ պարզ է: Հաւատքի հատիկը կու գայ Աստուծոյ Խօսքը լսելէն: Նկատի առէք նաեւ, որ ան կ'ըսէ, «*լսելէն ու լսելը*»: Երբեմն ատիկա կրնայ պատահիլ միայն մէկ անգամ լսելով, բայց յաճախ հատիկը մեր սիրտերուն մէջ կը դրուի բազմիցս լսելով: Այդ է պատճառը, որ բազմաթիւ անօթի հաւատացեալներ Աստուծոյ Խօսքը պարունակող պատգամ մը քանի մը անգամ կը լսեն կամ կը կարդան: Բազմաթիւ մարդիկ ինծի մօտեցած եւ ըսած են՝ «Ես քու գիրքդ քանի մը անգամ կարդացի, կամ տեսաուղերծդ հինգ անգամ դիտեցի եւ հինգերորդին անիկա մէջս պայթեցաւ»: Ա՛յդ պահուն էր, որ հատիկը դրուեցաւ եւ արմատացաւ:

Ատիկա այնքան պարզ է, որ կրնայ դիւրութեամբ մեզմէ վրիպիլ եթէ զայն բարդացնենք: Հաւատքի հատիկը կու գայ միայն Սուրբ Հոգիին ներշնչումով խօսուած կամ գրուած Աստուծոյ Խօսքը լսելէն: Որքան ցաւալի երեւոյթ է այսօր, որ մեծ թիւով քարոզներ կը քարոզուին, մեծ թիւով գիրքեր կը գրուին, բայց Աստուծոյ Խօսքէն շատ քիչ բան կը խօսուի: Իմ գրած առաջին գիրքս մեծ հրատարակչատան մը կողմէ մերժուեցաւ, քանի որ, անոնց բառերով՝ «շատ քարոզի ոճ ունէր»: Չափազանց շատ աստուածաշնչական համաներ եւ Աստուծոյ ներկայիս ըսածներէն չափազանց շատ խօսքեր կ'ընդգրկէր: Կ'ենթադրեմ, որ անոնք կ'ուզէին բան մը, որ հաճելի ըլլար տղամարդոց զգացումներուն կամ նոյնիսկ անոնց մարմինին:

Որքան ցաւալի է, բայց ատիկա է ճնշումը, որուն բազմաթիւ ծառայողներ տեղի կու տան այսօր: Ներկայիս մենք ունինք «փնտռողներուն հանդէպ զգայուն, այսինքն՝ զիջումներ ընելով եկեղեցին գրաւիչ դարձնող» եկեղեցիներ, ուր յաճախողները իրենց Աստուածաշունչերը չեն բերեր, քանի որ պէտք չունին անոնց: Անոնք մտիկ կ'ընեն հաճելի կամ գուարճալի «դասախօսութիւն» մը, որ իրենց պիտի օգնէ իրենց հաճոյք փնտռելով զբաղած կեանքերուն մէջ: Երբ կը մտածեմ մեր արեւմտեան եկեղեցւոյ վիճակին մասին, ամբողջ վիճակը հեզնական է ինծի համար, քանի որ վերջին երկու տարիներուն մեր ծառայութիւնը դրկած է յիսուն հազար Աստուածաշունչ Չինաստանի մէջ գտնուող գաղտնի եկեղեցիներու ղեկավարներուն, քանի

որ անոնք Աստուծոյ Խօսքին հանդէպ շատ մեծ փափաք ունին: Աստուածաշունչերը այնքան քիչ են Չինաստանի մէջ, որ ղեկավարները Նոր Կտակարանի էջերէն կու տան երէցներուն եւ անոնցմէ կը խնդրեն, որ իրենց բաժինները գոց սորվին, որպէսզի անոնք միշտ կարենան Աստուծոյ Խօսքը խօսիլ եթէ անոնց Աստուածաշունչերը իշխանութիւններուն կողմէ բռնագրաւուին: Այդ տղամարդիկը եւ կիները Աստուծոյ գրուած Խօսքին արժէքը գիտեն:

Սակայն մեր արեւմտեան եկեղեցիներուն մէջ մենք կը փորձենք յառաջ բերել պատգամներ, որոնք զուարճութիւն կը բերեն անձին եւ հանգիստ՝ մարմինին, Աստուծոյ Խօսքէն եկած պատգամներուն փոխարէն, որոնք կը փոխակերպեն անձը (շունչը) եւ կը սպաննեն մարմինը: Այս պատգամները լսելով մենք կրնանք խնդալ եւ նոյնիսկ արձունք թափել յուզիչ պատմութեան մը պատճառով, բայց ինչ կը պատահի երբ մեղքը կու գայ եւ այս փնտռողներուն կեանքերուն դոնները կը զարնէ: Արդեօք անոնք ուժ պիտի ունենան անոր դէմ կանգնելու: Ինչ կը պատահի երբ անոնք պէտք կ'ունենան կարեւոր կացութեան մը մէջ Աստուծոյ կամքը գիտնալու — արդեօք պիտի գիտնան, թէ ինչպէս պէտք է աղօթեն, կամ ինչ պէտք է խնդրեն: Արդեօք անոնք պիտի ունենան հաւատքը անոնց, որոնք Աւետարաններուն մէջ ստացան: Սենարիոնները անվերջ են:

Ուրախ եմ, որ այդ հրատարակիչը մերժեց իմ առաջին գիրքս, որովհետեւ եթէ ընդունէր, ան իր խմբագիրներէն կրնար խնդրել, որ պատգամը տկարացնեն, եւ բազմութիւնները, որոնք անով զօրացած են, պիտի զրկուէին անկէ: (Գիրքը վերջաւորութեան հրատարակուեցաւ): Հեգնականը այն է, որ հրատարակչական ընկերութեան սեփականատէրը վերջաւորութեան արձակեց իր հրատարակչական ընկերութեան ղեկավարը եւ վարձեց մարդ մը, որ Աստուծոյ սիրտին համաձայն սիրտ մը ունէր: Նոր հրատարակիչը վարձեց աշխատակազմ մը, որ իրեն նման բուն փափաք ունէր տեսնելու Աստուծոյ պատգամները՝ Անոր ժողովուրդին կը հռչակուին: Այս նոր մարդը ինձի մօտեցաւ եւ հարցուց եթէ կրնայ իմ յաջորդ գիրքս

հրատարակել: Վերջաւորութեան ես հինգ գիրք գրեցի այդ նոյն հրատարակչատան համար, որոնցմէ չորսը ամենաշատ վաճառուող գիրքեր դարձան. դեռ ւաւելին, մենք կը շարունակենք ստանալ անհամար վկայութիւններ կեանքերու, ընտանիքներու եւ եկեղեցիներու, որոնք փոխուած են: Մի միայն Աստուծոյն փառք:

Ասիկա կը բաժնեկցիմ ձեզի հետ, որովհետեւ երկրին մէջ սով կայ, ոչ թէ հացի եւ ջուրի, այլ Աստուծոյ Խօսքին (Տե՛ս Ամովս 8.11): Ընդհանուր առմամբ ամերիկեան եկեղեցիին մէջ Աստուծոյ Խօսքը շատ քիչ կը քարոզուի: Չեմ ըսեր, որ մենք պատգամներ չունինք, քանի որ մենք ունինք հսկայական քանակութեամբ գիրքեր, տեսաերիզներ եւ ձայներիզներ, բայց մեզի կը պակսի Աստուծոյ Խօսքը: Ինչո՞ւ երբ Ափրիկէի եւ Ասիոյ մէջ գտնուող երկիրները կ'երթամ, կը տեսնեմ մարդիկ, որոնք շատ ւաւելի քիչ աղբիւրներ ունին, քան ամերիկացիները, ատով հանդերձ անոնք շատ դիւրութեամբ կը ստանան Աստուծմէ եւ շատ ւաւելի հաւատք եւ պտուղ ունին իրենց կեանքերուն մէջ: Պարզ է: Անոնք կը լսեն Տիրոջ Խօսքը, եւ ոչ թէ փնտռողները հաճեցնող կամ օրինապաշտ պատգամներ:

Ես Աստուծոյ խոստացայ, որ երբեք պիտի չենթարկուիմ մարդիկը հաճեցնող պատգամներ տալու ճնշումին, փոխանակ Անոր խօսած պատգամները տալու: Պօղոս կ'ըսէ. «Քանզի հիմա մարդիկ կը հաճեցնեմ, թէ՛ Աստուած. կամ մարդո՞ց հաճելի ըլլալ կը փնտռեմ: Քանզի եթէ ես տակաւին մարդոց հաճելի ըլլայի, ա՛յլ Քրիստոսին ծառայ չէի ըլլար» (Գաղատացիներուն 1.10): Քանիներ սկսած են իբրեւ Քրիստոսին ծառաները, բայց հիմա իրենց ժողովուրդին կամ ունկընդիրներուն գերիներն են: Հիմա անոնք կապուած են իրենց ենթադրաբար առաջնորդած ժողովուրդին անոնց ուզածը տալու ճնշումով:

Հաւատքը լսելէն է ու լսելը՝ Աստուծոյ խօսքէն: Աստուծոյ Խօսքն է, որ հաւատքի հատիկը կը դրնէ մեր սիրտերուն մէջ: Իբրեւ ղեկավարներ՝ մենք պէտք է Տիրոջ ժողովուրդին տանք այն, ինչ որ անոնք պէտք ունին, եւ ոչ թէ ինչ որ անոնք կը կարծեն, թէ պէտք ունին: Պէտք է զանոնք կերակրենք

Աստուծոյ յաւիտենական Խօսքով, որ կարող է զանոնք շինելու եւ անոնց ժառանգութիւն տալու (Տէս Առաքեալներու Գործերը 20.32):

Բազմաթիւ ղեկավարներ ներկայիս ճակատամաս կու գան, որոնք անգամ մը եւս կը հռչակեն Աստուծոյ մաքուր եւ անարատ Խօսքը: Ոմանք ինկած են մարդիկը հաճեցնելու ծուղակին մէջ եւ հիմա կ'ազատագրուին, մինչ ուրիշներ նոր կը բարձրանան: Անոնք Աստուծոյ ժողովուրդը ետ Իրեն կը կանչեն: Ինչո՞ւ Աստուած այս ժամանակին մէջ Իրեն հետ մտերմութիւն ունենալու վրայ շեշտ կը դնէ: Պատասխանը պարզ է: Ան կ'ուզէ, որ Իրեն հետ անուշ հաղորդութեամբ ապրելու հաւատքը ունենաք, որովհետեւ չէք կրնար մտերմութիւն ունենալ առանց հաւատքի: Ան Իր ժողովուրդին մէջ Իր Խօսքը կը սերմանէ, որպէսզի Իրեն մօտենան: Օ՛, ինչ խանդավառիչ է այդ ամէնը:

### ԻՆՉՊԷՍ Կ'ԱԻԵԼՑՆԵՆՔ ՄԵՐ ՀԱԻԱՏՔԸ

Հիմա կու գանք ինչպէս մեր հաւատքը կ'աւելցնենք հարցումին: Յիսուս Իր աշակերտներուն կ'ըսէ.

«Եթէ մանանեխի հատիկի մը չափ հաւատք ունենաք եւ ըսէք այս թթենիին. 'Արմատախիլ եղիր եւ ծովուն մէջ տնկուէ', պիտի հնազանդի ձեզի: Ենթադրենք, որ ձեզմէ մէկը ծառայ մը ունի, որ հողագործ է կամ հովիւ: Երբ ծառան դաշտէն դառնայ եւ տուն մտնէ, տէրը իրեն կ'ըսէ. 'Անմիջապէս գնա՛, ճաշդ կեր': Բնականաբար ո՛չ: Ընդհակառակը, անոր կ'ըսէ. 'Ընթրիքս պատրաստէ եւ գոգնոցդ կապելով սպասարկէ՛ ինձի, մինչեւ ընթրիքս վերջացնեմ, անկէ ետք կրնաս ուտել ու խմել': Կը կարծէք որ տէրը իր ծառային երախտապարտ պէտք է ըլլայ իր հրահանգները կատարելուն համար: Չեմ կարծեր: Դուք ալ նոյնպէս, երբ կը կատարէք ինչ որ հրամայուած է ձեզի, ըսէք. 'Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտաւոր էինք ընել՝ կատարեցինք'» (Ղուկաս 17.6-10):

Անցեալին ինձի կը շփոթեցնէր այն միտքը, որ Յիսուս անցաւ հաւատքի մասին խօսելէ իբրեւ հատիկ դէպի ծառայի

մը դերը իր տիրոջ հետ: Այնպես կը թուէր, որ Յիսուսի ըսածները իրարու չէին համապատասխաներ, բայց ես գիտէի, որ ատիկա ճիշդ չէր կրնար ըլլալ: Յետոյ օր մը Սուրբ Հոգին բացաւ իմ աչքերս:

Նախ Ան մեզի կ'ըսէ, որ հաւատքը կու գայ հատիկի ձեւով: Հատիկները շատ փոքր կ'ըլլան, բայց իրենց մէջ կը պարունակեն մեծնալով հսկայ ծառերու վերածուելու կարողականութիւնը: Ուստի բաւարար չէ միայն ցանուած հատիկ մը ունենալը, այլեւ հատիկները պէտք է մշակուին՝ իրենց վախճանին հասնելու համար: Անոր պատասխանին երկրորդ մասը կը պարունակէ հաւատքի հատիկը մեծցնելու եւ հսկայ պտղատու ծառերու վերածելու բանալին: Այլ խօսքով, այնպիսի հաւատք մը, որ արմատախիլ պիտի ընէ թթենիները, պիտի տեղափոխէ լեռները, կամ մեզ պիտի տանի Աստուծոյ ներկայութեան:

Ինչո՞ւ ծառայ մը իր տիրոջ համար հողագործութիւն կ'ընէ կամ հօտերը կ'արածէ: Անոր յետին նպատակը անոր սեղանին վրայ կերակուր դնելն է: Յիսուսի հարցուցածը հետեւեալն է՝ ինչո՞ւ ծառայ մը իր տիրոջ համար հողագործութիւն պիտի ընէ կամ հօտերը պիտի արածէ, յետոյ ներս գալով իր տիրոջ սեղանին վրայ կերակուրը դնելով գործը պիտի չամբողջացնէ: Յաջողակ ըլլալու համար ան պէտք է ամբողջացնէ այն բոլոր բարները, որոնք իրեն ըսուած են, որ ընէ: Չամբողջացնելը կարելի է նմանցնել հատիկի մը, զոր կը ցանես, կը ջրես, եւ հողին վրայ պարարտացուցիչ կը դնես. բայց հունձքի ժամանակէն անմիջապէս առաջ զայն կ'ոչնչացնես կամ անտեսելուդ պատճառով թոյլ կու տաս, որ անոր պտուղը փտտի:

Յիսուս կը խօսի մեր Իրեն հնազանդելուն մասին: Ան Տէրն է, եւ մենք Իր ծառաներն ենք Իր դաշտերուն մէջ: Եթէ կ'ուզենք տեսնել մեր հաւատքի հատիկներուն աճելով պտուղ տալը եւ արդիւնք բերելը, պէտք է հնազանդ ծառաներ ըլլանք այն բոլոր բաներուն մէջ, որ մեզմէ կը խնդրուին, որ ընենք: Նկատի առէք Անոր խօսքերը. «Դուք ալ նոյնպէս, երբ կը կատարէք ինչ որ հրամայուած է ձեզի»: Այս խօսքերը կը հաստատեն, թէ Ան կը խօսի մեր հնազանդութեան մասին, եւ ատիկա է մեր հաւատքին մեծնալը տեսնելու բանալին:

## ՄԱՍՆԱԿԻ ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ Է

Մասամբ հնազանդիլը կամ սկիզբը հնազանդիլը եւ վերջը ետ քաշուիլը բաւարար չէ: Ասիկա այն սխալն է, որուն մէջ շատերը ինկան Աստուածաշունչին մէջ: Ատոր մէկ յատուկ օրինակն է Սաւուղ Թագաւորը: Անոր յստակօրէն ըսուեցաւ Տիրոջ խօսքով, որ երթայ եւ ամբողջ Ամաղէկը բնաջինջ ընէ — մեռցնէ բոլոր տղամարդիկը, կիները եւ մանուկները, ինչպէս նաեւ բոլոր կենդանիները: Շունչ ունեցող ոչ մէկ բան պէտք չէ կենդանի մնար:

Սաւուղ չըսաւ. «Չեմ ըներ»: Շատ յաճախ մենք անհնազանդութիւնը կը սահմանափակենք միայն ակներեւին՝ բացայայտ ապստամբութեան: Սակայն ատիկա ճշգրիտ չէ: Ուրիշ բան մը, որ Սաւուղը չ'ըներ, համաձայնիլը, եւ յետոյ իր միտքը փոխելն է: Մեզմէ շատերը կը հասկնան նաեւ անհնազանդութեան այս ձեւը: Ոչ ալ Սաւուղը կ'անտեսէ ատիկա առաջնահերթութիւն մը ընելը եւ վերջաւորութեան անհնազանդ կը գտնուի անտեսելուն կամ մոռացկոտութեան պատճառով: Շատերը կ'ընդունին, որ այդ վարմունքը հնազանդութիւն չէ, բայց զայն կ'արդարացնեն անոր լաւ մտադրութիւններուն պատճառով: Շատ հաւանաբար բոլորս կը համաձայնինք, որ այս սենարիոնները կը ներկայացնեն անհնազանդ վարքագիծեր, բայց եկէք մեր ուշադրութիւնը դարձնենք Սաւուղին արարքներուն:

Ան անմիջապէս կը հաւաքէ իր բանակը եւ կը յարձակի՝ սպաննելով բոլոր տղամարդիկը, կիները, մանուկները եւ կաթնկերները: Սաւուղ եւ իր մեծ բանակը տասնեակ հազարաւորներ սուրի բերնէ կ'անցընեն: Սակայն Սաւուղ կը խնայէ Ամաղէկի թագաւորը: Ինչո՞ւ: Կը հաւատամ, որ ան այդ ժամանակուայ մշակոյթին կը համակերպէր: Եթէ ազգ մը նուաճէիր, եւ անոր թագաւորը ողջ բռնէիր եւ զայն քու պալատիդ մէջ ստրուկի մը վերածէիր, ան կենդանի աւար մը կ'ըլլար:

Սաւուղը նաեւ հազարաւոր անասուններ մորթեց: Սակայն ան կը խնայէ ոչխարներուն, արջառներուն աղէկներն ու գէրերը եւ գառներն ու ամէն պատուական բաները եւ զանոնք

## ՎՍՏԱՀՈՒԹԵԱՄԲ ԼԵՅՈՒՆ ՀԱՒԱՏՔ

իր ժողովուրդին կու տայ, որպէսզի զոհեր մատուցանեն Աստուծոյ եւ «աստուածաշնչական» գործը կատարեն: Երեակայեցէք, որ ժողովուրդը ինչպէս կը տեսնէր ասիկա: Երբ անոնք այդ դատապարտուած կենդանիները Եհովային կը զոհաբերէին, կը մտածէին. «Ինչ բարեպաշտ թագաւոր մը ունինք, ան միշտ առաջնակարգ տեղ կու տայ Տիրոջ»:

Բայց Աստուծոյ վերաբերմունքը անոր նկատմամբ բոլորովին տարբեր է: Ան կ'ողբայ Սամուէլին. «Սաւուղը թագաւոր ընելուս զղջացի, քանզի ինձմէ ետ դարձաւ ու իմ խօսքերս չկատարեց» (Ա.Թագաւորաց 15.11): Սաւուղը տասնեակ հազարաւորներ սպաննած էր եւ միայն մէկ հոգի խնայած էր: Ան իրեն պատուիրուածին 99.9 տոկոսը կատարեց: Մեզմէ շատերը հնազանդութիւն կը տեսնեն անոր առաքելութեան մէջ, բայց Աստուած անհնազանդութիւն կը տեսնէ: Իրականութեան մէջ քանի մը համար ետք Ան մարգարէին միջոցով ապստամբութիւն կը կոչէ ասիկա: Ասիկա մեզի կ'ըսէ, որ մասնակի հնազանդութիւնը Աստուծոյ աչքերուն բնաւ ալ հնազանդութիւն չէ: Իրականութեան մէջ *գրեթէ* կատարեալ հնազանդութիւնը, նոյնիսկ 99 տոկոսը, հնազանդութիւն չի համարուիր, այլ՝ ապստամբութիւն: Մենք որքան յաճախ կը լսենք ասիկա. «Ինչո՞ւ չես նայիր իմ բոլոր ըրածներուս: Դուն միայն կը կեդրոնանաս այն պզտիկ բանին վրայ, զոր չեմ ըրած»: Վստահ որ Սաւուղ այդպէս ըսաւ: Թէեւ ասիկա կը համապատասխանէ մարդկային տրամաբանութեան, բայց աստուածայինին չի համապատասխաներ:

## ՄՏԵՐՄՈՒԹԻՒՆԸ ՈՒՂԻՂ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ Է ՄԵՐ ՀԱՒԱՏՔԻՆ ՀԵՏ

Եթէ շարունակէք հետեւիլ Սաւուղի կեանքին, պիտի նկատէք անոր հաւատքին շարունակողական անկումը: Նաեւ պիտի նկատէք, որ ան աստիճանաբար աւելի կը հեռանայ Տիրոջմէն: Անոր մտերմութեան մակարդակը կը պակսի, քանի որ Աստուծոյ հետ մտերմութիւն ունենալու մեր կարողութիւնը ուղիղ համեմատական է մեր հաւատքին հետ: Այս առնչութեամբ Յովհաննէս առաքեալը կ'ըսէ.

«Այսպէս նաեւ մեր սիրտերը վստահութիւն կ'ունենան Աստուծոյ առջեւ կանգնելու: Նոյնիսկ եթէ մեր խիղճը որեւէ յանցանքով մեզ մեղադրէ, չմոռնանք՝ որ Աստուած մեր խիղճէն աւելի մեծ է եւ ամէն բան գիտէ: Իսկ եթէ մեր խիղճը մեզ չի մեղադրեր, սիրելիներ, համարձակ կերպով կրնանք դիմել Աստուծոյ» (Ա.Յովհաննէսի 3.19-22, անգլերէն Աստուածաշունչի «Թի.Ի.Վի.» տարբերակէն):

Աստուծոյ հետ մտերմութիւն ունենալու մեր կարողութիւնը ուղիղ համեմատական է մեր հաւատքին հետ, եւ մեր հաւատքը ուղիղ համեմատական է Անոր հանդէպ մեր հնազանդութեան հետ: Հիմա յստակացնեմ այս կէտը: Ես չեմ խօսիր այն անհնազանդութեան մասին, որուն անմիջապէս կը յաջորդէ խոստովանութիւնն ու ապաշխարութիւնը: Դաւիթին մեղքը շատ աւելի մեծ էր, քան Սաուղինը, բայց ան անմիջապէս ապաշխարեց: Անոր հաւատքը չպակսեցաւ (չինկաւ), ոչ ալ Տիրոջ հետ մտերիմ ընկերութիւն ունենալու անոր կարողութիւնը: Սաուղը, միւս կողմէ, շարունակեց իր շահը փնտռել՝ պաշտպանելու եւ ընդլայնելու այն, ինչ որ ան կը կարծէր, որ իրն է: Ան Աստուծոյ սիրտին համաձայն սիրտ չունէր, ինչպէս՝ Դաւիթը:

Առօրեայ կեանքին մէջ ատոր մէկ լաւ օրինակը պիտի ըլլայ ամուսին-կին յարաբերութիւնը խթանող ուժը: Եթէ անոնցմէ մէկը դառնայ ինքնասէր եւ չենթարկուի միւսին, վստահութիւնը եւ մտերմութիւնը պիտի կորսուին: Ամուսինը կրնայ ըսել. «Հէյ, ես ծախսերը կը վճարեմ, տան պէտքերը կը հոգամ, քեզի բնակարան կ'ապահովեմ եւ քեզի համար հագուստ կը գնեմ: Ինչ կ'ըլլայ եթէ կողքին ընկերուի մը ունենամ»: Ան կրնայ ըսել. «Ես կը սիրեմ քեզ», եւ նոյնիսկ ըսել, որ ան լաւ հոգ կը տանի իր կնոջ, բայց ձեզի կը վստահեցնեմ, որ անոնց մտերմութեան մակարդակը արագօրէն պիտի վատթարանայ միայն մէկ մարզի մէջ անոր անհնազանդութեան պատճառով:

Մենք կրնանք հարցնել. «Տէր, ես կանոնաւոր կերպով եկեղեցի կը յաճախեմ, տասանորդներս կը վճարեմ, Աստուածաշունչ կը կարդամ եւ կ'աղօթեմ, ինչո՞ւ հաւատքս



այսքան տկար է»: Հարցում մը հարցնեմ. «Ինչպէս կը վարուիս քու կնոջդ հետ»: Աստուած կ'ըսէ. «Նմանապէս այրերը խոհեմութիւնով անոնց հետ ապրին, տկար անօթի պէս յարգելով կիները, իբրեւ կեանքի շնորհքին ժառանգակիցներ՝ *որպէսզի ձեր աղօթքներուն արգելք չըլլայ*» (Ա.Պետրոսի 3.7, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ): Աստուծոյ հետ մեր հաղորդակցութիւնը կը խափանուի, քանի որ մենք բոլոր մարգերուն մէջ հնազանդ չենք: Յիշեցէք Յիսուսի խօսքերը. «Նոյնպէս դուք, երբ *բոլոր* ձեզի հրամայուած բաները ընէք»: Մասնակի հնազանդութիւնը երբեք պիտի «չաւելցնէ մեր հաւատքը»: Նոյն այս սկզբունքը կը վերաբերի կիներուն իրենց ամուսիններուն հետ վարուելուն, զաւակներուն իրենց ծնողներուն հետ վարուելուն, կամ նոյնիսկ ծնողներուն իրենց զաւակներուն հետ վարուելուն:

Ուրիշ հարցում մը, որ կրնայ հարցուիլ. «Դուք ձեր խօսքին տէրն էք»: Սուրբ Գիրքը մեզի կ'ըսէ, որ Աստուծոյ հետ մտերմութիւն ունեցող անձը ան է, որ «Երդում կ'ընէ իր վնասին ու չի դառնար» (Սաղմոս 15.4): Արդեօք դուք խոստում կու տաք եւ չէք պահեր: Դուք սովորաբար ձեր բերանով կը մեղանչէք եւ յետոյ կը զարմանաք, թէ ինչո՞ւ ձեր հաւատքը տկար է: Ես կրնամ տակաւին երկար ժամանակ այսպիսի հարցումներ հարցնել:

Միտքը, որ կ'ուզեմ պարզել այն է, որ մենք պէտք է մեր կեանքը ապրինք՝ ձգտելով լիովին հնազանդ ըլլալ Աստուծոյ Խօսքին: Որովհետեւ մեզի յստակօրէն եւ վճռականօրէն ըսուած է.

«Որդեակներս, այս բաները ձեզի կը գրեմ, *որպէսզի մեղք չգործէք* [...]» (Ա.Յովհաննէսի 2.1, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Շատերը մեղքին կը նային կամ անփոյթ, կամ օրինապաշտ ձեւով: Անոնք, որոնք անտարբեր կերպով կը նային անոր, կը հաւատան, որ կրնան խախտել Աստուծոյ Խօսքը, քանի որ մենք շնորհք եւ ողորմութիւն ունինք, եւ խաչին վրայ ամէն պէտք հոգացուած է: Այո՛, անոր հարցը լուծուեցաւ խաչին վրայ, բայց պէտք է յիշենք այն, ինչ որ Պօղոսը կ'ըսէ

հաւատացեալներուն. «Չէք գիտեր, թէ որո՞ւ որ անձերնիդ իբր ծառայ ընծայէք հնազանդելու, ծառայ կ'ըլլաք անոր՝ որուն որ կը հնազանդիք, թէ՛ մեղքի՝ որ մահուան կը տանի եւ թէ՛ հնազանդութեան որ՝ արդարութեան» (Հռոմայեցիներուն 6.16): Դարձեալ Յիսուս Ինքը կ'ըսէ անոնց, որոնք զինք Տէր կը կոչեն, բայց սովորաբար կը մեղանչեն. «Մէկդի՛ գացէք քովէս դուք, որ անօրէնութիւն կը գործէիք» (Մատթէոս 7.23):

Օրինապաշտները մեղքի պղծութիւնը կը տեսնեն իբրեւ անձի մը իր «սրբութեան ակումբ»-էն հեռացուիլը: Ատիկա չէ, որ պէտք է մեզ մղէ, որ որեւէ մէկ տեսակի անհնազանդութենէ հեռու մնանք. իրականութեան մէջ այդ մղումը չի կրնար մեզ մեղքէն հեռու պահել: Սակայն երբ կը տեսնենք, որ մեղքը մեր հաւատքին վնաս կը հասցնէ, որ իր կարգին Աստուծոյ հետ մեր մտերմութեան արգելք կ'ըլլայ, պիտի փախչինք անկէ: Ինչո՞ւ: Որովհետեւ ամէն բանէ աւելի մենք կը փափաքինք Անոր մօտիկ ըլլալ:

Հիմա մենք կը հասկնանք, թէ ինչո՞ւ Յակոբոսը մեզի կ'ըսէ, հրաւերը տալէն անմիջապէս առաջ եւ վերջ, որ Աստուծոյ մօտենանք.

«Ուստի *հնազանդեցէ՛ք Աստուծոյ*: Սատանային հակառակ կեցէք եւ անիկա ձեզմէ պիտի փախչի: Աստուծոյ մօտեցէ՛ք ու անիկա ձեզի պիտի մօտենայ: *Սրբեցէ՛ք ձեռքերնիդ, մեղաւորներ [...] (Յակոբոսի 4.7-8, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):*

Ամէն բան հնազանդութեան շուրջ կը դառնայ: Ինչո՞ւ: Որպէսզի վստահութեամբ լեցուն մօտենանք: Դարձեալ եկէք Սուրբ Գիրքին նայինք այս գլուխին սկիզբէն.

«Ուրեմն, եղբայրներ, *համարձակութիւն* ունինք սուրբ տեղը մտնելու Յիսուսին արիւնովը, այն նոր ու կենդանի... *մօտենանք* ճշմարիտ սրտով, *[վստահութեամբ] լեցուն հաւատքով*, սրտերնիս չար խիղճէն մաքրուած ու մարմիննիս մաքուր ջրով լուացուած. *անխախտ պահենք յոյսին դաւանութիւնը* [առանց երկմտելու], վասնզի հաւատարիմ է անիկա, որ խոստացաւ» (Եբրայեցիներուն 10.19-23, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Մեր վստահությունը կամ կատարեալ վստահությունը ծագում կ'առնէ հաւատքէն, որ կու գայ Աստուծոյ Խօսքը լսելէն, որ իր կարգին կ'աւելնայ մեր շարունակուող հնազանդութեամբ: Եթէ մեղանչենք, Հօրը քով Բարեխօս ունինք, եւ եթէ շուտով զղջանք, մեր խիղճը ազատ կ'ըլլայ դատապարտութենէն, քանի որ Անոր արիւնը մեզ կը մաքրէ եւ ձիւնէն աւելի ճերմակ կ'ընէ: Սակայն եթէ կամաւորաբար շարունակենք մեղքի մէջ մնալ, այն ատեն մեր խիղճը պիտի դատապարտէ մեզ, եւ Աստուած մեր խիղճէն աւելի մեծ է: Այն ատեն պիտի չկարենանք վստահութեամբ մօտենալ կենդանի Աստուծոյ:

### ՅՈՅՍ

Հիմա անցնինք վերը նշուած համարին մէջ եղած երկրորդ հաստատումին. «Անխախտ պահենք յոյսին դաւանութիւնը»: Յոյսը յաճախ սխալ հասկցուած է. ատիկա «թերեւս այդպէս է» իմաստը ունեցող բառ մը չէ, այլ կը նշանակէ՝ «ինքնավստահ (աներկմիտ) ակնկալութիւն»:

Երբ Աստուած առաջին անգամ Աբրահամի երեւցաւ, Ան խոստացաւ. «Ես քեզի վահան եմ [քու խիստ մեծ վարձատրութիւնդ] ու քու վարձքդ խիստ շատ պիտի ըլլայ» (Ծննդոց 15.1): Աբրահամ չունէր ամուլ կնոջմէն զաւակներ ունենալու *բնական յոյսը*, ուստի անոր պատասխանը քիչ մը յուսահատ էր.

«Ո՛վ Գերիշխան Տէր, ինձի ինչ օգուտ ունին քու բոլոր օրհնութիւններդ երբ նոյնիսկ որդի չունիմ: Քանի որ առանց զաւակի կը մնամ, այս Դամասկոսցի Եղիազարը, իմ տանս ծառան, իմ ամբողջ հարստութիւնս պիտի ժառանգէ: Որովհետեւ ինձի սերունդ չտուիր, ահա իմ տանս ծառան ինձի ժառանգորդ պիտի ըլլայ» (Ծննդոց 15.5, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն):

Յստակ էր, որ այս մարդը շատ քիչ յոյս ունէր կամ բնաւ չունէր, եւ Աստուած գիտէր, որ Աբրահամ չէր կրնար Իր խոստումները ստանալ եթէ յոյս չ'ունենար: Ուստի այդ գիշեր

Տէրը զինք դուրս հանեց եւ ըսաւ, որ աստղերը համրէ: Կը հաւատամ, որ հետեւեալը պատահեցաւ: Աբրահամ ի վերջոյ քնացաւ մինչ ան անթիւ աստղերը կը հաշուէր: Յաջորդ առաւօտ Տէրը զինք հարցումով մը արթնցուց. «Բոլորը հաշուեցիր»:

Աբրահամ ըսաւ. «Ո՛հ, շատ են»:

Աստուած իր ուզած պատասխանը ստացաւ եւ անոր պատասխանեց ըսելով. «Քու սերունդդ այսպէս պիտի ըլլայ՝ [անհամար]» (Ծննդոց 15.5, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն): Աստուած անոր մէջ աստուածային յոյս դրաւ՝ Աբրահամի տուած Իր խոստումին յստակ մէկ պատկերը՝ բազմաթիւ զաւակներ: Ամէն անգամ որ ան աստղերուն կը նայէր, ան կը յիշէր Աստուծոյ խոստումը եւ կը լսէր անթիւ սերունդներ կը գոռան. «Հայր Աբրահամ, Հայր Աբրահամ»: Այդ մասին անդրադառնալով Նոր Կտակարանը կ'ըսէ՝ Աբրահամ.

«Որ ջուսացուած բանին՝ յուսով հաւատաց՝ թէ ինք շատ ազգերու հայր պիտի ըլլայ, (ինչպէս ըսուեցաւ ալ [...])» (Հռոմայեցիներուն 4.18, Աստուածաշունչի «Քէյ. Ճէյ. Վի.» տարբերակէն):

Ինչ ըսուեցաւ: «Քու սերունդդ այսպէս պիտի ըլլայ՝ [անհամար]»: Բնական յոյսին բացակայութեան աստուածայինը միջամտեց՝ տեսանելին խոստումով հովանաւորելու համար: Աստուածային յոյսը բացայայտէն անդին նայեցաւ՝ տեսնելու Աստուծոյ աներկմիտ ակնկալութեան մարզէն ներս: Աբրահամը ընտրեց գերիշխել այն, ինչ որ բացայայտ էր, աստուածայինով: Իրականութեան մէջ Սուրբ Գիրքը կ'ըսէ, որ ան «իր մտքին մէջ հաստատ պահեց թէ՛ ան որ խօսք տուաւ, կարող է ընելու ալ» (Հռոմայեցիներուն 4.21): Ան խոստումը ստացաւ յոյսով զօրացած հաւատքով: Աստուածաշունչը կ'ըսէ.

«Արդ՝ հաւատքը յուսացուած բաներուն հաստատութիւն[ն] [է]» (Եբրայեցիներուն 11.1):

Մեր հաւատքը Աստուծոյ յոյսը կամ խոստումները կը հաստատէ: Ինչպէս տեսանք Աբրահամի մէջ, աստուածային

## ՎՍՏԱՀՈՒԹԵԱՄԲ ԼԵՅՈՒՆ ՀԱԻԱՏՔ

յոյսը Աստուծոյ կամքին տեսիլքը կամ նախագիծն է, որ մենք տակաւին չենք կրնար մեր բնական աչքով տեսնել: Աստուածային յոյսը չափազանց կարեւոր է, քանի որ առանց յոյսի, հաւատքը ոչինչ ունի հաստատելու: Աստուծոյ Խօսքը ոչ միայն հաւատք կը դնէ մեր սիրտերուն մէջ, այլեւ մեզի յոյս եւ տեսիլք կու տայ հաւատքին համար:

Ատիկա կարելի է նմանցնել շինարարական նիւթերու հաւաքածոյի մը ինչպէս՝ սալիկ, կղմինտր, պատուհաններ, մանր խիճեր, տախտակ, թրծաշաղախ, աղիւս, եւայլն: Մենք կրնանք բոլոր աղբիւրները ունենալ, բայց առանց նախագիծի, շինարարական գործընթացը աղիտալի՛ պիտի ըլլայ: Կրնաք մտածել. «*Ես կրնամ առանց նախագիծի շինել*»: Թերեւս եթէ ձեր միտքին մէջ նախագիծ մը ունենաք, բայց տակաւին պէտք է որոշ ծրագիր մը ըլլայ:

## ՎԱՐԱԳՈՅՐԻՆ ՆԵՐՍԻ ԿՈՂՄԸ ԳՏՆՈՒՈՂ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՄՏՆԵԼ

Ինչ կը վերաբերի մտերմութեան, եկէք անգամ մը եւս կարդանք մեր գլխաւոր համարը.

«Ուրեմն, եղբայրներ, *համարձակութիւն* ունինք սուրբ տեղը մտնելու Յիսուսին արիւնովը, այն նոր ու կենդանի... *մօտենանք* ճշմարիտ սրտով, [*վստահութեամբ*] *լեցուն հաւատքով*, սրտերնիս չար խիղճէն մաքրուած ու մարմիննիս մաքուր ջրով լուացուած. *անխախտ պահենք յոյսին դաւանութիւնը* [առանց երկմտելու], վասնզի հաւատարիմ է անիկա որ խոստացաւ» (Եբրայեցիներուն 10.19-23, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Յստակ է, որ գրողը կը խօսի Տիրոջ մօտենալու մասին: Դարձեալ նայեցէք «Անխախտ պահենք յոյսին դաւանութիւնը» խօսքերուն: Յիշեցնեմ, որ յոյսը նախատիպ մըն է՝ տեսիլք մը՝ աստուածային պատկերը այն բանին, զոր մեր բնական աչքով չենք տեսներ: Ասիկա ի մտի ունենալով ուշադրութեամբ կարդացէք հետեւեալը.

«Քանզի մարդիկ իրենցմէ մեծին վրայ երդում կ'ընեն ու անոնց բոլոր հակառակութեանը հաստատ վճիռ տուողը երդումն է: Որով Աստուած իր խորհուրդին անփոփոխ ըլլալը ակաւելի ցուցնել ուզելով խոստումին ժառանգորդներուն, երդում ըրաւ. որպէսզի երկու անփոփոխելի բաներով, որոնք կը ցուցնեն թէ՛ անկարելի է, որ Աստուած սուտ խօսի, հաստատուն մխիթարութիւն ունենանք մենք, որ ապաստան գտանք մեր առջեւ դրուած յոյսը ամուր բռնելու, որ ունինք իբրեւ հաստատ ու անշարժ խարիսխ մը մեր անձին, որ *վարագոյրին ներսի կողմն ալ կը մտնէ*» (Եբրայեցիներուն 6.16-19, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Կը տեսնէք: Այս համարները միասին դրէք եւ կ'ունենաք.

*«Մօտենանք ճշմարիտ սրտով, [վստահութեամբ] լեցուն հաւատքով [...] անխախտ պահենք յոյսին դասնութիւնը [առանց երկմտելու], վասնզի հաւատարիմ է անիկա որ խոստացաւ [...] Այս յոյսը, որ ունինք իբրեւ հաստատ ու անշարժ խարիսխ մը մեր անձին, որ վարագոյրին ներսի կողմն ալ կը մտնէ [որ վարագոյրին ներսի կողմը գտնուող Ներկայութեան կը մտնէ]»* (Եբրայեցիներուն 10.22-23: 6.19, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Անգլերէն Աստուածաշունչի «Նիւ Լիվինկ Թրանսլէյշըն» տարբերակը ատիկա այսպէս կ'ըսէ. «Անիկա մեզ կ'առաջնորդէ երկինքի վարագոյրէն ներս, Աստուծոյ ներքին Սրբարանը»: Աստուած էր, որ Աբրահամին տուաւ աստուածային յոյսին յստակ տեսիլքը: Ինչ կը վերաբերի մտերմութեան, Սուրբ Հոգին կու տայ երկնային տեսիլքը այն բաներուն, զորս մեր երկրաւոր աչքերը չեն տեսներ, Ինքնին Տէրը, որ երկինքի գահի սենեակին մէջ կը բնակի:

Երբ կը մօտենանք, մեր մէջ գտնուող Աստուծոյ Հոգիին կը դիմենք, եւ մեր մարմինին եւ սահմանափակ բնական մտածողութեան վարագոյրին ընդմէջէն անցնելով Անոր ներկայութեան կը մտնենք: Երբ հոն հասնինք, մենք երկինքի

## ՎՍՏԱՀՈՒԹԵԱՄԲ ԼԵՅՈՒՆ ՀԱԻԱՏՔ

ներքին սրբարանը անցած կ'ըլլանք, ուր կը հանդիպինք Յիսուսի եւ Հօր: Այս ներքին սրբարանին մէջ մենք Փառքերուն Տիրոջ հետ մտերմութիւն կը վայելենք:

Հաւատացեալները յաճախ կը փորձեն երեւակայել, որ գահի սենեակ մը կը մտնեն երբ կ'աղօթեն: Սակայն առանց Սուրբ Հոգիին օգնութեան, ատիկա կարելի է նմանցնել առանց տեսիլքին Աստուծոյ խոստումը հասկնալու Աբրահամին անկարողութեան: Միայն երբ Տէրը Անձամբ յստակ պատկեր մը գծեց անոր համար, Աբրահամ կրցաւ ըմբռնել Աստուծոյ խոստումը:

Չենք կրնար ներքին սրբարանին մէջ իսկական եւ սերտ մտերմութիւն վայելել առանց Սուրբ Հոգիին: Ան մեզի կու տայ յոյսը կամ յստակ տեսիլքը այն բանին, որ մեր բնական ասքը չի կրնար տեսնել: Այդ տեսիլքով մենք վստահութեամբ լեցուն հաւատքով եւ կատարեալ համարձակութեամբ կը մօտենանք՝ վայելելու այն բանը, որուն համար Յիսուս շատ բարձր գին վճարեց, որպէսզի մենք անոր մէջ ապրինք: Օ՛, շնորհակալ ենք, Յիսուս, Քու թագաւորական արիւնդ մեզի համար թափելուդ համար, որպէսզի մենք վստահութեամբ մտնենք Աստուծոյ ներկայութեան թէ՛ հիմա եւ թէ՛ յալիտեան:

## ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

1. Աստուածաշնչական «յոյս» բառը, որ կը նշանակէ աներկմիտ ակնկալութիւն, կը հակադրուի «թերեւս այդպէս է» յոյսին հետ, որ զարգացած է անգլերէն լեզուին մէջ: Բնաւ պատահա՞մ է, որ օդին խօսքեր խօսած էք «թերեւս այդպէս է» վերաբերմունքով, առանց աներկմիտ ակնկալութիւն ունենալու: Եթէ այո՛, ատիկա ինչ կ'ըսէ ձեզի ձեր հաւատքին վիճակին մասին:
2. Առաքեալներուն օրերէն ի վեր հաւատացեալները երկու հարցում կը հարցնեն: Հարցումները գրեթէ նոյն ոճը ունին, բայց խորապէս տարբեր են իրենց հարցուցածին մէջ.
  - Ինչպէս հաւատք կը ստանանք:
  - Ինչպէս մեր հաւատքը կ'աւելցնենք:

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

Այս գլուխին մէջ ձեր սորվածներուն համաձայն, ինչպէս կը պատասխանէք այս հարցումներուն:

3. Երբ կը բաղդատէք Սաւուղին հնազանդութեան բնոյթը Դաւիթինին հետ, ինչ տարբերութիւններ կը տեսնէք: Ինչ ազդեցութիւն ունեցաւ անոնց հնազանդութիւնը Աստուծոյ հետ անոնց ունեցած մտերմութեան վրայ:
4. Հնազանդութիւնը ինչպէս կ'ազդէ մէկու մը համարձակութեամբ Աստուծոյ մօտենալու կարողութեան:



# Մ Օ Տ Ե Ն Ա Լ



Դուք կը համարձակիք Անոր մօտենալ, որովհետեւ Ան ձեզի տուած է Իր անժամանակ հրաւերը:

Այս վերջին գլուխին մէջ ես պիտի անդրադառնամ Լաւելի գործնական ձեւի մը՝ մօտենալու Անոր, որ մեզ առատօրէն կը սիրէ: Սակայն աստիկա ընելը կարելի է նմանցնել մանրամասն թելադրութիւններ ընելու մէկու մը, որ ամուսնանալու կը պատրաստուի, թէ ինչպէս մտերմութեան մէջ պէտք է մտնէ ննջարանին մէջ: Դուք կրնաք միայն որոշ բաներ սորվեցնել, քանի որ մնացեալը սիրտէն կը հոսի: Եւ ատոր մէջ է մտերմութեան գեղեցկութիւնը. աստիկա կը ծաղկի մեր սիրտերէն. մեր միտքերը չեն սորվեցնելու աստիկա:

Երբ Տիրոջ կը մօտենանք, պէտք է յիշենք, որ մենք Անոր պատկերովը ստեղծուած ենք: Ինչպէս մեր զգացումները կը տարբերին, այնպէս ալ Անորը: Ինչպէս որ մտերիմ բարեկամի մը տրամադրութիւններուն նկատմամբ զգայուն պէտք է ըլլանք, նոյնպէս պէտք է զգայուն ըլլանք Տիրոջ տրամադրութիւններուն

Նկատմամբ: Օրինակ՝ կան ժամանակներ երբ Անոր ներկայութեան պէտք է գանք երգելով, ուրիշ ժամանակներ կոտրուած պէտք է գանք. համարձակութեամբ գալու ժամանակներ եւ դողալով գալու ժամանակներ: Մենք պիտի ունենանք խնդալու ժամանակներ, եւ լալու ժամանակներ, Անոր օգնութեամբ խաւարի ուժերուն դէմ պատերազմելու ժամանակներ, եւ Անոր հիանալի ներկայութեան մէջ խաղաղութեան եւ հանգստութեան ժամանակներ:

Այս վերջին հակադրութեան օրինակներէն մէկը կրնայ ըլլալ աւազակներու վտանգին տակ գտնուող տունը: Ենթադրենք, որ ոճրագործները ետեւի դուռը կը կոտրեն: Երեւակայեցէք, որ այդ պահուն անոր որդիներէն մէկը կը մօտենայ իր հօր, որ զէնք կը փնտռէ, եւ կ'ըսէ. «Հայրիկ, դուն ամենահիանալի հայրն ես: Դուն շատ լաւ կը հոգաս մեր պէտքերուն, դուն զուարճալի եւ խելացի ես ...»:

Հայրը պիտի ընդհատէ իր որդիին խօսքը՝ խստօրէն ըսելով. «Ասիկա քու զգացումներդ ինծի յայտնելու ժամանակը չէ, գնա՛ պէյսպոլի գաւազանը բեր եւ տունին ետեւի մասը երթանք»:

Յիշեցէք, որ մենք՝ Յիսուս Քրիստոսի եկեղեցին, Աստուծոյ տունն ենք: Իրական թշնամիներ կան: Ուստի եղած են ժամանակներ, երբ աղօթքի մտած եմ եւ Սուրբ Հոգիին մղումը եղած է պատերազմիլ, պատերազմելու ձեւը, որուն զիս կ'առաջնորդէր նոյնպէս կը փոխուէր: Ատիկա կրնայ ըլլալ խօսքը խօսելով, Հոգիով զօրաւոր կերպով աղօթելով, կամ նոյնիսկ զօրաւոր փառաբանութեան միջոցով (Յովսափատ եւ Իսրայէլի զօրքերը, տես Բ.Մնացորդաց 20.20-24): Մենք ոչ միայն մթնոլորտին հանդէպ զգայուն պէտք է ըլլանք, այլեւ Անոր փափաքը իրականացնելու ձեւին հանդէպ զգայուն պէտք է ըլլանք:

Վերադառնանք մեր օրինակին. եկէք նայինք հակառակ կողմին: Երեւակայեցէք նոյն տունը. ամէն բան լաւ է, եւ հայրը կրակարանին քով կը հանգստանայ: Այս անգամ որդին ներս կը մտնէ սաղաւարտը հագած եւ իր պէյսպոլի գաւազանով կը գոռայ. «Եկ՛ր յարձակինք, Հայրիկ»:

Հայրը անոր կը նայի եւ կ'ըսէ. «Տղան, սխալ բան մը չկայ հիմա. եկուր նստիր եւ զիրար վայելենք»:

## ՄՕՏԵՆԱԼ

Վստահ եմ, որ ձեր միտքէն բազմաթիւ տարբեր սենարիոններ կ'անցնին, որոնց կը հանդիպինք մեր մօտիկներուն հետ: Ատով հանդերձ, կան աղօթքի տարբեր ժամանակներ եւ եղանակներ: Սուրբ Գիրքը կը խօսի այն բոլոր բաներուն մասին, զորս վերը ցանկագրեցի եւ անոնցմէ ակելիին: Բանալին այն է, որ գիտնաս, թէ այդ պահուն Աստուծոյ սիրտին վրայ ինչ կայ:

## ԱՍՏՈՒԾՈՅ ՇԱՀԵՐԸ

Ինչպէս կը զգաք եթէ ձեր բարեկամներէն մէկը ձեզի կը մօտենայ միշտ իր շահը փնտռելով: Հայր մը ինչ կը զգայ եթէ իր որդին իրեն կը մօտենայ միայն երբ խնդրանք մը ունի: Ձեր սիրտը կը բանամք անձնասէր մարդոց կամ անոնց, որոնք գիտէք, որ գուրջ չունին: Եթէ Տիրոջ սիրտին պիտի դպչինք, պէտք է ձգտինք գիտնալ, թէ Ան ինչ կ'ուզէ եւ ինչ բանի կարիքը ունի: Օ՛, այո՛, կարիքը ունի: Թէեւ Ան ամենակարող է, ամենազօր է եւ բանի մը պէտք չունի, բայց տակաւին ան մարդուն տուած է ազատ կամք եւ որոշ ազատութիւններ երկրի վրայ: Այդպիսով Ան Ինքզինք խոցելի դարձուց: Մարդուն անկումին պատճառով, ինչպէս նաեւ խաւարի ուժերուն, որոնք կը մոլորեցնեն, թակարդի մէջ կը ձգեն եւ կը տանջեն, կան շատ կարիքաւոր եւ վիրաւորուած մարդիկ: Ան կ'ուզէ ի նպաստ այդ մարդոց շարժիլ եւ պաշտպանել զանոնք եւ կը սպասէ անոնց, որոնք անոնց համար պիտի աղաղակեն: Այդ պատճառով պիտի տեսնէք, որ Տէրը շատ մօտ է անոնց, որոնք Աստուծոյ շնորհքով կը բարեխօսեն եւ օգնութիւն կը բերեն վիրաւորուածներուն: Յիսուս ատենաւր նստած կ'ըսէ.

«[...] Անօթեցայ եւ ինծի ուտելիք տուիք. ծարաւեցայ ու ինծի խմցուցիք. օտարական էի, զիս ներս առիք. մերկ էի, զիս հագուեցուցիք. հիւանդ էի, ինծի տես եկաք. բանտի մէջ էի, ինծի եկաք» (Մատթէոս 25.35-36):

Հոս կը տեսնէք փառքերուն Տէրը, Ան, որ ունի ամէն իշխանութիւն եւ զօրութիւն տիեզերքի մէջ, կ'ըսէ, որ Ան կարիքի մէջ է: Անոր կարիքը մերն է, անոնք, որոնք Ան կը

սիրէ: Որովհետեւ Ան կ'ըսէ. «Քանի որ իմ այս եղբայրներէս ամենէն պզտիկներէն մէկուն ըրիք, ինծի ըրիք» (հմր 40): Անոնք որոնք կը բարեխօսեն, ֆիզիքական օգնութիւն կու տան, Աստուծոյ ազատագրող Խօսքը կը քարոզեն, Աստուծոյ զօրութեամբ ցաւերը կը բժշկեն եւայլն, պիտի տեսնեն, որ Անոր սիրտը աւելի զգայուն է, քան ուրիշ ոեւէ մէկուն սիրտը:

Ժամանակ մը Աստուծոյ ժողովուրդը ջանասիրութեամբ Անոր կը մօտենար, եւ Ան նոյնիսկ անոնց մասին կ'ըսէ. «Անոնք ամէն օր զիս կը փնտոեն եւ իմ ճամբաներս գիտնալ կը փափաքին» (Եսայի 58.2): Սակայն Տէրը չէր պատասխաներ: Ժողովուրդը սկսաւ հարցնել, թէ ինչո՞ւ Աստուած իրենց չէր մօտենար: Անոնք չէին կրնար հասկնալ, թէ ինչո՞ւ Ան իրենց աղօթքներուն չէր պատասխաներ: Այն ատեն Ան ըսաւ.

«Ձեզի կ'ըսեմ ինչո՞ւ: Որովհետեւ ձեր ծոմապահութեան օրը ձեր բաղձանքը կը կատարէք: Դուք շարունակ ձեր գործատրները կը հարստահարէք: Ինչ օգուտ ունի ծոմ պահելը երբ դուք շարունակ կը կռուիք եւ կը վիճաբանիք» (Եսայի 58.3-4, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն):

Նկատի առէք, որ անոնք կը կռուին եւ կը վիճաբանին: Վերադառնանք այս գիրքին գլխաւոր համարին. «Աստուծոյ մօտեցէք ու անիկա ձեզի պիտի մօտենայ»: Յակոբոսը այդ գլուխը կը սկսի ըսելով.

«Ուրկէ են պատերազմները եւ ուրկէ կռիւները ձեր մէջ: Չէ որ ձեր ցանկութիւններէն, որոնք ձեր անդամներուն մէջ կը պատերազմին: Կը ցանկաք ու չունիք, կը սպաննէք ու կը նախանձիք եւ չէք կրնար ձեր ուզածին հասնիլ: Կը պատերազմիք ու կը կռուիք, բայց չունիք, վասնզի չէք խնդրեր. կը խնդրէք ու չէք առներ, վասնզի չարաչար կը խնդրէք՝ որպէսզի ձեր ցանկութիւններուն բանեցնէք: Շնացողներ [...] Ուստի հնազանդեցէք Աստուծոյ: Սատանային հակառակ կեցէք եւ անիկա ձեզմէ պիտի փախչի: Աստուծոյ մօտեցէք ու անիկա ձեզի պիտի մօտենայ» (Յակոբոսի 4.1-8):

Ուստի այս է լուծումը: Ահա գործնական քայլ թիւ մէկը՝ պէտք է մեր կեանքերը կորսնցնենք յանուն Անոր եւ անտարանին: Մենք պէտք է Անոր փափաքներուն համար ապրինք: Պէտք է սիրենք այն, ինչ որ Ան կը սիրէ եւ ատենք այն, ինչ որ Ան կ'ատէ: Այն, ինչ որ Անոր համար կարելի է, պէտք է կարելի դառնայ մեզի համար, եւ այն, ինչ որ շատ կարելի չէ Անոր համար մեզի համար այդքան կարելի պէտք չէ ըլլայ: Մենք պէտք է Անոր սիրտը ունենանք:

Արդեօք ատիկա կը նշանակէ, որ մեր կեանքին մէջ անձնական թարմացումի ժամանակ պիտի չունենանք: Արդեօք Աստուած Իր ժողովուրդը կազդուրումէն եւ հանգիստէն կը զրկէ: Բացարձակապէս ո՛չ: Սուրբ Գիրքը մեզի կ'ըսէ, որ Աստուած «ամէն բան մեզի առատօրէն կու տայ վայելելու» (Ա.Տիմոթէոսի 6.17): Երբ մենք մեր սեփական ցանկութիւններուն ետեւէն երթալով Անոր փափաքները կ'անտեսենք, մենք կը կորսնցնենք մեր կապը Անոր սիրտին հետ:

Կան մարդիկ, որոնք կը հաւատան, որ մենք Աստուծոյ փափաքները չենք իրագործեր եթէ ֆիզիքապէս չօգնենք աղքատներուն: Սակայն եթէ ատիկա ճիշդ է, հապա ինչո՞ւ երբ այրիները պէտք է կերակրուէին, Պետրոսը ըսաւ. «Մեզի չի վայելեր Աստուծոյ խօսքը ձգել ու սեղաններու ծառայութիւն ընել: Ուստի, եղբայրներ, ձեզմէ եօթը հոգի ընտրեցէք՝ բարի վկայուած, Սուրբ Հոգիով եւ իմաստութիւնով լեցուն, որպէսզի զանոնք այս գործին վրայ դնենք: Եւ մենք աղօթքի ու Աստուծոյ խօսքին պաշտօնով պարապինք» (Առաքեալներու Գործերը 6.2-4): Պետրոսը անդրադարձաւ, որ կային ոմանք, որոնք աղքատներուն (կարիքաւոր մարդոց) պէտքերուն պիտի հոգային՝ անոնց Աստուծոյ Խօսքը կերցնելով, եւ ուրիշներ, որոնք անոնց ֆիզիքական պէտքերուն պիտի հոգային: Սակայն անոնք բոլորն ալ ունին մէկ հասարակաց բան՝ անոնք Յիսուսի պէտքը կը հոգան. «Անօթեցայ եւ ինձի [...] տուիք [...]»:

Անոնք, որոնց համար Տիրոջ շահը մեծ արժէք ունի, անոնք են, որոնք անելի դիւրութեամբ կը մօտենան Անոր: Մովսէս այդպիսի մարդ էր, որովհետեւ ան Աստուծոյ ժողովուրդը հովուեց՝ Տիրոջ շահերը նկատի ունենալով, ան Աստուծոյ սիրտին հանդէպ զգայուն էր, եւ հարուստ հաղորդակցութիւն ունէր Անոր հետ:

Աստուած կը խօսի Յովսիայի մասին, որ լաւ առաջնորդ մըն էր, եւ անոր մասին կ'ըսէ. «Աղքատին ու տնանկին դատը տեսաւ, այն ատեն անոր աղէկ եղաւ: 'Միթէ զիս ճանչնալը ասիկա չէ', կ'ըսէ Տէրը» (Երեմիա 22.16, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Անոնք, որոնք իրենց ծառայութիւնը լաւ կը կատարեն, ըլլայ ատիկա ծառայութիւններ (օգնութիւն), կառավարել, ուսուցանել, վարչական գործեր, տալ, եւայլն, աւելի դիրին կը մօտենան Աստուծոյ, քան անոնք, որոնց սեփական օրակարգերը կը սնուցանեն իրենց կեանքերն ու առաքելութիւնները: Որովհետեւ ինչպէս Տէրը ինք կ'ըսէ. «Միթէ զիս ճանչնալը ասիկա չէ»:

### ՄՏԻԿ ԸՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՕՏԵՑԻՐ

Յաջորդ գործնական խորհուրդը, որ կարելի է տալ անոնց, որոնք կ'ուզեն Տիրոջ մօտենալ, կը գտնուի հետեւեալ համարներուն մէջ.

«Երբ Աստուծոյ տունը երթաս, ոտքիդ զգուշութիւն ըրէ: Աւելի մտիկ ընելու համար մօտեցիր, քան թէ անմիտներու պէս զոհ մատուցանելու: Վասն զի անոնք չեն գիտեր, թէ չարութիւն կ'ընեն: Բերնովդ մի՛ աճապարեր, թող քու սիրտդ Աստուծոյ առջեւ խօսելու չարտորայ. քանզի Աստուած երկինքն է ու դուն երկրի վրայ ես, անոր համար քու խօսքերդ քիչ թող ըլլան: Վասնզի երազը շատ զբաղումէն յառաջ կու գայ ու յիմարին ձայնը՝ շատ խօսքերէն» (Ժողովող 5.1-3):

Եկէք այս համարներուն առաջին բաժինը անջատաբար քննենք: Աստուածաշունչի «Էն.Քէյ.Ճէյ.Վի.» տարբերակին մէջ կը կարդանք. «Աւելի մտիկ ընելու համար մօտեցիր, քան թէ անմիտներու պէս զոհ մատուցանելու»: Նկատած եմ, որ շատեր կան, որոնք ամէն անգամ, որ Աստուծոյ մօտենան, խօսելով կամ երգելով կու գան: Ասիկա անշուշտ ընդունելի է: Սակայն ես մեծ յաջողութիւն գտած եմ Անոր լուրջամբ մօտենալու եւ լսելու մէջ նախքան բառ մը ըսեմ կամ փառաբանութեան երգ մը երգեմ:

## ՄՕՏԵՆԱԼ

Վերջերս շատ մեծ եւ զորաւոր եկեղեցոյ մը հովիւին հետ էի: Ճաշի ժամանակ ան ըսաւ ինծի. «Ճո՛ն, հասայ տեղ մը, ուր Տիրոջ ըսի. ‘Ես յոգնած եմ ամէն առտու այս սենեակը մտնելէն եւ ես ինծի խօսելէն՝ առանց պատասխան ստանալու: Ուստի մինչեւ որ Դուն ինծի հետ խօսիս, ես ամէն առտու պարզապէս հոս պիտի մտնեմ եւ մտիկ պիտի ընեմ’»:

Քանի մը առաւօտ տեւեց, քանի որ Տէրը անոր սիրտին անկեղծութիւնը կը քննէր, բայց առաւօտ մը ան իր սենեակը մտաւ եւ յանկարծ Սուրբ Հոգին սկսաւ խօսիլ իրեն հետ: Այդ ժամանակաշրջանին էր, որ Աստուած անոր տուաւ ամենահզօր յայտնութիւնները, որ ան երբեւէ ստացեր էր, եւ ան քանի մը շաբաթ իր ժողովուրդին յայտարարեց զանոնք: Անոր աղօթքի կեանքը յեղաշրջուեցաւ:

Փորձառութեամբ կրնամ ըսել, որ Աստուծոյ ներկայութեան գալու շատ հզօր ձեւերէն մէկը Աստուածաշունչը առնել եւ համար մը կարդալն է (մասնաւորաբար Սաղմոսներէն կամ Նոր Կտակարանէն). ոչ շատ համարներ, այլ մէկ հատ, եւ երբեմն նոյնիսկ կէս հատ, եւ խոկալով զայն ծամել, յետոյ կամաց-կամաց ուրիշ մը կարդալ եւ վերջաւորութեան Տիրոջ ներկայութիւնը պիտի յայտնուի: Յետոյ կանգ կ’առնեմ կարդալէն եւ Անոր վրայ կը կեդրոնանամ եւ կ’արտօնեմ, որ Ան սորվեցնէ ինծի կամ գալիք բաները ցոյց տայ ինծի:

Ամէն պարագայի, ընդհանրապէս շատ արդիւնաւետ է լսելու համար Անոր ներկայութեան գալը, նախքան խօսիլը: Ես նախապէս փառաբանութեան ծառայութիւններու ներկայ եղած եմ եւ միտքս լռեցուցած եմ եւ իմ ներսիդիս նայած եմ՝ Աստուծոյ Սուրբ Հոգիին, որպէսզի զգամ Անոր փափաքը կամ տրամադրութիւնը: Յետոյ կը սկսիմ փառաբանութեան ծառայողներուն հետ երգել: Ասիկա միշտ ճիշդ չէ, քանի որ ուրիշ առիթներով ես անմիջապէս Անոր կը մօտենամ շնորհակալութեամբ, փառաբանութեամբ կամ սիրտէս բխող ցնծութեամբ: Կարծէք Աստուծոյ Հոգին կ’ըսէր. «Սկսի՛նք»: Որովհետեւ Սուրբ Գիրքը նաեւ մեզի կ’ըսէ.

«Գոհութիւնով անոր երեսին առջեւ գանք,  
Սաղմոսներով աղաղակենք անոր»  
(Սաղմոս 95.2):

Եւ դարձեալ,

«Ծառայեցէք Տէրոջը ուրախութեամբ.

Անոր առջեւ կեցէք ցնծութեամբ» (Սաղմոս 100.2):

Ուրեմն հոս կը տեսնենք, որ Աստուծոյ Խօսքը մեզ կը յորդորէ, որ Տիրոջ ներկայութեան գանք ցնծութեամբ եւ գոհութիւնով, մինչդեռ նախորդ համարը մեզ կը թախանձէ, որ մտիկ ընելու համար մօտենանք: Այդ ամէնը կախեալ է Անոր հանդէպ զգայուն ըլլալէն: Ինչպէս դուք տղամարդու մը չէք կրնար ըսել իր կնոջ հետ սեռային յարաբերութիւն ունենալու քայլ առ քայլ գործընթացը, նոյնն է պարագան մտերմութեան համար մեր Տիրոջ մօտենալուն:

Կրնամք երեակայել, որ տղամարդ մը ներս մտնէ՝ իր նոր հարսին հետ մտերմութիւն ունենալու համար, իր ձեռքին ունենալով քարտ մը, որուն վրայ կէտ առ կէտ գրուած է, թէ ինչ պէտք է ընէ: Ան քարտին վրայէն կը կարդայ, առաջին քայլ՝ անոր ըսէ, որ գեղեցիկ է: Երկրորդ քայլ՝ մատներդ անոր մազերուն մէջէն անցուր: Երրորդ քայլ՝ լոյսերը մարէ: Չորրորդ քայլ՝ (վայ, չեմ կրնար աստիկ կարդալ, պէտք է ելեկտրական ջահ գործածենք): Ինչ ծիծաղելի է: Սակայն ոմանք աղօթքը այդքան ծիծաղելի դարձուցած են: Անոնք մարդոցմէ խլած են Աստուծոյ սիրտին դպչելու եւ Անոր սիրտը զգալու կարողութիւնը: Օ՛, զիս սխալ մի՛ հասկնաք, Աստուածաշունչին մէջ կան որոշ ուղեցոյցներ, որոնց պէտք է հետեւինք, բայց մենք պէտք է գանք Աստուծոյ Հոգիին օգնութեամբ, քանի որ Սուրբ Գիրքը մեզի յստակօրէն կ'ըսէ. «[...] Գիրք կը սպաննէ, բայց Հոգին կ'ապրեցնէ» (Բ.Կորնթացիներուն 3.6): Ուրեմն Աստուծոյ Հոգին կրնայ մեզ առաջնորդել բարեխօսելու, երգելու, գոռալու, աղաղակելու, լռելու եւայլն:

Միւս բանը, զոր Աստուածաշունչը մեզ կը յորդորէ, որ ընենք, խնդրելու կամ խօսելու չարտորալն է: Նոյնիսկ բնական յարաբերութիւնները ասիկա ցոյց կու տան մեզի: Երբ մէկը արագօրէն մէկ նիւթէն ուրիշ նիւթի կը ցատկէ, մենք շատ ուշադրութեամբ մտիկ չենք ըներ անոր: Սակայն երբ մէկը իմաստութեամբ կ'ընտրէ իր խօսքերը, ուշադրութեամբ



մտիկ կ'ընենք անոր, նոյնիսկ եթէ ան յաճախ կը խօսի: Այդ պատճառով աղօթքի ընթացքին ես ժամանակին մեծ մասը կ'անցընեմ լռութեամբ կամ լեզուներով խօսելով կամ Աստուծոյ Խօսքը արտասանելով:

Գիտեմ, որ երբ լեզուներով կը խօսիմ, Աստուծոյ կատարեալ կամքը կ'աղօթեմ: Սուրբ Հոգին ինծի խօսքեր կու տայ, որ իմ Հօրս ըսեմ Յիսուսի անունով: Ես չեմ կրնար սխալ կերպով աղօթել կամ դատարկ բառեր ըսել երբ Հոգին իմ վրաս է: Երբ Անոր գրուած Խօսքը կը խօսիմ, կը տեսնեմ, որ իմ ամբողջ էութիւնս կը շինուի, որ անշուշտ կը ներառէ իմ միտքս: Այս է պատճառը, որ միտքով աղօթելը նոյնպէս շատ կարեւոր է:

Սակայն երբ գիտեմ, որ Անոր ներկայութեան մէջ եմ եւ մտիկ կ'ընեմ, այն ատեն է, որ յայտնութիւնը, հասկացողութիւնը եւ իմաստութիւնը կու գայ: Շատ կարեւոր է, որ Տիրոջ ժամանակ տանք, որ մեզի խօսի: Կրնա՞ք երեւակայել մէկը, որ ամէն անգամ, որ ձեզի մօտենայ առանց կենալու կը խօսի եւ մէկ բառ ըսելու առիթ չի տար ձեզի: Կարծեմ երբեմն Սուրբ Հոգին այդպէս կը զգայ մեզի հետ: Մենք պէտք է թէ լսենք թէ խօսինք: Յիշեցէք, որ աղօթքը երկխօսութիւն է, եւ ոչ թէ մենախօսութիւն:

### ՓՈԽԱՆՅՈՒՄԻ ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՁԵՒԵՐ

Երբ Աստուած կը մօտենայ մեզի, Ան Ինքզինք կը յայտնէ, ինչպէս նաեւ Իր ճամբաները: Ան մեզի մեծ ու խորհրդաւոր բաներ ցոյց կու տայ, զորս մենք չենք գիտեր (Երեմիա 33.3): Ասիկա հասկնալու բանալին այն է, որ մենք պէտք է անդրադառնանք, որ կան տարբեր ճամբաներ (ձեւեր), որոնցմով ան պիտի փոխանցէ մեզի երբ գայ: Երբեմն մենք կը լսենք Անոր ձայնը: Ատիկա կրնայ զօրաւոր ձայն մը ըլլալ մեր սիրտին մէջ, որ երբեմն կրնանք շփոթել լսելի ձայնին հետ, որ մեր ֆիզիքական ականջներով կը լսենք. կամ ատիկա կրնայ ըլլալ մեղմ ու հանդարտ ձայն մը, որ մեր սիրտին խորերէն կը լսենք, որ ինչպէս միւս ձեւերը, միշտ իրեն հետ կը բերէ Անոր ներքին խաղաղութիւնը եւ կը համապատասխանէ Աստուծոյ Խօսքին: Երբեմն

Ան կը խօսի ուրիշ հաւատացեալի մը կամ ղեկավարի մը միջոցով. երբ անոնք կը խօսին կամ անոնց գրութիւնները կը կարդանք, պայթում մը կը սկսի մեր սիրտերուն մէջ: Ան կրնայ ընտրել մեզի հետ խօսիլ տեսիլքի կամ երազի միջոցով: Ուրիշ անգամներ, եւ այս ձեւը շատ յաճախ կը պատահի, պարզապէս կը գիտնանք բաներ, զորս նախապէս չէինք գիտեր: Նաեւ յաճախ կը պատահի, որ Ան Իր Խօսքը կը դնէ եւ անիկա չի բացայայտուիր մինչեւ որ խօսինք: Երբ մեր բերանը բանալով կը խօսինք, լուսատրութիւնը կու գայ:

Այսպէս պատահեցաւ Պետրոսին հետ Պենտէկոստէի օրը: Նախքան Աստուծոյ ներկայութիւնը անոր վրայ հանգչի, ան իրապէս միայն միտքով գիտէր Աստուծոյ Խօսքը, բացի այն յայտնութենէն, որ Աստուած իրեն տուած էր Յիսուսի Քրիստոսը ըլլալուն մասին (Մատթէոս 16): Բացի այդ յայտնութենէն, ան քիչ թէ շատ ամէն անգամ որ իր բերանը բացած է՝ հոգեւոր բաներու մասին խօսելու համար, ըսած է բաներ, զորս պէտք չէ ըսեր: Վերնատան մէջ ան փորձեց հոգեւոր վարչականի դեր խաղալ Յուդային փոխարինող մը ընտրելով: Պտուղէն յայտնի էր, որ ան տհաս էր, քանի որ ընտրուած մարդուն մասին անգամ մըն ալ չենք լսեր. եւ հետագային Պողոսը ինքն իր մասին ըսաւ, որ ինք «վիժած [իր ժամանակէն առաջ ծնած]» մըն էր (Ա.Կորնթացիներուն 15.8): Կարծես Պողոսն էր Աստուծոյ ընտրութիւնը՝ փոխարինելու Յուդան, ոչ թէ Պետրոսի վիճակ ձգելով Աստուծոյ մարդը ընտրելու անհամապատասխան (անպատեհ) փորձը:

Հիմնականօրէն, հոգեւորապէս այնպէս կը թուի, որ Պետրոսը միշտ աններդաշնակ էր: Սակայն երբ Աստուած անոր մօտեցաւ, քանի մը վայրկեանէն ան խորունկ եւ զօրեղ պատգամ մը սկսաւ խօսիլ Յովէլի մարգարէութենէն եւ Սաղմոսներէն, բացատրելով, թէ ինչ պատահած էր 120-ին: Կարելի չէ, որ ան կարենար այդպիսի խորաթափանց պատգամ մը ուսումնասիրել ամբոխին հաւաքուելէն միայն քանի մը վայրկեան առաջ: Ան հիմա յանկարծ գիտութիւն մը ունեցաւ, որ ատկէ առաջ երբեք չէր ունեցած: Ոչ միայն Պետրոսը, այլ բոլոր միւսներն ալ, քանի որ Աստուծոյ

## ՄՕՏԵՆԱԼ

ներկայութեան իրենց վրայ գալէն քանի մը վայրկեան առաջ բոլորը սկսան պատմել «Աստուծոյ մեծամեծ բաներուն մասին» (Առաքեալներու Գործերը 2.11):

Ուստի հիմնականօրէն, կան տարբեր ձեւեր, որոնցմով Ան կը փոխանցէ մեզի երբ մեզի կը մօտենայ. բայց մէկ բան հաստատ է, որ ամէն անգամ, որ Ան մեզի կը մօտենայ, այլեւս երբեք նոյնը չենք ըլլար:

## ՎԵՐՋԻՆ ԽՕՍԲ

Ինչպէս այս գիրքին առաջին գլուխին մէջ նշուած է, այս պատգամը նախատեսուած չէ ըլլալու «բան մը ընելու մասին մանրամասն եւ գործնական խորհուրդներ տուող» պատգամ մը, քանի որ մտերմութիւնը երբեք չի կրնար դառնալ քայլ առ քայլ գործընթաց մը: Ատիկա նախատեսուած է ըլլալու գանձի քարտէս մը, որ կը տանի դէպի Աստուծոյ սիրտը: Ես կը հաւատամ, որ ատիկա մարգարէական պատգամ մըն է, Անոր սիրտին կանչը՝ ուղղուած մեր բոլորին՝ անոնց, որոնց Ան այնքան սիրալիր կերպով եւ բուռնօրէն կը ցանկայ: Եթէ մենք ուժ եւ ժամանակ տրամադրենք՝ հետեւելու Աստուծոյ Խօսքի քարտէսին, որ այս գիրքին մէջ դրուած է, անպայման պիտի գտնենք Աստուծոյ ներկայութիւնն ու սիրտը: Որովհետեւ յիշեցէք, Անոր մեզի անհատապէս մօտենալու խոստումը պատահականօրէն եղող բան մը չէ, այլ ատիկա Անոր խոստումի Խօսքն է, զոր Ան միշտ պիտի յարգէ եւ երբեք անկէ պիտի չդառնայ:

Թոյլ տուէք, որ այս գիրքը ասարտեմ քանի մը այլ համարներով, որոնք ձեզ պիտի ներշնչեն, որ Անոր մօտենաք.

«Վասն զի ծուռ մարդը Տէրոջը առջեւ պիղծ է, բայց անոր մտերմութիւնը արդարներուն հետ է» (Առակաց 3.32):

«Բայց Աստուծոյ մօտենալս բարի է ինծի»  
(Սաղմոս 73.28):

«Տէրը մօտ է այն ամենուն որ զինք կը կանչեն, այն ամենուն՝ որ ճշմարտութեամբ զինք կը կանչեն: Անիկա իրմէ վախցողներուն փափաքը կը լեցնէ եւ անոնց

## ՄՕՏԵՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

աղաղակը կը լսէ ու կը փրկէ զանոնք: Տէրը բոլոր զինք սիրողները կը պահէ [...]» (Սաղմոս 145.18-20):

«Չանիկա պիտի մօտեցնեմ ու ինծի մօտ պիտի ըլլայ. վասնզի ո՛վ է անիկա, որ իր սիրտը պատրաստեց ինծի մօտենալու,— կը պատգամէ Տէրը» (Երեմիա 30.21, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Այ.Վի.» տարբերակէն):

Դուք կրնաք համարձակիլ Անոր մօտենալ, քանի որ Ան ձեզի տուած է Իր անժամանակ հրաւերը: Ուստի դուք ձեզ նուիրեցէք ըլլալու մէկը այն մարդոցմէ, որոնք Անոր ներկայութեան կը բնակին: Ան ձեզ կը սպասէ. ի՞նչ կը սպասէք: Մօտեցէ՛ք:

«Արդ, անոր՝ որ կրնայ ձեզ անկումներէ փրկել,  
պահել անարատ եւ անբիծ, եւ անխառն  
ուրախութեամբ լեցուն՝ իր փառաւոր ներկայութեան  
կանգնեցնել, միակ [իմաստուն] Աստուծոյն՝ որ  
մեր Փրկիչն է [...] Անոր են փառքը, մեծութիւնը,  
զօրութիւնն ու իշխանութիւնը,[...] թէ՛ այժմ եւ թէ՛  
գալիք բոլոր ժամանակներուն: Ամէն»  
(Յուդայի 24-25):

## ՍԵՐՏՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՐՅՈՒՄՆԵՐ

1. Այս գլուխը կարդալէ առաջ, երբեք մտածանձ էք, որ Աստուած «կարիքներ» ունի: Ի՞նչ ձեւերով կը ծառայենք այդ կարիքներուն:
2. Որքան կարեւոր է ձեզի համար Սուրբ Հոգիին ձայնին մտիկ ընելը: Նոյնիսկ եթէ դուք մեծ քանակութեամբ փառաբանութեան եւ պաշտամունքի երգեր ունիք եւ/կամ Հոգիով լեցուած գրութիւններ, որոնք հասանելի են ձեզի, փորձէ՛ր էք լռութեամբ մօտենալ Աստուծոյ: Փորձեցէ՛ք այս վարժութիւնը մտերմութեան մէջ եւ գրեցէ՛ք կամ բաժնեկցեցէ՛ք ձեր սորվածները ուրիշներու հետ:

## ՄՕՏԵՆԱԼ

3. Առաջին գլուխին մէջ հեղինակը կը նկարագրէ այս գիրքը որպէս գանձի քարտէս մը, որ դէպի Աստուծոյ սիրտը կ'առաջնորդէ, եւ ոչ թէ Աստուծոյ մօտենալու մասին քայլ առ քայլ «մանրամասն եւ գործնական խորհուրդներ տուող» պատգամ մը: Երբ ձեր սորվածներուն մասին խոկացիք, ինք գանձեր յայտնաբերեցիք: Տակաւին ինչ գանձեր կան, զորս պէտք է յայտնաբերէք:



# ՓՐԿԻՉԻ ՄԸ ՄԵՐ ԿԱՐԻՔԸ



Ապրելու երկու չափանիշ կայ՝ մէկը ընկերութեան կողմէ սահմանուած եւ միւսը՝ Աստուծոյ կողմէ: Մեր մշակոյթը, իր կազմութեան համաձայն, իր հաստատած սահմաններուն եւ չափանիշներուն համաձայն, կրնայ ձեզ «լաւ կամ բարի» համարել, բայց ինչ է Աստուծոյ կարծիքը: Սուրբ Գիրքը մեզի կ'ըսէ, որ ոչ ոք հասած է Աստուծոյ ճիշդի չափանիշին. «Ինչպէս գրուած է թէ՛՝ ‘Չկայ մէկը, որ միշտ ճիշդ բանը կ'ընէ եւ ո՛չ մէկը’» (Հռոմայեցիներուն 3.10, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Սի.Վի.» տարբերակէն) եւ դարձեալ. «Վասնզի ամէնքը մեղք գործեցին եւ Աստուծոյ փառքէն պակսեցան» (Հռոմայեցիներուն 3.23, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն):

Մեղանչել կը նշանակէ Աստուծոյ չափանիշին չհասնիլ: Մարդը ստեղծուած չէր մեղաւոր ըլլալու, այլ Ադամ իր ազատ կամքով ընտրեց այդ ճամբան: Աստուած առաջին

մարդը՝ Ադամը դրա գեղեցիկ աշխարհի մը մէջ, ուր վատառողջութիւն, հիւանդութիւն, աղքատութիւն կամ բնական աղէտներ չկային: Չկար վախ, ատելութիւն, կռիւ, նախանձ եւայլն: Աստուած այդ տեղը կոչեց Եդեմ՝ Ինքնին Աստուծոյ պարտէզը:

Ադամը ընտրեց Աստուծոյ հրամանին չհնազանդիլ, եւ անմիջապէս հոգեւորապէս մեռաւ, թէեւ ան ֆիզիքապէս հարիւրաւոր տարիներ ետք մեռաւ: Խաւարը մտաւ անոր սիրտին մէջ, եւ այս հոգեւոր մահը կը տարբերի ֆիզիքական մահէն, քանի որ ֆիզիքական մահուան պարագային մարմինը կը դադրի գոյութիւն ունենալէ. սակայն հոգեւոր մահուան լաւագոյն բնութագրութիւնն է Աստուծմէ՝ Ինքնին կեանքը տուողէն եւ կեանքի աղբիւրէն, բաժնուիլ:

Մեղքը մտաւ Ադամին կառուցուածքին եւ նկարագիրին մէջ եւ ան այդ բնոյթին համաձայն զաւակներ ծնաւ.«Ադամ հարիւր երեսուն տարի ապրեցաւ եւ իր նմանութիւնովը՝ իր պատկերին պէս որդի մը ծնաւ [...]» (Ծննդոց 5.3):

Իբրեւ հայր՝ անոր զաւակները իր բնոյթով ծնան եւ այդ պահէն սկսեալ բոլոր մարդիկը կը ծնին իրենց ծնողներուն միջոցով անոր մեղքին պատկերով: Ադամը ինքզինք եւ իր սերունդները յանձնեց նոր տիրոջ մը՝ Սատանային, եւ այս գերութեամբ բնական աշխարհը անոր օրինակին հետեւեցաւ: Հիմա անգութ տէր մը օրինականօրէն կը պահանջէր, որ Աստուծոյ սիրելի ստեղծագործութիւնը իրեն տրուէր: Ասիկա յստակացուած է հետեւեալ համարներուն մէջ. «Սատանան բարձր լեռ մը հանելով զանիկա [Յիսուսը], աշխարհի բոլոր թագաւորութիւնները ցուցուց անոր վայրկեանի մը մէջ եւ ըսաւ անոր. ‘Այս ամէն իշխանութիւնը ու անոնց փառքը քեզի պիտի տամ. վասնզի *ինձի յանձնուած է* եւ որու որ ուզեմ՝ կու տամ զանիկա’» (Ղուկաս 4.5-6, շեշտադրումը՝ հեղինակին կողմէ):

Նկատի առէք, ասիկա իրեն յանձնուած է: Երբ: Պատասխանը՝ պարտէզին մէջ, քանի որ Աստուած սկիզբէն երկրի վրայ իշխանութիւնը մարդուն տուաւ (Տէն Ծննդոց 1.26-28), Ադամը ամէն բան կորսնցուց ... ասիկա կը ներառէր զինք եւ իր զարմը բոլոր սերունդներուն մէջ: Դարձեալ կը կարդանք. «Ամբողջ աշխարհը Չարին ենթակայ [է]» (Ա.Յովհաննէսի 5.19):



Նախքան Աստուած Ադամը պարտեզէն դուրս դնէր, խոստում մը տուաւ: Փրկարար մը պիտի ելլէր եւ պիտի կործանէր այն կապանքն ու գերութիւնը, որուն մարդկութիւնը ենթակայ եղած էր:

Այս փրկարարը չորս հազար տարի ետք ծնաւ կոյսէ մը, որուն անունը Մարիամ էր: Ան պէտք է կոյս ըլլար, քանի որ Յիսուսի հայրը Սուրբ Հոգին էր, որ զինք յղացուց: Եթէ Յիսուս բնական ծնողներէ ծնած ըլլար, Ան Ադամի գերութեան մէջ պիտի ծնէր:

Անոր Հայրը Աստուած էր եւ մայրը մարդ էր: Ասիկա զինք կատարելապէս Աստուած եւ կատարելապէս մարդ ըրաւ: Մեր ազատութիւնը գնողը մարդու որդի պէտք է ըլլար: Այս պատճառով է, որ Յիսուս շարունակ Ինքզինք «մարդու Որդի» կը կոչէր: Թէեւ Ան սկիզբէն Հօր հետ էր, Ան Ինքզինք մերկացուց Իր աստուածային առանձնաշնորհումներէն եւ մարդացաւ, որպէսզի Ինքզինք իբրեւ մեղքի ընծայ մատուցանէ:

Երբ Ան խաչ բարձրացաւ, Ան մեր մեղքին դատապարտութիւնը Իր վրայ առաւ, որպէսզի մեզ մեր գերութենէն ազատէ: Սուրբ Գիրքը կը յայտարարէ. «Մեր մեղքերը ինք կրեց՝ իր մարմինով՝ խաչին վրայ, որպէսզի մեղքի տիրապետութենէն ազատած՝ արդարութեան համար ապրինք» (Ա.Պետրոսի 2.24):

Հիանալի է. մարդը Աստուծոյ դէմ մեղանչեց, բայց Աստուած (մարմինով յայտնուած) վճարեց մարդուն լուրջ սխալին գինը: Դարձեալ կը կարդանք. «Որովհետեւ Աստուած մեզի համար մեղքի պատարագ ըրաւ Քրիստոսը, ան՝ որ բնաւ մեղք չէր գործած, որպէսզի մենք անոր միանալով արդարանանք Աստուծոյ համար» (Բ.Կորնթացիներուն 5.20-21):

Նկատի առէք, կ'ըսէ, որ մենք կրնանք արդարանալ: Մենք չենք կրնար ստանալ այն արդարութիւնը, որուն համար Ան այդքան բարձր գին վճարեց, մինչեւ որ մեր սիրտերուն մէջ հաւատանք, որ Ան մեզի համար մեռաւ եւ մեռելներէն յարութիւն առաւ, եւ զինք ընդունինք իբրեւ մեր Տէրը. այն ատեն է, որ Ան մեր անձնական Փրկիչը կը դառնայ: Ինչպէս Աստուածաշունչը կ'ըսէ. «Իսկ զինք ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդիներ ըլլալու: Անոնք վերածնանձ են: Ասիկա ոչ թէ ֆիզիքական

ծնունդ է, որ արդիւնքն է մարդուն բուն փափաքին կամ ծրագիրին - այս վերածնունդը կու գայ Աստուծմէ» (Յովհաննէս 1.12-13, անգլերէն Աստուածաշունչի «Էն.Էլ.Թի.» տարբերակէն):

Երբ կ'ընդունինք Յիսուս Քրիստոսը՝ իբրեւ մեր անձնական Տէրը եւ Փրկիչը, մենք կը մեռնինք եւ հոգեւորապէս վերստին կը ծնինք: Մենք կը մեռնինք որպէս ստրուկներ Սատանային թագաւորութեան մէջ եւ կը ծնինք իբրեւ Աստուծոյ բոլորովին նոր զաւակները Անոր թագաւորութեան մէջ: Ինչպէս կը պատահի ատիկա: Պարզ է, երբ մենք անոր կը հաւատանք մեր սիրտին մէջ, պարզապէս պէտք է մեր բերանով խոստովանինք, որ Յիսուս մեր Տէրն է, եւ վերստին կը ծնինք: Սուրբ Գիրքը կը հաստատէ ատիկա. «Որովհետեւ եթէ բերանովդ խոստովանիս, թէ Յիսուս Տէր է, եւ սրտիդ մէջ հաւատաս, թէ Աստուած զինք մեռելներէն յարուցանեց՝ կը փրկուիս: Այսինքն, ոեւէ մէկը որ իր սրտին մէջ կը հաւատայ՝ կ'արդարանայ, եւ երբ բերանով խոստովանի՝ կը փրկուի: (Հռոմայեցիներուն 10.9-10)»:

Այդքան պարզ է: Մենք մեր բարի գործերով չենք արդարանար: Մեր բարի գործերը երբեք չեն կրնար մեզի համար տեղ վաստկիլ Անոր թագաւորութեան մէջ: Որովհետեւ եթէ ատիկա ճիշդ ըլլար, Քրիստոս ի զուր մեռած կ'ըլլար: Մենք Անոր շնորհքովը փրկուեցանք: Ատիկա ճրի պարգեւ է, զոր մենք չենք կրնար շահիլ: Ատիկա ստանալու համար մեզի կը մնայ միայն հրաժարիլ մենք մեզի համար ապրելէն եւ մեր անձերը նուիրել Անոր՝ իբրեւ մեր Տէրը, որ կը նշանակէ Գերագոյն Տէր: «Ան ամենուն համար մեռաւ, որպէսզի կենդանի եղողներն ալ միայն իրենց անձերուն համար կենդանի չըլլան, հապա անոր՝ որ իրենց համար մեռաւ եւ յարութիւն առաւ» (Բ.Կորնթացիներուն 5.15):

Ուստի եթէ կը հաւատաք, որ Քրիստոս ձեզի համար մեռաւ եւ պատրաստ էք ձեր կեանքը Անոր տալու եւ այլեւս դուք ձեզի համար չապրելու, ուրեմն մենք կրնանք միասին հետեւեալ աղօթքը աղօթել եւ դուք Աստուծոյ զաւակ պիտի դառնաք.

Երկնաւոր Հայր, ես կ'ընդունիմ, որ մեղաւոր մըն եմ եւ քու արդար չափանիշէդ պակասած եմ: Արժանի եմ իմ մեղքիս համար յաւիտեան դատուելու: Շնորհակալ եմ, որ զիս այս վիճակին մէջ չձգեցիր, որովհետեւ կը հաւատամ, որ Դուն ղրկեցիր Յիսուս Քրիստոսը՝ Քու միածին Որդիդ, որ կոյս Մարիամէն ծնաւ, որ ինծի համար մեռնի եւ իմ պատիժս կրէ Խաչին վրայ: Ես կը հաւատամ, որ Ան երրորդ օրը յարութիւն առաւ եւ հիմա Քու աջ կողմդ նստած է իբրեւ իմ Տէրս եւ Փրկիչս: Ուստի այսօր, \_\_\_\_\_, 20\_\_ , իմ կեանքս ամբողջութեամբ կու տամ Յիսուսի Տիրութեան:

Յիսուս, Քեզ կը դաւանիմ իմ Տէրս եւ Փրկիչս: Իմ կեանքէս ներս մտիր Քու Հոգիովդ եւ զիս Աստուծոյ զաւակ դարձուր: Ես կը հրաժարիմ խաւարի բաներէն, որոնց կառչած էի անցեալին, եւ այսօրուրնէ սկսեալ ես այլեւս իմ անձիս համար պիտի չապրիմ, հապա Քեզի համար, որ Քու Անձդ տուիր ինծի համար, որպէսզի ես յաւիտեան ապրիմ:

Շնորհակալ եմ, Տէր. հիմա իմ կեանքս ամբողջութեամբ Քու ձեռքերուդ եւ սիրտիդ մէջ է, եւ Քու Խօսքիդ համաձայն ես երբեք պիտի չամչնամ:

Հիմա դուք փրկուած էք. Աստուծոյ զաւակ էք: Ամբողջ երկինքը ձեզի հետ կը ցնծայ այս պահուս: Բարի եկաք ընտանիքէն ներս:



# ԻՆՉՊԷՍ ԼԵՅՈՒԻԼ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ



Սուրբ Հոգիին լեցունությամբ ստանալը նոյնքան դիտին է, որքան Յիսուսը իբրև Տէր եւ Փրկիչ ստանալը: Ոմանք կը պայքարին, կը յուսահատին, եւ շատ յաճախ չեն ստանար՝ նախքան խնդրելը հիմնական աստուածաշնչական ցուցմունքներ ստացած չըլլալնուն պատճառով: Սորված եմ, որ նախքան աղօթելը միշտ ասելի լաւ է փնտռողներուն ցոյց տալ, թէ Աստուած ինչ կ'ըսէ, քանի որ ատիկա կը զարգացնէ անոնց հաւատքը, որպէսզի ստանան: Ուստի նախքան ձեզ աղօթքով առաջնորդեմ, որ ստանաք, թոյլ տուէք, որ ձեզի ցուցմունքներ տամ: (Նշում՝ կարելոր է, որ տասնմէկերորդ Գլուխը կարդացած ըլլաք նախքան շարունակէք):

Նախ եւ առաջ պէտք է արդէն ընդունած ըլլաք Յիսուս Քրիստոսը իբրև ձեր Տէրը եւ Փրկիչը (Տես Յովհաննէս 14.17):

Պէտք չէ գտնուի անհնազանդութեան կրկնուող ձեւ մը ձեր կեանքին մէջ: Աստուածաշունչը կ'ըսէ, որ Աստուած Իր

Հոգին «Իրեն հնազանդողներուն» կու տայ (Առաքեալներու Գործերը 5.32): Ես փորձառաբար սորված եմ, որ աստիկա յատկապէս կը ներառէ աններողամտութեան մարզը: Մեր ծառայութիւններուն ընթացքին ես շատ անգամ տեսած եմ հարիւրաւոր մարդիկ Սուրբ Հոգին կը ստանան եւ անմիջապէս օտար լեզուներով կը խօսին, բայց այդ հարիւրաւորներէն մէկ կամ երկու տասնեակը կը կենան եւ շուարած կը նային: Գրեթէ ամէն անգամ, երբ այդ քանի մը տասնեակին կը մօտենամ, Տէրը զիս կ'առաջնորդէ, որ պահուած վիրաւորանքին հարցը լուծեմ: Երբ փնտռողները կը ներեն, անմիջապէս Սուրբ Հոգին կը ստանան եւ լեզուներով կը խօսին: Ուստի նախքան շարունակենք, միասին աղօթենք:

Հայր, կը խնդրեմ, որ քննես զիս եւ ինծի ցոյց տաս, եթէ կայ որեւէ անհնազանդութիւն իմ սիրտիս մէջ: Կը խնդրեմ, ինծի ցոյց տուր եթէ կայ մէկը, որուն չեմ ներած: Ես որոշած եմ հնազանդիլ եւ ներել անկախ անկէ, թէ Դուն ինչ պիտի յայտնես ինծի: Ասիկա կը խնդրեմ Յիսուսի անունով եւ շատ շնորհակալ եմ Քեզի:

Սուրբ Հոգին ստանալու համար պարզապէս պէտք է խնդրէք: Յիսուս պարզօրէն կ'ըսէ. «Ձեզմէ ո՞վ է այն հայրը, որմէ իր որդին հաց ուզէ, քար տայ անոր. կամ եթէ ձուկ ուզէ, ձուկին տեղ օձ տայ անոր. կամ եթէ հաւկիթ ուզէ, կարի՞ծ տայ անոր: Ուստի եթէ դուք որ չար էք՝ ձեր զաւակներուն աղէկ ընծաներ տալ գիտէք, որչափ աւելի ձեր Հայրը երկնքէն Սուրբ Հոգին պիտի տայ անոնց որ իրմէ կը խնդրեն» (Ղուկաս 11.11-13): Ան պարզապէս կ'ըսէ, որ եթէ մեր զաւակները մեզմէ բան մը ուզեն, որ մենք կ'ուզենք անոնց տալ, մենք անոնց չար բան մը կամ տարբեր բան մը պիտի չտանք: Նոյնպէս եթէ դուք Հօրմէն Իր Հոգին խնդրէք, Ան ձեզի չար հոգի մը պիտի չտայ: Պարզապէս պէտք է Հօրմէն խնդրէք Յիսուսի անունով, եւ դուք պիտի ստանաք Անոր Սուրբ Հոգին:

Պէտք է հաւատքով խնդրէք: Նոր Կտակարանը մեզի կ'ըսէ, որ առանց հաւատքի անկարելի է Աստուծմէ ստանալ: Յակոբոս 1.6-7-ը կ'ըսէ. «Միայն թէ հաւատքով թող խնդրէ ու չերկմտի. վասնզի ան որ երկմտի է, ծովուն հողմակոծեալ ու տատանեալ ալիքներուն նման է. այն մարդը թող չկարծէ, թէ Տէրոջմէն բան մը պիտի առնէ»: Ուստի այս պահուս

դուք ձեզի հարցուցէք. «Երբ պիտի ստանամ: Արդեօք երբ լեզուներով խօսիմ թե՛ այն պահուն, երբ խնդրեմ»: Ձեր պատասխանը պէտք է ըլլայ՝ այն պահուն, երբ կը խնդրէք: Որովհետեւ Թագաւորութեան մէջ կը հաւատանք, ապա կը ստանանք: Անոնք, որոնք հաւատք չունին, կ'ըսեն. «Տոյց տուր ինծի եւ կը հաւատամ», բայց Յիսուս կ'ըսէ. «Կ'ըսեմ ձեզի. 'Ինչ բան որ աղօթքով կը խնդրէք, հաւատացէք, թէ պիտի առնէք եւ պիտի ըլլայ ձեզի'» (Մարկոս 11.24): Նկատի առէք, նախ պէտք է հաւատաք, եւ յետոյ ձեզի պիտի ըլլայ ինչ որ խնդրեցիք:

Առաքեալներու Գործերը 2.4-ը կ'ըսէ. «Եւ ամէնքն ալ Սուրբ Հոգիով լեցուեցան ու սկսան ուրիշ լեզուներով խօսիլ, ինչպէս Հոգին իրենց խօսիլ կու տար»: Նկատի առէք, անոնք լեզուներով խօսեցան. Սուրբ Հոգին չէ, որ լեզուներով խօսեցաւ: Անոնք պէտք է խօսէին, մինչ Սուրբ Հոգին բառերը կու տար անոնց: Ուստի յանձնուի՛լ մը կայ: Ես կրնամ արագ շարժող գետի մը մէջ ըլլալ, բայց եթէ ոտքերս չվերցնեմ եւ գետին ջանձնուիմ, պիտի չհոսիմ անոր հետ: Ուստի կան երեք բաներ, զորս պէտք է յանձնենք: Առաջին՝ մեր շրթունքները: Եթէ շրթունքներս չշարժեմ, բառերը, ըլլան անոնք անգլերէն, Օտար լեզուով մը կամ երկնային լեզուով մը, դուրս չեն կրնար գալ: Երկրորդ՝ մեր լեզուն: Եթէ լեզուս չշարժեմ, չեմ կրնար խօսիլ: Երրորդ՝ մեր ձայնալարերը: Եթէ իմ ձայնալարերս իմ թոքերուս ջանձնեմ, չեմ կրնար խօսիլ:

Դուք կրնաք այս պահուն մտածել, որ ես հեզնական կ'ըլլամ, բայց այդպէս չէ: Տարիներ շարունակ մարդոց պայքարը տեսնելով, ես սորված եմ, որ շատեր ենթագիտակցաբար կը կարծեն, որ Սուրբ Հոգին պիտի բռնէ իրենց շրթունքները, լեզուները եւ ձայնալարերը եւ իրենց պիտի ստիպէ, որ խօսին: Ո՛չ, մենք կը խօսինք կամ կը յանձնուինք, ինչպէս Ան մեզի խօսիլ կու տայ:

Յիսուս կ'ըսէ. «Ով որ ինծի կը հաւատայ, ինչպէս Սուրբ Գիրքը կ'ըսէ՝ 'Անոր սիրտէն կենսատու ջուրի գետեր պիտի բղխին'»: Յիսուս ասիկա կ'ըսէր Հոգիին համար, որ իրեն հաւատացողները պիտի ընդունէին. իսկ Հոգին տակաւին չէր տրուած, քանի Յիսուս փառաւորուած չէր» (Յովհաննէս 7.38-39): Երբ Սուրբ Հոգին կը խնդրէք, կրնայ վանկ մը ծագիլ կամ դառնալ ձեր միտքին մէջ: Եթէ ատիկա հաւատքով

խօսիք, կարծեք ջրամբար մը բացած պիտի ըլլաք, եւ լեզուն դուրս պիտի գայ: Ես ատիկա կը տեսնեմ իբրեւ թելի կծիկ մը ձեր փորոտիքին մէջ եւ թելին ծայրը կամ սկիզբը կ'երեւի ձեր լեզուին վրայ, բայց երբ կը սկսիք քաշել (խօսիլ), թելին մնացած մասը դուրս կու գայ: Ոմանք կը կարծեն, թէ ամբողջ լեզուն իրենց միտքին մէջ պիտի ունենան, եւ յետոյ պիտի խօսին: Ո՛չ, պէտք է հաւատքով խօսինք:

Կը յիշեմ երբ կինս կ'աղօթէր, որ Սուրբ Հոգին ստանայ, ան որոշ ժամանակ մը լեզուներով չկրցաւ խօսիլ, յետոյ քանի մը շաբաթ ետք քանի մը բարեկամներու հետ միասին կ'աղօթէր եւ սկսաւ լեզուներով խօսիլ: Այն ատեն ան ըսաւ. «Վերջին քանի մը շաբաթներուն ընթացքին աղօթած ատենս այդ վանկը միտքիս մէջ կը դառնար, բայց ես մինչեւ այս գիշեր անոր չյանձնուեցայ»: Ես կը հաւատամ, որ շատերուն նոյնը կը պատահի՝ անոնք կը խնդրեն, կը ստանան, բայց չեն յանձնուիր:

Աստուածաշունչը կ'ըսէ. «Մարգարէներուն [խօսնակներուն] հոգիները մարգարէներուն հսկողութեան տակ [կ'ըլլան]» (Ա.Կորնթացիներուն 14.32): Ասիկա պարզապէս մեզի կ'ըսէ, որ մե՛նք ենք խօսողը եւ թէ Սուրբ Հոգին Ինքզինք պիտի չպարտադրէ մեր վրայ: Կը յիշեմ, այն օրուրնէ ետք երբ Սուրբ Հոգիով լեցուեցայ, չէի գիտեր, թէ ինչպէս նորէն պիտի խօսիմ: Գացի ուրիշ եղբօր մը քով մարգարանին մէջ եւ հարցուցի. «Ինչպէս կրնամ նորէն ատիկա ընել»: Ան ըսաւ. «Ճո՛ն, պարզապէս խօսի՛ր»: Ես դուրսը վազելու գացի եւ վազած ատենս սկսայ նորէն լեզուներով խօսիլ: Ուրախութեամբ լեցուեցայ: Պէտք է յիշենք, որ Սուրբ Հոգին միշտ պատրաստ է. մենք ենք, որ պէտք է յանձնուինք: Ատիկա կը նմանի ջուրի աղբիւրի մը: Հոն միշտ ջուր կայ. պարզապէս բռնակը դարձուցէք եւ ջուրը դուրս պիտի գայ: Ուստի յաճախակիօրէն լեզուներով աղօթեցէք:

Հիմա որ հիմնական ցուցմունքներ ստացաք Աստուածաշունչէն, եթէ կը հաւատաք, որ պիտի ստանաք, կրնանք միասին աղօթել: Վերջին բան մըն ալ. չէք կրնար նոյն ատեն թէ՛ անգլերէն եւ թէ՛ սպաներէն խօսիլ: Նոյնպէս ալ չէք կրնար նոյն ատեն թէ՛ անգլերէնով եւ թէ՛ լեզուներով խօսիլ: Ուստի յիշեցնեմ, պարզապէս հաւատացէք եւ յանձնուեցէք: Աղօթենք.



## ԻՆՉՊԷՍ ԼԵՑՈՒԻԼ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՈՎ

Հայր, Յիսուսի անունով, Քեզի կու գամ իբրեւ Քու զաւակդ: Դուն կ'ըսես՝ եթէ Քեզմէ Սուրբ Հոգին խնդրեմ, պիտի տաս ինձի: Ուրախութեամբ ես հիմա կը խնդրեմ հաւատքով. կը խնդրեմ, որ այս պահուս զիս Քու Սուրբ Հոգիովդ մկրտես եւ լեցնես: Ես կ'ընդունիմ ամէն բան, որ Դուն ինձի համար վերապահած ես, ներառեալ լեզուներով խօսելու կարողութիւնը: Ուստի հիմա հաւատքով նոր լեզուներով պիտի խօսիմ: Ամէն:

# ՍԱՏԱՆԱՅԻՆ ԽԱՅԾԸ

Ապրիլ Վիրաւորանքի Մահացու Թակարդէն Ազատ



«Սատանային Խայծը» գիրքը կը բացայայտէ ամենախաբէական ծուղակներէն մէկը՝ վիրաւորանքը, զոր թշնամին կ'օգտագործէ՝ հաւատացեալները Աստուծոյ կամքէն հեռացնելու համար: Շատեր այդ ծուղակին մէջ ինկած են եւ նոյնիսկ չեն անդրադառնար անոր:

Մի խաբուիք: Քրիստոս ըսաւ. «Անկարելի է, որ գայթակղութիւններ չգան» (Ղուկաս 17.1): Դուք չէք որոշեր՝ ձեզ պիտի վիրաւորեն թէ՛ ոչ, բայց դուք կ'որոշէք ինչպէս պիտի պատասխանէք: Եթէ վիրաւորանքին դէմ ճիշդ ձեւով վարուիք, աւելի պիտի զօրանաք, փոխանակ դառնանաք: Միայն ճիշդ ձեւով պատասխանելը ձեզի պիտի տայ հնարաւորութիւնը անարգելք հաղորդակցութիւն ունենալու Աստուծոյ հետ:

Այս պատգամին միջոցով Ճոն Պրվիրը կը զօրացնէ ձեզ, որ մնաք Աստուծոյ կամքին մէջ եւ ազատագրուիք կասկածէն եւ անվստահութենէն: Դուք կրնաք ազատիլ զոի ըլլալու մտածելակերպէն եւ ապրիլ առանց գրգռումի եւ յուսախաբութեան բռններուն: Մինչ Աստուծոյ հնազանդելու աւելի բարձր մակարդակ մը կը յայտնաբերէք, ձեր կեանքը առատօրէն պիտի լեցուի ներումով, հաշտութեամբ, եւ յարաճուն ուրախութեամբ:

# ԱՍՏՈՒԱՎՃ, Ո՞ՒՐ ԵՍ

Գտիր Զորութիւն եւ Նպատակ Քու Անապատիդ Մէջ



Թերեւս անցեալին Աստուծոյ ձայնը լսած էք, բայց հիմա Ան կարծէք լուռ է: Թերեւս դուք հաւատքի մէջ յառաջ գացած էք, բայց հիմա Անոր ներկայութիւնը ոչ մէկ տեղ չէք գտներ: Բարի եկած էք անապատ՝ Աստուծմէ խոստում մը ստանալու եւ անոր կատարումը տեսնելու միջեւ գտնուող վայրը:

Բայց ահա՛ բարի լուրը՝ ասիկա աննպատակ անջորդի վայր մը չէ: Աստուած անապատը կը գործածէ՝ ձեզ պատրաստելու եւ զինելու ձեր կոչումին համար, եթէ անշուշտ անոր մէջէն ճիշդ ձեռով անցնիք: Հակառակ շատերու կարծիքին, այս ժամանակէն անցնիլը միայն Աստուծոյ սպասելու հարց չէ: Անոր մէջէն անցնելու մէջ դուք ձեր դերը ունիք: Մեծ դեր մը: Եւ եթէ չէք ուզեր կլոր-կլոր դառնալով ժամանակ կորսնցնել, կարելոր է գիտնալ, թէ ինչ է ատիկա:

Այս ցնցիչ յայտնութիւններ ընող գիրքին մէջ, լաւագոյն վաճառք արձանագրած հեղինակը՝ Ծոն Պըվիրը ձեզ կը զինէ բանալի աստուածաշնչական խորաթափանցութիւններով եւ խորունկ պատմութիւններով, որոնք ձեզի պիտի օգնեն, որ ձեր չոր եւ դժուար ժամանակներուն մէջէն անցնիք եւ ունենաք այն ինչ որ Աստուած ունի ձեզի տալու:

# ԿՈՐԾԱՆԵԼ ՔՐԻՊՏՈՆԱՔԱՐԸ

Կործանէ՛ այն, ինչ որ քու  
ուժդ կը խլէ



Ինչպէս Սուփըրհերոսը, որ կրնայ ցատկել որեւէ արգելքի վրայէն եւ կրնայ յաղթել բոլոր թշնամիներուն՝ Քրիստոսի հետետորդները նոյնպէս կեանքի դժուարութիւնները յաղթահարելու գերբնական կարողութիւն ունին: Այնուամենայնիւ, եւ Սուփըրհերոսը, եւ մենք խնդիր մը ունինք. գոյութիւն ունի քրիպտոնաքար մը, որ կը խլէ մեր ուժը:

Անշուշտ, Սուփըրհերոսը եւ քրիպտոնաքարը յօրինուած են: Բայց հոգեւոր քրիպտոնաքարը՝ ոչ:

Այս գիրքը կը պատասխանէ այն հարցումին, թէ ինչո՞ւ մեզմէ շատերը չեն կրնար վերապրիլ այն Աստուածային զօրութիւնը, որ ակնյայտօրէն կը դրսեւորուէր առաջին դարուն ապրող քրիստոնեաներու կեանքին մէջ:

«Կործանել Քրիպտոնաքարը» գիրքին մէջ Ճոն Պրվիրը ցոյց կու տայ, թէ ինչ է քրիպտոնաքարը, ինչո՞ւ աստիկա կը խլէ մարդոց ուժերը մեր եկեղեցիներուն մէջ, եւ ինչպէս կարելի է ազատիլ աստր կապանքներէն:

«Կործանել Քրիպտոնաքարը» գիրքը հոգեւոր թմրեցուցիչ չէ՝ նախատեսուած թուլասիրտներու համար: Այս լուրջ ճշմարտութիւնը նախատեսուած է Քրիստոսի այն հետետորդներուն համար, որոնք կը փափաքին անցնիլ անձի վերափոխման դժուար, բայց պտղաբեր ընթացքը:

# X

## ԲԱԶՄԱՊԱՏԿԷ ԱՍՏՈՒԾՄԷ ՔԵԶԻ ՏՐՈՒԱԾ ՆԵՐՈՒԺԸ



Երբեք զգացած էք դուք ձեզ որպես հանդիսատես Աստուծոյ Թագաւորութեան մէջ: Թերեւս գիտէք, որ բան մը կայ, որ պէտք է ընէք, բայց չէք կրնար ճիշդ կերպով որոշել, թէ ինչ է ասիկա: Մեզմէ շատերը կ'ուզեն մեծ ազդեցութիւն ձգել մեր կեանքերով, բայց թերեւս ձեր ներսիդին անպատասխան հարցումներ կան, օրինակ.

Ինչպէս կրնամ վստահ ըլլալ, որ չեմ փախցնէր Աստուծոյ կամքը ինձի համար:

Ինչպէս կրնամ վստահ ըլլալ, որ իմ աստուածատուր կարողականութեանս համաձայն կ'ապրիմ:

Ինչպէս կը կոտրեմ վախը եւ յառաջ կ'երթամ, նոյնիսկ անորոշութեան եւ վտանգի պարագային:

Այս խորիմաստ գիրքին մէջ հանրաճանաչ հեղինակ Ճոն Պըվիըրը կը հիմնուի Սուրբ Գիրքի մանրակրկիտ ուսումնասիրութեան վրայ եւ կ'օգտագործէ ազդեցիկ պատմութիւններ, որպէսզի օգնէ ձեզի, որ տարբեր ձեւով մտածէք ձեր կոչումին մասին եւ թէ ինչո՞ւ ատիկա այդքան կարեւոր է Աստուծոյ համար: Երբ կը կարդաք այս գիրքը, դուք զօրութիւն պիտի ստանաք բազմապատկելու ձեր աստուածատուր պարգեւները եւ գործածելու ձեր կարողականութիւնը:

# ՊԱՏՈՒԵԼՈՒ ՎԱՐՁՔԸ

*Բացայայտեցէք Այս Մոռցուած  
Առաքինութեան Զօրութիւնը*



Ոչ մէկ քրիստոնէայ կ'ուզէ զԱստուած սահմանափակել, բայց մեզմէ շատերը անգիտակցաբար կը սահմանափակեն Անոր գործունէութիւնը մեր կեանքին մէջ, որովհետեւ կ'անտեսենք կարեւոր հոգեւոր սկզբունք մը՝ Պատիւը:


Պատիւը այնպիսի հասկացողութիւն մըն է, որ մեծ մասամբ կորսուած է մեր մշակոյթին մէջ, բայց ինչպէս այս գիրքին էջերուն մէջ պիտի տեսնէք, անիկա էական է Աստուծոյ Թագաւորութիւնը կեանքի բոլոր մարզերէն ներս արձակելու համար:

«Պատուելու Վարձքը» գիրքին մէջ հանրաճանաչ հեղինակ Ճոն Պրվիրը, ցոյց կու տայ, թէ ինչպէս պատուելու կոչը ընդունիլը ձեզ Աստուծոյ արժէքային համակարգին համապատասխան կը դարձնէ եւ ձեզ այնպիսի դիրքի մը մէջ կը դնէ, որ դուք ստանաք այն ինչ որ Աստուած ունի ձեզի տալու:

Այս խորունկ աստուածաշնչական յայտնութիւնները միացնելով այդ սկզբունքները գործնականօրէն պատկերող ազդեցիկ պատմութիւններու հետ, այս գիրքը ձեզի կու տայ այս մոռցուած առաքինութեան մասին նոր հայեացք մը եւ, ամենակարեւորը, ձեզի կու տայ բուռն փափաք մը զանիկա գործածելու կեանքի բոլոր մարզերուն մէջ:

# X MessengerX

Աշակերտութեան ճամբորդութիւն մը ամէն մարդու համար, ամենուրեք




- Անվճար, աւելի քան 120 տարբեր լեզուներով
- Հասանելի որպէս աշխատածրագիր («Էփիլիթէշըն») եւ առցանց
- Աղբիւրներ՝ նախատեսուած ձեր աճին համար
- Հետեւեցէք ձեր անցած նիւթերուն եւ աշակերտութեան ուղիին



Ստացէք «Messenger»-ի աշակերտական նիւթերու ամբողջ գրադարանը, ներառեալ ելեկտրոնային գիրքեր, օտիօգիրքեր, կարճ ֆիլմեր, վիտեօնուսուցումներ, Աստուածաշունչեր եւ աւելին. դիտեցէք, կարդացէք եւ լսեցէք ձեր բոլոր սարքերուն միջոցով:

**MessengerX.com**



Հասանելի է աշխարհի տարածքին «App Store»-ի եւ «Google Play»-ի մէջ

«Մօտենալ Աստուծոյ» խորագիրով այս գիրքին մէջ ճոն Պըվիրը ձեզ կը յորդորէ, որ չբաւարարուիք Քրիստոնէութեան չոր ստուէրով, որ Աստուծոյ մասին գիտէ՝ առանց զԱստուած ճանչնալու: Տիեզերքի Ստեղծիչին հիանալի հրաւերը ոչ թէ պարզապէս հեռուէն Ձինք բառերով եւ ծէսերով պաշտելու համար է, այլ Անոր հետ այնպիսի իմաստաւից եւ մտերիմ յարաբերութեան մը մէջ մտնելու, որ դուք ճանչնաք Անոր սիրտը եւ Ան՝ ձերը:

## Ասիկա թերեւս ամենահիանալի խոստումն է Աստուածաշունչին մէջ ... Աստուած կը փափաքի մտերմօրէն ճանչնալ քեզ:



ՃՈՆ ՊԵՎԻՐԸ միջազգային ճանաչում վայելող քարոզիչ եւ հանրաճանաչ գրող է, որ համարձակ եւ առանց զիջումի կը քարոզէ Աստուծոյ խօսքը: Ծննդը եւ իր կինը՝ Լիսան, հիմնադիրներն են «Մեսենճըր Ինթըրնաշընըլ» ծառայութեան, որուն նպատակն է՝ պատարաստել անզիջող Քրիստոսի հետեւորդներ, որոնք կը փոխակերպեն մեր աշխարհը: Երբ ճոնը տունն է, ան թղթախաղ կը խաղայ իր ընտանիքին հետ կամ կը փորձէ համոզել Լիսան, որ կու՛ք խաղայ:



**MessengerX**

Անվճար ներբեռնումներու եւ հոսքային հեռարձակման  
համար այցելեցէք **MessengerX.com**



Այս գիրքը նուէր է Հեղինակէն  
եւ ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱՅ ՉԷ

Կը ցանկաբ անցնին:  
Տեսանկէք պատկերակը:

